


ՀԱՅԿ. ՍԱՀ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ու. Իշխանյան

ՀԱՅ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԼՏԱՄՈՒԹՅՈՒՆ

Բ




ԱՂ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Բ

1800 — 1920



Գրքում լուսարանված է հայ մատենագիտության զարգացումը XIX դարի ընթացքում և XX-ի սկզբում: Քննված են այդ ժամանակաշրջանում ստեղծված հայ մատենագիտության տարբեր տեսակները: Հասկանալի ուշադրության են առնված հայ տպագիր գրքի և պարբերական մամուլի մատենագիտության ու պատմության ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես և հայագիտական մատենագիտությունը: Հայ հին ձեռագրերի մատենագիտության (ձեռագրացուցակների) ստեղծումը և զրադարանային, հրատարակչական ու գրավաճառային զրացուցակները: Տրված է հայ հետադարձ մատենագիտության զարգացման ակնարկ: Արված են քաղմաթիվ մատենագիտական ճշտումներ: Առանձին զեռխներ կամ հատվածներ են եզերված հայ ականավոր մատենագետներ Մ. Միանսարյանցի, Գ. Զարհանալյանի, Ա. Ղազիկյանի, Հ. Տաշյանի, Տ. Պալյանի, Գ. Գալեմյարյանի կյանքին ու գործին: Նկատի են առնված և քաղհայտված մատենագիտության և քանասիրության առնչությունները, ինչպես և մատենագիտության դերը ժողովրդի մշակութային կյանքում:

Министерство культуры Арм. ССР

Государственная республиканская библиотека Арм. ССР
им. Ал. Мясникяна
Рафаэль Ишханян

История армянской библиографии и библиологии.

Вып. 2. 1800—1920 гг.

Редактор: Г. К. Костикян
(На армянском языке)

Ереван, 1968

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Հայ նոր մատենագիտության պատմությանը նվիրված այս պրակը գրելիս ավելի պարզ դարձավ, որ հնարավոր չէ մատենագիտության զարգացման մասին խոսել մեկուսացնելով այն մշակութի, գիտության, հասարակական կյանքի զարգացման հարցերից: Դրա պատճառներից մեկն այն է, որ մատենագիտությունը հանրագիտական բնույթի առարկա է, ընդգրկում է մարդկային մտավոր ու հոգևոր կյանքի ամեն մի բնագավառ, որն ունենում է գրական դրսևորում, այսինքն՝ որի մասին գիրք կամ հոդված է գրվում:

Պակաս կարևոր չեն նաև մատենագիտության առնչությունները այլ բնագավառների հետ ըստ ձևի: Օրինակ, ինքնըստինքյան հասկանալի է, որ մատենագիտությունը սերտորեն առնչվում է գրադարանային գործի հետ, որը ինչ-որ չափով հենց մատենագիտության մի հատվածն է, բայց սյարդվում է նաև, որ մատենագիտությունը երբեմն նույնքան սերտորեն առնչվում է նաև, օրինակ, առևտրի հետ. կա գրավաճառային մատենագիտություն:

Կարևոր է նաև այն, որ 19-րդ դարում հայկական մատենագիտությունը զարգացավ իրրև հայ ազգային-մշակութային ամբողջ կյանքի մի շատ կարևոր մասը: Մատենագիտական աշխատությունների կազմմամբ, նրանց քննարկմամբ ու դնահատմամբ, ինչպես և հայ մատենագիտության կատարելագործման ու հեռանկարների հարցերով զբաղվեցին ժա-

մանակի ամենախոշոր հայ գիտնականները: Եղան անվանի մտավորականներ, որոնք իրենց կյանքի գլխավոր նպատակը դարձրին հայ մատենագիտության բնագավառը (Մ. Միան-սարյանց) կամ իրենց գրական մեծ տաղանդը զոհարեցին հանուն հայ մատենագիտության (Ա. Ղազիկյան), ուրիշները մատենագետ եղան ոչ միայն իրենց զուտ մատենագիտական, այլ նաև այլ կարգի աշխատություններում (Գ. Զարբանալյան), որոշ շատ խոշոր հայագետներ էլ ամենից ավելի հրուշակվեցին ու հիշվեցին գիտության մեջ իրենց մատենագիտական աշխատանքով (Գ. Գալեմբյարյան, Հ. Տաշյան):

Մեր աշխատանքն այս պրակի վրա ավելի համոզեց, թե որքան իրավացի են այն մասնագետները (Ն. Զդորնով և ուրիշներ), որոնք մատենագիտությունը և նրա պատմությունը շատ լայն են ըմբռնում: Իրոք, մի ազգի մատենագիտական աշխատանքում հաճախ բյուրեղանում են նրա մտավոր զարգացման, քաղաքակրթական մակարդակը, գիտական հնարավորությունները, իսկ մատենագիտության պատմության մեջ հաճախ զարմանալիորեն ճշտվում են մշակութային կյանքի մի շարք հարցեր, հստակորեն է սկսում տարբերվել կարևորն անկարևորից:

Հասկանալի է, որ անհնար է խոսել հայ նոր մատենագիտության մասին առանց մուտք գործելու հայ գրականագիտության, պատմագիտության, հրապարակախոսության, մանկավարժության, առհասարակ հայ հասարակական կյանքի ոլորտները: Սակայն, կարծում ենք նաև, որ ճիշտ չէ չափից ավելի հրապուրվել այդ ամենով, հակառակ դեպքում կարող է կորչել աշխատության մատենագիտական ճշգրտությունները: Մենք Վերոհիշյալ բնագավառների որոշ հարցեր շոշափել ենք մատենագիտական աշխատանքի լուսաբանման առնչությամբ, մանավանդ՝ մատենագիտական այս կամ այն աշխատության ներևան զալու սպայմանները ցույց տալու, այս կամ այն խոշոր մատենագետի գործունեության պատկերը ճիշտ գծելու նպատակով:

Մատենագիտական մի շարք կարևոր աշխատություններ

բապարակվել են հայոց մամուլում, բացի այդ, հայոց մամուլը իր բազմաթիվ դրախտսոսթյուններով զնահատել է հրապարակվող մատենագիտությունները: Ուստի անհնար էր դոնև երբեմն առ երբեմն չանդրադառնալ հայոց մամուլի նարցեբին: Սակայն ընթերցողը կնկատի, որ հեռու զնացող ամեն տեսակ շեղումներից խուսափել ենք, մատենագիտական աշխատանքի հետ ոչ անմիջականորեն առնչվող մի շարք նարցեբ, որոնք հաճախ շատ հետաքրքրական են, շրջանցել ենք:

Այսպիսի դեպքերում երբեմն դժվար էլ է թույլ անմիջական»-ը «անմիջական»-ից տարբերել. կասկածելի դեպքերում, երբ «կողմնակի»-ի հավանականություն է եղել, հրավարվել ենք նրանից՝ աշխատությունը շփանրաբեռնելու նպատակով: Բանն այն է, որ սպասածից շատ ավելի մեծ դուրս եկավ դուռ մատենագիտական նյութը:

Ինչպես արդեն ասել ենք, հայերեն մատենագիտությունը սյվելի լայն ըմբռնում ունի, քան մի շարք լեզուներում գործածվող հունական բիրլիոգրաֆիա-ն՝ ներկայիս փմատում: Այս հանգամանքը ավելի ակնառու դարձավ ներկա պրակի վրա աշխատելիս: Երբ մոտիկից ծանոթանում ենք 19-րդ դարի ընթացքում և 20-ի սկզբում հայոց մեջ կատարված դուռ մատենագիտական աշխատանքին, տեսնում ենք, որ նրա ամենախիստ դժված սահմաններն անգամ ընդգրկում են տպագիր և ձեռագիր ամենաբազմադան երկերի ներքին ու արտաքին նկարագրությունն ու քննությանը նվիրված մի լայն գործունեություն՝ սկսած ուղեցուցային և գրացուցակային մատենագիտությունից, մատենագիտական տարբերությունի տեսություններից ու ցանկերից մինչև գրագիտություն (բիրլիոգրաֆիա)¹, ներառյալ հայ տպագիր գրքի ու մա-

¹ Ներկա աշխատության վերնագրի ուսերեն նախկին թարգմանությունը (История армянской библиографии), անշուշտ, լավագույնը չէ: Ռուսերենում ներկայումս библиология բառը օգտագործվում է գրագիտության իմաստով, ներառյալ գրքի ու մամուլի պատմությունը: Ուրեմն հայերեն մատենագիտություն նշանակում է բիրլիոգրաֆիա և բիրլիոգրաֆիա, և

մուլի պատմություն, ապա մինչև Յնոագրագիտություն և հաճախ անանջատելի կերպով միահյուսվում են բանասիրությանը, ավելի ճիշտ՝ բանասիրական հետախուզումներին։ Ուստի նույնիսկ զուտ մատենագիտության պատմությունը ինչ-որ չափով ընդգրկում է բանասիրության պատմությունը։

Մեր աշխատանքը ներկա պրակի վրա ցույց տվեց, որ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում մատենագիտական գործը բավական մեծ տեղ է գրավել և բավական արդյունավետ եղել հայ մտավոր կյանքում, համենայն դեպս, շատ ավելի մեծ, քան մենք կարծում էինք նախքան փաստերի մեջ խորանալը և նոր փաստերին ծանոթանալը։

Հայ նոր մատենագիտությունը աշխարհում զարգացող մատենագիտության մի մասնիկն էր, հարյուրավոր թվերով կապված նրա հետ։

Հայ նոր մատենագիտության լավագույն նմուշները հրատարակ են եկել Արևմտյան Նվրոպայում և Ռուսաստանում, հայ մատենագետները մեծապես օգտվել են այդ երկրներում զարգացման բարձր մակարդակի հասած մատենագիտական գործի արդյունքներից, ինչ-որ չափով որդեգրել դրանց ավանդները՝ անշուշտ, պահպանելով ազգային ինքնությունը։ Ցավոք, հայերեն դեռ ոչ մի դիրք, զբաղյալ կամ նույնիսկ հոգված չկա արևմտանվրոպական, ռուսական, նաև ամերիկյան մատենագիտության պատմության հարցերի վերաբերյալ։ Ստիպված ներկա պրակում մի փոքրիկ ակնարկ տվեցինք այդ հարցերի մասին։

Այս պրակը գրելիս մեծ դժվարություն հարուցեց ուղղագրության հարցը։ Նման դժվարություն բոլորովին չառաջացավ առաջին և երրորդ պրակները շարադրելիս, քանի որ առաջինում նկարագրված ու բնութագրված մատենագիտական բոլոր գործերը գրաբար են և դասական կամ հին ուղ-

Հայ մատենագիտության պատմությունը ռուսերեն ավելի ստույգ կլինի թարգմանել՝ История армянской библиографии и библиологии։ Այս նկատառումով ներկա պրակում ճշտեցինք աշխատության վերնագրի ռուսերեն թարգմանությունը։

դադրությամբ ավանդված, իսկ երրորդում բոլոր նյութերը աշխարհաբար են և նոր, մասամբ էլ միջին (1922—1940 թթ.) ուղղագրությամբ ավանդված (միջին ուղղագրությամբ անվանված վերնագրերը շարադրանքում նկարագրել ենք նոր ուղղագրությամբ)։ Ներկա պրակտում ուղղագրության հարցը դժվարություններ հարուցեց այն պարզ պատճառով, որ 19-րդ դարի և 20-ի սկզբի հայերեն մատենագիտական բոլոր աշխատությունները հին ուղղագրությամբ են գրված, իսկ մենք նրանց նվիրված այս աշխատությունը շարադրում ենք նոր ուղղագրությամբ։ Հարց է առաջանում՝ որ ուղղագրությամբ պետք է գրել մատենագիտական բազմաթիվ և բազմապիսի աշխատությունների վերնագրերը, մատենագիտական ցանկերից բխող նմուշները, հատվածները, պարբերականների անունները և այլն։ Նոր ուղղագրությամբ, թե՛ հին (այսինքն՝ թողնել ուղղագրությունը նույնությամբ, թե՛ փոխել նորի)։

Առաջին հայացքից թվում է, թե վերնագրերի ուղղագրությունը պետք է նույնությամբ պահպանել, այսինքն՝ թողնել «Հայկական մատենագիտություն», «Յուզակ հայերէն ձեռագրաց» և ոչ թե Պարձնել «...մատենագիտություն», «...հայերէն ձեռագրաց»։ Բայց այստեղ է, որ բազմաթիվ հարցեր են առաջանում, ինչպես, օրինակ՝ այդ դեպքում ինչպես գրել հեղինակների անուն ազգանունները, այնպես, ինչպես գրված է բնագրում՝ Արսեն Ղազիկեան, Միքայել Միանսարեանց և այլն, թե՛ փոխել դարձնելով՝ Արսեն Ղազիկյան, Միքայել Միանսարյանց։ Եթե երկի նկարագրության ժամանակ (տողատակին և այլուր) մի կերպ հնարավոր է հեղինակների անուն ազգանունների հին ուղղագրությունը պահպանել, ապա չէ՞ որ շարադրանքի մեջ, ուր բազմաթիվ մարդկանց անուն ազգանուններ են տրվում, հոլովվում, ոչ մի կերպ հնարավոր չէ անընդհատ շեղվել շարադրանքի ընդհանուր ուղղագրությունից և անձնանունները գրել հին ուղղագրությամբ։ Եվ ի՞նչ իմաստ ունի այդ, երբ այսօր ապրող մի Միքայելի կամ Ղազիկյանի և կամ մի Միանսարյանցի ազգանունները նոր ուղղագրությամբ ենք գրում, երբ դա-

սական Նեղինակների երկերի աշխարհաբար գրված) նոր հրատարակությունները նոր ուղղագրությամբ են լույս տեսնում և այլն: Ուրեմն, Նեղինակների անուն ազգանունները նոր ուղղագրությամբ կատարվող շարադրանքում հին ուղղագրությամբ գրելն անիմաստ է, ըստ որում, անիմաստ է դառնում տողատակին էլ նույն անուն-ազգանունները հին ուղղագրությամբ գրելը: Բայց այդ դեպքում ի՞նչ նպատակ ունի վերնագրերի հին ուղղագրության պահպանումը, որոնք նույնպես բազմիցս հոլովվում են շարադրանքի մեջ, օրինակ, ի՞նչ կշահենք, եթե գրենք «Հայկական մատենագիտության» (և ոչ թե «...մատենագիտության»), «Հայկական մատենագիտութեամբ» (և ոչ թե «...մատենագիտությամբ») և այլն: Ոչ միայն որևէ բան չի շահվի, այլ կխախտվի շարադրանքի ուղղագրական միասնությունը, մանավանդ, եթե զրբի կամ հոգվածի վրա չկան ոչ այդ «մատենագիտութեան»-ը, ոչ «մատենագիտութեամբ»-ը և ոչ էլ որևէ այլ հոլովված ձև: Հոլովոդը շարադրանքի հեղինակն է, որ գրում է, նոր ուղղագրությամբ՝ ի՞նչ տրամաբանությամբ պետք է նա իր իսկ հոլոված այդ բառերի մեջ ուղղագրությունը փոխի: Իսկ եթե վերնագրերի հոլովված ձևերը իրոք պետք է շարադրանքի ընդհանուր ուղղագրությամբ գրել (Հայկական մատենագիտությունը «...մատենագիտությամբ» և այլն), ապա ինչու՞ ուղղական հոլովաձևերը թողնել հին ուղղագրությամբ, տրամաբանությունը պահանջում է դրանք ևս գրել ամբողջ շարադրանքի մեջ ընդունված ուղղագրական կանոններով:

Սակայն այս դեպքում էլ մի այլ հարց է առաջանում. չէ՞ որ գրաբար գրքերի վերնագրերը, որոնք նույնպես գրաբար են, անթույլատրելի է գրել նոր ուղղագրությամբ, որը միայն աշխարհաբարի համար է հորինված: Այս հարցի պարզ պատասխանն է՝ գրաբար գրքերի վերնագրերը գրել հին, իսկ աշխարհաբար գրքերինը նոր ուղղագրությամբ: Կա համապատասխան մատենագիտական կանոն, ըստ որի մի լեզվի տպագիր երկերը, անկախ նրանցում եղած ուղղագրությունից, նկարագրվում են տվյալ պահին գործող ուղղագրու-

թյամբ¹։ Այս դեպքում գրաքարը և միջին հայերենը դիտվում են առանձին լեզուներ։ Ուրեմն կանոնը վերաբերում է աշխարհաբարին՝ անկախ աշխարհաբար ռեկե հրատարակության մեջ կիրառված ուղղագրությանից հրատարակությունը նկարագրվում է ժամանակակից ուղղագրական կանոններով։ Մատենագիտական այս օրենքը հրկարատե փորձից է բխեցվել, նրա իմաստն այն է, որ մատենագետը ոչ թե գրքերի ու հոգվածների վերնագրեր պատճենող է, այլ ժամանակակից ընթերցողին տպագիր հրկերի վերաբերյալ տեղեկություններ հաղորդող։

Բայց այս օրենքը շատ կիսատ-պուտ է և դառնում է ոչ պիտանի մի շարք դեպքերում։ Օրինակ, ինչպե՞ս վարվել, երբ հրատարակության հեղինակային լեզուն և՛ գրաբարն է, և՛ աշխարհաբարը կամ գրաբարախառն աշխարհաբար է։ Ավելի լուրջ դժվարություն առաջանում է այն ժամանակ, երբ աշխատության լեզուն աշխարհաբարն է, իսկ վերնագիրը՝ գրաբար։ Այդպիսի վերնագրերով հրկեր շատ վան, մանավանդ՝ մատենագիտական, ահա օրինակներ՝ Ա. Սեդրակյանը աշխարհաբար գրած մի հոգված ունի, որի վերնագիրն է «Հնուրթինք հայրենեաց ի գաւառին Երնջակայ», Տ. Պալյանի մի ձեռագրացուցակը, որի հեղինակային քեզոն աշխարհաբար է, կոչվում է «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիօն և Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի մաղնիսայ (Վիճակ Զմիւռնիոյ)» Ը. Աճառյանի մի ձեռագրացուցակը (հեղինակային լեզուն դարձյալ աշխարհաբար) կոչվում է «Յուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին» և այլն։

Այսպիսի զուտ գրաբար վերնագրերը նոր ուղղագրությանը պրելը, անշուշտ, սխալ է, իսկ հին ուղղագրությանը պրելը դեպքում խախտվում է վերահիշյալ կանոնը՝ գրաբար գրված գործերի վերնագրերը հին, աշխարհաբար գրվածներինը նոր

¹ Տճ՝ս Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ ոչ մեծ գրադարանների և ընթերցողաֆիական ցանկերի համար, Երևան, 1953, էջ 13։

ուղղագրությամբ տալու վերաբերյալ: Կանոնը կարելի է լրացնել այսպես՝ աշխարհաբար գրքերի գրաբար վերնագրերն էլ գրել հին ուղղագրությամբ: Բայց այստեղ էլ նոր դժվարություն է առաջանում՝ միշտ չէ որ հեշտությամբ կարելի է որոշել վերնագիրը գրաբար է, թե աշխարհաբար: Ունենք «Յուցակ հայերէն ձեռագրաց» և «Յուցակ հայերէն ձեռագրերին» վերնագրեր: Առաջինի մեջ սեռական հոգնակիի կադմությունը (ձեռագրաց) ասում է, որ ողջ վերնագիրը գրաբար է, իսկ երկրորդի մեջ սեռական հոլովի աշխարհաբար կադմությունը (ձեռագրենքի) կարծես ասում է որ ամբողջ վերնագիրը աշխարհաբար է: Սակայն (այստեղ էլ սակայն կա) չէ՞ որ շարադասությամբ երկու վերնագրերն էլ գրաբար են, բացի այդ, չէ՞ որ ձեռագրաց և նման գրաբարյան ուրիշ ձևեր ընդունված են արևմտահայ աշխարհաբարում: Իմ ահա գրաբար վերնագիրը աշխարհաբարից տարբերելու դժվարություն: Երբեմն էլ միևնույն մատենագիտության տարիներ փոփոխակներն ու հրատարակությունները տարբեր՝ մե՛րթ գրաբար, մե՛րթ կիսագրաբար, մե՛րթ էլ աշխարհաբար վերնագրեր են ունենում, ինչպես, օրինակ՝ «Յուցակ գրոց տպագրելոց ի Մխիթարեան միաբանութենէ» (գրաբար), «Նիակատար ցուցակ գրոց Մխիթարեան տպարանին» (աշխարհաբարախառն գրաբար), «Նիակատար ցուցակ գրքերու Մխիթարեան տպարանի» (գրեթե աշխարհաբար): Ի՞նչ ուղղագրությամբ նկարագրել այս գրացուցակները:

Կա և մի այլ հարց. շարադրանքի մեջ ինչպե՞ս հիշատակել որեւէ հին հեղինակի երկը ընդհանրապես, այսինքն՝ ոչ թե նրա որեւէ առանձին հրատարակությունը, այլ երկի ունունը՝ հի՛ն, թե նոր ուղղագրությամբ: Օրինակ, Խորենացու «Ազգարանութիւն տոհմին Հաբեթեան...» երկի ընդունված անունն է «Պատմութիւն հայոց»։ Երկը վա և՛ գրաբար, և՛ աշխարհաբար: Արդ, եթե այդ անունը հիշում ենք իբրեւ սոսկ երկի և ոչ թե որպես որեւէ որոշակի՝ գրաբար կամ աշխարհաբար հրատարակության անուն, ի՞նչ ուղղագրությամբ պետք է գրվի այն, հի՛ն, թե՛ նոր: Դժվար է այս հարցին և:

Հիմնավոր պատասխան տալ. եթե ասենք՝ ՆՈՐ, ապա չէ՝ որ երկը գրաբար է գրված, իսկ եթե որոշենք գրել հնով, ապա հարց կառաջանա՝ չէ՝ որ երկը կա նաև աշխարհաբար և չէ՝ որ երկի անունն ենք տալիս աշխարհաբար շարագրանքի մեջ, ուր բոլոր կարգի հին, թե նոր հատուկ անունները նոր ուղղագրությամբ են գրվում:

Հարկ չենք համարում ավելի երկարացնել նման հարցերի ու դժվարությունների թվարկումը, ասենք միայն, որ հին ուղղագրությամբ հրատարակված գրքերի ու հոգվածների վերնագրերը նոր ուղղագրությամբ գրված գիտական աշխատություններում տարբեր կերպ են տրվում. ոմանք աշխատում են պահպանել հնդիսականների անուն ազգանունների և վերնագրերի հին ուղղագրությունը, քայց մինչև վերջ չեն կարողանում այդ անել և ավելի հաճախ փոխում են ուղղագրությունը, ուրիշները աշխատում են միայն վերնագրերի հին ուղղագրությունը պահպանել, բայց հոլովելիս նոր ուղղագրության են անցնում, հաճախ էլ հին ուղղագրությունը ամբողջովին փոխում են նորով, բայց դարձյալ թույլ տալով շեղումներ, ոմանք էլ նույնիսկ գրաբար գրքերի վերնագրերը նոր ուղղագրությամբ են գրում: Կարելի է բազմաթիվ դեպքեր բերել, երբ միևնույն աշխատության մեջ հնդիսակեր հին ուղղագրություն ունեցող վերնագրերը տալու որևէ միօրինակություն չի պահպանում, նույնիսկ միևնույն վերնագրի միևնույն գրության մեջ խառնում է հին և նոր ուղղագրությունները: Բայց «հի՛ն, թե նոր ուղղագրություն» հարցը բարդությունների է հանդիպում ոչ միայն վերնագրերը գրելիս, այլև քաղվածքներ բերելիս, թեև օրենք չկա՝ աշխարհաբար բոլոր քաղվածքները տալ միայն նոր ուղղագրությամբ: Բանն այն է, որ արևմտահայ աշխարհաբարի մեջ շատ են գրաբարյան արտահայտություններն ու ձևերը, և դրանք նոր ուղղագրությամբ տալիս հաճախ անհեթեթություն է ստեղծվում. օրինակ, «Ուսուցչապետ հայերէն լեզուի յՈւրբանեան դպրոցի» կապակցությունը նոր ուղղագրությամբ կլինի. «Ուսուցչապետ հայերեն լեզվի հՈւրբանյան դպրոցի», մի՞թե

անհեթեթությունն չէ այս «Նկարանյան»-ը, երբ փոքր չնչ նախորդում է մեծատառ Ու-ին: Կամ՝ «...քնականաբար յոկամս յառաջ եկած...» արտահայտութեան մեջ դեռ նոր հառաջ-ի հետ մի կերպ կարեւոր է հաշտվել, իսկ հոշ-ն ի՞նչ է, նոր արմատ. նոր բա՛ռ: Այսպիսի օրինակներն էլ շատ են, և այդպիսիք քիչ չեն բերվել նոր ուղղագրութիւնը ժամանակին քննադատութեան ենթարկած ականավոր բանաստեղծների կողմից:

Անշուշտ, վերահիշյալ, ինչպես և շատ ուրիշ դժվարութիւններ անմիջապէս կվերանային, եթէ վերանար այն, ինչ կոչվում է նոր ուղղագրութիւն, և եթէ հայոց լեզուն ունենար մեկ ուղղագրութիւն, որն է դասականը: Մատենագիտութեամբ զբաղվելիս շատ պարզ է դառնում, թէ ինչպիսի անհեռատեսութիւնն էր մի որոշումով հայերէնի միասնական ուղղագրութեան վերացումը աշխարհաբարի մի հատմանի համար, որոշում, որն, ի դեպ, կայացվեց ոչ մասնագետ մարդկանց պարզ քվեարկութեամբ և մեկ ձայնի մեծամասնութեամբ: Կողմ քվեարկողները հաշվի չէին առել այն իրողութիւնը, որ հայ ժողովուրդը մշակութային աւելցալ ունեցող ժողովուրդ է, իսկ այդ անցյալի, հատկապէս նրա ճոխ պարտեան հետ ներկան կապող կարեւորագոյն ողակներից ինչքը, կամուրջը ուղղագրութիւնն է, ուղղագրական ամբողջ ավանդութիւն՝ դարերի խորքից եկող: 1922 թվականին, ըստ էութեան, այդ կարեւոր օղակը, կամուրջը դեն նետվեց և յառեւի ժամանակակից արտասանութեան ճիման վրա օմի հնչւումն մի գիրք սկզբունքով նոր ուղղագրութիւն ստեղծելու քայլ արվեց, այսինքն՝ փորձ արվեց վերականգնելու 5-րդ դարի ուղղագրական սկզբունքը և մի կողմ թողնվեց մոտ մեկ ու կես հազարամյակի զրավոր մշակութի արմատացած ուղղագրական ավանդութիւն: Նպատակն էր հեշտացնել լեզվի ուսուցումը, բայց մոռացութեան մատնվեց, որ աշխարհի ոչ մի ժողովուրդ այդպէս արմատական ձեւով չի փոփոխել ու չի փոփոխում իր ավանդական ուղղագրութիւնը, թեև կան շատ ավելի բարդ և լեզուների ժամանակակից հեղուկական հա-

մակարգից շատ ավելի հեռացած ուղղագրություններ (անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի և այլն)։ Ընդ որում, փորձը ցույց է տվել, որ ուղղագրության, այսպես կոչված, պարզեցումը բոլորովին չի նպաստում գրագիտության բարձրացմանը (փաստեր կան, որ, օրինակ, անգլերենի կամ ռուսերենի «դժվար» ուղղագրություններն ավելի հիմնավոր են յուրացվում, քան «պարզեցված» հայկական ուղղագրությունը), որ ուղղագրության մեջ ամենակարևորը ավանդույթն է և նրա նկատմամբ հավատարմությունը (մինչդեռ քերականության մեջ ճիշտ «հակառակը» կարևորը տեսության և լեզվի իրական փաստերի համապատասխանությունն է, այստեղ ավանդույթին ենթարկվելը վնասակար է)։ 1940 թ. ճիշտ քայլ կատարվեց դեպի դասական ուղղագրության վերականգնումը, բայց, ցավոք, չափազանց մասնակի էր այդ վերականգնումը։ Իսկ այժմ գործն ավելի է բարդացել նրանով, որ երկուսի փոխարեն արդեն երեք ուղղագրություն է գոյացել, և ունենք այդ երեք տարբեր ուղղագրություններով հրատարակված հայերեն գրքեր ու պարբերականներ։ Պե՛տք էր արդյոք մի փոքր ժողովրդին նման ուղղագրական «շոտայություն»։ Հայ դասական ուղղագրության ձևափոխմանը քվե տվողները վաղուց հեռացել են մտավոր կյանքից, բայց ահա նրանց միջոցով տեղի ունեցած խախտումը մնացել է իբրև ժառանգություն, որից ազատվելն էլ հիմա լուրջ դժվարություն է, իբրև այն սովորել ու սովորում են հազարավորներ, էրրոսավար գրականություն է ստեղծվել նրանով։

Մատենագիտության տեսանկյունից ամենահեշտ լուծումը էրևի սլավոնական ուղղագրության վերականգնումն է՝ մասնակի շտկումներով։ Սակայն կան նաև ուրիշ շատ կարևոր տեսանկյուններ, ըստ որոնց նման վերականգնումը նոր բարդություններ կարող է առաջացնել։ Ուստի ուղած-չուղած ինչ-որ չափով պետք է համակերպվենք առն մտքին, որ այսուհետև էլ մատենագիտական նշումներում, ցանկերում և աշխատություններում կլինեն ուղղագրական հակասություններ, անմիջորինակություններ ու սխալ մոտեցումներ։ Թեև

կարծում ենք, որ ամեն ինչ պետք է անել դրանց քանակը նվազագույնի հասցնելու համար: Վաղուց անհրաժեշտություն կա (և այդ մասին քիչ չի ասվել) հայերեն տպագիր երկերի նկարագրություններում կիրառվող ուղղագրական հանգամանալից կանոններ մշակելու, որը պետք է անեն մատենագետները լեզվաբանների հետ միասին:

Իսկ ներկա պրակի մեջ ձգտել ենք պահպանել հետևյալ սկզբունքները. ա) հեղինակների անունները բոլոր դեպքերում գրել նոր ուղղագրությամբ, բ) գրաբար հեղինակային լեզու ռենցող հրատարակությունների վերնագրերը տալ հին, աշխարհաբար ունեցողներին (նաև պարբերականների)¹ նոր ուղղագրությամբ: Այս վանոնին հաճախ չեն ենթարկվում ձեռագրացուցակները, որոնց վերնագրերը երբեմն խիստ գրաբարյան են, ինչպես և որոշ գրացուցակներ, յուստի գ) անկախ ձեռագրացուցակների ներքին՝ հեղինակային լեզվից (գրաբար է, թե՛ աշխարհաբար) ակնհայտորեն գրաբար վերնագրերի հին ուղղագրությունը պահպանել (խուսափելով դրանք հոլովելուց), իսկ աշխարհաբարյան ձևերի առկայության կամ գերակշռության դեպքում վերնագրերը գրել նոր ուղղագրությամբ:

Մենք բնավ հակված չենք մտածելու, որ այս սկզբունքները լավագույնն են, մանավանդ, որ հնարավոր չեղավ գրանք հետևողականորեն կիրառել, ուստի եղած ուղղագրական անմիօրինակությունների, ինչպես և այլ հնարավոր վրիպումների, սխալների և տպագրական վրիպակների՝ համար խնդրում ենք ներողամիտ լինել, հին խոսքով՝ նքլ գիր ինչ սխալեցեալ իցէ, ներեցէք, քանզի կար իմ այսչափ բաւեց:

¹ Մատենագիտական աշխատության մի կարևոր հատկանիշն էլ նրանում տպագրական վրիպակների նվազագույն քանակը պիտի լինի: Այս հարցի մասին բավական խոսված է «Հայ մատենագիտության պատմություն» երրորդ պրակում, որը լույս տեսավ 1966-ին, և հակառակ պես չի և տպագրական վրիպակներով (հատկապես շատ են դեպքերը, երբ մատենագրությունն քառի փոխարեն տպագրվել է մատենագիտություն, և հակառակը, որը ամբողջովին անվաղում է խոսքի իմաստը):

Առիթն օգտագործելով՝ ջերմ շնորհակալութիւնն ենք հայտնում Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի ղեկավարութեանը, որը սիրով հանձն առավ տպագրելու աշխատութեան այս պրակը ևս: Երախտապարտ ենք նաեւ Նույն գրադարանի, ինչպես և Մաշտոցի անվան մատենադարանի այն աշխատակիցներին, որոնց հոգատարութեան շնորհիւ մենք կարողացանք օգտվել այդ գրապահոցներում եղած բազմաթիւ նյութերից:



ՀԱՅ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՋԱՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայ նոր մատենագիտությունը իր ժամանակի ծնունդն է, ժամանակի կնիքը վրան: Այն նոր է այնքանով, որքանով նոր են հայ նոր արվեստը, գրականությունը, ամբողջ մշակույթը: Ուստի հայ նոր մատենագիտության մի շարք առանձնահատկությունները ընդհանրապես հայ նոր մշակույթի առանձնահատկություններն են, և վերջինս հին ու միջնադարյան մշակույթից տարբերվում է մի շարք այնպիսի գծերով, որոնք տարբերում են նաև հայ նոր և միջնադարյան մատենագիտությունները:

Ըստ ընդունված ավանդույթի 18-րդ դարով վերջանում է հայ հին ու միջնադարյան մշակույթը: 19-րդ դարը հայ նոր մշակույթի ժամանակաշրջանն է: Հատկապես է, որ 1800 թվականը այն սահմանագիծը չէ, որ ճշգրտորեն դրված է հայ ժողովրդի մշակութային կյանքի հին և նոր շրջանների միջև:

Տարբեր երկրների ու ժողովուրդների մշակույթի ու քաղաքական պատմության մեջ սովորաբար առանձին հարյուրամյակներ ընդ որովում են իրենց տարբերիչ առանձնահատկություններով, թեև ժամանակը հարյուրամյակների քաժանին իսկ արհեստական է, ստակ թվադրանական հարմարավե-

տությունից է թելագրվում և չի կարող ձգարտորեն համընկնել քաղաքականության ու մշակույթի զարգացման իրական շրջանների հետ:

Սակայն մյուս կողմից, եթե մենք փորձենք փնտրել համիջնադարյան և նոր մշակույթները իրարից բաժանող մի ավելի հարմար ու անվիճելի սահմանագիծ, հագիվ թե հաջողության հասնենք:

Հայ նոր գրականության, առհասարակ նոր մշակույթի, ուստի և նոր մատենագիտության ժամանակաշրջանը, այդպիսով, սկսվում է 19-րդ դարի սկզբից և ավարտվում 20-րդ դարի սկզբներով: Համաշխարհային պատմության մեջ այդ ժամանակամիջոցը գիտության, արդյունաբերության, նաև մշակույթի և քաղաքական ուսմունքների արագաթափ զարգացման մի ողջ դարաշրջան էր, լի կարևոր իրադարձություններով, որոնց մասին կան բազմաթիվ ստվարածավալ աշխատություններ:

Հայ ժողովրդին այդ ժամանակաշրջանը մեծ րարիճներ, բայց և շատ մեծ աղետներ բերեց:

Մաղկում ապրեց հայ արվեստը, հատկապես զեղարվեստական գրականությունը: Բաղական է հիշենք այդ ժամանակաշրջանում իրենց գրական գործունեությամբ հանդես եկած հայ մեծ գրողների լուսապայծառ բույլը, որպեսզի պարզ դառնա այդ ժամանակաշրջանի արդասավորությունը հայ զեղարվեստական գրականության համար. հաշատուր Աբովյան, Պերճ Պոռչյան, Գարբիել Սունդուկյան, Հակոբ Պարոնյան, Ռաֆայել Պատկանյան, Րաֆֆի, Պետրոս Դուրյան, Ավետիք Իսահակյան, Միսաք Մեծարհնց, Վահան Տերյան, Դանիել Վարուժան...

Այդ ժամանակաշրջանում էր, որ հայ մշակույթի անդաստանում բարձրացավ ճհայոց նոր քերթողության Արարատը՝ Հովհաննես Թումանյանը, որի հանճարափայլ ստեղծագործությունները, Ա. Իսահակյանի խոսքով ասած, Վնդմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարազարդ թարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թոխը:

Այդ նույն ժամանակաշրջանում թափով դարգացավ նաև այլ երաժշտությունը՝ Տիգրան Զուխաջյանի, Քրիստափոր Կարա-Մուրղայի, Մակար Եկմալյանի, Կոմիտասի, Արմեն Տիգրանյանի և տաղանդավոր այլ երաժիշտների ջանքերով, նոր բարձրության հասավ հայ գեղանկարչությունը Հովհան-նես Ավաղովսկու, Վարդգես Սուրենյանցի, Գ. Բաշինջաղյանի և ուրիշների աշխատանքով։

Աննախընթաց էր հայ հրապարակախոսության ծաղկումը։ Շատ են այս ժամանակաշրջանում հայոց մամուլում ասպարեղ եկած տաղանդավոր հրապարակախոսները և դեռևս իր ուսումնասիրողին է սպասում հայ հրապարակախոսության պատմությունը։ Սակայն այստեղ ևս պետք է հիշենք Միքայիլ Նալբանդյանին, որն իր այլովող սիրտը ջահի պես ձեռքին բռնած ուղում էր առաջնորդել սիրելի ազգին դեպի այնքան բաղձալի ազատությունը, բայց զոհվեց ողբերգորեն։ Մ. Նալբանդյանի ազդեցությունը շատ զգալի եղավ հայ հասարակական մտքի վրա։

Դիտություն քնազալառներից հայոց մեջ լրջորեն դարգացավ բանասիրությունը լայն առումով. ուսումնասիրվեցին հայերեն հին ձեռագրերը, վիմագրությունները, օտար աղբյուրները հայերի մասին, հրապարակվեցին հայ հին հեղինակների գրած ու թարգմանած շատ երկեր, գրվեցին քաղամասիվ ուսումնասիրություններ հայ հին մատենագրության տարբեր հարցերի վերաբերյալ։ Այդպես դարգացավ հայ պատմական գիտությունը, գրականության ու առհասարակ մշակույթի պատմությունը, ուսումնասիրվեց հայոց լեզուն՝ թե՛ հինը, թե՛ նորը, սկիզբ առավ հայ ժողովրդական քանդակարվեստության գրառումը և ուսումնասիրումը։

Դա հայագիտության վերելքն էր հայ գիտնականների ջանքերով։ Հիշենք, որ հայագիտությամբ զբաղվում էին նաև նվթարացի տշ քիչ խոշոր բանասերներ։

19-րդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսից տկսած վերելք ապրեցին հայ ազգային-ազատագրական շարժումները, որոնք սակայն առաջին համաշխարհային պատերազմին

ձակատագրական պարտություն կրեցին: Հայ ժողովուրդը դարձավ մեծ պետությունների քաղաքական հաշիվների ու խարդավանքների զոհ: Դարի վերջերին բոլորովին հայկական կոտորածները, իսկ 1915 թվականի հայոց մեծ եղիունը աշխարհի աշավոր հարված էր, որպիսին հայ ժողովուրդը չէր ստացել իր ամբողջ դարավոր կյանքի ընթացքում: Մարդկության պատմության մեջ մինչև այդ չտեսնված զարհուրելի ցեղաջնջման ու տեղահանության միջոցով Հայաստանի մեծ մասը դատարկվեց բնիկ հայ ժողովրդից:

Առավել ողբերգականն այն էր, որ եթե 19-րդ դարում հայ մշակույթը ծաղկման հասավ հիմնականում հայրենիքից դուրս, այսինքն՝ ժամանակաշրջանի բարիքը ծաղկեց ոչ հայրենիքում, ապա ոչնչով չփոխհատուցվող մեծ շարիքը բուն հայրենիքի մեջ կատարվեց:

Հայոց մշակութային կյանքի հին ու նոր շրջանների միջև կարծես ինչ-որ դադար կամ որոնման շրջան է եղել: Օրինակ, գեղարվեստական գրականության համար աշխարհի շրջան էր միջնադարյան հայ գրականության վերջին ամենախոշոր ներկայացուցիչ՝ Սայաթ-Նովայի գրական, գուսանական գործունեությունից մինչև հայ նոր գրականության առաջին ամենախոշոր ներկայացուցիչ՝ Խ. Արսլյանի գրական-հասարակական գործունեության միջև ընկած ժամանակը:

19-րդ դարի, մանավանդ նրա առաջին կեսի հայ մշակույթի մեջ գեուես հանդիպում են միջնադարյան որոշ երևույթներ, սակայն դրանք չեն այդ հարյուրամյակի հայոց մշակութային կյանքի բնորոշ գծերը. վերջինս բայում է ժամանակի ընդհանուր ոգուն համեմատ: Հանդես է գալիս հայկական վեպ, այս անգամ նոր իմաստով, ապա նաև՝ հայկական վիպերգ, բայց արդեն պոեմ հիբոպական անունով և իմաստով, մանրանկարչության փոխարեն ասպարեզ է գալիս գեղանկարչություն և գծանկարչություն, դարձյալ նոր ժամանակների իմաստով, ճրագչություն միջ հին հայկական խազերի փոխարեն հիբոպական տարածված նոտագրությունն է օգտագործվում, հայկական երագչությունը նոր ձևերով է

դաշնակիւմ, վերջապէս հայ մարդը ավելի ու ավելի է սկըսում եւրոպական տարազ հագնել և այլն:

Անշուշտ, հայկական նոր մշակույթի ճշուդերը պահում են հայկական ոգին, սակայն նոր ժամանակների ազդեցութիւնն էլ իր դերը կատարում է:

Մատենագիտութիւնը, իբրև մշակույթի բաղկացուցիչ մի մաս, գոյանում ու առաջադիմում է այն կենտրոններում, ուր զարգանում է տվյալ ժողովրդի մշակույթը, գիտութիւնը: Հայ հին և միջնադարյան մշակույթը հիմնականում զարգանում էր Հայաստանում, և նույն ժամանակների հայ մատենագիտութիւնն էլ ծագեց ու առաջադիմեց դարձյալ Հայաստանում: Հայ նոր մշակույթն ու գիտութիւնը մեծ մասամբ ծաղկեցին Հայաստանից դուրս, բնականաբար հայ նոր մատենագիտութիւնն էլ պետք է հիմնականում գոյանար ու զարգանար Հայաստանից դուրս:

Վենետիկ, Վիեննա, Թիֆլիս, Պետերբուրգ, Կ. Պոլիս, ահա սրանք էին հայ նոր մատենագիտութեան աշխուժացման կենտրոնները: Իսկ Հայաստանում նման դեր մասամբ կատարեցին էջմիածինը, ինչպես նաև Գլումբին (Ալեքսանդրապոլ) ու Շուշին:

Հայ նոր մատենագիտութիւնը ոչ քիչ բան ժառանգեց հին ու միջնադարյան մատենագիտութիւնից: Բավական է ասել, որ 19-րդ դարում հայկական մատենագիտութեան մի տարածված տեսակը հղավ հայ պատմիչների և առհասարակ հայ հին հեղինակների երկերի մատենագիտութիւնը, որ անցյալի ավանդների վրա էր հիմնվում և, անշուշտ, հնում եղած այդ ընդլայնման մատենագիտական աշխատանքի շարունակութիւնն էր: Հայ հին ու միջնադարյան մշակույթի կնիքը հայ նոր մատենագիտութեան վրա կարելի է տեսնել նաև բաղմամբիվ այլ դեպքերում: Անկասկած է, որ հայկական նոր մատենագիտութիւնը հնի ջարունակութիւնն է, և ամբողջը մի անխախտ միասնութիւն:

Սակայն ակնառու է նաև, ինչպես ասվեց, առհասարակ հայ նոր մշակույթի և մասնավորապէս մատենագիտութեան

վրա նոր ժամանակների, նոր քաղաքակրթության ազդեցությու-
նունը: Եթե նույնիսկ 19-րդ դարում հայկական մատենագի-
տությունը զարգանալու էր Հայաստանում, միևնույն է, այն
պետք է հաշվի առնեիր եվրոպական երկրներում, ներառյալ
Ռուսաստանում լուրջ հաջողությունների հասած մատենագի-
տական աշխատանքը, օգտվեիր նրա նվաճումներից: Բայց
ահա զարգանալով եվրոպական երկրների (այդ թվում Ռու-
սաստանի) կենտրոններում կամ նրանց մոտ՝ հայ նոր մա-
տենագիտությունը, բնականաբար, ավելի պետք է ազդվեր
այդ երկրների մատենագիտական ավանդներից, Այսպիսով,
հայ նոր մատենագիտությունն իր խորքում լինելով ազգային
և հայոց հին մատենագիտության շարունակությունը, որոշ
շահույթ էլ եվրոպական մատենագիտության ավանդների կրո-
ղըն է, նրա փորձի վրա հարստացած: Պատկերավոր ասած,
հայ նոր մատենագիտությունը հին շարունակությունն էր
օտար, հյուրընկալ շրջապատում, դա հայոց ավանդական
տունն էր, որ օտար, բայց շատ պարարտ հողում իր նոր
ընձուղները, ճյուղերն էր արձակում: Ոստի հայ նոր մա-
տենագիտության զարգացման պատկերը անհնար է ձիշտ
ներկայացնել, առանց տալու նրա զարգացման միջավայրի
դոնն շատ համառոտ նկարագիրը:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ, ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Պատմական փաստերը ակնառու կերպով ցույց են տա-
լիս, որ տարբեր երկրներում մատենագիտության արապա-
թափ զարգացումը առնչվում է տպագրության սկզբնավոր-
ման ու զարգացման հետ: Գուցե և այսօրվա իմաստով մա-
տենագիտությունը և նրա տեսությունը իրենց զոյությունը
պայմանավորված են եվրոպական տպագրության դրուսով ու
յարգացմամբ:

խոսքը մասնավորում ենք հատկապես եվրոպական տպագրության վրա, քանի որ նախքան այդ եղած (դեռևս 11-րդ դարից) չինական, ապա կորեական ու ճապոնական տպագրական մշակույթները համաշխարհային տարածում չգտան և ժամանակակից մատենագիտության զարգացման գործում անմիջական դեր չկատարեցին:

15-րդ դարի կեսերին Գերմանիայում սկիզբ առած գուտենբերգյան տպագրությանն էր, որ զարմանալի թափով տարածվեց աշխարհով մեկ՝ հասնելով նաև Հեռավոր Արևելք, այդ թվում՝ Չինաստան (ուր մոռացվել էր տպագրական հին արվեստը): Եվ պատահական չէ, որ նոր շրջանի և ժամանակակից մատենագիտությանն էլ նախ ծաղկման հասավ Եվրոպայում:

Եիշտ կլինի մատենագիտության ընդհանուր պատմությանը բաժանել երկու մեծ մասերի՝ նախատպագրական և ևստպագրական:

Եվրոպական հին մատենագիտության ակունքները, անշուշտ, այնտեղ է փնտրել Մերձավոր Արևելքում և ամենից առաջ Նդիպտոսում ու Միջագետքում: Իսկ այս երկրներում պիրքը, գրագարանն ու դրանց անբաժան ուղեկիցը հանդիսացող մատենագիտությունը հնագույն ժամանակներում հն սկիզբ առել: Մեզ հասել է եգիպտական պապիրուսային փաթեթների վիմագիր գրացուցակ, կազմված դեռևս 3800 տարի սուրճ (էգիպտացիները օգտվում էին սուրճից) կամ ասորեստանյան խոշորագույն գրադարանի (Աշուրբանիպալի գրադարանը նրանից) կապի աղյուսներից կազմված գրացուցակի մնացորդները և այլն:

Մերձավոր Արևելքի մշակույթը, նաև դիրն ու գիրքը հունական մշակույթի միջոցով անցան Եվրոպային: Հունական կամ, ավելի ճիշտ, հելլենիստական շրջանի մշակույթի ծաղկման ժամանակներում Մերձավոր Արևելքում մեծ դեր կատարեցին Պերգամոն ու Ալեքսանդրիան իրենց հարուստ գրադարաններով (առաջինն ունեւր շուրջ 200.000, երկրորդը՝ 700.000 միավոր գրականություն): Այս գրադարանները, հասկանալի

է, նաեւ մատենագիտութեան զարգացման կարեւոր կենտրոններ էին: Ընդ որում, Ալեքսանդրիայի գրադարանի գլխավոր մատենապետ Կալիմաքոսի (3-րդ դար մ. թ. ա.) կազմած «Աղյուսակներ» կոչվող՝ առարկայական ծանոթագրված գրադուցակը իր մատենագիտական քարձր որակով հին աշխարհի լավագոյն և ծավալով (120 հատոր) խոշորագոյն մատենագիտութունն էր: Տեղեկութուններ են պահպանվել նաեւ հունական այդ կարգի ուրիշ գրադուցակ-աղյուսակների մասին, Հունական մատենագիտութունը դեռ երկար ժամանակ, նաեւ բյուզանդական շրջանում. Եվրոպայում առաջնակարգն էր: Եվրոպական մյուս երկրներում գրադարանային գործն ու մատենագիտութունը շատ քան ժառանգեցին հունականից: Բավական է հիշենք, որ եվրոպական լեզուների զգալի մասում օգտագործվող մատենագիտական անվանումներից շատերը, այդ թվում ամենակարեւորները՝ բիբլիոտեկա, բիբլիոգրաֆիա, կատալոգ և այլն հունարեն են:

Հռոմը հունական մշակույթի հետ ժառանգելով հունական մատենագիտութունը՝ զարգացրեց այն: Ուշագրութեան արժանի են Հռոմի առաջին հանրային գրադարանի հիմնադիր Լարկոս Տերենցիոս Վարրոնի (2—1-ին դարեր մ. թ. ա.) մատենագիտական (մանավանդ գրքագիտական) աշխատութիւնները և Բժիշկ Գալենոսի (2-րդ դար) մատենագիտական ուղեցույցները (սեփական աշխատութիւնների):

Հունա-հռոմեական մատենագիտական աշխատութիւններ-

1 Լրիվ տեւեր. Աղյուսակներ այն մարդկանց, ովքեր ճշակվեցին գիտլիլիների բոլոր բնագավառներում և այն ամենի, ինչ նշանակ գրեցին:

2 Գրադարանագիտական-մատենագիտական այս անվանումները նկատելի զարգացում են ապրել, Օրինակ, բիբլիոգրաֆիա-ն հունարենում (գործածվել է 5-րդ դարից, մ. թ. ա.) նախապես նշանակել է ձեռագիր մատյանների արտագրութիւնը, գրչութեան արվեստը, իսկ բիբլիոգրաֆ՝ արտագրողը, ընդօրինակողը կամ գրիչը: 17-րդ դարում բիբլիոգրաֆիա-ն մտնում է եվրոպական լեզուների մեջ իր այժմյան իմաստով: Բիբլիոգրաֆիա-ն սկսում է նշանակել ոչ թե գիրք գրել կամ արտագրել, այլ գիրք նկարագրել նաեւ ծանօթագրել, գրքերի ուղեցույցներ և ցուցակներ կազմել, ինչպես և իրենք՝ այդ ուղեցույցներն ու ցուցակները:

րի մեջ սաղմնային վիճակում արդեն եղել են ժամանակակից մատենագիտության մի քանի գլխավոր տեսակները (Էյուդային և անհատական մատենագիտություններ, կենսամատենագիտություն և այլն)։

Եվրոպայում հաջորդ դարերի ընթացքում և վաղ միջնադարում նույնպես ստեղծվեցին մատենագիտական մի շարք աշխատություններ, ինչպես, օրինակ, Հերոնիմոսի (4—5-րդ դարեր), Գենադիոս Մարսելցու (5-րդ դ.), Իդեֆոնս Տուլեդացու (6-րդ դ.) և այլոց կազմած կենսամատենագիտությունները, Կասիոդորոսի (5—6-րդ դդ.) «Էռզեուր և աշխարհիկ լինթերցանության մասին» ծրագրային մատենագիտությունը և այլն։

Նախատպագրական հետագա շրջաններից կարելի է հիշատակել նաև ֆրանսիացի Ռիշար դե Ֆուրնիվալի (13-րդ դար) «Գրքականոնը» («Բիբլիոնոմիա») և անգլիացի Ռիչարդ Յե Բերիի (13-րդ դար) «Գրքասիրությունը» («Բիբլոթեքոն»), որոնք մասամբ են միայն մատենագիտական աշխատություններ։ Ավելի ուշ շրջանից է անգլիացի Ջոն Բոստոնի (15-րդ դ.) «Եկեղեցական գրողների գրացուցակը», որ մոտ քսան տասնյակ գրագրանների համահավաք գրացուցակ էր։

Եվրոպական տպագրության սկզբնավորման առաջին տարիներին տպագրված մատենագիտական ցանկերում դեռևս հիմնականում ձեռագիր մատյաններ էին գրանցվում, օրինակ, դերմանացի Յոհաննես Տրիտենհեմցու մատենագիտական հաշտնի աշխատությունները, տպագրված 15-րդ դարի վերջում։

Սակայն տպագրությունը իրեն համառորեն զգացնել էր տալիս մատենագիտության բնագավառում։ Զարմանալի է այն արագությունը, որով զարգանում էր տպագրական գործը։ Բավական է ասել, որ 15-րդ դարի վեցերից մինչև 1500 թվականը, այսինքն՝ տպագրության տարածման առաջին հիսնամյակում եվրոպայում գործող տպարանների քանակը հասել էր 2000-ի։

Ամենատարբեր բնույթի գրքեր են բազմաքանակում տպագրու-

Յյան միջոցով, մեծանում է հրատարակությունների տպագրանակը. աներևակայելիորեն իջնում է գրքի գինը (մանավանդ գրչագիր մատյանների՝ Վամեմատ), գիրքը դառնում է մատենի հարյուր հազարավորներին, ստեղծվում է գրքի լայն շուկա, գրավաճառանոցներ, գոյանում են մեծ գրադարաններ: Մատենագիտությունը սոսկ հետաքրքրական գրադմուք լինելուց դառնում է կյանքի հրատապ պահանջ, առաջնահերթ մի անհրաժեշտություն, առանց որի աներևակայելի կլիներ տպագրական գործի. ու նրա վրա հիմնվող գիտության ու մշակույթի հետագա զարգացումը:

Շվեցարացի բժիշկ և քնախույզ Կոնրադ Գեսները (1515—1565 թթ.) եղավ տպագրության դարաշրջանի առաջին խոշոր մատենագետը և, ըստ էության, ժամանակակից իմաստով մատենագիտության ձևավորողը¹:

Նշանակալից եղավ Գեսների ժամերնդհանուր գրադարանը (Bibliotheca universalis)² եռահատոր մատենագիտության գերը: Այս հուշակավոր մատենագիտությունը ընդգրկում է միայն դասական լեզուներով՝ լատիներեն, հունարեն և եբրայեցերեն հրատարակված գրքեր: Առաջին հատորը այրենական կառուցվածք ունեցող կենսամատենագիտություն է:

Երկրորդ հատորը, որ կոչվում է Քսանմակ գիրք համընդհանուր բաժանմունքներով՝ կարգային (սիստեմատիկ) կառուցվածք ունի, 19 բաժիններում խմբավորված են փիլիսոփայական գրքեր: Գեսների մատենագիտության 3-րդ հատորը նրա դասակարգման 21-րդ բաժինն է նվիրված, որը քրիստոնեական աստվածաբանությունն է: Գեսների ամբողջ մատենագիտությունը ընդգրկում է մոտ 3000 հեղինակի

1 Որոշ հեղինակներ Գեսներին համարել են մատենագիտության հայր: Դա, իհարկե, պայմանականորեն է ընդունելի, քանի որ Գեսներից շատ ավելի վաղ է ստեղծվել մատենագիտությունը:

2 Լրիվ անունն է՝ ժամերնդհանուր գրադարան կամ առավել լիակատար գրացուցակ բոլոր այն հեղինակների, որոնք զբաղվել են հետևյալ հրեր լեզուներով՝ լատիներեն, հունարեն, եբրայեցերեն. հրատարակվել է Յյուրիխում, 1545—1555 թթ.:

150000 զիրք, ունի այբբենական և առարկայական օժանդակ-
ցանկեր:

16-րդ դարից իվրոսլավում սկսում են կազմվել նաև ազ-
գային տպագիր մատենագիտություններ: Արդեն 15-րդ դարի
վերջում վերոհիշյալ Յոհաննես Տրիտենհեմցու «Գերմանիայի
հայտնի այրերի գրացուցակը» գերմանական ազգային տպա-
դիր մատենագիտության առաջնեկն էր:

1548 թ. լույս տեսավ անգլիացի Զոն Բեյլի «Մեծ Բրիտա-
նիայի հայտնի դրողների ամփոփագիրը» ժամանակագրա-
կան մատենագիտությունը (որը վերահրատարակվեց 1557 և
1559 թթ.), իսկ 1595-ին անգլիական ազգային մատենագի-
տությունը յրացվեց նշանավոր հրատարակիչ և գրավաճառ
Լնդրյու Մաունդելի «Անգլիական տպագիր գրքերի ցուցակ»
աշխատությամբ: Այստեղ մի շարք նորություններ հիմ-
նարարային դարձան տպագիր երկերի հետագա մատենագի-
տական նկարագրությունների համար (օրինակ, թեկուզ այն,
որ Մաունդելը առաջին անգամ գրքերի հեղինակային նկա-
րագրությունները սկսում էր ոչ թե հեղինակների անուննե-
րով, այլ ազգանուններով և այբբենական կարգն էլ որոշում
էր ըստ ազգանունների):

Իտալացի Անտոնիո Ֆրանչեսկո Դոնին 1550 թ. հրատա-
րակից իր «Գրադարան» կոչվող իտալական ազգային մա-
տենագիտությունը (իտալերեն գրքերի գրացուցակ), որը
առաջին իվրոսլավական մատենագիտությունն էր, կազմված ոչ
թե յատիներեն, այլ տվյալ երկրի ազգային լեզվով (իտա-
լերեն):

Ֆրանցիս Գրուդե դե Լակրուա դյու-Մենը իր «Ֆրանսիա-
կան գրադարան» (Փարիզ, 1584) և Անտուան դյու-Վերդյեն
իր նույնպես «Ֆրանսիական գրադարան» (Լիոն, 1585) գրա-
ցուցակներով սկզբնավորեցին ֆրանսիական ազգային տպա-
դիր մատենագիտությունը:

16—18-րդ դարերում եվրոպական մատենագիտության
դարգացմանը շատ էր խթանում գրավաճառությունը: Կարևոր
դեր կատարեցին Գերմանիայի երկու քաղաքներում՝ Լայպ-

չի գում և Մայնի Ֆրանկֆուրտում կազմակերպվող գրքային տոնավաճառները, որոնց մասնակիցները, ինչպես և քաղաքապետարանները հրատարակում էին ընդարձակ գրացուցակներ: Հետագայում տոնավաճառային՝ գրացուցակները դարձան գերմանական հետագարձ (ռետրոսպեկտիվ) մատենագիտության հիմքը:

Գրավաճառության, ի դեպ, ինչպես նաև գրարնելության նողի վրա ստեղծվեցին նաև գրքերի պարտադիր օրինակի առաջին օրենքները: 1556 թ. Անգլիայում հիմնված անգլիական գրավաճառների միությունը սկսեց ստանալ նոր լույս տեսնող գրքերի պարտադիր օրինակներ, որոնց հիման վրա Անգլիայում կազմվում էին գրատոնավաճառային շատ քարձրորակ գրացուցակներ: Մոտ երկու տասնյակ տարի հետո պարտադիր օրինակի օրենք սահմանվեց նաև Գերմանիայում (Մայնի Ֆրանկֆուրտի տոնավաճառների կապակցությամբ, բայց, թերևս, ավելի շատ գրարնելական նպատակներով):

Կարևոր էր նաև 17-րդ դարի հոլանդական պրավաճառ կոռնեկիուս վան Բելզեմի մատենագիտական աշխատանքը: Վերջինս 1680-ական թվականներից սկսած հրատարակեց իրավաբանական և պատմական գրականության, ինչպես նաև դիմակաների ու օրոցային գրքերի (մինչև 1500 թ. լույս տեսած) շատ արժեքավոր մատենագիտություններ:

1645 թվականից ֆրանսիացի լուի Ժակոբը Փարիզում լույս է ընծայում Ֆրանսիայում հրատարակվող գրականության մատենագիտական տարեգրքի պրակները: Մատենագիտական այս պարբերականը (կոչվում էր՝ «Դալիայի Նամ-ընդհանուր մատենագիտություն», նաև «Փարիզի մատենագիտություն») շուտով փակվում է, բայց նրա գաղափարը մրնում է, քիչ անց նորից մարմին առնում: Ժակոբը առաջինն էր, որ բիբլիոգրաֆիա (Bibliographia) անվանումը օգտագործեց ժամանակակից իմաստով, իբրև գրքերի նկարագրություն, գրքերի ուղեցույց կամ ցուցակ, նախքան այդ նույն իմաստով օգտագործվում էին միայն Bibliotheca (մատենա-

դարան կամ գրադարան), index (ցանկ), catalogue (ցուցակ կամ գրացուցակ) անվանումները:

Եվրոպական մատենագիտության դարգացման գործում չշանակալից տեղ ունեն նաև գրասիրական (բիրլիոֆիլական) մատենագիտությունները, որոնցից ամենակարևորը եղավ ֆրանսիացի հայտնի գրավաճառ-մատենագետ Գիլյոմ Ֆրանսուա Դերյուր Կրտսերի (18-րդ դար) հազվագյուտ գրքերի «Ոսուցողական մատենագիտությունը»¹, Նե-դե-լյա-Ռոշելի «Մտորումներ մատենագիտական գիտության մասին» հավելվածով:

Զարգացավ նաև օրորոցային գրքերի (ինկունարույների) մատենագիտությունը: Այս շարքից հայտնի են Միքայել Մետտերի (Անգլիա) «Տալարական տարեգրություն» հինգ-հատորյա մատենագիտությունը (Հաագա, Ամստերդամ, Լոնդոն, 1719—1741), Միքայել Դենիսի կազմած լրացուցիչ մասերով (Վիեննա, 1789) և գերմանացի Գեորգ Պանցերի նույն տեսակի մատենագիտությունը, բաղկացած 11 հատորից:

Եվրոպայում առաջին անգամ մատենագիտության մատենագիտություն (երկրորդ աստիճանի մատենագիտություն) լույս է տեսել 1664 թվականին (Ժնևում), դա Փիլիպոս Լաբրի «Գրադարանների գրադարան» աշխատությունն է:

17-րդ դարից սկսած Եվրոպայում զարգանում է նաև կեղծանունների մատենագիտությունը:

Նույն ժամանակներում սկսում են հրատարակվել գրադարանային գրացուցակներ: Այդպիսի տպագիր ծավալուն առաջին գրացուցակը Ամստերդամի համալսարանի գրադարանի գրքերն էր ներկայացնում (տպվել է 1612 թ.): Այնուհետև հրատարակվեցին նաև Լեյդենի (1716 թ.), Վոյֆենբյու-

¹ Ոսուցողական մատենագիտություն կամ շտադրանգ հազվագյուտ և ուշագրավ գրքերի ճանաչման մասին (Փարիզ 1763—1768):

² Այս անունով են կոչվում այն գրքերը, որոնք լույս են տեսել 15-րդ դարում, երբ տպագրությունը դեռևս օրորոցային կամ խանձարության վիճակում էր:

տելի (1717 թ.), Օբսֆորդի (1753 թ.), Վատիկանի (1745—1756 թթ.) և այլ գրադարանների գրացուցակները:

Մատենագիտական պարբերականներ ստեղծելու փորձերից մեկը պատկանում է գերմանական մեծ փիլիսոփա Գոթֆրիդ Հեյնեիցին (1646—1716), որը Վուլֆենբյուտելի գրադարանում աշխատում էր իրեն գրադարանավար (ուշագրավ է, որ որոշ ժամանակ անց՝ 1770 թվականից միևնույն գրադարանում գրադարանավար է աշխատել նաև գերմանական մեծ գրող ու մտածող Գոթֆոլդ Հեյնեի):

18-րդ դարի մատենագիտական կարևոր աշխատություններից է Թեոփիլոս Գեորգիի «Եվրոպական համընդհանուր գրքային բառարանը», բաղկացած ութ հատորից (Լայպցիգ, 1742—1758): Կազմողի նպատակն է եղել տալ տպագիր գրքերի ցուցակը եվրոպական տպագրության սկզբից մինչև 1757 թվականը (ընդգրկում է մոտ 150.000 անուն):

Արևմտաեվրոպական մատենագիտությանը զուգընթաց զարգանում էր նաև Արևելյան Եվրոպայի երկրների մատենագիտությունը:

Ռուսական հնագույն մատենագիտական հուշարձանները ստեղծվել են 10-րդ դարում, դրանք Խալտնի և ծածուկ (Ճիշտ և կեղծ) գրքերի ցուցակներ են: Այնուհետև, մինչև 18-րդ դարը ստեղծվել են վանքային գրատների մի շարք գրացուցակներ և այլ մատենագիտական ցանկեր:

18-րդ դարում, մանավանդ նրա երկրորդ կեսից սկսած ռուսական մատենագիտությունը ավելի լուրջ քայլեր սկսեց անել: Տպագրության, գրավաճառության և գրադարանների արագ զարգացումը Ռուսաստանում պահանջ են դնում մատենագիտության մի քանի տեսակների շտապ կազմավորման: Այստեղ ևս ստեղծվում են գրավաճառային և գրադարանային մի շարք գրացուցակներ: Օրինակ, ուշագրավ Լրևիլոյթ էր Ա. Անլիի «Գրողների գրացուցակը» (1736 թ.):

Նշանավոր ռուս մշակութային գործիչ, հրատարակչի-գրավաճառ Նիկոլայ Նովիկովի (1744—1818) գործունեությունը շատ կարևոր եղավ ռուսական մատենագիտության

«Լատագա զարգացման գործում: Հայտնի է նովիկովի կադ-
մած «Ռուս գրողների պատմական բառարանի փորձը»
(1772 թ.) և նրա կողմից 1777 թվականից հրատարակվող
ոտուերեն առաջին մատենագիտական պարբերականը՝
«Մանկտպետերուրգյան գիտական տեղեկագիր»¹ անունով:

Այնուհետև, նշանակալից են ն. Բանտիշ-Կամենսկու
(1737—1814 թթ.) մատենագիտական երկերը, հատկապես
«Ռուսական գրքերի նկարագրությունը» Ռ. Դամասկինի
(1737—1795 թթ.) «Ռուսական գրագրարանը», Ա. Բուրտովի
(1738—1833 թթ.) «Ժանդակ մատենագիտական ցանկերը և
այլն:

19-րդ դարում՝ գիտությունների և արդյունաբերության
այդ հախուտն զարգացման ժամանակաշրջանում տպագիր
դիմաց, պարբերականը արդեն դարձել էին ամեն մի գիտու-
թյան անկապտելի մասը, գիտությունների կրողը, գիտական
մտքի հաղորդման և պահպանման գլխավոր միջոցը:

Այդ դարը իր հետ բերեց տպագիր արտադրանքի աննա-
խագնայ աճ, որը իր հերթին առաջ բերեց մատենագիտական
աներևակայելիորեն վիթխարի աշխատանք:

Նշանավոր ֆրանսիացի մատենագետ Գաբրիել Պենյոն
հաշվել է, որ հիվրոպական տպագրության սկզբից մինչև
19-րդ դարի առաջին քառորդը (1825 թ.) տպագրվել է ավելի
քան 3 միլիոն գիրք: Իսկ Միջազգային մատենագիտական
ինստիտուտի (Քրյուսել) գլխավոր քարտուղար Պոլ Օսլեի
հաշվումներով եվրոպական տպագրության սկզբից մինչև
1900 թվականի սկիզբը տպագրվել է ավելի քան 12 միլիոն

¹ Ռուսաստանում հիմնադրված առաջին մատենագիտական պարբե-
րականը (1772-ին) գերմաներեն լեզվով էր, դա Բակմեյստերի «Russische
Bibliothek»-ն էր:

անուն գիրք, Սրանք ընդհանուր առմամբ ճիշտ հաշվումներ են, Ստացվում է, որ 1825 թվականից մինչև 1900 թվականը, այսինքն՝ 19-րդ դարի վերջին 75 տարում տպագրվել է մոտ 2 միլիոն գիրք, իսկ գուտենբերգյան օրերից սկսած նախորդ ամբողջ ժամանակաշրջանում (մոտ 375—380 տարի) տպագրվել է 3 միլիոն գիրք, այսինքն՝ 3 անգամ ավելի պակաս:

Մատենագետները հաշվում են, որ ամբողջ 19-րդ դարում պետք է տպագրված լինի շուրջ 10 միլիոն անուն գիրք, Միջին տպաքանակը 500 օրինակ համարելու դեպքում (թեև դա ոչ թե միջինն է, այլ միջին նվազագույնը) հարյուրամյակում լույս տեսած գրքերի ընդհանուր տպաքանակը կկազմի 5 միլիարդ օրինակ:

Թե անունների և՛ թե օրինակների տեսակետից գրքերի յուսպիսի քանակը մարդկային հասարակության կյանքում մշակութային նոր որակ, նախքան այդ շեղած մի նոր երևվույթ էր, որ և նոր բնույթի մատենագիտության պահանջ էր դնում:

19-րդ դարի համար է՛լ ավելի հատկանշական էր պարբերական հրատարակությունների աճը: Ըստ հաշվումների մինչև 1828 թվականը ամբողջ աշխարհում լույս է տեսել 3168 պարբերական, իսկ 1901 թվականին աշխարհի միայն քսանվեց երկրներում եղել է 53.766 անուն պարբերական: Մատենագետների հաշվումներով 20-րդ դարի սկզբներին 19-րդ դարի սկզբների համեմատությամբ պարբերական հրատարակությունների քանակը (անունների) ավելացել է շուրջ քսանհինգ անգամ:

Գրատպության զարգացման այսպիսի թափն էր, որ բստեղծեց 19-րդ դարի մատենագիտական այն մեծածավալ ցանկերը և ուղեցույցները, որոնց մոտ նախորդ դարերի մատենագիտական ամբողջ աշխատանքը շատ փոքր է թվում:

19-րդ դարում և 20-ի սկզբին Նվրոպայում լույս տեսած մատենագիտական աշխատությունների մասին խոսելիս սո-

վորաբար հարկ է լինում սահմանափակվել ամենից ավելի նշանակալից և հայտնի դարձած երկերով: Մինչդեռ այդ ժամանակաշրջանի նույնիսկ երկրորդական թվացող մատենադիտությունները հաճախ ավելի արժեքավոր են, քան նախորդ դարերի ոչ քիչ մատենագիտական աշխատություններ, որոնց առանձին տեղ է հատկացվում մատենագիտության պատմության մեջ:

Գարասկդերին (1802—1804 թթ.) լույս տեսավ նշանավոր ֆրանսիացի գրավաճառ և մատենագետ Գաբրիել Պենյուի «Գրքագիտական քաղաքական բառարան»¹ երկհատոր աշխատությունը, որ ավանդ էր մատենագիտության տեսության քննադատում:

19-րդ դարի կեսերից մատենագետների մեջ ավելի ու ավելի է նկատվում հակումը ազգային մատենագիտության նկատմամբ: Համլնդհանուր (սուր երկրներն ընդգրկող) և լիակատար մատենագիտություն կազմելու ձգտումը, որ նկատվում է նախկին մատենագետների մեջ, տեղի է տալիս ազգային տպագիր արտադրանքի արձանագրական մատենագիտությանը: Դիտություններ ստեղծելու հակամարտ:

Պահանջ է առաջանում նաև ընտրովի կամ հանձնարարական մատենագիտական ցանկեր ստեղծելու նկատմամբ: Այս պահանջը թելադրվում է այն փրոդուկտներից, որ հաճախ միևնույն թեմայի, երբեմն միևնույն հարցի վերաբերյալ լույս են տեսնում հազարավոր աշխատություններ և մասնագետը

¹ Բառարանը կոչվում էր «Dictionnaire raisonné de Bibliologie». Այս վերջին բառը (բիբլիոլոգիա) ռուսերեն այժմ թարգմանվում է книговедение, Հայերեն կլիեի զբաղիտություն կամ զբաղանություն: Սակայն հայերեն մատենագիտություն անվանումը, ինչպես ասել ենք, իր մեջ ընդգրկում է նաև զբաղիտություն իմաստը: Զնայած դրան, մենք ղերադասելի ենք համարում բիբլիոլոգիա-ն զբաղիտություն թարգմանել իմաստի որոշակիությունը պահպանելու և շփոթություններից խուսափելու համար:

ռէ մի հնարավորութիւն չի ունենում անգամ բաւորն արագորեն նայելու: Օրինակ, ըստ ոչ լրիվ հաշվումների 1912 թվականին Վ. Գյոթեի մասին 20 հազար աշխատութիւն էր գրվել: Այսպիսի դեպքերում միայն մատենագիտութիւնն է ի վիճակի լավագոյն աշխատութիւնների ընտրութիւն կատարել կամ որևէ այլ ձևով օգնել մասնագետներին գրականութեան այդպիսի ծովում կողմնորոշվելու:

Մյուս կողմից մատենագիտութեան զարգացման հետ շատանում է տարբեր տեսակ մատենագիտական աշխատութիւնների, ցանկերի, ուղեցույցների քանակը և որևէ անհրաժեշտ մատենագիտութեան գոյութեան մասին իմանալն անգամ դժուար է դառնում: Ըստ հաշվումների 19-րդ դարի վերջում արդեն ասպարեզում կային շուրջ 135.000 մատենագիտական տարբեր բնույթի ուղեցույցներ, աշխատութիւններ: Այսպես պահանջ է առաջանում մատենագիտութեան մատենագիտութիւնը լրջորեն զարգացնելու, որը և կատարվում է 19-րդ դարում:

Սակայն մատենագիտութեան բնագավառում 19-րդ դարի ամենաշուրջ նվաճումը պետք է համարել մի շարք երկրներում արձանագրական մատենագիտութեան կայուն պարբերականների ստեղծումը: Եվրոպական մի քանի երկրներում դեռ անցյալ դարում սկզբնավորված մատենագիտական այդ պարբերականների զգալի մասը պահպանվել է մինչև այսօր (երբեմն անունների որոշ փոփոխութեամբ):

Ֆրանսիայում 19-րդ դարում շարունակվում է հրատարակվել 1763-ին հիմնադրված «Ֆրանսիայի մատենագիտութիւնը», 1837 թվականին անգլիացի հրատարակիչ Լոնկմենսը սկիզբ է դնում անգլիական «Հրատարակիչների շրջաբերական» մատենագիտական պարբերականին, իսկ 1843 թվականից գերմանական «Հինրիխս» հրատարակչութիւնը սկսում է լույս ընծայել «Գերմանիայի համընդհանուր մատենագիտութիւնը»: Այս պարբերականներից մեկը դարձավ Մեծ Բրիտանիայի, մյուսը Գերմանիայի աղգային մատենագիտութեան օրգանը:

1867 թվականից սկիզբ է առնում (Ֆլորենցիայում) իտալական պետական արձանագրական մատենագիտությունը (սկսում է հրատարակվել ժխտալիայի մատենագիտությունն հանդեսը)։

Ամերիկյան ազգային պարբերական մատենագիտությունը սկիզբ է առնում 1852-ին Գ. Զալլդի ջանքերով, որի հիմնադրած ամսագիրը նորոգում է Ֆ. Լեյպոլդը՝ լույս ընծայելով «Հրատարակիչների շաբաթաթերթ» մատենագիտական պարբերականը։

Հրատարակվում են նաև բազմաթիվ այլ ընդլայնված մատենագիտական պարբերականներ։ Օրինակ, մի- շաբաթ հրկրենբուրգի հաճախակի պարբերականություն ունեցող հանդեսներից լույս են ընծայվում մեկ կամ մի քանի տարվա և կամ կես տարվա տպագիր արտադրանքը արձանագրող պարբերականներ, ինչպես, օրինակ, Անգլիայում հիմնվում է «Միացյալ թագավորությունում հրատարակված գրքերի ցուցակ» (հետագայում՝ «Քրիտանական գրացուցակ») տարեգիրքը (1835-ից), Գերմանիայում՝ նախ Ա. Կիրխհոֆի «Գրացուցակը» (1856 թ.), ապա «Հինրիխսսի» «Գերմանական գրքի ուղեցուցը», ԱՄՆ-ում՝ «Ամենամյա ամերիկյան գրացուցակը» (1887-ից) և մանավանդ Հ. Վիլսոնի նշանավոր «Գրքերի համահավաք ցուցակը»։

Հիմնադրվում են նաև մի շաբաթ ճյուղային մատենագիտական պարբերականներ, հատկապես կիրառական գիտությունների նվիրված ընթացիկ գրականությունն արձանագրելու նպատակով։

Ռուսիա թափ է ստանում ետադարձ ազգային մատենագիտությունը։ Հայտնի է Զ. Էվանսի «Ամերիկյան մատենագիտությունը» (1903-ից), որ առանձին պրակներով արձանագրում է ԱՄՆ-ում հրատարակված գրականությունը սկսած 1639 թվականից (ԱՄՆ-ում տպագրության սկզբնավորման թվականը) մինչև 1820-ը։

19-րդ դարում լուրջ նվաճումներ ունեցավ պարբերականներում տպագրված հոդվածների վերլուծագրական մատենա-

գիտությունը. կարելի է հիշել գերմանացի Գիտրիխի Գերմանական ամսագրային գրականության մատենագիտությունը, որ առհասարակ եվրոպական մատենագիտության հրաշալի նմուշներից է (հատոր առ հատոր սկսել է հրատարակվել 1897 թվականից (այսպիսով) և ամերիկացիներ Ուիլյամ Պուլի և Ուիլյամ Ֆլեմինգի «Պարբերական գրականության ուղեցույցը» (սկսել է հրատարակվել 1853-ից)։

Հիմնադրվում են նաև պարբերականները արևանագրող (ըստ թերթերի և ամսագրերի անունների) մատենագիտական տարեգրեր, որոնց հիմնական նպատակը գրավաճառային էր։ Գրանցից էին Անգլիայում «Նյուսպեյպրս պրես դիրեկտորի»-ն (1846-ից), Գերմանիայում (այսպիսով) «Ամսագրերի և լրագրերի հասցեագիրքը» (1861-ից) և այլն։

Հսկայական քայլեր կատարվեցին գրադարանային մատենագիտության բնագավառում։ Ստեղծվեց «Բրիտանական թանգարանի գրադարանի տպագիր գրքերի գրացուցակ»՝ հսկայական աշխատությունը հայտնի մատենագետներ Ռ. Գարնետի և ապա Ա. Միլլերի ղեկավարությամբ (առաջինը ղեկավարել է աշխատանքը 1881—1889 թթ., երկրորդը՝ 1890—1900 թթ.)։ Գրացուցակի երկու մատենաշարները այրբենական կառուցվածք ունեն։ Մինչև 1900 թվականը հրատարակված գրականությունը ներկայացված է (այբբենական կարգով) 393 հիմնական և 44 հավելվածային գրքերում, որոնք համարվում են մասեր (ընդամենը 437 մաս)։ Երբեմն մի քանի մաս մի հատոր են համարում (ընդամենը 108 հատոր)։

Նույն ջարդի մյուս մեծածախալ հրատարակությունը 1892 թվականից սկզբնավորված «Բեռլինյան ստացումների վերնագրեր» գրացուցակն է, որ գերմանական մի շարք գրադարանների (Բեռլինի պետական և Գերմանիայի 15 տարբեր բուհական գրադարանների) կողմից նոր ստացվող գրքերի համահավաք այբբենական գրացուցակն է (լույս է տեսել պրակներով, հետագայում վերանվանվել է «Գերմա-

նական գրադարանների համահամվաք գրացուցակ. նոր ստացումներ»):

1857 թվականից Փարիզում սկսեց հրատարակվել Ֆրանսիայի ազգային գրադարանի «Ընդհանուր գրացուցակը»: Հրատարակության նախագծի հեղինակ նշանավոր մատենագետ Լեոպոլդ Դելիլը նախատեսել էր գրացուցակը կազմել այբբենական սկզբունքով և ամփոփել այն 300 ստվար հասարակում:

Գրասիրական բնույթի մատենագիտական ցանկերից կարևոր էին Ֆրանսիացի Ժ. Շ. Բրյունեի աշխատությունները և մանավանդ նրա «Գրավաճառի և գրքասերի ձեռնարկը» (Փարիզ, 1810), որը հետո մի շարք անգամ վերահրատարակվեց (հինգ կամ վեց հատորով) և գերմանացի գրադարանագետ Ֆ. Էրերտի «Ընդհանուր մատենագիտական բառարանը» (Լայպցիգ, 1821—1830):

Հրատարակվեցին օրոքոցային և հնատիպ գրքերի մի շարք մեծածավալ մատենագիտական ցանկեր: Այդ ցանկերի շնորհիվ պարզվեց, որ Եվրոպայում տպագրության ամենավաղ շրջանում (մինչև 1500 թ.) հրատարակված այդ գրքերը բավականին պատկառելի քանակ են կազմում՝ ավելի քան 40.000:

Օրոքոցային գրքերի մատենագիտական առավել արժեքավոր ցանկերից են (19-րդ դարում հրատարակված) Լ. Հայնի երկհատորյա մատենագիտությունը (Շտուտգարտ—Փարիզ, 1826—1838), ապա այդ մատենագիտության, ինչպես և Դ. Պանցերի արգեն հիշատակված աշխատության լրացումները մի քանի հատորով (Կ. Բուրգեր, Ա. Կոպինշեր, Դ. Ռայխլինգ և ուրիշներ), անգլիացի Թոմաս Դիրզլինի «Բիրլինգտոնիկա Սպենսերիանա» (Լոնդոն, 1814—1822) քառահատոր մատենագիտությունը, հավելվածներով և այլն:

Մի շարք խոշոր գրադարաններ հրատարակում են իրենց ունեցած օրոքոցային գրքերի ցուցակները: Գրվում են օրոքոցային և հնատիպ գրքերի վերաբերյալ ուսումնասիրություններ, հրատարակվում են մատենագիտական աշխատու-

թյուններ օրորոցային զրքերի անվանաթերթերի պատկերներով և այլն:

Օրորոցային և հնատիպ զրքերի հավաքումը, ուսումնասիրումը և նկարագրումը մատենագիտության մեջ մի հատուկ ուղղություն դարձավ, որ հիմնադրվել էր դեռևս 16-րդ դարում նյուրնբերգցի գրադարանավար Յոհան Զաուրերտի և ֆրանսիացի Ֆիլիպ Լարի կողմից: Ընդ որում, վերջինս է առաջին անգամ 15-րդ դարում տպագրված զրքերին օրորոցային (Incunabula) անունը տվել:

Քրասիրական մատենագիտության մեջ ևս իրրև հազվագյուտ հրատարակություններ նկարագրվում էին օրորոցային և հնատիպ զրքեր: Անգլիական այդ կարգի մատենագիտական ցանկերից հայտնի է Ու. Լոուդենսի «Անգլիական գրականության ձեռնարկ մատենագետի համար» աշխատությունը, 5 հատորով (Լոնդոն, 1857—1864):

Հրատարակվեցին Եվրոպայի հին տպագրության նշանավոր դեմքերի (Ալդերի, էտյենների, էլզվիրների) հրատարակությունների մատենագիտական ցանկերը: Կազմվեցին նաև անհետացած զրքերի, մի օրինակ պահպանված զրքերի, դաճաճ զրքերի մատենագիտություններ և այլն:

19-րդ դարում նկատելի քայլեր արեց ռուսական մատենագիտությունը:

Դեռևս դարասկզբին (1803 թվականից) ռուս հայտնի մասնագետ, հրատարակիչ և գրավաճառ (նաև գրադարանավար) Վասիլի Սուպիկովը (1765—1818) սկսում է աշխատել մի հսկայական գործի՝ ռուս զրքի ամբողջական մատենագիտության կազմման վրա: 12 տարվա համառ աշխատանքի րալիս է իր արդյունքը՝ 1813—1821 թվականների բնթացքում 5 հատորով լույս է տեսնում («Պետերբուրգում») Սուպիկովի «Ռուսական մատենագիտության փորձը», ուր ընդգրկված էին տպագրության սկզբից մինչև 1813 թվականը Ռուսաստանում և այլուր լույս տեսած 13.249 զրքեր:

Այնուհետև, մատենագիտության բնագավառում աճանդ են մուծում Ռուսաստանի գիտնականներ Ի. Բուլեն, Ա. Շտոր-

խը, Զ. Ադելունդը և ուրիշներ, Հատկապես կարևոր դեր են կատարում վերջին երկուսը՝ Ռուսաստանում հիմնադրելով դրքի վիճակագրություն: Իսկ 1812 թվականին Ն. Գրեշի շան-քելով սկիզբ է առնում Ռուսական ընթացիկ արձանագրական մատենագիտությունը («Սին օտեչեստվա» հանդեսում): 1825 թվականից սկսում է լույս տեսնել Պ. Կեպպենի «Մատենադիտական թերթիկներ» («Библиографические листы») արձանագրական-մատենագիտական պարբերականը: Ավելի ժողովրդական բնույթ ունեին Ն. Պոլեյի «Մոսկովսկի տելեգրաֆ» հանդեսի մեջ տպագրվող արձանագրական մատենադիտական ցանկերը:

Իրենց մատենագիտական բաժիններով աչքի ընկան նաև ռուսական մյուս հայտնի պարբերականները՝ «Սովրեմեննիկ», «Օտեչեստվեննիե դապիսկի» և այլն:

1811 թվականին Վ. Անաստասևիչի «Մատենագիտության մասին» տեսական աշխատությանը («Ուլյա» հանդեսում) հրապարակմամբ Ռուսաստանում սկզբնավորվում է մատենագիտության տեսությունը, որը հետո լուրջ նվաճումներ ունեցավ: Ընդ որում, Վ. Անաստասևիչը հայտնի դարձավ նաև իր մի շարք մատենագիտական ցանկերով, որոնցից ամենակարևորն է 1820—1821 թվականներին հրատարակված «Ռուսական ընթերցանության գրքերի նկարագրություններ»-ը («Роспись российским книгам для чтения»): Չորս հիմնական և մեկ լրացուցիչ հատորից բաղկացած այս մատենագիտությունը թեև մի քանի մասնավոր գրադարանների գրացուցակ է, քայքայ ընդգրկում է ռուս տպագիր գրքի հիմնական մասը:

Այնուհետև, ռուսական մատենագիտության մեջ կարևոր դեր կատարեցին Պավել Ստրոկեր (1796—1876 թթ.), Եվգենի Բոթիսովիտինովը (1767—1837 թթ.) և ուրիշներ: 1837 թվականին հիմնադրվում է ռուսական պետական արձանագրական մատենագիտությունը («Նոր լույս տեսնող գրքերի ուղեցուցիչ») լուսավորության մինիստրության «Ժողովալ»-ում:

Մինչև 19-րդ դարի կեսերը Ռուսաստանում լույս են տես-

նում նաև մի շարք ճյուղային մատենագիտական ցանկեր. գլխավորապես՝ պատմական, աշխարհագրական, իրավաբանական, տնտեսագիտական, գյուղատնտեսական, բնագիտական գրականություն:

Հատկապես լուրջ զարգացում ապրեց երկրագիտական մատենագիտությունը: Ռուսական կայսրության տարրեր մասերի պատմության, բնական հարստությունների, տնտեսության, ազգագրության նկատմամբ հետաքրքրությունը պատճառ դարձավ, որ մատենագետները կազմեն համապատասխան գրքերի ու հոդվածների մատենագիտական աշխատություններ: Կովկասին վերաբերող մատենագիտական ցանկերում, հասկանալի է, որ ընդգրկվեցին նաև Հայաստանի ու հայ ժողովրդի մասին եղած գրքեր ու հոդվածներ: Ռուսաստանում հրատարակված երկրագիտական բնույթի լավագույն մատենագիտություններին էր Մ. Միանսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» աշխատությունը, հայագիտական գրականության իր ճոխ բաժնով: Բայց այս մասին ստորև:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում մեծ թափ ստացավ մատենագիտական տարբեր բնույթի պարբերականների հրատարակումը՝ «Գրքային լրաբեր» («Книжный вестник»), «Մատենագետ» («Библиограф»), Ռուսական մատենագիտություն («Российская библиография») և այլն:

Դարի երկրորդ կեսում հանդես եկան ռուսական մատենագիտության առավել նշանավոր դեմքերը: Հիշենք նրանց.

Պյոտր Պեկարսկի (1828—1872), հիմնական գործերն են «Գիտությունն ու գրականությունը Ռուսաստանում Պետրոս I-ի ժամանակ» (2 հատոր, Պետերբուրգ, 1862) և «Կայսերական գիտությունների ակադեմիայի պատմություն» (Ակադեմիկոսների մատենագիտական բառարան է, 2 հատորները լույս տեսան 1870—1873 թթ.):

Գրիգորի Գեեհադի (1826—1880), կազմել է ռուս մի շարք գրողների մատենագիտությունը (Պուշկինի և Գոգոլի երկերի առաջին մատենագետն է), խոշորագույն երկերն են «Ռու-

սական մատենագիտութիւն» գրականութիւնը» (մատենագիտութիւն մատենագիտութիւն է, Պետերբուրգ, 1858) և «18—19-րդ դարերում մահացած ռուս գրողների ու գիտնականների տեղեկատու բառարանը» (3 հատորով, Բեռլին, Մոսկվա, 1876—1903)։

Վլադիմիր Մեծով (1831—1894), Պետերբուրգի հանրային գրադարանի գրադարանավար, ապա ռուս խոշորագույն մատենագետ, Նոյն է նաև Ռուսաստանի ամենից ավելի բեղմնավոր մատենագետը, կազմել է ավելի քան 100 անուն մատենագիտական աշխատություններ, դրանցից 50-ը բավական խոշոր։ Օրինակ, նրա «Ռուսական պատմական մատենագիտությունը» բաղկացած է 11 ստվար հատորից։ Մյուս մատենագիտական աշխատություններից են՝ «Պուշկինիան» (Պուշկինի երկերի մատենագիտությունը), «Ռուսական և ընդհանուր գրականության պատմություն», «Ռուսական աշխարհագրության, վիճակագրության և ազգագրության գրականություն» և այլն։

Անմյուն Վեցզերով (1855—1920), Գլխավոր գործերն են «Ռուս գրողների և գիտնականների քննադատական-կենսագրական բառարան...» (երկու տարբերակով, առաջինը 6 հատոր, 1889—1904 թթ., անավարտ, երկրորդը՝ 8 պրակ, 1915—1918, անավարտ) և «Նյութեր ռուս գրողների բառարանի համար» (4 հատոր, անավարտ)։

Ալեքսանդր Նեուստրոն (1825—1902), գլխավոր գործն է «Պատմական հետազոտություն ռուսական ժամանակակից պարբերական հրատարակությունների և ժողովածուների մասին, 1703—1802 թթ...» (1898)։

Նիկոլայ Լիսովսկի (1854—1920), գլխավոր գործն է՝ «Ռուս պարբերական մամուլը 1703—1900 թթ.», որի վրա մատենագիտը աշխատել է 25 տարի։ Մատենագիտություն է դասավանդել Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում։ Զբաղվել է դրբի պատմությամբ։

Ռուսաստանում նախահեղափոխական պետական արձա-

նագրական մատենագիտության լավագույն պարբերականը
եղավ 1907—1917 թթ. լույս տեսնող «Գրքի տարեգիրը», որի
խմբագիրն էր ականավոր ուսման մատենագետ Ա. Տորոպովը:



19-րդ դարում, մանավանդ նրա երկրորդ կեսից սկսած
բնորոշ երևույթ դարձավ մատենագիտական և գրադարանա-
յին, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային միավորում-
ների, համագումարների ու համաժողովների կազմակերպու-
մը: 1868 թ. Ֆրանսիայում կազմակերպվեց Մատենագիտա-
կան ընկերություն, որն ուներ իր ամսագիրը և հրապարակեց
մի շարք մատենագիտական գործեր:

1892 թ. Նոնդոնում հիմնադրվեց մի. այլ Մատենագիտա-
կան ընկերություն, որը նույնպես օգտակար գործ կատարեց
մատենագիտական աշխատությունների հրատարակման բնա-
գավառում: Անգլիայում ու Ֆրանսիայում բացի սրանցից,
կային նաև ուրիշ մատենագիտական ընկերություններ:

Դարավերջին և 20-րդ դարի սկզբում մատենագիտական
ընկերություններ կազմակերպվեցին նաև այլ երկրներում
(Իտալիա, ԱՄՆ, Գերմանիա և այլն). դրանցից ամենախո-
շորներն էին Ամերիկայի մատենագիտական ընկերությունը
և Ամերիկյան զբաղաբանային միավորումը:

1877 թ. Նոնդոնում գումարվում է 1-ին գրադարանային
համաժողովը (կոնգրեսը), ուր Եվրոպայի գրադարանավար-
ները առաջին անգամ ծանոթանում են և համախոսություն տա-
լիս մամբրիկացի գրադարանային աշխատող Մ. Գյուրիի զրո-
բերի դասակարգման տասնութական ճամակարգին, որ հետո
տարածվեց ամբողջ աշխարհում:

1878-ին Փարիզում գումարվում է մատենագետների 1-ին
համաժողովը, իսկ 1895 թվականին Բրյուսելում հրավիրված
միջազգային մատենագիտական համաժողովը հիմնադրեց
նշանավոր Միջազգային մատենագիտական ինստիտուտը

(Թրյուանել)։ Ավելի ճիշտ, այդ համաժողովում միջազգային հռչակվեց ղեկս 1894 թվականին մատենագետներ Պ. Օտլեի և յա Ֆոնտյենի հիմնադրած հաստատությունը։ Տարբեր երկրներին մատենագետներ հարց հարուցեցին իրենց կառավարությունների առջև միջազգային ինստիտուտին նյութապես օժանդակելու մասին։ Ինստիտուտի հիմնական նպատակը պետք է լիներ համաշխարհային ընդհանուր մատենադիտություն ստեղծելը։ Միլիոնավոր գրքերի քարտեր հավաքվեցին ինստիտուտում, սակայն այդ ահռելիորեն մեծ աշխատանքը իր ավարտին չհասավ։ Եվ այնուամենայնիվ ինստիտուտի ղեկը շատ մեծ եղավ։ Նա ունեցավ իր պարբերականը, ապա մի շարք կարևոր մատենագիտական գործեր ղրատարակեց։ Սակայն նրա ամենանշանակալից գործերը եղան 1) Մ. Դյուիի տասնորդական դասակարգման համակարգի ժողովրդականացումը և 2) գրադարանային-մատենադիտական համաշխարհային միակերպ քարտի (12,5×7,5 սմ. մեծությամբ) հաստատումը (որը նախապես ընդունված էր ԱՄՆ-ում)։

Միջազգային մատենագիտական ինստիտուտը իր կազմելիք համաշխարհային մատենագիտության համար հիմք լնդունեց Մ. Դյուիի տասնորդական դասակարգումը և մշակելով ու հարստացնելով այդ դասակարգման աղյուսակը, ղրատարակեց այն մի քանի հատորով։ Աշխարհի հազարավոր գրադարաններ որդեգրեցին այդ աղյուսակները գրքերի դասավորման և կարգային (սխտեմատիկ) գրացուցակներ ու քարտարաններ կազմելու համար։ Տասնորդական դասակարգումը հեշտ էր, հարմար և ճկուն գրադարանային գործում ու մատենագիտական աշխատանքի մեջ։ Տարբեր լեզուներով թարգմանվեցին տասնորդական դասակարգման լրիվ, կրճատված, խիստ համառոտված կամ մշակված ու վերափոխված աղյուսակներ։ Հիշենք, որ մինչև օրս էլ Խորհրդային Միության գրադարանների մեծագույն մասը, այդ թվում Հայաստանի գրեթե փոքր գրադարանները օգտագործում են տասնորդական դասակարգման կամ նրա փոփոխությունների

ենթարկված այս կամ այն աղյուսակը: Գրադարանային-միակերպ քարտը նույնպես դարձավ համաշխարհային, և խորհրդային Միությանում մինչև այժմ էլ այն հաջողությամբ շարունակվում է գրեթե բոլոր գրադարաններում:

19-րդ դարում և 20-ի սկզբում Ռուսաստանում էլ ստեղծվեցին մի քանի մատենագիտական-գրադարանային միավորումներ, որոնցից ամենակարևորն էր Մոսկվայի համալսարանի մատենագիտական խմբակը (հիմն.՝ 1839 թ.), որ հետագայում վերածվեց ռուսական մատենագիտական ընկերության: Ընկերությունը մի շարք մատենագիտական հրատարակություններ իրականացրեց, այդ թվում՝ քաղմեքախտ մատենագետ Բ. Բոդնարսկու «Ռուս մատենագիտության մատենագիտությունը» արժեքավոր աշխատությունը: Կարևոր դեր կատարեց նաև ռուս գրքագետ Ա. Լույսակինի հիմնադրած Ռուսական մատենագիտական (Общественно-научная) ընկերությունը:

Վերջապես 19-րդ դարում, ինչպես և 20-ի սկզբում լուրջ հիմքերի վրա դրվեց մատենագիտական կրթությունը: Մի շարք երկրներում մատենագիտական առարկաները մտցվեցին դպրոցական և բուհական ծրագրի մեջ (առաջինը՝ Փարիզում, 1821 թվականին), դրվեցին մատենագիտության բազմաթիվ դասագրքեր (առաջին դպրոցական դասագիրքը ֆրանսիացի Աշերի գրչին է պատկանում, տպագր.՝ 1806 թ. Մարսելում):

Այնուհետև, մի քանի երկրներում ստեղծվեցին նաև գրադարանային-մատենագիտական հատուկ ուսումնարաններ և բուհեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արևմտաեվրոպական, ռուսական և ամերիկյան մատենագիտության համառոտ ակնարկին նվիրված այս բաժնում փաստական, վիճակագրական տվյալները բերված են զխափորապես ըստ հետևյալ աշխատություն-

447. G. Schneider Handbuch der Bibliographie. 4 Auflage. Leipzig, 1930, IX, 674 s. М. Н. Куфара Иностранная библиография. Москва, 1934, IV, 276 стр., К. Р. Симон Иностранная общая библиография. Москва, 1941, 164 стр., К. Р. Симон История иностранной библиографии. Москва, 1963, 736 стр. Н. В. Здобнов история русской библиографии до начала 20-го века. 3-е изд. Москва, 1955, 607 стр., С. Л. Рейсер Хрестоматия по русской библиографии с 11-го века по 1917 г. Учеб. пособие для библиотечных вузов. Москва, 1956, 447 стр.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայ նոր մատենագիտությունը նույնպես նախ տպագիր մատենագիտություն է: Ինչպես հին ու միջնադարյան ձեռագիր գիրքը փոխարինվեց տպագիր գրքով, այնպես էլ ձեռագիր մատենագիտությունը իր տեղը զիջեց տպագիր մատենագիտությանը:

Ճիշտ է, ձեռագիր մատենագիտություններ շարունակում են կազմվել նաև 19-րդ դարում և հետագայում, մինչև այսօր, սակայն սրանց բնույթը նախկին ձեռագիր մատենագիտական ցանկերի համեմատ այլ է: Միջնադարում գրավոր խոսքը, ներառյալ մատենագիտությունը ստեղծվում, տարածվում և օգտագործվում էր ձեռագիր, նոր շրջանում մատենագիտությունը ձեռագիր կազմվում է, սակայն սովորաբար տպագրելու և տպագիր օգտագործելու նպատակով: Միայն որոշ կարգի մատենագիտական ցանկեր են շարունակում կազմվել ձեռագիր օգտագործման համար: Դրանք գլխավորապես գրադարանների քարտային գրացուցակներն են (կատալոգները), ինչպես և որոշ այլ կարգի գրացուցակներ:

Ձեռագիր (կամ մեքենագիր) քարտային գրացուցակներ, ինչպես և թեմատիկ ձեռագիր քարտադրանքներ այժմ էլ կաղ-

մրվում և օգտագործվում են գրադարաններում. դրանք ամեն մի գրադարանի ներքին մատենագիտական տեղեկատվությունն և վաղուց ի վեր չեն դիտվում մատենագիտություն սովորական իմաստով:

Իհնև ձեռագիր օգտագործվող մատենագիտական տեղեկատվություն էլ իր էությունամբ մատենագիտությունն է, բայց 19-րդ դարի և հետագայի համար ինչպես ամենուրեք, այնպես էլ հայոց մշակութային կյանքում, հրատարակված, տպագրված (կամ տպագրության համար կազմվող) մատենագիտական աշխատություններն են դիտվում մատենագիտությունն սովորական իմաստով: Սրա պատճառն, ըստ երևույթին, այն է, որ մատենագիտական ամենատարբեր կարգի աշխատությունները իբրև տեղեկատու գրականություն իրենց նշանակությունը լիովին են ստանում և իրենց նպատակին լիարժեք կերպով ծառայում երբ տպագրվում են, հրատարակվում (առանձին դրոյ կամ պարբերականներում) և գիտնականների, սովորողների, տարբեր ընթերցողների կողմից լայնորեն օգտագործվում ըստ նպատակի: Տպագիր մատենագիտություններն են, որ քննարկվում են պարբերական մամուլում, պնդատվում, կատարելագործվում և դառնում ազգի դիտական կյանքի անկապտելի մասը:

19-րդ դարում Եվրոպայի օրինակով հայոց մեծ նույնպես հնարավորության դեպքում տպագրում են նաև գրադարանային գրացուցակներ¹, ընդ որում, ավելի խոշոր գրադա-

¹ Որոշ մատենագետներ գրադարանային տպագիր գրացուցակները նույնպես մատենագիտություն չեն համարում և այդպիսիք չեն քննում մատենագիտության պատմության մեջ (աե՛ս, օրինակ, К. Р. Симон, История иностранной библиографии. Москва, 1963, стр. 9): Այս կարծիքի հիմնավորումը մեզ համոզելի չի թվում, մանավանդ, որ ըստ նույն կարծիքի գրավաճառային և հրատարակչական գրացուցակները դիտվում են մատենագիտություն: Գրադարանային տպագիր գրացուցակները ավանդաբար համարվել են մատենագիտության մի տեսակը, նեղ իմաստով մատենագիտություն և քննվել մատենագիտության պատմության մեջ: Մենք հետևել ենք այդ ավանդույթին:

րաններում գրացուցակները հենց սկզբից կազմում էին տպագրելու նպատակով: Ինչ վերաբերում է ամենատարբեր բնույթի ընդհանուր, ազգային, զրավաճառային, ճյուղային, հնատիպերի, ձեռագրերի և այլ տեսակի մատենագիտություններին, այսինքն՝ մատենագիտական աշխատությունների մեծագույն մասին, ապա նրանք որպես օրենք կազմվում, պատրաստվում էին տպագրության համար և օգտագործվում տպագրի:

Խոսել հայ նոր մատենագիտության մասին, անշուշտ, նշանակում է հիմնականում խոսել հայ տպագիր մատենագիտության մասին: Զեռագիր կազմված առանձին ցանկեր փոքր դեռ են կատարել հայոց մեջ մատենագիտական գործի զարգացման բնագավառում: Ուստի մեր շարադրանքը այսուհետև վերաբերելու է հայ տպագիր մատենագիտությանը, իսկ առանձին անտիպ ցանկերի մասին խոսք կլինի ըստ հարկի:

18-րդ դարում և 19-ի սկզբներին հայ մշակույթի վերածնության գլխավոր կենտրոնը դառնում է Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, ապա նաև նրանից անջատված Մխիթարյանների մյուս ճյուղը (Թրիեստ, Վիեննա), Մխիթարյան գիտնականները հայոց գիտության ու արվեստի զարգացման գործում իրենց կարևոր դերը պահպանեցին նաև հետագայում, մանավանդ՝ ողջ 19-րդ դարի ընթացքում:

Հայկական բանասիրությունը լայն իմաստով (պատմական, լեզվաբանական, գրականագիտական և այլ կարգի հետազոտությունները հին բնագրերի հիման վրա) 19-րդ դարի առաջին կեսում հիմնականում զարգանում էր Մխիթարյան միաբանություններում: Հայկական ամենից ավելի տեսական ու կանոնավոր գործող տպարաններն էլ Մխիթարյաններինն էին:

Մատենագիտական աշխատանքը, որն առնչվում է բանասիրության ու տպագրության հետ, բնական է, որ ամենից ավելի դարձյալ Մխիթարյանների մոտ պետք է զարգանար:

Այժմ անկասկած է, որ Մխիթարյանների մշակութային աշխատանքի արդյունքները համազգային նշանակություն ունեն։ Աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայկական դպրոցները միշտ էլ այս կամ այն կերպ օգտվել են Մխիթարյան հրատարակություններից։ Ավելի ուշ մի քանի եվրոպական երկրներում, այդ թվում և Ռուսաստանում, դարդացող հայոց մշակութային կենտրոնները հայագիտության հարցերում նույնպես մեծապես օգտվում էին Մխիթարյանների կատարած աշխատանքի արդյունքներից։ Նույնը պետք է ասել նվրոսացի հայագետների մասին, որոնցից շատերի աշխատանքը պատկերացնել անգամ անհնար է, առանց Մխիթարյանների բանասիրական, հետազոտական գործունեության։

Հայ նոր մատենագիտության դեռևս թույլ քայլերը 19-րդ դարի սկզբներին կատարվեցին Վենետիկում, ապա այստեղ, ինչպես և քիչ ուշ Վիեննայում հրատարակվեցին հայ նոր մատենագիտության առավել կարևոր երկերը։ Թացի այս, մյուս երկրներում հայ մատենագիտությունը երբեմն զարգանում էր Մխիթարյան գիտնականների անմիջական օգնությամբ կամ Վենետիկում ու Վիեննայում արդեն կատարված աշխատանքի հիման վրա։

Օրինակ, ուշագրավ է, որ 19-րդ դարում արևելահայոց մեջ ամենախոշոր մատենագետը՝ Միքայել Միանասարյանցը, ինչպես դեռ կտեսնենք, իր մատենագիտական աշխատանքների ժամանակ առկա, թե հեռակա ստացել է Մխիթարյանների օգնությունը։

Գարասկզբում Մխիթարյան գիտնականներից հատուկ մատենագիտական աշխատանքով զբաղվել է Իգնատիոս Փափազյանը (1765—1852), որը կազմել է 1565-ից մինչև 1800 թ. տպագրված հայերեն գրքերի մի ցուցակ։ Սա ըստ էության, հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտություն կազմելու առաջին փորձն է հղել։ Մենք ստույգ տվյալներ չունենք այն մասին, թե արդյոք Ի. Փափազյանն իր մատենագիտության մեջ տպագիր գրքերի հետ ձեռագիր մատ-

յաններ էլ նշն¹ է, թե՛ ոչ, սակայն հենվելով եղած հակիրճ տեղեկությունների վրա (տե՛ս ստորև) հաստատ կարող ենք ասել, որ մատենագիտությունը միայն տպագիր երկեր է ընդգրկել:

Կարծում ենք նաև, որ Ի. Փափազյանը մատենագիտությունը կազմել է տպագրելու համար: Թեև այն մնացել է անտիպ, բայց իր օգտակար դերը կատարել է՝ դառնալով Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» հիմքը: Մեզմե շատ տարի հառաջ, — գրում է Զարբհանալյանը, — ուսումնական արդյամբք և եկեղեցական բարձր աստիճանով ազգին արդեն ծանոթ սրբազան և պատկառելի անձ մը՝ գեր. Իգնատիոս Փափազյան մանր ու համբերող երկայնմտությամբ հավաքեր էր հայկական տպագրությանց ցուցակ մը՝ հասցնելով մինչև դարուս սկիզբը:

Իր ձեռագիր երկասիրությանց մեջ, հանդիպելով այս օգտակար և հետաքննական հավաքմանն, ուղեցինք կատարելագործել իր պակասը և լրացնել՝ հասցնելով մինչև մեր օրերը²:

Այսպիսով, Ի. Փափազյանը փաստորեն դարասկզբին հիմք է դրել հայ տպագիր գրքի մատենագիտությանը, ինչպես և հայ գրքի պատմությանը, որը հետագայում լուրջ քայլեր կատարեց Ս. Ղազարում. Փափազյանի ցանկի հիման վրա կազմված Զարբհանալյանի մատենագիտությունը առիթ դարձավ, որպեսզի վերջինս զբաղվի նաև հայ գրքի պատմությամբ, իսկ Զարբհանալյանի «Հայկական մատենագիտությունն» էլ ազդակ դարձավ Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտության» կազմման համար:

Դարասկզբին Վենետիկի Մխիթարյանների մոտ որոշ գործ կատարվեց նաև մատենագիտության մի այլ ճյուղի՝ հրատարակչական-գրավաճառային դրացուցականների ստեղծման ուղղությամբ:

¹ Գ. Զարբհանալյան Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ ԺԵ:

19-րդ դարի սկզբներին Վենետիկի Մխիթարյանները արդեն բավական քանակով գրքեր էին հրատարակել թե՛ իտալական տպարաններում և՛ թե՛ իրենց մոտ՝ Ս. Ղազարում, և այդ գրքերը ընթերցողներին ներկայացնող մի ամփոփիչ գրացուցակի կարիքը զգացվում էր:

Սվ ահա 1810 թվականին լույս է տեսնում Վենետիկի Մխիթարյանների հրատարակութունները ներկայացնող առաջին գրացուցակը: Դրանով էլ սկիզբ է առնում վենետիկյան գրացուցակների մինչև մեր օրերը ձգվող շարքը (այժմ այդ գրացուցակների քանակը հասնում է երեք տասնյակի):

Այս անդրանիկ գրացուցակի անվանաթերթն է: «Յանկ ընդհանուր գրոց տպագրելոց ի Վէնէտիկ յաշակերտաց Ամեհապատիւ Տեառն Մխիթարայ մեծի Աբրայի ըստ կարգի այբուբենից՝ համառօտ բացատրութեամբ իւրաքանչիւր գրոց: 1810», 35 էջ:

Աշխարհաբար գրված փոքրիկ ծանուցման մեջ (վերջաբան), ասված է, որ կան Վենետիկում տպագրված նաև այլ գրքեր, որոնք նշված չեն գրացուցակում, քանի որ «Հնություն ժամանակին և փափագ գրասեր ստացողաց հատուցեր հն վամմենը»:

Խոսվում է նաև ցանկի հիմնական նպատակի մասին. «Հռուսանք, որ այս ցանկս հորդոր ըլլա հայազգի քարեսեր եղբարց հետաքնին ըլլալու չէ թե միայն գրքերու անունը դիտնալ, այլ մանավանդ ստանալու զփափագ գրասիրության»: որով և տեղյակ ըլլալու զանազան ուսմանց և գիտության, որ շատ հարկավոր է և օգտակար մարդուս, ինչպես որ հայտնի է իմաստության համը առնողներուն: Թող որ կարդացողներուն հոժարությունը գիրք շինողներուն ձեռքն ալ կը զորացնեն, որ հետզհետե նոր-նոր քաներ շարադրեն և տրպեն հօգուտ և ի պայծառություն ազգին, ի փառս Աստուծոյ»:

Ինչպես տեսնում ենք, Մխիթարյան այս առաջին գրացուցակի հեղինակը կարողացել է երկու խոսքով արժեքավորել գիրքն ու ընթերցասիրությունը՝ ավելացնելով, որ գիրք

ստեղծողների աշխատանքը խրախուսվում ու խթանվում է ընթերցողների գրասիրությամբ:

Գրացուցակում նույնը դասավորված է այբբենական կարգով, սակայն գրքերի նկարագրության որևէ կանոն չի պահպանված: Այբբենական շարքը ստեղծվել է գրքերի հանրահայտ անունների սկզբնատառերով. կազմողը հաճախ մի կողմ է թողել գրքերի հեղինակների անունները և իրական վերնագրերը (ըստ անվանաթերթերի) ու գրել է գրքերի կրճատ, «խոսակցական» անունները: Օրինակ, Ալբերտ Մեծի «Համառոտութիւն աստուածաբանութեան» գիրքը նկարագրված է մի բառով՝ «Ալպերտ», ապա ծանոթագրված է. «Համառոտութիւն մի է աստուածաբանութեան մեծին Ալպերտի, գրաբառ շարագրութեամբ: Ի լոյս ածեալ աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ մեծի Աբրայի: Տպագրեալ յամի 1715»: Կամ՝ Թոմա Կեմպացու «Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի» նկարագրված է սոսկ այսպես՝ «Թոմայ Գեմրացի»: Իսկ, օրինակ, Ղուկաս Ինճիճյանի «Ամարանոց բիզանդեանը» նկարագրված է առանց հեղինակի որևէ հիշատակության, և ոսկ իբրև Ամարանոց բիզանդեան: Պետրոս Արագոնացու «Գիրք առաքինութեանց»-ը և «Գիրք մոլութեանց»-ը նկարագրված են այսպես՝ Առաքինութեանց մոլութեանց: Կարլո Ռիսուլիի «Գիրք, որ կուի աղբիւր բարի» նկարագրված է սոսկ՝ «Աղբիւր բարի» և այլն:

Գրքերի նկարագրության այս եղանակը առավել կամ պակաս շարժվել տեղ գտավ նաև մխիթարյան գրացուցակների հետագա մի շարք հրատարակությունների մեջ:

Առաջին այս գրացուցակում բացի գրքերից նշված են նաև այլ տպագիր երկեր, մասնավորապես քարտեզներ: Ի դեպ, այստեղ նշված է 1695-ին Ամստերդամում տպագրված «Համատարած աշխարհացոյց»-ը, որը ինչպես հայտնի է, Մխիթարյանների հրատարակությունը չէ (վանանդեցիներին է):

Բոլոր գրքերը ծանոթագրված են: Ծանոթագրությունները հիմնականում աշխարհաբար են, նրանց սկզբում տեղեկանք

է, տրվում գրքի բովանդակության մասին, ապա ասվում է, թե ով է հեղինակը, թարգմանիչը, հրատարակիչը, երբեմն նաև՝ սրբագրողը: Ծանոթագրությունները տարբեր ժամալուսին՝ մի տողից մինչև երկու էջ: Օրինակ, «Այբբենարան կամ քերական» վերնագրի տակ կարդում ենք միայն՝ «Պըզտիկ աղոց կարգալ սովորելու համար», իսկ Ստ. Ազոնցի և Ղ. Ինճիճյանի քաղմահատոր «Աշխարհագրութիւն»-ը ծանոթագրված է երկու էջի վրա:

Միևնույն գրքի մեկից ավելի հրատարակությունների մասին նույնպես նշվում է ծանոթագրությունների մեջ, ուստի ճանախ մի վերնագրի տակ մեկից ավելի հրատարակություններ են նշվում:

Կան վերնագրեր էլ, որոնք ոչ թե որևէ գրքի, այլ առարկայի անուն են: Օրինակ, «Թուաբանութիւն» վերնագրի տակ նկարադրված են տարբեր հեղինակների (Ս. Աղամալյանցի և Խ. Սյուրմեւյանի), տարբեր ժամանակ լույս տեսած (1781, 1788) թվաբանական գրքեր:

Հնգհանուր առմամբ գրացուցակը խելացի է կազմված, մանավանդ ծանոթագրությունների աշխարհաբար լեզուն հիշադրանք տալիս է գրքերը հայ ընթերցողին հասցնելու համար:

Վենետիկի Մխիթարյան գրացուցակի երկրորդ հրատարակությունը հղավ 1823-ին: Տիտղոսաթերթն է. «Յուզակ ընդհանուր գրոց տպագրելոց ի Վէնէտիկ ի Միաբանութենէ Ամենապատիւ Տեառն Մխիթարայ մեծի Աբրայի: Կարգեալ ըստ ալբուրենից՝ հանդերձ համառօտ քաջատրութեամբ իւրաքանչիւր գրոց: Վէնէտիկ, ի տպարանի վանուց սրբոյն Ղադարու: 1823»: 56 էջ:

Ծանուցման մեջ (առաջաբան) ասված է, որ ցուցակը նորից են հրատարակել՝ նախորդ հրատարակությունը սպառված լինելու պատճառով:

Ցուցակի այս հրատարակության մեջ ավելացված են այն գրքերի անունները, որոնք Ս. Ղազարում լույս են տեսել անցած 13 տարիներին:

նկարագրութիւններում ավելացված են պայմանական նշաններ (սպառված զրքերը ստացել են աստղանիշ, իսկ այն զրքերը, որոնցից սակավ օրինակներ են մնացել՝ խաչանշան):

Գրքերի նկարագրութիւնները հիմնականում նույն սկզբունքով են կազմված, ինչ որ նախորդ գրացուցակում: Սակայն նախորդի համեմատ այստեղ տարբերութիւն է այն, որ ծանոթագրութիւններն ու ծանուցումը ոչ թե աշխարհաբար են, այլ՝ զրաբար: Որ այս փոփոխութիւնը անտեղի էր, ապացուցվում է թեկուզ այն բանով, որ ավելի ուշ Վենետիկի գրացուցակների հիմնական լեզուն նորից աշխարհաբար դարձավ:

Ս. Ղազարում աշխատանք է տարվում նաև հայկական մատենագիտության ավանդական ճյուղի ուղղությամբ: Գրքովում է հայ հին հեղինակների երկերի և թարգմանական հին գրականության մատենագիտական տեսութիւնը: Շատ արժեքավոր էին Վենետիկի Մխիթարյաններից Սուքիաս Սոմալյանի (1776—1846) երկու աշխատութիւնները, հրատարակված իտալերեն՝ «Պատկեր հին հեղինակների գործերի հայերեն թարգմանութիւնների» (կամ՝ «Պատկեր նախնական թարգմանութեանց ի հայ բարբառ»)¹, Վենետիկ, 1825 և «Պատկեր Հայաստանի դպրութեան պատմութեան» (կամ՝ «Պատկեր հայոց դպրութեան»)², Վենետիկ, 1829:

Առաջինում Սոմալյանը տալիս է հայ հին թարգմանութիւնների մատենագիտական տեսութիւնը՝ սկսած Աստվածաշնչից (որի թարգմանութեան թվականը դնում է 410-ը): Տեսութիւնը տրվում է ժամանակագրական կարգով. մեկն դարն ունի առանձին բաժանմունք, այդպես 5-րդ դարից հասնում է մինչև 17-ը:

Վերջում կա անվանացանկ:

¹ S. Somal Quadro delle opere di vapi autori anticamente tradotte in armeno. Venezia, 1825, 46 էջ, զրքում հեղինակը նշված չէ:

² S. Somal Quadro della storia letteraria di Armenia. Venezia, 1829, 240 էջ.

Այս աշխատությունը, անշուշտ, մատենագիտական բնույթ ունի. թվարկվում են թարգմանական բնագրերը, նշվում է, թե նրանցից որն է տպագրված՝ երբ և որտեղ: Սակայն չկա նյութերը ներկայացնելու մատենագիտական որոշակիություն, բնագրերի նկարագրությունների հստակություն (հեղինակ, վերնագիր և այլն):

Մյուս գիրքը, որ նվիրված է հայ ինքնուրույն մատենագրությանը, է՛յ ավելի շատ է հիշեցնում մատենագիտական ընդհանուր տեսություն: Սա հայ հին բազմաճյուղ (պատմական, գեղարվեստական, կրոնական, եկեղեցական, փիլիսոփայական, աստղաբաշխական և այլն) գրականության մի հակիրճ մատենագիտական տեսություն է՝ հայ հին հեղինակների և նրանց երկերի թվարկում:

Աշխատությունը բաղկացած է առանձին գլուխներից: Ներածականում թվարկվում են այն հեղինակները, որոնք իրրև աղբյուրներ հիշված են հայ հին պատմիչների կողմից՝ Մար Աբաս Կատինա, Ղերուբնա (Ճիշտը՝ Ղերուբնա կամ Ղաբարնա), Ուղյույ, Բարդաժան և այլն: Ապա յուրաքանչյուր դարի նվիրված է մի գլուխ, (սկսած 4-րդ դարից մինչև 18-ը): Հայ հեղինակների բաշխումն ըստ դարերի կատարված է հայ մատենագրության ավանդույթի համաձայն. այսպես 4-րդ դարին նվիրված գլխում կան հետևյալ հեղինակները՝ Գրիգոր Լուսավորիչ, Ազաթանգեղոս, Հակոբ Մծբնա, Զենոբ Գլակ, Մեծն Ներսես, Փալստոս Բուզանդ, Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց: Այլ խոսքով ասած, ընդունվում է, որ Լեհի է նախամաշտոցյան հայ գիր ու գրականություն:

Աշխատության վերջում տրված է նաև օտարագրի հայագետների ու նրանց հայագիտական երկերի մատենագիտական տեսությունը:

Աշխատությունն ունի երկու օժանդակ ցանկ՝ վերնագրերի, ինչպես և հատուկ անունների (գլխավորապես՝ անձնանունների և տեղանունների):

Թարգմանություններին նվիրված գրքույկը ամբողջովին իտալերեն է (հայերեն ոչինչ չկա), իսկ հայ մատենագիրնե-

րին նվիրված աշխատութիւնն բովանդակութիւն մեջ հեղինակներին անունները տրված են և լատինատառ, և՛ հայատառ:

Սոմալյանի այս աշխատութիւններին անմիջականորեն նախորդած սոստավորապէս նույն քնույթի (և համեմատաբար լրիվ) ցանկը Վարդան Բաղիշեցուն վերագրվող «Պատմագիրք հայոց» մատենագիտութիւնն արդեն հիշատակված տարբերակն էր Հակոբ Այուբյանի կողմից 1795 թ. տպագրված «Ազգարար» տետրերից մեկում¹: Սոմալյանի աշխատութիւնները թե՛ այս ցանկի և թե՛ նախկինում եղած նման քնույթի մատենագիտական բոլոր ցանկերի ու տեսութիւնների համեմատ շատ ավելի լրիվ են ներկայացնում հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրութիւնն պատկերը, թեև դեռևս չունենին բանասիրական-քննադատական ստուգութիւն և գրեթէ ամբողջովին հենվում էին պատմական ավանդույթի վրա: Կան ժամանակագրական խախտումներ, հեղինակների շփոթում, շեղած հեղինակների նշում և այլն: Պատմական ավանդույթին հավատալը վատ չէ և հագիվ թե իրավացի լինեն այդ ավանդույթը լիովին վերանայողները, սակայն նրան անքննադատ վերաբերվելն էլ ծայրահեղութիւն է:

Սոմալյանի աշխատութիւնը շատ նկատելի դեր կատարեց Եվրոպայում հայագիտութիւնն զարգացման գործում: Բացի այդ, հայ հին հեղինակներին ու նրանց աշխատութիւններին նվիրված հետադա մատենագիտական տեսութիւններն ու ցանկերը մեծապէս հենվում էին Սոմալյանի գործի վրա:

Գերմանացի Կարլ Նոյմանի «Հայ մատենագրութիւնն պատմութիւնն փորձ» աշխատութիւնը գրված է Սոմալյանի «Պատկեր հայոց դպրութիւնն» գրքի հիման վրա (ոմանք

¹ «Ազգարար», Մադրաս, Նախայ մասոյ, էջ 188—192:

² Karl Neuman Versuch einer Geschichte der armenischen Literatur nach den Werken der Mechartisten. Leipzig, 1836, 308 S.

այն համարում են ուղղակի Սոմալյանի գրքի թարգմանությունը)։

Նյութը դարձյալ խմբավորված է ըստ դարերի՝ 4-ից մինչև 18-րդ (և դարձյալ սկսվում է Մար Արաս Կատինայով)։ Հիմնականում սյահյանված է նաև հեղինակների միևնույն հերթականությունը։

Մխիթարյանների մատենագիտական աշխատանքը դարի առաջին կեսին առաջ է գնում նաև այլ ուղղություններով։

Այս շրջանում Ս. Ղաղարի մի շարք հրատարակությունների, այդ թվում «Բազմավեպի» (սկսել է հրատարակվել 1843-ից) մեջ կարելի է գտնել մատենագիտական բնույթի շատ տեղեկանքներ, ոչ մեծ գրացանկեր և նման նյութեր։ Օրինակ, ասենք, Նոր հայկազյան բառարանի նախաբանում տրված է հայկական հին հեղինակների և բնագրերի համառոտադրությունների ցանկ («Յուցակ մատենից և մատենագրաց, ըստ կարգի համառոտագրութեանց՝ զոր վարեմք յընթացս գործոյս»)¹, որը, իր հիմնական դերից բացի, մի շարք դեպքերում հայ մատենագրության վերաբերյալ կարևոր տեղեկանքներ է հաղորդում։

19-րդ դարի երրորդ տասնամյակից սկսած մատենագիտական աշխատանքը նկատելի է դառնում նաև արևելահայոց մեջ։

Մատենագիտական որոշակի արժեք ունեն Ստեփանոս Նազարյանի հրկու ուսերին աշխատությունները՝ մեկը նվիրված հայ դպրոթյանը հնից մինչև 13-րդ. դարի վերջը, որ հրատարակվեց 1844-ին², մյուսը, որ փաստորեն առաջինի շարունակությունն է և հայ դպրոթյան պատմությունը 14-րդ դարից հասցնում է մինչև հեղինակի ապրած ժամանակները³, հրատարակվեց հրկու տարի հետո։

¹ Նոր բառգրքի հայկազեան լեզուի։ Հտ. 1, Վենետիկ, 1836, էջ 9—20.

² С. Назарянц. Беглый взгляд на историю гайкинской литературы до конца 13-го столетия. Казань, 1844, 50 стр.

³ С. Назарянц. Обзорение истории гайкинской письменности в новейшие времена. Казань, 1846, 158 стр.

Նազարյանի այս աշխատությունները, գլխավորապես առաջինը, նույնպես գրված են հայոց պատմության նեխեկող ավանդույթով: Նախ խոսվում է հայ հեթանոսական գրավոր մշակույթի, ապա 4-րդ դարի հեղինակներ համարվող Գրիգոր Լուսավորչի, Ագաթանգեղոսի, Ներսես Ա-ի, Փավստոսի և այլոց մասին, այնուհետև խոսվում է 5-րդ դարի հեղինակների մասին, այդ թվում Խորենացու և Շղիշի, որոնց տեղը այդ դարից շարժելու մասին այստեղ ևս խոսք չկա:

Թեև Նազարյանցի աշխատությունները մատենագիտական չեն, (պարզապես հայ դպրության պատմություն են), սակայն նրանց հակիրճությունը, հեղինակների ու սրանց երկերի մասին տրվող ամփոփ տեղեկանքները այդ աշխատություններին տալիս են նաև մատենագիտական արժեք:

Արևելահայոց մեջ թույլ քայլեր է անում նաև տպագիր գրքերի մատենագիտությունը: Պարբերականների մեջ երբեմն տեղեկություններ են տպագրվում նոր լույս ընծայված կամ վաճառվող գրքերի մասին, փորձեր են արվում գրադարանային և գրավաճառային գրացուցակներ կազմելու:

1839 թվականին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ծառայող Ալեքսանդր Խուդաբաշյանը Պետերբուրգում, սեփական տպարանի մեջ տպագրում է իր գրադարանում եղած հայերեն տպագիր գրքերի ու ձեռագրերի գրացուցակը՝ «Ցանկ տպագրեալ և ձեռագիր գրոց հայոց ի մատենադարանի ներգործական խորհրդականի տերութեան Ալեքսանդր Խուդաբաշյանի, շարադասեալ ըստ կարգի այբուբենից»: 49 էջ:

Գրացուցակում տեղ են գտել 219 անուն տպագիր գրքեր և 10 գրչագիր մատյան (տրված են վերջում): Տպագիր գրքերի մեջ գերակշռում են հնատիպերը (մինչև 1800 թ. հրատ.):

Գրքերի նկարագրությունները վերահիշյալ գրացուցակների (մխիթարյան) նման այստեղ ևս որևէ հետևողական օրենքով չեն կատարված, թեև ավելի կանոնավոր են, քան նա-

խորդ գրացուցակներում: Հեղինակ ունեցող գրքերի նկարա-
դրութիւններն սկզբում մե'րթ նշված է հեղինակը, մե'րթ
վերնագիրը: Օրինակ, Ազաթանգեղոսի առաջին հրատարա-
կութիւն (Կ. Պոլիս, 1709) իսկական վերնագիրն է «Գիրք
վիպասանութեան, որ կոչի համանունակի Ազաթանգեղոս»,
իսկ պրացուցակում այն նկարագրված է ոչ թե նույն անով
(այսինքն «Գիրք» բառի տակ), այլ Ազաթանգեղոսի տակ,
այսպէս՝ Ազաթանգեղոս (Գիրք վիպասանութեան): Մյուս
կողմից, «Առաքելոյ Դավրէժացւոյ պատմութիւն» խորագրից
(հեղինակի անունից) հղում է տրված դեպի վերնագիրը՝
«տե'ս Պատմութիւն Առաքելոյ Դավրէժացւոյ» և գիրքը (Ամս-
տերդամ, 1669) «Պատմութիւն»-ի տակ էլ նկարագրված է:

Նկարագրութիւններում մեծ մասամբ տրված են հրա-
տարակութիւնների վայրը, թվականը և քանակական տրվ-
յալներ (այստեղ՝ գրքի գիրքը և էջերի քանակը, գնբը շեն
տրվում):

Հայերեն նկարագրութիւնների տակ տրվում է նրանց
ռուսերեն թարգմանութիւնը (պրացուցակի անվանաթերթը
նույնպէս հայերեն ու ռուսերեն է):

Նյութերը դասավորված են այբբենական կարգով, ամեն
մի հիմնական նկարագրութիւն գիմաց դրված է գրքի հա-
մարը (հավանաբար հուղարաշյանի գրադարանի գույքահա-
մարը), լրացուցիչ նկարագրութիւնները (որոնցից հղում է
տրվում) համար չունեն: Հիմնական նկարագրութիւնների
համարները հերթականութիւնով չեն դասավորված, քանի որ
այբբենական կարգը (որով գրքերի նկարագրութիւններն են
դասավորված) և գույքահամարների հերթականութիւնը չեն
համընկնում:

հուղարաշյանի պրացուցակը արժեքավոր է հնատիպ,
ինչպէս և 19-րդ դարի առաջին տասնամյակներում հրատա-
րակված հայերեն գրքերի վերաբերյալ տեղեկանքներ ստա-
նալու համար:

Այսպիսի պրացուցակները երբեմն շատ են օգնում այս
կամ այն մոռացված հրատարակութիւն վերաբերյալ տեղե-

կանքներ ստանալու գործում: Մանավանդ նրանց օգուտը նկատելի է հայ զրբի նոր ընդհանուր մատենագիտություն կազմելու համար:

1840 թվականին Պետերբուրգում ֆրանսերեն և ռուսերեն թարգմանությունամբ լույս տեսավ Հովհաննես Շահաթուրյանցի կազմած «Գումար գրեանց գրանոցի աթոռոյ էջմիածնի» գրացուցակը: Հեղինակն այն կազմել էր 1837 թվականին (էջմիածնում), ապա վերանորոգել (Հովհաննես Ղրիմեցու հետ) 1838-ին՝ սենատոր Գանի պատվերով: Վերջինս այս ձեռագիր գրացուցակը տանելով Պետերբուրգ՝ հանձնում է արևելագետ Մարիուս Բրոսսին, որը և թարգմանում է ռուսերեն ու ֆրանսերեն, որոշ կրճատումներ անում նյութերի նկարագրությունների մեջ և հրատարակում 1840 թվականին: Ինչպես բնագիրը, այնպես էլ տիտղոսաթերթը ռուսերեն են՝ և ֆրանսերեն:

Նյութերը համարակալված են, վերջին համարից իմանում ենք, որ գրացուցակում նկարագրված է 655 միավոր գրականություն, այդ թվում հայերեն 481 տպագիր գիրք ու ձեռագիր (վերջինները՝ 353):

Գրքերի անունները հայերենից թարգմանված են ազատ, յուրաքանչյուր տպագիր գիրքը կամ գրչագիրը մեծ մասամբ չի հատկադրված (չեն նշված հրատարակության կամ գրչության վայրերը, թվականը և այլն): Միայն երբեմն տրվում է գրչագրերի ընդօրինակման դարը: Մատենագիտական այլ կարգի տեղեկություններ չկան:

Բաժանված է երկու մասի՝ ա) հայերեն գրքերի մաս և բ) ռուսերեն ու եվրոպական լեզուներով գրքերի մաս: Առաջին մասն իր հերթին ըստ գրքերի բովանդակության 11 բաժնից է բաղկացած: Տպագիր գրքերը ներկայացված են այն-

1 Каталог книгъ эчмиадзинской библиотеки, изданный г. Броссе, экстраординарным академиком. СПб, 1840, 121 стр.—Общій каталогъ книгъ и манускриптамъ эчмиадзинской библиотеки, стр. 60—121.

պէս, որ երբեմն չի կարելի պարզել, թե որոշակիորեն ինչ հրատարակութիւնների մասին է խոսքը: Շատ անհաջող են ներկայացված նաև ձեռագրերը. չեն նշված նրանց հերթական համարները, չեն բացված բովանդակութիւնները, չկան նրանց նյութի, վիճակի և բանական ատանձնահատկութիւնների մասին տեղեկութիւններ:

Այս գրացուցակի նշանակութիւնը եղավ այն, որ վերջապէս ռուս ու արևմտաեվրոպացի արևելագետների ուշադրութեանն էր ներկայացվում էջմիածնի մատենադարանում խղած նյութերի մի, կարելի է ասել, մոտավոր ցանկ և դրանով ինչ-որ չափով վեր էր առնվում կախարդական այն լողը, որ տարիներ շարունակ մնում էր հայ հին ձեռագրերի արժեքավոր այդ դանձարանի վրայ:

Իրիւն տպագիր դրքերի մատենագիտութիւն և առհասարակ իրրե մատենագիտութիւն այդ ցուցակը շատ խղճուկ է, նրա պատմական միակ արժեքը սոսկ այն է, որ էջմիածնի մատենադարանի (այսինքն այժմյան Մաշտոցի անվան Մատենադարանի) առաջին տպագիր ձեռագրացուցակն է եղել (նկատի ունենալով միայն ձեռագրերը):

19-րդ դարի առաջին կեսին աշխուժանում է հայ դրամատիկութիւնը և հրապարակ են գալիս գրավաճառների հրատարակած գրացուցակներ: Դրանց շարքում են նաև վենետիկի Միքիթարյանների վերոհիշյալ երկու գրացուցակները, որոնց գլխավոր, թեև ոչ միակ, նպատակը նույնպես գրավաճառային էր:

Հայոց առաջին հայտնի գրավաճառանոցը հիմնվել է 1805 թվականին Կ. Պոլսում, դա նշանավոր գրավաճառ (քիթապ՝ ճի) Մարգարի գրատունն էր, որ հայտնի դարձավ Մարգարյան գրատուն անունով: Այդ մասին մենք դեռ փոքր-ինչ ավելի կխոսենք: Այժմ ասենք միայն, որ մեր որոնումները Մարգարյան գրատան կողմից 19-րդ դարի առաջին կեսում տպագրված որևէ գրացուցակ գտնելու ուղղութեամբ հաջողութեան չհասան (և առհասարակ, մինչև 19-րդ դարի կեսերը հրատարակված՝ Կ. Պոլսի գրավաճառների որևէ գրացու-

ցակ գտնել մեզ շնաջողվեց: Կարծում ենք, որ նման գրացուցակներ պետք է որ լինեն, քանի որ հայ գրավաճառությունը այդ շրջանում ամենից ավելի Պոլսում էր զարգանում):

Թիֆլիսում ևս հայ հասարակական կյանքի ու տպագրական գործի աշխուժացման հետ զարգանում է նաև գրավաճառությունը:

19-րդ դարի հայ գրավաճառներից էին կարենցի եղբայրներ Ավետիք և Համբարձում էնֆիաճյանները. որոնք միաժամանակ տպարանատեր-հրատարակիչներ էին, իսկ Համբարձումը 1860 թվականից՝ «Կոունկ հայոց աշխարհի» պարբերականի տնօրեն-հրատարակիչը:

էնֆիաճյանները 1840-ական թվականներին ընդլայնելով իրենց գրավաճառական գործունեությունը Թիֆլիսում հիմնում են ժամանակի համար բավական հարուստ մի գրատուն, բաղկացած հայ պարբերականներից, գրքերից ու ձևազրերից:

էնֆիաճյանները բաժանորդագրվում էին տարբեր վայրերում լույս տեսնող հայ պարբերականների, տարբեր միջոցներով ստանում զանազան երկրներում լույս տեսնող հայերեն գրքեր: Եվ ահա 1840-ական թվականների վերջերին հարկ է դրացվում հրապարակելու էնֆիաճյան գրատուն-գրավաճառանոցի գրացուցակները՝ գրատանը եղած տպագիր և ձեռագիր գրքերի մասին ընթերցողներին ու զնորդներին տեղեկություններ տալու նպատակով:

Եղբայրները նախ հրապարակում են իրենց ունեցած ձեռագիր մատյանների ցուցակները: Առաջին ձեռագրացուցակը հրապարակվում է Կալկաթայի «Ազգասեր» հանդեսի 1847 թ. դեկտեմբերի տետրակում (էջ 396—399), այսպիսի վերնագրով. «Յուցակ ձեռագիր մատենից եղելոց ի գրատուն գրավաճառ երկուց եղրարց Աւետիկայ և Համբարձումայ էնֆիլ-ճանց Կարենցուց»:

Յուցակը համարակալված է. թեև վերջին համարը 45-ն է, բայց իրականում ախտեղ կա 47 գրչագիր մատյան: Տրված են ձեռագրերի համառոտ նկարագրությունները: Նշված

է գրի տեսակը, գրչութիւն թվականը (եթե հնարավոր է եղել պարզել), բացված է մի քանի ձեռագրի բովանդակութիւնը: Զաջորդ 1848 թ. էնֆիաճյաններն իրենց ձեռագրերի փոքր-ինչ փոփոխված ցուցակը հրապարակեցին Կ. Պոլսի «Հայաստան» պարբերականում (երկրորդ տարի, №№ 6, 7, 15) «Յուցակ ձեռագիր մատենից գտնուց ի Տփխիս ի գրատուն Երկուց եղբարց Ավետիքայ և Համբարձումայ էնֆիաճեանց» վերնագրով: Այստեղ վերջին թվահամարն է 60, բայց իրականում 55 ձեռագիր է նկարագրված¹:

1850 թվականին էնֆիաճյանները հրատարակում են իրենց դրատանը հղած հայերեն տպագիր գրքերի ու պարբերականների դրավաճառային ցուցակը: Ահա նրա լրիվ նկարագրութիւնը. «Յուցակ մատենայն ազգ հայերէն մատենից տպագրելոց ի Վենետիկ, ի Վիեննա, ի Կոստանդնուպօլիս, ի Կալկաթա, ի Զմիւռնա, ի Մոսկով և յայլ քաղաքս: Վաճառին ի դրատան եղբարցը՝ Աւետիքայ և Համբարձումայ էնֆիաճեանց ի Տփխիս, ի պանդոկի Գ. Թամամշեանց № 18, ի վերին յարկս: 1850 ի տպարանի ներսիսեան հոգեւոր դըպրոցի Հայոց քննաչելոց ի Գէորգայ Երեմեան Արծրունայ: Տփխիս» (24 էջ):

Պետք է ասել, որ գրացուցակը խնամքով է կազմված՝ ևւրուպական նույն կարգի գրացուցակների օրինակով: Հայերեն գրքերից բացի նշված են հայ հեղինակների երկերի ստար լեզուներով կատարված հրատարակութիւնները (օրինակ, Եղիշեի և Խորենացու երկերի ֆրանսերեն հրատարակութիւնները և ուրիշն.):

Գրքերը նկարագրված են ըստ տիտղոսաթերթերի, հրատարակութիւն վայրի և թվականի նշումով: Տրվում է նաև գրքի դիրքն ու էջերի քանակը (թեև այս տվյալները որոշ դեպքերում էլ չեն տրված):

¹ Զեռագրագետ Օ. Նզանյանի հաշվումներով այս երկու ցուցակում միասին (կրկնութիւնները հանած) ներկայացված է 63 ձեռագիր, որոնց մեծ մասը ժամանակին վաճառվել է Լազարյան ճեմարանին, այստեղից էլ անցել Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատուն:

Նկարագրությունների աջ կողմում կա յուրաքանչյուր գրքի գինը (արժաթ ուրլիններով): Գրքերի նկարագրությունները համարակալված են (պարբերականներինը՝ ոչ): Վերջին համարն է 321, թեև իրականում նկարագրված գրքերը 1 անուն-ները) փոքր-ինչ ավելի են:

Գրացուցակում ներկայացված բոլոր տպագիր երկերը խմբավորված են ըստ բաժինների՝ սկզբում պարբերականներն են (սկզբային օրագիրք եւ լրագիրք), ապա գրքերը 10 բաժինների մեջ (Պատմություն. Աշխարհագրություն. Բանաստեղծություն. Բարոյագիտություն. Բարոյական և առականագիրք. Աստուածաշունչ գիրք, մեկնություն և աստուածաշունչ գրոց, աստուածաբանություն և ճառերտիւրք. Թարգման և քանական արուեստ, Լեզուագիտություն. Գիտություն և արուեստ. Մանկանց ընթերցանելի և ուսանելի գրեւեմ. Եկեղեցական և աղօթից մատենեմ):

Այս բաժիններից յուրաքանչյուրն ունի իր բաժանմունք-ները:

Գրացուցակը առաջին մատենագիտական ձևնարկն էր, ուր այդպիսի քանակով ներկայացվում էին տարբեր վայրերում տպագրված հայերեն գրքեր ու պարբերականներ:

Էնֆիաճյանների այս գրացուցակով էլ կարելի է ավարտել 19-րդ դարի հայոց մատենագիտական աշխատանքի թիշ բեղմնավոր շրջանը և անցնել հաջորդ շատ ավելի բեղմնավոր շրջանին:

1850—1920

19-րդ դարի կեսերից, մանավանդ 60—70-ական թվականներից սկսած հայ մշակութային կյանքի վերելքը ավելի նկատելի է դառնում: Ավելի լուրջ քայլեր է անում հայոց տպագրությունը՝ ավելանում է տպագրվող գրքերի քանակը, մի շարք նոր պարբերականներ են հանդես գալիս:

Ձարգանում է նաև հայոց կրթական գործը՝ մեծանում է հայկական դպրոցների քանակը, հրատարակվում են մի շարք հայերեն դասագրքեր: Լուրջ քայլեր է անում հայոց քանասիրությունը:

Այս շրջանի մշակութային շարժման կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ նրա մեջ ավելի ու ավելի է ընդգրկվում բուն Հայաստանը: Այդ հանգամանքը դիտվում է թեկուզ Հայաստանի մեջ տպագրական-հրատարակչական գործի տարածմամբ: Տպագրությունը մուտք գործեց Հայաստան դեռևս 18-րդ դարում, երբ 1771-ին Սիմեոն Երևանցու ջանքերով էջմիածնում սկսեց աշխատել տպագրական հաստոցը: Մինչև 1920 թվականը տպագրությունը թափանցում է նաև հայկական բնաշխարհի մի քանի այլ վայրեր, ինչպես 1828-ին Շուշի, 1858-ին՝ Վան, 1863-ին Մուշ, 1876-ին՝ Երևան և Գյումրի (Ալեքսանդրապոլ), 1890-ին՝ Նոր Բայազետ, 1910-ին՝ Գորիս և այլն: Թեև, իհարկե, 19-րդ դարի

երկրորդ կեսում հայ տպագրության հիմնական կենտրոնները մնացին Կ. Պոլիսն ու Թիֆլիսը, Վենետիկն ու Վիեննան:

Ինչպես հվրոպական նոր մատենագիտության զարգացման գլխավոր գործոնը գրատպության ծաղկումն էր, այնպես էլ հայ նոր մատենագիտության վերելքի խթանիչ ուժը հայկական տպագրության զարգացումն էր:

19-րդ դարը, հատկապես նրա երկրորդ կեսը հայ տպագրության շատ բեղմնավոր ժամանակաշրջան էր, աչքով և լսելով ժամանակ, ինչպես և 20-րդ դարի սկզբներին Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանները հրատարակ հանձնին հայագիտական բազմաթիվ արժեքավոր հրատարակություններ: Մեծ քանակությամբ գրքեր են տպագրվում Կ. Պոլսում, ուր հայկական տպագրությունը հիմնվել էր դեռևս 1567-ին, որից հետո մինչև 20-րդ դարի սկզբները այս քաղաքում շուրջ 80 հայկական տպարաններ գործեցին՝ հրատարակելով հայ պարբերականների տասնյակ հազարավոր համարներ, հազարավոր հայերեն գրքեր: Կ. Պոլիսը երկար ժամանակ հայերեն ամենից ավելի շատ հրատարակություններ լույս ընծայող քաղաքն էր:

Թիֆլիս հայկական տպագրությունը մուտք գործեց 1823 թ., երբ Ներսես Աշտարակեցու ջանքերով հիմնադրվեց հետադայում նրա անունով կոչվող դպրոցի տպարանը: 1850 թվականին այս քաղաքում գործում է երկրորդ հայկական տպարանը (Գ. Պատկանյանի), Այնուհետև, Թիֆլիսում սկսում են աշխատել մի շարք ուրիշ տպարաններ (Գ. Մելքումյանի, Հ. էնֆիաճյանի, Մ. Ռոտինյանցի, Հ. Մարտիրոսյանի, Մ. Վարդանյանի, Տ. Ռոտինյանի, Տ. Նազարյանցի, Մ. Մարտիրոսյանի, Ն. Աղանյանցի, Լ. Պողոսյանի, Վ. Վարդանյանի և այլոց), որոնցից մի քանիսը առաջնակարգ էին:

Այս տպարաններից են դուրս եկել շուրջ 160 արևելյան տպարանականների հազարավոր համարներ, հայ դասական հեղինակներից շատերի ստեղծագործությունների հրատա-

բակությունները, թարգմանական շատ գրքեր, բազմաթիվ հայերեն դասագրքեր:

1872 թվականից հայկական տպագրությունը հիմնադրվում է նաև Բաքվում:

19-րդ դարի երկրորդ կեսից հայերեն գրքեր և սյարքերականներ տպագրվում են նաև Ռուսաստանի քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում, Թեոդոսիայում և այլուր, հայկական տպագրությունը գործում է մի շարք այլ երկրներում՝ Հնդկաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի, Եգիպտոսի, Իրանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Արգենտինայի քաղաքներում:

Մինչև 1920 թվականը տարբեր երկրներում հրատարակված հայերեն սարքերականները հաշվվում են մոտ 2000 անուն, իսկ տպագրված գրքերի քանակը շատ մոտավոր հաշվումներով պետք է լինի շուրջ 50 հազար անուն, մի քանի հարյուր հազար ընդհանուր տպաքանակով: Ընդ որում, և՛ իսկ հայ տպագրության հիմնադրումից մինչև 1800 թ. 288 տարում տպագրվել է շուրջ 1000 անուն գիրք, 1801-ից մինչև 1850-ը, 50 տարում՝ մոտ 1.700, ապա 1850-ից մինչև 1920 թվականը 70 տարվա մեջ պետք է լույս տեսած լինեն շուրջ 45—47 հազար անուն հայերեն գրքեր¹:

Ահա տպագրական այս արտադրանքի վերաբերյալ տեղեկատվություն ստեղծելու անհրաժեշտությունը պահանջ էր առաջացնում ունենալու հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտություն:

Ուշագործվ է նաև այն հանգամանքը, որ հայ ժողովրդի փոքր քանակության համեմատ 19-րդ դարում հայերեն տպագիր երկերի հրատարակումը քավական զգալի չափերի էր հասնում, մանավանդ, երբ հայերեն տպագրված գրքերի ու

¹ Եթե մինչև 1850 թ. լույս տեսած հայերեն գրքերի անունների քանակը հիմնականում՝ պարզ է, ապա 1850—1920 թվականների միջև լույս տեսած հայերեն գրքերի վիճակագրությունը շատ էշտումների կարիք ունի: 45—47 հազարը մեր մոտավոր հաշվումների արդյունքն է, հավանական է, որ ճշտումների հետևանքով այդ թիվը մեծանալ:

ամսագրերի քանակը համեմատում ենք նույն ժամանակում ասիական մյուս փոքր ազգերի լեզուներով հրատարակված տպագիր երկերի հետ։ Օրինակ, վերցնենք մի քանի վիճակագրական տվյալներ Կովկասի վերաբերյալ։

Ըստ «Сборник статистических сведений о Кавказе» ժողովածուի տվյալների 1862—1868 թվականներին (7 տարվա ընթացքում) Թիֆլիսում հրատարակվել են գրքեր 3 տեղյալ լեզուներով, ռուսերեն 91 անուն, հայերեն՝ 53, վրացերեն՝ 42, կարադղիներեն՝ 4, օսերեն 2։ Ըստ «Կովկասյան տարեցույցի» 1870—1889 թվականների ընթացքում ամբողջ Կովկասում եղել են պարբերականներ՝ ռուսերեն 32 անուն, հայերեն 15, նաև մեկը խառը (հայերեն, ռուսերեն), վրացերեն 15, ադրբեջաներեն 3։ Ըստ նույն տարեցույցի (1893 թ.) 1891 թվականին ամբողջ Կովկասում հրատարակվել են գրքեր՝ հայերեն 131 անուն, ռուսերեն 114, վրացերեն՝ 79, ադրբեջաներեն՝ 7։

Այս տվյալները վերաբերում են միայն Կովկասին (առաջին օրինակը՝ միայն Թիֆլիսին), հիշյալ թվականներին ամբողջ աշխարհում լույս տեսած հայերեն գրքերի քանակը որոշելու համար՝ Կովկասյան հրատարակությունների ընդամենը քանակներին պետք է գումարել նաև հվրոպական երկրներում, թուրքական պետություն սահմաններում և այլուր հրատարակված հայերեն տպագիր երկերը, որով հայերեն հրատարակությունների ընդամենը թվերը առնվազն կկրկնապատկվեն։

Հայերեն գրքերի ու պարբերականների քանակական համեմատարար մեծ տեսակարար կշիռը պահպանվեց մինչև 1915 թվականի եղեռնը, որից հետո հայերեն հրատարակու-

1 Сборник статистических сведений о Кавказе. Тифлис, 1869, стр. 165.

2 Кавказский календарь на 1891 год. Тифлис, 1890, стр. 239—254 հվրոպական լեզուներով Կովկասում հրատարակված գրքերի և պարբերականների վերաբերյալ տվյալները չենք բերում։

3 Кавказский календарь на 1893 год. Тифлис, 1892, стр. 42—50.

թյունները մյուս փոքր ազգերի հրատարակությունների մեջ նման տեսակարար կշիռ այլևս չունեցան:

Հայ տպագրական գործի զարգացումից բացի, 19-րդ դարի 2-րդ կեսում նաև այլ հանգամանքներ են պահանջ առաջացրում հայ մատենագիտության զարգացման:

Շատանում են հայ մշակութային կենտրոնները, ցրված ամենատարբեր երկրներում: Սա դժվարություններ է առաջացնում հայոց դրական-դիտական կյանքին, արվեստին, նոր հրատարակություններին հետևելու գործում:

Ավելի ու ավելի հաճախ են խոսում մի այնպիսի մատենագիտություն ունենալու մասին, որը ի մի կրեեր տարբեր, իրարից հեռու գտնվող երկրներում արդեն տպագրված հայերեն գրքերը և պարբերականները: Այսինքն՝ հայ տպագրության մատենագիտություն ունենալու պահանջը դառնում է ավելի հրատապ:

Նվաճա տարբեր երկրներում ապրող հայ մտավորականների աշխատանք են սկսում հայ տպագրության, մանավանդ հայ տպագիր գրքի մատենագիտություն ստեղծելու ուղղությամբ: Ռուսաստանում այդ գործով զբաղվում են Գյուտ Աղանյանցը, Միքայել Միանասրյանցը, Վենետիկում՝ Գարեգին Զարրհանյանը, քիչ ավելի ուշ՝ Արսեն Ղազիկյանը, Վիեննայում՝ Եղիշե Գաֆթանյանը, Գրիգորիս Գալեմբյարյանը:

Հայ տպագիր արտադրանքի մատենագիտությունն իր նախնական ձևով սկզբում երևան է դալիս հայերեն տարբեր պարբերականների էջերում, ուր տպագրվում են նոր լույս տեսնող գրքերի ցուցակներ: Այնուհետև, որոշ հայ պարբերականներ (գլխավորապես «Բաղմավհայն» ու «Հանդես ասոսորյան») մասնագիտանում են ընթացիկ ազգային գրականության մատենագիտության մեջ՝ համեմատաբար ավելի լրիվ տեղեկատվություններ հրապարակելով հայերեն նոր հրատարակությունների մասին:

Դարավերջին հատուկ հետաքրքրություն է առաջանում հայ հնարիպ գրականության նկատմամբ, հայտնաբերվում են հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի տպագրած

գրթերը և մի շարք այլ ուշադրաՎ հին հրատարակություններ: Կազմվում են հնատիպ գրթերի մատենագիտական ցանկեր: Կարևոր նորություններ կային Տրդատ Պայլանի հրատարակած անհայտ կամ մոռացված հնատիպների ցանկերում: Մինչև 1800 թվականը տպագրված հայերեն գրթերի ցանկեր է հրատարակում Գ. Զարհանալյանը:

Աստիճանաբար մատենագիտության մի առանձին ճյուղ է դառնում հայ պարբերականների մատենագիտական տեսությունների ու ցուցակների կազմումը: Հրապարակ են գալիս Ն. Հարոյի, Գ. Գալեմբյարյանի, Գ. Լեոնյանի, Մ. Պոտուրյանի և այլոց աշխատությունները, նվիրված հայ մամուլի մատենագիտությանն ու պատմությանը:

Ավելի մեծ ծավալ է ստանում գրադարանային և հրատարակական-գրավաճառային գրացուցակների հրատարակումը: Այդպիսի բազմաթիվ գրացուցակներ են տպագրվում Վենետիկում, Վիեննայում, Կ. Պոլսում, Թիֆլիսում, Բաքվում և մի շարք այլ քաղաքներում:

Ժյուդային (բնագավառային) մատենագիտություններից դարգանում է հայագիտական մատենագիտությունը, հատկապես հայ հին և միջնադարյան դպրության մատենագիտությունը՝ գրվում են հայ մատենագիրների երկերի և հին թարգմանությունների տեսություններ (Մ. Միանսարյանց, Ք. Պատկանյան, Գ. Զարհանալյան, Ղ. Ալիշան և ուրիշներ), Որոշ քայլեր է կատարվում նաև անհատական (պերսոնալիա) մատենագիտության ուղղությամբ: Մասնավորապես կազմվում են մի քանի հայ հեղինակների երկերի մատենագիտական ցանկերը:

Նշանակալից քայլեր են արվում հայ ձեռագրերի մատենագիտության բնագավառում: Հայոց ձեռագրացուցակների կազմման գործին մասնակցում են մի շարք ականավոր հայագետներ, այդ թվում Հ. Տաշյանը, Գ. Գալեմբյարյանը, Հ. Աճառյանը, Ն. Մառք, Յ. Կոնիրերը, Յ. Ֆինկը և ուրիշներ:

Վերջապես, մատենագիտական աշխատանքի մի տեսակն էլ դառնում է հայ գրքի պատմությունը: 19-րդ դարի վերջում

բավականին լուրջ ճշտումներ են արվում հայ գրքի պատմության բնագավառում: Հետաքրքրությունը հայ գրքի պատմության նկատմամբ ուժեղանում է հատկապես 1912 թվականի նախօրեին, երբ հայությունը պատրաստվում էր նշելու հայկական տպագրության 400-ամյակը: Ընդհանրապես 19-րդ դարի վերջում և 20-րդի սկզբում լույս են տեսնում հայ գրքի պատմությանը վերաբերող մի շարք արժեքավոր հոդվածներ ու գրքեր, նշելի են մանավանդ Գ. Զարբհանալյանի, Լևոյի և Թեոդիկի աշխատությունները:

Այսպիսով, 19-րդ դարի առաջին կեսին սկզբնավորված հայ նոր մատենագիտությունը դարի երկրորդ կեսից մինչև 1920 թվականը զարգանում է արդեն ըստ առանձին տեսակների:

Տեսանք, որ 19-րդ դարի առաջին կեսում էլ այդ տեսակներից մի քանիսը արդեն ստեղծվել էին, օրինակ, հրատարակվել էին գրադարնային և գրավաճառային գրացուցակներ, հայ հին գույրության մատենագիտական տեսություններ, ձեռագիր վիճակում կազմվել էր հայ հնատիպ գրքի մատենագիտություն:

Այդ, քանի որ դարի երկրորդ կեսից սկսած հայ մատենագիտության տեսակների բազմազանությունը մեծանում է և սովի նկատելի են դառնում այդ տեսակների սահմանները, ուստի հայ նոր մատենագիտության հետագա զարգացումը նպատակահարմար է քննել մատենագիտական առանձին տեսակների սահմաններում, ավելի ճիշտ, ըստ մատենագիտության առանձին տեսակների:

Այսուս կողմից 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած հանդես են գալիս նշանավոր հայ մտավորականներ, որոնք մեծապես զբաղվում են մատենագիտական աշխատանքով, տարիներ շարունակ նվիրվում այդ աշխատանքին, նրանցից մի քանիսը ազպարեզ են հանում հայ մատենագիտության առավել արժեքավոր նմուշները:

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքները՝ առանձին գլուխներում ու հատվածներում քննելու ենք ինչպես հայ նոր

մատենագիտության տարրեր տեսակաների զարգացումը, ասի-
պես էլ առավել նշանավոր հայ մատենագետների աշխա-
տանքները:

* * *

Հայ նոր մատենագիտության մեջ ամենազիսավորը և
ամենից ավելի ժամալուներ հայ տպագրությամբ մատենագի-
տությունն է, որի տակ հասկացվում է հայերեն տպագրված
գրքերի, պարբերականների և այլ տպագիր երկերի մատե-
նագիտություն: Այստեղ էլ առանձնանում են՝ ա) ընթացիկ
տպագրական, արտադրամեթոդական, որ արձա-
նագրում է նոր հրատարակությունները և բ) ընդհանուր ազ-
գային մատենագիտությունը, որ ձգտում է ընդգրկել ազգա-
յին տպագրության ամբողջ կամ մի ժամալուեն ժամանակա-
շրջանի արտադրանքը: Այս վերջինի մեջ էլ տարբերվում են
տպագիր գրքի և պարբերական, մամուլի մատենագիտու-
թյունները:

Տպագիր գրքի մատենագիտության տեսականներից են նաև
հնաժողով (մինչև 1800 թ. լույս տեսած) գրքերի մատենագի-
տությունը և գրքի պատմությունը: Պարբերական մամուլի
մատենագիտության մեջ տարբերվում են՝ պարբերականների
աւելումների մատենագիտություն, քերտերի ու հանդեսների
մեջ հրապարակված հոդվածների և այլ նյութերի (վերլուծա-
կան) մատենագիտություն և պարբերական մամուլի պատ-
մություն:

Այս ամենը ընդհանուր, այսինքն՝ գիտության կամ մշա-
կույթի ամենատարբեր ճյուղերին նվիրված գրականության
մատենագիտությունն է: Արանից տարբերվում է նյութային
(այսինքն՝ գիտության կամ մշակութի մի ճյուղի նվիրված
գրականության) մատենագիտությունը, որին մոտ է անհա-
տական (այսինքն՝ մի մարդու երկերի և նրա մասին եղած
գրականության) մատենագիտությունը, քանի որ մի անհա-
տի երկերը սովորաբար որևէ քննադատական, ճյուղի են նվիր-

ված լինում, շյուղալին և անհատական մատենագիտությունները բացի տպագիր երկերից կարող են նաև ձեռագիր կամ չհրապարակված նյութեր ընդգրկել: Այսինքն՝ դրանք զուտ տպագրության մատենագիտություն չեն:

Առանձին դիրք ունի գրացուցակային մատենագիտությունը: Առաջին պրակում խոսք եղել է միջնադարյան գրացուցակների մասին: Բնութով դրանց նման են նաև տպագիր ներկերի նոր ժամանակներում ստեղծված գրացուցակները՝ գրադարանային, հրատարակչական և գրավաճառային, և որոնք նույնպես ի տարբերություն սովորական իմաստով մատենագիտության տեղային սահմանափակություն ունեն (ընդգրկում են միայն տվյալ գրադարանի, գրավաճառանոցի ունեցած կամ տվյալ հրատարակչության լույս ընծայած գրականությունը)¹: Գրացուցակների մի տեսակն էլ ձեռագրացուցակներն են, որոնք ոչ թե տպագիր երկերի, այլ հին ձեռագրերի մատենագիտություն են:

Հայ նոր մատենագիտության այս տեսակներից յուրաքանչյուրի, ինչպես և դրանք ստեղծող մատենագետների մասին կխոսվի առանձին:

ԸՆԹԱՑԻԿ ՏՊԱԳԻՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նոր հրատարակվող գրքերի ու պարբերականների մասին հայտարարությունները ընթացիկ տպագիր արտադրանքի մատենագիտության ամենապարզունակ, բայց և ամենահեշտ իրադործելի և բախական ներդրածուն տեսակն են:

Դեռևս 19-րդ դարի առաջին կեսի պարբերականների մեջ («Շտեմարան», «Արշալույս Արարատյան», «Բազմավեպ»,

¹ Գրացուցակ բառի այս տարբերակված նշանակությունը նոր է (գործածվում է գրականության կատալոգ-ի իմաստով), մինչև վերջերս նման հստակ տարբերակում չի եղել, 19-րդ դարում գրացուցակ-ը օգտագործվել է թե՛ արդի նեղ իմաստով, թե՛ մատենագիտության լայն նշանակությամբ:

«Ազգասեր», «Ծննդնայա» և ուրիշներ: Հայտարարութիւններ էին տպագրում նոր լույս տեսնող կամ վաճառքի հանված գրքերի, ինչպես և նոր հիմնադրվող պարբերականների մասին:

19-րդ դարի 60—70-ական թվականներից նման հայտարարութիւնները ավելի պարբերաբար են տպագրվում, հատկապես հանդեսների մեջ, նրանց վերջին էջերում կամ շապիկներին:

«Բազմավեպը», ապա և 1868-ին հիմնադրված էջմիածնի «Արարատը», 1887-ից Վիեննայի «Հանդես ամսօրյան», ինչպես նաև այլ վայրերի պարբերականներ, գլխավորապես Թիֆլիսի հայկական հանդեսները՝ «Փորձը (1876-ից), «Արձագանքը» (1882-ից), «Մուրճը» (1889-ից) և մյուսները հայերեն նոր հրատարակութիւնների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվութիւններ էին տպագրում: Նոր լույս տեսնող գրքերի, ինչպես և այս կամ այն հրատարակչի լույս ընծայած գրքերի մասին հայտարարութիւններ տպագրվում էին ոչ միայն պարբերականների, այլև շատ ու շատ գրքերի վերջին ազատ էջերում և շապիկների վրա:

Վենետիկի և Վիեննայի կարևոր առավելութիւնն այս քննազավառում այն էր, որ նրանք այսպես թե այնպես համարվում էին հայ մշակույթի կենտրոններ, ուր համարվում էին հայերեն նոր հրատարակված գրքերն ու պարբերականները: Ոչ միայն Մխիթարյանները իրենք տարրեր միջոցներով ձրի կամ վճարովի ձևեր էին բերում բազմաթիվ հայերեն հրատարակութիւններ, այլ աշխարհի տարրեր մասերից հեղինակներ, հրատարակիչներ և այլ անհատներ Վենետիկ ու Վիեննա էին ուղարկում շատ գրքեր իրրեւ նվեր: Եվ հասկանալի է, թե ինչու հայերեն նոր հրատարակութիւնների վերաբերյալ առավել լիարժեք տեղեկութիւններ հանդիպում են «Բազմավեպում» և «Հանդես ամսօրյայում»: Օրինակ «Բազմավեպի» էջերում կամ շապիկի ներսի երեսներին գտնում ենք այդ կարգի բազմաթիվ հայտարարութիւններ՝ նոր հրատարակութիւն, Ռաժանուղագրութիւն, Բետկալ տղա-

յին հանդիսաց, Հանդես հանդիսաց և լրագիր լրագրաց և այլ վերնագրերով, Դրանց տակ զետեղվում են նոր հրապարակված գրքերի ցուցակներ, երբեմն ժանոթագրություններով, հայոց պարբերականների վերջին համարների մասին տեղեկություններ և այլն, «Բաղմավեպի» մի շարք համարներում դրսևում ենք մխիթարյան հրատարակությունների հանգամանալից ցուցակներ գրքերի տարրեր խմբավորումներով, ինչպես՝ Դպրոցական դասագրքեր, Նորատիպ մատյանք ընդ մամուլ, Վերստին տպագրյալ, Մատենադարան վիպասիրի, Շաբաբ ընտիր պատմությանց, Զբոսարան մանկանց, Մատենադարան մանկանց (տե՛ս, օրինակ, 1891 թ. համարները)։

«Հանդես ամսօրյալի» մեջ հանդիպում ենք նոր հրատարակությունք, Ազգային քերթերե ծաղկեփունջ, Թերթերու բովանդակութենեն Բաղվածք, Ազգային մատենադարան և այլ վերնագրերի տակ բազմաթիվ մատենագիտական տեղեկություններ աշխարհի տարրեր մասերում լույս տեսնող հայերեն գրքերի և պարբերականների մասին։ Երբեմն լինում են հայերեն պարբերականների կարևոր հոգվածների տեսություններ, բաղվածքներ հոգվածներից և այլն։

«Բաղմավեպը» 1880-ական թվականներին յուրաքանչյուր տարվա սկզբում (մեծ մասամբ հանդեսի Ա պրակի մեջ) տպագրում էր նախորդ տարվա ընթացքում լույս տեսած հանդեսի գրքերի ցուցակը՝ «Հրատարակությունք ազգային տպարանաց հրեթացս 18... տարվո» վերնագրի տակ։ Այս դեպքում արդեն խոսքը վերաբերում է ոչ թե մեկ կամ մի քանի նոր հրատարակված գրքերի կամ պարբերականների մասին տրվող փոքր հայտարարությունների, այլ մի տարվա ընթացքում լույս տեսած հայերեն գրքերի մատենագիտությանը։

Եթե նկատի ունենանք, որ «Բաղմավեպը» ժամանակի հարգված ու տարածված ամսագրերից էր, ապա պարզ կը դառնա, թե որքան մեծ է եղել հայերեն տարեկան հրատարակությունների վերաբերյալ նրա տված մատենագիտական տեղեկատվության նշանակությունը։ Ծիշտ է, ոչ քիչ հրատարակություններ դուրս էին մնում այդ ցանկերից, սակայն

ամեն դեպքում, հայ տարբեր մշակութային կենտրոններում հրատարակված շատ գրքերի մասին տեղեկություններ կարող էր ստանալ այդ կենտրոններից մեկում ապրող մտավորականը:

«Բազմավեպի» մատենագիտական այս ցանկերին երբեմն մի փոքր պակասում է խնամքը, նկատվում է որոշ անփութություն: Մի օրինակ. հանդեսի 1888 թվականի և համարում տպագրված «Հրատարակությունք ազգային տպարանաց հրեթացս 1887 տարվո» ցանկում ներկայացված են 58 անուն¹ 1887 թ. հրատարակություններ, որոնցից 21-ը տեղ են գտել նաև «Բազմավեպի» նախորդ տարվա և համարում, ընդ որում, դրանցից էլ 7-ը այդտեղ նշված են իբրև 1886 թ. տպագրություններ: Իսկ ամսագրի 1886 թ. և համարի մեջ նշված գրքերից 9-ը կրկին անգամ տեղ են գտել հաջորդ տարվա և պրակում եղած ցանկի մեջ (այս թերությունը նշել է նաև Գ. Գալեմբյարյանը՝ «Հանդես ամսօրյա», 1888, էջ 128):

Դեռ կտեսնենք, որ հայ տպագիր գրքի ընդհանուր ապագային մատենագիտությունը և՛ առաջին, և՛ երկրորդ անգամ յույս ընծայվեց Վենետիկում, բայց չնայած դրան, մատենագիտական նյութերի տպագրման տեսակետից ավելի շատ աչքի ընկավ Վիեննայի Մխիթարյանների «Հանդես ամսօրյան»:

Իր հիմնադրման երկրորդ տարուց սկսած «Հանդես ամսօրյան» սկսեց տպագրել հայերեն գրքերի տարեկան հրատարակությունների վերաբերյալ շատ բարձրորակ տեղեկատվություն, որը կազմվում էր միաբանության լուսավորչական քանասերների ձեռքով: Այսպես, 1887-ից մինչև 1896 թվականը ներառյալ (տասը տարվա) այդ տեղեկությունները «Ազգային հրատարակությունք» վերնագրով կապմել է Գրիգորիս Գալեմբյարյանը, ըստ որում, յուրաքանչյուր տարվա հրատարակությունների մատենագիտական ցանկերը տպա-

¹ «Բազմավեպ», 1888, էջ 5—8:

գրվել էն Հանդեսի հաջորդ տարվա համարներում¹ (միայն 1894 և 1895 թվականների հրատարակությունները տրված են Հանդեսի միևնույն 1896 թվականի համարում)։

Բերում ենք Գալեմբյարյանի փոքրիկ առաջաքանը գրքված տարեկան հրատարակությունների անդրանիկ մատենադիտության համար. (ՔՀանդես ամսօրյա, 1888, էջ 22). ՔԱնցյալ 1887 տարվուն հետ անցավ նաև մեր նոր գրականության համար ամբողջ տարի մը։ Բե այդ անցյալ տարին ինչ գրական լուսավորական մեր գրականության աղքատիկ արկղին մեջ, արժանի է դիտության։ Մենք մեր ընթերցողաց առջև կը դնենք այս գլխույս մեջ 1887 տարվո մեր ազգին թողած ազդային գրական ժառանգությունն, որչափ բան որ մեր ծանոթության հասած է։ Ասոր վրա կը հավելունք նաև անցյալ տարվո ընթացքին մեջ եվրոպական լեզվավ մեր ազգին վրայոք եղած մեզի ծանոթ հրատարակություններն։ Ի վերջո, համառոտ և անցողակի դիտողություն մը կընենք նույն հրատարակությանց վրա։

Մինչև հանդեսի մայիս ամսվա համարը տրվում են 1887-ի հայերեն հրատարակությունները (122 անուն), իսկ հուլիս ամսվա համարում տպված են «Եվրոպական հրատարակությունը» (22 անուն), Յանկի վերջում կա ուշագրավ ամփոփում², որից իմանում ենք, որ 1887-ին տպագրվել են հայերեն 135 անուն գրքեր (ցուցակից մի քանիսը դուրս են մնացել)՝ 77-ը արևմտահայերի, 58-ը արևելահայերի կողմից, հոսվում է նաև տպագրված գրքերի բնույթի մասին։ Կան այլ ուշագրավ վիճակագրական դիտողություններ։ Օրինակ, տրված է Ռուսաստանում տպագրվող հայերեն գրքերի

1 Տե՛ս ՔՀանդես ամսօրյա 1888 էջ 22—23, 36—37, 82—84, 127—128, 1889, էջ 261—264, 1890, էջ 140, 160—161, 181—182, 1891, էջ 183—185, 214—215, 1892, էջ 208—211, 243—244, 272—273, 339, 1893, էջ 301—303, 344—345, 366—367, 1894, էջ 341—346, 367—369, 1896, էջ 184—185, 246—249, 274—278, 311—314, 1897, էջ 311—314, 346—348, 1

2 ՔՀանդես ամսօրյա, 1887, էջ 127—128, 1

տարեկան միջին քանակը «Ռուսաստանի Նրատարակությանց թվույն մակերևույթն 10 տարի է (1873—1883) 60 և 80 թվերու մեջ կը ծփաս: Սա այսօրվա մատենագետի համար վիճակագրական շատ կարևոր տեղեկություն է:

Պետք է ասել, որ Գալեմբյարյանի կազմած ամենամյաց ցանկերը իրենց հայերեն և եվրոպական Նրատարակությունների բաժիններով շատ խնամված են և այսօր էլ վստահելի աղբյուր են անցյալի հայ գրքի վիճակագրության և մատենագիտական այլ տեղեկանքների համար: Բացի հանդեսի կողմից ստացվող գրքերից, որոնք բոլորը մտնում էին Գալեմբյարյանի կազմած այս մատենագիտության մեջ, այստեղ ընդգրկվում էին նաև տարբեր թերթերի ու հանդեսների մեջ տպագրվող գրացանկերում (նոր Նրատարակությունների) նշված գրքերը: Գալեմբյարյանի տարեկան այդ մատենագիտական ամփոփագրերը պակասներ ունենում էին, իհարկե, սակայն ոչ շատ. տարեկան ազգային Նրատարակությունների պատկերը հիմնականում ճիշտ էր լինում:

Գալեմբյարյանը «Հանդես ամսօրյայում» խնդրում էր հայերեն գրքերի հեղինակներին իրենց գրքերը կամ գոնե նրանց նկարագրությունները իրեն ուղարկել մատենագիտության համար¹: Նույն նպատակով Գալեմբյարյանը խնդրում է հայերեն թերթերի ու հանդեսների խմբագրություններից նոր Նրատարակված գրքերի ցանկերը ավելի հանգամանալից կազմել, գրքերը մանրամասն նկարագրել²:

Գալեմբյարյանի մատենագիտության մեջ շատ արժեքավոր պետք է համարել նաև այն, որ գրքերի նկարագրությունների տակ նշվում էին այդ գրքերի գրախոսականները (եթե այդպիսիք եղել են):

Հիշենք միայն, որ այս մատենագիտության եվրոպական գրականության բաժինները ոչ թե հայ տպագրության, այլ հայագիտական մատենագիտությանն էին վերաբերում:

¹ «Հանդես ամսօրյա», 1890, էջ 182:

² «Հանդես ամսօրյա», 1888, էջ 128:

Այնուհետև, «Հանդես ամսօրյան» տարեկան հայերեն հրատարակութիւնների փոքր-ինչ այլ բնույթի մատենագիտութիւնն է սկսում տպագրել: Այսպես հանդեսի 1898 թ. 1-ին համարում «Նոր հրատարակութիւնը» վերնագրի տակ տրված է ա) 1896, 1897 և 1898 թվականներին լույս տեսած գրքերի ցանկը, յիշվ նկարագրութիւններով (հեղինակ, վերնագիր, հրատարակութեան վայր, թվական, դիրք. էջերի քանակ, դիրք): Ապա տրվում է նույն գրքերի մի նոր ցանկ, սակայն մանրամասն ծանոթագրութիւններով (անոտացիաներով), որոնցում խոսվում է յուրաքանչյուր գրքի բովանդակութեան, արժեքի, թերութիւնների և այլ կողմերի մասին: Իսկ «Աղղային թերթերն ծաղկեփունջ» վերնագրի տակ տրվում են հայերէն դանազան պարբերականներում տպագրված հոդվածների ծաղկեփունջ, ծանոթագրութիւններով:

Այդպէս համարից համար շարունակվում է «Նոր հրատարակութիւնը» մատենագիտութիւնը, ուր նկարագրվում է հանդեսի խմբագրութեան ստացած գրականութիւնը:

Մատենագիտական ծանոթագրութիւնները կազմել են վիճանայի մխիթարյան տարրեր գիտնականներ, այդ թվում Գարբիէլ Մանեխչյանը և Պետրոս Զաքարյանցը:

Այդպիսով, «Հանդես ամսօրյան» այլևս չի հրապարակում նախորդ տարվա հայերեն հրատարակութիւնները, այլ տարրիս վայրերից ստացվող գրքերի ցանկերը ներկայացնում է համարից համար, ըստ ստացման: Եվ տվյալ տարվա համարներում հրապարակված մատենագիտութեան մեջ մտնում են ոչ միայն նախորդ տարվա, այլ նաև երկու տարի առաջ, ինչպէս և տվյալ տարում տպագրված գրքերը: Նոր գրքերը ներկայացնելու այս միջոցը, անշուշտ, ամէլի համար էր «Հանդես ամսօրյայի» համար, բայց այն այլևս հայերեն տարեկան հրատարակութիւնների ամփոփագիր չէր:

¹ «Հանդես ամսօրյայի» 1898 թվականի 12 համարների հետևյալ էջերում է տեղ գտել այս մատենագիտութիւնը՝ 25—31, 58—63, 89—95, 118—127, 151—159, 180—189, 213—223, 277—285, 339—347, 380—383,

Այդ մատենագիտութիւնը փաստորեն ոչ թէ «նոր հրատարակութիւնք» պիտի կոչվեր, այլ հանդեսի ստացած «նոր հրատարակութիւնք»:

Հետագայում «Հանդես ամսօրյան» շարունակեց հրապարակել իր ստացած տարբեր լեզուներով գրքերի ցանկերը (մինչև այժմ էլ շարունակում է):

Օրինակ, 1900—1910-ական թվականներին «Հանդես ամսօրյայի» էջերում (հիմնականում շապկի երկրորդ թերթի ներսի երեսին) տպագրվում են խմբագրութեան ստացած հայերեն և այլ լեզուներով գրքերի ցանկեր «նոր հրատարակութիւնք (խմբագրութեանս խավրված)» վերնագրով, պարբերականներինը՝ «Ազգային թերթեր, որոնք խմբագրութիւնս կը խավրվին»:

Որոշ ընդմիջումից հետո 1920-ական թվականներին հանդեսը վերսկսեց հայերեն հրատարակութիւնների ամփոփագրեր տալը («Ազգային հրատարակութիւնք 19 . . տարւոյն» վերնագրով):

«Հանդես ամսօրյան» 1911 թվականի հունվարից սկսում է տպագրել Պ. Ֆերհաթյանի մի մատենագիտութիւնը, որը ըստ ծրագրի Գ. Գալեմբյարյանի 1897-ին ընդհատված մատենագիտութեան շարունակութիւնը պիտի լիներ, բայց ըստ էութեան բոլորովին ուրիշ բնույթ ստացավ: Ֆերհաթյանը շարունակեց միայն Գալեմբյարյանի մատենագիտութեան երկրորդ մասը՝ եվրոպական լեզուներով հայագիտական հրատարակութիւններէի ցուցակը, և ստացվեց ոչ թէ հայ տպագրութեան, այլ հայագիտական գրականութեան մատենագիտութիւն: Ըստ տեղեկութիւնների Ֆերհաթյանը շարունակել է նաև Գալեմբյարյանի «Ազգային հրատարակութիւնք»-ի հայկական մասը՝ կազմելով 1896—1910 թթ. հրատարակված հայերեն գրքերի մատենագիտութիւնը: Բայց այն մնացել է անտիպ:

Ֆերհաթյանի մատենագիտութեանը գուդահեմ 1912 թվականի փետրվարից նույն «Հանդես ամսօրյայում» սկսեց տպագրվել հայագիտական մի ուրիշ մատենագիտութիւն,

ուր ընդգրկվում էին մի տարում լույս տեսնող հայերեն և օտար լեզուներով այն գրքերն ու հոդվածները, որոնցում բնակում էին հայոց լեզվին, հայկական մշակույթին ու ընդհանրապես հայությանը վերաբերող հարցեր։ Այլ խոսքով, նույն հանգեսում զուգահեռաբար տպագրվում էին հայագիտական երկու մատենագիտություններ, որոնցից մեկը նաև հայերեն նյութեր էր պարունակում, այդքանով էլ մասամբ կարող է դիտվել հայ տպագրության մատենագիտությունը։

Նվաճող, Մանգոս ամսօրյան 1888 թվականից սկսեց տպագրել ընթացիկ (տարեկան) հայերեն հրատարակությունների մատենագիտական ամփոփումներ, որոնց կցվում էին նաև հայագիտական ոչ հայերեն գրականության ցանկեր։ Այս հանդեսը կարծես աստիճանաբար սկսում է հրաժարվել տարեկան հայերեն հրատարակությունները ամփոփելու իր յավ ավանդույթից՝ ավելի ու ավելի հրապուրվելով հայագիտական բնույթի մատենագիտությամբ։ Հանդեսը նույնիսկ միաժամանակ հայագիտական գրականությանը նվիրված մատենագիտական երկու ցանկեր է տպագրում, դրան պոմարած տարբեր լեզուներով հրատարակված գրքերի այլ ցանկեր (խմբագրության ստացած)։

«Հանդես ամսօրյաի» նման «Բազմավեպն» էլ կարծես սկսում է խուսափել հայերեն տարեկան հրատարակությունների ամփոփագրերը տալուց։ Մինչդեռ այդ ցանկերը, թեև յրիվ չէին ընդգրկում տարեկան ազգային հրատարակությունները, սակայն համազգային բնույթի կարևոր մատենագիտություններ էին, որոնց արժեքը մինչև այժմ էլ մնում է։ Անշուշտ, հայագիտական տարբեր լեզուներով գրականության մատենագիտությունը շատ կարևոր դեր ունի բանասիրության համար, սակայն, մեր կարծիքով, առավել կարևոր էին ազգային հրատարակությունների տարեկան մատենագիտական ամփոփագրերը, որոնք աշխարհի հայութայնը, ինչպես և հայերեն կարդացող, հայ գրականությամբ հետաքրքրվող այլազգիներին ամեն տարի ներկայացնում էին նախորդ տարվա գրական հունձը, ազգային լեզվով լույս

ընծայված մի տարվա գրականությունը: Իսկ գրանո՞վ ավելի էր շրջանառության մեջ մտնում հայ գիրքը. այն իբրև հայության մեջ հաղորդակցության միջոց ավելի շատ էր կատարում իր դերը. նպաստում էր նաև հայ գեղարվեստական գրականության, գրականագիտության, պատմագիտության, առհասարակ բանասիրության զարգացմանը, քանի որ առանց մատենագիտական տեղեկատվության այդ զարգացումը թույլ է ընթանում: Տարեկան ազգային հրատարակությունների մատենագիտական այդ տեղեկատվությունը ոչ մի պարբերական այնքան լավ չէր կարող կատարել, որքան «Հանդես ամսօրյան» և «Բազմավեպը»: Եվ ահա այդ տեղեկատվության փոխարեն սկսում է հրատարակվել հայագիտական մատենագիտություն:

Զպետք է մոռանալ այն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր ժողովուրդ նախ պետք է փայփայի, զարգացնի իր յուրահատուկը, ազգայինը: Հայագիտությունը գիտություն է հայկականի մասին: Ո՞րն է ավելի կարևոր բուն առարկան, թե նրա մասին եղած գիտությունը: Ահա հաճախ շեն հիշում, որ բուն առարկան ավելի կարևոր է, թեև ոչ այն պատճառով, որ եթե չլինի այդ առարկան, չի լինի նաև նրա մասին ստեղծվող գիտությունը: Եթե հին հայերը հայերեն լեզվով չստեղծեին գրչագիր գրքեր, չգրեին հայերեն վիմագիր արձանագրություններ, այսօր հայոց հին գրավոր մշակույթով զրադվող հայագետներ չէին լինի (ներանց համար նյութ չէր լինի): Այլ խոսքով, առանց հայալեզու գրականության չի կարող լինել հայագիտական բանասիրություն, ինչպես որ առանց հայոց լեզվի, առանց այն, որ հայերը միմյանց նետ խոսեն հայերեն, չի կարող լինել հայ ժողովուրդը կամ Հայաստան: Սա թվաբանական ճշմարտություն է. որ հաճախ է ականջի ետև զգվում: Նոր ժամանակներում ձեռագիր գրքերի փոխարեն տպագիր գրքեր են տեղծվում, որոնք պարունակում են նոր շրջանի հայ գրողների, փոխոսփանների և մյուս ստեղծագործողների ու գիտնականների երկերը և

այդպիսով, հայ նոր գրավոր մշակույթի նմուշներն են դառնում:

Ամեն դեպքում հայագիտությունը, մանավանդ այլալեզու հայագիտությունը երկրորդային է: Հայկական մատենագիտության բնադավառում էլ առաջնայինը բուն առարկան պետք է լինի, այսինքն՝ հայալեզու գրականությունը, իսկ երկրորդայինն արդեն, հայագիտականը:

Առ Վիկենայի և Վենետիկի Մխիթարյանների հասցեին իրրե կշտամբանք չէ, որ ասում ենք, այլ առիթի բերումով անում իրրե կարևոր դիտողություն: Մխիթարյանների վաստակը, ինչպես հայտնի է, ավելի քան մեծ է ոչ միայն հայագիտության ասպարեզում, այլև ազգային լեզուն, հայ խոսքը սլահպանելու և ճոխացնելու, հայերեն գրքեր, ամսագրեր հրատարակելու քնազավառում: Փաստ է նաև, որ առաջինները «Բաղմավեպն» ու «Հանդես ամսօրյան» էին, որ սլարրերարար սկսեցին տպագրել տարեկան հայերեն հրատարակությունների ընդարձակ մատենագիտություններ և դրանով հիմնադրեցին հայ առձանագրական մատենագիտությունը:

Մենք դեռ կտեսնենք, որ հորհրդային Հայաստանում արձանագրական մատենագիտության հատուկ պետական հիմնարկ ստեղծվեց՝ Պետական գրապալատ, որը 1925 թվականից սկսեց հրատարակել հորհրդային Հայաստանում ամեն տարի լույս տեսնող գրականության արձանագրական մատենագիտության իր պարբերականը: Սկզբում «Տպագրության տարեգիրք», հետո՝ «Գրքի տարեգիրք», «Լրագրային հոդվածների տարեգիրք» և այլն:

«Հանդես ամսօրյայի» և «Բաղմավեպի» հրապարակած ղերոհիշյալ մատենագիտական ցանկերը, ինչպես ասացինք, չէին ընդգրկում աշխարհում լույս տեսնող ամբողջ հայերեն գրականությունը, սակայն, կարևոր է, որ այդ ամսագրերը աշխարհագրական որևէ սահմանափակում չէին տնում, հայերեն ամեն գիրք, անկախ հրատարակման վայրից, կարող էր տեղ դտնել տարեկան հրատարակությունների այդ ամ-

փոփազրեցում: Պետական գրապալատը այն մեծ քարեբախտությունն ունի, որ կառավարութեան որոշումով ստանում է Հայաստանի հանրապետության սահմաններում լույս տեսնող բոլոր գրքերը, բոլոր լեզուներով, իբրև պարտադիր օրինակներ, Այդ պատճառով էլ «Գրքի տարեգիրը» Հայաստանի հանրապետության հրատարակությունները լրիվ արտացոլելու անհամեմատ ավելի մեծ նշարավորություն ունի. քան «Հանդես ամսօրյան» ուներ՝ աշխարհում լույս տեսնող հայերեն գրքերն արտացոլելու գործում: Բայց մյուս կողմից էլ «Գրքի տարեգիր» ընդգրկումը միայն հորհրդային Հայաստանի հրատարակություններն են և ոչ թե ընդհանրապես հայերեն հրատարակությունները ամբողջ աշխարհում: Այս տեսակետից էլ ավելի լայն էր «Բազմավեպի» և մանավանդ «Հանդես ամսօրյայի» ընդգրկումը:

Գ. Լեոնյանի «Հայոց պարբերական մամուլը» աշխատության առաջին տարբերակի համաձայն՝ գրավաճառ-լրագրող Վահան Զարդարյանը Կ. Պոլսում 1893—1894 թվականներին հրատարակել է մի գրացուցակ-ամսագիր կամ ամսատետր՝ «Գրացուցակ նոր հրատարակությանց» վերնագրով, իսկ իրոք դա ճիշտ է, ապա հարց է առաջանում՝ ի՞նչ գրքեր է ընդգրկել այդ մատենագիտական պարբերականը՝ հայերեն ամեն մի հրատարակություն, միայն Կ. Պոլսի՝ հայերեն հրատարակությունները, թե՛ ընտրովի հայերեն հրատարակություններ:

Գ. Լեոնյանը քաղվածք է բերում «Գրացուցակի» նախաբանից, ուր ասված է. «...կը պարունակե նախորդ ամսույս բոլոր հայերեն հրատարակությանց ցանկն, լրագրաց զխավոր հոգւածոց շարունակութիւնն և այլն»: Ապա «Գրացուցակի» մասին իրեն տեղեկություն տված Վ. Զարդարյանի նամակից քաղվածք է բերում. «...այժմ Պոլսո մեջ կ'ընդունա-

1 Գ. Լեոնյան Հայոց պարբերական մամուլը, Անթանդրապոլ, 1895, էջ 354:

րակվի մի պարբերական ամսաթերթ «Գրացուցակ» անվամբ, որ կը պարունակե նույն ամսոք ոչ ոք հայերեն հրատարակութեանց ցանկն, լրագրաց անունը և այլն: Սույն ցանկն ամեն գրավաճառանոց կուղարկեմ ձրիս:

Ըստ Լեոնյանի՝ Ջարդարյանի ամսագրի վերջում գրված է. «Կը խնդրվի հրատարակիչներն և հեղինակներն, որ իրենց նոր հրատարակած երկերէն մեկ-մեկ հատ ուղարկեն, որպէսզի հիշատակվի նույն ամսոք ցանկին մեջ»:

Այս ամենից երևում է, որ գրավաճառ և հրատարակիչ վ. Ջարդարյանը հիմենի է իսկական մատենագիտական պարբերական, որի նպատակն է եղել ամենամսյա տեղեկատվութիւն հրապարակել նոր լույս տեսնող հայերեն գրականութեան վերաբերյալ: Ըստ բերված տեղեկութիւնների դա եղել է առանձին հրատարակվող առաջին հայ մատենագիտական պարբերականը՝ Հայաստանի պետ. գրապալատի «Տեղեկագիր»-ների նախորդը:

Մեզ մատչելի գրադարաններում չկարողացանք գտնել այդ «Գրացուցակից» որեւէ համար: Իսկ Գ. Լեոնյանը իր «Հայոց պարբերական մամուլի» 1934 թ. հրատարակութեան մեջ չի նշել այս պարբերականը: Արդյո՞ք Լեոնյանը որոշել է, որ այդ հրատարակութիւնը իսկական պարբերական չէ, թե՞ որեւէ այլ չպարզված հարց կա: Եվ կամ, թերևս, այս դեպքում էլ Լեոնյանը ինչ-որ անճշտութիւն է թույլ տվել իր երկի 1895 թ. սխալաշատ տարբերակում:

19-րդ դարում ընթացիկ հայերեն գրականութեան վերաբերյալ մատենագիտական որոշ տեղեկատվութիւն եղել է նաև արևելահայոց մեջ, գլխավորապես Թիֆլիսում, բայց այն ընդդրվում էր սոսկ Կովկասի մեջ կատարված հրատարակութիւնները: Այդ մատենագիտական ցանկերի մեջ հայերեն գրքերը սովորաբար ներկայացվում էին թարգմանված վերնագրերով:

Այսպես «Сборник статистических сведений о Кавказе» ժողովածուի 1869 թվականի 1-ին հատորում գտնում

ենք Թիֆլիսում մի քանի տարվա ընթացքում լույս տեսած գրքերի ու պարբերականների ցանկը¹:

Ժողովածուի 161-րդ էջից տրվում է 1856—1869 թվականներին Թիֆլիսում լույս տեսնող պարբերականների մի ցանկ. հայերեն պարբերականները (5 անուն) տրված են 163-րդ էջում (ընդ որում. Թիֆլիսում լույս տեսնող պարբերականներից բացի, տրված է նաև էջմիածնի «Արարատը»): Պարբերականների անունները տրված են ռուսերեն թարգմանությամբ («Пчела Армениии», «Журавль армянской страны» և այլն) և ապա փակագծում՝ հայերենը:

Ժողովածուի 165-րդ էջից տրված է 1862—1868 թվականներին Թիֆլիսում տարբեր լեզուներով լույս տեսած գրքերի ցանկը հետևյալ ներթականությամբ՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, կաբարդիներեն և այլն: 171-րդ էջում հայերեն գրքերն են (վերնագրերը տրված են միայն ռուսերեն թարգմանությամբ):

Տպագրության վերաբերյալ վիճակագրական-մատենագիտական նման տեղեկություններ կան նաև Թիֆլիսում հրատարակվող «Կովկասյան տարեցույցի» («Кавказский календарь») համարներում: Այսպես, այդ տարեգրքի 1891 թվականի համարի 1-ին բաժնի մեջ վիճակագրական տեղեկատվության գլխում տեղ են գտել մատենագիտական նյութեր: Նախ տրված է 1870—1889 թվականներին, այսինքն՝ 20 տարվա ընթացքում Կովկասի մեջ ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեյջաներեն և այլ լեզուներով լույս տեսած պարբերականների տեսությունը: Կա նաև (243—244 էջև-

¹ Сборник статистических сведений о Кавказе. Издаваемый кавказским отделом Императорского русского географического общества. Т. 1. Тифлис, 1869. отд. 2, стр. 159, 163, 165.

² «Кавказский календарь на 1891 год», Тифлис, 1890. Отд. 1, стр. 239—254. Краткий перечень газет и журналов, выходящих на Кавказе с 1870 по 1889 г., с переименованием редакторов и с указанием времени возникновения газет и качества печатавшихся номеров и экземпляров этих изданий.

րում) 1870—1890 թվականներին լույս տեսած հայերեն պար-
ընթակաճանների տեսութայունը:

Այնուհետև, տրված է 1891 թվականին Կովկասում լույս
տեսնող տարբեր լեզուներով պարբերականների ցուցակը,
թվարկված են (էջ 245) հայերեն պարբերականները (թվով
վեց): Ապա բերված է մի աղյուսակ՝ 20 տարվա պարբերա-
կանների, ուր նշված են յուրաքանչյուր լրագրի կամ հան-
դեսի հիմնադրման և փակման տարեթվերը:

«Կովկասյան տարեցույցի» 1893 թ. համարում¹ «Վիճա-
կադրական և այլ տվյալներ Կովկասի մասին» գլխում տար-
բեր վիճակագրական տեղեկությունների շարքում կա նաև
1891 թ. Կովկասում լույս տեսած զրբերի ու զրբույկների
ցուցակը (47—50-րդ էջերում հայերեն զրբերի ցանկն է՝ 131
անուն): Ապա տրվում է նաև 1892 թվականին առանձին
հրատարակություններով լույս տեսած զրբերի և հոգվածների
ցանկը (54-րդ էջում 1892-ի հայերեն զրբերն են՝ 99 անուն):
Այս մատենագիտական ցանկերում ևս հայերեն զրբերի վեր-
նագրերը տրված են ռուսերեն թարգմանությամբ:

Տարեզրբի նույն 1893 թ. համարում կա նաև Կովկասում
1891 թ. լույս տեսած պարբերականների ցանկը, ուր ի թիվս
այլոց ներկայացված են նաև 7 անուն հայերեն պարբերա-
կաններ (էջ 57):

«Կովկասյան տարեցույցի» այլ տարիների համարներում
նույնպես կան ընթացիկ հայերեն գրականությանը վերաբե-
րող մատենագիտական կամ վիճակագրական նյութեր²:

¹ «Кавказский календарь на 1893 год», Тифлис, 1892, Статисти-
ческие и др. данные о Кавказе, стр. 42—55.

² 1863—1881 թթ. Թիֆլիսի և առհասարակ Կովկասի պարբերական
մամուլի մասին տեղեկություններ կան հրապարակված «Кавказский ка-
лендарь»-ի հետևյալ պրակներում: 1867 թ. III րածին, էջ 255—257,
1871, II, էջ 83, 1873, II, էջ 224—225, 1875, II, էջ 284—286, 1876, II,
էջ 65—66, 1877, II, էջ 271—272, 1878, II, էջ 306—307, 1879, I,
էջ 168—169, 1880, էջ 216—217, 1882, I, էջ 308—310:

Ընդհանրապես այս տարեզրքում ամենատարբեր բնույթի մատենագի-

Արեւելահայ ամսագրերից ընթացիկ հրատարակութիւններին կանոնաւորված ցանկեր տալու փորձ արել է էջմիածնի «Արարատը», որը ոչ միայն տպագրում էր հայտարարութիւններ նոր լույս տեսած գրքերի մասին, այլ երբեմն էլ տալիս էր տարեկան հրատարակութիւնների ցանկեր¹։ Թեև բավական պակասներով։

Վերջապէս, ընթացիկ մատենագիտության մի կարեւոր տեսակն էլ գրախոսութիւնն է։ Հայոց մամուլը միշտ էլ բավական զգայուն է եղել նոր հրատարակված գրքերի նկատմամբ. ցույց է տվել իր վերաբերմունքը։ Այսօր անցյալի հայ լրագրերը և հանդեսները թերթիւս՝ բազմաթիւ գրախոսութիւնների ենք հանդիպում. որոնցում հաճախ ախպիսի ճիշտ գնահատականներ են տրված այս կամ այն երկին, որ այժմ էլ, տասնյակ տարիներ անց վերագնահատման կարիք չեն գգում։ Թեև չպէտք է աչքաթող անել նաև շարամբ-տորեն գրված, անձնական հաշիվներով պայմանավորված բազմաթիւ գրախոսականներ, որոնք հայ պարբերական մամուլի մութ կետերն են։

Մենք հնարավորութիւն չունենք ավելի հանգամանալից անդրադառնալու հայոց մամուլում տպագրված տարրեր բնագավառների վերաբերող գրախոսականներին, ինչպէս և հայ գրական քննադատության պատմությանը։ Դրանք առանձին ուսումնասիրութիւնների առարկաներ են, իրենց հսկայական նյութով (հայ գրական քննադատության պատմության հարցերով վերջերս լրջորեն զբաղվում են մի քանի գրականագետներ)։ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ պրաքրենագատության, իրրև մատենագիտության հետ առնչված, իսկ երբեմն նրա մի մասը համարվող բնագավառի վերա-

տական նյութեր են տպագրվել, այդ թվում լրագրային հոդվածների մատենագիտութիւն (օրինակ՝ «Կամկազ» ուսերեն լրագրի հոդվածների ցանկը)։

¹ Տե՛ս, օրինակ, «Արարատ», 1894, էջ 30—31 (հայերեն 18 անուն գիրք. 1893—1894 թթ. հրատ.)։

րերյալ առաջին անգամ խոսել է մատենագետ Հրաչյա Կոստիկյանը իր «Սովետահայ մատենագիտության զարգացման ուղիները» աշխատության մեջ¹։ Հեղինակը հանգամանալից ներկայացրել է զրաքննադատության վերաբերյալ հայ հեղափոխական դործիչների՝ Մ. Նալբանդյանի, Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի ունեցած հայացքները, ինչպես և անդրադարձել հայ նոր մատենագիտության մի քանի կարևոր հարցերի։

Ձաճե՛ք հայ տպագրության ազգային մատենագիտությունը ստեղծելու ուղղությամբ

Հայերեն զրքերի և պարբերականների վերաբերյալ դանադան հայտարարությունները, տեղեկատու ցուցակները, ոչ մեծ գրացուցակները, ինչպես և տարեկան հրատարակությունների մատենագիտական ամփոփագրերը հայ տպագրության ազգային մատենագիտության, կարելի է ասել, սկզբնական տեսակներն էին։ Հայերեն տպագիր զրքից կամ պարբերականից օգտվող բազմաթիվ մտավորականների մեջ չէր կարող միտք շժագել հայերեն երբևէ հրատարակված բոլոր զրքերի ու պարբերականների մի մատենագիտություն ունենալու անհրաժեշտության մասին։

Ամենից առաջ, իհարկե, պետք է ցանկություն և ծրագիր առաջանար ունենալու հայ տպագիր զրքի մի ընդհանուր մատենագիտություն, որն ընդգրկեր հայերեն տպագրած բոլոր զրքերը՝ առաջին հայ տպագիր զրքից մինչև մատենագիտությունը կազմելու տարում հրատարակվածները։

Այդպիսի ցանկություն և ծրագիր ծագում է մի շարք բանասերների մտքում, որոնցից մի քանիսը գործնական քայլեր են անում այդ ուղղությամբ։

Ինչպես գիտենք, Վենետիկի Մխիթարյաններից Իգնա-

¹ Հ. Կոստիկյան Սովետահայ մատենագիտության զարգացման ուղիները, Երևան, 1986, էջ 27—55։

տիոս Փափազյանը առաջինն էր, որ սկսեց կազմել մինչև 1800 թ. լույս տեսած հայերեն տպագրի գրքերի մի ցուցակ, որը մնաց անտիպ:

Արևելահայոց մեջ հայ գրքի ընդհանուր մատենագիտություն կազմելու առաջին փորձերը անում են Միրյանյ Միանսարյանցը և Գյուտ Աղանյանցը: Վերջինս, որ ժամանակի ճանաչված բանասերներից էր, 1860-ական թվականներին սկսում է կազմել հայերեն տպագրված գրքերի մի ընդհանուր ցուցակ՝ օգտվելով տարրեր պրադարսների ունեցվածքից և գրացուցակներից: Ահա թե ինչ է գրում ինքը՝ Գ. Աղանյանցը իր այդ աշխատանքի մասին. «Մոտ տասը տարի է, որ ես նվիրել եմ ինձ մի հայերեն գրացուցակ կազմելուն. տակավին 1876 թվին, երբ ես միջոց ունեի հանգուցյալ Տեր-Շմավոնյանցի հարուստ գրադարանը կարգավորելու միջոցին, ծանոթանալ նրա հետ, ծագեցավ իմ մեջ այդ միտքը. սկսեցի ժողովել և ձեռք բերի ներսիսյան դպրոցի, Տեր-Շմավոնյանցի, Ս. էջմիածնի, Երուսաղեմի, Զմյուռնիայի, Վիեննայի, Վենետիկի և այլ տեղերի գրադարանների գրացուցակները, սակայն այդ միջոցին հասու եղա, որ նույն գործով պարապում է հանգուցյալ Միքայել Միանսարյանցը, և ես դադարեցրի իմ պարապմունքը այդ մասին, իսկ երբ լույս տեսավ հ. Գար. Զարբհանալյանի հայտարարությունը, թե մամուլի տակ է «Հայկական մատենագիտությունը», ես խստապ չրաժարվեցի մտադրությունիցս»:

Ինչ վերաբերում է Մ. Միանսարյանցին, ապա նա եղավ հայկական նոր գիտական մատենագիտության առաջին խոշոր ներկայացուցիչը, նաև նոր շրջանի առաջին հայ մտավորականը, որ իր գործունեության հիմնական մասը նվիրեց հայ մատենագիտությանը: Պայծառ մտրի ու հայացքների տիր, հարազատ ժողովրդի առաջադիմությանը նվիրված մի հրաշալի գործիչ էր Միանսարյանցը. նրա կյանքի, գործի և մատենագիտական աշխատանքի մասին խոսվում է հաջորդ գլխում:

1 «Արձագանք», 1885, № 7, էջ 108.

Վենետիկի Մխիթարյաններից Գ. Զարբհանայանը կազմեց և հրատարակեց հայ տպագրութեան առաջին ազգային մատենագիտութիւնը, որի կատարելագործման աշխատանքին ձեռնարկած Մխիթարյաններից մի ուրիշը՝ Ա. Ղազիկյանը ստեղծեց «Հայկական նոր մատենագիտութիւնը», որը և դաւ ի հայ տպագիր արտադրանքի ազգային ընդհանուր մատենագիտութեան լավագույն օրինակը:

Զարբհանայանի և Ղազիկյանի կյանքին ու մատենագիտական աշխատանքին նույնպէս նվիրված են առանձին գլուխներու Ալեքսիսով, հայ տպագրութեան մատենագիտութեան բաժինը շարունակվում է հաջորդ գլուխներում:

Վիեննայում նույնպէս փորձեր են արվում մատենագիտութիւն կազմելու, Ուշագրավ է Եղիշէ Գաֆթանյանի աշխատանքը այդ բնագավառում: Ահա թե ինչ է գրում Թեոդիկը այդ առթիւ. «Թողունք իր հորինած դասագրքերն ու թարգմ. վեպերը, հիշենք միայն այն համբերատար ոգին, որուն շնորհիւ Հ. Եղիշէ կարող եղած է կէս դարու ընթացքի մը մեջ կերպարանել երկհատոր սովոր և հոյակապ ցուցակ մը՝ այլ և այլ երկիրներու մամուլներէն համայնված հայ մատյաններու, գրքույկներու և թերթերու, 1512 թվականէն շարահարարար բերված, կապված մինչև 1912: Հարկադրված բլլալով քանի մը յոթնյակ թարթափելու այդ ձեռագիր աշխատասիրութեան հոծ մանվածներուն մեջ, համոզումս զայն ցուցինք, թէ այս ալեւոր վանականն օժտված է պայծառ իմացականութեամբ, անսպառ կորովով և աննվաճ հարատեւութեամբ: Տղա հասակէն սիրահար բոլոր այն գիրքերուն և թուղթի կտորատներներուն, որոնց վրա մէսրոպեան տառ դրողներված է, համառ հավաքիչը դարձած է անոնց և իր Ուխտին առաջին ճոխացնողներէն դիտավորելով Վիեննա գտնված ատեն սկսած է դիվանը կարգի դնել և այնուհետև նվիրված շատերու համար անուշաման տաղտկալի և ապերախտ տքնութեան մը, որ իր թմուցակն է»¹: Ափսոսալ պետք է միայն, որ այս մատենագիտութիւնը ևս անտիպ է մնացել:

¹ Թեոդիկ Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 30:

ՄԻՋԱՅԵԼ ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑ

Գ Լ Ո Ւ Խ Դ

Մ. Միանսարյանցը նոր շրջանի բոլոր մատենագետներին, կարելի է ասել, ամենից ավելի մատենագետն էր, 19-րդ դարի և 20-ի սկզբի ամենախոշոր հայ մատենագետներից Կ. Ջարրահանալյանը նախ գրականագետ էր, բանասեր լայն առումով, ապա նոր մատենագետ, Ղազիկյանը, ինչպես կրտսերները, ակամայից դարձավ մատենագետ և մինչև վերջ ցավով էր մտորում այն մասին, որ մատենագիտությունը խլեց իր այն ժամանակի մեծ մասը, որը նա պետք է տրամադրեր բանաստեղծական արվեստին:

Միանսարյանցը իր գործունեության սկզբից հայ տպագրության մատենագիտության ստեղծումը համարեց կարևորագույն աղգային գործ և ամբողջովին նվիրվեց դրան. այդ աշխատանքը նրա մշակութային ամբողջ գործունեության առանցքը եղավ, մնացածը ինչ որ նա արեց եղավ կողմնակի:

Միքայել Միանսարյանցը ծնվել է 1830 թ.¹ Թիֆլիսում: Նրա հայրը՝ Մեսրոպը երեանցի էր՝ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հեռավոր ազգականը և Թիֆլիս էր տեղափոխ-

¹ Ըստ ուրիշ աղբյուրների՝ 1839 թ. («Արևազանք», 1991, № 4, էջ 57):

1820-ական թվականներին: Մենքուպ Միանսարյանցը ունեցել է Լրևբ գավակ, Միքայելը անդրանիկն էր:

Միքայել Միանսարյանցը նախ սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, հետո Մոսկվայի Լազարյան ճեմարանում և այսպե Պետերբուրգի կայսերական համալսարանի իրավաբանական բաժնում, որն ավարտելով ստացել է իրավաբանության թեկնածուի աստիճան:

Այնուհետև, Միանսարյանցը սովորել է Պետերբուրգի կայսերական հեծելազորային զինվորական բարձրագույն ուսումնարանում, որը 1857-ին ավարտել է պոգոուշիկ-ի աստիճանով: Նույն թվականին էլ նշանակվել է Թիֆլիս աշխատանքի:

Թիֆլիսում Միանսարյանցը թղթակցում է տեղական պարբերականներին, գլխավորապես հայկական «Մեղու Հայաստանի» և ռուսական «Կավկազ» թերթերին: Առաջինում գրում է հիմնականում հայ ժողովրդի լուսավորության ու կրթության, ինչպես և հրատարակչական գործը ծավալելու հարցերի մասին: Հոգվածների մեջ զգացվում է ազնիվ նախանձախնդրություն հարազատ ժողովրդի կրթական գործը առաջ մղելու նկատմամբ: Միաժամանակ Միանսարյանցի այդ հոգվածների մեջ դժվար չէ նկատել գրքասերին և ապագա մատենագետին: Փոքր-ինչ ավելի ուշ (1861-ից) Միանսարյանցը թղթակցում է նաև Ատ. Նազարյանցի հայտնի «Հյուսիսսասիայ» ամսագրին (Մոսկվա):

1858 թվականին Միանսարյանցը՝ այն ժամանակ Աբխազիայի դորբերի հրամանատար զորավար Մ. Լոռիս-Մելիքյանին ուղևորվում է Կ. Պոլիս (իբրև թիկնապահ): Պատգամավորության նպատակն էր նորընտիր Մատթեոս կաթողիկոսին (Կ. Պոլսի նախկին պատրիարք) էջմիածին հրավիրելու: Կ. Պոլսում թե՛ Լոռիս-Մելիքյանը և՛ թե՛ Միանսարյանցը տեղի հայության կողմից մեծարանքի, շքեղ ընդունելության են արժանանում: Միանսարյանցը ազատ ժամանակն օգտագործում է Կ. Պոլսի հայկական դպրոցներն ու մշակութային մյուս հիմնարկները այցելելու համար:

Ըստ մի հիշատակության Կ. Պոլսում մի շատ ճեփ ճաշ-
կերույթի ժամանակ Միանսարյանցը կշտամբում է ճաշկե-
րույթը կազմակերպողներին՝ ասելով. որ ավելի լավ էր այդ
հսկա գումարը (մոտ 4000 ռ.) ծախսվեր Հայաստանի քա-
տեղը. ինչպես և հայությանը օգտակար գրքեր տպագրելու
համար¹:

Հիշատակում են նաև Միանսարյանցի կրթոտ վեճը Թիֆ-
լիսի հայոց առաջնորդ Սարգիս Զալալյան եպիսկոպոսի հետ
1859 թ., երբ վերջինս դիմավորում էր Կ. Պոլսից Կովկաս
ժամանած կաթողիկոսին²: Վեճը ավելի է ունենում բազմու-
թյան առջև: Միանսարյանցը մեղադրում է առաջնորդին հայ
մանուկների և պատանիների կրթության վրա պատշաճ ուշա-
դրություն չդարձնելու, մանավանդ ներսիսյան դպրոցի լավ
մանկավարժներին հալածելու համար: Վեճը այնքան սույ-
րնույթ է ստանում, որ Լոռիս-Մելիթյանը մի պատրվակ զրտ-
նելով Միանսարյանցին շտապ ուղարկում է Թիֆլիս:

Առհասարակ, Մ. Միանսարյանցը եղել է շիտակ խոսող,
բորբոքուն մարդ, որի պատճառով էլ վաստակել է թշնամի-
ներ ու շարախոսներ:

Զինվորական պաշտոնավարությունը Միանսարյանցի
կյանքը միառժամանակ թափառական է դարձնում: Նա Թիֆ-
լիսում մնում է մինչև 1862-ի վերջը, ապա տեղափոխվում է
Լիտվա, ուր մնում է ողջ 1863 թվականը՝ գլխավորապես
բնակվելով Վիլնյուսում:

1864 թվականից Միանսարյանցը փոխադրվում է Պետեր-
բուրգ:

1865 թվականին նա մեկնում է արտասահման, լինում է
Վիեննայում ու Վենետիկում, աշխատում է այս քաղաքների
Մխիթարյան մատենադարաններում, ծանոթանում Մխիթար-
յան նշանավոր գիտնականների հետ: Այցելում է նաև Հռոմ,
Բեռլին, Կ. Պոլիս և ուրիշ քաղաքներ՝ ամենուրեք ծանո-

1 «Արևազանք», 1891, № 4, մարտի 31, էջ 58:

2 «Արևազանք», նույն տեղում:



Միքայել Միանասարյանց

թանալով հայկական համայնքներին և հայ մշակութային նշխարներին:

Այնուհետև, մինչև կյանքի վերջը Միանսարյանցը ապրել է Պետերբուրգում (ամուսնացել է, ունեցել է երեխաներ), եղել է Ռուսական աշխարհագրական ընկերության իսկական անդամ, գինվորական զծով հասել է փոխգնդապետի աստիճանի, մահացել է 1880 թ. ապրիլի 5-ին:

Միանսարյանցի մահվան առթիվ գրած հոդվածում Ս. Մալխասյանցը նշում էր. «Նորա սիրած գաղափարներն էին շխտակություն, ազգասիրություն, գործունեություն, բարեգործություն: Իսկ շողոքորթություն, բամբասանք, կեղծավորություն, դավաճանություն նորա աչքում մահաշափ մուրումններ էին»¹:

Պետական պաշտոնավարության ամբողջ ընթացքում Միանսարյանցը ժամանակ է գտել և զարմանալի մեծ եռանդով անընդհատ մասնակցել հայ հասարակական կյանքին, թեև ինքը գանգատվում էր, որ պաշտոնական և ընտանեկան գործերը ժամանակ չեն թողնում հայ հասարակական կյանքին իրրև հրապարակախոս, մատենագետ և քանասեր ավելի եռանդուն մասնակցելու. «...մարմնոյս սաստիկ տկարությունը և գլխավորապես ժամանակս չեն ներում, որ ընդարձակեմ խոսակցությունս: Բոլոր արածս ստիպված եմ արագապես, շտապով անել»²— գրում է Միանսարյանցը իր կրթական ծրագրային հոդվածներից մեկի վերջում:

Այսօր արդարությունը պահանջում է ասել, որ Միանսարյանցի խորագապես և շտապով առածն էլ բավական շոշափելի և մանավանդ շատ բովանդակալից մշակութային ժառանգություն է:

Նվ ահա այդ գրական ժառանգության քննությունը ցույց

1 Ս. Մալխասյանց Միքայել Մենուպյան Միանսարյանց,— Փարոս Հայաստանի, Մոսկվա, 1880, տետր Ա (հունվար—հունիս), էջ 79:

2 Քնար ճալկալան: Խմբ. Մ. Միանսարյանց: Ս. Պետերբուրգ, 1889, փեբրարևություն, էջ 31:

լ տալիս, որ Միանսարյանցը ամենից ավելի մատենագետ է եղել, նախ նրա ամենածավալուն և ամենից ավելի բարձր պնահատված երկը Կովկասի մատենագիտությունն է, և սույա նրա մի շարք հոգվածներում ու գրքերում զգալի տեղ են դրավում մատենագիտական տարբեր բնույթի տեսություններն ու ցանկերը: Վերջապես, որ ամենակարևորն է, Միանսարյանցը իր գործունեության ամբողջ ընթացքում աշխատել է հայ տպագրության ազգային մատենագիտության վրա, ավարտել այն, թեև չի կարողացել տպագրել:

Միանսարյանցը խառնվածքով մեծ գրքասեր է եղել, օժտրված մատենագետին բնորոշ հակումներով: Այդ սերն ու հակումները կղգա ամեն ոք, ով թեկուզ թեթևակի ծանոթանա Միանսարյանցի հոգվածներին ու գրքերին: Ամենատարերի առիթներով նա ընթերցողին առաջարկում է գրականություն, շարադրանքի մեջ դետեղում մատենագիտական ցանկեր, երբեմն արժեքավորում իր առաջարկած գրքերն ու հոգվածները: Եվ անընդհատ ղգացվում է ամենատարբեր հարցերի նկատմամբ նաև մատենագիտական վերաբերմունքը:

Սակայն որքան էլ ներքին, գուցե ի ծնե հակում ունեցած լինի Միանսարյանցը մատենագիտության նկատմամբ, այնուամենայնիվ կա և մի ավելի կարևոր պատճառ այն բանի, որ նա մեծ եռանդով նվիրվեց մատենագիտական աշխատանքին: Այդ պատճառը պետք է որոնել հայ հասարակական կյանքում Միանսարյանցի ունեցած գլխավոր նպատակադրման մեջ:

Միանսարյանցի ամբողջ գործունեության մղիչ ուժը, դրդապատճառը հարադատ ժողովրդին կրթելու, նրան ժամանակակից քաղաքակիրթ ժողովուրդների մակարդակին հասցրնելու բուն ձգտումն է եղել:

Ինչպես մատենագիտական, այնպես էլ հասարակական, կրթական, մանկավարժական տարբեր հարցերի վերաբերյալ Միանսարյանցի հայացքները շարադրված են մի շարք հոգվածներում, գրքերում, ինչպես և զանազան առաջարկներում, վերջապաններում ու տարբեր առիթներով նրա գրած ծանոթագրությունների մեջ:

Միանսարյանցի արտահայտած տեսակետները ի մի բերելով՝ նկատում ենք սկզբունքային չնտեղականություն մշակված մի միասնական ծրագիր, համակարգ ժողովրդի կրթությանը կազմակերպելու վերաբերյալ:

Միանսարյանցի մի շարք տեսակետներ այսօր էլ լուրջ ուշադրության են արժանի իրենց առաջավոր բնույթի, դիտականության և հայրենասիրական ազնիվ ոգու պատճառով: Հենու լինելով դիվանագիտությունից, անվանի մարդկանց սիրաշահելու հակումից՝ Միանսարյանցը հայ իրականության մեջ իր ժամանակակիցների կողմից չգնահատվեց ըստ արժանվույն: Մինչդեռ նա ոչ միայն հայկական մատենագիտության, այլ ընդհանրապես անցյալի հայ հասարակական կյանքի ամենապայծառ դժգոհներից է, որ դեռ պետք է ստանա իր արժանի գնահատականը:

Նկատի ունենալով, որ Միանսարյանցի մատենագիտական աշխատանքը բխել է նրա տեսակետներից, լուսավորական ծրագրերից, պայմանավորվել զրանցով, անհրաժեշտ համարեցինք փոքր-ինչ ավելի կանգ առնել զրանց վրա, մանավանդ, որ Միանսարյանցը անարդարացի կերպով անհայտության մեջ մնացած հայ երախտավորներից է:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: ՏՆՍԱԿՆՏԵՐԻ, ՄՐԱԳՐԻՐ

Հայ ժողովուրդը իրավունք ունի կանգնելու աշխարհի ամենաբազմակիսի ազգերի շարքում, իբրև նրանց հավասար: Ժողովրդի հետամնացությունը, անդեմ ու իրավազուրկ վիճակը նրա կյանքի մշտական ուղեկիցները չեն կարող լինել, պետք է ազատվել դրանցից: Ահա Միանսարյանցի հիմնական հասարակական ձգտումը: Միաժամանակ նա խորապես հասկանում էր, որ այդ նպատակին հասնելու համար հայությանը բավական ճանապարհ ունի անցնելու: Եվ Միանսարյանցը այդ ճանապարհի մեջ կարևոր նշանակություն էր

տալիս ճիշտ կազմակերպված լուսավորությանը, ժողովրդական կրթությանը, նա գրում էր. «Առանց ազգային լուսավորությանը կանոնավոր ուղղություն և միջոցներ տալու, մենք միշտ կթափառենք այն վիշտերի մեջ, որոնց մեջ այժմ բնկղմել ենք և ապագայում այն վիշտերը առավել ևս կավելանան, որովհետև քանի զնում է, ապրուստը թանկանում է և դժվարանում, օտար ազգերը առաջանում, հայտնի լինում է, որ մենք, եթե ոչ թե միայն շուտաքայլ առաջ չգնանք, այլ մնանք այժմ մեր կեցած կետի վրա, պետք է մեղանից առաջ գնացող, մեղանից լուսավոր ազգերի մշակ, ստրուկ, ծառա լինենք և մնանք»¹։

Ի տարբերություն իր ժամանակակից որոշ հայազգի գործիչների, Միանսարյանցը հայ ժողովրդի լուսավորությունը և կրթությունը պատկերացնում է միայն ազգային լեզվի վրա հիմնված, նրա բոլոր մտորումների հիմքը դառնում է հայալուս կրթության կազմակերպումը, քանի որ հայերի օտարադաման, ձուլման փաստերը և ավելացող վտանգը նա իր ոչ քիչ ժամանակակիցներից ավելի խորն էր ըմբռնում։ «Ազգային տարրերից ամենահզորը և կենդանապահը լեզուն է» — այս խոսքը Միանսարյանցը գրել է իր գրքերից երկուսի (Վանեռնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» և «Քնար հայկական») ճակատին իրեն բնարան։

Միանսարյանցը հայոց լեզուն ոչ միայն հայ ժողովրդի գոյության ամենահիմնական ու ամենագլխավոր գործոնն էր համարում, այլև դնում էր, որ մի հայազգի մարդու համար հայերեն չիմանալը կամ հայերեն չխոսելը քարոյական անկում է։ Ամեն մի հայի համար մայրենի լեզվով խոսելը Միանսարյանցը համարում է քարոյական այն կարևոր հատկանիշը, որի շնորհիվ ամբողջ հայությունը կարող է այլազգիների հարգանքը վաստակել։

Դեռևս 1853 թ. իր գրած մի հոդվածում («История Египте Вардапета»), որ գրախոսություն է Եղիշեի «Վասն

¹ Քնար հայկական։ Վերջարանություն, էջ 6։

վարզանայ և հայոց պատերազմին—ի Գ. Շահշյանցի թարգմանության առթիվ, Միանսարյանցը խոսելով այն մասին, որ օտարները հայ ժողովրդին մեղադրում են մանր ու նեղ գործարարական հակումների համար, գրում է, որ դա «միանգամայն կեղծ և անհիմն կշտամբանք է» և որ Մի րանի հարյուրի առևտրականների զբաղմունքի հիման վրա չի կարելի դատել մի ամբողջ ժողովրդի մասին: Լկալ օտարներին առաջարկում է ուսումնասիրել հայ մշակույթը՝ ճիշտ հասկանալու համար հայ ազգին: Լկվելի՝ ուշ տասնհինգ, քսան տարի անց Միանսարյանցը հարցը այլ կերպ է դնում: Նա անմտություն է համարում օտարների կշտամբանքներից պաշտպանվելը և գտնում է, որ հայ ժողովուրդը այլ ազգերի համակրանքին արժանանալու համար նախ պետք է բարելավվի, առաջադիմի ազգային քաղաքակրթության ուղիով: Նա առաջ է քաշում հետևյալ խնդիրը. որպեսզի օտարը բնկ հարգի, պետք է նախ ինքզինքն լեզուն և ազգը, հակառակ դեպքում դու շարժես այդ հարգանքին: «Մենք կարծում ենք,— գրում է Միանսարյանցը,— որ մեզ սիրել և հարգել տալը, մեր առաջ գնալը, հարստանալը, մեր ամենայն բարոյական և իրական բարյաց հասնելը բոլոր մեծի մասին մեզանից է կախված»:

Եթե մենք, մեր ամենամեծից մինչև ամենափոքրը, իրապես սիրենք և հարգենք մեր լեզուն և ազգությունը, վարվենք միշտ ճշմարտապես՝ հարգելով թե՛ մեր անձնական և՛ թե՛ աշխոյ, մեծից մինչև փոքրի, մարդկային... պատիվը, անկարելի է, որ ամենայն մեզ տեսնող և ճանաչող մեկ չհարգե, անկարելի է, թե օտարը շտարածե յուր ազգայնոց մեջ հարգանք առ մերազնայք»¹:

«Երանի նոցա,— գրում է մի այլ տեղ Միանսարյանցը.—

¹ «Кавказ», 1853, № 31—32, стр. 15—59. (Կա առանձնատիպը):

² Ընդգծումը հեղինակինն է:

³ Մ. Սիսեմստրյանի Կանոնավոր և վայելուչ գրություն պատմությունը և տեսությունը, Ս. Պետերբուրգ, 1872, էջ 196:

որոնք կարժանանան ականատես լինիլ այն ցանկալի ժամանակին, երբ որ բոլոր այազգի զերգաստանների մեջ գործ կածվի մեր պատվական և ճոխ հայ լեզուն, բոլոր հայերը յուրյանց ուրախությունը, նեղությունը, պիտույքը և ցանկությունները հայտնում կլինին հայ լեզվով և բոլոր հայոց մանուկների կրթությունը, դաստիարակությունը կլինին հայերեն զրաժ սկզբունքներով, դիտության յուրյան ժամանակվա ծաղկյալ և կատարելագործյալ դրությանը համեմատ միով բանիվ, երբ որ հայն կսիրեն հայուն և հայությունը, երբ նա կշարժի միշտ, ամենայն գործոց մեջ, թե՛ նեղության և թե՛ բախտի հաջողակ օրերումը, միշտ արդարակոորով և համեստ և այդ ճանապարհով էլ կարժանանա պատվո և համակրության բոլոր յուսավոր ազգերիս¹:

Այլ խոսքով ասած, Միանսարյանցը դնում է ժողովրդի ներքին, բարոյական առաջադիմության հարցը. որպեսզի ազգային կայունություն ստեղծվի ժողովրդի մեջ, հայը հայ լինի նախ իր լեզվով, նաև ազգային մյուս հատկանիշներով, վարվի «ճշմարտասպես», այսինքն՝ լինի առաքինի, ապա և հարգել սովորի ինքն իր և այլազգիների մարդկային արժանապատվությունը: Այդպես, մյուս ժողովուրդներին հարգելը Միանսարյանցը նույնպես ազգի բարոյական կարևոր հատկանիշ է համարում:

Եվ Միանսարյանցը իր այս ծրագրի գործնական իրականացման համար քայլեր է անում: Ժողովրդական կրթությունը ճիշտ կադմակերպելու նախապայմաններից մեկը նա համարում է օտարացած հայազգիներին հայախոս դարձնելը: Նրան մտահոգում են այն բազմաթիվ հայազգի ընտանիքները, ուր խոսակցական լեզուն այլևս հայերենը չէ: Այդպիսի ընտանիքները հայացնելու և առհասարակ բազմաթիվ հայազգի ընտանիքներ օտարացումից փրկելու վերաբերյալ նա մի շարք ուշադրավ դիտողություններ ունի: Մի տեղ նա օտարախոսներին առաջարկում է տանը, սենյակի պատերին

¹ Քեռո՝ ճայկակոն, Առաջարկություն, էջ Ժ:

հայերեն բառեր կրող թղթեր փակցնել: Դա բոտ Միանսար-
յանցի պետք է օգնեն հայոց լեզվին ընտելանալուն: Այս
պետք է ջանալ ընտանիքում հարազատների. բարեկամների
չորջանում միշտ հայերենը գործածել:

Մենք այսպես ամենայն հայ յուրյան համար կանոն
դարձնեն վերոհիշյալ կամ այլ կերպ այնքան ուսանիլ յուր
լեզուն, որ յուր տանը, ծնողաց, կնոջ, զավակների, ազգա-
կանաց և ամենայն հայ լեզու գիտացողի հետ միշտ պարզ
հայերեն խոսի, օտար բառերը չգործածելով. այն ժամանակ
նորա զավակները կամա ակամա կգիտենան հայերենը,
յուրյանց բնությունը կդարձնեն հայերեն խոսիլը և կսիրեն
հայ լեզուն¹:

Միանսարյանցը գործնական առաջարկներ է անում նաև
այն հայազգիներին, որոնք ամուսնանում են օտարազգիների
հետ. նա կարևոր է համարում, որ այդպիսիք փոքրուց երե-
խայի հետ հայերեն խոսեն, նրա համար հայերեն երգեր եր-
գեն ռադպիսի դիպվածում անկարելի է, թե երեխայն և
նույնիսկ մայրը և օտար դայակը չսովորեն հայերեն²:

Միանսարյանցը պահանջում է հայկական դպրոցները
կազմակերպել եվրոպականի, մանավանդ դերմանականի
սկզբունքով: Շատ կարևոր է համարում նաև դպրոցներում
բնական գիտությունների ուսուցումը:

1868 թվականին Միանսարյանցը արդեն միանգամայն
որոշակի կերպով դնում էր հայ երեխաների պարտադիր
ուսման և ժողովրդի համատարած գրագիտության հարցը.
որպեսզի ամեն մի հայ իմանա մայրենի լեզվով կարդալ,
դրել, ազգային երգեր երգել³:

Միանսարյանցը շատ կարևոր է համարում հայկական
դպրոցների համար կիրթ ու պարզացած ուսուցիչներ պատ-

1 Մ. Միանսարյանց Կանոնավոր և վայելուչ գրության պատմություն... էջ 206:

2 Նույն տեղում, էջ 207:

3 Քեառ հայկական. Վերջարանություն, էջ 17:

րաստելը՝ Դրա համար նա առաջարկում է մի քանի հայկական կենտրոններում (Թիֆլիս, Ջմուռնիա, Կ. Պոլիս) ստեղծել, իր բառով ասած, վարժապետական դպրոցներ: Նա դրում է. «Բայց մեզ առավել հարկավոր է բարեկարգել մեր աղյուսիկն ուսումնարանների կառավարությունը այն հիմքերի և շաստարանների վերա, որ կառուցել է մեր ժամանակի դաստիարակության դիտությունը և կազմել վարժապետական դպրոցներ...»¹:

Միանսարյանցը ուրվագծում է նաև այդ վարժապետական դպրոցների ուսումնական ծրագիրը: Նրա կարծիքով կարևոր է նաև այդ դպրոցների առավել ընդունակ շրջանավարտներին ուղարկել արտասահման բարձրագույն կրթության, ինչպես այդ ընդունված է ևղել հայոց մեջ դեռևս Սահակ Պարթևի և Սևարույ Մաշտոցի օրերից: Միանսարյանցի կարծիքով այդ երիտասարդների ստացած հայալեզու սկզբնական կրթությունը կալաշտպանի նրանց օտարացումից այլալեզու բարձրագույն կրթություն ստանալիս: Այդպես չէին օտարանում Սահակի և Մեսրոպի աշակերտները. «Նոքա սովորած լինելով հայրենյաց լեզուն՝ օտար երկրի մեջ, որքան էլ որ այլեայլ օտար ազդեցությանց տակ լինեին, միշտ կմնային հոգով հավատարիմ որդի հայրենյաց և ազգին»²: Միանսարյանցը բերում է նաև Խ. Աբովյանի օրինակը, որը Դորպատում աշխատում էր սովորել այն ամենը, ինչ կարող է օգտակար լինել իր հայրենակիցների համար³:

Միանսարյանցը շահագրգռեց կարևոր է համարում հայ աղջիկների, կանանց ազգային կրթությունը: «Քնար հայկական» Վերջաբանությունը, որը փաստորեն ժողովրդի կրթության Միանսարյանցի առաջարկած գլխավոր ծրագիրն է, սկսվում է հենց կանանց դերի դնահատմամբ. հեղինակի կարծիքով մի ժողովրդի բարոյական վերելքի կամ անկման

¹ Ընդգծումը հեղինակինն է. Տե՛ս է. Լաբույի Ազգային կրթություն: Խ. Պետերբուրգ, 1867, Հավելված, էջ 8:

² «Քնար հայկական», Վերջաբանություն, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 14:

գործում կնոջ դերը ամենից կարևորն է. «Ծրբ կին՝ մարդը ընդունեց, սեփականացրեց յուրյան մի զազափար, իդեա,— գրում է Միանսարյանցը.— այդ զազափարը տիրապետում է բոլոր նորա կազմվածքը և միտքը. նա անդադար հետամուտ է լինում, պնդում այդ զազափարի մտածմունքի ետևն. նա հանգստություն չէ տալիս ոչ ոքի. ոչ յուր էրեկին, ոչ զավակներին, ոչ ծանոթներին, չէ լսում ոչինչ բանավոր, իրավացի խորհուրդի. տանում է ամենայն վիշտ և զրկանք. մինչև տանջանք ևս և վերջը հաղթում է. հասնում է յուր նպատակին, կատարում է յուր համոզմունքը¹։ Այստեղից Միանսարյանցը եզրակացնում է «Պիտո է օգուտ քաղել և աղբի օգտի համար գործածել այն հզոր, հոգևոր գորությունը, որ պարունակում է յուր մեջ կանանց սեռը»²։

Միանսարյանցը նախ պահանջում է կանանց և տղամարդկանց լիակատար իրավահավասարություն. «Կանայք այն պատճառով էլ ունին միևնույն սրբազան և անհերքելի իրավունքը ստանալ այնքան դաստիարակություն, որքան ստանում են տղայքը, որ կանայքը միևնույն մեղ պես մարդիկ են՝ մենք տղամարդիկ, նոքա կին մարդիկ»³։

Քանի որ ընտանիքում էական է մոր դերը, քանի որ երեխաները տանը ամենից ավելի մոր ազդեցությամբ են մեծանում ու զարգանում, ուստի Միանսարյանցը գտնում է, որ լավ հայ սերունդ աճեցնելու համար պետք է նախ լավ մայրեր ունենալ. «...աշխատենք պատրաստել որքան կարելի է բարի, կրթված և ազգասեր մայրեր, որ ունենանք բարի կրթված և ազգասեր զավակներ»⁴։

Միանսարյանցը առաջարկում է աղջիկների հայկական գպրոցներ հիմնելու, նրանց ազգային դաստիարակությունը կազմակերպելու շատ գործնական ծրագիր (ի դեպ, շատ

1 «Քնար հայկական», Վերջարանություն, էջ 3։

2 Նույն տեղում, էջ 4։

3 Նույն տեղում, էջ 4։

4 Նույն տեղում, էջ 5։

կարևոր է համարում այդ դպրոցներում գրադարաններ ունենալը¹։ Ամենազխաժուրը համարում է աղջիկների կրթությունը առաջ տանել՝ Ռհայերեն լեզվով և հայերեն լեզվով դրած սկզբունքների միջնորդությամբ²։

Նա գտնում է, որ հայ ժողովուրդը չի կարող առաջադիմել՝ ռմինչև որ մեր կանանց սեռի դաստիարակությունը չի դառնալ մեր ազդի գլխավոր և ստիպողական հոգսերից միներ³։

Միանսարյանցը խորացնելով իր դատողությունները հասնում է մինչև այնտեղ, որ կանանց բարոյական և ազգային նիշտ դաստիարակությունը ամենավճռականն է համարում հայ ժողովրդի ազգապահպանման գործում, իսկ հայ կանանց սխալ դաստիարակությունը, ըստ Միանսարյանցի, կարող է ուղղակի հակաստորակա լինել ժողովրդի համար։ Նա գրում է. «Զի մոռանանք միշտ և հանապաղ, անդադար ի մտի ունենանք, որ Լթև հայադդի կանայքը մեր օգտին օտար ուղղություն ստանան... այն ժամանակ մեր սեփական տանը օտար ուղղություն ստացած աղջկունք և կանայք կդառնան ցեցեր, որոնք օրեցօր կբանդեն մեր ազգայնության հիմունքը»։ Պետք է խոստովանել, անշուշտ, որ այս խոսքերի ճշմարտացիությունը թաղմիցս դիտվել է ու դիտվում է։

Միանսարյանցը խոսել է հայ երեխաների կրթության ու դաստիարակության ամենատարբեր կողմերի ու միջոցների մասին։ Այդ դործում կարևոր համարելով նաև հայկական երգի դերը՝ Միանսարյանցը հսկայական աշխատանք է կատարել՝ ամենատարբեր աղբյուրներից հայկական երգեր հավաքելու և իր ժամանակի առաջին ու շատ արժեքավոր

¹ Նույն տեղում, էջ 4։

² Մ. Միանսարյանց Կանոնավոր և վայելուչ դրության պատմությունը և տեսությունը, էջ 220։

³ Նույն տեղում, էջ 219։

երգարանը հրատարակելու ուղղությամբ: Դա «Քնար հայկական» է¹:

Առաջարանության մեջ Միանսարյանցը խոսում է երգի նշանակության մասին՝ հիմնելով իր մտքերը ներսնա կամբարոնացու շատ ուշագրավ խոսքի վրա. «Ազգումն երաժշտական եղանակին... ընդոստացեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն, որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է լինիցի. վասն այսորիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն»: Անշուշտ, կամբարոնացին ճիշտ է հասկացել երգի ու երաժշտության ուժը, որ ոչինչ այնքան ուժեղ չի ազդում մարդու զգացմունքների վրա (ուրախություն կամ տխրություն առաջացնելով), որքան երաժշտությունը:

Երգի ուժը խորապէս գիտակցելով է, որ Միանսարյանցը այդքան ջանք է թափել ազգային երգարան ստեղծելու համար: Երգի ու երաժշտության պորտուբյամբ նա ուզում էր նախ հայության մեջ ազգային միասնականության զգացողությունը վարդացնել, քանի որ հայկական երգը «չանազան տեղեր ցրվլալ մեր հայրենակիցներուն մտավորապէս և բանաստեղծականապէս կծանոթացնեն և կմոտենցեն իրար հետ»:

Հայկական երգի ազգային երաժշտության հետ Միանսարյանցը մեծ տեղ էր տալիս երգերի հայերեն խոսքին: Այդ առիթով նա գրում է. «Երոլոր այս վեհ և սրտաշարժ զգացմունքները հասունանում են կատարյալ աստիճանի, երբ որ այդպիսի պատվական ձայնով և կանոնավոր կերպիւմ երգած երգը մեր ազգային, մեր պատվական լեզվավ մասած և գրած

1 Միանսարյանցի կազմած «Քնար հայկական» իրրե ազգային երգարան մինչև այժմ էլ պահպանել է իր արժեքը՝ թե՛ երգերի քանակի և՛ թե՛ նրանց հաջող ընտրության տեսակետից:

Գրախոսություններ տե՛ս «Արշալույս արարատյան», 1869, № 852, «Հայկական աշխարհ», 1869, № 3, էջ 85, «Հույս», 1869, № 33, էջ 216, 2 Քնար հայկական, Առաջարանություն, էջ 28:

ևրզն է¹։ Միանսարյանցի կարծիքով հայ երեխան օրորոցից պետք է լսի և սովորի հայկական երգեր²։

Ուշադրավ են նաև Միանսարյանցի տեսակետները հայկական աղղային երաժշտության զարգացման հարցում։ Նրա կարծիքով պետք է զա մի մեծ երաժիշտ «ազգային զույալ» երաժշտություն ստեղծելու համար³։ Կարծես Միանսարյանցը կանխատեսում էր Կոմիտասի երաժշտական գործունեությունը։

Երեխաների դաստիարակության գործում Միանսարյանցը շատ կարևոր է համարում նաև մարմնամարզությունը, մարդական խաղերը։ Ռեզոլվորդյան պետք է քարոզել, որ ոչ թե արդելու, այլ ամենայն կերպ և ամենայն միջոցներով քաջայերև պետք է, թե՛ մանկանց այն ամենայն խաղերը, որոնք, դարգացնում են նոցա մարմինը և թե՛ մասնավորապես, յաջալերել, որ նոքա լավ և համարձակ ձի նստեն, հրացան (հրևա) նետեն, լող տալ իմանան, մարմնամարզությամբ, դինաշարժությամբ պարապին, ընտելանան երկար ժամանակ ճանապարհ հետևակ գնալուն, մանավանդ լեռնոտ տեղերը...⁴

Միանսարյանցը բազմիցս անդրադարձել է նաև ուսման ու դաստիարակության մանկավարժական մեթոդների հարցերին, այստեղ էլ պաշտպանելով առաջավորն ու լավագույնը։ Օրինակ, շատ հարցերում նա վճռականորեն կողմ լինելով աղղայինի ու ավանդականի պահպանմանը՝ մերժելով մերժում է ծեծը խրքե դաստիարակության միջոց, որ հնուց ի վեր ընդունված է եղել հայկական դպրոցներում։ «Ծեծը,— դրում է նա,— կսովարացնե մանուկի հոգին, կզարգացնե նորա մեջ կամակորություն, կարճահոգություն, կեղծավորու-

1 «Քեար հայկական», էջ 9։

2 Նույն տեղում, էջ 4։

3 Նույն տեղում, էջ 4։

4 Մ. Միանսարյանց Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը, էջ 38։

թյուն և այլ ամենավատ և ամենավնասակար հետևանքները՝ -Տխուր և վնասակար» է համարում ծեծն իրեն դաստիարակության միջոց համարող տեսությունը, որ շատերի կողմից պայտպանվում էր այն ժամանակ:

Մանկավարժական մի շարք այլ, այն շրջանում հայոց մեջ բոլորովին նոր մեթոդների և մանավանդ հայկական տարրեր աստիճանի դպրոցների կազմակերպման ու ղեկավարման մասին շատ ուրիշ հետաքրքրական առաջարկություններ էլ է արել Միանսարյանցը¹, որոնք իրենց լուսարանումը պետք է ստանան հայ մանկավարժության պատմության մեջ:

Մատաղ սերնդի կրթության, հայկական դպրոցների զարգացման վերաբերյալ Միանսարյանցի մտահոգությունը այնքան մեծ է եղել, որ նա գրել է հատուկ ձեռնարկ հայ գրի և վայելչագրության վերաբերյալ («Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը»), որ մանրամասն խոսել է նաև այնպիսի երկրորդական թվաքոչ հարցերի մասին, ինչպիսիք են՝ աշակերտի դիրքը գրելու ժամանակ, ինչ գրչածայրերով, ինչ թանաքով պետք է գրել, ինչպես պետք է պատրաստել լավ թանաք և այլն:

Միանսարյանցը 1873 թվականին Հայպցիզում տպագրել է տալիս հայոց վայելչագրության հատուկ օրինակներ հայ աշակերտների համար, այս գործում նրան օգնում է նշանավոր հայ լեզվաբան Ա. Այտընյանը (Վիեննա):

Ժողովրդական կրթության գործին մեծ նպաստ կարող է բերել հայոց մամուլը և հայ գիրքը, — այս միտքը բազմիցս է զարգացրել Միանսարյանցը և այդ ուղղությամբ էլ գործնական քայլեր է ձեռնարկել:

Նա գտնում էր, որ հայոց պարբերական մամուլը պետք է

¹ Քնար հայկական, էջ Թ.

² Տե՛ս, օրինակ, Մ. Միանսարյանց, Մտածությունք ազգաթիև կրթության և դպրոցների կառավարության վերաբերյալ — «Հյուսիսափայլ», 1861, սեպտեմբեր, էջ 195—210.

ծառայի ժողովրդի առաջընթացին, դրա համար այդ մամուլը պետք է մի ընդհանուր ծրագիր ունենա: Թղթակիցները որևէ բան գրելիս միայն ժողովրդի շահերը պետք է նկատի ունենան. «Ոչ շողոքորթություն պիտո է այս կամ այն անձերի, ոչ էլ սնվալի անկաններով պարսավանք»¹:

Միանսարյանցը քննադատում է հայ լրագրողներին այն տրտունջի համար, որ հայ ժողովուրդը ընդհանրապես անտարբեր է հայոց պարբերական մամուլի նկատմամբ: Նա այդ բանը, ինչպես և հայ ժողովրդի մեջ եղած տարերայնությունը, ազգային անհամախմբվածությունը բացատրում է ժողովրդի պատմական բախտով, դարերի ընթացքում պետականությունից դուրկ լինելու հանգամանքով. «Մեկ ազգ, որ շունի անկախություն, ինքնագլխություն, չէ կարող դարդանալ ուղիղ ճանապարհով և էս պատճառով այսպիսի ազդր հո կմնա»², — և գրականում է Միանսարյանցը:

Ժողովրդական կրթությունը կազմակերպելու Միանսարյանցի ծրագրում մեծական դեր է հատկացվում գրքին: Նրա կարծիքով այդ կրթությունը գործնականորեն կարելի է կազմակերպել տան դեպքում, եթե գրքի դերը նկատելիորեն մեծանալ ժողովրդի կյանքում: Ըվ Միանսարյանցը ծրագրում է՝ ա) ուժեղացնել հայ գրքի հրատարակման գործը. սովելի շատ հայերեն գրքեր լույս ընծայել, բ) բարելավել գրավաճառային գործը հայոց մեջ, գ) ստեղծել ժողովրդական գրադարաններ, մատչելի աշխատավորությանը, դ) ստեղծել հայկական մատենագիտություն, որը հայ ընթերցողին պետք է լույս տա, թե այս կամ այն հարցի մասին ինչ գրքեր կան հայերեն լեզվով:

Միանսարյանցի գործունեության մեջ ուշագրավն այն է, որ իր ծրագրերի առաջին եռանդուն իրագործողը միշտ էլ հենց ինքն էր լինում: Այստեղից էլ, իրավն ասած, ծագում է նրա հասարակական գործունեության որոշ ոչ իրապաշ-

¹ «Քնար հայկական», վերաբանություն, էջ 25:

² Նույն տեղում, էջ 20:

տական բնույթը, ինչպես և այն. որ նրա ձեռնարկած գրեթե բոլոր շատ լավ գործերը կիսատ մնացին, անավարտ: Հասկանալի է, որ մի մարդ չէր կարող միանգամից իրականացնել մի նսկայական ուսումնադաստիարակչական ծրագրի ամենատարբեր կողմերը:

Հայ գրքի դերը ուժեղացնելու ուղղությամբ Միանսարյանցի գործնական ձեռնարկումներից էր սևփական հրատարակչությունը. հիմնելը:

Գեոեա 1860-ական թվականներին նա մի շարք հոդվածներ է գրում հրատարակչական գործը հայոց մեջ ձիշտ կազմակերպելու վերաբերյալ¹:

Այնուհետև, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից նա զնում է հայերեն տպատառեր և հիմնում սևփական հրատարակչությունը (Պետերբուրգում): Հրատարակչական աշխատանքը ղեկավարում էր ինքը՝ Միանսարյանցը, ինքը որոշում հրատարակվելիք գրքերը, հանձնարարում թարգմանություններ և այլն: Գրքերը տպագրվում էին Պետերբուրգի տարբեր տպարաններում Միանսարյանցի տպատառերով: Հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը (ժամանակագրական կարգով):

1 8 6 7 թ.

1. Էդուարդ Լաբուլյե Ազգային կրթություն: Թարգմ. Մ. Տեր-Գրիգորյանցի: Ս. Պետերբուրգ, Ա. Տրանշևիի տպարան, 1867:

Բովանդակում է ֆրանսիացի հեղինակ է. Լաբուլյեի երեք գործերը՝ ա) Ինքնակրթություն, բ) Ազգային կրթություն, գ) Ազգային գրատուններ, բոլորը 56 էջ: Ապա կա Միանսարյանցի գրած հավելվածը՝ 39 էջ, ուր հիմնականում խոս-

1 Տե՛ս, օրինակ, «Մեզու Հայաստանի» 1861, № 129, էջ 77, «Հյուսիսափայլ», 1861, № 3, էջ 83—170:

վում է հայկական մատենագիտության մասին և տրվում է ուսանողներին գրքերի ցուցակ հայերեն գրադարանների գրականությունը համարելու համար։

1 8 6 8 թ.

2. Ա. Կոմբ հնամատարություն երեխայոց մարմնական և բարոյական, Թարգմ. Մ. Տեր-Գրիգորյանցի, Ս. Պետերբուրգ, Ա. Տրանշիլի և Բակստի տպարաններ, 1868։

Րուսականում է անգլիացի նշանավոր բժիշկ Ա. Կոմբի վերոհիշյալ աշխատությունը, նվիրված երեխայի խնամքին արդանդային վիճակից սկսած (խոսվում է նաև երեխայի նախնական դաստիարակության մասին, մինչև դպրոցական հասակը), հինգ հավելվածով ընդամենը 262 էջ, Ապա կան Միանսարյանցի հավելվածները, դրանք են. ա) Հայկական անձնանունների ցանկ՝ հայ նորածինների անվանակոչության համար, բ) թեև ինչպես հառաջանում են բույսերի, կենդանիների և մարդերի մեջ արական կամ իգական սեռերը, Տյուրի հեղինակի շարադրությունից, գ) օրոքոցի երգեր (հայ մանուկներին ջնեցնելու համար), բոլորը մինչև 276 էջ, Ապա նոր էջակալմամբ՝ Աղյուսակ պարզ տեկոսի մինչև էջ IV, Աղյուսակ հասարակ տեկոսի կամ շահու, էջ 1—28։

3. Փնաբ հայկական։ հմբագրեց Մ. Մ. Միանսարյանց, Ս. Պետերբուրգ, Բակստի տպարան, 1868։

Րուսականություն. Մ. Միանսարյանց Առաջաբան էջ Ա-ԺԹ։—Մեր տպագրությունքը, էջ Ի-Իա։—Ցանկ, էջ I—X։—Քնար հայկական, էջ 1—590, սրա մեջ՝ Ս. Պալասանյան երգեր (հատված աշխատությունից)¹, էջ 1—47։—Գողթան երգեր (ակնարկ), էջ 48—58։—Գլուխ Ա. Հոգևոր երգեր, շա-

¹ Այս հատվածը (աննշան կրճատումներով) Միանսարյանցը վերցրել է Ս. Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության աշխատությունից» (Քիֆլիս, 1865, էջ 90—174)։

րականներ, մեղեդիներ և տաղեր:—Գլուխ Բ. Օրորոցի զգեր:—Գլուխ Գ. Հասարակաց ռամկական Լրգեր:—Գլուխ Դ. Ազգային (հայրենյաց), ազգասիրական և զինվորական Լրգեր:—Գլուխ Ե. Ուսանողաց երգեր:—Գլուխ Զ. Խնձույթի, ուրախության, հարսանյաց և երգիծական երգեր:—Գլուխ Է. Սիրո երգեր:—Գլուխ Ը. Տխուր երգեր:—Գլուխ Թ. Խառն բանաստեղծությունք:—Ս. Միանասրյանց Հ. Այամդարյանի, Սայաթ-Նովայի, Աղբար Աղամի, Շիրինի, Հովհ. Նիրանիի և Պ. Մազաթյանցի կենսագրությունները, էջ 585—590:—Ազգային կամ հայախոս առածը, էջ 1—XVII:—Հայկ. այբուբեն, էջ XVIII:—Մ. Միանասրյանց Վերջաբանություն: Մտածությունը ազգային լուսավորության մասին, էջ 1—31:—Ի. Բելով Դորպատյան սերմնարան մանկավարժության, Թարգմ. Գ. Պատկանյան, էջ 32—44:—Հավելված (Նաղաշ Հովնաթանի Երկու բանաստեղծութ.), էջ 45—46:—Հետաքրքրական լուրեր, էջ 47—Վրիպակներ, էջ 47—54: Առանձին ծանոթություն (Գ. Դոդոխյանի «Միծեռնակի» մասին և նույն հեղինակի Երկու ուրիշ երգերը):

1 8 7 0 ր.

4. Հայկական Բնութի այբուբենական ցանկը, Ս. Պետերբուրգ, 1870.

Ցանկը հասնում է մինչև էջ 26-ը, այնուհետև՝ Կարևոր ծանոթություն: Մեր տպագրությանց գները այսուհետև, էջ 28-ից մատենագիտություն, ամբողջը 32 էջ:

Այս այբբենական ցանկը կա ահառնձին և կցված «Փնար հայկականի» որոշ օրինակներով:

1 «Մատենագիտություն հայկական մատենագիտության» Առնարկում (Երևան, 1963) այս ցանկը սխալմամբ դրված է «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» գլխում (էջ 56): Իրականում այն պարբերական մամուլի մատենագիտություն չէ:

5. Մ. Միանսարյանց Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը ու տեսությունը Մրագրական փորձառություն, հանդերձ գանադան ծանոթություններով, հավելվածներով և դրասեղանների ու անատոմիական ստվերագրերով: Ս. Պետերբուրգ, Գուդվինի տպարան, 259 էջ:

Սրանց պետք է ամելացնել ռուսերեն կանոնավոր և վայելուչ գրության վարժությունների №№ 1, 2, 3, 4, 5 և տողանցների №№ 1, 2, 3, 4 տետրերը, որոնք տպագրվել են լայպիցդում, ինչպես նաև դարձյալ իր՝ Մ. Միանսարյանցի «Կուրսսի և Անդրկովկասի մատենագիտությունը» (Պետերբուրգ, 1874—1876 թթ.), որը սակայն կիսով չափ է Միանսարյանցի հրատարակությունը, այդ աշխատության մասին կիսոսինք առանձին:

Ճիշտ է, Միանսարյանցի հրատարակչական գործունեությունը իսկ ծավալ չստացավ, ինչպես նրա ժամանակակիցներից որոշ հրատարակիչներինը Թիֆլիսում, բայց այն իս որոշակի մշակութային դերը կատարեց հայ գրահրատարակության պատմության մեջ:

Միանսարյանցը տարրեր առիթներով խոսել է հայ գրահրատարակիչների անելիքների և հայությանը անհրաժեշտ դրքերի հրատարակման մասին: Նա մասնավորապես կարևոր էր համարում դպրոցական դասագրքերի և երկնիզվյալ բարձրորակ թառառանների հրատարակության գործի կազմակերպումը¹:

Հայկական դպրոցների համար տարրեր առարկաների դասագրքեր ստեղծելու և հրատարակելու վերաբերյալ Միանսարյանցը մշակում է մի ընդարձակ ժրագիր և հրապարա-

¹ Տե՛ս, օրինակ, Մ. Միանսարյանց Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը..., էջ 218 և է. Լաբուլյե Ազգային կրթություն: Հավելված, էջ 6—7:

կում «Հյուսիսսփայլում»¹։ Այստեղ նա գործի կազմակերպչական կողմից բացի. բնում է դասագրքերի ստեղծման մեթոդական-մանկավարժական հարցերը։ Խոսում է նաև լեզվի հարցերի մասին. պահանջում է դասագրքերը գրել պարզ, երեխաներին միանգամայն մատչելի աշխարհաբարով։

Լաբուլյեի գրքի հավելվածում Միանսարյանցը խոսում է ֆրանս-հայերեն մի այնպիսի բառարանի կարևորություն մասին, որ «լինեին բոլոր գիտությունաց զանազան ճյուղերը և առհասարակ ուսումնական բառեր ևս»։ Այսինքն՝ գիտական անվանումները (տերմինները) բառարանի մեջ ընդգրկելու հարցն է դնում։ Մի կարևոր խնդիր, որ ավելի ուշ լուծվեց Գ. Լուսինյանի հայտնի բառարանի («Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ» Հտ. 1—2, Փարիզ 1900—1903) հրատարակումից մեր։

Նույն տեղում Միանսարյանցը հարց է դնում նաև գերմաներեն-հայերեն բառարանի ստեղծման ու հրատարակման կարևորության մասին և առաջարկում է Վիեննայի Մխիթարյաններին ստանձնել այդ աշխատանքը²։ Ինչպես հայտնի է, Վիեննայի Մխիթարյանները ավելի ուշ (1889-ին) իրոր հրատարակեցին մի այդպիսի բառարան (Ա. Կոլլավի «Բառգիրք դերմաներեն-հայերեն»-ը)։

Այնուհետև, Միանսարյանցը առաջարկում է հայ հրատարակիչներին թարգմանել և տպագրել էստերլենի, Բրեմի, Բրենդելի, Բոքի, Հարդվիգի, Լյուիսի, Գանսի, Ժամենի և այլոց աշխատությունները կիրառական գիտությունների բնագավառից³։

1 Մ. Միանսարյանց Առաջարկություն վասն աշխատասիրելու և իյույս ընծայելու հայերեն լեզվով դպրոցական գրյանք մարդկային գիտության պնայնս բաժինների վերա թե՛ առհասարակ հայոց մանուկների և թե՛ ստորին, միջին և գերագույն ուսումնարանների համար։—«Հյուսիսսփայլ», 1861, օգոստոս, էջ 164—169.

2 Է. Լաբուլյե Ազգային կրթություն։ Հավելված, էջ 6.

3 Նույն տեղում, էջ 7.

4 Նույն տեղում.

Սակայն անհրաժեշտ գործեր տպագրելը քիչ է, պակաս կարևոր չէ արդեն հրատարակվածները ընթերցողներին հաս-
ցրենելու՝ նվաճելով Միանսարյանցը իրավացիորեն նշում է, որ հայ
տպագրության կենտրոնների ցրված լինելը տարբեր երկր-
ներում՝ մեծ զգվարություն է առաջացնում հայ գրքերի վե-
րաբերյալ ընթերցողների մատենագիտական տեղեկատվու-
թյունը կազմակերպելու, ինչպես և գրավաճառային գործում։
Շատերը չգիտեն, գրում է Միանսարյանցը, թե իրենց ան-
հրաժեշտ ինչ հայերեն գրքեր կան արդեն տպագրված կամ
ինչպիսիք պիտի հրատարակվեն, իսկ իմացողներն էլ մեծ
մասամբ չեն կարողանում ձեռք բերել անհրաժեշտ գիրքը։
Լևոյա եղբայրացին է. «...մեր մեջ մինչև այժմ օրինավոր
գրավաճառություն չկա, բացի մի բանի քաղաքներից»¹։
Միանսարյանցը գտնում է, որ «մահու և կյանքի հարցի պես
ստիպողական պիտույք կա», որ վերացվեն հայ գրքի տա-
րածման արգելքները։

Մի շարք անգամ է Միանսարյանցը առաջարկություններ
արել հայոց մեջ գրավաճառային գործը բարելավելու վերա-
բերյալ։ Ահա դրանցից մեկը. «Գրյանց ձեռք բերելը դյու-
րացնելու համար պետք է, որ ամենայն տեղ, ուր որ գրավա-
ճառներ չկան, տեղական հոգևորական կառավարությունները,
դպրոցների կառավարությունները, հասարակաց ընթերցա-
րանները, մայր եկեղեցյաց երեցփոխանք, քահանայք բերել
տալին տպագրողներից 20—25 օրինակ այն գրյանքը, որոնք
պիտանի են տեղական ժողովրդյան՝ ստանալով յուրյանց
աշխատանաց 15⁰/₀, մինչև 20⁰/₀ զիջումն, որ տալիս է ամե-
նայն հեղինակ և տպագրող, Գրյանց հետ օգտավետ է բերել
տալ դպրոցների զանազան պարագայքը, կողմնացույց, քեր-
ականի, քարտեզներ, թուղթ, գրիչ, մատիտ և այլն»²։

1 Մ. Միանսարյանց Կենտավոր և վայելույ գրութ. պատմութ. և
տեսութ. էջ 6—7։

2 Նույն տեղում, էջ 8։

Այս միտքը Միանսարյանցը հայտնել է այլևայլ առիթ-
Ներով¹. որ ցույց է տալիս. թե որքան մեծ ու անկեղծ է եղել
նրա մտահոգությունը հայոց մեջ կրթական գործը լավ կազ-
մակերպելու և մասնավորապես հայ գիրքը տարածելու նը-
կատմամբ:

Հայ գրքի վաճառքը ճիշտ կազմակերպելու կապակցու-
թյամբ Միանսարյանցը ունի նաև ուրիշ. նույնպես շատ գործ-
նական և օգտակար առաջարկություն. այն է՝ հայոց մամու-
լում կազմակերպել նոր լույս տեսնող գրքերի վերաբերյալ
մատենագիտական մշտական տեղեկատվություն: Այս խոս-
քով, Միանսարյանցը առաջարկում է մատենագիտությունը
լայնորեն օգտագործել հայերեն հրատարակված և հրատա-
րակվելիք գրքերի վերաբերյալ տեղեկատվության նպատա-
կով. նա շատ կարևոր է համարում «Որ բոլոր հայոց ազգյ
գիտենա, թե ինչ գրքանք կա մեր մեջ»²: Այդ նպատակին
հասնելու համար Միանսարյանցը առաջարկում է հետևյալը.
«Ռուսաստան և օսմանյան պետության մեջ եղած ամենա-
տարածյալ հայ լրագիրները ժամանակ առ ժամանակ, օրի-
նակի համար, տարին երեք կամ չորս անգամ հաշիվ տալին
ամեն մի նոր տպագրությունց մասին. իսկ մասնավոր առար-
կաների քանիմաց վարժապետները անաշառ քննողական
հատվածներ տպեին բոլոր եղած սկզբունքների վերա՝ ցույց
տալով նոցա պարունակությունը, արժանավորությունը, թե-
րությունը»³:

Այսպիսով, Միանսարյանցը դնում է ընթացիկ գրականու-
թյան ներմամուլային տեղեկատու մատենագիտության խրո-
դիրը: Այդպիսի մատենագիտությունը պետք է կատարեր այն
դերը, ինչ այն ժամանակ քաղաքակիրթ որոշ ազգերի մեջ
արդեն կատարում էր արձանագրական (հաշվառման-գյույն-
ցալին) մատենագիտությունը: Միանսարյանցի այս ծրագիրն

¹ Տե՛ս նաև Հայկական բնաթի այբուբենական զանկ. էջ 38:

² Մ. Միանսարյանցի Կանոնավոր և վայելուչ..., էջ 7:

³ Նույն տեղում:

էլ, ինչպէս վերը տեսանք, 80-ական թվականներին սկսեցին իրականացնել «Բաղմավնայի» և «Հանդես ամսօրյայի» խըմ-
բադրութիւնները, հատկապէս վերջինը, թեև ընդհատում-
ներով:

Միանսարջանցի առաջարկում ուղագրով է նաև այն, որ
հարց է դրվում գրքերի նոր հրատարակութիւնները մատե-
նադիտական ցանկերում ծանոթագրել (տալ անոտացիաներ)՝
նշելով գրքի բովանդակութիւնը, արժանիքներն ու թերու-
թիւնները: Նկարագրութիւնների մեջ Միանսարջանցը կարե-
ւոր է համարում տալ նոր լույս տեսած գրքերի մասին այն-
պիսի մատենադիտական տեղեկութիւններ, ինչպիսիք են՝
«Գրքի ճակատագիրը (այսինքն՝ ճակատը), դիրքը, էջերի
որբանութիւնը, տպագրութիւն տեղը, ժամանակը, գինը...»¹։
Սրանի մոտավորապէս այն մատենադիտական տեղեկու-
թիւններն են, որոնք տրվում էին տարեկան հրատարակու-
թիւնների ցանկերում «Հանդես ամսօրյայի» մեջ և այժմ էլ
տրվում են խորհրդային արձանագրական մատենադիտու-
թիւնում (այժմ այդ տեղեկութիւններին ավելացել են մի
քանի նորերը՝ հրատարակութիւն, նկարների քանակ, գրքի
սովորանակ և այլն):

Միանսարջանցը մի շարք անգամ անդադարձել է նաև
հայկական կանոնավոր գրադարաններ ունենալու հարցին:
Լարույլէի «Աղղային կրթութիւն» գրքի մեջ հատուկ նպա-
տակով նա զետեղել է նաև ֆրանսիացի այդ հեղինակի մի
զեկուցումը աղղային ժողովրդական գրադարանների մասին:
Լարույլէն խոսում է ժողովրդի լայն խավերի համար մատ-
չէի գրադարաններ ստեղծելու վերաբերյալ: Ընդ որում, նա
դտնում է որ շատ զեպքերում իրենք աշխատավորները պետք
է հիմնադրեն այդպիսի գրադարաններ: Բերվում է ամերիկ-
յան նշանավոր լուսավորիչ և գիտնական Բենիամին Ֆրանկ-
լինի հիմնած բաւոլորական գրադարանի օրինակը: Տպագրա-
կան բանվոր աշխատելիս՝ Ֆրանկլինը իր ընկերներին առա-

¹ Նույն տեղում:

չարկում է սեփական գրքերից մի փոքր գրադարան ստեղծելու
նրա ծրագիրը հետևյալն էր. ամեն մի բանվոր մեկ կամ մի
քանի գիրք կունենա: Եթե այդ գրքերը հավաքեն մի տեղ,
բանվորներից յուրաքանչյուրը կարող է օգտվել ոչ միայն իր
ունեցած, այլ գրադարանում հավաքված բոլոր գրքերից: Եվ
որքան շատ մարդիկ միանան այդպիսի գրադարան ստեղծելու
գործին, այնքան շատ գրքեր կարդալու հնարավորություն
կունենան նրանք:

Միանսարյանցը հատկապես խոսել է դպրոցական գրա-
դարանների լավ կազմակերպման անհրաժեշտությունն
մասին. վերջիններս նրա կարծիքով օրինակելի են կազմակերպված
Գերմանիայում:

Նա կարևոր նշանակություն է տվել բարձրաձայն (հրա-
պարակային) ընթերցանությունը, որը նրա կարծիքով ժողո-
վրդի լուսավորության լավ միջոց է: Այս գործը կազմակեր-
պելու համար էլ տվել է գործնական խորհուրդներ¹:

ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայկական դպրոցների գրադարաններին օգնելու նպա-
տակով Միանսարյանցը որոշում է կազմել այդ գրադարան-
ներին հանձնարարելի գրականության ցուցակ՝ բաղկացած
հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն գրքերի ցանկերից: Այդ-
պիսի գրացուցակի նպատակը պետք է լինել այն, ինչ այժմ
կատարում են տարբեր տեսակ գրադարանների համար հրա-
տարակվող «Տիպային գրացուցակները»:

Միանսարյանցին հաջողվում է միայն տպագրել իր այդ
գրացուցակի ռուսական մասը², որը կարգային (սխտևմա-
տիկ) կառուցվածք ունի (կան, օրինակ, այսպիսի բաժիններ՝

1 «Փնար հայկական», Վերջարանություն, էջ 30:

2 Է. Լարուլյե Ազգային կրթություն, Հավելված, էջ 9—39:

մարեմատիկական գիտություններ. Բնական գիտություններ, Կյուլաստիտեսություն. Բժշկություն. Աշխարհագրություն, Ընկերային (սոցիալական) գիտություններ և այլն)։

Իրացուցակի ֆրանսիական մասը Միանսարյանցը առաջարկում է կազմել Փարիզում գտնվող հայ երիտասարդներին¹, որոնք ավելի տեղյակ կարող են լինել ֆրանսերեն համապատասխան դրականությունից։

Այնուհետև, ավելացնում է. «Տարակույս չկա, որ մեր տպագրության մեջ օտար լեզվի ցուցակից առաջ պետք է առաջադեմներ հայերեն դրանց ցուցակը. բայց ի մտի ունենալով մինչև դալ տարվա վերջը տպել մի ընդարձակ ցուցակ բոլոր հայ պրյանց, մենք այս անդամին ավելորդ համարեցինք տպել դորա համառոտը»²։

Այս տողերը հրապարակված են 1867 թվականին. Կնշանակի Միանսարյանցը մտադիր է եղել 1868-ին տպագրել հայերեն պրերի «մի ընդարձակ ցուցակ»։

Մակաչն այդ թվականին և հաջորդ տարիներին նման ցուցակ Միանսարյանցը չի հրատարակում։

Ուշադրավ է, որ 1872 թվականին տպագրված «Կանոնավոր և վայելուչ դրության սլատմությունը ու տեսությունը սաշխատության մեջ Միանսարյանցը նորից է անդրադառնում իր կողմից կազմվող հայկական մի մեծ մատենագիտության հարցին. Այս անգամ դրա առիթը հայ տպագիր զրբերի վերաբերյալ լայն տեղեկատվություն կաղմակերպելու խնդիրն է լինում։

Խոսելով հայերեն նոր զրբերի վերաբերյալ մամուլում տրվելիք տեղեկատվության մասին՝ նա անմիջապես անդրադառնում է այդ մեծ մատենագիտության հարցին, գրելով. «Գլխավորապես ստիպողական հարկավորություն կա մի ընդհանուր դրացուցակի բոլոր հայ տպագրության, որո հավաքմանը մենք շատ տարի է, որ նվիրել ենք մեր ուշադրություն»։

1 Նույն տեղում, էջ 1։

2 Նույն տեղում։

ևր: Յանկալի էր, որ այսպիսի մի աշխատանքի ձևոնամոխ լինելը նաև որեկիցև չայ դպրությանը բարին ցանկացող չա-
յասեր ոմն, որը բնակվում լինի Կ. Պոլիս, որ գոնյա օսման-
յան պետության մեջ տպած չայ գրոց, օրագրերի և զանազան
թերթերի թիվը պակաս թերությամբ չիշված լինի նորա ցու-
ցակի մեջ¹:

Ինչպես տեսնում ենք, Միանսարյանցը չայ գիրքը ընթեր-
ցողին հասցնելու ուղիները որոնելով, չանգում է չայերեն
տպագիր արտագրանքի ամբողջական մատենագիտություն
կազմելու գաղափարին: Նա այդ գործը առաջարկում է միա-
ժամանակ կատարել և՛ արևմտաչայերի, և՛ արևելաչայերի
մեջ: Ընդ որում, տեղեկացնում է նաև, որ արևելաչայերի
մեջ այդ աշխատանքը արդեն կատարվում է Նենց իր կող-
մից, և արևմտաչայերից մեկն էլ պետք է ստանձնի այդ գործը:
Միանսարյանցը այս նույն կապակցությամբ ունի մի արժե-
քավոր դիտողություն ևս: Նա գրում է, որ չայ տպագրության
մատենագիտությունը միանգամից լիարժեք կերպով չա-
տարակվել չի կարող, որ նախ պետք են մի քանի փորձա-
կան հրատարակություններ. «Այսպիսի գործ կկատարելա-
գործվի քանի մի անձանց աշխատասիրությամբ և քանիցս
անգամ կրկին և կրկին տպագրությամբ, երբ որ բոլոր ազգը
տպածի թերությունը ցույց կտա»: Ինչպես ցույց տվեց չայ
մատենագիտության զարգացման հետագա ընթացքը, Միան-
սարյանցի այս առաջարկն էլ ինքնաբերաբար իրականացավ:
Գ. Զարրհանալյանի հրատարակած մատենագիտության բրն-
նադատության և խմբագրման վրա կառուցվեց Լ. Ղազիկյա-
նի մատենագիտությունը:

Միանսարյանցը չայ տպագրության ամբողջական մատե-
նագիտություն կազմելու գործով հավանաբար սկսել է դրող-
վել դեռևս 1850-ական թվականների վերջից, ապա ավելի
ևռանդով աշխատել է 1860-ական թվականներին: Լեյդ աշ-

¹ Մ. Միանսարյանց կանոնավոր և վայելույ գրության պատմու-
թյունն ու տեսությունը, էջ 7—8:

² Նույն տեղում, էջ 8:

խատանքի արտահայտությունն էր նախ «Կապկազ»-ի 1862 թ. համարներում հայերեն գրքերի մի մատենագիտության հրապարակումը և ապա մի հայտարարություն, որ Միանսարյանցը 1866-ին միաժամանակ տպագրեց հայկական մի քանի պարբերականներում¹ և հետո 1867-ին նորից զետեղեց է. Հարությունի «Աղղային կրթության» իր հեղինակած Հավելվածի մեջ (էջ 2—6)։

Այդ հայտարարությունը կոչվում է «Ամենախոնարհ խնդիր» (ուրիշ հրապարակման մեջ՝ «Խոնարհ խնդիր»), նրանով Միանսարյանցը դիմում է «...բոլոր հայազգի վիճակավոր առաջնորդներին, հոգևոր և աշխարհական ղանազան ազգային ժողովներին և ընկերություններին, զրատանց կառավարիչներին և տերերին, զրավաճառներին, տպագրատան տերերին և կառավարիչներին, օրագիրներին, ամսագիրներին (հանդեսներին) տերերին և տնօրեններին, մանավանդ ամենայն ուսումնական և ուսումնասեր հայերին»։ Միանսարյանցը հայտնում է, որ ինքը մտադրվել է տպագրել «մեկ ընդհանուր հայերեն ցուցակ, հայերեն լեզվով տպած բոլոր դրավոր աշխատությունց»։ Այդ մատենագիտությունը պետք է բաղկացած լիներ վեց մասից, որոնցից երկուսը պետք է լիներ զուտ մատենագիտություն։ Առաջինում պետք է ներկայացվեին «Բոլոր ուր և ինչ ժամանակ և իցն տպած հին, թե նոր հայ մատենների, օրագիրների, լրագիրների, ամսապիլերների, օրացույցների, զրացուցակների, բրոշյուրների, տպած տետրակների, վայելչագրության օրինակների և երաժրյտական խաղերի» նկարագրությունները, նրկորդում պետք է նկարապրվեին «հայերեն մակագիրներով տպած» նկարները։ Այլ խոսքով, այս աշխատության երկու մասերը լրեւիլու էին ոչ այլ ինչ, եթե ոչ հայերեն տպագիր ամբողջ արտադրանքի մատենագիտությունը։

¹ «Բազմավեպ», 1866, էջ 94—96, «Արշալույս Արարատյան», 1866, № 773, փետր. 19, «Մասիս», 1866, փետր. 5, «Մեղու Հայաստանի», 1866, № 14, էջ 108—110։

երրորդ մասը պետք է լիներ հայ տպագրության պատմության տեղեկատուի պես մի բան։ Այստեղ լինելու էին հայ պարբերականների խմբագրությունների, ինչպես և հայերեն գրքեր լույս ընծայած և լույս ընծայող տպարանների համառոտ պատմությունները, հասցեները և այլ տեղեկություններ նրանց մասին։

Զորրորդ մասը պետք է լիներ նախորդ մասերում ընդգրկված նյութերի աղբյուրների ցանկը, շինգերոգր՝ հայերեն գրքեր ունեցող գրավաճառների հասցեները և վեցերոգր՝ հայկական բոլոր դպրոցների հասցեներն ու տարբեր ծանոթություններ նրանց մասին։

«Ամենախոնարհ խնդրում» Միանսարյանցը տալիս է նաև տպագիր երկերի նկարագրության այն նմուշները, որոնք ինքը կիրառում է հրատարակվելիք մատենագիտության մեջ։

Ըստ ծրագրի հրատարակվելիք այդ ծավալուն մատենագիտության մեջ նյութերը պետք է դասավորված լինեին կարգային (սիստեմատիկ) սկզբունքով, այսինքն՝ ըստ գիտության ու մշակույթի ճյուղերի¹։

Այս մատենագիտությունը պետք է լիներ փորձնական, Միանսարյանցը իր հայտարարության մեջ խոսում է այն մասին, թե ինքը ինչպես մատենագիտության մեջ որոշ էջեր պետք է ազատ թողնի լրացումների համար։

Մրագրում էր մատենագիտությունը հրատարակել 1200 օրինակով, որոնցից մեկ կամ երկու օրինակ ձրի պետք է ուղարկեր այն մարմիններին ու անձանց, ում վերաբերում էր «Ամենախոնարհ խնդիրը»։ Վերջիններս (ըստ երևույթին, ամենից ավելի գրավաճառները, գրադարանների տնօրեններ-

¹ Միանսարյանցը հիշատակում է կարգային մատենագիտության 12 հնարավոր բաժիններ՝ —աստվածաբանություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, մաթեմատիկա, դաստիարակություն, լեզվագիտություն, երգեր, թատրոնական շարադրություն, բժշկություն, փիլիսոփայություն, ճանապարհորդություն և խառն գրյանք (իրականում 13 բաժին «խառն գրյանք»-ի հետ)։—Տե՛ս է. Լարույն Ազգային կրթություն, Հավելված, էջ 4։

րը և բանասերները) համապատասխան ազատ էջերում պետք է դրեին մատենագիտությունից դուրս մնացած գրքերի անունները և նշումներ անեին հղած անճշտությունների մասին:

Միանսարյանցը խնդրում է նաև համապատասխան մարմիններից, որ իրեն ուղարկեն հայ պարբերականներում տրված ռալն նշանավոր հատվածները կամ շարադրությունները, որոնք ազգային գրականության մեջ ունին խորհուրդ: Այլ խոսքով, խնդրում է ուղարկել պարբերականների առավել կարևոր, մանավանդ հայագիտական բնույթի նյութերի վերլուծադրությունները:

Չնայած այն բանին, որ Միանսարյանցի օգնականները խնդիրը տույադրվում է մի քանի պարբերականների մեջ, արդյունքը միայն է լինում: Նա իր խնդրիս ավելի մեծ արձագանքներ էր սպասում (սմեր հույսը ավելի մեծ էր): Մի տարվա ընթացքում ընդամենը մի քանի անհատներ են Միանսարյանցին ուղարկում իրենց գիտողությունները¹:

Պետք է ասել, որ ինչպես իր կրթական-լուսավորական ծրագրերում, այնպես էլ մատենագիտական այս ծրագրի մեջ Միանսարյանցի ոգևորությունը, միանգամից շատ բան անելու հախուռն ցանկությունը շատ ավելի մեծ էին, բան իրական կացության ընձեռած հնարավորությունները: Միանսարյանցի ծրագրերում միշտ երևակայական (ուսուպիստական) ինչ-որ տարրեր են հղել:

Տվյալ դեպքում որքան էլ մեծ լինեին Միանսարյանցի եռանդը և կարողությունները, միևնույն է, այն ժամանակ նրա ուժերից վեր էր կազմել հայերեն բոլոր գրքերի, պարբերականների, նրանցում տույադրված կարևոր հոդվածների մի ընդհանուր կարգային մատենագիտություն, դեռ չհաշված աշխատության մյուս շորս ենթագրյալ մասերը: (Այժմ էլ

1 Այդ անհատներն էին Ղևոնդ Ալիշանը (Ս. Ղազար), Պ. Քուրթհանովը (Հալեպ), Միքայել Քոչարյանցը (Ջաթթա), Սմբատ Շահագիրը (Մոսկվա):

այդպիսի մի գործ չի համարձակվում ստանձնել որեւէ անհատը:

Ճիշտ է, այն ժամանակ հայերեն տպագիր արտագրանքի բանակը այժմյանի համեմատ շատ ավելի փոքր էր, բայց այն ժամանակ էլ ուրիշ անհամարություններ կային. թույլ էր կապը հայ մշակութային կենտրոնների միջև. թույլ էր կազմակերպված տեղեկատվությունը, չկային հայերեն զբոսների ու պարբերականների այնպիսի մեծ գրապահոցներ, ինչպիսիք կան այժմ և այլն:

Միանսարյանցը, ինչպես ասվեց, մտադրվել էր նախ հրապարակել փորձնական մատենագիտություն, Սակայն պարզվեց, որ դա էլ հնչոտ գործ չէ:

Բացի մատենագիտության նյութերը հավաքելու դժվարություններից, կային նաև այլ կարգի խոշորագույններ, որոնցից էին մատենագիտական փորձի պակասը, այն ժամանակներում մատենագիտական նման մի աշխատություն տպագրելու բարդությունները և այլն:

Ինչպես ասացինք, 1868 թվականին Միանսարյանցը չկատարեց մի տարի առաջ իր տված խոստումը (հայ տպագրության փորձնական մատենագիտությունը մեկ տարվա ընթացքում հրատարակելու վերաբերյալ): Հաջորդ տարիներին էլ նա չկարողացավ իր նպատակը իրականացնել, և ընդհանրապես նրա հայկական մատենագիտությունը որպես այդպիսին հրապարակ չեկավ:

Չնայած դրան, այդ մեծ մատենագիտության հատվածները կամ նրա նյութերի օգտագործմամբ կազմված մատենագիտական ցանկեր Միանսարյանցին հաջողվեց հրատարակել:

Արդ տեսնենք, թե ընդհանրապես մատենագիտական ինչ ժառանգություն է մնացել Մ. Միանսարյանցից:

Մատենագիտական տարրեր ընույնի նշումներ, դիտություններ կարելի է գտնել Միանսարյանցի գրություններին մեծ մասում, իսկ այնպիսի՝ մի ժողովածու, ինչպիսին է «Քնար հայկականը» մատենագիտական ամենատեքնալան

աշխատանքի արդյունք կարող էր լինել միայն: Այժմ մենք
լենք խոսելու Միանսարյանցի մատենագիտական բնույթի
առանձին դիտողությունների և Լրկրորդական փոքր ցուցակ-
ների մասին, այլ կ'իշխատակենք ավելի շատ նետաքրքրու-
թյուն ներկայացնող մատենագիտական գործերը:

Դրանցից է նախ 1862-ին «Կավկազ» թերթի համարնե-
րում յրապարակված «այլերեն հին ու ընթացիկ գրականու-
թյան ցուցակը», որը այն ժամանակ Միանսարյանցի կողմից
մատենագիտական տարրեր նյութեր հավաքելու մի ար-
դյունքն էր:

«Քնար հայկականի» մեջ (1868 թ.) ուշադրություն է գրա-
վում Միանսարյանցի «դատագործած աղբյուրների ցանկը, որ,
բոսո էության, հայկական երգարանների մատենագիտություն
է: Այն գտնվում է Առաջարանության մեջ (էջ ժա-ժէ), վեր-
նագրված է: «Ընթերցողությունը հորինելուս մենք ունեցել
ենք հետադա աղբյուրները»: Նյութերը համարակալված են,
վերջին թվահամարն է 48, բայց համարներից մի քանիսի
տակ որոշակի աղբյուր չի նշված: Նյութերի դասավորու-
թյունը խառն է, թեև սկզբում դրված է նշված գրքերից ամե-
նահին հրատարակությունը՝ «Գիրք նորարույս, որ կոչի եր-
դարան»², (Կ. Պոլիս, Աստվածատուր, 1737): Հաջորդը Սի-
մեոն Արևանցու Տաղարանն է (էջմիածին, 1777): Նշված են
նաև սլավոնական հրատարակություններ:

Այնուհետև, նույն «Քնար հայկականի» մեջ դետեղված
«Գողթան Երգեր» հոգվածի վերջում նույնպես տրված է օգ-
տագործված գրականության ցանկ:

Անշուշտ, մատենագիտական աշխատության արժեք ունի
նաև 1870-ին հրապարակված «Հայկական քնարի այբուբե-
նական ցանկը»:

Մատենագիտական տարրեր նյութերով ավելի հարուստ է
Միանսարյանցի հաջորդ հրատարակությունը՝ «Կանոնավոր և

¹ «Кавказ», 1862, № 55, стр. 303—304, № 56, стр. 307—308.

² Ղազար Զահկեցու երգարանն է:

վայելու: գրության պատմութիւնը ու տեսութիւնը՝ գիրքը: Հիշենք մի քանիսը: 3—5-րդ էջերում տաղատակին թվարկված են հայ տպագրութեան կենտրոնները և տպագրիչները 1565-ից մինչև 1826 թվականը: Թեև կան բացթողումներ ու մի շարք անճշտութիւններ, բայց այն ժամանակ այդ ոչ մէկ մատենագիտական տեղեկանքը լավագոյնն էր իր լրիվութեամբ: Ի դեպ, այդ ցուցակը, ափելի համառոտ, դեռևս 1866-ին տպագրվել էր վերահիշյալ «Ամենախոնարհ խնդրի» մեջ:

Արժեքավոր է նույն գրքում տպված «էջ 53—101»: հայ գրի պատմութեան մատենագիտական տեսութիւնը: Այն սկսվում է Հայաստանի բնեռագիր արձանագրութիւնների մասին եղած գրականութեան նշումով: Ապա թվարկվում են հին և նոր հեղինակների այն երկերը, որոնցում խոսք կա հայոց գրերի մասին, նշվում են համապատասխան հատվածները:

Այստեղ առաջինը Ագաթանգեղոսն է. ապա՝ Կորյուն, Փարպեցի, Խորենացի, Դրասխանակերտցի, Ստեփանոս Աստղիկ և այլն, մինչև նոր ժամանակները՝ Մ. Էմին և Պետերման:

Հայ մատենագիրներից քաղված են այն հատվածները, որոնք վերաբերում են հայ գրին (նախամաշտոցյան և մաշտոցյան): Կան ուշագրավ դիտողութիւններ: Օրինակ, 99-րդ էջում կարդում ենք. «Հայկական տառերի ստեղծումը շատ և շատ հին է, գոնյա Վաղարշակից առաջ (այսինքն՝ Քրիստոսից 150—200 տարի առաջ): Այս այն տառերն են, որ տեսել էր Վոամշապուհ հայոց թագավորը (400 թ. Քրիստոսից հետո) Միդագետքում, Ասորի Դանիել եպիսկոպոսի մօտ պահած իրրև հնութիւն և որից այդ տառերը ստացավ սուրբ Մեսրոպը»: Այլ խոսքով, Միանսարյանցը հայ գրերի փերսքերյալ ավանդական տեսակետն է պաշտպանում, ըստ որի եղել է նախամաշտոցյան հայկական գիր: Ինչպես կտեսնենք, հայ մատենագրութեան այլ հարցերի կապակցութեամբ նույնպես Միանսարյանցը ավանդական տեսակետն է դաժանում:

Այս մատենագիտութեան մեջ հիշված հայ հին հեղինակ-

ների վերաբերյալ տրված են կենսագրական և մատենագիտական կարևոր տեղեկանքներ: Օրինակ, Խորենացու մասին (էջ 96—98) տրված են հղած կենսագրական տեղեկանքները (Երբեմն ննթադրյալ), ապա նշված է Խորենացու «Հայոց պատմության» թարգմանությունների հրատարակման մատենագիտությունը: Նման տեղեկանքներ կան Ազաթանգեղոսի, Կորյունի, Փարպեցու, Ստեփանոս Ասողիկի, Մամվել Անեցու, Կիրակոս Դանձակեցու վերաբերյալ:

Այնուհետև, նույն գրքի 208—217 էջերում տրված է բառարանների մի մատենագիտություն, որը Միանսարյանցը կազմել է հայերեն շիմացող կամ վատ իմացող հայերին՝ մայրենի լեզուն սովորելու գործում օգնած լինելու նպատակով: Նա այստեղ առաջարկում է նաև պարբերականների խմբագրություններին հանդեսներում ու թերթերում տպագրել նյութեր, գլխավորապես ռուս-հայերեն բառացանկեր հայերեն սովորողների համար: Եվ այդ կարգի նյութերի առաջիկա հրապարակողներին օգնելու համար է, որ Միանսարյանցը հրապարակում է բառարանների այդ մատենագիտությունը, որը փաստորեն հայ լեզվարանության առաջին մատենագիտությունն է: Այն բնօրրկում է 46 անուն հայերեն բառարաններ (բացատրական և երկլեզվյան), ղրուցարաններ, բառացանկեր և այլն: Տրված են թե՛ առանձին գրքերով հրատարակվածներ և թե՛ պարբերականներին ու զանազան աշխատություններին կից բառարանները:

Նյութերի նկարագրությունների տակ երբեմն կան մատենագիտական ծանոթագրություններ (անոտացիաներ): Օրինակ, Երեմյոխայանի «Ռուս-հայերեն բառարանի» (1854 թ.) նկարագրության տակ կարդում ենք. «Շատ միջակ աշխատություն է, շատ պակաս և սխալ, չհասկացած նշանակություններ և ալ թերություններ ունի...»: Հ. Ալամդարյանի «Ռուս-հայերեն համառոտ բառարանին» (1821 թ.) տրված է այսպիսի ծանոթագրություն. «...հազվագյուտ է և Երեմյոխայանցի բառարանից շատ պակասություններ ունի»:

Վերջում օտար լեզուներ սովորողների համար տրված է նաև այլալեզու բառարանների փոքր ցանկ:

Հետաքրքրական է նշել, որ իր այս գրքի վերջում (էջ 232—248) Միանսարյանցը իբրև «ավելի ամ ինքն էլ զհռնդե, է մի բառարան և կենսատոմիական ստվերագրեր և համառոտ բառարան» (կազմախոսական անվանումների հայ-լատին-ռուսերեն բառարան է)։

Այս նույն գրքի մեջ Միանսարյանցը տվել է նաև մի շարք այլ մատենագիտական ցանկեր՝ գրքում շեշտված որոշ հարցերի կապակցությամբ Թորինակ, 16, 18—19, 37, 59—60, 122, 124, 149—150, 259 էջերում)։

Գրքում կա նաև Միանսարյանցի հրատարակությունների ցուցակը (էջ 255—258), որը ամենայրիվն է մինչ այդ բոլոր հրատարակվածներից։

Միանսարյանցի «Կանոնավոր և վայելուչ գրություն պատմությունը և տեսությունը» աշխատությունը առանձին քերականությամբ շնորհունվեց։ Մամուլը զուսպ վերաբերվեց նրա նկատմամբ։ Թորինակ, 1873 թ. «Մշակում» Ս. Պալասանյանը գրում էր. «...պ. Միանսարյանցի այս աշխատությունը որքան էլ արժանավորություններ ունենա, մի անհրաժեշտ երևվույթ չէ մեր ազգային գրականության մեջ»¹։ Ապա նշելով, որ «հավելվածներն ու ծանոթությունները գրքի կեսից ավելին են բռնում», գրախոսողը թերութուն է համարում այն, որ գրանք կապ չունեն հիմնական շարադրանքի հետ։ Արդյոք թերություն է դա։ Միանսարյանցը փաստորեն հրատարակել է տարբեր նյութերի մի ժողովածու, ըստ որում, ժամանակի համար շատ կարևոր նյութերի ժողովածու նա առիթն օգտագործել է հայ մանուկների ու պատանիների կրթության և դաստիարակության, մայրենի լեզուն շիմացող իր հայրենակիցների հայացման վերաբերյալ մի շարք որոշակի առաջարկություններ անելու և նրանց գործնական ոգնություն ցույց տալու համար։ Հարցի այս կողմը աշխարհող է արել գրախոսողը, ինչպես և չի զնահատել գրքի մատենագիտական՝ ժամանակի համար հարուստ նյութը։

¹ «Մշակ», 1873, № 1։

ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՄԱՏՆԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ

Նոր է սկսել Միանսարյանցը նյութեր հավաքել հայ տպագրության ամբողջական մատենագիտության համար: Այս հարցին դժվար է ստույգ պատասխան տալ: Ամենից հավանականն է, որ նա այդ աշխատանքն սկսած լինի Պետերբուրգից Թիֆլիս ծառայության գալուց հետո, այսինքն՝ 1858 թվականից: Բայց ահա պարզվում է, որ մոտավորապես այդ նույն ժամանակից Միանսարյանցը միայն հայ տպագրության մատենագիտության համար չէ, որ նյութեր է հավաքել: Այլ խոսքով ասած, միայն հայերեն հրատարակված գրքերի, պարբերականների և այլ տպագիր երկերի մատենագիտության կազմման աշխատանքով չէ, որ զբաղվել է Միանսարյանցը 1850-ական թվականների վերջից: Նա միաժամանակ նյութեր է հավաքել տարբեր լեզուներով հղած հայագիտական և ընդհանրապես կովկասագիտական գրականության վերաբերյալ:

1874—1876 թվականների ընթացքում Պետերբուրգում տպագրվեց Միանսարյանցի ամենախոշոր և ամենաարժեքավոր աշխատության՝ «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտության» առաջին հատորը¹:

Ահա այս ծավալուն հատորի (804 էջ) առաջաբանում է, որ Միանսարյանցը գրում է. «Այս աշխատության կազմումը

1 Ամբողջ տիտղոսաթերթը հետևյալն է. Bibliographia Caucasica et Transcaucasica. Опыт справочного систематического каталога печатным сочинениям о Кавказе, Закавказьи и племенах эти края населяющих. Составил М. Мянисаров, состоящий кавалерии майор, действительный член И. Русского географического общества, кандидат прав И. Московского университета. Том I, отделы I и II. С. Петербург. Типогр. О. И. Бакста и Гогенфельден и комп., 1874—1876.

Ունի նաև ֆրանսերեն տիտղոսաթերթ:

սկսվել է 1959 թվականին, երբ ես սկսեցի համարել տար-
բեր լեզուներով տպագրված ամեն տեսակ մատենագիտական
նյութեր, որոնք վերաբերում էին Կովկասի, Անդրկովկասի և
այս երկրներում բնակվող ցեղերի անցյալին ու ներկային։

Առաջաբանից իմանում ենք նաև, որ Միանսարյանցը
դիմել է Ռուսաստանի ռազմա-գիտական կոմիտեին (Военно-
ученный комитет), խնդրելով ցույց տալ նյութական աջակ-
ցություն իր գործի համար։ 1970 թվականին Կոմիտեն որո-
շում է Միանսարյանցին հանձնարարել Կովկասի վերաբեր-
յալ կարգային գրացուցակ կազմելու գործը, որը պատրաստ
լինելուց հետո պետք է հրատարակվեր պետության հաշվին։

Այստեղ կարևոր դեր է կատարում Ռուսաստանի ռազմա-
կան նախարար (նախկինում Կովկասյան բանակի սպայա-
կուլտի պետ), զորավար-թիկնապահ Դ. Ա. Միլյուտինը, որը
նաև առաջարկում է Միանսարյանցին իր ունեցած մատենա-
գիտական նյութերը, Միլյուտինը զորավար Դ. Բուչենի հետ
միասին տարիների ընթացքում նյութեր էր հավաքել Կովկասի
ազգագրության, ինչպես և Ռուսաստանի իշխանությունը
Կովկասի վրա տարածվելու պատմության վերաբերյալ։ Այդ
նյութերից կազմված մի հսկա ձևագիր ժողովածուի մնա-
ցորդներն են հասնում Միանսարյանցի ձեռքը։

Միանսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագի-
տությունը» երկրագիտական բնույթի է, հրատարակված է
իբրև ռուսերեն գիրք (նախ հատորում մատենագիտական
նյութի մեծ մասը ռուսերեն է, ապա ռուսերեն ևն ծանոթա-
գրությունները, տիտղոսաթերթը, առաջաբանը և այլն, որոնք
հաճախ տրված են նաև ֆրանսերեն)։ Այլ խոսքով ասած,
այս աշխատությունը թեև կազմվել է հայազգի հեղինակի
կողմից առաջին տպավորությամբ ռուսական մատենագի-
տության նմուշ կարող է դիտվել։ Այդպես էլ դիտել են ռուս
մատենագետները, հատկապես Ս. Վենգերովը և Ն. Զյորնո-
վը։ Առաջինը Միանսարյանցին և նրա մատենագիտությամբ
տեղ է տվել իր «Աղբյուրներ ռուս գրողների բառարանի հա-

մարս Հայտնի աշխատության մեջ¹ (Миансаров Михайил Месропович անվանարադի տակ) իբրև Կովկասի մատենադետի ն. Ձդոքնովը Միանսարյանցի և նրա մատենագիտության մասին խոսում է իր «Ռուս մատենագիտության պատմություն» աշխատության մեջ² (երևբ հրատարակություններում էլ)։ Միանսարյանցի այդ մատենագիտությունը հիշատակված է նաև ռուս հեղինակների կազմած տեղեկատու և մատենագիտական բնույթի մի շարք այլ աշխատություններում, ինչպես, օրինակ, Վ. Մեժովի «Ասիայի մատենագիտություն»³, Իկոննիկովի «Պատմագրություն» մեջ և այլուր։ Այդ բոլոր աշխատություններում Միանսարյանցը (կամ՝ Միանսարովը) ներկայացվում է իբրև ռուս հեղինակ, (ակնարկ անդամ չկա նրա հայ լինելու մասին), իսկ նրա աշխատությունը՝ իբրև սոսկ ռուսական երկրագիտական մատենագիտություն։

Տեսնենք ինչ բնույթի է Միանսարյանցի այս մատենագիտությունը, երկրագիտական լինելով, որքանով է այն վերաբերում հայ մատենագիտությանը։

Մատենագիտության մեջ, հասկանալի է, որ Հայաստանը ներկայացված է իբրև ռուսական կայսրության մասերից մեկի՝ Կովկասի մեջ մտնող աշխարհագրական միավոր։ Եվ հայտնիության գրականությունը այնտեղ գտնվում է վրացադիտական, լեզգիագիտական կամ ադրբեջանագիտական գրականության կողքին։ Առաջին հայացքից թվում է, որ հիմք չկա այդ մատենագիտությունը հատկապես հայկական համարելու նաև այս պատճառով։

¹ С. А. Венгеров Источники словаря русских писателей. Т. IV, Петербург, 1917, էջ 282—283. Ի դեպ, Վենգերովը Միանսարյանցի կենսագրության մեջ թույլ է տվել սխալներ, օրինակ, նրան համարում է «кандидат Восточн. яз.», (իրականում եղել է իրավագիտության թեկնածու), մատենագիտության թվականը դրել է 1874—1875 (ճիշտ է՝ 1874—1876) և այլն։

² И. В. Эдобнов История русской библиографии... М., 1955, стр. 468.

³ В. И. Межов Библиография Азии. СПб., 1894, т. 3, стр. 156.

Բացի այդ, մատենագիտության Հայաստանին նվիրված բաժիններում ներկայացված է հայերին ու նրանց երկրին վերաբերող, այսինքն՝ երկրագիտական գրականություն տարբեր լեզուներով և ոչ թե հատկապես հայերեն լեզվով հրատարակված գրականություն:

Հարց է առաջանում հիմք կա՞ Միանսարյանցի այս աշխատությունը հայ մատենագիտության մեջ դնելու համար: Աշխատության ավելի լուրջ քննությունը ցույց է տալիս, որ նման հիմք կա:

Հայ մատենագիտության ամենակարևոր հատկանիշը հայալեզու գրականության մատենագիտություն լինելն է: Թեև Միանսարյանցի աշխատությունը իբրև հայերեն գիրք չի հրատարակվել և այնտեղ նշված գրականության մեծ մասը հայալեզու չէ, սակայն տվյալ դեպքում շատ կարևոր է այն, որ աշխատության մեջ ռուսերենից հետո քանակով առաջին տեղում է հայալեզու գրականությունը, որ բերված է մեսրոպատառ, և ապա ամենից լրիվ ու հարուստ է ներկայացված մատենագիտության Հայաստանի բաժինը: Գրքի որոշ հատվածներ ամբողջովին հայերեն գրքերի ու հոդվածների մատենագիտական ցանկեր են:

Ավելին, Միանսարյանցի այս աշխատության հայկական մասը այնքան հայերեն տպագիր գրականություն է ընդգրկում, որքան նախքան այդ չէր ընդգրկում մատենագիտական որևէ այլ աշխատություն: Այլ խոսքով, հայերեն գրականության ընդգրկման ծավալով այդ մատենագիտությունը աննախընթաց էր հայ մատենագիտության մեջ: Ուրեմն Միանսարյանցի աշխատության առնվազն հայկական մասը անպայման հայ մատենագիտության մի նմուշ է, իսկ ի՞նչ նկատի ունենանք, որ հայ մատենագետը կարող էր կազմել նույն երկրագիտական մատենագիտություն, ինչպես որ այդպիսի կարող են կազմել և կազմել են գերմանացի, ռուս կամ անգլիացի մատենագետները, ապա հիմք կա հայ մատենագիտության պատմության մեջ իբրև նրա կարևոր արտահայտությունը դնել Միանսարյանցի ամբողջ աշխատությունը:

Բացի վերն ասվածը, Միանսարյանցի աշխատությունն ունի մի ուրիշ կարևոր առանձնահատկություն, որի շնորհիվ այն պետք է համարվի հայկական մատենագիտություն: Երկու խոսք այդ մասին:

Ռուսական կայսրության առանձին մարզերի ու երկրամասերի վերաբերյալ գրականության առանձին ցանկեր կազմվում էին արդեն 1840-ական թվականներից: Այդպես Ռուսաստանում ծագեց երկրագիտական մատենագիտությունը, որը արագ թափով զարգացավ 1850-ական թվականներից հետո: Ստեղծվեցին ռուսական կայսրության տարբեր մասերի վերաբերյալ հղած գրականության ծավալուն մատենագիտություններ:

Ռուսաստանում երկրագիտական մատենագիտության արագ զարգացման կարևոր պատճառներից մեկը ն. Զդորնովը համարում է այն, որ «...կապիտալիզմի զարգացման և գաղութային քաղաքականության ազդեցության տակ, հումքի և սպառման նոր շուկաների որոնման ճանապարհին պահանջ առաջացավ ուսումնասիրելու առանձին շրջանների և սահմանակից երկրների բնությունը, տնտեսությունը և կենցաղը»¹:

Իրոք, փաստերը ցույց են տալիս, որ ռուսական ցարիզմի գաղութարարական, մեծապետական քաղաքականությունն է հղել Ռուսաստանի գաղութային և կիսագաղութային ժայռամասերը տարբեր տեսանկյունից ուսումնասիրելու և այդ ժայռամասերի վերաբերյալ հղած գրականության մատենագիտություն ստեղծելու գլխավոր պատճառներից մեկը:

Միանսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտությունը» իր հրատարակման պատմությամբ, արտաքին ձևավորմամբ, անոնով հիշյալ երկրագիտական մատենագիտությունների շարքում է, և զուցե Միանսարյանցը իր մատենագիտությամբ ակամայից ինչ-որ տուրք տվել է վերոհիշյալ մեծապետական մտայնությանը: Սակայն մատենա-

¹ И. В. Здобнов История русской библиографии... стр. 466.

գիտութիւնը լրջորեն ծանոթանալով՝ զժամար չէ նկատել նաև. որ հնդինակը ավելի մեծ չափով ուղղակի հակադրվել է այդ մեծապետական մտայնութիւնը: Դրա ապացույցներէց է. օրինակ, այն, որ աշխատութեան մեջ սպասվածից ավելի մեծ տեսակարար կշիռ ունի հայոց պատմութեան բաժինը. հայերեն վերնագրերով, ժամանակագրական տախտակներով: Հատկապես ուշագրավ են այս վերջինները: Մատենագիտական մի աշխատութեան մեջ, հասկանալի է, որ ոչ մի հարկ չկա ներկայացնելու և չեն ներկայացվում պետութիւններէ, թագավորներէ ժամանակագրութիւններ: Դա մատենագիտութեանը չվերաբերող հարց է. և նման բան անում են պատմութեան գրքերում ու դասագրքերում: Մինչդեռ Միանսարյանցը մոտ 30 էջ հայոց պատմութեան մանրամասն ժամանակագրութիւն է տվել: Այնպիսի տպագրութիւն է ստեղծվում, որ հնդինակը ցույց տալով հայ ժողովրդի հարուստ անցյալը՝ ուզում է ասել, որ այդ ժողովուրդը թեև զաղութային վիճակում է գտնվում, բայց ժամանակին ունեցել է իր սեփական երկարակյաց պետութիւնը. շատ զարգացած մշակույթը:

Գրքի առաջարանում Միանսարյանցը իր մատենադիտութեան գլխավոր դերը համարում է ճիշտ տեղեկատվութիւնը, որով, ըստ նրա կարծիքի, պետք է վերջ տրվեր Կովկասի առանձին ազգերի մասին սուտ ու սխալ աղբյուրներից տեղեկութիւններ քաղելուն, որպեսզի կովկասյան ազգերի մասին փոստղ ու դատող յուրաքանչյուր մարդ ի վիճակի լինի կարգալու անհրաժեշտ վստահելի գրականութիւն և ճիշտ պատկերացում կազմի նյութի վերաբերյալ: «Կարծում եմ.— գրում է Միանսարյանցը,— որ այսպիսի հրատարակութիւնները մի անգամ չէ, որ կարող են օգտագործվել իրեն ձեռնարկ և ուղեցույց ինչպես գիտական հասուկ հետաքրքրութիւններ ունեցող մարդկանց, այնպես էլ կառավարչութեան կողմից: Վերջինս շատ ղեկավարում չունենալով բավականաչափ լրիվ և վստահելի աղբյուրներ՝ տեղեկութիւններ էր վերցնում և շարունակում է վերցնել երկրորդական և երրոր-

BIBLIOGRAPHIA

CAUCASICA ET TRANSCAUCASICA.

ESSAI

d'une bibliographie systématique relative au Caucase, à la Transcaucasie et aux populations de ces contrées,

M. MIANSAROF,

Maire de cavalerie, membre effectif de la Société Impériale Russe de Géographie, barde d'or en chef de l'Université de Moscou.

TOME I

SECTIONS I et II.



ST.-PÉTERSBOURG.

Imprimerie de J. Halat et de H. Kaufeldt & Comp.
(Wald. Gasse. 3. et 5. et 6. maisons N 10.)
1874-1876.

BIBLIOGRAPHIA

CAUCASICA ET TRANSCAUCASICA.

ОПЫТЪ

сравнительнаго систематическаго каталога печатныхъ сочиненій о Кавказѣ, Закавказьи и племенахъ, его края и населенияхъ.

Сочиненіе

Н. МИНСАРОВА,

сержанта въ армейской кавалеріи, члена-корреспондента Императорскаго Общества, членами ея Н. Михайловъ Топографическаго.

ТОМЪ I

ОТДѢЛЫ I и II



С.-ПЕТЕРБУРГЪ.

Типографія О. Н. Ефрема и Товарищества въ Россіи.
(Вал. Гора. 3. и 5. и 6. дома N 10.)
1874-1876.

Մ. Միանարյանցի սկզբնական և Անդրկովկասի մատենագիտության տիտղոսաթերթը:

դական. շատ հաճախ չափազանց կասկածելի աղբյուրներին¹:

Ուշագրավ է նաև այն, որ Միանսարյանցը աշխատել է հանգամանալից ներկայացնել նաև վրաց պատմությունը. հարևան ժողովրդին նույնպես լավ կողմից ներկայացնելու ցանկությունը:

Ահա ասված և մի շարք այլ կողմերով Միանսարյանցի այս մատենագիտությունը տարբերվում է ցարական Ռուսաստանում լույս տեսած մյուս երկրագիտական մատենագիտություններից:

Մի հետաքրքրական հանգամանք ևս: Ասացինք, որ գրքում մեծ տոկոս է կազմում հայալեզու գրականությունը: Բայց երբ ծանոթանում ենք երկրորդ չճապարակված հատորի բովանդակությանը (տպագրված է առաջին հատորի սկզբում), տեսնում ենք, որ այդ հատորը գրեթե ամբողջությամբ հայ տպագրության մատենագիտությունն էր լինելու: 7 էջ (էջ XXXIV—XLII) գրադեցնող բովանդակությունից 6-ը հայագիտական և մանավանդ հայալեզու գրականությանն են վերաբերում:

Արդ, տեսնենք, ինչ է ընդգրկված Միանսարյանցի մատենագիտության մեջ և ինչ կառուցվածք ունի:

Ընդգրկված են Կովկասի, Անդրկովկասի վերաբերյալ տարբեր տպագիր (նաև ոչ տպագիր) նյութեր՝ գրքեր, հոդվածներ (ամսագրային և լրագրային), քարտեզներ, լուսանկարներ, յուզանկարներ և այլն տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, վրացերեն և այլն):

Ամբողջ նյութը կարգային դասավորություն ունի, այսինքն՝ ըստ բովանդակության է խմբավորված: Առանձին բաժինների մեջ գրքերն ու հոդվածները ներկայացված են ժամանակագրական կարգով: Առաջին հատորը բաղկացած է

1 Մ. Միանսարյանց Bibliographia Caucasica et Transcaucasica, էջ IV:

երկու մասից, նրանցից յուրաքանչյուրը հետևյալ բովանդակություներն ունի: 1-ին մասը կոչվում է Հողը (Земля), երկրորդը՝ Լուսինը և Բնությունը (Человек и природа), երրորդը՝ (II հատոր) Բնության և մարդու փոխներգործությունը (Взаимодействие природы и человека):

Այս անունների տակ թաքնված է հետևյալը: 1-ին մասում (Հողը) տրված է Կովկասի տարրեր շրջանների ամբողջ բնության, օգտակար հանածոների մասին եղած գրականությունը (Ֆիզ. աշխարհագրություն, երկրաբանություն, հանքաբանություն, բուսաբանություն, կենդանաբանություն, եղանակագիտություն, հիվանդություններ և տեղական բժշկություն):

2-րդ մասը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Նրկա-մասի ժողովուրդների ազգագրություն..., Ճանապարհորդություններ, Հնություններ և արձանագրություններ, Դրամագիտություն, Պատմություն:

Մատենագիտության այն գլուխներն ու մասերը, որոնց նյութը մեծ է, բաժանված են առանձին հատվածների աշխարհագրական կամ աղգային սկզբունքով (ըստ Կովկասի դավառների, երկրամասերի և այլն): Որոշ գլուխներ էլ այլ բաժանում ունեն (օրինակ, ռուսապարզոթությունները գլուխը ժամանակագրական բաժանումներ ունի): Քիչ գրականություն ընդգրկող գլուխները կոտորակված չեն:

Մատենագիտության աշխարհագրական ընդգրկումն է ամբողջ Կովկասը՝ Հյուսիսային (Կուրան, Ստավրոպոլյան երկրամաս, Դաղստան և այլն) և Անդրկովկաս (Նրեանի, Բաքվի, Թիֆլիսի, Նիդալնայուլի, Քուբայիսի նահանգներ): Իբրև շեղում Հայաստանը ներկայացվում է ոչ միայն Նրեանի նահանգով, այլ իր պատմական սահմաններով, որոնք հաճախ դուրս էին Ռուսական կայսրության պետական սահմաններից: Այդ պատճառով էլ օրինակ, աշխարհագրության գլխում Կովկասի տարրեր նահանգներին նվիրված բաժինների շարքում դրնում ենք ղևին Հայաստանն ընդհանրապես (ներկայիս Ռուսական, Թուրքական և Պարսկական Հայաստանի մասերը),

Փոքր շաք (միջնադարյան) կամ Կիլիկիա և Երևանի նահանգս բաժինը: Այսինքն շաքաստանը, իբրև բացառություն, ներկայացված է շատ ավելի լայն. քան Ռուսական կայսրության սահմաններն էին թույլ տալիս:

Նյութերը հիմնականում նկարագրված են բնագրի լեզվով, այսինքն՝ այն լեզուներով, որոնցով հրատարակված են՝ հիմնականում ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն: Միայն վրացերեն նյութերը նկարագրված են ֆրանսերեն կամ ռուսերեն թարգմանությամբ:

Հայերեն գրքերն ու հոդվածները բնագրի լեզվով ներկայացվելուց հետո տրված են նաև ֆրանսերեն:

Նկարագրություններում նշված են նախ՝ ինդիսակ, վերնագիր, ապա, եթե նկարագրվածը ամբողջական գիրք է, բերված են հրատարակման հիմնական տվյալները (հրատ. վայրը, թվականը, գրքի ծավաթը, էջերի քանակը, երբեմն նաև գիրը): Եթե նկարագրությունը վերլուծական է, նշված է հոդվածի աղբյուրը (պարբերականի անունը, թվականը, համարը, հաճախ՝ էջերը): Եթե որևէ գրքից մի գլուխ կամ այլ հատված է վերլուծադրված, նույնպես մանրամասն նշված է աղբյուրը:

Պետերբուրգի հանրային գրադարանում գտնվող նյութերի նկարագրությունների վերջում նշված է գրքերի դարականիչը (գրքերի հասցեն դարականների վրա): Ի դեպ, Պետերբուրգի հանրային գրադարանի նյութերի մասին Միանսարյանցի տեղեկություններ է վերցրել 1873 թ. գրադարանի հրատարակած մի գրացուցակից (Catalogue de la section Russica...), ըստ

1 Այս բաժանման մեջ Միանսարյանցը հետևելով ժամանակի պատմագրությունը անճշտություններ է թույլ տվել, ինչպես, օրինակ, այն, որ Փոքր շաքը նույնացրել է Կիլիկիայի հետ, որոնք տարբեր այսպահանջական միավորներ են հղել:

Մատենագիտության հայերեն նյութերը չարված են Միանսարյանցի սեփական տառերով, Հավանաբար նա յի ունեցել վրացական տառեր, որի հետևանքով էլ վրացերեն գրքերն ու հոդվածները նկարագրել է իրար սխալմամբ:

որում այնտեղ եղած կովկասագիտական բոլոր գրքերը գրա-
դարանում ինքը վերցրել և ստուգել է ու նոր միայն մուծել
իր մատենագիտության մեջ:

Մատենագիտության մեջ շատ դեպքերում տրվում է
նկարագրված գրքի մանրամասն բովանդակությունը: Օրի-
նակ, 24 էջերի վրա տրված է Մ. Զամչյանի «Պատմութիւն
Հայոց»-ի լրիվ բովանդակությունը (էջ 468—492): Մի բաժնի
սահմաններում նյութերի դասավորությունը կատարված է
հիմնականում ժամանակագրական կարգով, և հաշվի չի առն-
ված նյութերի հրատարակության լեզուն: Բայց ժամանակա-
դրական կարգն էլ հետևողական չի կիրառված: Այսպես, եթե
միևնույն հրկր մի քանի հրատարակություններ ունի, ապա
բոլորը տրվում են մի համարի տակ (և ոչ թե յուրաքանչյուր
հրատարակությունը իր թվականի մեջ): Օրինակ, Մովսես
Խորենացու Հայոց սլատմությունը ժամանակագրական հեր-
թականության մեջ տեղագրված է ըստ ուսերեն 1873 թ.
հրատարակության, սակայն դրանից առաջ գրված են նաև
նախորդ հրատարակությունները, (հայերեն, լատիներեն,
ֆրանսերեն և այլն), սկսած 1695 թ. ամստերդամյան հրա-
տարակությունից:

Շատ դրեր ծանոթագրված են (անոտագրված): Ծանո-
թագրությունները տարբեր մեծության են՝ մի նախադասու-
թյունից մինչև մի քանի էջ դրադեցնող: Ծանոթագրոթյուն-
ների բովանդակությունն էլ տարբեր է՝ հեղինակների մասին
կենսագրական տեղեկություններից մինչև առանձին գրքերի
տպագրական-հրատարակչական որակի արժեքավորումը:
Հաճախ կարևոր տեղեկություններ են տրվում առանձին աշ-
խատությունների վերաբերյալ: Երբեմն էլ խիստ քննադատա-
կան դիտողություններ են լինում:

Օրինակ, «Լեզգային յիշատակարան»-ի նկարագրության
տակ կարդում ենք (էջ 551): «Հայոց թագավորության վերա-
կանդնելուն է վերաբերում», Ղազար Փարպեցու Պատմության
նկարագրության տակ (էջ 521) գտնում ենք «Սորա իտալե-
րեն թարգմանության ձեռագիրը կա վենետիկ, Սուրբ Ղա-

զարու վանքը՝ տեղեկությունը: Կ. Նզյանի «Ներքին կյանք»-ին Հայաստանի աշխատության ուսաներեն և հայերեն հրատարակությունների նկարագրության տակ (էջ 399—400) գրված է, որ այդ գիրքը ոչ թե ինքնուրույն աշխատություն է, այլ տարբեր ուսումնասիրություններից առնված հատվածների միացություն (կոմպիլյացիա), նշված են աղբյուրները:

Իոսելիանիի «Թիֆլիսի հին հուշարձանները» չողվածի (ուսաներեն) կապակցությամբ ասված է, «Կան շատ փաստեր, որոնցից հայոց եկեղեցիներին վերաբերողները ստուգման կարիք ունենա» (էջ 80) և այլն:

Մի շարք գրքերի նկարագրությունների տակ նշվում են հղած գրախոսությունները:

Մատենագիտության մեջ հայագիտական գրականությունը ներկայացված է մի քանի բաժիններում (աշխարհագրության, պատմության, ազգագրության, դրամագիտության և այլն), և հավանաբար ամեն բաժնում էլ գրականության հայագիտական մասն ամենից լրիվն է: Արևելյան և Արևմտյան Հայաստանին վերաբերող նյութերից բացի, գրականություն կա նաև գաղութահայության մասին:

Հայոց պատմությանը նվիրված ընդարձակ հատվածը մասերի է բաժանված՝ ըստ պատմական շրջանների:

Այստեղ Միանսարյանցը հավատարիմ է մնում հայ պատմական ավանդույթին և հին հեղինակների պահպանված երկերի շարքում նշում է նաև այնպիսիները, որոնց մասին սոսկ հիշատակություններ կան հին հեղինակների երկերում, ըստ որում, հիշատակված այդ երկերի մի մասի իրական լինելը վիճարկվում է նոր բանասիրության կողմից: Այդպիսիք են, օրինակ, Խորենացու հիշած մի շարք հին հեղինակների երկերը, որոնց մի մասը չի պահպանվել և նոր բանասիրությունը կասկածի տակ է դրել նրանց գոյությունը: Այսպես, մատենագիտության մեջ տեղ են գտել Խորենացու հիշատակած Մար Աբաս Կատինան, Ուղյոսայ Փուրմը և ուրիշներ:

Միանսարյանցի մատենագիտությունը քաղական հարուստ նյութեր է ընդգրկում նաև Վրաստանի և վրացիների, Ադեր-րեջանի և ադրբեջանցիների, քրդերի, արխազների, չձեննների և Կովկասի մյուս ժողովուրդների մասին: Իր պարունակած կովկասագիտական նյութերի բնույթով ու քանակով այս մատենագիտությունը առայժմ մնում է անփոխարինելի:

Մատենագիտության բոլոր նյութերը համարակալված են (համարները ուղիղ փակագծերի մեջ դրված են նկարագրությունների վերջում): Առաջին հատորի վերջին համարը 4840-ն է: Թայց ընդգրկված մատենագիտական միավորներն ավելի են: Բնեւ որոշ դրքեր կրկնակի են նկարագրված ու համարակալված, բայց ավելի շատ են չհամարակալված նյութերը: Ինչպես ասացինք, մի երկի տարբեր հրատարակությունները Միանսարյանցը մի համարի տակ է տալիս: Այդտեղ այս կամ այն աշխատությունը և նրա դեմ գրված բանավիճային աշխատությունը հաճախ նույնպես միևնույն համարի տակ են տրվում (տե՛ս, օրինակ, էջ 84—85 և այլն): Մոտավոր հաշվումներով մատենագիտության մեջ ընդգրկված են շուրջ 6000 դրքեր, հոդվածներ և այլ նյութեր:

Հասորը տեղեկատու ցանկեր չունի. առաջարանում ասված է, որ 2-րդ հատորում լինելու են ամբողջ մատենագիտության այբբենական և կարդային տեղեկատու ցանկերը:

Միանսարյանցը խոստանում է նաև 2-րդ հատորի վերջում տալ 1-ին հատորին վերաբերող լրացումներ ու ճշտումներ:

Ինչպես ասացինք 2-րդ հատորի տպագրված բովանդակությունը մտածել է տալիս, որ այդ հատորի մեծ մասը հայկական մատենագիտությունն էր լինելու:

Իրոք. ի՞նչ նյութեր կարելի է դնել հետևյալ վերնագրերի տակ՝ Հայերի կռուներ, Եկեղեցական գրականություն, լեզուն, բնիկանրապես գրականություն և լուսավորություն: Հին և նոր կտակաբանների գրքերը միասին տպագրված: Հին Կտակաբանի գրքերը, առանձին հրատարակված: Այդ գրքերի մեկնությունները: Դավթի սաղմոսները: Առակներ, Դիրք ժողո-

վողի և Սոզոմոնի Երզ երգացը: Նոր կապարան, Ավետարան, Առաքյալների գործերն ու թղթերը և այլն: Պարզ է, որ խոսքն ամենից առաջ վերաբերում է հայերեն զրքերին ու մանավանդ հայերեն տպագիր արտադրանքին: Այնուհետև, առանձին բաժիններ են նվիրված հայերեն մաշտոցներին, ժամագրքերին, շարականոցներին և այլն:

Այնպես, որ մատենագիտության շրատարակված երկրորդ հատորի հանելուկային վերնագիրը («Բնության և մարդու փոխներգործությունը») այսօր ոչինչ չի ասում աշխատության էության մասին:

Ընդհանրապես մանրամասն ծանոթանալով Լիանսարյանցի մատենագիտության տպագրված հատորի նյութերին, ինչպես և չտպագրված հատորի բովանդակությանը, կարելի է մտածել, որ հեղինակը կովկասի և Անդրկովկասի երկրագիտական մատենագիտությունը հրատարակելու հնարավորությունը ոգտագործել է տարիների ընթացքում իր կազմած հայկական մատենագիտությունը գոնե հատվածաբար լույս ընծայելու համար:

Իրոք, մատենագիտության հրատարակված հատորում գտնում ենք հայ հին և միջնադարյան պատմիչների տպագիր երկերի մի հարուստ ցանկ: Այնուհետև, բավական հարուստ է հայ նոր պատմագիրների բաժինը: Այստեղ հայոց պատմության մատենագիտությունը զբաղեցնում է 128 էջ (434—562), Հայաստանի աշխարհագրության մասը 19 էջ (էջ 18—23, 62—73), հայկական աղագրությունը 22 էջ (էջ 211—233), հայկական հնությունների ու վիմագրությունների բաժինը 18 էջ (էջ 388—406), հայկական դրամագիտության բաժինը՝ 3 էջ (418—421), ամբողջ հայկական մասը՝ մոտ 200 էջ: Դեռ այս հաշվից դուրս են մնացել մատենագիտության հայագիտական այն հատվածները, որոնք գտնվում են մասերի շրաժանված գլուխներում:

Ինչ վերաբերում է մատենագիտության երկրորդ հատորին, ապա այնտեղ, հասկանալի է, որ հայագիտական, նաև հայալիզու մասն ավելի մեծ պետք է լիներ:

Միանսարյանցն առաջաբանում ասում է, որ ինքը շտապել է մատենագիտության 1-ին հատորը 1876-ին լույս ընծայել, շտապելով երկրորդի ավարտմանը, այն պատճառով, որ այդ թվականին Պետերբուրգում գումարվելու էր արևելագետների համագումար և որ ինքը ցանկացել է իմանալ համագումարին մասնակցողների կարծիքը իր աշխատության մասին՝ հետագա ճշտումներ անելու նպատակով։ Միանսարյանցի դրածից սլարգվում է, որ ինքը այդ ժամանակ աշխատելիս է եղել 2-րդ հատորի վրա։

1880 թվականին «Փարոս Հայաստանի» հանդեսում (տետր 11, էջ 79) գրվեց, որ Միանսարյանցի մատենագիտության 2-րդ հատորի թնյութերն պատրաստ են և մեծ մասամբ կարդի դրված։

Ինչու՞ շտապարկեց երկրորդ հատորը։ Սովորաբար դրա պատճառը հեղինակի մահն է համարվում¹։ Մինչդեռ իրավացի է թվում ակադեմիկոս Ի. Կրաչկովսկին, երբ նկատում է, որ 1875 թվականից մինչև 1880 թ. ապրիլը (Միանսարյանցի մահը) բավական ժամանակ է եղել երկրորդ հատորը հրատարակելու համար²։ Ուետի այդ հատորի շհրատարակման այդ պատճառ պետք է որոնել։

1948 թվականին ակադեմիկոս Ի. Կրաչկովսկին լենինգրադի մի դրախանութում ձեռք է բերում Միանսարյանցի մատենագիտության հեղինակային օրինակը, ուր հեղինակի ձեռքով արված են բաղմամբիվ լրացումներ և ճշտումներ։ Է՛լ ավելի ուշադրավ է այն, որ մատենագիտության այդ օրինակը ոչ թե մյուս բոլոր օրինակների նման վերջանում է 804 էջով, այլ 996-ով³, այսինքն՝ 192 էջ (12 տպ. մամուլ) ավելի ունի։

¹ Տէ՛ս, օրինակ, Н. В. Здобнов История русской библиографии... стр. 406, Գ. Զարհանայան Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ ԺԳ։

² И. Ю. Крачковский Неизвестные страницы «Библиографии» М. Минасарова.— «Известия» АН СССР, отд. лит. и языка, 1951, т. X, вып. 1, стр. 96.

³ 1876 թվականի դրախտություններից մեկում Միանսարյանցի մատենագիտության լչերը երկու անգամ նշված են 852 («Փորձ», 1876, № 1,

Ըստ Կրաչկովսկու Նաղորդման այդ էջերի պարունակությունը կազմում է երկրորդ շրապարակված Նատորի (այսինքն՝ մատենագիտության 3-րդ մասի) առաջին զուգը («Հայերի կրոնը, եկեղեցական գրականությունը, լեզուն, ընդհանրապես գրականությունը և լուսավորությունը») գրեթե ամբողջությամբ¹։

Կրաչկովսկին ենթադրում է, որ Միանսարյանցը մատենագիտության իր օրինակի վերջում կցել է երկրորդ Նատորի շարված մասի սրբագրական էջերը (օտտիսկները)։

Անկասկած սա մի հրաշալի զուտ է հայ մատենագիտության համար, մանավանդ, որ գտնվածը հիմնականում ընդգրկում է հայալեզու և հայագիտական գրականություն²։

Միանսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտության» աղբյուրներից մեկի մասին արդեն խոսք եղավ՝ Դ. Միլյուտինի և Դ. Բուչենի կազմած ժողովածուի մնացորդները։ Այդ ժողովածուից Միանսարյանցի մատենագիտության մեջ մտել է մոտ 500 անուն։ Հիմք կա ենթադրելու, որ այդ անունները Միանսարյանցը մուծել է իր մատենագիտության մեջ ուղղակի հիշյալ ժողովածուից և մեծ մասամբ իր ձեռքի տակ չի ունեցել համապատասխան գրքերն ու չողվածները։ Այլ խոսքով այդ 500 անունը, ըստ երևույթին, նկարագրված են ոչ թե բուն տպագիր երկերից, այլ քաղված են ժողովածուից, այսինքն մատենագետի խոսքով ասած (ԸՎՍՍ շեն նկարագրված)։

Ինչպես երևում է Միանսարյանցի առաջարանից մատենագիտական աղբյուրներից առնված (առանց սկզբնաղբյուր-

էջ 471, 474)։ Արդյո՞ք սա նշանակում է, որ էյերի այսպիսի քանակով գրքի օրինակներ էլ կան, թե՛ սխալմունք է սուսկ։

1 Տե՛ս Ի. Կրաչկովսկու վերահիշյալ հոդվածը, էջ 95—96։

2 Դեռևս տասնյոթ տարի առաջ Ի. Կրաչկովսկին իր հաղորդման մեջ գտնում էր, որ պետք է տպագրել Միանսարյանցի մանրակրկիտ աշխատանքով ստեղծված մատենագիտության այդ անհայտ հատվածը։ Կարծում ենք, որ թեև ուշացումով՝ այժմ պետք է առանց հապաղելու հրապարակել նշանավոր մատենագետի ժեծարժեք աշխատանքի այդ կարևոր մասը։

ների հետ համեմատելու) նկարագրութիւններ նրա մատենադիտութեան մեջ շատ կան:

Միանսարյանցը ութ կարգի աղբյուրներ է նշում, (Առաջարան, էջ II—III), որոնցից ինքը օգտվել է: Եվ դրանց զգալի մասը հայկական է: Մի հանգամանք, որ ցույց է տալիս հայերեն գրականութեան մեծ տեսակարար կշիռը մատենադիտութեան մեջ:

Սակայն հայերեն նութերի մի մասը Միանսարյանցը նույնպես նկարագրել է առանց ձեռքի տակ ունենալու, մատենադիտական տարբեր ցանկերից (գլխավորապես Մխիթարյան միաբանութիւնների տպագիր գրացուցակներից և հայ պարբերականներում տպվող ցանկերից): Առանց գիրքը կամ հոդվածը ձեռքի տակ ունենալու կատարված այդ նկարագրութիւններն իրենց բացասական կնիքն են թողել մատենադիտութեան վրա: Բավական շատ են մատենագիտական բնույթի անճշտութիւնները գրքերի հրատարակման տարբերվելի և վայրերի, հրատարակիչների անունների մեջ և այլուր:

Այսպիսի անճշտութիւնների մի մասն էլ, իհարկե, այլ պատճառներ ունի, դրանցից է գուցե և հայկական գիտական նոր մատենադիտութեան փորձի պակասը:

Անճշտութիւնների մասին պատկերացում տալու համար նշենք մի երկուսը: Այսպես, Մովսես Խորենացու անունով հայտնի «Աշխարհացոյց»-ի առաջին հրատարակութեան նկարագրութիւնում կարդում ենք (էջ 62) «Ամստերդամ, 1668 (հանդերձ Ադուեսագրով), սխալներով լի, տպագր. Թովմաս Լպիսկոսպոսի վանանդեցվոյ: Իրականում Թովմաս վանանդեցին ոչ այս հրատարակութեան տպագրիչն է, ոչ էլ նրա սխալների պատասխանատուն (հրատարակել է Ոսկան Երեւելանցին): Կամ՝ վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ի նկարագրութեան մեջ կարդում ենք «նույն 1728 թ. սույն աշխարհացոյցը տպագր. էջմիածին, Երեմիա վարդապետի հայոց բառարանի վերջին» (էջ 63): Իրականում 1728-ին էջմիածնում ոչ միայն «Աշխարհացոյց» ու բառարան, այլ առհասարակ

րակ որեւէ բան չէր կարող տպագրվել. քանի որ այդ ժա-
ռում տպագրութիւնը հիմնադրվեց 1771 թվականին (առաջին
գիրքը լույս տեսավ 1772-ին): Իսկ Երեմիա Մեղրեցու
աւարանը վարդանի «Աշխարհացոյց»-ի հետ 1728-ին տպա-
գրվել է 4. Պոլսում:

Կան կովկասյան առանձին ժողովուրդների ցեղային-
լեզվական պատկանելիութիւնը շփոթելու դեպքեր. օրինակ.
ազգագրությանը նվիրված գլխում կարաչանցիներին Միան-
սարյանցը դրել է արխազական ժողովուրդների մեջ. որ ճիշտ
չէ (առաջինների լեզուն թուրքական է. երկրորդներին՝ արև-
մրտակովկասյան):

Որոշ դեպքերում գուլիսների և բաթինների վերնագրերը
չեն համապատասխանում նրանց տակ հավաքված նյութերի
բովանդակութիւնը:

Այս և այլ կարգի անճշտութիւնների պակաս չկա:

Այնուհետև միշտ չէ, որ կարելի է հաջող համարել գրքում
մատենագիտական նյութերի դասավորութիւնը և նրա
մատուցման եղանակը: Քիչ չէ նաև նկարագրութիւնների
անմիօրինակութիւնը և այլն:

Բավական շատ են մատենագիտութիւնից դուրս մնացած
նյութերը: Միանսարյանցը իր առաջաբանում նշում է այդ
մասին, Վայերեն և վրացերեն նյութերի բացթողումները նա
պատճառաբանում է այն բանով, որ իրեն ծանոթ գրադարան-
ներից ոչ մեկում չկան հայերեն և վրացերեն գրքերի և պար-
բերականների լրիվ հավաքածուներ. իր մատենագիտութիւն
ամենամեծ քացր նա համարում է անգլերեն, իտալերեն և
մասամբ ֆրանսերեն լեզուներով կովկասագիտական շատ
նյութերի պակասը:

Սակայն բոլոր թերութիւններն ու պակասները միասին
վերցրած ըստ էութեան չնչին են այն մեծ աշխատանքի, այն
դրականի հանդեպ, որ ամփոփված է «Կովկասի և Անդրկով-
կասի մատենագիտութեան» մեջ: Այն եղավ և մնում է լավա-
զույն մատենագիտական տեղեկատու և կովկասյան ազգերի
վերաբերյալ:

Այդ մատենագիտությունը մանավանդ մեծ ավանդ էր հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, աշխարհագրությունը ուսումնասիրելու դարձում։ Միանսարյանցի մատենագիտության մի հավաքվեց և հրապարակ հանվեց բավական քանակով նյութ ուսումնասիրողների և հետաքրքրվողների համար։

Միանսարյանցի մեծ, տքնաջան աշխատանքի շնորհիվ հրապարակ եկած այդ հրաշալի աշխատությունը նյութերի հարստության մակարդակով եղել է և մնում է հայ մատենագիտության հոյակապ հուշարձաններից մեկը։

Ժամանակին մամուլում բավական թվով գրախոսություններ եղան¹, որոնցում ընդհանուր առմամբ լավ գնահատվեց Միանսարյանցի աշխատանքը։

Հետագայում էլ մի շարք առիթներով տարբեր գիտնականներ ու մատենագետներ բարձր գնահատական են տվել այս աշխատությանը։ Օրինակ, ռուս նշանավոր մատենագետ Վ. Բեժովը իր «Ասիայի մատենագիտության» մեջ (հտ. 3) «Կովկասի և Անդրկովկասի բնիկներ» գլխում Միանսարյանցի մատենագիտությունը իբրև ամենակարևորը դնում է ամենասկզբում։

Ն. Զդորնովը գրում է. «Կովկասի վերաբերյալ ամենանշանակալից աշխատությունը (մատենագիտությունը) Մ. Մ. Միանսարովինն է»²։

Միանսարյանցի մատենագիտությունը իր արժեքը պահպանել է նաև մեր ժամանակներում։ Օրինակ, ակադեմիկոս Ի. Կրաչկովսկին գրում է. «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտությանը» դիմում եմ հաճախ տեղեկանքներ ստա-

¹ Օրինակ, «Биржевые ведомости», 1876, № 145, «Голос», 1876, № 135. «Кавказ», 1876, №№ 81, 82 85, 86, 88. «Новое время», 1876, № 214, «Русский инвалид», 1876, № 214 (128). «С.-Петербургские ведомости», 1876, № 136. «Тифлисский вестник», 1876, № 150. «Известия кавказского отдела имп. русск. геогр. общества», № 4, стр. 236-241 «Litter. centrablatt.», 1877, № 2.

² И. В. Здобнов История русской библиографии... стр. 406.

նալու համար¹։ Ապա ավելացնում է, որ այդ մատենագիտության «մեծ ծառայությունների ճանաչումը հավաստվեց անմիջապես և պահպանվեց մինչև մեր օրերը»։ Ականավոր գիտնականի այս և մի քանի այլ գնահատականները, տրված Միանսարյանցի աշխատությանը, անշուշտ, կարևոր են։ Ուշագրավ է նաև, որ Ի. Կրաչկովսկին ի տարբերություն մյուս ուսումնասիրողների հատկապես նշում է, որ Միանսարյանցը հայ է, ապա նրան համարում է հայկական և ուսական մատենագիտության ներկայացուցիչ և առհասարակ շատ ջերմ է խոսում մեր երախտավոր հայրենակցի մասին։

Միանսարյանցի մատենագիտությունը իր զերը խաղաց նաև հայ մատենագիտության զարգացման գործում։ Հաջորդ հայ մատենագետները, գլխավորապես Գ. Զարրհանալյանն ու Ա. Ղազիկյանը բավականին օգտվել են «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտությունից», հղումներ արել ղեկի այդ աշխատությունը։

Ավելորդ չենք համարում երկու խոսքով էլ անդրադառնալ Միանսարյանցի մատենագիտության մի անստորագիր գրախոսությանը, որը տպագրվել է «Փորձի» (Թիֆլիս) 1876 թ. առաջին համարում (էջ 470—481) և ժամանակին շատ խուսակցությունների առիթ տվել։

Գրախոսության մեջ Միանսարյանցը և նրա աշխատությունը ամենախիստ քննադատության են ենթարկված։ Միանսարյանցը մեղադրվում է մատենագիտության ծավալը արհեստականորեն մեծացնելու համար։ Ասված է նույնիսկ, որ իբրև Միանսարյանցը մեծ տպատառերով է դործը շարել տվել, որպեսդի ծավալը մեծացնի (էջ 474)։ Սա նր մեղք է համարվում հայոց պատմության ժամանակագրությունը մատենագիտության մեջ գետնադնելը, դատապարտվում է Միանսարյանցը այն բանի համար, որ նա մի շարք հեղինակների և պատ-

¹ «Известия» АН СССР, отд. лит. и языка, 1951, т. 10, вып. 1, стр. 95.

² Նույն տեղում։

մական անձանց, հատկապես հայ գինվորականների մասին կենսագրական տեղեկություններ է տվել (էջ 472—474)։ Ապա զրախոսողը շատ պակասավոր է համարում գլուխներից մեկը («Հին ավանդություններ Կովկասի մասին...»), թեև դուրս մնացած ոչ մի գրքի կամ հոդվածի անուն չի տալիս։ Սխալ է համարում բաժինների ներսում նյութը ժամանակագրական կարգով դասավորելը (միակ ճիշտը համարում է այբբենականը), թեև չի հիմնավորում այդ կարծիքը։ Մեղադրում է Հեղինակին մատենագիտությանը այբբենական տեղեկատու ցանկ չկցելու համար, թեև Միանսարյանցը առաջաբանում ասել է, որ այդ ցանկը (միացյալ) լինելու է 2-րդ հատորի վերջում։

Այս և մի շարք այլ ոչ բավականաչափ հիմնավոր մեղադրանքները դարմանալի խստություն մը, ուշադրություն դարձնելով անհանդուրժողականության մը են ասված և ուղեկցվում են այնպիսի կոպիտ խոսքերով, ինչպես՝ «Ի՞նչ ցանցառություն», «Արդյոք բարբարոսություն չէ՞ այդ բանը գրացուցակում» և այլն։

Թեև զրախոսության մեջ կան նաև մի քանի ճիշտ դիտողություններ, սակայն Միանսարյանցի մատենագիտությանը ծանոթ ամեն ոք զրախոսությունը կարդալիս, կզգա նրա խիստ միտումնավոր բնույթը։ Իհարկե, Միանսարյանցի գործում թերություններ բիշ չեն, ընդ որում կան այնպիսի յուրջ թերություններ, որոնք չի նկատել զրախոսողը, սակայն զրանց մեծ մասը ամեն մի ժառաղուն մատենագիտությանը հատուկ թերություններ են, մյուս մասն էլ ժամանակի, փորձի պակասի արդյունք։ Եվ մի՞թե հրաշալի գործը թերություններով են զնահատում, մի՞թե տարիների մեծ ու օգտակար աշխատանքի մեջ խոշորացույցը ձեռքին պետք է թերություններ գտնել միայն, մի կողմ թողնելով ամենաակնառու արժանիքները։

Դրախոսողը չարամտորեն ամբողջ գործը համարում է անպետք և գտնում, որ Միանսարյանցը իրավունք չունի մատենագիտություն կազմելու, քանի որ նա նախկինում

Լրբեք այդ գործով չի զբաղվել: Անշուշտ, իրեն թաքցնող զրախոսողը չի իմացել, կամ ձևացրել է, թե չգիտի, որ Միանսարյանցը շատ տարիներ է զբաղվել թե՛ հայկական և՛ թե՛ Կովկասի մատենագիտությունը:

Այս շարամիտ զրախոսության զրդապատճառը պարզվում է վերջին երկու էջում: Այստեղ Միանսարյանցը առավել խիստ հարձակման է ենթարկվում այն քանի համար, որ իր ծանոթագրություններից մեկում Կ. Եզյանի «Ներքին կյանք հին Հայաստանի» աշխատությունը համարել է ոչ ինքնուրույն, այլ տարբեր ուսումնասիրությունների հիման վրա կազմված: Գրախոսողը փառաբանելով այդ գիրքը, գրում է, որ Միանսարյանցը «անձնական հաշիվներ» է մտցրել պետության զրամով հրատարակված գրքում:

Մենք չգիտենք անձնական ինչ հարաբերությունների մեջ են եղել Միանսարյանցը և Եզյանը, բայց հաստատ կարող ենք ասել, որ զրախոսությունը գրված է իրոք զուտ անձնական դիրքերից: Եվ ցավալի է, որ այն զնայում, երբ ռուսական մամուլը, առանձին ռուս մտավորականներ բարձր գնահատական են տալիս Միանսարյանցի մատենագիտությանը, հայոց մամուլը իր սովորության համաձայն անձնական հաշիվը մեջ զցելով՝ ցեխ է չպրտում հայրենական մեծ աշխատանքի վրա:



Միանսարյանցը շուրջ 20 տարի զբաղվեց մատենագիտությամբ: Նա նոր շրջանի առաջին հայ մտավորականն էր, որ զբաղված լինելով պաշտոնական գործերով, դարձավ նաև մասնագետ մատենագիտության բնագավառում: Միանսարյանցից մնալից մատենագիտական ժառանգությունը հարուստ է, մանավանդ, եթե նկատի ունենանք նրա ժամանակի հայկական իրականությունը: Սակայն նրա հիմնական նպատակը, երազանքը՝ հրատարակել հայկական ազգային մեծ

մատենագիտութիւն, այսինքն՝ հայ տպագիր արտադրանքի
ընդհանուր մատենագիտութիւն, շիրականացավ: Նրա կազ-
մած այդ մատենագիտութիւն միայն առանձին հատվածները
տարրեր առիթներով հրատարակվեցին և մանավանդ տեղ
յտան նրա երկրագիտական Ռուսական և Անգրական մա-
տենագիտութիւն» առաջին հատորի մեջ: Երկրորդ հատորում
հայկական մատենագիտութիւն նույնքան ավելի մեծ չափով
պետք է տեղ գտնեն (արդյոք դա չէ՞ր այս հատորի լույս
տեսնելու պատճառներէն մեկը):

Միանսարյանցի հայկական մեծ մատենագիտութիւնը
բոտ որոշ տեղեկութիւնների հիմնականում պատրաստ է
եղել, բայց մնացել է անտիպ: Ահա թե ինչ է գրում այդ
մասին Գ. Աղանյանցը. «Հանդուցյալ Միքայել Միանսարյան-
ցը երկար տարիներ նվիրել էր հայերեն գրքերի անունների
համարելուն և երբ արդեն բավականին հաջողած էր յուր
ձեռնարկութիւն մեջ և պատրաստվում էր տպագրութիւն
հանձնել յուր գրացուցակը, մահը անկատար թողեց նորա
այդ գործը»¹:

Այժմ դժուար է պնդել, թե այս մատենագիտութիւն չհրա-
տարակվելու պատճառը հեղինակի մահն է եղել: Արդյոք
միեւնոյն պատճառով չէ՞, որ չհրատարակվեցին թե՛ Ռուս-
կասի և Անգրական մատենագիտութիւն» երկրորդ հայկա-
կան հատորը և՛ թե այս մատենագիտութիւնը:

Այդպէս, Միանսարյանցի ամենակարեւոր աշխատութիւնը,
շատ տարիների նրա ջանքերի արդիւնքը լույս չտեսավ:

Բայց Միանսարյանցի մահից երեք տարի անց, նման
բնույթի մի ուրիշ մատենագիտութիւն հրատարակվեց: Այն
ինչ շահողակից Միանսարյանցին անել Պետերբուրգում, հա-
ջողակից Գ. Զարհանալյանին անել Վենետիկում:

¹ ՄԱՐԺԱՊԱՆՔ, 1885, № 7, էջ 108:

ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲՀԱՆԱԼՅԱՆ

Հայ նոր մատենագիտության նշանավոր դեմքերից ևղավ Գ. Զարբհանայանը, հիմնականում բանասեր, մանավանդ հայ հին դպրության հմուտ մասնագետ, որ նշանակալից գործ կատարեց նաև իբրև մատենագետ և ոչ միայն «Հայկական մատենագիտություն» իր հայտնի աշխատությամբ, այլև ուրիշ աշխատություններով և առհասարակ իր ամբողջ գործունեությամբ:

Գարեգին Զարբհանայանը՝ ծնվել է 1827 թվականին Կ. Պոլսում, Տեղում ստացել է նախնական կրթություն, ապա տասը տարեկան հասակում նրան տարել են Վենետիկ՝ Ս. Ղազար, Այստեղ ևղել է Գարրիել Այվազովսկու աշակերտը, իսկ 1850 թվականին արդեն ինքն էր ուսուցչություն անում վանքի դպրոցում: Ս. Ղազարի միաբանությունում տարբեր ժամանակներ վարել է մի շարք համեստ պաշտոններ՝ տնտես, տպարանապետ (1856—1858), վերակացու, քարտուղար, հյուրընկալ (քահանա է ձեռնադրվել մոտ 1847 թվականին):

1858—1868 թվականներին ուղարկվել է Կ. Պոլիս Բերայի Մխիթարյան վարժարանում իբրև ուսուցիչ աշխատելու: Այդ

շրջանում է, որ Պոլսում բռնկեց սև ցավի (խուլերայի) ահա-
վոր համաճարակը: Զարբհանալյանը այդ օրերին հայտնի
դարձավ իր ցուցարներած անձնվիրությունը՝ տառապողներին
օդտակար լինելու գործում: Ս. Երեմյանը այսպես է նկարա-
դրում Զարբհանալյանի գործելակերպը այդ դաժան օրերին.
«...մինչդեռ շատ եկեղեցականներ, որ ի պաշտոնն ժողո-
վրդյան հոգևոր պետի պաշտոնն կվարեն ու կվայելեն, մա-
հադուշակ սաստեն սաստյալ՝ անմխիթար կթողնեն հոգևոր
մխիթարության կարոտ հիվանդները, Հ. Գարեգին իբրև օգ-
նական ժողովրդապետի՝ հիվանդաց բանակին մեջ աներկյուղ
և անձնվեր ման կու գա. ննջեցյալը գերեզման կտանի, օր-
հասականը հավիտենականության կպատրաստե, անմխիթա-
րը կմխիթարե, լքյալին արիություն կներշնչե, տկարին դեղ
կու տա, քաղցյալին կերակուր, սնունդ կհայթայթե, շարաթ-
ներով, ամիսներով քաջությամբ նույն ահարեկիչ պաշտոնը
կվարե. և այդ աննշան եկեղեցականը ոչ միայն հաշս իր
փոքրաթիվ հասարակության հոգևոր մեծ դուցազն մը կը-
հանդիսանա, այլ միեւնույն ատեն իր արիական գործունեու-
թյունը կտարածե Կ. Պոլսո մեջ»¹:

Զարբհանալյանը Պոլսում դառնում է կարիքավոր և տա-
ռապյալ մարդկանց սիրելին:

Ինչքան անձնադու՜ է լինում Զարբհանալյանը համաճա-
րակի շրջանում և այնքան մեծ է լինում նրա օգնությունը
տուժածներին, որ թուրքական կառավարությունը նրան հա-
տուկ սլարգեի է արժանացնում:

Կ. Պոլիսը Զարբհանալյանը թողնում է տեղի հայության
մեջ հատուկացող հասունյան և հակահասունյան ամօթայի
սլայքարից առաջ ու դրանով ազատվում դժվարին կացու-
թյունից (իբրև կաթուղի սլայքարին մասնակցելու դնսրում
անհաճո վիճակի մեջ կարող էր ընկնել): Նա նորից հաս-
տատվում է խաղաղ Ս. Ղազարում:

1869-ին արքահայր Հյուրմյուղյանի հետ Զարբհանալյա-
նը այցելում է մի քանի քաղաքներ, այդ թվում Հոռոմ: 1875-ին

¹ «Բազմավեպ» 1901, № 3, հավելված, էջ Ե-Զ.

յինում է Ղրիմում: Ապա միաբանության գործերով մեկնել է Փարիզ և այնտեղ մնում այս բազմաթի հայտնի պաշարման ժամանակ:

Զարբհանալյանը Վենետիկի Մխիթարյանների մեջ իբրև անհատ եղել է ամենամեծ տոններից մեկը: Բավական է հիշենք, որ մի շարք հողվածներ և գրքեր նա լույս է ընծայել անստորագիր: Եվ առհասարակ, բոլոր տեղեկությունների նա մի մարդ էր, որ աշխատել է միշտ մնալ ստվերում, երբորդական դիրքի մեջ, աննկատ: Օրինակ, նա մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի հրաժարեցնի միաբանության անդամներին իր 50-ամյակը նշելու որոշումից: Գ. Զարբհանալյանի հեղաբարո, մարդասեր, մարդկանց օգնելու պատրաստակամ բնավորությունը չբացասողների մեջ նրա նկատմամբ սեր և անսահման համակրանք են առաջացրել:

Ավելի քան կես դար Զարբհանալյանը բանասիրական-մատենագիտական աշխատանք է կատարել¹ տալով մեծ ու շատ բովանդակալից արտադրանք:

Զարբհանալյանի առաջին աշխատությունները տպագրվում են Գ. Ալվազովսկու կողմից հիմնադրված «Բազմավկայում», 1850—1851 թվականներին այս հանդեսում հրապարակվում է Զարբհանալյանի «Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու» հոդվածը (1850, N 8, էջ 212, 1851, N 9, էջ 230—237): 1851-ին «Ներբողեան յերջանիկ նախահայր ուխտիս ի մեծն և ի լուսանորոգ Մխիթար» (1851, N 9, էջ 129—138, N 13, էջ 193—200):

Այնուհետև, Զարբհանալյանը դառնում է «Բազմավկայի» եռանդուն աշխատակիցներից մեկը: Նրա առաջին հոդվածները գրվել են գրաբար, բայց շուտով սկսել է գրել աշխարհաբար և այդպես շարունակել մինչև կյանքի վերջը¹:

¹ Ժամանակի սովորության համաձայն Զարբհանալյանը իր աշխարհաբար աշխատությունների վերնագրերը գրում էր գրաբար: Կյանքի վերջուկարծես սրանից էլ է հրաժարվում. օրինակ, 1863 թվականի «Պատմութիւն հայերէն դպրութեանց» վերնագրեր նույն գրքի 1897 թ. հրատարակության մեջ դառնում է «Հայկական հին դպրության պատմություն»:



Գարեգին Զարրճանալյան

Հաջորդ տարին լույս է տեսնում Զարբհանայանի առաջին գործը առանձին գրքով, որը է «Ծառ յազագո քարեխառն-թեան սրբոց և զնշխարս նոցա և զպատկերս մեծարելոյ» (376 էջ), որ մի դավանաբանական գործ է ընդդեմ բողոքականության, նույնպես գրված գրաբար:

Տպարանապետի պաշտոն վարած ժամանակ, 1856-ին Զարբհանայանը հրատարակում է իր «Պատմութիւն մասն-նագրութեան հունաց, հռովմայեցոց և հարց եկեղեցոյ», աշխատութիւնը (իդ. 335 էջ), որը նախատեսված էր իբրև հունա-հռոմեական և եկեղեցական դասական գրականութիւն ուսումնական ձեռնարկ հայկական դպրոցների համար:

1865 թվականին լույս է տեսնում Զարբհանայանի «Պատմութիւն հայերէն գպրութեանց աշխատութիւն առաջին հատորը՝ «Հին մատենագրութիւն» (ԺԶ. 649 էջ), որը հետո ունեցավ երկու լրացված հրատարակութիւններ (վերնագրի որոշ փոփոխութիւններով)՝ 1886 թվականին (ԼԲ. 795 էջ) և 1897-ին (ԿԼԱ. 322 էջ): Երկրորդ հատորը՝ «Նոր մատենագրութիւն» լույս է տեսել 1878-ին (ԺԳ. 510 էջ), վերահրատարակվել է 1905-ին (ԺԲ. 412 էջ):

Այս աշխատութիւնը, հատկապես նրա առաջին հատորը, իրավամբ համարվում է Զարբհանայանի գլուխ-գործոցը: Դրանով Զարբհանայանը դարձավ հայ հին գրականութիւն առաջին լուրջ պատմաբանը:

Զարբհանայանը ահռելի աշխատանք է կատարել հայ և օտար բազմապիսի աղբյուրներից և ուսումնասիրութիւններից քաղելու, հավաքելու այն ամենը, ինչ որն է կերպ վերաբերում է հայոց մատենագրութիւնը, հնադույն ժամանակներից մինչև 19-րդ դարը: Առաջին անգամ ի մի հավաքված հայ ընթերցողին ներկայացավ հայ գրավոր հին ու միջնադարյան մշակույթը՝ գեղարվեստական, պատմական, փիլիսոփայական, կրոնական, վարքագրական, մաթեմատիկական, աստղաբաշխական, բժշկական և այլ ճյուղերի բազմահարուստ գրականութիւնը: Հայոց մամուլը ընդհանուր առմամբ քարձր գնահատեց այս աշխատութիւնը:

Հայոց հին մատենագրութիւնն ըստ Զարբհանալյանի սկսվում է 4-րդ դարից և հասնում է մինչև 13-րդ դարը, այդ շրջանին էլ նվիրված է աշխատութիւնն առաջին հատորը: 2-րդ հատորն սկսվում է 14-րդ դարից:

Զարբհանալյանը հավատարիմ մնալով հայ պատմական ավանդութիւն՝ հայերեն գրավոր խոսքի սկիզբը համարում է ավելի վաղ, քան Սահակ-Մեսրոպյան դպրութիւնը: Աշխատութիւնն սկզբի մասը նվիրված է քանահոգութիւնը՝ «Անպիր ժամանակ», Ապա գալիս է հիմնական մասը՝ «Գրավոր մատենագրութիւն», որը Զարբհանալյանը սկսում է 149 թվականից (մ. թ. ա.), Մար Աբաս Կատինայի գործով: Հասկանալի է, որ Զարբհանալյանը ընդունում է նախամաշտոցյան հայոց դրի (ավելի ճիշտ՝ դրերի) գոյութիւնը, մանավանդ օտար նշանագրերով հայերեն գրականութիւն հնարավորութիւնը:

Աշխատութիւնն մեջ ամփոփված են նաև բազմաթիվ կայևոր մատենագիտական տեղեկութիւններ, մեծ տեղ է տրված հայ գրքի պատմութիւնը: Առաջին հատորում խոսվում է հայ գրչադրերի մասին, ևրկրորդում տրված է հայ տպարարութիւն հակիրճ պատմութիւնը (սկսած Աբգար Դպիրից), ինչպես և հայ պարբերականների պատմական մի տեսութիւն:

Առաջին հատորի Ա հրատարակութիւնն ենթավերնագիրն էր «Ի պէտս ուսման ազգային վարժարանաց», մինչդեռ, ինչ խոսք, աշխատութիւնը բարդ էր դպրոցների համար: Այդ հաշիւի առեկտով է, որ գրքի 1897 թ. հրատարակութիւնն վրահեղինակը զրկ է «Բարձրագոյն դպրոցաց համար» ենթավերնագիրը:

Այս աշխատութիւնը գրելու համար Զարբհանալյանը մատենագիտական ընդլայն հսկայական աշխատանք պիտի կատարեր: «Արարատը» (էջմիածին), որ Զարբհանալյանի մահւման առթիւ ընդհանուր առմամբ մի անբարյացկամ հոգոված տպագրեց, չկարողացավ շնչել «Պատմութիւն հայերէն դրպութեանց»-ը ստեղծելու համար անհրաժեշտ մատենագիտա-

կան-քանասիրական աշխատանքի նսկայական շափերը։
 Ենա,— գրում է հոգվածագիրը Զարրհանալյանի մասին.— Էշ
 միայն այնքան ցրիվ ընկած, անկյուններում, ձեռագրերում
 թաքնված պատմական անհայտ հիշատակարանները պիտի
 ժողովեր, նյութերը դասավորեր, ամեն միևի մասին զա-
 փար պիտի կազմեր, այլև պիտի մշակեր կապակցյալ, դա-
 րեղար մի մատենագրության պատմություն տար յուր ելեէ-
 ներով, կրած փոփոխություններով, պատճառներով և նետե-
 վանքներով։ Ոչ միայն լուկ ցանկություն, հոանդ, աշխատանք
 և լայնածավալ ծանոթություն են հարկավոր դորա համար,
 այլև զորեղ հիշողություն և իրերի ուղիղ ըմբռնումն¹։

Զարրհանալյանի այս աշխատության մեջ կան նաև գուտ
 մատենագիտական մասեր, ինչպես, օրինակ, առաջին հա-
 տորի սկզբում հղած «Պատկեր հայ դպրության ըստ յուրա-
 քանչյուր դարուց» տախտակը։

Այնուհետև, Զարրհանալյանը առանձին գրքերով հրատա-
 րակել է հետևյալ աշխատությունները. 1874-ին՝ «Պատմու-
 թյուն մատենագրության միջին և նոր դարուց ի Արևմտաս-
 աշխատության» (արևմտահվրոպական գրականության պատ-
 մություն) երկու հատորները (հտ. Ա՝ 434 էջ, հտ. Բ՝ 515 էջ)
 և մի թարգմանություն՝ «Մայր առաջին դաստիարակ ման-
 կության» (448 էջ), որը հրեխանների մայրական դաստիա-
 րակության հարցերին նվիրված մի գիրք է (ուշագրավ է, որ
 մատենագիտությունից հետո այս հարցի մասին, ինչպես
 տեսանք, մի թարգմանական գիրք էլ հրատարակել է Լի-
 քայիլ Միանսարյանցը), 1882-ին՝ «Աստվածամայրն ի
 լուրդոտ» (119 էջ), 1883-ին՝ «Հայկական մատենագիտու-
 թյուն», (ԼԹ, 734 էջ), 1889-ին՝ «Մատենադարան հայկական
 թարգմանությանց նախնյաց», (չա, 783 էջ), 1895-ին՝ «Պատ-
 մություն հայկական տպագրության» (284 էջ), և «Ուսումնա-

¹ «Արաբատ», 1901, մայիս—հունիս, էջ 302—303։

² Այսուհետև Գ. Զարրհանալյանի աշխատությունների վերնագրերը
 գրում ենք նոր ուղղագրությամբ։

սիրությունք հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս
ԺԴ—ԺԹ դար» (402 էջ)։

Կատարել է նաև մի շարք թարգմանություններ, կազմել
բնագրեր (Պլատոնի, Փիլոն Երրայեցու հայերեն հին թարգ-
մանությունների)։

Սկսել և անավարտ է թողել հայկական դպրոցների պատ-
մությունը և այլ գործեր¹։

Ընդհանրապես Զարրհանայանը ամենաբեղմնավոր ու
արդասավոր մխիթարյան բանասերներից է հղել։ Նա իր թո-
ղած դիտական աշխատություններով աշխարհի խոշորագույն
հայագետների շարքին է կանգնում։ Ու թեև այսօր հայ, ան-
սիկ և Լիբուպական զրահանության պատմությանը վերաբե-
րող մի շարք ավելի նոր աշխատություններ կան հայերեն
լեզվով, բայց Զարրհանայանի գործերը, մանավանդ՝ «Պատ-
մություն հայերեն դպրությանց»-ը և «Մատենագարան հայ-
կական թարգմանությանց նախնյաց»-ը մնում են միանգա-
մայն պիտանի և ծանրակշիռ իրենց գիտական արժեքով։

Հայոց սլարբերական մամուլը մի շարք ղեկավարում բարձր
գիտնական Զարրհանայանի աշխատությունները (գլխավո-
րապես հիշյալ Իրկուսը), բայց և ևրեմն թույլ տվեց նաև ոչ
ճիշտ վերաբերմունք։ Այս դեպքում, թեևս, զեր է խաղացել
նաև որոշ անձանց ոչ լայնախոհ վերաբերմունքը կապված
դավանաբանական տարբերությունների հետ, թեև դա ոչ միակ,
ոչ էլ դիտավոր պատճառը կարող էր լինել (հիշենք, որ հայ
մամուլի մեջ ոչ ճիշտ վերաբերմունք հղել է նաև շատ ոչ կա-
թոլիկ մտավորականների, այդ թվում, ինչպես տեսանք,
Լիստոսարյանցի նկատմամբ)։

Ախիրորդ շենք համարում այստեղ բերել Զարրհանայանի

¹ Դ. Զարրհանայանի կյանքի և գործի մասին հեղվածներ տե՛ս
«Արևագանք», 1883, № 22, էջ 322, «Բազմավեպ», 1898, էջ 48—49,
«Պատկեր», 1897—98, էջ 463, «Արարատ», 1901, էջ 301—304, «Արևել-
յան մամուլ», 1901, էջ 256, «Արմենիա», 1901, № 26, «Բազմավեպ»,
1901, № 3, Հավելված, «Բյուզանդիոն», 1901, № 1328—9, «Մշակ», 1901,
№ 55, «Մուրճ», 1901, № 4, «Տարազ», 1901, № 10 և այլն։

գիտական վաստակի վերաբերյալ մի կարծիք. ցույց տալու համար ժամանակին տիրապետած որոշ կարգի մտայնության բնույթը. «Զքննել այն, ինչ որ սրբազան Նույնը կտակել է մեզ, առանց վարանելու բնդունել և պաշտպանել ինչ որ սուրբ հայրերը մի անգամ բնդունել են՝ այդ ամենը մի ուղղափառ կաթոլիկի ամենամեծ առաքինությանն է. այդ և եղել է Վենետիկի միաբանության գլխավոր սկզբունքն ու զավանանքը և դարերի ընթացքում տիրել է նոցա գրական գործունեության վերա, միշտ պահելով վենետիկցոց ժողովողի (կոմպիլյատոր) վիճակում. որքան էլ լայնածավալ և բազմահատոր լինին նոցա գործերը: Աչք փակել նոր կարծիքների վերա, չշեղվել մի անգամ գծած ճանապարհից, նույնը կրկրենել հերքվելուց հետո էլ, զարմանալի և աչքի ընկնող երևույթ է: Այս ժայրահեղ պահպանողականությունը փայլել է ականավոր Մխիթարյանների մեջ, նույնը նկատվում է և Զարհանայանի երկերի մեջ: Անդու աշխատանք, մանրակրկիտ հետախուզություն, սեր դեպի ամեն մի գրիչ շարժողի երկր, համբերություն, տոկունություն և ոգևորություն... և մեր ձեռքը հասել են հայ գրականության նշխարաց հիշողությունները իրենց հեղինակներով ի մի ամփոփած և կորստից ու փոշուց փրկված:

Մյուս կողմից բազմակողմանի ուսումնասիրության յեռություն, ժայրահեղ պահպանողականությունն այնպիսի կարծիքների, որ արդեն գիտությունը յուր փաստերով հերքել է (Ադամի լեզուն հայոց լեզու): Աղբյուրները լրիվ հիշելու անփութությունը, թեր և դեմ կարծիքների անաշու և համբերատար վերաբերության պակասությունը աչքի ընկնող խոշոր պակասություններ են, որոնք նորա ահագին աշխատության մեջ և կյանքի գնով լույս աշխարհ ընծայած հատորների արժեքը իջեցնում են լուրջ անմշակ հավաքածուների շարքը, օժանդակ միջոցներ «գրականության պատմություն» գրողի համար»¹:

1 «Արարատ», 1901, էջ 303.

եվ այսպես, Մխիթարյանների և մասնավորապես Ջարր-հանալյանի գիտական աշխատանքի հիմնական թերությունը համարվում է հայկական պատմական ավանդույթին հավատալն ու հավատարիմ մնալը, ժամանակի բանասիրության նոր կարծիքները հաշվի չառնելը, և այս պատճառով մխիթարյան գիտնականները այդ թվում և Ջարրհանալյանը համարվում են սոսկ նյութեր հավաքողներ և կցկցողներ (կոմպիլատորներ), իսկ նրանց բոլոր աշխատությունները լրիվ անմշակ հավաքածուների շարք, օժանդակ միջոցներ» և այլն:

Քանի որ հայ նոր մատենագիտությունը հիմնադրվեց ու պարզացավ ղրխավորապես Մխիթարյանների կողմից, նրանց գիտական մթնոլորտում, ուստի անհրաժեշտ է երկու խոսքով ս.նդրադառնալ վերը բերված բավական խիստ զնահատակա-նիրն, որը ցավոք տարածված է եղել:

Որ հայ պատմական ավանդույթին հավատ ընծայելը պատմապիտական ճիշտ մոտեցում է եղել, այժմ արդեն շատերն են ընդունում, բանի որ եվրոպական նոր բանասիրու-թյունը ոչուր փաստերովս՝ ճշբքեց» հնուց եկող մի շարք դրույթներ, որոնք այսօր նորից վերականգնված են: Մենք դեռ կանգնողադառնանք այս հարցին, այժմ ասենք միայն, որ Գ. Ջարրհանալյանը և հայ պատմական ավանդույթին հետե-վող այլ հեղինակներ շատ հարցերում ավելի ճիշտ դուրս եկան, քան այդ ավանդույթը ճշբրբող մի շարք գիտնական-ներ, թաւական է հիշել հայոց պատմահորը՝ Խորենացուն դարից դար քաշքշելը նոր շրջանի բանասերների կողմից, իսկ այժմ նորագույն գիտության կողմից Խորենացին նորից 5-րդ դար վերադարձվեց, այսինքն՝ այնտեղ, ուր նրան ան-խախտ դնում էին Մ. Չամչյանը, Ս. Սոմալյանը, Գ. Ջարրհա-նալյանը, Ղ. Արիշանը և ուրիշներ:

Ճիշտ չէ նաև Մխիթարյանների ստեղծած աշխատութուն-ները «անմշակ հավաքածուների շարք» անվանելը: Փաստ է, որ արդ աշխատութուններից շատերը մինչև այժմ էլ մնացին չպերադանցված իրենց բնագավառներում (հիշենք Յնոր բառ-դիրք հայկադեան լեզուի»-ն, նաև ՔԱՔԺԻՆ»-ը, Ղ. Արիշանի

պատմաաշխարհագրական երկերը. Հ. Տաշյանի «Յուդայական և ռազմագիտական»-ը, Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը և այլն»: Այժմ ոչ ոք կամ գրեթե ոչ ոք Մխիթարյանների աշխատությունների մեջ վերոհիշյալ կարգի արատ չի նշում:

Վերը բերված կարծիքի մեջ մի ճիշտ դիտողություն կա Մխիթարյան գիտնականների աշխատանքի մասին, այն է. «Աղբյուրները լրիվ հիշելու անփութություն»: Սա, ցավոք, հատուկ է Մխիթարյան գիտնականների մեծ մասին, այդ թվում Ալիշանի և Զարբանալյանի պես խոշոր բանասերներին: Սա մատենագիտական բնույթի թերություն է, որ հաճախ շատ է դժվարացնում ընթերցողի և ուսումնասիրողի գործը: Այս կամ այն գրքում. հոգվածում բերվում է քաղվածք, մի կարևոր վկայություն, և չի նշվում աղբյուրը, որտեղից է վերցված: Հարկ է լինում լրացուցիչ. հաճախ շատ երկարատև որոնումներ անել մի փոքր արտահայտության, քաղվածքի աղբյուրը գտնելու համար, իսկ երբեմն էլ որոնումները հաջողությամբ չեն պսակվում: Եվ հետարրբարական է, որ հայկական նոր մատենագիտության զարգացման գլխավոր կենտրոնում է տեղ գտել մատենագիտական բնույթի այդ թերացումը:

Այժմ տեսնենք ինչպիսիք են Զարբանալյանի մատենագիտական աշխատությունները:

Զարբանալյանը, տեսանք, որ բավական հարուստ գրական ժառանգություն է թողել: Այդտեղ մատենագիտական արժեք ունեն մի շարք գործեր, տպված թե՛ առանձին գրքերով, թե՛ «Բազմավեպի» էջերում: Սակայն դուստ մատենագիտական աշխատություններն են «Հայկական մատենագիտությունը», հնատիպերի ժամանակագրական ցանկի հետ, «Մատենադարան հայկական թարգմանություններ»-ը՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագրապահարան (անավարտ), ինչպես և հայ տպագիր գրքի պատմությանը նվիրված նրա աշխատությունները, մանավանդ՝ «Պատմություն

Հայկական տպագրության...-ը, Հայ Դնատիպ գրքերի ցանկով Հանդերձ¹։

Նշենք նաև, որ Զարրհանալյանը ընդհանրապես ունեցել է մատենագիտական հսկայական պաշար։ Դրան նպաստել է նրա առասպելական Հիշողությունը։ Ըստ տեղեկությունների Զարրհանալյանի ուժեղ Հիշողությունը պահպանվել է նաև կյանքի վերջին շրջանում, երբ կիսաանդամալույծ ժերուկը այլևս գրելու կարողություն չուներ։ Ս. Երեմյանը հիշում է. «Բանասիրական, պատմական և ընտանեկան հնագույն տեղեկություններ և Հիշատակները մանրամասնորեն և անսխալ կերպով կհաղորդեր այլոց, նա հազվադիպ հիշատակարան մ'էր, իր դարմանալի Հիշողությունը մինչև նույնիսկ օրնառական դրից մեջ կգործեր»²։

Անշուշտ, Զարրհանալյանի մատենագիտական աշխատությունների մեջ շատ կարևոր է Հայկական մատենագիտությունը, որի մասին և արժե փոքր-ինչ ավելի հանգամանալից խոսել։

Ըրիվ անունն է. Հայկական մատենագիտություն։ Այբուրենական ցուցակ տպագրության գյուտեն մինչև առ մեզ և դած հայեւէն հրատարակւոյաւց։ Վեճետիկ, Մխիթարյան տպարան, 1883։ Ինչպես Զարրհանալյանի մյուս գրքերում, այստեղ էլ ախողոսաթերթին հեղինակը նշված չէ։ Վերնախորագրում տրված է վերնագրի Ֆրանսերեն թարգմանությունը՝ Bibliographie Armenienne։ Սրանով վավերացվում էր այն, որ Զարրհանալյանը և վրոպական մի շարք լեզուներում օղ-

1 Կա ենթադրություն, որ Զարրհանալյանին է նաև «Թագմավեպի» 1861—1862 թթ. համարներում տպագրված «Պատկեր Հայկական դպրության» մատենագիտությունը, որ թիչ հավանական է։ Մենք համեմատեցինք այդ ցանկի մի շարք կողմերը (Հայ հին հեղինակների անունները, հերթականությունը և այլն) Զարրհանալյանի «Պատմություն Հայերեն գրություն»-ի, մասնավորապես այնտեղ եղած «Պատկեր Հայ դպրության» մատենագիտության հետ։ Ամեն ինչ խոսում էր այն բանի օգտին, որ «Թագմավեպի» «Պատկեր»-ի հեղինակը Զարրհանալյանը չէ։

2 «Թագմավեպ», 1901, հավելված, էջ է։

առգործվող բիրիժագրաֆիա հունական բառի գիմաց գնում էր մատենագիտություն հայերեն բառը, Սրանից հետո է. որ մատենագիտություն բառը բիրիժագրաֆիայի իմաստով հայերենում սկսեց կայունանալ¹. թեև մինչև վերջ էլ մնաց ավելի լայն ըմբռնմամբ:

Զարբհանալյանի աշխատությունը ինչպես գիտենք, Ի. Փափազյանի ձեռագիր ցուցակի (հայ տպագիր գիրքը 1665—1800 թ.թ.) հիման վրա է կազմվել. սակայն անկասկած է, որ որքան էլ մոտ լինեիր լրիվության Ի. Փափազյանի ցուցակը, միևնույն է, այնտեղ նշված գրքերը Զարբհանալյանի ամբողջ մատենագիտության մեջ ընդգրկված գրքերի մեկ հինգերորդն էլ չէին լինի:

Ըստ տեղեկությունների, Գ. Զարբհանալյանը բացի Ի. Փափազյանի ձեռագիր մատենագիտությունից օգտվել է նաև Վիեննայի Մխիթարյաններից Ե. Գաֆթանյանի կազմած մեծածավալ ցուցակից: «Այդ ցուցակն է,— գրում է Թևոդիկը,— որ ատենոք գիտցած է մասամբ օգտվել շ. Զարպհանալյան² 1883-ին տպագրության հանձնած իր «Հայկական մատենագիտության» համար»:

Երբ լույս տեսավ Զարբհանալյանի մատենագիտությունը, ղեռն հայտնի չէր Հակոբ Մեղապարտի տպագրական աշխատանքը, ավելի ճիշտ, ղեռն բանասիրությանը հայտնի չէր 1513 թվականի Պատարադատետրը, ուր նշված է տպագրիչի անունը, գրքի հրատարակման թվականն ու վայրը, հայտնի չէր նաև Պարզատումարը, որի օրացույցային առաջին տարին 1512-ն է: Այս պատճառով Զարբհանալյանի մատենագիտությունը ընդգրկում է հայ տպագիր գիրքը 1565-ից, այսինքն՝ այն ժամանակ առաջին հայ տպագրիչ համարվող Արզար Թոխաթցու Սաղմոսարանի հրատարակման տարուց մինչև 1883 թվականը:

¹ Նախքան այդ, ինչպես ասել ենք, ամենատարբեր անվանումներ էին առաջգործվում և ամենից շատ՝ մատենախոսություն:

² Թևոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 30.

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՅՐՈՒՐԵՆԱԿԱՆ ՁՈՒՑԱԿ

ՏՊԱԿՐՈՒԹԵԱՆ ԳԻՏԻՑԷՆ ՄԻԿԱԵԼԻ ԱՌ ՄԵՋ ԵՂԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԻՒԻԹԱՐԵԱՆ ՑԳԱՐԱՆ

Մատենագիտությունը բաղկացած է ներածականից, ուս-
նակիրճ տրվում է հայ տպագրության պատմության անսու-
թյունը, հայ հնատիպ գրքերի ժամանակագրական ցանկից
(վերնագրված է «1565—1900»-ի), բուն մատենագիտությու-
նից, այսինքն հայերեն տպագիր գրքերի այբբենական ցան-
կից և հայերեն պարբերականների փոքրիկ ցուցակից:

Իր այս գրքով Զարբհանալյանը իրականացրեց այն, ինչ
ուրիշները ժրագրել էին նախքան այդ:

Ընդունված է հայ նոր գիտական մատենագիտության
սկիզբը համարել Զարբհանալյանի այս աշխատությունը: Դա,
անշուշտ, որոշ հիմք ունի: Ժիշտ է, 19-րդ դարում, նախքան
այս գրքի լույս տեսնելը, ինչպես տեսանք, մատենագիտա-
կան մի շարք աշխատություններ հրատարակվել են, մանա-
վանդ փորձ էր արվել հայ տպագրության ամբողջական մա-
տենագիտություն կազմելու, սակայն Զարբհանալյանը առա-
ջինը հրապարակ հանեց հայ գրքի մի ընդհանուր մատենա-
գիտություն, որն իր նպատակով, ծրագրով (ընդգրկել հայե-
րեն տպագրված բոլոր գրքերը) և հայ տպագրության վերա-
բերյալ պարունակող տեղեկանքների բանակով աննախա-
դեպ էր հայոց մեջ և որոշ կողմերով մինչև այժմ էլ պահ-
պանել է իր արժեքը:

Ժիշտ է, շատ ավելի կատարյալ և լրացված էր Լև. Ղա-
զիկյանի ավելի ուշ լույս տեսած «Հայկական նոր մատենա-
գիտությունը», սակայն, քանի որ այն անավարտ մնաց, ընդ-
հատվեց ն տառի վրա, ուստի և այդ տառի մի մասի և հա-
ջորդ տառերի համար Զարբհանալյանի մատենագիտությունը
առայժմ մնում է անփոխարինելի մի տեղեկատու, որին այսօր
էլ հաճախ են դիմում բանասերները և տարբեր ընթերցողներ:
Ամեն դեպքում, հայ մշակույթի այս բնադավառում էլ Լխի-
թարյանները հղան ռազմիրա, և Զարբհանալյանի աշխատու-
թյունը շատ կարևոր հղավ հայ մատենագիտության հետագա
զարգացման համար:

Նախքան «Հայկական մատենագիտության» լույս տեսնելը
Գ. Զարբհանալյանը հայտարարություն հրապարակեց արդեն

մամուլի տակ գտնվող այդ աշխատության բնույթի մասին, Կովկասահայ թերթերից «Արձագանքում» 1883-ին տպագրված մի հոդվածում նույնպես խոսք կար արդեն տպագրվող մատենագիտության նպատակի և բնույթի մասին¹։

Աշխատությունը լույս տեսնելուց հետո եղան կարծիքներ, պրախոսականներ²։

Խոսվել է նաև Զարբհանալյանի այս աշխատության թերությունների մասին, երբեմն ավելորդ խստությամբ։ Մի կողմ թողնելով այն ճշմարտությունը, որ անթերի մատենագիտություն (և ընդհանրապես աշխատություն) չի կարող լինել, այսօր պետք է ընդունել, որ Զարբհանալյանի մատենագիտության թերությունները իրոք չափավորից ավելի են։ Ուայց իրավունք ունենք մոռանալու, որ ա) այդ աշխատությունը իր բնույթով առաջինն էր հայոց մեջ և բ) որ այն իր թերություններով հանդերձ այսօր էլ՝ 85 տարի իր լույս ընծայումից հետո մեծապես օգտագործվում է և շատ դեպքերում մնում անփոխարինելի։

Մի մատենագիտություն բնութագրելու համար կարևոր է նկատի առնել նրա կառուցվածքը։ Հաճախ հենց կառուցվածքից էլ սկսում են այս կամ այն մատենագիտությունը բնորոշելիս։

Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» կառուցվածքը այդ աշխատության առաջին թերություններից մեկն է։ Եթե ընտրվել կառուցվածքի մի ավելի ճիշտ սկզբունք, թերևս, չլիներ նաև մատենագիտության այլ բնույթի (կրկնություններ և այլն) թերությունների մի մասը։

Ինչպես տեսանք, աշխատության հնթավերնագիրն ասում է «Այրուրենական ցուցակ... հայերեն հրատարակությանց»։ Ուսկայն ի՞նչն է այրուրենական կարգի համար հիմք ընդուն-

¹ Հարո Նամակ Վենետիկից։—«Արձագանք», 1883, № 22, էջ 320—324։

² Օրինակ, Գ. Աղաեյանց Հայկական մատենագիտություն։—«Արձագանք», 1885, № 7, էջ 107—111, Արզամ, Մխիթարյան հարք և նորատիպ հայկական մատենագիտություն։—«Արևելք», Կ. Պոլիս, 1884, № 4, 5, 6։

ված՝ հեղինակների կամ թարգմանիչների ազգանունները. գրքերի վերնագրերը, թե՛ առարկաների կամ թեմաների անունները: Պարզվում է՝ ոչ մեկը և բոլորը միասին: Այլ կերպ ասած, մենք ունենք ոչ թե այրբնական կարգ, այլ այրբենական կարգախախտություն:

Իբրև օրինակ վերցնենք աշխատության հենց սկիզբը: Առաջին տողն է. «Արգարու թուղթ: Տե՛ս Հաբուրեհա, այսինքն՝ վերնագրից հղում է տրվում զեպի հեղինակը: Նույն բնույթի է երկրորդ նշումը. «Արդիաս հայերէն: Տե՛ս Անդրէաս Արուսթում: Նվ իրոք Լաբուրեհա-ի և Անդրէաս Արուսթում-ի տակ գտնում ենք համապատասխան հրատարակությունների: Սակայն առաջին էջում հեղինակներից զեպի վերնագրերը տրված այս երկու հղումներից հետո հաջորդ էջերում շատ երկեր պարզապես նկարագրված են վերնագրերի տակ. առանց հղումների զեպի այդ երկերի հեղինակները, ինչպես՝ Ազաոն (Մուլլեր), Ազգարանուրիւն (Խորենացու), Ազգային դիցազնակաւ. աշխարհն (Ս. Մանգինյանի), Ազնւ (Շմիդտի) և այլն: Թեև նկատվում է, որ Զարհանայանը փորձել է հետևյալ կարգը պահպանել՝ նոր հեղինակների երկերը նկարագրել վերնագրերի տակ և հեղինակների ազգանուններից տալ հղումներ զեպի այդ վերնագրերը. իսկ հին հեղինակների երկերը նկարագրել անմիջապես այդ հեղինակների անունների տակ: Այսպես 18 և 19-րդ դարերի հեղինակների մեծ մասի ազգանուններից (Ալիշան, Ազոնց, Այվազովսկի Գ., Բադրատունի Ա., Զամչյան, Սրբվանձտյան և այլն) տրվում են հղումներ զեպի նրանց երկերը: Մինչդեռ հին հեղինակների (Ազաթանգեղոս, Բուրանդ, Փարսեցի, Խորենացի, Անանիա Շիրակացի և այլն) երկիրը մեծ մասամբ տրվում են հենց հեղինակի անունների տակ:

Սակայն այս կարգն էլ ահա պահպանված չէ, ամիլի ճիշտ, խախտվում է շատ հաճախ: Այսպես, գտնում ենք նույն 18—19-րդ դարերի հեղինակների մի շարք ազգանուններ՝ որոնց տակ անմիջապես (առանց հղումի) նկարագրված են նրանց երկերը, և. և Գ. Արուսթաններից բացի, այդպիսի:

Լև՝ Պ. Գուրյանը, Մ. Զեբաղը, Ստ. Նազարյանցը, Բ. Նա-
դարյանցը, Ժ. Պատկանյանը, Մ. Նալբանդյանը, Հովհ. Ոս-
կերչյանը, Վ. Հյուզոն, Զ. Միլտոնը, Զ. Բայրոնը և ուրիշները:
Ըստ որում, այս հեղինակների երկերից մեկը կամ մյուսը
կարող է լինել նաև մերնադրի տակ նկարագրված:

Իսկ մի շարք հեղինակներ (Գ. Օտյան, Ստ. Յաղչյան,
է. Կսայան, Ռ. Պերպերյան և ուրիշն.) ընավ տեղ չեն գտել
այրենական շարքում, պետք է իմանալ նրանց երկերի
անունները՝ դրանք այրենական շարքում դնելու համար:

Հին հեղինակներից թեև մեծ մասի երկերը հեղինակի
տակ են նկարագրված (Թուգանդ, Ազաթանգեղոս, Նդիշն, Խո-
րենացի, Անանիա Շիրակացի և այլն), սակայն թիչ չեն
հղումները նաև հին հեղինակների անուններից դեպի նրանց
երկերը, ինչպես, օրինակ, Կյուրեղ Ալեքսանդրացու անունից
հղում է արված դեպի «Պարապմանց պիք» վերնագիրը,
Առսերի Սյունեցուց՝ դեպի «Ազամգիրք» վերնագիրը և
այլն:

Ուշագրավ է, որ հին հեղինակների անունների տակ նկա-
րագրված երկերը երբեմն նորից են նկարագրված, այս ան-
գամ վերնագրերի տակ:

Որևէ հետևողականությամբ չկա նաև այն հարցում, թե
այրենական կարգի մեջ իբրև գլխաբառ հեղինակների անուն-
նե՞րը պետք է դրվեն, ազգանուննե՞րը, թե՞ ըստ վայրերի
մականունները (Շիրակացի, Խորենացի և այլն):

Հին հեղինակների համար այս հարցը համեմատաբար
հեշտ սրևոր է լուծվել. ճիշտ կլիներ ամեն դեպքում անունը
համարել սկզբնաբառ այբբենական կարգի համար, ինչպես՝
Մովսես Կաղանդատվացի, Մովսես Խորենացի, Գրիգոր Նա-
րեկացի և այլն, բայց ոչ հակառակը (Կաղանկատվացի Մով-
սես, Խորենացի Մովսես, Նարեկացի Գրիգոր): Զարգանալ-
յանը մերթ մի կերպ, մերթ մյուս կերպ է վարվել: Այսպես,
Ղազար Փարպեցու, Կիրակոս Գանձակեցու, Խոսրով Անձեա-
ցու, Արիստակես Լաստիվերտցու, Գրիգոր Տաթևացու և շատ
ուրիշների համար անուններն է (Ղազար, Կիրակոս, Խոսրով

և այլն) օգտագործել իրրև գլխաբառ այրբենական կարգի մեջ. մինչդեռ Մովսես Խորենացու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Նարեկացու և ուրիշ հին հեղինակների համար գլխաբառ է բնութված տեղանվանական անունը Խորենացի, Լամբրոնացի, Նարեկացի և այլն: Գ տառի մեջ իրար հաջորդում են՝ Գրիգոր Մազիստրոս, Գրիգոր Սկեռացի, Գրիգոր Տաթևացի, բոլոր այս անունները տակ տրված են հեղինակների երկերի շարտարակաթյունները, սակայն նույն շարքում Գրիգոր Նարեկացի անվան տակ ոչինչ չկա, այլ հղում է տրված՝ օտև նարեկացի, և ն տառի մեջ այս անվան տակ էլ տրված են Գրիգոր Նարեկացու երկերը: Հին հեղինակների ղեպքում Լս նրանց երկերը երբեմն կրկնակի նկարագրված են նաև վերնագրի տակ:

Նոր շրջանի հեղինակների համար նրանց ազգանուններն են մեծ մասամբ դրված իրրև գլխաբառ, ինչպես՝ Հիկոյ Վիքրառ, Սարգսլան (Սարգիս), Պեշիկրաչլան (Մկրտիչ), Նավասարդեանգ (Ռազրատ) և այլն: Սակայն մի շարք ղեպերում էլ նոր շրջանի հեղինակի ոչ թե ազգանունը, այլ անունն է դարձել գլխաբառ, և այդ հեղինակը այրբենական շարքում տեղ է գտել ըստ իր անվան, ինչպես՝ Աղեհսանդր Տիումա, Աղեհսանդր Խուղարաչլանգ, Էովկն Արև և այլն:

Քացի անունների, ազգանունների ու վերնագրերի այսպիսի անկարգ այրբենական դասավորությունից նույն այրբենական շարքում կան նաև առարկայական վերնագրեր, ինչպես՝ Ա տառի մեջ Այրբենաւան բառի տակ հավարված են մի շարք այրբենարաններ վերնագրի տակ, ընդ որում, մի քանիսի վերնագրերը այլ բառերով են սկսվում, ինչպես «Տետրակ այրբենական», «Գիրք այրուրենից» և այլն: Նույն բնույթի է Դ տառի մեջ Դպրութեան գիրք վերնագիրը, որի տակ հավարված են տարրեր վերնագրեր ունեցող գրքեր:

Մատենագիտության այսպիսի անմիօրինակ կառուցվածքը, հասկանալի է, որ նորանոր սխալների տեղիք պիտի տար:

կի իրոք, այնտեղ կան նաև այսպիսի սխալներ՝ Աղեֆսանդր Տիմսուհի տակ նրա հեղինակությունների մեջ չկա «Մոնթէ Քրիսթոֆ», որը նկարագրված է վերնագրի տակ և գտնվում է Մ տառի մեջ, Կամ Հրվոյ Ղիֆոքո-ի տակ համարված այս հեղինակի Լրկերի մեջ չկան ռուբրեցիա Պորճիա, «Միյ Պլաս», «Դատապարտեալի մը վերջին օրերը» հրատարակությունները, պարզվում է, որ դրանք էլ վերնագրերի տակ համապատասխանաբար տրված են և, և Դ տառերի մեջ:

Շիլլերի «Օրլաննի կույսի» հայերեն երկու հրատարակությունները (Թիֆլիսի և Կ. Պոլսի՝ արեւելահայ ու արեւմտահայ լեզուներով) տարբեր տեղեր են ընկել՝ մեկը Շիլլեր-ի տակ, «Օրլաննի կույսը» վերնագրով, մյուսը Յ տառի մեջ «Յովհաննա Տ'Արք» վերնագրի տակ:

Բազմաթիվ դեպքերում Զարհանայանը զրբերի նկարագրությունների սկզբում դնում է իր հնարած վերնագրերը կամ իսկական վերնագրի իր վերափոխած տարբերակը՝ Սրինսի, Լե. Գարազաշանի «Քննական պատմութիւն Հայոց»-ի նկարագրության սկզբում կա «Պատմութիւն Հայոց» վերնագիրը, «Պարպարանութիւն Կողեհնուադ սաղմոսացն» գրքի (Վենետիկ, 1687) նկարագրությունն սկսվում է «Պարզարանութիւն Սաղմոսացն»՝ անստույգ վերնագրով, իսկ Հանուհի «Պատմապարտութիւն վարուցն և դործոց Նազըր Շահ թաղաւորին Պարսից» գրքի անվան սկզբում դրված է «Պատմութիւն Դահմադի» վերնագիրը, որ ժամանակին գործածվել է իբրև գրքի կարճ անուն:

Նման օրինակներ շատ-շատ են:

Նվ ալգաիս, մատենագիտության այբբենական շարքը բաղադրված է և՛ զրբերի իրական վերնագրերից, և՛ նրանց մտաքաժին անուններից, և՛ հեղինակների ազգանուններից, և՛ նրանց անուններից, և՛ առարկայական վերնագրերից, ու այդ ամենը անմիօրինակ: Կառուցվածքային այսպիսի խայտաբղետութեան մեջ հասկանալի է, որ երբեմն շատ է դժվարանում այս կամ այն անհրաժեշտ տեղեկանքն ստանալը, և ոգտվողը կարող է տլ բիլ թյուրիմացութունների մեջ ընկնել:

Ի. Փափազյանի մատենագիտությունը շատ պարզ կառուցվածք է ունեցել. Զարբհանայանը, բոտ հրեույթին, ցանկանալով իր աշխատությունը ավելի դյուրագտագործելի դարձնել՝ զիմել է նոր միջոցների, սակայն հակառակ արդյունքն է ստացվել: Ա. Ղազիկյանն այդ առթիվ գրում է. «Կենցած է դեռ Փափազյանի ձեռագիրը. կոկիկ և համակերելի գրագրով և գրաբար լեզվով գործ մը, արկն առած է Ն. Զարբհանայան բոլոր հին տպագրությունները. ուր էր, թե անոր ծրարին հետևած ընթացքը...»:

Այսքանը կառուցվածքի մասին: Բայց Զարբհանայանի մատենագիտության մեջ տեղ են գտել նաև այլ, ամենատարբեր բնույթի թերություններ, որոնք կարող է նկատել նրանից ամեն մի օգտվող, մանավանդ հաճախակի օգտվողը: Տարիներ շարունակ գործ ունենալով հայ գրքի հետ, մանավանդ զբաղված լինելով հայ հնատիպ գրչի մատենագիտությանը ու պատմությանը՝ մենք հաճախ ենք դիմել Զարբհանայանի մատենագիտությանը և այդ ընթացքում դիտել շատ վրիպումներ ու սխալներ, որոնց մի մասը նշել ենք մեզ մոտ:

Ստորև բերում ենք Զարբհանայանի մատենագիտության մեջ տեղ գտած առավել բնորոշ անճշտություններից օրինակներ, որոնք նախապես խմբավորել ենք բոտ բնույթի:

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԻ ՍԽԱԼՆԵՐ

Նոյնաճեմս Երևուզի «Գիրք համառօտ վասն իսկապես ճշմարիտ հաւատոյ» գիրքը բոտ Զարբհանայանի մատենագիտության (էջ 471—473) տպվել է 1658-ին (ՌՁՃՄԸ), իրականում այն լույս է տեսել 30 տարի այդ թվականից անց, Կղևմես Գալսեմսի «Միարանութիւն» գրքի 1-ին հատորի

1 Ա. Ղազիկյան շայկական նոր մատենագիտություն, շտ. 1, սյունակ Ի:

1690 թվականի հրատարակությունը մատենագիտության մեջ (էջ 307) նշված է իբրև 1680-ի տպագրություն, եռաշատուր էրզրումեցու «Գիրք բերականութեան»-ը կիվոռնոյում տպագրվել է 1696-ին, մատենագիտության մեջ տրված է իբրև 1691-ի տպագրության, նույն եռաշատուր էրզրումեցու «Համառոտութիւն րարոյականի» գիրքը նշված է իբրև 1739-ի հրատարակություն (էջ 257), մինչդեռ այն տպագրվել է 1709-ին, Հակոբ Նալյանի 1733 թ. 4. Պոլսում տպված «Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյս»-ի (էջ 652) հայոց թվականը նշված է ՌՃՀԲ (=1723), փոխանակ ՌՃՁԲ-ի (=1733), Վարդան Մարաբեգու «Գիրք աղօթից»-ի (4. Պոլիս, 1734) թվականը տպված է ՌՃՁԳ (էջ 639), փոխանակ ՌՃՁԳ. 4. Պոլսում 1734-ին տպված «Տաղարան»-ի թվականը նույնպիսիսիւ է տպված՝ ՌՃՁԳ (էջ 660) փոխանակ՝ ՌՃՁԳ. Պաղտատար Կարի «Պարզաբանութիւն բերականութեան» գրքի 1736 թվականի (4. Պոլիս) հրատարակության թվականը դարձել է 1738 (էջ 699), ներսևս կամբրոնացու «Ատենաբանութիւն»-ը, տպված 4. Պոլիս, 1749 թ., ըստ մատենագիտության (էջ 60) հայոց տարեթվի (ՃՌՀԸ=1729) տպագրվել է քսան տարի ավելի վաղ։ Հովհաննէս Հաննայի «Գիրք պատմութեան»-ը տպված է 4. Պոլիս, 1767 թ., բայց նկարագրության սկզբում դրված տարեթվի համաձայն լույս է տեսել 1763-ին, 4. Պոլսում 1787-ին տպագրված հորհրդարանական ջարդանալյանի մատենագիտության մեջ դրված է իբրև 1785-ի տպագրություն (էջ 280) և այլն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ ՎԵՐԱՐՆԵՐՈՂ ՍԽԱԼՆԵՐ

Նրեմիա Մեղրեցու «Թառգիրք»-ը և Վարդանի «Աշխարհացոյց»-ը 1728 թվականին իբրև մի գիրք տպագրվել են 4. Պոլսում Մարտիրոս Սարգսյանի տպարանում, Մատենագիտության մեջ (էջ 88) իբրև տպագրության վայր նշված է

Հիվոռոնն / ուի յԱլիկառնայ քաղաքի / մինչդեռ Երեմիայի Բառարանը այս քաղաքում տպագրվել է 1693-ին, Կոմս Մատթեոս Եվդոկացու թնորհուրդ աստուածապաշտութեանը-ը վննեւտիկյան տպագրիչ Թեոդոսիո Դեմետրիուի չրատարակությունն է (1775 թ.), Զարբանալյանի մատենագիտության մեջ (էջ 276) դարձել է Յովան Բիացյանի Ջիովաննո Պիացցո) չրատարակությունը Իզնատիոսի «Թուղթր»-ը 1753 թվականին տպագրվել է Կ. Պոլսում Ստեփանոս Պետրոսյանի տպարանում, Զարբանալյանի մատենագիտության մեջ դարձել է Աստվածատուրի տպագրությունն և այլն:

ՄԻ ԳԻՐՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ԻՐԵՆԻ ԻՐԱՌԻ ԳԻՐՔ

Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանց»-ը («Զայն առ քաղձալին», Կ. Պոլիս, 1717) դարձել է երկու գիրք՝ մեկն իբրև անթվակիր չրատարակություն՝ 113-րդ էջում, մյուսը իր ճիշտ թվականով՝ 575-րդ էջում: Կղեմես Գալանոսի «Քե-րական և տրամարանական ներածութիւն»-ը (Հոռմ 1645) նկարագրված է 307—308 էջերում Կղեմես-ի տակ և 697-ում Քերական-ի տակ: «Աղօթ Մատոյց և ժամագիրք» (Ամստերդամ, 1667 թ.),— նկարագրված է 24-րդ էջում Աղօթամատոյց-ի և 224-ում ժամագիրի մեծադիր-ի տակ: «Նոր կտակարան սրբոյ աւետարանի» (Վենետիկ, 1710) գիրքը նկարագրված է Աւետարան-ի (էջ 76) և Նոր կտակարան-ի տակ (էջ 503): «Գիրք զրգուկս այս պատմէս»-ն («Կտակգիրք», Կ. Պոլիս, 1710),— տրված է երկու անգամ Գիրք (էջ 130) և Կտակգիրք (էջ 312) բառերի տակ: Պետրոս և Գրիգոր Զանկեցիների «Համառօտ և շահաւետ քրիստոնէական»-ը (Վենետիկ, 1715) նկարագրված է Համառօտ-ի (էջ 319) և Քրիստոնէական-ի (էջ 714—715) տակ, իբրև երկու չրատարակություններ: «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից»-ի Կ. Պոլսի 1721 թվականի չրատարակությունը նկարագրված է երկու անգամ՝ մեկ (էջ 227) իբրև այդ գրքի 5-րդ, մեկ էլ (էջ

229) իբրև 17-րդ տպագրութիւն։ Այլերտ Մեծի «Գրախտ շողոյս»-ն (Վենետիկ, 1729) նույնպէս տրված է երկու անգամ՝ մե'րթ Այլերտ-ի, մե'րթ էլ Դրախտ-ի տակ։ Նույնը և Հակոբ Նալյանի «Գիրք կոչեցեալ քրիստոնէական»-ը (Կ. Պոլիս, 1737) տրված է և՛ 131-րդ, և 710-րդ էջերում։ Մատթեոս Եղիշեցու «Վարք սրբոյն Գրիգոր Լուսաւորչին» գիրքը (Վենետիկ, 1749) բերված է 253 և 573 էջերում իբրև առանձին հրատարակութիւններ։ «Գիրք աստիճան տալոյ» (Կ. Պոլիս, 1752) տրված է Դիբ (էջ 130) և Չեռնադչաթիւն (էջ 371—372) բառերի տակ։ Բաւարմիստի «Համառօտ քրիստոնէական»-ը (Վենետիկ, 1768) տրված է Արանաս-ի (Թարգմանչի անունն է, էջ 12) և Քրիստոնէական-ի (էջ 717) տակ։ Աթանաս Տալիսիմոնյանի «Համառօտ բերականութիւն»-ը (Վենետիկ, 1774) տրված է դարձյալ Արանաս-ի (էջ 11—12) և սուր Բերականութեան (էջ 706) տակ։ «Հանգամանք ուխտելոյ» (Հոռոմ, 1775) գիրքը կրկնված է 329 և 497 էջերում։ «Հանդիսական հոգեւոր երգք և մաղթանք» (Տրիեստ, 1777) գիրքը մասենադիտութեան մեջ մե'րթ նկարագրված է իր իսկական անունով (էջ 330), մե'րթ էլ իբրև «Երգք և մաղթանք հանդիսական հոգեւոր» (էջ 175)։ Գեորգ Միլեյմի «Ճառ վասն ծննդեան»-ը (Կ. Պոլիս, 1793) բերված է և՛ Դիորդ-ի (էջ 129), և Ճառ-ի տակ։ Ալեքսանդր Զուղայեցու «Գրքոյկ որ կոչի Աղօթամատոյց»-ը (Նոր-Նախիչեան, 1790) մատենադիտութեան մեջ միեւնոյն Աղօթամատոյց վերնագրով դարձել է երկու գիրք (էջ 23, 24) և այլն։

Մենք հաշիւեցինք Զարհանալյանի մատենագիտութեան մեջ (գլխավոր աշխատական ցուցակում) բոլոր այն գրքերի նկարագրութիւնները, որոնք ըստ եղած թվականների լույս են տեսել 1801 թվականից առաջ։ Ստացվեց 742 գիրք։ Ապա այդ քանակից հանեցինք կրկնակ նկարագրութիւնները, ինչպէս և սխալմամբ հին թվականներ ունեցողները, ստացվեց 655 հնատիպ գիրք։ Այսինքն՝ 87 նկարագրութիւններ ավելորդ էին։

Կրկնութիւնների մի մասը 'երեւի ինքը կաղմողն է արել, նույն հրատարակութիւնը տարբեր կերպ ներկայացնե-

լու նպատակով։ Սակայն որեւէ կերպ չի նշել, որ տվյալ նկարագրությունը գլխավորն է, մյուսը լրացուցիչ կամ, որ տվյալ գիրքը երկու անգամ է նկարագրված։ Սովորաբար մատենագիտությունների մեջ նույն գրքի գլխավոր և լրացուցիչ նկարագրությունները տարբերում են առաջինին համար տալով, ինչպես և այն ավելի լրիվ կատարելով իսկ լրացուցիչ մեում է առանց համար և լինում է ավելի կրճատ։ Զարհանայանը իր մատենագիտության նյութերը չի համարակալել (որ արդեն լուրջ թերի է), քայքայ նա կարող էր այլ նշաններով տարբերել մի գրքի մեկից ավելի նկարագրություններ։

Իսկ մի շարք դեպքերում էլ մի գիրքը երկուս է դարձել այլ պատճառներով. օրինակ, կազմողը երբեմն չի հիշել, որ տվյալ գիրքն արդեն նկարագրված է և նկարագրել է նորից։ Զարհանայանի մատենագիտության մեջ հնատիպ գրքերի նկարագրություններում տեղ գտած անճշտությունների, կրկնությունների մի մասը հետադայում թափանցել է հայ և օտարազգի բանասերների տարբեր աշխատությունները, անցել հոգվածից հոգված, գրքից գիրք։

Բերված այս անճշտությունները առայժմ վերաբերում էին հնատիպ գրքերին, ընդ որում, դրանցով չեն սպառվում այդ գրքերի նկարագրություններում եղած թերությունները։ Մինչդեռ կարելի է ենթադրել որ Զարհանայանի մատենագիտության մեջ համեմատաբար ճշգրիտ պետք է ներկայացվելին հենց հնատիպ գրքերը, քանի որ Զարհանայանը ձեռքի տակ ունեցել է հնատիպերի մի ցուցակ (Ի. Փափաղյանի), որը նա ճշտել է ու շրջցրել, իսկ սովորաբար մի մատենագիտության սխալները ավելի քիչ են լինում, երբ այն կազմվում է նախորդի քննադատության ու ճշտման հիման վրա։ Այնուհետև, Ս. Ղազարի Մխիթարյան գրադարանը հնատիպերի ամենահարուստ հավաքածուն է ունեցել։

Այժմ մի քանի օրինակ էլ բերենք 19-րդ դարում տպագրված հայերեն գրքերի նկարագրությունների մեջ տեղ գտած անճշտություններից։

Մի քանի տարի առաջ Ալ. Մյասնիկյանի անվ. գրադա-

րանի հնատիպ գրքերի մատենագիտական քարտարանում ներկայացված էր՝ Հովսեփ Արզախեցի Բառարան համառոտ ի դարձառէ յաշխարհարառն... Շուշի, 1730 և այլն:

Պարզվեց, որ Թյուրիմացութունը եկել է Զարհանայանի մատենագիտության մի վրիպակից: Այդտեղ Հովսեփ Արզախեցու «Համառոտ բառգիրք ի դարձառէ յաշխարհարառն սրբի ոչ միայն վերնադիրն էր ձևափոխված, այլ հրատարակությունն էլ 100 տարի հետ էր տարված (թեև 1730 թ. Հայաստանում որևէ տպարան չի եղել. մասնավորապես Շուշիում առաջին տպարանը բացվել է 1828-ին, որից երկու տարի անց տպագրվել է հիշյալ գիրքը):

Հիշենք տարրեր կարդի մի քանի սխալների օրինակներ ևս. Գ. Արիմյանցի «նալա և Ռամաժանտի» և «Ոսկի ասեղներ» գրքերի թվականը դրված է 1881, այնինչ նրանք հրատարակվել են համապատասխանաբար 1877 և 1878 թվականներին: Այնուհետև, Խ. Միրզաբեգյանցի հրատարակած «Գոչ Մխիթարի, Ողիմպիանու և Ողովպոսի առականք» գիրքը նշված է իբրև Թիֆլիսի 1881 թ. տպագրություն, մինչդեռ տպագրվել է Բարվում 1878-ին: Երևանում 1881-ին տպագրված «Երևանու նահանգի բուսականությունը» գիրքը բերված է իբրև Թիֆլիսի տպագրություն (վերնագրի աղճատմամբ՝ «...բուսականությունը»: Պոպովյանցի «Պատմութիւն Աստուածաշունչի պոռց»-ը, տպագրված Պետերբուրգում, նշված է իբրև Թիֆլիսի տպագրություն և այլն: Թիֆլիսի գրավաճառ Զաքարիա Գրիգորյանցը սխալմամբ նշված է իբրև մի շարք գրքերի հրատարակիչ (էջք 22, 176, 177 և այլն): Թիֆլիսի նշանավոր տպարանատեր Մարտիրոսյանը մի շարք գեպերում դարձել է «Մարտիրոսյան և ընկ.»-ը, որ ճիշտ չէ (նման ընկերություն չի եղել), բազմաթիվ գեպերում նշված է Թիֆլիսի Գուլամիրյան գրատուն, որպիսին Թիֆլիսում գոյություն չի ունեցել¹:

¹ Զարհանայանի մատենագիտության մեջ Թիֆլիսահայ հրատարակիչների վերաբերյալ թույլ տրված շփոթությունների շատ օրինակներ կան Գ. Ազանյանցի գրախոսականում («Արևագանք», 1885, Մ 7, էջ 107—111),

Աչքի են ընկնում նաև այն գեպքերը, երբ մի Նեղինակի երկր վերագրված է մի ուրիշի: Այսպես, մատենագիտության առաջին իսկ էջում օգտվողին զարմացնում է այն, որ Խաչատուր Արուվյանի իայտնի «Պարապ վախտի խաղալիքը» դրված է պատմաբան Գեորգ Արուվյանի երկերի շարքում, իրրև այս վերջինի ստեղծագործություն, իսկ 566-րդ էջում Գ. Արուվյանի «Համառոտություն Հայոց ազգի պատմության աշխատությունը՝ Պատմության Հայոց ազգի» ձևով վերագրված է Խ. Արուվյանին: Արդյո՞ք այս երկու Արուվյաններին Ջարրձալայանը շփոթել է այն պատճառով, որ ազգանունների նույնությունից բացի, նույնն էր նաև նրանց վախճանը՝ երկուսն էլ անհայտ կորան): Այնուհետև, Լեւոնգի «Նաթան իմաստունը» վերագրված է Շիլլերին (էջ 517), Մսեր Մսերյանցի «Պատմություն կաթողիկոսաց էջմիածնի» գիրքը մե՛րթ (էջ 191) վերագրված է Ջարմայր Մսերյանցին, մե՛րթ էլ (էջ 565, վերնագրի տակ)՝ իսկական Նեղինակին, Տիգրան Նավասարդյանցի թարգմանած «Ֆրիտոլին» ու «Աշխատություն և հանգիստ» գրքերը նշված են (էջ 495) իրրև Թագրատ Նավասարդյանցի Նեղինակած գրքեր, Մարկոս Աղաբեգյանի «Գարեգին Սրվանձտյան» ողբերգությունը մե՛րթ Նեղինակին (էջ 15), մե՛րթ Գ. Մուրադյանցին (էջ 126) է վերնագրված:

Քիչ չեն նաև գրքերի վերնագրերի ուղղակի աղավաղումները. Ս. Շահագիրի «Լեոնի վիշտը» դարձել է «Լեոնի վրշտերը» (էջ 250 և 511), Մ. Միանասարյանցի «Կանոնապոր և վայելուլ գրութեան պատմութիւն և տեսութիւն»-ը դարձել է «Վայելուլ և կանոնապոր գրութեան պատմութիւն և տեսութիւն» և այլն:

Ջարրձալայանի մատենագիտության սխալաշատության պատճառները մի քանիսն են: Նախ սխալների պատճառ է եղել մատենագիտություն կազմելու նախապես մշակված միասնական համակարգի բացակայությունը, ապա նույն գրքի մասին տարբեր աղբյուրներից առնված տեղեկությունները, երբ նկարագրությունները չեն միացվել:

Մի շարք գրքեր, 19-րդ դարի գրքերից գլխավորապես

ռուսաստանյան հրատարակութիւնների մի մասը, նկարագրվել են կողմնակի գրավոր աղբյուրներից (գրքերը ձեռքի տակ չի ունեցել), նկատվում է, որ ավելի վստահելի են այն պրքերի նկարագրութիւնները, որոնք եղել են Ս. Ղազարի պրագարանում: Իսկ առավել ստույգ տեղեկութիւններ են տրվում միխիթարյան հրատարակութիւնների վերաբերյալ:

Իւոյնը կարելի է ասել պակասների մասին. միխիթարյան հրատարակութիւնները, ինչպես և Վենետիկի այլ հրատարակութիւններ, ապա և Հոռմում, Լիվոռնոյում, Ամստերդամում տպագրված գրքերը համեմատաբար ավելի լրիվ են ներկայացված, բանի որ նրանք դեռևս այն ժամանակ ավելի ամբողջական են հավաքված եղել Ս. Ղազարի գրադարանում, մինչդեռ արեւելյան, մանավանդ ռուսաստանյան հրատարակութիւնները շատ սակաս են ներկայացված մատենադիտութեան մեջ:

Ինչպե՞ս հայերեն գիրք է լույս տեսել 1565—1883 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում դժվար է ասել, ուստի և դժվար է որոշել, թե Զարբհանալյանի աշխատութիւնում որքան է սլակասը: Սակայն մինչև 1800 թվականը լույս տեսած հայերեն (հնատիպ) գրքերի քանակը այժմ պարզ է դարձել՝ այն է 950—1000 գիրք: Զարբհանալյանի մատենադիտութեան մեջ, ինչպես ասացինք, 655 հնատիպ գիրք հաշվեցինք (և սա առավելագույն թիվն է, որ կարող է նվազել, եթե ճշտումները շարունակենք): Ամեն դեպքում, միայն հնատիպ գրքերից շուրջ 300 միավոր պակաս է նշված Զարբհանալյանի մատենադիտութեան մեջ:

Չպիտք է մոռանալ, որ հնատիպ գրքերը ավելի լրիվ ընդգրկելու Զարբհանալյանի հնարավորութիւնը բավական մեծ է եղել. այն ժամանակ ոչ մի գրադարան հայ հնատիպ գրքի այնպիսի հարուստ հավաքածու չի ունեցել, ինչպիսին ունեւ Ս. Ղազարի գրադարանը: Եւ այնուամենայնիւ, հայ հնատիպ գրքերի մոտ $\frac{1}{3}$ -ը դուրս է մնացել Զարբհանալյանի աշխատութիւնից: Հասկանալի է, որ է՛լ ավելի մեծ պետք է լինեն

1800-ից հետո հրատարակված հայերեն գրքերի բացթողումները:

Գ. Աղանյանցը այսպես է նկարագրում իր ապավորությունը Զարհանալյանի աշխատությունից. «Յուր ուշով և համբերությամբ թերթելով և ուսումնասիրելով «Մատենագիտությունը»՝ տեսանք, որ շատ գրքեր, առավելապես ռուսալոյս տպագրություն և մասնավորապես արտասահմանյան տպագրություններից ամեննին մտած չեն նորա մեջ. դեռ լոկ միայն թերթելու ժամանակ հիշողության թելադրությամբ 150 գրքից բաղկացած այդպիսի մի ցուցակ կազմեցինք և հետզհետե լրացնում ենք ձեռքիս տակ գտնված տպած և ձեռագիր գրացուցակներից...»¹

Աղանյանցի բերած 150-ը մատենագիտությունից բացակա գրքերի մոտ 110-ը պետք է համարել:

Ի դեպ, Զարհանալյանի մատենագիտության մեջ ոչ միայն 1565—1863 թթ. հրատարակությունների պակաս կա, այլ կան նաև աղթվականներից դուրս տպված «ավել» գրքեր: Այսինքն՝ Զարհանալյանի աշխատությունում տեղ են գտել (էջք 300—301, 20—21) 1565-ից առաջ հրատարակված գրքեր՝ դրանք Հակոբ Մեղապարտի «Ուրբաթագիրք»-ն ու «Աղթարք»-ն են, որոնք այն ժամանակ եղել են Ս. Ղազարի գրադարանում: Սակայն այն օրերին դեռ հայտնի չէր ոչ նրանց տպագրության վայրը, ոչ թվականը (թեկույ մոտավոր), ոչ էլ տպագրիչը: Զարհանալյանը հասկացել է, որ այդ երկու գրքերը հնագույն հրատարակություններ են և նշել է այդ մասին: Օրինակ, «Ուրբաթագրքի» մասին նա գրում է (նկարագրված է Կիպրիանոս-ի տակ). «Անթվական ամենահին տպագրություն», «Աղթարքի» մասին՝ «պոպային տպագրությանց առաջիններեն մեկը կը սևույվի և ոմանց նաև ամենեն ավելի հնագույնն», ապա բերված է Ալիշանի կարծիքը «Աղթարքի» մասին:

Ի վերջո, կարևոր է նշել նաև, որ Զարհանալյանի մա-

¹ «Արևիկացի», 1885, № 7, էջ 111.

տենագիտութիւն մեջ միայն հայերէն զբքեր չէ, որ տեղ են դաւել (հակառակ ենթադրանքի), այլ նաեւ արեւմտահայոց պական լեզուներով (տե՛ս, օրինակ, էջք 248, 269, 270, 274, 357, 645 և այլն) և ռուսերէն (հայերէն թարգմանված նկարադրութիւն) զբքեր:

Աի դիտողութիւն ևս. չնայած մատենագիտութիւն վերջում տրված է հայ պարբերականների ցուցակ, բայց բուն մատենագիտութիւն մեջ էլ, գրքերի անունների հետ խառը դառնում ենք մի շարք պարբերականների նկարադրութիւններ՝ «Աղագասիր», «Աղագարար», «Մասեաց աղանի», «Մասիս» և այլն:

Ի. Փառապանի ցուցակի հիման վրա նոր լրացված մատենագիտութիւն կազմելու ուղղութիւնով իր կատարած աշխատանքի մասին Զարրհանալյանը գրում է. «Մեր դիտած նպատակին հասնելու համար քիչ չեղան դիմացնիս ելած գծովարութիւններն: Որչափ ալ քովերնիս դառնված հայկական տպագրութիւնաց հալաբումը ճոխ և, թերեւ, զխաւթոններն սկսվի աղդին մեջ, սակայն և այնպես ունի շատ պակասներ ալ, և որուն դիտարար պատճառը ի հայրենյաց հեռի ըլլալնիս է:

Մասադիր ընթերցողը պիտի տեսնէ, թէ մեր կողմանէ բաւական ջանք եղած է կարելի եղածին շափ կատարելու երկասիրութիւն մը ընծայելու: Զենք կրնար հրապարակաւ չհայտնել մեր շնորհակալութիւնն այն հեռավոր ազգայնոց, որ ազնիւութիւն մը սրտի՝ օժանդակեցին մեզ ի դուրս մեր աշխատանքը, և որով մեծապէս օգտվեցանք, բայց անով հանդերձ չենք քաշվիր անկեղծ խոստովանութիւն մ'ալ ավելցընել, որ հաճախ թերի կ'մնա այս երկասիրութիւնը և գոր կը հուսանք կատարելագոյն կերպարանք ընծայել ազգերնու՝ երկրորդ և ավելի ճոխ տպագրութիւն, և թէ մեր այս գործը ընդունելի և հաճո ըլլա րանասիրաց: Այս պատճառով ալ լուրերցիք Հովնիված մը ընել նորագոյն հրատարակութիւնաց և կամ գրէ ու քննութեան վրիպող գրոց: Այսպիսի աւամատ

ու գրեթե անհրաժեշտ դանցառություններից համար բնթերցողած ներողամտությունը խնդրելնիս հիմակվրնն կհայտնենք¹⁾։

Պետք է ասել, որ այս ներողամտությանը միշտ չէ, որ արժանացավ Զարրհանայանը, ասվեցին ոչ քիչ բննադատական խոսքեր նրա աշխատության հասցեին, թեև նշան նաև բարձր գնահատականներ։

Ստորև բերում ենք ժամանակին Զարրհանայանի մատենագիտության մասին հայտնված երկու կարծիք։ 1884 թ. Կ. Պոլսի «Արևելքը» (N 5) գրում էր. «Կցավինք, որ պիտի չկարենանք արգո հեղինակին առաջարանին մեք հայտնած փափաքանած համեմատ ներողամիտ գտնվիլ, ըստ որում, կըմբռնենք ներողամտություն՝ եթե խնդիրը մի քանի կամ բազմաթիվ գրյանց մոռացմամբ դուրս ձգված լինելուն վրա լինեմք... քայց մեր դիտողությունը այս մասին չէ, որ անիրավ կլինենք, և ոչ ալ մեր պահանջելիքը դանկարելին կամ դժվարինը, այլ հույժ կարելին՝ արդեն նպաժը, միայն այդ եղածը հարկ էր առնուլ և այնպիսի բարեկարգ ձևի մը վերածել, որպեսզի ոչ միայն աշխատությունը կատարյալ լինի, այլ սույն բառագիրքը գործածողը փորքի շատև յուր նպատակին հասնի»։ «Հայկական մատենագիտությունը» հայկական գրականության տեղյակ եղողին միայն հագիվ թե հուշարար մը կրնա լինել, իսկ չգիտցողին՝ դժվար է, որ բնթերցանության օգտակար գրքի մը սահմանեն անդին ծառայություն մատուցանեն։

1885 թ. «Արձագանքը» (Գ. Աղանյանց) գրում էր Զարրհանայանի մատենագիտության մասին. «Մի գիրք գտնելու համար ստիպված ես առնվաղն մի տաս րոպե փատնել, որ շատ անգամ չի էլ հաջողում գտնել, Յանկանում ես գտնել մի գիրք, որոնում ես հեղինակի աղգանունով չկա, որոնում ես գրքի անունով, մի քանի տեսակ տեղափոխություններ, ոչ մի կերպ չես հասնում նպատակիդ, թողնում ես մտադրու-

1 Գ. Զարրհանայան Հայկական մատենագիտություն, էջ ԺԵ-ԺԶ,

թիւունդ. մեկ էլ տեսնես մի ուրիշ տեղ, բոլորովին անակնկալ կերպով լույս ընկավ ցանկացածդ գիրքը...»¹։

«Բայց և այնպես,— շարունակում է հոգւածագիրը,— Մատենադիտության այն մասը, որ վերաբերում է Եվրոպա, մանաւանդ կաթոլիկ աշխարհում լույս տեսած հայերեն հրատարակութիւններին, կատարյալ է և արժանի խորին ուշադրության ամեն մի բանասերի կողմից։ Մանավանդ դորա արժանիքը ավելանում է, երբ հաղվագչու տպագրութեանց մոտերքը տեսնում ենք զբրի հառաջաբանից կամ հիշատակարանից կարևոր կտորներ առաջ բերած, որոնցից շատերը սլատմական նշանակութիւն ունին։

«Հայկական մատենադիտութիւնը» մի անգին գանձ է տպագրա աշխատողի համար, որ կկամենա մի լիակատար գրացուցակ կազմել»²։

Ինչպես վերը տեսանք կաթոլիկ «աշխարհում լույս տեսած» հայերեն հրատարակութիւններն էլ (հնատիպերը) բնավ «կատարյալ» չիճակում շնն ներկայացված մատենագիտութեան մեջ, և շնայած դրան, «Արձագանքի» այս գնահատականը հիմնականում ճիշտ է։

Մատենադիտութեան ընադավառի մի ուրիշ հմուտ անձնավորութիւն Տ. Պալյանը փոքր-ինչ ավելի ուշ՝ 1896-ին սլսպես է գնահատել Զարհանալյանի աշխատութիւնը. «Իհե գարծին կարևորութիւնն անուրանալի և մեր հարգանքն մեծ առ Հայր. հեղինակն, բայց ունի նաև իր սլական կողմերն ալ, քնականարար հոշ կամս հառաջ եկած...»³։

Զարհանալյանի մատենադիտութիւնը իր բոլոր բազմապիսի թիւրութիւններով մնաց իրրե մի կարևոր տեղեկատու հայոց դրբրի աշխարհի վերաբրյալ։ Զարհանալյանը իր «Պատմութիւն հայոց դպրութեանց» աշխատութեամբ դարձել էր հայ գրականութեան գիտական սլատմութեան հիմնագիր,

1 «Արձագանք», 1885, № 7, էջ 111։

2 Նույն տեղում։

3 «Արեւելյան մամուլ», 1896, էջ 405։

այժմ իր «Հայկական մատենագիտությամբ» նա գտնում էր հայ նոր, գիտական մատենագիտության սկզբնավորման գոյ-խափոր երախտավորներից մեկը: Եվ հայ բանասիրության անխոնջ ու մեծատաղանդ մշակ Գարեգին Զարրհանայյանի մատենագիտական աշխատանքը այսօր ամենից առաջ խոր ակնածանքի առարկա կարող է լինել:

Վերը տեսանք, որ ինքը Զարրհանայյանը խոսել է Հայկական մատենագիտության՝ կատարելագործման մասին: Իմ նա իր կյանքի հետագա ընթացքում բավական աշխատեց Հայկական մատենագիտության՝ պակասներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ. սակայն հայկական նոր, կատարելագործված մատենագիտությունը վիճակված էր հրապարակ հանելու ոչ թե Զարրհանայյանի, այլ նրա աշխատանքը շարունակող Արսեն Ղազիկյանին. նույն Ախիթարյան ուխտից:

Երկու խոսք էլ Զարրհանայյանի «1565—1800» վերնագրված ժամանակագրական ցուցակի մասին (հետադիմացի), որ Հայկական մատենագիտության՝ սկզբում զրազնցնում է 16 էջ: Այդ ցուցակը մենք առանձնացնում ենք բուն (այբբենական) մատենագիտությունից, քանի որ այն, ըստ էության, մի ինքնուրույն աշխատություն է, որ ունեցել է երկու հրատարակություն, թեև երկու տարբեր զրքերի կից՝ առաջինը, ինչպես ասվեց, «Հայկական մատենագիտության» սկզբում, երկրորդը՝ «Պատմություն հայկական տպագրության» (1895 թ.) աշխատության վերջում:

Ցուցակի անդրանիկ տպագրությամբ առաջին անգամ հրապարակվեց հայ հետադիմացի գրականության ժամանակագրական մի ցանկ, որը մի տեսակ ամփոփում էր հայ հին տպագրության անցած հետաքրքրական ուղին: Այժմ մենք այդ ցուցակը կորցրել է իր գործնական նշանակությունը բազմաթիվ ու բազմաբնույթ ապակողմնորոշող սխալների պատճառով, սակայն նրա պատմական արժեքն անուրանալի է, և շատերն են օգտվել նրանից (թեև ոչ միշտ դրական արդյունքով):

Յուցակը բաղկացած է չորս սյունակից ա) գրքի հրատ. թվական, բ) վայր, գ) տպագրիչ, դ) գրքի անունը: Այս վերջին գնալուց տրվում է ոչ թե գրքի անունը ըստ տիտղոսաթևրթի, այլ սոսկ գրքի ընդունված, կրճատ անունը, ինչպես, օրինակ, ոչ թե Դերիդուր Նարեկացի Գիրք ազոթից, այլ՝ Նարեկ, կամ ոչ թե Դիրք մաղմուսաց, այլ՝ Սաղմուս, երբեմն էլ բերվում է սոսկ գրքի հեղինակի անունը և այլն:

Յուցակն սկսվում է «Աղթարք» և «Կիպրիանոս» (Ռուրթաթաղիք) գրքերով, որոնց դիմաց, հասկանալի պատճառով, հրատարակության թվական, վայր և հրատարակիչ գրքոված չեն: Այնուհետև դալիս են Արդար Թոխաթցու երկու հրատարակությունները (ութից) և այդպես շարունակվում է ցուցակը մինչև 1800 թվականը:

Յուցակի 2-րդ՝ 1895 թ. հրատարակության մեջ մի շարք յրացումներ կան. այսպես՝ սկզբում դրված են Հակոբ Մեղապարտի 5 տպագրությունները, Թեոփոս Ամբրոսիոսի և Գ. Պոստոլի հրատարակած գրքերը (հայատառ մասերով) և Արդար Թոխաթցու վեց հրատարակություններ, Լրացումներ կան նաև ցուցակի այլ մասերում:

Համառոտակի հիշենք ցուցակի երկու հրատարակությունների մեջ տեղ գտած թերությունները: Մի երկու նմուշ 1883-ի հրատարակությունից, 1677-ի տակ նշված է Նրեմիա Չելեպի իբրև առանձին գիրք, ապա մի գիրք հետո՝ Տնօրինականը: Այստեղ միևնույն գիրքը երկուս է դարձել, այն է՝ Նրեմիա Չելեպիի «Տեղաց տնօրինականաց»-ը: 1691-ի տակ դրված է Քերականութիւն հաշատրոյ (Լիվոռնո), մինչդեռ այդ գիրքը (հաշատուր էրզրումեցու «Գիրք բերականութեան»-ը) տպագրվել է այդ թվականից հինգ տարի անց: 1701 թվականին Կ. Պոլսի Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանից լույս տեսած գիրքը ցուցակում սխալմամբ նշված է իբրև Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպագրություն: Նույն թվականի դիմաց նշված է մի այբբենարան, որ իբր տպվել է Կ. Պոլսում, բայց որի գոյությունը չի հաստատվում որևէ կերպ, իր՝ Զարբհանալլանի մատենագիտու-

թյան (այբրենական) մեջ էլ այն պատճառով, որ Կասկածելի է նաև ցուցակում նշված 1708 թվականի «Ժամագիրք Աստուածածնի զբրի (Վենետիկ) գոյությունը, ինչ-որ թյուրիմացություն արդյունք պիտի լինի այդ գրանցումը: 1710-ի դիմաց նշված են Վենետիկում հրատարակված մի Ավետարան և մի Նոր կտակարան, իրականում այդ թվականին Վենետիկում լույս է տեսել մի Նոր կտակարան լանշուշտ. Ավետարանով հանդերձ: 1713-ի տակ էլ երկու տարրեր հրատարակություններն են մեկ դարձել. գրված է Մրբուզ, Գ. Մրկանոց.— այստեղ միացված են իրար «Մրկանոց Նոգեւոր»-ը և Հովհաննես Մրբուզի «Դաւանութիւն հաւատոյս»-ն: 1718 թ. Կ. Պոլսում տպագրված «Ճշմարիտ իմաստութիւն»-ը դարձել է Վենետիկի տպագրություն: 1721 թ. Կ. Պոլսում Մարտիրոս Սարգսյանի հրատարակած աղոթադիրքը բերված է իրեն Աստվածատուրի հրատարակություն: 1723-ին Կ. Պոլսում Աստվածատուրի կողմից տպագրված «Գիրք դպրութեան»-ը գրված է 1752 թվականի տակ: Պաղտասար Դպրի «Տաղարան փորրիկ»-ի և մի Շարակնոցի Կ. Պոլսի 1768 թվականի հրատարակությունները Հովհաննես և Հակոբ տպագրիչներին է, իսկ ցուցակում դրանք դարձել են Աստվածատուրի տպագրություններ: Պիոս Ե-րդ պապի ճառը Զարհանայանի մատենագիտության (այբրենական) մեջ բերված է իրեն 1781-ի, իսկ ցուցակում իրեն 1800-ի տպագրություն:

Այս կարգի օրինակներին քանակը կարելի է, իհարկե, ավելացնել, սակայն ասենք, որ ցուցակում կան նաև այլ բնույթի թերություններ, որոնք նույնպես ասպակողմնորոշում են օգտվողին: Օրինակ, գրքերի ոչ ճշգրիտ անունների հիշատակումը երբեմն չափազանցության է հասնում, և դիրքը այլևս չի ճանաչվում: Այսպես, «Իշխանութիւն տալոյ դորութիւն լիակատար ներողութեամբ հաւատացեալ րրիստոնէից հոգեւորաց...» երկար վերնագրով փոքր գրքույկը (12 Վջ), Վենետիկ, 1772, նշված է ներող. հոգեւորաց վերնագրով, և հազվագյուտ մարդկանց կարող է հասկանալի լինել, թե խոսքը որ գրքի մասին է:

Պետր էր սպասել, որ ցուցակի 1895 թ. հրատարակության մեջ այս սխալները կամ նրանց մի մասը վերացված կլինեն։ Սակայն սխալները ոչ թե ուղակուսել, այլ ավելացել են։ Սրիինակ, վերը բերված բոլոր անճշտությունները ցուցակի նոր տարբերակում մնացել են, նրանց վրա ավելացել են մի շարք նորերը։ Ուրում ենք մի քանի նմուշ այդ նոր սխալներից. 1685-ի դիմաց գրված է Խորենացու Պատմ. և Աշխ. Ա., մինչդեռ իրականում Խորենացու Պատմությունը առաջին անգամ հրատարակվել է 1695-ին (Ամստերդամ), Ըստ որում, Ջարրհանայանը այս իրոք առաջին հրատարակության դիմաց գրել է ր (երկրորդ)։ «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի» 1696 թ. տպագրությունը ցուցակի այս տարբերակում վերագրված է Թովմաս Վանանդեցուն, թեև տպագրավայրը մնացել է Հիշտ՝ Լիվոռնո (Թովմաս Վանանդեցին այս բաղաբույն ունի չի տպագրել)։ 1701 թվականին Կ. Պոլսում տպագրված ժամացրի (սկարզաւորութիւն...) տպագրավայրը դարձել է Ամստերդամը, իսկ 1702 թ. Ամստերդամում Վանանդեցիների տպագրած Շարականցի հրատարակման վայրը դարձել է Մարսելը, թեև Վանանդեցիներն այս բաղաբույն էլ բոլորովին չեն գործել։ 1722 թ. դիմաց ավելացել է Զրոսաբան և ողևոր, որի գոյությունը որևէ կերպ չի հաստատվում։ 1741 թ. Կ. Պոլսում Լերահամ Թրակացու կազմից տպագրված «Գիրք քարոզութեան»-ը (Գրիգոր Տաթևացու) սխալմամբ դարձել է Աստվածատուրի տպագրություն։ 1789-ին Վենետիկում տպագրված Նարեկի ցուցակի այս հրատարակության մեջ նշված է որպես 1888-ին Պետերբուրգում տպագրված գիրք։ 1796-ին Կ. Պոլսում Մատթեոս Դուրի կողմից տպագրված Ավետարանը ցուցակի այս տարբերակում սխալմամբ գրվել է 1786-ի դիմաց և այլն։

Աստղինք, որ ցուցակի երկրորդ հրատարակությունն ավելի լրիվ է առաջինի համեմատ։ Սակայն պակասներն այստեղ էլ շատ են։ Ամբողջ ցուցակում կա 651 միավոր նկարագրություն։ Կրկնությունները և չեղած գրքերի նշումները հանելու դեպքում մնում է 647 միավոր, այսինքն՝ մոտավորապես մեծ

մատենագիտության (այբբենական) մեջ նշվածի չափ : Ուրեմն այս տարբերակից ևս շուրջ 300 հնատիպ գիրք պակասում է :

Պետք է ասել, որ պակաս գրքերի մեջ կան նաև բավական կարևոր հրատարակություններ : Օրինակ, ցուցակի Լրկու հրատարակությունից էլ դուրս է մնացել Հայաստանի հոգում առաջին անգամ տպագրված գիրքը՝ Սիմեոն Երևանցու Գիրք աղօթից որ կոչի Զրոսարան հոգևոր—ը, թեև նույն հեղինակի ռեպրիման հայկական տպագրության գրքում, որին կից է ցուցակի վերջին տարբերակը, խոսվում է այդ գրքի մասին :



Զարբանայանի մատենագիտական մյուս երեք աշխատություններից առաջինը հայագիտական մատենագիտություն է, նվիրված հայ հին թարգմանություններին, Լրկորոգր մի ձեռագրացուցակ (անավարտ), Լրրորգը՝ հայ տպագրության պատմության վերաբերյալ աշխատություն :

Ծիշտ կլինե՞ր, իհարկե, սրանցից յուրաքանչյուրի մասին խոսել աշխատության համապատասխան գլուխներում, բայց Զարբանայանին նվիրված այս հատվածը լրիվ դարձնելու համար ավելի նպատակահարմար լվաց ընդթափել այդ աշխատությունները հենց այստեղ :

Առաջինը ըստ գլխավոր տիտղոսաթերթի կոչվում է՝ Մատենադարան² հայկական քաղվանդանց նախնեաց :

¹ Վերը տեսանք, որ բուն մատենագիտության (այբբենական) մեջ ներկայացված է 655 հնատիպ գիրք, ըթն նույնիսկ հետագա ճշտումների հետևանքով այս թիվը մի քանի միավորով պակսի, միևնույն է, բուն մատենագիտության մեջ նշված հնատիպերի քանակը ցուցակում եղածից մի քանիսով ավելի կլինի :

² Մատենադարան բառը ոգտագործված է Bibliothecae բառի գիմաց, որն այն ժամանակներում նմրապալում զեռես ոգտագործվում էր մատենագիտության (բրիտանոգրաֆիայի) իմաստով : Ոսկայն անհասկանալի պատճառով գրքի ֆրանսերեն վերնագրում Զարբանայանը գրել է Catalogue բառը, որ դրացուցակ է թարգմանվում :

(Դար Գ—ԺԳ) (ըստ առաջին տիտղոսաթերթի՝ Հայկական լուսագման օրինակի նախնեաց): Աշխատությունը լույս տեսավ «Հայկական մատենագիտությունից» 6 տարի Եկտո, իր ընդ-թույլ հիմնովին տարբեր է վերջինիցս, քանի որ սա արդեն տպագրության մատենագիտություն է, ուղադրության առա-ջին դիրքում տպագրված գրքերի հարցը չէ. այլ այն, թե ընդ-հանրապես մինչև 13-րդ դարը ինչ թարգմանություններ են արված հայերեն լեզվով:

Աշխատության անվերնագիր առաջաբանը շատ ջերմ է, պայծառ հայրենասիրությամբ յի (նույն ոգին է իշխում նաև աշխատության մի քանի այլ մասերում): Առաջաբանն սկզբ-ովում է հայ ժողովրդի մեծագույն երախտավորների՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հասցեին մի սրտառու ներ-բողով: Այնիվ հայրենասեր Գարեգին Զարրհանայանը նորից ու նորից իր հայրենակիցներին վերհիշել է տալիս այն ճշ-մարտությունը, որ հայոց ամբողջ պատմության մեջ այդ երկու հայ բուսաստունները ամենից ավելի մեծ հայրենանվեր դործն են կատարել իրենց ժողովրդի համար:

Այնուհետև, Զարրհանայանը անկեղծ ողբերությամբ է խոսում ընդհանրապես հայ գրական մշակույթի մասին՝ մեջ-բերելով Ֆրանսիացի բանասեր Գ. Վիլֆրուայի խոսքերը հայ ժողովրդի և նրա ստեղծած արժեքների մասին (ի դեպ, Զարրհանայանը հատկապես բերում է նաև այն հատվածը, որ Ֆրանսիացի դիտնականը կարծիք է հայտնում, որ հայե-րը իբրև դպրության մշակներ հույներից գերազանց են: էջ ԺԲ):

Զարրհանայանը ասում է, որ իր այս աշխատությունը չին մատենագրության պատմության լրացումն է: Հեղի-նակն, անշուշտ, իրավացի է նաև հայ թարգմանական գրա-կանությանը տված իր շատ քարձր դնահատականով. հայոց հին թարգմանություններից շատերում, իրոք, որ կախարդիչ է հնչում հայոց լեզուն, նրանցում պահված են նաև մեծ իմաստություններ, նրանք հայ մշակույթի հույակապ կոթող-ներին են, վերջապես այդ թարգմանությունների շնորհիվ

մարդկությանը հայտնի դարձան օտարազգի. գլխավորապես :
:ույն ճեղհնակների (Ծվանբիտի. Փիլոնի, Զենոնի, Ոսկեբե-
րանի և շատ ուրիշների) մի շարք ստեղծագործություններ.
որոնց բնագրերը կամ լրիվ կամ մասամբ կտրել են:

Այս Զարբանալյանը խոսում : հայոց ին թարգմանու-
թյուններին նվիրված Սոմալյանի գրքույկի մասին. որը ետ-
ընդհանուր առաջին ավանդն էր այդ բնագավառում (ինչպես
գիտենք. ավելի վաղ շրջանում էլ են եղել հայերեն թարգմա-
նությունների մատենագիտություն կազմելու փորձեր.— տե՛ս
ներկա աշխատության Ա պրակը):

Զարբանալյանը իր այս աշխատության նախավոր պա-
կանների մասին խոսելիս պահանջ է դնում ստեղծելու հայ
գրչագրերի պահպանման գլխավոր¹ և երկրորդական կենտրոն-
ների ձևագրազուգակները: Այնուհետև, մատենագիտական
բնույթի մի շարք գիտողություններ է անում: Քննադատում է
Դ. Շահնազարյանի (Կարենյանցի) ձևագրացուցակի «հո-
րինվածույն թերությունները, անճշդություններ, վրիպական
ընթերցվածք և ու զոհացուցիչ դատակարգությունը»: Բարձր
գնահատական է տալիս Փարիզի ազգային գրադարանի հայ
գրչագրերի ցուցակին և լազարյան ձևմարանի գրադարանի
գրացուցակին, որոնց մենք դեռ կանդրագառնանք:

Զարբանալյանը թվում է մատենագիտական այն կարևոր
տեղեկությունները, որոնք իր կարծիքով պետք է պարունակի
յուրաքանչյուր ձևագրացուցակ այնտեղ ներկայացված գր-
չագրերի վերաբերյալ: Քանի որ դրանք ինչ-որ չափով Զարբ-
անալյանի, իբրև մատենագետի պատկերացումներն են ար-
տահայտում ձևագրացուցակների նկատմամբ և հավանաբար
հաշվի են առնվել ձևագրացուցակների հետագա կազմողնե-
րի կողմից, ուստի և անհրաժեշտ ենք համարում բերել այդ
հատվածը: Ե...Կարելի եղածին չափ միակերպություն երևա

Այդպիսի գլխավոր կենտրոններ է համարում էջիածնի, Երուսաղե-
մի, Վենետիկի, Վիեննայի, Կ. Պալսի (Անտոնյանց) և Փարիզի (Ազգային)
գրադարանները:

...աշխատակիցանք. և ույն ըլլա տպագրութեան դիրքը, տառք, թուղթ, և այլն. ուր նշանակվին՝ բացի գրչագրաց թվանիշէն անոնց ինչ նյութի (մագաղաթ, թուղթ) վրա և որչափ էջերու մեջ գրված ըլլալը, տառից որպիսութիւն (երկաթագիր հին, միջին երկաթագիր, բոլորագիր, նոտր) գրչութեան թվականք, էթն ունին, հիշատակարանք, պատկերք, զարդարոց ոճն և ձև և ամեն մեկուն պարունակութեան նյութերն զատ-զատ» (էջ Ի)։ Զարբէնանալանք ամենակարեւոր նվազագոյնն է պահանջում ձեռագրաց ուցակիցք նվ պետք է ասել, որ ինքն էլ Ս. Վաղարի գրադարանի ձեռագրաց ուցակը կազմելիս չիմանականում աշխատել է պահպանել այդ սկզբունքները։

Ինչ վերաբերում է «Մատենադարան հայկական թարգմանութեանց» բուն աշխատութեանը, աստ նրա մասին առաջարանում կարգում ենք հետևյալը. «Աշխատութիւն մը աննշան թերեւս բոլոր երևույթին. բայց ոչ այնչափ գլուխին՝ որպիսի կրնա երևնալ հայրենացի կերպով ակնարկողի մը։ Խստապահանջք, և շէն սակավաթիվք նաեւ մեր Ինչ,— անշուշտ իրենց պիտութեանն և բոլորից համեմատ փափաղելի կատարելութեան հանդամանք չգտնեն մեր այս երկասիրութեան մեջ ալ։ Այսպիսիաց ի դեպ է հիշեցնել, թե գրվածներ կան, որոց համեմատնի կատարելութիւնը երկասիրողին կամքին կոխում չունի, այլ ժամանակին և նորանոր հետազոտութեանց արդիւնք և հետեանք պիտի ըլլա այդ ներքին մեղանդրադարձնել,— խոստովանութեամբ մեր շափալոր հմտութեանն,— թէ այս հրատարակութեանն ալ ասոնց կարգին է» (էջ ԺԵ)։

Ակնարկը պարզ է արված, այն վերաբերում է հայոց մտմունքին։ «Խստապահանջք»-ը անշուշտ, Զարբէնանալանի (և ոչ միայն նրա) նախորդ գործերի մեջ թերութիւններէց պատուրէ կարծեալոր բան շտեմողներն են, երբ հաճախ մի հեշտ ասված խոսքով փորձում են արժեքադրկել մանրակրթիկտ, քրտնաշան աշխատանքով ստեղծված այս կամ այն աշխատութիւնը (որը հաճախ իրենք էլ են օգտագործում եկած առիթով)։

Զարբհանայանի այս աշխատությունը բանասիրական-մատենագիտական մի հրաշալի գործ է, որ առայժմ մնում է անփոխարինելի¹։

Աշխատության սկզբում դրված է ժամանակագրական ցուցակ հայկական թարգմանությունաց, որ ըստ դարերի, իսկ սրանց սահմաններում ըստ տարեթվերի տրված է հայ հին թարգմանական գրականության ստեղծման հակիրճ ժամանակագրությունը։

Զորբորդ դարի տակ կարդում ենք 390 Ս. Սահակ Պարթև. 396 սկիզբն թարգմանության սրբույն Մեսրոպյա։ 5-րդ դարն սկսվում է Վաղարշապատի ժողովով (402 թ.), ապա՝ 403 Գանիեկյան նշանագրեր, 406 Կարգավորություն հայկական գրոց, 407՝ Սկիզբն հայ թարգմանությանց։ Թվարկվում են ավագ և կրտսեր թարգմանիչները, և այսպես շարունակվում է ցուցակը ըստ հայոց պատմական ավանդույթի։ Յուրաքանչյուր թարգմանական ընագիր հիշատակվում է համապատասխան տարեթվի դիմաց։ Այդպես մինչև 13-րդ դար (ներառյալ)։

Աշխատության կառուցվածքը հետևյալն է։ Սկզբում խոսվում է ընդհանրապես թարգմանությունների նշանակության, ինչպես և 5-րդ դարի հայոց թարգմանչական շարժման կարևորության մասին։ Ապա ընկնում են ըստ ավանդույթի շորբորդ դարից եկող մի շարք ընագրերի (Արզարի թուղթը, Թադե առաքյալի վկայությունը, Հակոբ Մծրնացու Զգոնը, Զենոբ Գլակի և Փավստոս Բուզանդի պատմությունները), նրանց հետ առնչվող հայոց հնագույն, մասնավորապես ասորերենից կատարված հին թարգմանությունների անվավեր գրքերի հարցերը և այլն։

272 էջից այբբենական կարգով թվարկվում են այն հե-

¹ Թեև առաջարանում Զարբհանայանը ասում է, որ իր այս աշխատության հիման վրա հետագայում կգրվի ավելի կատարյալը, սակայն նման փորձ ոչ ոք չի արել մինչև այժմ (Հ. Անսայանի «Հայկական մատենագիտություն» մեջ տեղ են դրանում նաև հայերեն հին թարգմանությունները, սակայն այդ մատենագիտության և տառի մի մասն ընդգրկող միակ հատորն է առայժմ հրատարակի վրա)։

դինականէրի անունները, որոնց երկերից տարրեր ժամանակ-ն՝ բում թարգմանութիւններ են կատարվել հայերէն: Այս ալորէնական շարքից զօրս են թողնվել միայն Աստվածաշունչը և Եղիշիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւնը», որոնց մասին զրմած է այրբհնական շարքից առաջ (այրբհնական շարքի համապատասխան տեղից հըում է տրվում զեպի այդ հատվածների էջերը):

Աստվածաշնչի հայերեն թարգմանութիւն պատմութիւնն ու տրժերավորմանը, նրա կանոնի, անվավեր գրքերի հարցերին, ինչպես և Աստվածաշնչի հայերեն գրչագրերի թվարկմանն ու նկարագրութիւնը նվիրված է 188 էջ (57—245):

Ասացիներ, որ աշխատութիւն շարունակութիւնը այրբհնական կառուցվածք ունի, որին սակայն նախորդում է մի ներածական՝ «Եկեղեցական պաշտամանց գիրք» վերնագրով, որ պիտի է գիտել իբրեւ ընդհանուր վերնագիր ողջ այրբհնական շարքի համար: Անշուշտ, հաջող ընտրված վերնագիր է, բանն՝ որ թվարկվող թարգմանութիւնների մեջ հատուկ ընտրութիւն չի արված, բերված է այն ամենը, ինչ հայտնի է եղել հեղինակին, այդ թվում՝ Պատմոն, Դիոնիսիոս Բրակացի, Արիստոսեղ, որոնց երկերը եկեղեցական պահանջութիւն համարելը, հարկավ, ճիշտ չէ: Բայց սա երկրորդական հանդամանք է:

Այրբհնական կարգի մեջ հեղինակաների անունների շարքում հաճախ թվարկված են նաև ընտիրերի անուններ (այն զեպրում, երբ ընտիրերի հեղինակները հայտնի չեն, կամ մի բանի հեղինակների գործեր են): Այսպէս, այրբհնական շարքին սկսվում է Արդիսոյ Էպիսկոպոս, Աբրուհամ Նիհնսոսի, Աղուիւնացի ս. Թովմաս, Ագաթոն, ս. Արաբոս Մեծն և այլն: Անունների այս շարքում գտնում ենք նաև Անսիգմ Անտիոքացի, Առաքելոց վարդապետութիւն, Վարժ Աղեհսանգրի, Վաստակոց զիրք և այլն: Այս նաև այնպիսի ընդհանուր ընտրթի դիտարարներ, ինչպես՝ Կառնագիրք, Վկայարանութիւն և այլն:

Այրբհնական շարքում յուրաքանչյուր այսպիսի գիտարար

հեղինակի կամ քննադրի անուն և այլն մի վերնագիր է, որի տակ գրված է մատենագիտական մի հոդված, որը թվարկվում են հայերեն եղած համապատասխան թարգմանությունները: Ամեն մի հեղինակի տեղանիքը տակ գրված նրա երկերի հայերեն թարգմանությունների ցանկը, սովորաբար նախ տրվում է քննադրի ընդունված վերնագիրը՝ «ասենք՝ Ստոգոզուրիւնց Արիստոտելի», ապա բնագրում իրոր եղածը (Հռոմանունի ասին, որոց անուանք միայն հասարակ...): որ մեծ մասամբ քննադրի սկիզբն է:

Թարգմանական երկերի այսպիսի թվարկումը բնագրերի թվարկում է, այսինքն ասվում է, որ հայերեն թարգմանված կան այս ու այս բնագրերը, իսկ թե ինչ: ձևագրերում են նրանք գտնվում (այդ ձևագրերի պատկերով վայրը, համարը), կամ արդյոք տպագրված են, թե ոչ, — մատենագիտական այս կարևոր հարցերը ուշադրության կենտրոնում չեն: Սա իհարկե չի նշանակում, թե նման տեղեկանքներ չեն տրվում, խոսքն այն մասին է, որ դրանց հատուկ կարևորություն չի տրվում, նրա պատճառը գուցե այն է, որ աշխատությունը հիմնականում կազմված է Ս. Ղազարի գրադարանում անգամ ձևագրերի հիման վրա: Մի շարք դեպքերում հանդիպում ենք նշումներ այն մասին, որ քննադիրը պարունակող ձևագիրը գտնվում է որևէ այլ վայրի գրադարանում (էջմիածնի, Փարիզի ազգային գրադարան և այլն):

Բնագրերի տպագրություն վերաբերյալ կան մի շարք ծանոթություններ տողատակերին, ըստ որում, հղում է տրվում դեպի իր՝ Զարբհանալլանի «Հայկական մատենագիտությունը»: Օրինակ, 57-րդ էջում Եվսերիոսի Եկեղեցական պատմությունը նվիրված հոդվածի տողատակին նշված է, «Եվսերիոս Եկեղեցական պատմությունը՝ հանդերձ նորոգ թարգմանությամբ ի հունեն հրատարակված է ի Վենետիկ, Տեմա Հայկակ. մատենագիտ., 184»: Աստվածաշնչի նվիրված հոդվածի վերջում ասված է, «Մանոյի են մեր ընթերցողաց այլևայլ տեղվանք եղած տպագրությունը հայկական Աստվածաշունչ գրոց», ապա տողատակի ծանոթության մեջ կա

«Մատենագիտական, 53—59»։ Բնագրերի (ձեռագիր. թև տպագրված) վերաբերյալ մատենագիտական տեղեկանքներին հասույթ կարևորություն չտալը, նրանց անմիջորինակ նշումը կամ անուշադրությունը նրանց նկատմամբ, ինչ խոսք թերություն է։

Ի դեպ, տարբեր կարգի տեղեկանքներ տալու անմիջորինակություններ աշխատության մեջ շատ կան։ Օրինակ, հեղինակների անունների տակ նախքան նրանց երկերի թարգմանությունների թվարկումը, երբեմն տրվում է տեղեկանք նրանց մասին։ Ուրիշ դեպքերում այդ տեղեկանքը տողատակի ծանոթության մեջ է տրվում։

Այբբենական շարքում մատենագիտական հոդվածները տարբեր չափի են՝ երեք-չորս տողից մինչև 15 և ավելի էջեր։ Հասկանալի է, որ մեծ են եկեղեցական այն նշանավոր հեղինակներին (Աթանասիոս Ալեքսանդրիայի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նաղիանդացի, Գրիգոր Նյուսացի, Դիոնիսիոս Արիստոսացի, Նալիփան Կիպարցի, Եփրեմ Ասորի, Կյուրեղ Ալեքսանդրիայի և ուրիշն.) նվիրված հոդվածները, որոնցից շատ թարգմանություններ են արվել և սլահայանվել։

Զարբհանայանը հիշատակում է նաև մի շարք այնպիսի թարգմանություններ, որոնք չեն սլահայանվել, բայց նրանց մասին հիշատակություն կա այս կամ այն աղբյուրներում։

Անշուշտ, բացի մատենագիտական բնույթի թերություններից աշխատության մեջ կան նաև բանասիրական-բնագրային տական կարգի ոչ քիչ անհշտություններ, հնացած դրույթներ, որոնց մասին շատ է դրվել բանասիրության մեջ։ Սակայն ամեն դեպքում «Մատենագրաբան հայկական թարգմանությունների նախնեաց»-ը մնում է շատ քառձր մակարդակի բանասիրական-մատենագիտական աշխատություն և այսօր էլ հայ պրականագիտոր, լիզվաբանք, պատմաբանը հաճախ է դիմում նրան և ստանում անհրաժեշտ ոչ քիչ տեղեկանքներ։ Ասենք նաև, որ աշխատության մեջ քերված են ժամանակի բանասերների հայտնած շատ կարծիքներ այս կամ այն հեղինակի, բնագրի կամ պատմական իրողության

Լասին. ընդ որում, հնդկնակը իր վերաբերմունքն է ցույց տալիս զգուշ կարծիքների նկատմամբ: Եւ, իսկզմանքը նշում ենք վերը հիշատակված այն տեսակետի կապակցությամբ. բայց որի Զարբնանայանը չէր հրաշտարցի մասին դաժ թեր ու դեմ նաք կարծիքները:



1891 թվականի փետրվարից «Թագմավեպի» մեջ՝ սկսեց ապագրվել Զարբնանայանի «Յուցակ հայերէն գրագրաց տեսնագարանի ուխտին Մխիթարայ ի Ս. Ղաշարի վեհա-տիկոյն ձեռագրացուցակը:

Յուցակն սկսվում է Աստուածաշունչ գիրք՝ գլխով: Առաջարանից պարզվում է, որ Աստուածաշնչի ձեռագիր մատչանները հնդկնակը առաջին տեղում է դրել հատուկ նկատառումով և որ ամբողջ ձեռագրացուցակը խիստ այրբենական կառուցվածք պետք է ունենա: Առաջադրանում ասված է նաև, որ ձեռագրացուցակի նրապարակումը փորձնական նշանակութուն ունի, որ պետք է հաշվի առնվեն տարբեր բանասերների գիտողութունները:

Յուրաքանչյուր ձեռագրի նկարագրության մեջ նշվում են՝ նյութը (մագաղաթ, թուղթ), գրի տեսակը, գույրահամարը, չափսը, տողերի քանակը (մի էջում), գրչության ժամանակը, զրիչը, ստացողը, պատկերները և այլն: Ըստ որում, այս տեղեկութունները միշտ չէ, որ նույն հաջորդականությամբ են տրված: Բերվում են նաև գրագրերի հիշատակալուստեր:

Ձեռագրացուցակը ընդհատվում է «Թագմավեպի» օգոստոսի համարում Աստուածաշնչի գրագիր մատչանների դրանցումը չափաբաժնավոր (նկարագրված են չորս գրագրեր), Խնչն է Եղև, Բնգհատման պատճառը: Որքան մեղ հայտնի է, Զարբնանայանը կաթվածահար Եղավ երեք, թե չորս տարի դրա-

1 էջ՝ 38—40, 65—68, 97—100, 128—134, 209—214.

նից չենտ, որովն դա պատճառ չէ: Ճեռագրացուցակը շատ
հանգամանալից է: Իուցն պարզ է դարձել, որ այդպիսի հան-
դամանալից ճեռագրացուցակը շատ ևրկար պիտի ձգվեր, և
սամադրի խմբագրութիւնը նպատակահարմար չի գտել նրա
շարունակումը համարից համար: Բայց հաղիվ թե դա ընդ-
հատման պատճառ (կամ միակ պատճառը) եղած լինի:

1857

Ջարրհանալյանը հայ տպագրութեան պատմութեամբ առիթ
է ունենում դրազվելու այն պահից, երբ ծանոթանում է և
լրացնում ի. Փափապյանի կազմած հնատիպերի ցուցակը:
1878 թվականին լույս է տեսնում Ջարրհանալյանի «Պատ-
մութիւն հայերէն գրութեան»-ի Բ հատորը, որտեղ 274—
352 էջերում տեղավորված է ամբողջովին հայկական տպա-
գրութեանը նվիրված զուխը¹:

Այնուհետեւ, ինչպիս արդէն գիտենք, Ջարրհանալյանը
հայկական տպագրութեան հարցերի մասին խոսել է իր «Հայ-
կական մատենադիտութեան» առաջարանում:

Իր «Հայկական մատենադիտութեան» աշխատութեան ևրկ-
րորդ հրատարակութեան վրա աշխատելիս² հեղինակը միտք
է հղանում նախքան զրա հրատարակումը լույս ընծայել հայ
գրքի պատմութեանը նվիրված մի աշխատութիւն, որ փա-
սուրին պետք է լինէր «Հայկական մատենադիտութեան» նոր
հրատարակութեան ներածութիւնը: Համենայն դեպս, այդպէս

¹ Կարծիք կա, որ 1850 և 1851 թվականներին «Բազմավեպի» (էջք՝
230—234, 344—348, 40—43, 182—184) յորս համարներում տպագրված
անստորագրի հոդվածը, նվիրված հայկական տպագրութեանը («Ազգային
տպագրութեան սկիզբնադրութիւնը և առաջանալուն պատմութիւնը»),
նույնպէս Ջարրհանալյանի գրչին է պատկանում, սակայն հոդվածի թե՛
լեզուն, թե՛ յարադրման եղանակը այդ չեն հաստատում:

է Բացատրում ինքը Զարրհանայլանը իր հակիրճ առաջարկ-
նում¹։

«Բազմավեպի 1895—1897 թվականների մի շարք հա-
մարենքում՝ տպագրվեց հայ գրքի ամբողջական պատմու-
թյանը նվիրված Զարրհանայլանի այդ աշխատությունը
սփյառական տպագրության պատմություն սկզբնավորութենեն
մինչ առ մեզս վերնագրով։

1895 թ. նույն աշխատությունը (աննշան փոփոխություն-
ներով) լույս տեսավ առանձին գրքով՝ վերնագիրն էլ փոքր-
ինչ փոխված էր՝ «Պատմություն հայկական տպագրության
սկզբնավորութենեն մինչ առ մեզս» (254 էջ)։

Այստեղ հայկական տպագրության պատմությունը 16-րդ
դարից հասցված է մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը։ Թեև
ավելի մանրամասն է տրված հայ հին տպագրության (մինչև
1800 թ.) պատմությունը։ Զարրհանայլանի այս աշխատու-
թյունը նույնպես նկատելի երևույթ էր հայոց բանասիրու-
թյան և մատենագիտության մեջ։ Առաջին անգամն էր ամ-
բողջացվում հայ մշակույթի մի կարևոր հատվածի՝ հայ-
կական տպագրության շատ հետաքրքրական պատմությունը,
ի հերոսական ու ողբերգական դրվագներով, ազնիվ հայ-
րենասիրության հրաշալի օրինակներով։

Բացի այդ, Զարրհանայլանի աշխատությունը հայ տպա-
գրության պատմությանը նվիրված առաջին երկն էր, որ
հրատարակվեց առանձին գրքով։ Նախքան այդ լեզել էին
տարբեր հեղինակների մի շարք, հաճախ շատ արժևրավոր
աշխատություններ, որոնք մնացել էին պարբերականների
էջերում։

Հայ տպագրության սկզբնավորման վերաբերյալ դադա-
վերջի բանասիրական նվաճումները Զարրհանայլանը օգտա-

¹ «Բազմավեպ», 1895, էջ 347.

² 1895, էջք 347—354, 394—402, 445—451, 491, 497, 535—539,
1896, էջք 1—7, 49—58, 105—109, 145—152, 200—206, 293—301,
337—341, 397—401, 439—448, 500—503, 544—549, 1897, էջք 60—63,
123—124, 464—466, 597—600.

ՄԱՅՈՒՆԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

ՆԱԽԵԱՑ

(Դար Դ — ԺԳ)



ՎՆՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՑԳԱՐԱՆ

1889

դրածն է իր աշխատության մեջ: Այսպես, եթե «Պատմության հայերեն դպրության» մեջ և Հայկական մատենագրության առաջաբանում հայ առաջին տպագրիչը Արղար Թոխաթցին էր, ապա այստեղ արդեն բավական խոսք կա իրոք հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի մասին: Առանձին-առանձին քննված են նրա հրատարակած չինգ գրքերը:

Միաժամանակ այս աշխատության մեջ չնդհնական արտահայտել է հայ առաջին տպագրիչի մասին բավարար չիմք շունեցող կարծիքներ¹. որոնք հետագայում գրքից դիրք, հոգվածից հոգված անցան և տարածվեցին: Հիշենք այդ կարծիքներից երկուսը 1) որ Հակոբը շարաշահել է առասպելներին, դեերին և հրեշներին հավատացող մարդկանց սնահավատությունը և կախարդանքների վերաբերյալ գրքեր տպագրել («Աղթարք», «Ուրբաթագիրք») փող շահելու նպատակով: Այստեղից շատերը (օրինակ Գ. Լևոնյանը՝ քիմիկոս) են նաև այն, որ Հակոբը կիսագրագետ մարդ է եղել, վաճառական: 2) Որ 16-րդ դարի սկզբում մի հայ շիր կարող Վենետիկում սեփական տպարան ունենալ, ուստի Հակոբը հայերեն գրքեր տպագրել է տվել որևէ իտալական տպարանում: Մենք մի առիթով² փորձել ենք ցույց տալ, որ 16-րդ դարի սկզբներին հնարավոր էր, որ մի հայ Վենետիկում սեփական տպարան ունենար և որ Հակոբը եղել է միանդամայն զրադետ մարդ, ըստ երևույթին հոգևորական և, մասնավոր, իր անունով հայտնի գրքերի իրական տպագրիչ: Բերված փաստարկները մինչև օրս չեն մերժվել որևէ մեկի կողմից³.

¹ Գ. Պարբենալյան Պատմության հայկական տպագրության, էջ 8—32.

² «Գրական թերթ», 1962, N 51.

³ «Հասկ» հանգեսի 1968-ի բացառիկում (մարտ—մայիս) Ա. Տեր-Խաչատուրյանը իր շատ հետաքրքրական «Հայ տպագրության նախահյուրացիներ Հակոբ Մեղապարտ» հոդվածում այն կարծիքն է հայտնում, որ մեր մի շարք գրողները Հակոբ Մեղապարտի տպագրությունների վերաբերյալ լրացուցիչ փաստաձև կարիք ունեն: Անշուշտ, այդ դիտարկությունը

թին այժմ Լդած որոշ փաստեր հարցերը մեկնաբանելու փորք-ինչ այլ տեսանկյուն են հնարավոր դարձնում:

Զարբհանալյանի դրքում կան ուրիշ շատ վիճելի, մանավանդ արդեն հնացած դրույթներ, որոնց անդրադառնալը այստեղ հազիվ թե նպատակահարմար լինի, քանի որ դրանք այլ դրքի պատմությունն են պատկերում՝ վերաբերող ավելի մասնավոր հարցեր են՝, որոնց մասին այլ աղբյուրով գրվել է:

Մի հարցի կապակցությամբ, թերևս, հարկ կա երկու խոսք՝ ասելու: Իրքի Զ-րդ էջում Զարբհանալյանը գրում է. «Հայկական առաջին մասնական տպագիր, որչափ որ մեզի ծանոթ է կներկայանա ի 1472 թվականի հրատարակյալ Բազմալեզու Բերականոնության մը մեջ, զաղղիական դպրոցի (Collège de France) ակադեմիո աշխատասիրությամբ. որում ի մեջ այլևայլ լեզվաց կհիշվի նաև մերն՝ իր այբուբենովը և ճաշակ մը կրնծայվի ընթերցողաց քանի մը էջ գրությամբ»:

Գ. Լեոնյանը գրում է², որ Զարբհանալյանը այս հրատարակությունը սխալմամբ է համարել 1472 թվականի, քանի որ խոսքը վերաբերում է Գ. Պոստելի «Linguarum» հայտնի գրքին (Փարիզ, 1538), որ իրր Զարբհանալյանը 1472 թ. այդ գրքի դպրությունը չի ընդունել և նրա մասին չի խոսել իր «Պատմություն հայկական տպագրության» աշխատության մեջ: Մինչդեռ իրականում հենց այդ աշխատության մեջ է Զարբհանալյանը խոսում հիշյալ գրքի մասին: Կտեսենք, որ նախքան այդ (1881 թ.) Ա. Երիցյանը 1472 թվականի է համարել Գ. Պոստելի վերոհիշյալ գիրքը:

Հիշտ է: Մենք պետք է փորձենք նույն հարցին նորից անդրադառնալ՝ այն դիտական ավելի վստահելի հիմքի վրա դնելու նպատակով:

1 Գ. Զարբհանալյանի այս աշխատության հեղահայ տպագրությանը նվիրված մասի վերաբերյալ մի շարք լուրջ լրացումներ ու դիտողություններ են արված հետևյալ հոդվածում՝ Զ. Խաղեկ Հայկական տպագրության անցյալից:—Վճմ., 1935, № 2, (Զարբհանալյանի գրքին վերաբերող մասը՝ էջ 31—36):

2 Գ. Լեոնյան Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 58:

Հավանական է, որ այդ հանելուկային 14⁻² թվականը մի թյուրիմացություն կամ վրիպակի արդյունք լինի, որն է մեկի կողմից թույլ տրված. թեև այդ պնդել չի կարելի. և առհասարակ 15-րդ դարում հայատառ տպագրության հնարավորությունը բացառելու հիմք չկա:

96

Եվ այսպես, 19-րդ դարի կեսերից սկսած բանասիրական ասպարեզ մտած և մինչև դարավերջ մեղմաջան աշխատանքով մի շարք մեծարժեք աշխատություններ ստեղծած Գրեգին Զարբանալյանը և զավ առաջին հրատարակված «Հայկական մատենագիտության» հեղինակը և առհասարակ թողեց մատենագիտական շատ հարուստ ժառանգություն:

ԱՐՄԵՆ ՂԱԶԻԿՅԱՆ

Հայ տպագրության յափագույն և ամենածավալուն, մինչև
որս իր արժանիքներով չգերազանցված մատենագիտության
ստեղծումը կապված է Արսեն Ղազիկյանի անվան հետ,
իկամայից մատենադետ Արսեն Ղազիկյանը դարձավ հայ
տպագիր արտադրանքի մատենագիտության ամենահմուտ
մշակը, ամենաճանաչված, ամենահարգված դեմքը:

Տեսնենք ինչպիսին է եղել նրա կյանքի ուղին:

Արսեն Ղազիկյանը ծնվել է 1870 թվականի հոկտեմբերի
8-ին Պարտիզակ դյուղաքաղաքում (Բուլղարիա), հողագործի
ընտանիքում: Այդ ժամանակ դեռևս Պարտիզակի հայկական
դպրոցն աշխույժ էր, կար մտավորականություն, ազգային
կյանք: Ղազիկյանը սովորում է տեղի ներսևս-Շուշանյան
աղապարանում, լինում է Նիկոլայ Գուրյանի աշակեր-
տը (Գուրյանը այդ ժամանակ հիշյալ վարժարանի տեսուչն
է եղել):

Գյրոցն ավարտելուց հետո Ղազիկյանն անցել է Կ. Պոլիս
և միառժամանակ աշխատել իրրեզ գրաշար:

1888 թվականի հոկտեմբերի 18-ից հաստատվել է Վենե-
տիկում, Ս. Ղազարի միաբանության մեջ, 1895 թվականից
ռեդակտոր է դարձել գրական և մանկավարժական գործով (նույն

թվականին ձեռնադրվել է ճանաչում: Աշխատանքը թաղ-
մապետիկան և Գեղունիին հեղել է նաև վերջինիս նախա-
քը: զբաքար է դասավանդել Վենետիկի Մուրադ-Ռաֆայել-
յան վարժարանում. ինչպես և Կ. Պոլսի Մխիթարյան և այլ
գաղթացներում: Միաժամանակ զբաղվել է հմբրապետի դասա-
կան և նոր քանաստեղծների գործերը հայերեն թարգմա-
նելով:


1893 թվականից սկսել է աշխատել Գ. Զարրհանայանի
հայկական մատենադիտություն, խմբագրման վրա. որ հե-
տագայում վերածվեց նոր մատենադիտություն կազմելու
աշխատանքի: Այդ աշխատանքը տեղեց ավելի ճան րասնչորս
տարի, իսկ հետո որոշ ընդմիջումներով Ղազիկյանը զբա-
նով զբաղվեց միևն կյանքի վերջը:

Մահացել է 1932 թվականի նոյեմբի 9-ին Պաղոսայում
(Իտալիա):

Ըստ վկայությունների Ղազիկյանը կյանքում հեղել է կեն-
սախինդ ու բարեսիրտ անձնավորություն, հայրենասիրական
կրակով:

Ղազիկյանը զբաղան ասպարեղ մտավ իրեն Արսեն Բաղ-
րատունու հետևորդ, որի ստեղծագործությունները մանրա-
մասն ուսումնասիրել էր: Առաջին իսկ զբաղան փորձերից
Ղազիկյանը ընթերցողներին մեծ հույս ներշնչեց իր ապա-
գա գրական գործունեության նկատմամբ: Եվ իրոք, նա կա-
րողացավ նասնել նկատելի հաջողությունների. մանավանդ
հմբրապական դասական հեղինակների երկերը հայերեն թարգ-
մանելով: Թարգմանությունը քնազավառում Ղազիկյանը արե-
մտահայ բանաստեղծական արվեստը մի նոր մակարդակի
բարձրացրեց: Այնպես որ նրան սկսեցին անվանել աշխատ-
նաբարի Բագրատունի:

1 Ղազիկյանը իր մատենադիտության առաջարանում գրում է. Քե ութ
տարի է աշխատել (կամ իններորդ տարին է, ինչ աշխատում է) այդ գործի
վրա. Սակայն դա ասվում է 1909-ին, իսկ աշխատությունը ապագությունը
և Ղազիկյանի սրբագրումները շարունակվեցին միևն 1914-ը



Արսեն Ղազարյան.

Ղազիկյանը թարգմանել է բազմապես մեծ քանակությամբ գեղարվեստական գործեր, ավելի շատ՝ չափափոխ նրա առավել կարևոր թարգմանություններն են՝ թվարկում ենք ժամանակագրական կարգով՝ Ֆրանսիական 19-րդ դարի բանաստեղծների գործերից մի ժողկաթագ՝ «Ճաշակ գազգիական արդի բանաստեղծություն» (1899 թ.), Օսսիանի գործերը (թարգմանված են արձակ) «Թերթվածներ» վերնագրով (1902 թ.), Ի. Գորիոյի «Զիռնոնդան» (1903 թ.), Վիկտորիա Ադանուրի «Հավիտենական գրույց»-ը (1905 թ.), Լ. Գանթձի «Թավարանը» (1905 թ.) և «Դժոխքը» (1910 թ.), Զ. Լեոպարդիի «Երգերը» (1910 թ.), Վ. Ադանուրի «Նոր երգերը» վիրգիլիոսի «Էնեականը» (1910 թ.), Հոմերոսի «Իլիականը» (1911 թ.), Տորկվադո Տասսոյի «Երուսաղեմ ազատյալը» (1911 թ.), Միլտոնի «Դրախտ կորուսյալը» (1913 թ.), Հորացիոսի (Որատիոսի) «Արվեստ բերթողական»-ը (1923 թ.), Ուգո Ֆոսկոլոյի «Տաղ գերեզմանաց»-ը (1923 թ.), Վիրգիլիոսի «Մշակականը»-ը (1923 թ.), Զ. Գամմելից «Երգիծաբանություններ և ուրիշ բերթվածներ» (1924 թ.), «Նիրհլունդների երգը» (1925 թ.), Սոփոկլեսի «Իդիպոս թագավոր»-ը («Էդիպ արքան», 1927 թ.), Հ. Պապինի «Հաց և գինին» (1927 թ.), Լ. Մանթոնիի «Նշանածները» (1928 թ.) և այլն։

Ղազիկյանը թարգմանել է ոչ միայն աշխարհաբար, այլև գրաբար։ Օրինակ, իտալական բանաստեղծ Լեոպարդիից կատարած առաջին թարգմանությունները, որոնք 1898-ին տպագրվեցին «Հատընտիր բերթվածք» վերնագրով, գրաբար էին։ Ավելի ուշ Ղազիկյանը նույն բանաստեղծից ավելի մեծ քանակով ստեղծագործություններ թարգմանեց, բայց արդեն աշխարհաբար։

Հայ գրական կյանքում շատ նկատելի դեր կատարեցին Ղազիկյանի աշխարհաբար թարգմանությունները, մանավանդ Հոմերոսի, Վիրգիլիոսի, Գանթձի, Տասսոյի, Լեոպարդիի ստեղծագործություններինը։

Բնագրի շնչի ու մտքի պահպանումը, ճոխ, գեղեցիկ և միաժամանակ մատչելի հայերենը Ղազիկյանի թարգմանու-

Յլուսնները զրեցին երբեք նայերեն կատարված լավագույն ղեկարգմանական թարգմանությունների շարքում։ Այդ թարգմանությունները արևմտահայ բանաստեղծական լեզվի մշակման գործում մեծ դեր կատարեցին, ինչպես, ասենք, Մասնի նանի թարգմանությունները արևելահայ բանաստեղծական լեզվի զարգացման գործում։

Այսին, Ղազիկյանը փաստորեն ստեղծեց գրական դպրոց արևմտահայ գրականության մեջ, նրա ազդեցությամբ աճեց այնպիսի մի խոշոր բանաստեղծ, ինչպիսին է Դանիել Էլարունցանը։

Ղազիկյանը գրել է նաև ինքնուրույն բանաստեղծություններ, բանասիրական հոդվածներ և այլն։ Հիշենք մի քանիսը. 1896-ին «Բեկ, ո՞վ կայծ սուրբ» (գրաբար), 1899-ին «Ի սուրբ օծումն» (գրաբար), 1900-ին «Մխիթար» (Մխիթար Սեբաստացու մասին) 1904-ին՝ «Զորհիւկանք երեք»։ 1897-ին լույս տեսավ «Նվեր մանկանց. առաջին փունջ, աշխարհաբար ոտանավորներ մանկական մտաց հարմար...» գրքույկը, որը մասնույում տարրեր կարծիքների տեղիք տվեց։

«Բաղմավեպ», «Դեղունի», «Մխիթար» պարբերականներում տպագրվել են Ղազիկյանի բազմաթիվ հոդվածները, բանաստեղծություններն ու թարգմանությունները։ Բանասիրական հոդվածներից կարելի է հիշել «Պատկեր վենետիկյան մխիթարյան հայկաբանության» («Դեղունի», 1903, էջ 37—45), «Լեկնարկ մի լեռնաբանի կենաց և գործոց վրա» («Բաղմավեպ», 1898, էջ 427), «Քերականական ակնարկներ կու, կր, լի, շ» («Բաղմավեպ», 1898, էջ 596), «Մկրտիչ Նուդաշ և իր տաղերը» («Բաղմավեպ», 1899, էջ 286), «Լեկնարկ մը Բաղրատունի մենաց և գործոց վրա» («Բաղմավեպ», 1900, էջ 24), «Տպարանապետը Մխիթարյան տպարանին Վենետիկ» («Բաղմավեպ», 1903, էջ 150), «Թաթուլ Վանանդեցիին ոսկեղարյան սխալները» («Բաղմավեպ», 1903, էջ 264), «Դասո և իր հայ թարգմանիչները» (1912 թ.), «Շայ լեզվի ուղղագրական դասեր» (1923 թ.) և այլն։

Ղազիկյանը եղել է հայերենի ականավոր լեզվաշինա-

բարենորոգ մեկը: Ազգի պահպանման ու զարգացման խրեղ-ումն եւս վճռական նշանակություն էր տալիս մայրենի լեզ-վին. ուստի և երազարգացման ու ճոխացման մեծ նախան-շախնդիրն էր: Նրան անվանում էին «Պահպան իրենց լեզվի»: Այս առիթով ահա թե ինչ է գրել ինքը՝ Ղազիկ-յանը. «Զիտ պահպան իրենց լեզվին կը կոչեք. ո՛ր էր թէ ունենայի հրեշտակի մը թևերն ու թռչեր: Դռնէ հա-ննի քաղաքն քաղաք. դռնն դուռ, և ամեն հայու սրտին վեջ իրգեններ հաննի. այ լեզուն սիրելու. գովելու, ան-ը վրա գրգռութալու»:

Լեզվի զարգացման շարքերի վերաբերյալ Ղազիկյանը իր տեսակետներն է ունեցել և պաշտպանել աշխարհագրա-ուրույնությունը: Հայտնի է նրա «Մի՛ գրեք... այլ գրեցե՛ք»-ը:

Իր բանաստեղծությունների մեջ զարգացման շարժու-թյունների հետ օգտագործելով նաև ժողովրդական բառ ու բանը՝ Ղազիկյանը ապացուցել է, որ ինքը հիմնականում միշտ է հասկացել հայերենի զարգացման և շարժումացման ուղիները:

Ղազիկյանի որոշ տեսակետներ աշխարհագրա-վերաբեր-յալ բնագաղափեցին, եղան բանավեճեր: Ներքևս մկինյանը այսպիսի մի ընդդեմում է տալիս լեզվական վեճերի շնթաց-քում Ղազիկյանի ունեցած դիրքին: «Լիճական շարքերու մեջ օրէնք մը վրիպեցա՞վ իր ուշադրութենէն՝ բան: Նամես-տորէն և չսել հանդարտութենէ: Լավ է ասոված, սակայն չ'ուրաւա՞նք օրէնքը միայն Ղազիկյանի ուշադրութիւնից չէ. որ վրիպէլ է, և արդյոք սոսկ վրիպել է և այժմ էլ սոսկ վրի-պել է շատերիս ուշադրութիւնից այդ հրաշալի օրէնքը»:

ՀԱՅԿԱՅԱՆ ՆՈՐ ԽԱՏՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ղազիկյանի ամենից ավելի մեծածավալ և ներհանգիյ ա մենից ավելի շատ աշխատանք ու եռանդ խլած գործը նրա մատենագիտությունն է. լրիվ անունով.

Հայկական նոր մատենագիտություն և ճանաչողական հայ կյանքի: 1512—1905:

Հտ. առաջին. Ա-Մ. Պր. 1. Ա-Թ՝ 800 սյունակ, Պր. 2. Թ-Հ՝ 802—1599 սյունակ. Պր. 3. Հ-Մ՝ 1601—2079 սյունակ:
Հտ. Լրկորդ. 3-ն (անավարտ)՝ 304 սյունակ:

Մատենագիտության ամբողջ հրատարակված մասն այսպիսով 2343 սյունակ է կամ 1191 երկսյուն էջ:

Թեև սովորաբար իբրև հրատարակության տարեթվեր ղեկավարում են 1909—1913 թվականները, բայց իրականում աշխատության տպագրությունն սկսվել է 1904 թվականին:

Մատենագիտության սկզբում դրված է հեղինակի «Հառաջարանի տեղ»-ը (սյունակ Ա-Ժ), ուր հակիրճ կերպով Ղադիկյանը նկարագրում է իր կատարած աշխատանքը և մատենագիտական ծրագիրը: Այս բերված են «Հայկական նոր մատենագիտության» նմուշի առթիվ հղած կարծիքները (հոգիվածներ, նամականեր):

Ղադիկյանի խոստովանությունից իմանում ենք, որ նա մատենագրել է զարմելի ղեկավարի բերումով, ուղղակի պատահաբար, և ինքն անհամապատասխանություն իրոք կա: Ահա թե ինչպես է ինքը նկարագրում այդ պատահականությունը:

«1898-ին Լր. 20—25 փոքրիկ տետրակներու կապոց մը ձեռքի ձեռք անցնելու կամ բազմիցս ու կապվելու մեկ ձեռքով ստանալի վերջ՝ իմ ձեռք հասավ. Հ. Զարպանայանի Մատենագիտության ձեռագիրն էր, որուն մեջ ամբողջովնով «Հանդես ամսօրյայի» 1897 և 98 տարիներուն գրքերը՝ պիտի տպվեր իբր կրկնորդ տպագրություն՝ ծերուն, որ կաթվածահար էր, հաճույք մ'ընելու համար. այսպես ըսվեցավ ինձի: Պարա՞պ թե լեցուն դառնացա, շնամ գիտեմ, հանձն առի. բակեցի. առաջին տպագրութենեն (1883) կտրատված, ագուցված, և 83—96 հրատարակված գրքերեն, մաս մը դադարեցանք, թերթերի օրինակված, ծնված, նոր գիրք ավելցրելու ոչ տեղ և ոչ հնարք: Հարկ չեղավ, որ այդ մանր տետրակները կտրատեմ նախ և շորս մեծագիր հատորներու մեջ

փակցնենմ, կտրատածիս մեկ կողմը օրինակելով միշտ, չափ
 զի երկու կողմն ալ զրկած կամ կպցված էր: Ընյա ղժշակ
 աշխատութենէն վերջ՝ բանի մը զիրք բաղդատեցի. տեսնեմ
 ոչ մեկ զրքի ճակատ կ'ամատապատասխանէ բուն զրքի ճակա-
 տին և ոչ իսկ իր զրքերունը. վասն զի բոլոր գրացուցակներն
 չափաքած էր. ծալք, էջ ևն ամենեկին շէն նշանակված: Ուրիշ
 միջոց չկար. բայց եթէ ամեն զիրք մի առ մի բաղդատել և
 սրբագրել, ուստի չարկազրկեցա վանքի գրատան բոլոր
 զրքերը խուցս կրել և գանոնք բաղդատել ու սրբագրել, եղած
 չէ զիրք, ուր սրբագրութուն բրած չըլլամ. թող որ այն ատեն
 գրատան մեջ գտնված զրքերուն կենն իսկ նշանակված չէր:
 Զիս ամենեն շատ հոգնեցնողը սույն գծոխային աշխատու-
 թյունը եղած է, և զո՛ւր տեղ: Եթէ ուղղակի գրատան ցուցա-
 կենն առաջնորդվելով սկսած ըլլայի սույն աշխատությունս
 առանց քակելու այդ կապոցը, ամենեն քիչ երկու տարի նվազ
 տառապած կըլլայի, և գործս շատ ավելի կարգավորյալ կըլ-
 լար, քան ինչ որ է այժմ: Վասն զի այնուհանդերձ՝ որ սույն
 աշխատութենէն վերջ երեք անգամ կազմած չատորներուս
 վրայէն անցա՝ սրբագրելու, միօրինակութիւն տալու, դասա-
 վորելու, կոշումներն ընելու համար, դեռ մնացած են ինչ-ինչ
 բաներ»¹:

Ղազիկյանի այս պատկերավոր խոստովանութիւնից
 նախ պարզ է դառնում այն հետաքրքրական հանգամանքը,
 որ ինչպէս Զարհանայանի մատենագիտութիւնը ստեղծվեց
 Փափազբանի անտիպ մատենագիտութիւն լրացման ու ճշտու-
 ման միջոցով, այնպէս էլ Ղազիկյանի գործը առաջ եկավ
 Զարհանայանի մատենագիտութիւն լրացման և ճշտման
 ճանապարհով:

Ղազիկյանը գուցէ և իրավացի է, երբ գրում է, թէ երկու
 տարով ավելի արագ կավարտեր աշխատանքը և ավելի որակ-
 յալ կլինէր այն, եթէ ինքն ուղղակի սկսէր կազմել նոր մա-
 տենագիտութիւն: Սակայն նա մոռացութեան է տալիս մի

¹ Ա. Ղազիկյան Ընդհանր և որ մատենագիտութիւն, սյուն, Բ—Գ:

կարևոր հանդամանք. Լթե նա չձեռնարկեր Զարբնանայանի մատենագիտության խմբագրման գործին, երբևէ իր սիրելի թարգմանական գործը չէր թողնի և չէր սկսի հայկական մատենագիտություն կազմել: Փաստ է, որ Զարբնանայանի մատենագիտության խմբագրումը Ղազիկյանի կողմից հանձն առնելու հետևանք էր «Հայկական նոր մատենագիտության» ասպարեղ դալը: Լեյապես նման աշխատություն չէր ստեղծվի. առավելագույնը երկրորդ անգամ կհրատարակվեր Զարբնանայանի մատենագիտությունը՝ Նեղինակի կատարած յրացումներով ու ճշտումներով:

Բայց լավ էր, թե՛ վատ, որ Ղազիկյանը ակամայից ղերի դարձավ «Հայկական նոր մատենագիտության» կազմման «գծոխային» աշխատանքին: Կասկած չկա, որ Լթե այդ աշխատանքը «մեջ լրնկներ» և Ղազիկյանը իր նախընտրած պործով զրադվեր, ապա «Հայկական նոր մատենագիտության» փոխարեն ընթերցողին կհանձնվեին արվեստագետ-թարգմանչի նորանոր դողտրիկ թարգմանությունները:

Պարզվում է, որ մեծատաղանդ բանաստեղծ-թարգմանիչը նույնտակ է ունեցել «Հին և նոր աղբերու հրաշակերտներ» արձակ, թե ոտանավոր՝ աշխարհարարով հայացնել 50 հատորներու մեջ: Կա հաշվումներ է բերում, ցույց տալով, որ ինքը ի վիճակի էր այդ անելու (ապացույց՝ Տասույի «Սրուսադեմ աղատյու»-ի 20 երգերի թարգմանությունը կատարել է 140 օրում, իսկ մատենագիտության վրա աշխատելու ժամանակ տված մեկ ու կես տարվա ընդմիջումին թարգմանել է 35000 տող ոտանավոր): Ղազիկյանի հաշիվներով մատենագիտության վրա աշխատած ութ տարիները նրանից խլել են թարգմանությունների 20 հատորներ և դեռ այդքան էլ կարող են խլել:

«Կր խոստովանիմ որ ես այս պործին մարդը չէի», — պրում է Ղազիկյանը, նկատի ունենալով մատենագիտական աշխատանքը և՛ ավելացնում. «Ես իմ կյանքս անցուցած էի ոտանավորներու հետ խաղալով»:

Լերդ, հարց է առաջանում. ո՞րն էր ավելի կարևոր հայ

մշակույթի համար 50 հատոր առաջնակարգ մատենա-
թյուններ. թե՛ աշխատանքի նոր մատենագիտությունը:

Իժմար է աշխատանքի մեջ: Կարելի է
ասել, որ շնայած մատենագիտության զարգացման
ընթացքին, իր արած թարգմանություններով էլ Ղազարյանը հայ
բանաստեղծության քաղցուղում պատվավոր տեղ է զբաղեց-
րացրել: Գրա չեա՞ն ստեղծեց նաև մինչև այժմ հայերեն մատե-
նագիտական աշխատություններից ամենապիտանին: Թեև
բախտն այնպիսին եղավ, որ անավարտ մնաց Ղազարյանի
ու՛ր միայն թարգմանական ծրագիրը, այլև այդ ծրագրի կար-
ծեցյալ խանգարիչ մատենագիտությունը: Ասում ենք կարճեց-
յալ, որովհետև դժվար է ասել, թե իրոք Ղազարյանը չա-
նարա՞յ կընթեր իր թարգմանությունների տասնյակ հատոր-
ները, եթե «մեզ շրեկներ» մատենագիտական իրոք ծանր
ստիպատանքը:

Ղազարյանը շատ է զանգատվում մատենագիտական աշ-
խատանքի դժվարությունից, «Ճաժանելի նեղություններ»,
«ցնորեցուցիչ աշխատություն», «սոսկալի աշխատություն»,
«ահավոր, սարսափելի գործ», «անշուր տաժաններ», «գործ
մշ. որուն ծանրությունն որակող բառ չունի գիտցած հայե-
րենս», — այսպիսի արտահայտություններով է որակում Ղա-
զարյանն իր կատարած աշխատանքը «Աշխատանքի նոր մա-
տենագիտության» վրա:

Մատենագիտական աշխատանքը, անշուշտ, դժվար և տա-
ռապալից է: Էլ ավելի մեծ դժվարություններ ունի հայ տպա-
գրության մատենագիտություն կազմելը, եթե հաշվի առնենք
հայ տպագրության կենտրոնների և գրադարանների ցրվա-
ծությունը ամբողջ աշխարհով մեկ, ինչպես և մի շարք այլ
գուտ «հայկական» հանգամանքներ:

Սակայն պարզ է և այն, որ Ղազարյանի աշխատանքը
դժվարացել է նաև ուրիշ պատճառներով, որոնցից են Ձար-
հանայանի մատենագիտության խմբագրման բարդություն-
ները, նախասլես մատենագիտական փորձի և որոշակի ծրա-
գրի լրացակայությունը:

Զարբեր խառնվածքների և պատկերացումների տեր Զարգիկ ևն եղել Զարբանայանն ու Ղազիկյանը, եվ Զարբանայանի դործը խմբադրելիս Ղազիկյանի աշխատանքն աշխատանքն մեծ ու դժվար չէր լինի, և թե մատենագիտությունն նկատմամբ Երկուսի պաշանքները, պատկերացումները մոտ կամ նման լինեին, նոսքը չի վերարևրում մատենագիտական տարբեր պատրաստվածություններին (նման պատրաստվածություն նախապես ու մեկն էլ չի ունեցել), խոսքն ուղղակի խառնվածքային և մտածելակերպային տարբերությունների մասին էլ Ղազիկյանը, ինչպես ցույց է տալիս նրա մատենագիտությունը, յիշվին մեծել է այլընտանական մատենագիտության մեջ նյութերի դասավորման Զարբանայանի ամակարգը (կամ, ավելի ճիշտ, որոշակի ամակարգի բացակայությունը), նա ամբողջը բանդել և նորից է շինել: Ղազիկյանը մերժել է նաև նյութերը նկարագրելու Զարբանայանի մոտեցումը: Իոյոր նրա նկարագրությունները նոր են կամ նորոգված, իսկ ինչ էլ որ պահպանվել է Զարբանայանի մատենագիտությունից ընկալվում է իրեն խորթ տարր, թերություն:

Ղազիկյանի աշխատանքը շատ է բարդացել նաև այն պատճառով, որ Զարբանայանի մատենագիտությունը քարտույին միջակում չի եղել, այլ խիտ զրված՝ թերթերի երկու էջերում և որեւէ դրրի նկարադրություն ավելացնելու կամ եղած նկարադրությունները ճշտելու համար հարկ է եղել ամբողջ էջեր նորից արտագրել: Մատենագիտություն կազմելու կամ այն լրացնելու ավելի մասն եղանակ հնարավոր չէ պատկերացնել:

Վերջապես, ձեռք դարկելով Զարբանայանի մատենագիտության խմբադրմանը՝ Ղազիկյանը առհասարակ պատկերացում չունի մատենագիտության մասին, չունի ազդային մատենագիտություն կազմելու որեւէ ծրագիր, մատենագիտական աշխատանքի փորձ:

Հարկ եղավ կոտարել ուրիշի մատենագիտությունը քանդելու և նորը ստեղծելու տարիների դժվարին աշխատանքը,

մանավանդ շատ ու շատ ավելորդ աշխատանքներ՝ մատենա-
գրատական հմտություն ձեռք բերելու և կատարվող աշխա-
տանքի ապագա արդյունքն ավելի ու ավելի հստակ պատկե-
րացնելու համար:

Մատենագիտության տեսությունը հիմնված է զարհրի բն-
թացքում տարբեր ազգերի մեջ կատարված մատենագիտա-
կան աշխատանքի փորձի վրա: Որևէ ազգային մատենագի-
տության դժվարին աշխատանքին ձեռնարկողը, տեղեւտ,
պետք է ծանոթ լինի այդ տեսությանը: Ղազիկյանը այդ
մատենագիտության խմբագրումն սկսելիս բնավ ծանոթ չէր
մատենագիտության տեսությանը, սակայն նրա բնական բն-
դուլակությունները, սուր միտքը, ինչպես նաև ստուգասի-
րությունը, հակումը կարգ ու կանոնի նկատմամբ մզեցին
նրան դժպի մատենագիտության վերափոխում, ապա նաև
վերստեղծում, Ութ տարվա համառ աշխատանքը Ղազիկյա-
նին քավական մտածել տվեց մատենագիտական աշխատան-
քի մասին և շատ բան սովորեցրեց այդ բնագավառին վե-
րաբերող: Փաստորեն Ղազիկյանը ինքն իր փորձից բխեցրեց
մատենագիտության քավական ճիշտ մի տեսություն, որի
օգնությամբ էլ նրա աշխատությունը ստացվեց իրոք հոյա-
կապ: Անշուշտ, կարևոր էր նաև այն, որ աշխատանքի լե-
թացքում Ղազիկյանը հետաքրքրվել է արևմտանվրուպական
մատենագիտության փորձով: Նրա մատենագիտության մեջ
ակնառու նշաններ կան (հատկապես մատենագիտական որոշ
ձևակերպումների, պայմանական նշանների, նկարագրույթյուն-
ների մեջ), որոնք ասում են, թե եվրոպական մատենագի-
տության փորձին Ղազիկյանը ծանոթ է եղել: Ոսկայն եվրո-
պական մատենագիտության փորձին զիմելն էլ Ղազիկյանի
աշխատանքից և որոնումներից բխեց, առանց նախնական
որևէ ծրագրի:

Հայ տպագիր գրքի մատենագիտության խմբագրման և
ապա նոր մատենագիտություն կազմելու աշխատանքներն
էին, որ Ղազիկյանի մեջ հայկական մատենագիտության
ավելի մեծ և աստիճանարար որոշակի զարձոց ձրագիր

առաջադրեցին, Ղազիկյանը աստիճանաբար սկսեց մտածել, այո՞ղ պարբերական մամուլի նյութերն իր մատենագիտության մեջ ընդգրկելու մասին. «Ի՞նչ սկզբան ոչ մեկ ծրագիր չունի,— գրում է Ղազիկյանը,— ծրագրին կազմվին ու չհասցնան ընդարձակվիր մեկ եղավ, և որ հետո դեռ պիտի լայննար՝ պարսպատելու աստիճան, նպատակս նախ գրախոսականներ, հեղինակաց վրա եղած ուսումնասիրություններն հավաքելն էր. երթալով անդգալաբար ընդլայնեցավ ծրագիրս. սկսա բանասիրական հոդվածներն ալ հավաքել և դեռ հետո փոքիշ գրական արժանիք ունեցող հոդվածները և ապա նշանավոր տոհմերու և ոչ գրական ազգային մեծ դեմքերու վրա հոդվածներն ամփոփել ևն: Ծրագրիս այսպես աստիճանաբար ընդարձակված բլլալուն բնական է, որ պակասներ ունենար, դոր պիտի լրացնեի կրկին անգամ աչքն անցնելով սոսաջին թերթերը, դորս նշանակած էի առանձին տետրի մեջ»:

Ղազիկյանը իր նոր ծրագրի համեմատ նորից է սկսում ռկարել անցնել լրագրության օվկիանը»:

Այլ աչդպես, տարիների անդեկ, անկողմնացույց աշխատանքը Ղազիկյանին գրգռում են ունենալու իր կողմնացույցն ու դեկր, աչսինքն՝ իր տեսակետն ու ծրագրերը ազգային մատենագիտության համար: Ահա թե ինչպես է նա ինքը շարադրել այդ տեսակետը, որ նաև իր ծրագրին է. «...Մատենագիտություն բաւոյժ էս՝ չեմ հասկնար լոկ գիտնալ, թե աչս որ կամ աչն ինչ դիրք գրիր է, աչլ նաև գիտնալ, թե ինչ նչութիւնու վրա կը խոսի: Աչս հասկացողությամբ էր, որ դրի արդէն ազգային գրոց բովանդակությունները. բաց մեր լրագիրներն ու հանդեսներն ալ ազգային գրքեր են, մանավանդ, թե մեր ազգային կյանքին շտեմարաններն են: Արդ, ազգային որեւէ իր կամ գիր, դեպք կամ դեմք, նշմար կամ նշխար, դոր կրովանդակե հաշկական լայնածավալ լրագրությունը, բոլոր պիտի մտնեն դործիս մեջ. ալեի պարզ. Ազ-

գային կյանքով զբաղվող ինչ չողոված որ կա բանասիրական, պատմական, տեղագրական, Նեախոսական ևն. և. ինչ որ գրված է այս կամ այն քաղաքի կամ գյուղի սովորությանը շնորհիվ. և կենդանիներուն, վանքերուն, դպրոցներուն, թանգարաններուն, թատրոններուն, քննչությանը ևն. ևն. ինչ որ գրված է աշուղներու մասին, իրենց նրդերը ևն. ևն. մեկ խոսքով Հայ կյանքի չնոս առնչություն ունեցող ամեն բան՝ միանալով զբերու մեջ այն նյութերու մասին գրվածներուն հետ՝ պիտի խտանա գործիս մեջ: Եվ այսպես պիտի ըլլա մի գործ ոչ լոկ «մատենագիտություն», այլ նաև «Հանրագիտարան հայ կյանքի»¹:

Ղազիկյանը, այսպիսով, շատ է մեծացրել հայկական մատենագիտության սահմանները, այն նրա պատկերացմամբ պետք է ընդգրկի ոչ միայն հայերեն տպագիր բոլոր գրքերը, այլև բացահայտի նրանցից հայագիտական արժեք ունեցողների բովանդակությունը, այլև ընդգրկի ոչ հայերեն (օտար ճեղինակների) հայագիտական գրականությունը և վերջապես այն պետք է ընդգրկի հայոց պարբերական մամուլի հայագիտական արժեք ունեցող չողովածները: Սրան պետք է ավելացնել և այն, որ Ղազիկյանը ծրագրել է իր մատենագիտության մեջ զետեղել նաև յուրաքանչյուր հայ ճեղինակի կենսագրությունը, լուսանկարով հանդերձ:

Սա հսկայական մի ծրագիր էր, բայց որի միևնույն պշխատության մեջ պետք է միավորվեին երկու տարրեր մատենագիտություններ՝ հայ տպագրության մատենագիտությունը, որի հիմքում լեզվական սկզբունքն է (հայերեն տպագրված գրքեր ու պարբերականներ) և հայագիտական մատենագիտությունը, որի հիմքում թեմատիկ սկզբունքն է (տարբեր լեզուներով նյութեր հայագիտական բովանդակությամբ):

Այսպիսի մի ծրագիր իրականացնելու համար մի բանի տասնյակ տարիների լարված աշխատանք էր պետք:

¹ Նույն տեղում, սյունակ է:

11. Ղազիկյանը իր մատենագիտության հրատարակված մասում այդ ծրագրին միայն մասամբ է նետել. օրինակ պարբերականներում հրապարակված հայագիտական լոգ-վածները փոքր չափով են այնտեղ ներկայացված։ Պատճառն այն է, որ բոլոր Ղազիկյանի ծրագրի «Լրագրերուն» բաժինը առանձին պիտի ըլլաւ։ Այսինքն՝ պարբերականների մեջ եղած նյութերը պետք է տրվեն առանձին բաժնում, որը սակայն յույս չտեսաւ։ Թէև մատենագիտության հրատարակված մասում պարբերականներից բավական նյութեր նշված են, սակայն մեծ մասամբ՝ այս կամ այն հեղինակի երկերի հետ («այսինքն» մի հեղինակի՝ զրքերի հետ հաճախ տրվում է նաև նրա հոդվածները, ինչպես և պարբերականներում հրապարակված այլ նյութերի մի ցանկ)։ Բացի այդ, պարբերականներից բերվում են նաև զրախոսականներ։ Սակայն մատենագիտության մեջ պարբերականների ծրագրված բաժինը շատ ավելի ընդգրկող պիտի լիներ։

Ղազիկյանը իր վերոհիշյալ տեսակետին հանգեցուց հետո հսկայական աշխատանք կատարեց որոշված ամբողջ ծրագիրն իրականացնելու համար։

Նախ, հայագիտական բնույթի զրքերի բովանդակությունները բերելու նպատակով երկրորդ անգամ է իր նկարագրությունները համեմատում Ս. Ղազարի զրադարանի բոլոր դրքերի հետ, այդ ընթացքում արտագրում է նաև հնատիպ դրքերի հիշատակարանները, երբեմն էլ առաջաբանները և մի շարք նոր լրացումներ անում եղած նկարագրությունների մեջ։

Նա կապ է հաստատում տարբեր երկրների զրավաճառատների, զրադարանների, անհատների հետ՝ տեղեկություններ խնդրում տարբեր զրքերի մասին։ Նույն նպատակով լինում է տարբեր վայրերում։ Ս. Ղազարի զրադարանի համար ձեռք է բերում հարյուրավոր զրքեր և պարբերականներ, բոլորը նայում և մոծում մատենագիտության մեջ նորանոր նյութեր։

Ահա թե ինչպիսի է ինքը՝ Ղազիկյանը նկարագրում իր այդ աշխատանքը. «Եւ աշխատեի օրն ի բուն, միայն իրի-

կունենե՞րը գլխուս և աշքերուս քիչ մը հանգիստ տալու, մահա՛վանդ թե չխենդանալու համար՝ կը պարապե՛ի Բազմավեհ-Գեղունիի՝ խմբագիր աշխատակցի պաշտոնին։

1904 թվականին Բազմավեհի՝ փետրվարյան համարում Ղազիկյանի մատենագիտության վերաբերյալ ընդարձակ ծանուցում է գետնադնում¹։ Այդ ժամանակ էլ սկսվում է մատենագիտության տպագրությունը, իսկ 1905 թ., երբ այն հասնում է մինչև 36-րդ մամուլը (576-րդ ոլուսական է), լարմած ծանր աշխատանքն ընկճում է Ղազիկյանի առողջությանը, և քոխչկները խորհուրդ են տալիս նրան միառժամանակ դադարեցնել մատենագիտական աշխատանքը։

Ինպքե՛րի բերումով այս ընդմիջումը ձգվում է սպասածից ավելի շատ, և միայն 1908 թվականի վերջերին Ղազիկյանը վերսկսում է աշխատել գրքի տպագրության վրա։

Դեռևս 1904 թվականին, երբ տպարանից դուրս է գալիս մատենագիտության առաջին մամուլը, Նեղինակը իր աշխատությունը ձոնում է աբրահայր Իգնատիոս Կյուրեղյանի գործունեության 50-ամյակին (Ս. Ղազարի տպարանը զարգացնելու գործում ամենամեծ նրախտիքն ուներ)։

1912 թվականին, երբ ամբողջ հայությունը նշում էր հայ տպագրության 400-ամյակը, Ղազիկյանը իր վերոհիշյալ նրվիրմանը ավելացնում է նաև մեկ ուրիշ՝ աշխատությունը միառժամանակ նվիրում է այդ մեծ հորելյանին (այդ ժամանակ տպագրվում էր մատենագիտության 2 տառի հատվածը, սկսած 1601 սյունակից)։

Մատենագիտության երկրորդ հատորը, տպագրվում էր արդեն պատերազմի օրերին, և պատերազմն ու Հայաստանի համար սկսված եղերական վիճակն էլ պատճառ են դառնում աշխատանքի ընդհատման։

Վերջինը 19-րդ մամուլն է տպագրվում (3-րդ հտ.), ընդհատվում է ն տառի վրա՝ վերջին Նեղինակը նուրիխանն էր,

¹ Նոր մատենագիտությունը։— Բազմավեհ, 1904, № 2, շապկի 3-րդ էջիս։

որի Երկերի մատենագիտության վրա կանգ է առնում տպագրությունը: Հետաքրքրական մի հանգամանք. այս հեղինակի «Պատմություն ժամանակակից» աշխատության Գ մասի բովանդակությունը ավարտվում է վերջին տպագրված սյունակում «Մեռյալն ու շողովրդին արդյունքը» վերնագրով, իսկ ամենավերջին նկարագրությունն է «Ինքնակալ ազդեցության վրա. խուլարկություն մը նկատմամբ Եվրոպական ազգաց և Հայոց»: Պատահական զուգահեռությունամբ մատենագիտությունը ընդհատվում էր այնտեղ, ուր ընդհատվել էր պատմության խաղաղ ընթացքը: Ինչպիսի՞ն պետք է լիներ Բեռլինի ժողովի արդյունքը հայության համար, ո՞րն էր լինելու զերմանական ազդեցությունը և Եվրոպական ազգերի դերը, — այս ամենը պարզեց պատերազմը, երբ Եվրոպական ազգերի աչքի առաջ իր հայրենիքի մեջ ընաչնչվում էր հայ ժողովուրդը, և այդ ազդեցիկ ոչ մեկը չբռնեց դահճի ձեռքը (իսկ ոմանք լռելյայն խորախուսում էին Հայաստանի հայադրկումը):

Ղազիկյանը կամ որևէ մեկը բնավ չէր մտածում, որ մատենագիտության հրատարակման այդ դադարը վերջնական է, թվում էր, որ առաջին դադարի նման այս մեկն էլ կանցնի և կվերսկսվի տպագրությունը: Սակայն շատ պատճառներով դադարը վերջնական դարձավ: Այդ պատճառներից էր նախ այն, որ ահապուր պատերազմն ավարտվելուց հետո, երբ Հայաստանի մեծ մասում վերացել էր հայությունը, հայկիվ թի մի ազնիվ ու զգայուն հայրենասեր կարողանար անմիջապես վերսկսել իր ընդհատված մատենագիտական աշխատության կադմուսն ու տպագրությունը, մանավանդ, որ ձեռագրի մի մասը կորել էր պատերազմի տարիներին:

Ղազիկյանը որոշ ժամանակ անց փոքր առ փոքր վերսկսեց է իր աշխատանքը մատենագիտության վրա, բայց առանց շուշափելի արդյունքի. անավարտ է մնացել ոչ միայն մատենագիտական հանրագիտության կադմիսիո նրա մեծ ծրագիրը, այլև նվազագույնը՝ դրբերի ալբոմական մատենագիտությունը: Իսկ պարբերականների հայագիտական հոդվածները ներկայացնող հավելված-մատենագիտությունից շտպագրվեց ոչ մի էջ:

Ղազիկյանը խոստացել էր նաև բացի իր ծավալուն մատենագիտությունից և նրա շավիղածից նրա առարկայի ուղղումների և լրացումների մի ցանկ, ինչպես նաև մի Վեճեճե մատենագիտություն (ացուցակ մը, որ արդեն պատշաճ առանձին տպագրվի և գործիս վերջին պրակին ներառվա՞յ)։ Այս վերջինում պետք է ներկայացվեր գրքերի փակակաշի մի ցուցակ, առանց բովանդակությունների, չիշատակարանների ու ծանոթությունների, և չափանաբար մեծ մատենագիտության և Վեճեճեի միջև խառնուրդները նույնը պիտի լիներ, ինչ որ մեծ Հայկազյան բառարանի և Վեճեճեի միջև։ Ի վերջո, Ղազիկյանը պետք է գրեր իր մատենագիտության ընդարձակ առաջադասը, որի շատ հետաքրքրական չիճևյա տվյալներն առկա են Նրապարակված առաջարանը կոչվում է «Հառաջարանի տեղ» և ունի ծանոթություն՝ «Թուն հառաջարանը, ընծայականը ևն, ևն վերջին պրակի հետ»։

Այս բոլոր ծրագրերը նույնպես չիբականացան։ Պատերազմից հետո Ղազիկյանը կարողացավ միայն նոր լրագրամատյաններով հարստացնել իայ գրականության տնդասանը։

Փորձներ րնութագրել Ղազիկյանի Հայկական նոր մատենագիտությունը։

Նյութերի դասավորությունը. այբբենական է։ Այբբենական շարքը կանոնավոր է, այն բազկացած է հիմնական և լրացուցիչ նկարագրություններից։ Հիմնական նկարագրությունների մեծ մասը հեղինակների ազգանունների (հին հեղինակների անունների) այբբենական կարգն է, իսկ այն գրքերը, որոնց հեղինակներն անհայտ են, կամ որոնք խումբային հեղինակ ունեն վերնագրի այբուրենով ևն դասավորված։ Երբեմն հեղինակների վերաբերյալ կենսագրական հակիրճ տեղեկություններ ևն տրվում, նշվում է նրանց իսկական անունը, և՛ի կեղծանունով ևն հայտնի (կամ՝ կեղծա-

1 Նույն տեղում, սյունակ է։

1912-1905

Հ. Լ. Յ. Կ. Լ. Կ. Լ. Կ.

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

Կ. Լ. Յ. Կ. Լ. Կ.

Հ. Լ. Յ. Կ. Լ. Յ. Կ. Լ. Կ.

Կ. Լ. Յ. Կ. Լ. Յ. Կ.

Կ. Լ. Յ. Կ.

Կ. Լ. Յ. Կ.

Հ. Լ. Յ. Կ. Լ. Յ. Կ. Լ. Յ. Կ.

1909

նունն է նշվում, իսկ իսկական անունն ափելի հայտնի է: Կան գեպթեր էլ, երբ հեղինակի երկերից որոշ հատվածներ են բերվում:

Յուրաքանչյուր հեղինակի ազգանվան (անվան) տակ տրվում են նրա երկերը առանձին գրքերով. դասավորման կարգն այստեղ ժամանակագրական է: Յուրաքանչյուր գրքի նկարագրության հիմնական տարրերն են՝ վերնագիր, ենթավերնագիր, հրատ. վայրը, հրատարակիչ, հրատ. թիվ, գրքի ծախքը, էջերի քանակը: Երբեմն ենթավերնագրի տեղ տրվում է գրքի բնաբանը կամ մի ուրիշ տվյալ:

Այնուհետև, մի շարք («սովորաբար՝ հայագիտական: հայերեն և օտար լեզուներով գրքերի նկարագրությունների տակ տրված է յուրաքանչյուրի բովանդակությունը, որ երբեմն էջեր է զբաղեցնում:

Հնատիպ գրքերի նկարագրության մեջ մանրամասն են նշված գրքերի տպագրական առանձնահատկությունները, օգտագործված տառատեսակները, պատկերների տեսակները (փայտափորագիր, պղնձե և այլն), թղթի որակը և այլ մանրամասնություններ:

Գրքերի նկարագրությունների վերջում հիշված են եղած գրախոսությունները, երբեմն հատվածներ են բերվում այդ գրախոսականներից:

Շատ գրքերի նկարագրությունների կողքին հարցական նշան գնելով Ղազիկյանը ցույց է տալիս, որ այդ գրքերն ինքը ձեռքի տակ չի ունեցել և նկարագրել է որևէ այլ աղբյուրի (գրացուցակ, նամակ և այլն) հիման վրա: Դրանով մատենագիտական ճշգրտություն է մտցվում աշխատության մեջ՝ միմյանցից տարբերվում են սկզբնաղբյուրից և ոչ սկզբնաղբյուրից նկարագրված նյութերը:

Մի հեղինակի առանձին գրքերով տպագրված երկերի ժամանակագրական ցանկից հետո տրվում է պարբերականներում տպագրված նրա հոդվածների ցանկը: Շատ դեպքերում տրվում են նաև հեղինակի կյանքի և զոռձի մասին

տպագրված որոշ նյութեր, հեղինակի դեմ գրված բանավի-
ճային հոդվածներ և այլն:

«Անհեղինակ» գրքերն էլ ներկայացված են այնպես, ինչ-
պես հեղինակի տակ նկարագրված յուրաքանչյուր առանձին
գիրք:

Մատենագիտության մեջ առանձին հեղինակների նվիր-
ված հատվածները զբաղեցնում են մի քանի տողից մինչև
մի քանի սյունակ, նայած հեղինակի գրական արտադրանքի
քանակին: Օրինակ, Ալիշանի հատվածը զբաղեցնում է 34
սյունակ, լեոյինը՝ 38 սյունակ, ըստ որում, նման հատված-
ների ծավալը այսքան մեծացել է գլխավորապես գրքերի
բովանդակությունները մանրամասն նշելու պատճառով:

Մատենագիտության մեջ եղած բազմաթիվ լրացուցիչ
նկարագրությունները հղումների համար են: Կան շատ դր-
քերի վերնագրեր, որոնցից հղում է տրվում դեպի նրանց հե-
ղինակը: Օրինակ՝ «Մի երես մեր նորագոյն պատմութիւ-
նից.— Տե՛ս Աղաջեանց (Ղ)», «Մի լեհացի Սալոնարօլ.—
Տե՛ս Սկարզա (Պ)», «Իրաւունք աղգաց.— Տե՛ս Տատեան
(Լ. Պ. Պ.)» և այլն: Պետք է ասել, որ բոլոր գրքերի վերնա-
գրերից չէ, որ նման հղումներ կան:

Հղումներ կան նաև հեղինակի ավելի քիչ հայտնի անու-
նից դեպի հայտնի կամ առհասարակ մի անունից (կեղծա-
նուն) դեպի մյուսը: Օրինակ, «Բարախանեան (Առաքել),
բուն անուն էլ օր.— Տե՛ս էլ օ», «Միարան.— Տե՛ս Տեր-
Լիկուշեան (Գ)» կամ՝ «Թէոփղ.— Տե՛ս Մառի (Ժ)» և այլն:

Քեկ բոլոր նման դեպքերում չէ, որ տրվում են այսպիսի
հղումներ. օրինակ, Տրդատ Պալյանի Կապես կեղծանունից
որեւէ հղում չկա, այլ ուղղակի այդ անվան տակ նկարագր-
ված է հեղինակի մի աշխատությունը (մնացածը հավանա-
բար «Պալեան»-ի տակ կլինեն, հաջորդ պրակներից մե-
կում):

Թարգմանիչների ազդանունները գրված են ընդհանուր
այբբենական շարքում, սակայն, նրանցից հղումներ են տր-
վում:

վում զեպի այն տառ *Նեղինակների ազգանունները*, որոնց
էրկերը թարգմանե՛լ այս կամ այն թարգմանիչը:

Կան և այսպիսի չղումներ. «Գանձակեցի.— Տէ՛ն Կիրա-
կոս», «Դ՛ Ամի՛խս.— Տէ՛ն Ամի՛խս Տէ՛ն» և այլն:

Որոհմն էլ չղումներ են տրվում զբոյ վերնագրի մի ձեռք
դեպի մյուսը և այլն:

Մի խոսքով, Ղազիկյանը ամենաբազմազան բնույթի
չղումների օգնության է դիմել աշխատությունից ողավողի
գործը հեշտացնելու համար, ափսոս միայն, ամսանման
բոլոր դեպքերից չէ, որ չղումներ են տրվում:

Կան նաև չղումներ դեպի մատենագիտական այլ աշխա-
տություններ, օրինակ, «Թէոփիլոս.— Տէ՛ն Զարպ., «մատեցրն»,
էջ 471»:

Լրացուցիչ նկարագրությունների այբբենական շարքում
կան նաև առարկայական (և թեմատիկ) վերնագրեր, որոն-
ցից չղում է տրվում զեպի այն *Նեղինակը*, որը զբոյ է տվյալ
հարցի մասին: Օրինակ, այբբենական ընդհանուր շարքում
կա Աշխաբհաբաբ լեզու, Բերականութիւն վերնագիրը, որից
չղումներ են տրված զեպի 23 *Նեղինակների ազգանուններ*,
Աշխաբհաբաբ և զհաբաբ խնդիրներ վերնագրից չղումներ
կան դեպի 7 *Նեղինակներ*: Ի դեպ, այս վերնագրի տակ
չղումներից հետո բերված է հայ պարսերականներում լույս
տեսած հոդվածների մի մանրամասն ցանկ (մոտ երկուս և
կես սյունակ՝ մանրատառ)։ ներկայացված են այն հոդված-
ները, որոնցում խոսվում է Աշխաբհաբաբ և զհաբաբ խնդի-
րների շուրջ¹:

Ի տառի մեջ գտնում ենք Բառարան վերնագիրը, որի
տակ հախ հավաքված են մի շարք բառարաններ, որոնց
վերնագիրն սկսվում է բառգիրք կամ բառարան բառերով և
որոնց *Նեղինակները* անհայտ են եղել Ղազիկյանին կամ

¹ Այս բանի մասին հիշատակեցով է խոսել Լեոն, «առբո յսանում է
համարներ, թվականներ ցույց տվող թվանշանների բազմությունից, Բա-
րեկարդ վաճառում նստած վաճառատից միայն կարելի է այդպիսի մոն-
րակրկիտ համբերություն ստանել» («Մշակ», 1901, № 214):

որոնք խմբային նեղինակ են ունեցել (վերջինների շարքում են դրված նաև ին և նոր Հայկազյան բառարանները)։ Այնուհետև, տրված են շղութներ գևպի այն հեղինակները (թվով 56), որոնք բառարան ունեն կազմած։

Նման կառուցվածք ունի նաև Այբբենաբան վերնագիրը կրող հատվածը և մի շարք ուրիշ առարկայական հատվածներ։ Կան նաև Քերական, Խոսակցութիւն, Գաղղիերէն լեզու և ուրիշ առարկայական վերնագրեր։

Ղաղիկյանն իր առաջարանում մի քանի անգամ ակնարկ է անում հնարավոր թերութիւնների մասին և քերում է մի բանիսր, որոնք ինքը նկատել է տպված պրակներում։ «Այսպիսի մանրատառ և թիվերով լի գործի մը մեջ դուրին է թե սխալներ սպրդին, թեև ամեն ջանք կը թափվի. կան զորս մարդ լի դիտեր, թե ինչպես կրլան»։

Քերենք այդ կարգի անճշտութիւնների մի քանի օրինակներ։ Այսպես, հանդիպում են գևպեր, երբ մի գիրքը իրեն երկուս է ներկայացված, թեև այդ գևպքերը Ջարրհանայանի մատենադիտութիւն համեմատ շատ քիչ են։ Օրինակ. Գրիգոր Զահկեցու «Կարդ պահհելոյ Կասարակարար ի պատարագս» գիրքը (Վենետիկ, 1721) մեկ տրված է մատենագիտութիւն 1-ին հատորի 1251—1252 սյունակներում «Կարգս-ի տակ (Կ տառի մեջ), մեկ էլ 1671—1672 սյունակներում «Ճահկեցի»-ի տակ, իրեն տարբեր հրատարակութիւններ (առաջին գևպքում գիրքը բնութագրվում է որպես «Դիրքը մեծ երկծայ, երկսյուն, 11 էջ», երկրորդ գևպքում՝ «Դիրք մեծ. երկսյուն, 12 էջ»)։ Կամ՝ Հոռմում 1784-ին տպագրված «Alphabetum Armenum»-ը տրվում է 131 և 134 սյունակներում, իրեն էրկու գիրք և այլն։

Ղաղիկյանի աշխատութիւն մեջ տեղ գտած այսպիսի թերութիւնները հրբեմն դալիս են Ջարրհանայանի մատենադիտութիւնից։ Մի օրինակ. «Հանդիսարան հոգիւոր երդր և մաղթանքս գիրքը (Տրիեստ, 1777) Ղաղիկյանի մատենագիտութիւն 1-ին հատորի 1481-րդ սյունակում ներկայացված է նույն այդ վերնագրով, նշված է էջերի քանակը (56)։ Իսկ

նույն նաւորի 533-րդ սյունակում նույն Նրատարակությունը ներկայացված է «Ծրգք և մաղթանք հանդիսականք Նոգետք. ձևով՝ վերնագիրը փոխված. իբրև մի այլ գիրք, առանց էջերի քանակը նշելու և հարցական նշանով: Պարզվում է, որ վերնագրի այդ շրջած ձևը կա նաև Զարբհանալյանի մատենագիտության մեջ (էջ 175): Այստեղից էլ այդ շրջուն ձևը իբրև առանձին Նրատարակություն անցել է Ղազիկյանի աշխատության մեջ, ավելի ճիշտ, Ղազիկյանը այն պահպանել է Զարբհանալյանի մատենագիտությունը խմբագրելիս՝ կարծւում. թէ դա մի առանձին Նրատարակություն է և դեռ կողորին էլ հարցական նշան է դրել՝ իբր ինքը չի տեսել գիրքը (իրականում տեսել է. քանի որ տվել է նաև զրքի ճիշտ նկարագրությունը առանց հարցական նշանի և էջերի նշումով):

Ղազիկյանի աշխատության մեջ տեղ են գտել նաև այլ կարգի անճշտություններ, մասնավորապես զրքերի Նրատարակման թվականների սխալներ: Օրինակ, Գրք դպրութեան և տաղարան վայելուչ գրքի 1723 թվականի (Կ. Պոլսի) Նրատարակության մեջ նշված են զրքի տպագրության սկզբի և ավարտի թվականները հայկական թվանշաններով՝ ԹՃՀԲ և ԹՃՀԳ, որ նշանակում է 1723 (1172 + 551) և 1724 (1173 + 551), Ղազիկյանը (հտ. 1, ս. 542) անհասկանալի պատճառով հայկական թվանշանները բացել է համապատասխանաբար 1772 և 1773 և ժամանակագրական կարգում նկարագրությունը գրել է նույն զրքի 1740 թվականի Նրատարակությունից ոչ թե առաջ, այլ հետ: Կամ՝ Հակոբ Նալյանի «Գրքունկս կոչեցեալ ճրագ ճշմարտութեան» գիրքը տպագրվել է Կ. Պոլսում 1756 թ.: Ղազիկյանի մատենագիտության մեջ (հտ. 2, սյունակ 20) այդ թիվը դարձել է 1706 (թեև հայկական թվանշանը տրված է ճիշտ):

Ի դեպ ասենք, որ այս կարգի անճշտությունները նույնպես երբևէն օգտագործված աղբյուրներից են թափանցել Ղազիկյանի աշխատության մեջ: Օրինակ, 1796 թվականին Կ. Պոլսի Հովհաննեսի և Պողոսի տպարանից դուրս եկած Ավետարանը Ղազիկյանի մատենագիտության մեջ նշված է

իրբն 1746-ի տպագրութիւնն, նույնն է նաև Զարբանալյանի մօտ: Ղազիկյանի նկարագրութիւնն դիմաց հարցական է գրոված, որ նշանակում է, թէ ինքը գիրքը չի տեսել: պետք է վերցրած լինի Զարբանալյանի մատենագիտութիւնից:

Կան և ուրիշ անճշտութիւններ, որոնք Ղազիկյանի սխալմունքով չէ, որ տեղ են դառնում նրա գրքում: Օրինակ, նրա մատենագիտութիւնն մեջ (Հտ. 1, սյունակ 571) իշատակոված են Նղիշէի Պատմութիւն 1748-ին Պետերբուրգում և 1747-ին Նոր Նախիջևանում տպագրված երկու հրատարակութիւններ, ընդ որում, 1748-ինը համարվում է այդ գրքի 2-րդ տպագրութիւնը, իսկ 1747-ինը՝ 3-րդ: Մինչդեռ 1747-ին Ն. Նախիջևանում հայկական տպարան ղեկու չկար, ուստի այս 3-րդ հրատարակութիւնը լրիվ մտացածին է: Իսկ պետերբուրգյան տպագրութիւնը, թեև իրոք 2-րդն է, սակայն ոչ թէ 1748-ի, այլ 1747-ի: Այս սխալը տեղ է դրոյ մատենագիտութիւն 37-րդ մամուլում, որի տպագրութիւնը, ինչպէս իմանում ենք առաջարանից, Ղազիկյանը չի մասնակցել, չի կարդացել փորձնական էջերը՝ վատառողջութիւն պատճառով (այս մամուլում կան և ուրիշ անճշտութիւններ, ինչպէս և բացթողումներ):

Ամեն դեպքում Ղազիկյանի մատենագիտութիւնն համար ընդունելի ճշգրտութիւնն է, իսկ հեղինակի թույլ տված անճշտութիւնները, սխալները աննշան տոկոս են կազմում, և մենք դրանցից նմուշներ բերեցինք սոսկ այստեղացում տալու համար: Կարելի է ասել նաև, որ ընդհանրապէս Ղազիկյանի աշխատութիւնը իր ճշգրտութիւնը նկատելի երեւոյթ է հայ ամբողջ բանասիրութիւն մեջ, նրա ամենից ավելի շատ խնամված նմուշներից մեկը:

Արդյոք ընդգրկված են 1512—1905 թվականների միջև իրատարակված բոլոր հայերէն և հայագիտական (տարբեր լեզուներով) գրքերը: Ոչ, իհարկէ, բացթողումներ չատ են, սակայն, կարելի է վստահորեն ասել, որ ընդգրկված է հնարավոր առավելագոյնը, այլ խոսքով ասած, այն ժամանակ, ոչ որ, ոչ մի ջանքով ի վիճակի չէր լինի այնպիսի լրիվու-

թյաժը բնագրկել մի մատենագիտության մեջ հայ գիրքը, ինչպես բնագրկել է Ղազիկյանը իր «Նոր մատենագիտության մեջ»¹։ Պետք է ասել նաև, որ հայ գրքի բնագրկումն ավելի լրիվ է, քան օտար լեզուներով հայագիտական ուսումնասիրություններինը։

Ղազիկյանն, ինչպես ասացինք, բացի Ս. Ղազարի գրադարանի ունեցած և իր շնորհիվ ձեռք բերված գրքերից մատենագիտության մեջ բազմաթիվ գրքեր է մուծել նաև մատենագիտական այլևայլ աշխատություններից, գրացուցակներից, տարբեր վայրերից ստացած նամակներից, զանազան աշխատություններից, նույնիսկ՝ բանավոր տեղեկություններին՝ իման վրա։ Հիշենք, որ Ղազիկյանը նույնպես ոգտագործել է Մ. Միանասարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտության» մեջ եղած նյութերը։

Չնայած այդ բոլոր քանքերին, այնուամենայնիվ բացթողումներն զգալի են։ Առանձին հեղինակների երկերի ցանկերը նայելիս նկատվում են տարբեր քանակի բացթողումներ։ Օրինակ, Հովհ. Քումանյանի մինչև 1904 թվականը հրատարակված 10 անուն գրքերից մատենագիտության մեջ երեքը նշված չեն՝ 1893-ի «Դաշնականները» (կա 1896-ի նույն վերնագրով գրքույկը), 1899-ի «Բանաստեղծությունները» և 1900-ի «Մի կաթիլ մեղրը»։ Խ. Արովյանի ստեղծագործությունների ցանկում չեն նշված «Անտիպ երկերը» (1904 թ.) և այլն։

Ավելի լրիվ են ներկայացված արևմտահայերի հրատարակությունները, իսկ ամենից լրիվ Մխիթարյաններինը։

Երբ 1904—1905 թվականներին տպագրվեցին «Հայկական նոր մատենագիտության» սկզբի մամուլները, Ղազիկյանը

¹ Մենք հաշվել ենք Ղազիկյանի մատենագիտության մեջ բնագրկված հետաքրքիր գրքերը, որոնք 547 անուն են, այսինքն՝ մոտ 100-ով պակաս Ջարդանալյանի նշածներից։ Պատճառն այն է, որ Ղազիկյանի մատենագիտությունն տեսվարտ է։ Իրականում Ղազիկյանի նշած հետաքրքիր ավելի են (քանի որ նրանք ավելի են, քան Ջարդանալյանի մատենագիտության մեջ միևե չէ տառը նշվածները)։

դրանք ուղարկեց զանազան մտավորականների, մի շարք պարբերականների խմբագրություններ և այլուր կարծիքի չափար, Արձագանքները շահապաղեցին. տարբեր վայրերի չայկական թերթերում ու հանդեսներում գրախոսականներ էրեացին, ինքր՝ Ղազիկյանը ստացավ նամակներ, մատենադիտությունը վերաբերող կարծիքներով:

Կրեթե բոլոր կարծիքները հույժ դրական էին. դրվատանքի քերմ խոսքեր էին ասվում մատենադիտության և նրա հեղինակի հասցեին, ցանկություններ էին հայտնվում անպայման նույն ոգով շարունակելու գործը և ավարտելու:

1904 թվականի դարնանը Արշակ Զոպանյանը գրում էր «Անահիտում»։ «Ահագին աշխատանք, զոր Հ. Ղազիկյան թափած է այս ծրագիրն իրագործելու համար, պայծառ ու կոկիկ մեթոդը, որով կատարած է այդ գործը, ամեն դրվատանքի արժանի կը ցուցանեն այդ աշխատությունը»¹:

«Այդ գործը,— գրում էր Լեոն Ղազիկյանի մատենագիտության մասին,— մի հույակապ ձեռնարկության տպավորություն է թողնում մեզ վրա»²: Ի դեպ, Լեոն մի շարք անդամներ է արտահայտվել Ղազիկյանի գործի մասին և միշտ սովել է շատ բարձր դնահատական: Նա ճիշտ է գնահատել նաև այն հանգամանքը, թե ինչու հատկապես Մխիթարյաններից մեկին հաջողվեց ստեղծել հայ տպագրության այդպիսի մի մատենագիտություն: Լեոն գրում էր. «Շնորհակալ լինենք, որ Վենետիկի միաբանությունը դարերի ընթացքում խնամքով հալարել ու պահել է իր ձեռքն ընկած ամեն մի հայկերեն տպագրություն: Եթե չլինեք այս հանգամանքը, մենք այսօր չպիտի ստանայինք այնպիսի պատկառելի, յուրաքանչյուր դրագետին հարկավոր աշխատություն, ինչպիսին է Շնչկուսկան նոր մատենագիտությունը»³:

¹ «Անահիտ», 1904, № 4—5, էջ 93:

² «Արշակ», 1904, № 64:

³ «Արշակ», 1904, № 214:

Ղազիկյանի աշխատության վերաբերյալ իրենց դրվատական խոսքն են ասել նաև Մադաթիա Օրմանյանը, Կ. Քասմաջյանը, Թեոդիկը, Մ. Իզմիրլյանը, Ե. Դուրյանը, Մ. Մուրադյանը, Ա. Ալպոյանյանը և ուրիշներ¹։

Եղան նաև ոչ քիչ դիտողություններ։ Օրինակ, Մ. Օրմանյանը գտնում էր, որ մատենագիտության մեջ գրքերի բովանդակությունները մանրամասն տալու հարկ չկա։ Սա, իրոք, մտածել տվող առաքարկույթուն է, որ արվել է մատենագիտության տպագրության սկզբում և որը կտրականապես մերժվել է Ղազիկյանի կողմից²։

Լեոն գտնում էր, որ հարկ չկա այն մարդկանց անունները գետնից վեր առնելու մեջ, ավելի որևէ բան չեն գրել, բայց որոնց մասին կա գրականություն։ Մասնավորապես նա նկատի ուներ նկարիչ Զովանես Ալվադովսկուն, որի անվան տակ Ղազիկյանը նշել է հայ պարբերականներում տպագրված բազմաթիվ հոդվածներ, նվիրված նկարչի կյանքին ու գործին։

Այս դեպքում հազիվ թի իրավացի լինե՞ր Լեոն, ճիշտ է, Ալվադովսկին գրավոր երկի հեղինակ չէ, և հեղինակների շարքում նրա անունը տարօրինակ է թվում, սակայն մի՞թե դա վնասում է գործին, մի՞թե վատ է, որ այսօր Ալվադովսկու կյանքով ու գործով հետաքրքրվողը Ղազիկյանի աշխատությունում կարող է գտնել այդ մասին հարուստ գրականություն։ Լեոն ասում է, թե այդ դեպքում գրավոր խոսքի հեղինակ չհանդիսացող մշակութային կամ բաղադրական ամեն մի գործիչ պետք է տեղ գտնե՞ր մատենագիտության մեջ, Ղազիկյանը իրավացիորեն պատասխանում է, որ դա բնավ վատ չէր լինի և եթե ինքը նման բոլոր գործիչների վերաբերյալ գրականություն չի նշել, պատճառն այն է, որ չի ունեցել համապատասխան նյութեր³։

1 Կարծիքներ և գրախոսականները գրված են «Հայկական նոր մատենագիտության» սկզբում։

2 Տե՛ս «Հայկական նոր մատենագիտություն», սյունակ՝ ԻԱ—ԻԲ.

3 «Հայկական նոր մատենագիտություն», սյունակ՝ ԺԷ—ԺԸ.

Անշուշտ, Ղազիկյանը ինչ-որ շափով շեղում թույլ կտար, եթե այդքան չքապուրվեր ոչ հեղինակ գործիչների մասին նյութեր նշելուց, սակայն կա նաև մի ճշմարտություն, որ անհրաժեշտ տեղեկությունների առատությամբ մատենագիտությունը չի փշանում։ Այլ բան, եթե այդ հավելյալ տեղեկությունները հավաքելու վրա ծախսվող ժամանակը վնասում է մատենագիտության ամբողջականացումն ու ավարտումը ժամանակին իրականացնելուն։

Հազիվ թե նման աշխատանքները լրջորեն խանդարած լինեն Ղազիկյանի աշխատության հրատարակման ավարտին կամ նոր, ամբողջական հրատարակությանը։

Ըստ տեղեկությունների Ղազիկյանը մինչև կյանքի վերջը դրազվել է իր մատենագիտությունը լրացնելու աշխատանքով։ Սակայն նրա մատենագիտության այդ լրացված երկրորդ հրատարակությունը այնպես էլ չիրականացավ։



Ներկայացվող նյութի լիակատար ընդգրկում և տեղեկանքների ճշգրտություն,— ահա ամեն մի մատենագիտությունը ղեահատելու շափանիշները։ Որքանով շատ մոտեցած լինի մատենագիտությունը լրիվության և ճշգրտության, այնքանով նա ավելի արժեքավոր է։ Ղազիկյանի ռեպրտաժան նոր մատենագիտությունը այդ տեսակետից մինչև այժմ էլ մնում է անդերազանց։

Սիլ ալսսբես, 20-րդ դարի սկզբում հրապարակ եկավ իր հարստությամբ և ճշգրտությամբ աննախընթաց մի հայկական մատենագիտություն, որը սլատիվ վերերեր ամեն մի րադարակիրի ազգի։ Դա հայ նոր մատենագիտության կաթնորակուն նվաճումը եղավ։

Թվում է, թե սխալ չի լինի ասել, որ Ղազիկյանի այդ աշխատության երևան գալը ինչ-որ շափով էլ պայմանավոր-

ված էր հայ նախորդ բանասերներին. մատենագետներին ջանքերով:

Մյուս կողմից, չի կարելի չնկատել մի ցավալի որինաշափություն, այն, որ հայկական տպագրության մատենագիտություն կազմելու ջանքերը կամ տպարդյուն են անցել կամ արդյունքը անավարտ է մնացել:

Միանասրյանցը չկարողացավ հրապարակել հայկական տպագրության իր մատենագիտությունը. միայն նրա համվածները դրեց Կովկասի մատենագիտության մեջ, որը նույնպես անավարտ մնաց: Հայկական մատենագիտություն կազմելու մյուս փորձերը (Ի. Փափազյանի, Գ. Աղանյանցի, Ե. Գաֆթանյանի, Գ. Գալեմքյարյանի, Տ. Պալյանի և ուրիշն.) կամ անավարտ, կամ անտիպ մնացին: Զարհանայանը հրատարակեց իր մատենագիտությունը, բայց դա նա համարում էր փորձնական: Աշխատեց հրկրորդ հրատարակության վրա. բայց աշխատանքն անավարտ մնաց: Վերջապես անավարտ մնաց նաև Ղազիկյանի հոյակապ աշխատության տպագրությունը, իսկ նրա «Առձեռն մատենագիտությունը» բոլորովին անտիպ մնաց:

Այդպես, նույնիսկ հայ մատենագիտության պատմության մեջ դրսևորվել են հայ ժողովրդի պատմական ճակատագրի վայրիվերումները, մանավանդ նրա պետականութունից զուրկ, ցրված վիճակի հետևանքները:

ՀՆԱՏԻՊ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՅ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայ հնատիպ դիրքը կարծես անցման օղակ է հայ ձեռագիր մատյանների և ժամանակակից իմաստով տպագիր դրժների միջև։ Այն տպագիր է, քանի որ բաղմացված է շարժական տառերով կատարված տպագրության միջոցով, բայց նման է հին ձեռագրերին իր ձևավորմամբ, օրինակ, ունի հիշատակարան, բառերը կրճատվում են ձեռագրերի համար մշակված օրենքներով, ունենում է ձեռագրերին հատուկ պարզեր ու պարզագրեր։

Հայ գրքի պատմության ամենահետաքրքրական շրջանը 16-րդ դարից մինչև 1800 թվականն է, այսինքն՝ հնատիպ գրքի ստեղծման շրջանը։ Հայ գրքի պատմության այդ շրջանին նվիրված բոլոր աշխատությունները միաժամանակ մատենագիտական աշխատություններ են նույնիսկ բառի նեղ իմաստով։ Նրանցում սովորաբար անուն առ անուն թվարկվում են այս կամ այն հին տպագրիչի հրատարակած գրքերը՝ ըստ տարեթվերի, խոսվում է յուրաքանչյուր տպագրիչի լույս ընծայած գրքերի քանակի, որակի մասին և այլն։ Մյուս կողմից, հնատիպ գրքերի տարբեր քննության մատենագիտական ցուցակները, որոնք հրատարակվել են տարբեր

ժամանակներում. ըստ էության. ճշտումներ կամ լրացումներ են հայ հնատիպ գրքի պատմության: Այդ է պատճառը. որ հնատիպ գրքերի մատենագիտությունը գրեթե ձուլված է այ գրքի պատմությանը և դրանց մասին արժե խոսել մի տեղ:

Արդեն գիտենք, որ հնատիպ գրքերի առաջին մատենագիտությունը կազմել է Ի. Փափազյանը. որի օգնությամբ էլ Գ. Զարրհանալյանը կազմեց իր «Հայկական մատենագիտությունը» և մանավանդ նրան կից հնատիպերի ցուցակը՝ որ ունեցա՞վ նաև երկրորդ հրատարակություն):

Զարրհանալյանի մատենագիտությունից առաջ կազմվել են հայ հնատիպերի նաև այլ ցուցակներ. օրինակ. Մ. Միանասարյանցի արդեն հիշատակված ուսուցիչն է ցուցակը. հրատարակված 1862-ին: Հնատիպերի որոշ ցուցակներ էլ մնացել են անտիպ կամ հրապարակվել են մասամբ: Զարրհանալյանի գրքի հրատարակությունից առաջ Ալեքսանդր Երիցյանը նույնպես հայ հնատիպ գրքերի մի ցուցակ էր կազմել, որը և հեղինակը՝ օգտագործել է «Պատմական տեսություն հայ տպագրության» իր աշխատության մեջ: Նա գրում է. «Հայ տպագրությանց իմ կազմած մանրամասն ցուցակը... երկար տարիների աշխատություն է. ես օգուտ եմ բաղել ոչ միայն տպագրած ցուցակներից, գրքերից և պարբերական հրատարակություններից, այլ և կարելույն չափ ժողովել եմ մասնավոր ժողովածուների (վանքերի, մասնավոր անձանց և այլն) և գրադարանների ցուցակները: Ուսկայն և այնպես անկարելի է, որ բանի մի գիրք բաց թողած չլինեմ: Ով որ միայն այս գործով պարապել է, նա գիտի, որ կարելի չէ միանգամից կատարել և առանց պակասություն և այն ևս պատմական ժամանակների վերաբերյալ ցուցակ կազմել»¹. Այս ցուցակը չի հրատարակվի. ըստ Երիցյանի տված տեղեկության նա իր այդ ցուցակում ընդգրկել է 478 գրքի նկարագրություն: Մի կողմ թողնելով այն, որ դու-

1 «Փարս» (Թիֆլիս), 1881, № 4, էջ 32.

2 նույն տեղում.

ցակում կարող են տեղ գտած լինել նաև շեղած «գրքեր», նկատենք միայն, որ 473-ր մինչև 1800 թ. տպագրված հայերեն գրքերի ընդհանուր քանակի կեսն է (կամ ավելի պակաս), այսինքն՝ պակասը սոսկ «քանի մի գիրք» չէ։ Այս ցանկը, ինչպես տեսնում ենք, ավելի պակասներ է ունեցել, բան Ջարրհանալյանին։ Մակայն ամեն դեպքում նրիցյանի տշխասանքը ուշադրության արժանի դրվագ է հայ մատենադիտության մեջ։

Հնատիպ գրքերի նման մի ցուցակ էլ, ըստ տեղեկությունների¹, կազմել է Դ. Դալեմբյարյանը, որը սակայն նրիցյանի ցուցակի պես մնացել է անտիպ։

Ջարրհանալյանի ցուցակի առաջին հրատարակությունից (1843 թ.) հետո տպագրվեցին հնատիպերի մի քանի այլ ցանկեր, որոնք Ջարրհանալյանի ցուցակի պակասները լրացնելու նպատակն ունեին։ Այսպես, «Հանդես ամսօրյայի», 1896 թ. սկսվածների համարում² Վ. Թորգոմյանը տրպարեց «Անհիշատակ տպագրություններ» հոդվածը, որն ըստ էության երեք հնատիպ գրքի ժանոթագրված մատենադիտություն է. այդ պրքերը գուրս էին մնացել Ջարրհանալյանի մատենադիտությունից։

ՏՐԴԱՏ ՊԱՆՅԱՆ

Նույն հանդիսի հաջորդ տարվա միենույն սկսվածների համարում³ «Անհիշատակ տպագրություններ» վերնագրով մի մոտենադիտական հոդված տպագրեց Տրդատ Պալյանը (Կապետ)։ Այդտեղ ներկայացված են մի շարք հնատիպ, ինչպես և 19-րդ դարում հրատարակված գրքեր, որոնք Ջարրհանալյանի մատենադիտության մեջ չեն մտել։

Ի դեպ, այս հոդվածում Տ. Պալյանը գրում է, որ ինքը

¹ - Մշակ, 1912, № 50.

² էջ 273—274.

³ էջ 269—270.

կազմել է հայերեն հեատիպերի մի մատենագիտություն և գրել «Հայերեն հին տպագրությունք» երկհատոր աշխատությունը:

Տ. Պալյանը հրապարակել է նաև հեատիպերի մի բանի ալ մատենագիտական ցանկեր. ինչպես և ուշագրավ հոդվածներ հայոց հին տպագրության հարցերի վերաբերյալ: Բացի այդ, Տ. Պալյանը հեղինակ է մի քանի ձեռագրացուցակների և առհասարակ նա աչքի ընկնող դեմք է հայ մատենագիտության պատմության մեջ:

Տրդատ Պալյանը ծնվել է 1850 թ. Կեսարիայի Քալաս գյուղում, ապա ծնողների հետ տեղափոխվել է Զմյուռնիա և այստեղ Ներսիսյան դպրոցում ստացել նախնական կրթություն: Ապա փորձել է զբաղվել վաճառականությամբ, հաշվապահությամբ, ի վերջո կրոնավոր է դարձել Երուսաղեմում: 1887-ին ընտրվել է Կեսարիայի թեմի առաջնորդ և մնացել այդ պաշտոնում մինչև 1910 թ. (ապա կամավոր հրաժարվել է): Պալյանը 1888 թ. հիմնել է Կեսարիայի Ս. Կարապետի վանքին կից հայկական դպրոցը, որը գործեց մինչև 1915 թ.: Հիմնել է նաև նույն վանքի գրադարանը, ուր կային 160 ձեռագրեր և 900 տպագիր գրքեր: Շրջել է ամբողջ Փոքր Ասիայի հայաբնակ վայրերը, հավաքել ինչպես հեատիպ գրքեր ու ձեռագրեր, այնպես էլ ժողովրդական հեքիաթներ, առակներ, երգեր և այլն: 1911 թվականից ապրել է Երուսաղեմում, ապա Մաղնիսայում (Զմյուռնիայի մոտ)՝ զբաղվելով բանասիրական աշխատանքով: 1922 թվականին Զմյուռնիայում տեղի ունեցած հայտնի զեպքերի ժամանակ գտնվելիս է հղել քաղաքում: Քեմալական փնվորները խլում են Պալյանի ամբողջ ունեցվածքը, այդ թվում գրքեր, գրչադիր մատյաններ և իր մի շարք անտիպ աշխատություններ: Ապա մի կերպ փախել է Աթենք, ուր և մահացել է հայ գաղթականների մեջ ընկած ժանտախտի համաճարակից 1923 թ. հուլիսի 2-ին:

Տ. Պալյանը իր ուսման պակասը լրացրել է ինքնակրթությամբ:

Քաղական մեծ քանակությամբ աշխատություններ է գրել։
մեծ մասամբ իր հավաքած նյութերի բնագրկմամբ, որոնց
մի մասն է միայն յույս տեսել¹։

Մատենագիտական աշխատություններից արժեքավոր են
ձեռագրացուցակները, որոնց մասին առանձին կիսոսենք։
Այժմ հիշենք միայն, Կեսարիայի Ա. Կարապետ վանքի գրա-
դարանի 160 ձեռագրերի ցուցակը։ Պալլանը կազմել էր
ավելի քան 500 ձեռագրերը ընդգրկող մի մեծ ցուցակ, որի
մի մասը բռնագրավվել է Ջմյուռնիայի 1922 թ. դեպքերի
ժամանակ։

Այժմ մի քանի խոսք ասենք հայ հնատիպ գրքերի մա-
տենագիտություն կազմելու ուղղությամբ Տ. Պալլանի աշ-
խատանքի մասին։

«Արեւելյան մամուլի» (Ջմյուռնիա) 1896 և 1897 թվական-
ների համարներում² տպագրվեց Տ. Պալլանի «Հայերեն
տպագրություն» վերնագրով մատենագիտական շարքը։
Առաջին հոդվածում (1896, № 13, էջ 404), հեղինակը գրում
է. «Քաղական տարիներն է վեր մենք անհատապես հետա-
քըրքիր եղած ենք հայերեն հին տպագրություններ հավաքել
և ի մի ժողովել՝ ղետնդելով ղանոնք Կեսարիո Ա. Կարա-
պետի վանուց մատենադարանին մեջ, առաջին կարևորու-
թյունը տալով հայ տպագրության սկզբնավորութենն մինչև
1800 թվական տպագրվածներուն, Կրնանք բնի, թե աչառ
դրնթե կիսովին հաշողած ենք, և եթե մեր կամքն անկախ
պատճառներ հառաջ չդան, պիտի աշխատենք որչափ կա-
րելի է, ամբողջացնել և հետևաբար ցանկ մը պատրաստել,
և արդեն ալ սկսած ենք, տպագրությանց թվականի կարգով,
մասնավոր տեղեկությամբ և ծանոթությամբ և իրենց ամբողջ
կարևոր հիշատակարաններով»։

¹ Տպագրված և անտիպ աշխատությունների մատենագիտությունը
տե՛ս «Հանդես ամսօրյա», 1923, սյունակ 553—558.

² 1896, էջ 403—408, 454—458, 526—529, 589—592, 626—629,
660—662, 689—692, 1897, էջ 10—13, 42—46, 207—210.

«Արևելյան մամուլի» համարներում Պալյանը ներկայաց-
նում է բավական քանակով հետաքիչ արձեւը. որոնք դուրս էին
մնացել Զարբանալյանի մատենագիտությունից. Գրքերը
նկարագրված են հանգամանաւորից, բերված են անվանաթեր-
թերը, հիշատակարաններից հատվածներ, արված են ծանո-
թագրություններ:

Անհիշատակ տպագրությունների մի մատենագիտություն
էլ Պալյանը տպագրեց Քյութային. շարաթաթերթում 4. Գ.
(իս)¹:

«Բանասեր» հանդեսի մեջ (Փարիզ) 1903—1906 թվական-
ների ընթացքում՝ Տ. Պալյանը տպագրում էր հետաքիչների իր
կազմած ամբողջական ցուցակը՝ «Յուշակ հայերեն հին
տպագրությունց 1513—1850» վերնագրով և Կապետ ստո-
րագրությամբ: Տպագրությունն ընդհատվում է կեղծ ստո-
րագրության վերծանման պատճառով (ԿԱՊԵՏ թաքս ընթեր-
ցումն է Տրդատ Եպիսկոպոս Պալյան Առաջնորդ Կեսարիո
բաղերի առաջին տառերի, որ նաև վտանգավոր կացութուն
է ստեղծում հեղինակի համար):

Այս մատենագիտությունն տպագրությունն ընդհատվում է
1868 թվականով: Շրայարակված այդ մասի մեջ նշված են
ու թիչ գրքեր, որոնք չկային նախրան այդ եղած մատենագի-
տական ցանկերի և աշխատությունների, մասնավորապես՝
Գ. Զարբանալյանի «Հայկական մատենագիտության» մեջ
(իսկ մի քանիսը չկան նաև Ա. Ղազիկյանի մատենագիտու-
թյունում):

Պալյանի բոլոր մատենագիտական ցանկերն և արժեյա-
վոր են, նրանք շատ են օգնել ոչ միայն հայ տպագրության
պատմությամբ զրադվողներին, այլև ուրիշ բանասերների՝
այլևայլ տեղեկանքներ հաղորդելով:

Պալյանի մատենագիտական աշխատություններն էլ, ան-

¹ 1899, № 50, էջ 824—827 և 1900, № 1, էջ 3.

² 1903, էջ 203—227, 1904, էջ 47—51, 1905, էջ 59—62, 1906—110,
145—150, 280—286, 325—327, 1906, էջ 55—61.

չուշտ, իրենց թերութիւններն ունեն, ոչ միայն քաջթողում-
ների (ալդպիսիք Բալական զգալի են), այլև վրիպումների և
որիշ անհշտութիւնների տեսակետից: Բերենք Երկու, օրի-
նակ միայն. «Անհիշատակ տպագրութիւններ» Հոդվածում
(«Հանդես ամսօրյա», 1897, էջ 270) հիշված է 1513 թ. Վե-
նետիկում տպագրված *Մաշտոց*, որ իբր հիշատակվում է
Զարհանայանի մատենագիտութիւն մէջ, մինչդեռ նման
հրատարակութիւն գոյութիւն չունի իրականում, իսկ Զար-
հանայանը իր մատենագիտութիւն մէջ (էջ 403) սխալմամբ
Աղբար Թոխաթցու հրատարակած *Մաշտոցը* (1569 թ.) նմա-
նեցրել է Հակոբ *Մեղապարտի Աղթարքին*, «Յուցակ հայերեն
իւն տպագրութիւնց» ցանկում 16-րդ դարի գրքերի մէջ,
Աղբար Թոխաթցու հրատարակութիւնների շարքում Պայլանը
նշել է *Շնորհալու «Յիսուս որդի»*-ն, մինչդեռ նման հրատա-
րակութիւն նույնպէս չկա:



Հայ տպագրութիւն սլատմութիւն վերաբերյալ բանա-
սերները սկսել են զրել գեղես 19-րդ դարի առաջին կեսում:
Սրինակ, «Բազմավկայի» առաջին տարվա (1843 թ.) 5-րդ
համարում տպագրված «Ամստերդամ» Հոդվածում խոսվում
է նաև այդ թաղարում զարգացած հայ տպագրութիւն մասին
կամ Ս. Նապարյանցը 1846-ին հրատարակած իր վերև արդեն
հիշված գրքում նույնպէս խոսում է հայ տպագրութիւն
մասին¹:

Հայ տպագրութիւն վերաբերյալ առաջին հանգամանայից
աշխատողը «Բազմավկայի» 1850—1851 թվականների մի
քանի համարում անստորագիր տպագրված «Աղգային տպա-

¹ С. Назарянц Описание истории галицкой письменности в
последние времена. Катань, 1846, հայ տպագրութ. մասին՝ էջ 24, 30,
40—44 և այլն:

գրության սկզբնավորութիւնը և հառաջանալուն պատմութիւնը, հոգւածն է՝:

Այնուհետեւ, ուշադրութեան արժանի են Ղ. Ալիշանի «Զոր-րորդ դարամուտ տպագրութեան հայոց: Արգար Դպիր Քա-խաթի: աշխատութիւնը», ընդ որում, նույն նեղիւնակ Արգար Քախաթիւն նվիրած փոքր-ինչ ավելի բնագարձակ բաժին գրեց իր «Հուշիկը հայրենայաց հայոց հանրամատչ: ի աշխատութեան մեջ:

Սա հայ տպագրութեան պատմութեան լուսարեւմտն ...-ն շրջանն էր, երբ առաջին հայ տպագրիչ էր համարվում Ար-դար Դպիր Քախաթիւն, իսկ հայ տպագրութեան երախայրի՝ 1565-ին Արգարի տպագրած Սաղմոսարանը:

Արգարից էր հայ տպագրութեան պատմութիւնն սկսում եւս Ալեքսանդր Երիցյանը իր «Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնհինգերորդ դարը» աշխատութեան մեջ, որ տպագրվեց «Փոքրէի» (Թիֆլիս) 1881 թ. 4-րդ հա-մարում¹, Երիցյանի այս աշխատութեան մեջ բերվում են Նատիպերի մի շարք առանձին ցուցակներ քստ տպագրա-վայրերի: Քիչ չեն հոգւածում տեղ գտած անճշտութիւնները: Ասենք մեկի մասին, որ Նետո մտահոգութեան առարկա եղավ մատենազետեւոթի համար: «...նշանավոր արեւելագետ Փոս-տնլը մի բազմալեզու քերականութիւն հրատարակեց 1472 թիին, և այդ աշխատութեան մեջ ամեն մի լեզվի տառերով յանի մի երես կա տպած: Ի թիվս այլոց հայերեն տառերով էլ քանի մի երես գրութիւն կա դորա մեջ...»²: Գ. Պաստելի այդ բազմալեզու քերականութիւնը այժմ հայագիտութեանը լավ ծանոթ մի գիրք է, այն տպագրվել է Փարիզում, 1538 թվականին և ոչ երբէք 1472-ին: Մեզ անհայտ է, թե որտե-ղից է վերցրել այս թվականը Երիցյանը, որ, ինչպէս տեսանք

1 «Բազմավեկ» 1850, էջ 230—234, 344—348, 1851, էջ 40—43, 182—184.

2 «Բազմավեկ», 1865, էջ 213—221.

3 էջ 1—32.

4 «Փոքրէ», 1881, № 4, էջ 2.

մտել է նաև Զարբհանալյանի «Պատմություն Հայկական տպագրություն» մեջ (թեև Զարբհանալյանը այդ գիրքը չի համարում Պոստելինը, փեթլինիս գրքի հրատարակման ժամանակը նա գիտի և այդ գրքի մասին խոսում է առանձին, էջ 36)։

Անշուշտ, Երիցյանը սխալվում է Պոստելի գիրքը հիշյալ իմականի հետ կապելով, բայց արդյո՞ք այդ 1472-ը լիովին մտացածին թվական է, թե՞ հայատառ տիպ ունեցող որևէ դրքի հրատարակության տարեթիվ, այդ պարզելու կարոտ է։

Ինչ էլ որ լինի, Երիցյանը իրավացի էր, երբ գրում էր. «Թեև մենք ընդունեցինք հայ տպագրության սկիզբը 1565 թվին, բայց իրոք գորանից բավականին առաջ է սկսվել գործը»¹։ Իրոք, դործն սկսվել էր ավելի բան կես դար առաջ, բայց մոռացության էր տրվել, և պետք եղան քանասիրության քանքերը նորից հայտնաբերելու համար այդ գործը, ուսինքն՝ հայ տպագրության իրական սկիզբը և իրական հայ առաջին տպագրիչի անունը։

Հայտնաբերման այդ աշխատանքն սկսվեց 1880-ական իմականների փերչին։ Նախքան այդ էլ քանասիրության մեջ տրվեն խոսք եղել էր Հակոբի տպագրած գրքերի մասին, միայն անհայտ էր մնում տպագրիչը, տպագրության ժամանակն ու վայրը։ Առաջինը Ղ. Ալիշանն էր, որ վերահիշյալ իր հոդվածում գրեց Ս. Ղազարի դրադարանում պահվող «Աղթարի» մասին՝ նշելով, որ թեև գրքի թվականը որոշել չի կարող, բայց իր իմացած հայերեն տպագրությունների մեջ ամենահինը պետք է լինի²։ Միաժամանակ Նյուելով «Աղթարի» մեջ ունեցող կախարդանքներից և սնահավատ այլ հատվածներից՝ Ալիշանը խիստ անուպաստ էր խոսում թե՛ դրքի, թե՛ նրա անհայտ տպագրողի մասին։ Հաջորդը Զարբհանալյանն էր, որն, ինչպես արդեն գիտենք, իր «Հայկական մատենագիտություն» մեջ իրեն անհայտ ժամանակի և վայրի հրատարակություններ ներկայացրել է «Աղթարեն» ու «Ռուրաթագիրքը»։

¹ Նույն տեղում։

² «Ռազմավեստ», 1885, էջ 221.

1889 թվականին Վիեննայի Մխիթարյաններից Գ. Գովրիկյանը «Հանդես ամսօրյաում»՝ մանրամասն նկարագրեց Պարզատումարը¹։ Այս գրքի ընագրի սկզբում Նիվազ 961 հայկական թվականը, որ «Պարզատումարի» օրացուցային կամ՝ տարեցուցային՝ առաջին թվականն է, Գովրիկյանը հաշվելով իբրև արդի թվակարգության 1512 թ., համարեց այդ գրքի հրատարակության տարին։ Գովրիկյանը հիմնվում էր այն ճշմարիտ թվացող գրույթի վրա, որ 1512 թվականի օրացույցը կա մ մի տարի վաղ (1511 թ.) պետք է տպագրվեր, չա՛մ ամենաուշը նույն թվականին։

1890 թվականին Քազմավեպումս տպագրվեց² Ա. Տիրոյանի «Առաջին դար հայկական տպագրության» հոդվածը, որտեղ մանրամասն նկարագրված են «Աղթարքն ու «Ուրբաթագիրքը»։ Պարզվեց, որ այս երկու գիրքը և Գովրիկյանի նկարագրած «Պարզատումարը» միևնույն տպարանի ծնունդ են (նույնն էին տառերը, տպագրության ոճը, չափը և այլն)։

Միևնույն թվականին Վիեննայի Մխիթարյաններից Գ. Գալեմթյարյանը փորձեց որոշել³, թե հայտնաբերված երեք հնագույն հայերեն տպագիր գրքերը ինչ հերթականությամբ են տպագրվել, Գալեմթյարյանը ամենահին (առաջին) տպագրությունը համարեց «Պարզատումարը»։ Այդ նկարագրությանը նա հիմնվել էր այն պատճառով, որ «Պարզատումարի» սկզբի իջում ընագիրը գարդագրով չի սկսվում, այլ սովորական հրկաթագրով (դիխագրով), մինչդեռ, օրինակ, «Ուրբաթագրքի» ընագիրը սկսվում է զարդագրով, Գալեմթյարյանը ենթադրում է, որ երբ սկսվել է «Պարզատումարի» տպագրությունը դեռևս պատրաստ չեն եղել զարդագրերը, ժնգիվ մատենին կիսեն հետք կղրվի զարդագիր, որ, անշուշտ, տպագրության հառաջնության նշան է⁴։ Ահա Գալեմթյար-

1 էջ 209—212.

2 էջ 90—104.

3 «Հանդես ամսօրյա», 1890, էջ 161—163.

4 Նույն ազգում, էջ 162.

յաճի այս կառծիքի հրապարակումից հետո «Պարզատումար» հոյակվեց հայերեն տառիւն տպագիր գիրք, և այդ պատիվը նա վայելեց ազնի բան 70 տարի: Իսկ «Պարզատումար» սկզբում եղած 1512-ն էլ Դովրիկյանի վերահիշյալ ենթադրութիւնից հետո ընդունվեց իբրեւ այդ գրքի տպարարութեան թվական:

Դայեմբարյանը առանց որեւէ պատճառարանութեան մյուս երկու դրքերը համարեց 1513 թվականի հրատարակութիւն (չպատճառարանվեց, թէ ինչու այդ դրքերը չէին կարող միևնույն 1512 թվականին և կամ 1514 ու հետագա թվականներին տպագրված լինել):

Նույն 1890 թվականին Ս. Խապայանը Կ. Պոլսի «Արեւել-յում» տեղեկացրեց «Պարզատումար» տառերով տպագրված մի յորոգող գրքի՝ «Տաղարանի» մասին:

Իսկ այդպէս հայտնի դարձան միևնույն տպարանից դուրս եկած հայերեն չորս հնագույն հրատարակութիւններ: Անհայտ էր մնում հրատարակութեան վայրը, տպարանը և տպագրիչը:

Այս տվյալներն էլ պարզվեցին 1892 թվականին, երբ «Ռադմավեպ» մեջ ըստ Ս. Խապայանի տված տեղեկութեան տպագրվեց մի հաղորդում արդեն հայտնի դարձած չորս պրսերի տառերով ու դիրքով տպագրված հինգերորդ գրքի՝ «Պատարագատետրի» մասին (երեսագեղմում գտնվող)¹: Ուրվեց գրքի փոքր հիշատակարանը, որ հետո այնքան նվիրական դարձավ հայ մշակութի պատմութեան մեջ²: Այդ հիշատակարանից պարզվում է, որ «Պատարագատետր» ուստի և մյուս չորս դրքերը տպագրվել են Վենետիկում, Հակոբ անունով մի մարդու կողմից, որը ըստ ժամանակի հիշատակարանների ոճի իրեն մեղապարտ է համարում: Միայն «Ռադմավեպ» այդ հաղորդման մեջ աղճատված էր հիշա-

¹ «Ռադմավեպ», 1892, էջ 193:

² «Դրեցաւ սուրբ տառս ի Զեթ, ի աստուածապահ քաղաքս Վենէժ, որ է Վենետիկ, ֆռանկոստան, ևնոմար մկրտապարտ Յակոբին. ով որ կարդայր, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»:

տակարանում եղած թվականը. գոթական ՋԿՐ (1513), տպված էր ԶԼՐ, որ 1523 թվականն է:

Այս սխալն էլ 1894-ին ուղղեց Տ. Պալյանը «Հանգես ամսագրաբանում»¹ հրապարակած իր մի հոդվածով: Պարզվեց, որ «Պատարագատետրը» տպագրվել է 1513 թվականին: Պալյանը հենվելով Գ. Գալեմբյուրյանի վերը բերված կարծիքի վրա տալիս է նաև հինգ հնագույն հայերեն գրքերի տպագրության հետևյալ հերթականությունը՝ «Պարզատուժար» (1512), «Պատարագատետր» (1513), «Ուրբաթագիրք» (1513), «Տաղարան» (1513), «Աղթարք» (1513): Պալյանն էլ չէր պատճառաբանում, թե ինչու՞ վերջին երեք անթվակիր գրքերը պետք է տպագրված լինեն համակապես 1513 թվականին: Ըստ որում, հանգեսի միևնույն համարում Գալեմբյուրյանը նույնպես հինգ գրքերի տպագրության միևնույն հաջորդականությունն էր տալիս:

Հայ հնագույն գրքերի տպագրության այս հաջորդականությունը դարձավ ավանդական, անցավ բազմաթիվ հոդվածների, գրքերի ու հանրագիտարանների մեջ և միայն վերջերս հնարավոր եղավ պարզել, որ այդ հաջորդականությունը սխալ է (ճիշտ է հետևյալ հերթականությունը՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատուժար», «Տաղարան») և որ մանավանդ «Պարզատուժար»-ը հինգ գրքերից ոչ թե առաջինը, այլ չորրորդն է տպագրվել, իսկ նրա 1512-ն էլ հավանաբար այն ձեռագիր օրացույցի (պարզատուժարի) առաջին տարվա թվականն է, որից կատարվել է տպագրությունը²:

1906 թվականին Կ. Գաբրիկյանը «Բյուզանդիոնի» (Կ. Պոլիս) մեջ³ գրեց Հակոբի գրքերի տառերով տպագրված նաև

¹ էջ 357—361.

² էջ 363.

³ Տե՛ս «Բանբեր մատենագրարանի», 1906, № 7, էջ 275—295 և մանավանդ՝ № 8, էջ 183—189.

⁴ № 2963.

մի վեցերորդ գրքի՝ Սաղմոսարանի մասին, որ նա անել էր Սևրաստիայում:

Մոտենում էր 1912 թվականը, որն ըստ «Պարզատու-մար»-ի 1512 թվականի հոբելյանական էր, այսինքն՝ լրա-նում էր հայ տպագրության շորթորդ դարադարձը:

Հայոց մամուլում հարց բարձրացվեց 1512 թ. միասին նշել հայ գրերի գյուտի 1500-ամյակը և տպագրության 400-ամյակը: Սակայն հայոց մամուլը այս դեպքում ես հա-վատարիմ մնալով լավ գործերը աշատու վեճի նյութ դարձ-նելու իր սովորությանը՝ սուր բանավեճ սկսեց նախ այն մասին, թե արդյո՞ք ընդհանրապես պետք է նշել հայ տպա-գրության 400-ամյակը և ապա՝ եթե նշելու հիմք կա, ծ՞րք պետք է նշել 1912-ի՞ն, թե հաջորդ թվականին: Փոխադարձ հրաձգությունը ամենից թեժ էր թիֆլիսահայ թշնամացած լրագիրների՝ «Հորիզոնի» և «Մշակի» միջև: Բանն այն է, որ 1912 թվականին լրանում էր «Մշակի» հիմնադրման 40 տարին և մշակականները ուզում էին, որ այդ տարին լինե՞ր հայ հասարակական կյանքի ուշագրության կենտրոնում իբրև «Մշակի» տարի, որը իրենց լրագրին բարոյական և նյութա-կան օգուտ կարող էր բերել: Եթե նույն թվականին համազ-դային չափերով տոնվեին նաև տպագրության օւ գրերի գյուտի հոբելյանները, պարզ է, որ մշակականները իրենց նպատակին չէին հասնի:

«Հորիզոնը» իբրև «Մշակի» ընդդիմախոսը, քնավ ոգեոր-ված չէր «Մշակի» 40-ամյակը մեծ փառատոն դարձնելու հեռանկարով, ուստի 1912-ը գրերի գյուտի և տպագրության համազդային տոն դարձնելը «Հորիզոնի» կողմնակիցներին փայլուն հեռանկար էր թվում:

Իհարկե, այս նկատառումները վիճարանող կողմերը խնամքով թաքցնում էին և միայն խիստ զրգովածության պահին էին համապատասխան խոստովանություններ անում: Իսկ ընդհանրապես վեճը բանասիրական տեսք ուներ: «Մշա-կի» մեջ Ս. Մալխասյանցը նախ կատակածի ենթարկեց Հակոբ Մկրտչյանի անունով հայտնի դարձած հինգ գրքերի խակա-

կան տպագրութիւն լինելու հանգամանքը: Նա պնդում էր, որ այդ գրքերը փայտափորագիր գրուձվածքով են հրատարակվել և ոչ թէ շարժական. այսինքն՝ շարվող ու ցրվող տառերով: Հայտնի է, որ փայտափորագիր գրքերը, որոնք Գուտենբերգից շատ առաջ նվիրույալում տարածված էին, իսկական տպագրութիւն չեն: 15-րդ դարի կեսերին նվիրույալում Գուտենբերգի կողմից սկզբնավորված տպագրական արվեստը որ նախնական ձևով 11-րդ դարից օգտագործվում էր (Զինաստանում) շարժական տառերի զաղափարի վրա է հենված: Առաջին հայերեն տպագիր գիրք կարող էր լինել միայն շարժական տառերով տպագրված գիրքը. բայց ոչ երբեք փայտափորագիր հրատարակութիւնը: Մալխասյանցն ահա պնդում էր, որ Հակոբ Մեղապարտի 5 գրքերը փայտափորագիր են, քանի որ միևնույն տառի տարբեր գրուձվածքները միմյանցից տարբեր են. մինչդեռ շարժական տառերի պարագայում նույն տառը բոլոր դեպքերում նույն գրուձվածքն է ունենում, քանի որ նրա բոլոր նմուշները միևնույն մայրից են ձուլված լինում:

Բացի այդ, Մալխասյանցը վիճարկում էր «Պարզատումարի 1512 թվականը. գտնելով, որ Գովրիկյանը սխալվել է և որ բոլոր հինգ գրքերն էլ 1513 թվականին են լույս տեսնում, հետևաբար եթե հորեկյանը նշելու հարց էլ լինի, ապա այն կարող է նշվել 1913-ին և ոչ երբեք 1912-ին: Մալխասյանցի տեսակետը պաշտպանողների մեջ էր նաև Գ. Թեանյանցը:

«Հորիզոնի» թանր հրատեսիլն էլ նույն էր, որը պնդում էր, թե հնագույն հինգ հայերեն գրքերը տպագրված են շարժական տառերով և որ «Պարզատումարի» տպագրութիւն տարեթիվը 1512-ն է¹:

Բանավեճի միտումնավոր ընդլայնումը այսօր պայմանավորված է նաև այն բանից, որ վիճողներից ոչ մեկը չէր տեսել հայ տպագրութիւն հինգ հնագույն նմուշները:

¹ Մշակ., 1912, №№ 18, 19, 26, 27.

² Հորիզոն, 1912, №№ 19, 24, 25, 33.

Ի վերջո, վիեննայից ստացվում է Ն. Ակինյանի հոգվածը՝ «Հայերեն տպագրության առաջին տարին 1512 թվականն է. վերնագրով, որը միաժամանակ տպագրվեց «Մշակում և «Հորիզոնում»։ Ակինյանը փաստերով ցույց էր տալիս, որ Հակոբի գրքերի մեջ թեև յուրաքանչյուր տառի դրոշմվածքները միմյանցից տարբեր են, բայց կան նաև նույն տառի նույնական դրոշմվածներ՝ միևնույն մայրիզ ձևով։ Ապա օրինակներ էր բերում մի շարք զուտ տպագրական վրիպակների (տառերի ետևադասության, շուռ եկած տառերի և այլն)։ Անառարկելի դարձավ, որ Հակոբի գրքերը իսկական (շարժական տառերով) տպագրության արդյունք են։

Մալխասյանցը և Նրա կողմնակիցները փաստերի առաջ քննրկելով ընդունեցին իրողությունը², սակայն անդրդվելի մնացին «Պարզատումար»-ի թվականի հարցում, տոմարակառն խրթին հաշվումներով՝ Մալխասյանցը շարունակում էր ողնդել 1513-ի վրա³։

1913 թվականին «Հանդես ամսօրյայում» տպագրված հորեյանական հոդվածում⁴ Նրա հեղինակ Գ. Գալեմբյարյանը վրիպելով իր նախնական կարծիքը «Պարզատումար»-ի տպագրության տարեթվի մասին՝ պաշտպանեց Ս. Մալխասյանցի տեսակետը 1513-ի վերաբերյալ։ Ուշագրավ էր, որ այս հոդվածում Հակոբի մյուս գրքերի թվականը ալիս 1513-ը չէր դրված, այլ հնարավոր էր համարում, որ «հաջորդ տարիները տպված ըլլան, նաև կարելի է շատ տարիներ մեջերսն անցած ըլլա»։

Ինչպիսի Մալխասյանցը, այնպես էլ Գալեմբյարյանը հենվելով 16-րդ դարի վենետիկյան մի վավերագրի վրա գտնուի ին, որ Հակոբի հինգ գրքերը տպագրվել են իտալական մի տպարանում, որի տերերը ևղել են Տերաչինա եղբայրները⁵,

1 «Մշակ», 1912, № 34, «Հորիզոն», 1912, № 33.

2 «Մշակ», 1912, № 35.

3 «Մշակ», 1912, № 57.

4 «Հանդես ամսօրյա», 1913, էջ 709—718.

5 «Մշակ», 1913, № 226, «Հանդես ամսօրյա», 1913, էջ 717.

և նրանց անվանատառերով էլ աշխատում էին բացել Հակոբի ցրերի խաչածն նշանի տառերը (D. I. Z. A.):

Այնպես չէ նշել, որ այն շրջանում քանասերների մեծ մասը հակված էր կարծելու, որ Հակոբի հինգ զրբերը որևէ խաչակալան տպարանում են տպագրվել, նաև խաչափայտների կողմից¹։ Եվ տարբեր փորձեր արվեցին վերծանելու հայ-խեն նազույն տպագրությունների վերջում դրված խաչածն նշանի լատինական տառերը։ Բոլորը փորձում էին այդ տառերի տակ որևէ խաչակալան անուն-ազգանուն տեսնել, և միայն Կ. Բասմաջյանն էր, որ եեթադրեց, թե դրանք Հակոբի անվան հետ կապված տառեր են, իսկ Հակոբին էլ համարեց խաչաքանակ կաթուղի հայ²։ Ահա մոտավորապես այս վիճակում էր հայ տպագրությունների սկզբնավորման հարցերի ուսում։ Նասիրյան մակարդակը, երբ հայությունը 1912-ին նշեց հայ տպագրության 400-ամյակը։

Նախքան հոբելյանը հայ տպագրության մասին տպագրված աշխատություններից ու հոդվածներից կարելի է հիշել նաև Ֆրանսիացի Հ. Բորիի «Հայկական տպարան ի Մարսել»³, Մ. Ուդուրյանի «Հայկական տպարան ի Լիվոռնո»⁴ հոդվածը՝ (որ մի մասն է հեղինակի առանձին զրբով հրատարակված «Պատմություն հայոց զաղթականության և շինության եկեղեցվո նոցա ի Լիվոռնո քաղաքի» աշխատության, Վենետիկ, 1891 թ.), Ա. Այվազյանի «Հայ տպարաններ. ակնարկը «Շար հայ կենսագրությանը» 3-րդ հատորում»⁵ Ա. Ալպոյանյանի մի ժանի հոդվածները, ինչպես, օրինակ, «Հայ տպագրության գործին մեջ նշանավոր դեմքի մը»⁶ և մանավանդ նրա «Տպագրության արվեստը և հայր»

¹ Այդ կարծիքը առաջինը հայտնել է Ղ. Այիշանը՝ հինգ զրբերի տպագրությունը վերագրելով խաչափայտ Զուան Անդրեասին։

² «Արմենիա», 1912, № 39.

³ «Բազմալեզու», 1891, էջ 161—168, 193—200.

⁴ «Բազմալեզու», 1891, էջ 292—299.

⁵ Ա. Այվազյանը Շար հայ կենսագրությանը, Հտ. 3, 4. Պոլիս, 1893, ԺԲ, էջ 177—181.

⁶ «Մասիս» (Կ. Պոլիս), 1908, № 7, էջ 137—141.

մեծածափալ աշխատությունը, որ հիմնականում մնում է անտիս¹, Վ. Զարդարյանի երկու հոդվածը² և այլն, իսկ ամենից ուշագրավը Լեոյի «Հայկական տպագրություն» երկհատոր աշխատությունն էր, որ հեղինակը գրել էր Գուսեներեղի ծննդյան 560-ամյակի կապակցությամբ (տունվեց 1900 թ. իունիսի 11-ին)։ Աշխատությունը նախ տպագրվեց «Մշակում», ապա լույս տեսավ երկու հատորով 1901—1902 թվականներին³ (առաջին հատորը վերահրատարակվեց 1904-ին)։

Այս աշխատությունը փաստորեն անավարտ մնաց, քանի որ 1902-ին լույս տեսած 2-րդ հատորի 1-ին մասից հետո պետք է հրատարակվեր նույն հատորի 2-րդ մասը, որ տեղի ունեցավ։ Այսինքն Լեոն հայ տպագրության պատմության նոր շրջանը չդրեց կամ հրատարակ չհանեց, աշխատությունն ընդհատվեց 18-րդ դարով։

Այդպիսով, Լեոյի աշխատությունը, իրապարակում է դաժ միեակտի, ճիշտ կյինի կոչել⁴ Հայկական հին տպագրություն։

Այս աշխատության կարևոր հատկությունն այն է, որ հեղինակը մեծ շեղումներ է անում բուն գրքի, տպագրության պատմության հարցերից՝ ընթերցողին ներկայացնելով նաև հայոց հին տպագրության ժամանակաշրջանի քաղաքական ու մշակութային պատմության բաղմամբիվ նարեց, 16—18-րդ դարերի հայ մշակութի և քաղաքական-եկեղեցական

¹ Առաջին 8 գլուխները տպագրվել են 1913 թվականին, Քիֆլիսի-Արորս հանդեսում իրեն հավելված, 11-րդ գլուխը տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում» (Երևան, 1964, № 2, էջ 67—84), իսկ ամբողջ Առաջիկը պահպանվել է Հայաստանի գրականության ու արվեստի թանգարանում։

² Վ. Զարդարյան Հիշատակարան, Կ. Պոլիս, 1910, Հտ. 1, էջ 20, 57—58, Հտ. 3, էջ 439—444։

³ Լեո Հայկական տպագրություն, Մեր կյանքը, գրականությունը անցյալում, Քիֆլիս, 1901—1902։

Հտ. 1. 16—17-րդ դար, 1901, XVI, 451 էջ։

Հտ. 2. Մաս 1. 18-րդ դար, 1902, XVI, 610 էջ։

Երկրորդ հրատ.

Հտ. 1. 1904, 547 էջ։

կյանքի պատմության ընթացքը ներկայացնելով է լեռն խոսում տպագրության ընազավառում հայերի կատարած ջանքերի մասին: Լենկ-Քեմուրի ավերածություններն ու օսմանցիների բռնությունները, հայոց զաղթականությունն ու համաճառականների գործունեությունը, Շահ Արասի կազմակերպած գաղթն ու Իսրայել Օրու գործունեությունը, Սյունյաց դպրոցի դերը և խաչատուր Կեսարացու գործունեությունը, կաթոլիկական քարոզը հայոց մեջ և դիմազրավումը, — ահա այսպես անցնում են հայոց պատմության դրվագները, որոնք Լեոյի գրչի տակ կենդանություն են ստանում: «Իմ ծրագիրն էր տալ պատմվածքներ մեր անցյալի մտավոր, կուլտուրական և քաղաքական կյանքից:— Գրում է Լեռն իր գրքի մասին, — բայց ես այս աշխատությունը անվանեցի «Հայկական տպագրություն», որովհետև տպագրությունն է այն առանցքը, որի շուրջը պտույտ են գալիս իմ պատմվածքները»:

Ժամանակին Լեոյին մեղադրել են բուն տպագրության արքերից մեծ շեղումներ թույլ տալու համար: Այսօր պարզ է, որ նման մեղադրանքները հիմք չունեն. Լեոյի այդ աշխատությունը պատմական ավելի լայն տեսադաշտում նկարագրելով հայկական հին տպագրության կարևոր դրվագները, դրանք ավելի ըմբռնելի է դարձրել, հեղինակը կարողացել է ցույց տալ նրանց պատմական ողջ կարևորությունը: Լեոյի «Հայկական տպագրությունը» հեղինակի լավագույն գործերից է և հայ տպագրության պատմության մասին դրված ուշադրավ աշխատություններից, «շատ ընտիր գործ» Ավ. Իսահակյանի բնորոշմամբ¹:

Հայրենասիրությունը անցնում է Լեոյի գրքի սկզբից մինչև վերջը, նա խիստ խոսքեր է ասում այն հայերի հասցեին, որոնք նրա կարծիքով վնաս են հասցրել հայոց քաղաքական-

1 Ա. Իսահակյան, Երկեր, Հտ. 4, Երևան, 1959, էջ 109:

մշակութային առաջադիմությանը՝ Ռստ որում, Երբեմն Լեոյի դայրույթը այս կամ այն Երևույթի վերաբերմամբ ավելի է լինում, քան սլետը է, Երբեմն էլ Երևույթները ճիշտ չեն մեկնելովում, Հետաքրքրական է Ռսկան հրեանցու, մեծ տպագրչի և հայրենասերի գործունեության վերազնահատումը Լեոյի կողմից:

Րնդհանրապես Լեոյի աշխատությունը լավ ընդունվեց հայ հասարակայնության կողմից, այն բարձր գնահատեց Ստ. Մախասայանցը¹, որը մի քանի տարի անց պետք է շատ սուր և փոխադարձ փրամպորանքներով էի վեճ սկսեր նույն Լեոյի դեմ, Լեոյի այս աշխատությունն ունի նաև ոչ քիչ թերություններ, հատկապես մատենագիտական ընույթի սխալները պայի քանակ ևն կազմում ամբողջ շարադրանքի մեջ: Բայց այս դեպքում ավելորդ ենք համարում նման անճշտությունների սրինակներ բերել², քանի որ, ինչպես ասվեց, այս աշխատությունը իր մի մասով է մատենագիտական, հիմնականում այն հայ ժողովրդի պատմության մի հատվածն է, ուր համեմատաբար ավելի շատ ուշադրություն է դարձված հայ հին տպագրչիների գործունեությանը:

Հայկական տպագրության հորեյանի շրջանում՝ 1912-ին, մասամբ էլ 1913-ին մեծացավ հետաքրքրությունը Հայկական տպագրության նկատմամբ, դրվեցին մի շարք հոդվածներ, այդ թվում Լեոյի, Ալեքսանդր Մյասնիկյանի³, Համբարձում Առաքելյանի⁴, Գրիգորիս Գալսեմյարյանի⁵, Արշակ Ալոյյան-

1 «Մուրհ», 1901, № 3, էջ 208—212:

2 Լեոյի աշխատության մեջ հղած բաղմամբիվ սխալներ ու բացթողումներ (դիտամբարապես հեղահայ տպագրության վերաբերյալ) նշել է Հ. Իրազեկը «Հայկական տպագրության անցյալից»- իր հոդվածում («Վեճ», 1935, № 2, էջ 27—44):

3 «Մշակ», 1913, № 263:

4 «Մշակ», 1912, № 227, 1913, № 226:

5 «Հանդես ամսորյա», 1913, էջ 709—718:

յանի¹, Ստ. Մալխասյանցի², Ա. Մատիկյանի³, Գ. Ճարտաշ-
յանի⁴, Ա. Վարդանյանի⁵ և այլոց կողմից:

Հրապարակվեցին հորելյանին նվիրված բանասիրական
նյութերի ժողովածուներ:

Ավելի ուշագրավ էին լեռնի Հայ գրքի տոներ⁶ հորելյա-
նին նվիրված աշխատությունը⁷ և մանավանդ Թևոզիկի
«Տիպ ու տառը»:

Լեռնի այս հորելյանական աշխատությունը նախկին երկ-
նատորյակի սոսկական համադրումներ չէ. այստեղ նոր նյու-
թեր կան ավելացված:

Թևոզիկի աշխատությունը մի ինքնուրույնակ և շատ թան-
կագին նվեր էր հորելյանին: Ընալակով ձևավորված, 180
բարձրորակ պատկերներով, առաջնակարգ թղթի վրա հրա-
տարակված այդ գիրքը տեղեկություններ է տալիս գրի,
գրքի ու տպագրության ընդհանուր պատմությունից, ապա
նաև հայոց գրի, գրատեսակների, և հայ մատենագիտության
մասին: Աշխատության հիմնական մասը նվիրված է հայ-
կական տպագրությանը, սկզբից մինչև հորելյանի օրերը:
Նյութը զասավորված է ըստ երկրների: Սկսվում է Իտալիա-
յով, քանի որ այստեղ են առաջին անգամ մեքսոպյան տա-
ռերը տպագրության առարկա դարձել: Այնուհետև, ըստ հայ
տպագրության տարածման հերթականության խոսվում է
Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Պարսկաս-
տանի, Հոլանդիայի, Գերմանիայի, Անգլիայի, Նիդերլանդների,
Ռուսաստանի, Սփյուռքի և այլ երկրների մեջ տպագրված
հայերեն գրքերի և նրանց տպագրիչների մասին: Ամենից

1 Բյուզանդիոն, 1913, N 5170, «Կոչնակ», Նյու-Յորք, 1912, N 2,
էջ 43—45, N 3, էջ 64—67, N 4, էջ 87—91, N 5, էջ 112—117:

2 Մշակ, 1913, N 226:

3 Հանդես ամսօրյա, 1913, էջ 705—708:

4 Հայ գրի և տպագրության մեծ տոներ, ժողովածու, Աստրախան,
1913, էջ 8—10:

5 Հանդես ամսօրյա, 1912, էջ 307—309:

6 Այս Հայ գրքի տոներ, Թիֆլիս, 1912, 208 էջ: Վերահրատարակված
1913-ին, 110 էջ:

7 Թևոզիկ Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, 192 էջ:

ՆԱԾԱԳԻՐ ԴԻՄԻՏՐ ՏԵՐԵՐ ՆԻՐ ՆԱԾԻՐԱՆԻՔԻ Ա՝

ՏԻՅ ԴՐՈՒՄԻՆԱԼԻՑԻ

ՀԱՅԿԱՅԻՆ ՊՐԻՆԿ ՆԱԾԱԳԻՐԱՆԻ ԱՌԱՅՈՒՆ

(1812-1813-1814)

ՏԻՄԱՆԱԼ

ԴԻՄԻՏՐ ՏԵՐԵՐԻ Ա՝ ՆԱԾԻՐԱՆԻՔԻ Ա՝
ՆԱԾԻՐԱՆԻՔԻ ՊՐԻՆԿ ՆԱԾԱԳԻՐԱՆԻ

ՆԱԾԱԳԻՐԱՆԻՔԻ ՏԻՅ 180 ՆԱԾԱԳԻՐԱՆԻՔԻ



ՀԱՅԿԱՅԻՆ ՊՐԻՆԿ ՆԱԾԱԳԻՐԱՆԻ

ՆԱԾԱԳԻՐԱՆԻՔԻ ՏԻՅ ԴՐՈՒՄԻՆԱԼԻՑԻ

ՀԱՅԿԱՅԻՆ ՊՐԻՆԿ

ԱՌԱՅՈՒՆ

ԹԼՈՂԻԿԻ «ՏԻՄԱՆԱԼ» ՆԱԾԱԳԻՐԱՆԻՔԻ

ծավալուն, ինչպես և նոր փաստերով առատ համաժամար
«Քուրբան» գլուխն է։ Քեոզիկը լինելով պոլսեցի՝ շատ փաս-
տեր է բերել այս քաղաքում գործած տասնյակ հայկական
տպարանների ու նրանց տրտազրանքի մասին։ Քեոզիկի այս
գիրքը նույնպես լավ ընդունվեց հասարակայնության կողմ-
ից¹։

Գրքի թերությունները հիմնականում սպրդած մատենա-
դատական անճշտություններն են, ինչպես, օրինակ, հաշա-
տուր էրզրումեցու 1696 թ. տպագրված «Գիրք քերականու-
թեան»-ը դարձել է (էջ 51, 1691-ի հրատարակություն) ի
ղեպ, այս անճշտությունը գալիս է Զարհանալյանի մատե-
նագիտությունից²։ Հովհաննես Արժիշեցու «Մեկնութիւն Ս.
Պատարագի» («Խրատ Սրբոյ խորհրդոյ») գիրքը (Կ. Պոլիս,
1717) դարձել է երկու հրատարակություն (էջ 53)՝ «Մեկնու-
թիւն ահաւոր խորհրդոյ Ս. Պատարագի և «Մագթանք ձեռ-
նըտուութեան առ կոյսն Երանուհի» (իրականում երկուսը
միասին են հրատարակվել, իբրև մեկ գիրք)։ Հովհաննես
Հաննայի «Գիրք պատմութեան... Երուսաղէմին» գիրքը զրվել
է 1727-ին և տպագրվել 1731-ին, Քեոզիկը առաջին թվակա-
նը զրել է իբրև տպագրության տարի (էջ 57), ներսևս կամ-
րոնացու «Տեսութիւն ազօթից» («էր ընդ եղբարսն») գրքի
1736 թ. հրատարակության (Կ. Պոլսի) թվականը դարձել է
1740 (էջ 60), 1752 թ. հրատարակված «Տաղարան վայի-
լու»-ը (Կ. Պոլիս) դարձել է 1758-ի հրատարակություն
(էջ 59), Վենետիկում 1779-ին տպագրված «Խրատը յաղագս
կրօնաւորական կատարելութեան»-ը (Ղուկաս Պինեզյանցի)
տրված է իբրև 1777-ի տպագրության (էջ 45) և այլն։

1912 թվականի հոբելյանի ազդեցությամբ, հաջորդ մեկ-
երկու տարիներին էլ զրվեցին հայկական տպագրության
փերաբերյալ մի քանի ոչ մեծ աշխատություններ, որոնցից
էին Գալեմբյարյանի «Հայ Աստվածաշունչի տպագրության

¹ Տե՛ս, օրինակ, «Հանգն» տառարկա, 1913, էջ 638։

շանթեր Ոսկանեն առաջ¹ և «Հոռմա առաջին տպագրութիւնը 1579-ին է»² արժեքավոր հոգւածները և Սարգիս Սեհաթճի «Խասպարյանին նմիրված գլուխը «Կենսագրութիւններ երկու չալ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու...» զրքի մէջ (Վիեննա, 1915)։

Այնուհետեւ, հայկական տպագրութեան հարցերով բանասիրութիւնը զրեթեւ դադարեց զբաղվելուց մինչև 1930-ական թիվականները, երբ Վ. Զարդարյանի հիշատակարանները հետաքրքրական նյութեր տալէին հայ հին տպագրիչների մասին, իսկ հայկական հին տպագրութիւնը նոր ուսումնասիրութիւններէի նյութ դարձաւ 1950-ական թիվականներից սկսած։

¹ «Հանդես ամսօրյա», 1914, էջ 7—18։

² Նույն տեղում, էջ 17—22։

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒՂԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց պարբերական մամուլը «կգրեամբորվեց 19-րդ դարի շեմքին, Հնդկաստանում: Ապա Վենեթիկում այն եղավ կամուրջ երկու դարերի միջև ու հետո թաքածվեց հայկական ամենատարբեր ընկալվալորում:

2. Շմավոնյանի հիմնած առաջին հին պարբերականը՝ «Ազդարարը» (Մադրաս, 1794—1796 թթ.) գրադար էր, բայց նրան հաջորդած «Տարեգրությունը», որ Վենետիկի Մխիթարյանները սկսեցին հրատարակել 1799-ից, աշխարհարար էր: Մխիթարյանների հաջորդ պարբերականը՝ «Եղանակ Բյուզանդյանը» (1803 թվականից) նույնպես աշխարհարար էր: Եվ այդպես հայոց պարբերական մամուլը հենց սկզբից սկսեց զարդանալ գրադար ու աշխարհաբար բնգուներով, մինչև որ վերջնականապես հաղթեց աշխարհաբարը:

Հայոց պարբերական մամուլի գոյություն առաջին հիսնամյակի ընթացքում (որ մոտավորապես համընկնում է 19-րդ դարի առաջին հիսնամյակին), եթե պարբերականներ էրանակր պատվում էր երեք տասնյակի շուրջ, հասկանալի է, որ դեռևս լուրջ պահանջ չէր զգացվում այդ մամուլը հեկայացնող մատենադիտություն ունենալու: Այդ շրջանում այն պարբերականների փերաբերյալ մատենագիտական տեղեկատվությունը բաժնեգրական հաշտարարություններից,

Դակիրն գրախոսականներից և առանձին հոդվածների մասին ազդարարումներից այն կողմ չէր գնում:

Երկրորդ դարակեսում արդեն սկսում են գրվել ակնարկներ, հոդվածներ հայոց պարբերական մամուլի պատմության վերաբերյալ: Իյդ կարգի հոդվածներ, տպագրվել են, օրինակ, «Իրշալույս Լեւոնաւորայնում» (Զմյուռնիա), «Բաղմաւնպում», «Մշակում», «Լեւոնաւորում» և այլուր: Հիշատակության արժանի է, որ օրինակ, Փիլիսոս Ճամաճյանի «Ազգային լրագիրներուն ու օրագիրներուն պատմութիւնը» հոդվածը, տպւած 1950 թվականին «Եւրոպա» (Վիեննա) շաբաթաթերթում (№ 23), Հեղինակը խոսում է Վեննետիկի «Դիտակ Ռուսկան-դյան»-ից մինչև «Ռուսաստան» պարբերականները բնկած մամանակամիջոցի հայ լրագրության մասին:

Հայ լրագրության մասին գրված է նաև հայագետ է. Դյույրյի «Начальные армяне» գրքում (Իրֆիս, 1856):

Ինչպիսի ասել ենք, հայ լրագրության ակնարկ է տվել նաև Գ. Զարրհանալյանը իր «Պատմութիւն հայերեն դպրութեան» աշխատության Բ հատորում (սնոր մատենագրութիւն», 1878, էջ 468—510), Ա. Երիցյանը բացի վերոհիշյալ աշխատութիւնից, նվիրւած հայ գրքի պատմութեանը, հրապարակել է նաև հայ լրագրության տեսութեանը վերաբերող մի հոդված («Լեւոնաւոր», 1882, № 21, 22), Եղիշե Դուրջանը իր «Պատմութիւն հայ մատենագրութեան» աշխատության մեջ (Կ. Պոլիս, 1885) նույնպիս խոսում է հայոց պարբերական մամուլի մասին (էջ 97—115), Իրգար Հովհաննիսյանը դերմաներեն հրատարակւող «Armenische Bibliothek»-ի 2-րդ տրակում (էջ 145—157) նույնպիս տալիս է հայ լրագրության վերաբերյալ ակնարկ:

Հայոց պարբերական մամուլի մատենագիտական ցանկերից կարելի է հիշել Մփնաս Գափամաճյանի «Դասագիրք հայ ազգային պատմութեան» Բ հատորի (Կ. Պոլիս, 1880) վերջում եղած «Յուրակ հայերեն լրագրաց և հանդիսից»-ը, ինչպիս և Գ. Զարրհանալյանի «Հայկական մատենագիտութիւնը», ուր, ինչպիս ասվել է, տրված են նաև հայերեն պարբերականների անունները (թեև պակասներով):

Հայոց պարբերական մամուլի պատմությանը նվիրված առաջին ծավալուն աշխատքը, լույս տեսած առանձին գրքով. Հարություն /Նիկողայոս Տեր-Հարությունյան/։ Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ. աշխատությունն է¹, որը նախապես տպագրվել էր ռուսերեն նույն թվականի «Обзор» թերթում։

Հեղինակը, ինչպես ինքն է գրում, փորձել է տալ ռուս-հայատակ հայերի 30 տարուց ավելի գոյություն ունեցող պարբերական մամուլի աշխարհը։

Նա այդ ժամանակամիջոցը քաժանել է 3 մասի՝ ա) 1847—1858, բ) 1858—1872 և գ) 1872-ից մինչև գրքի լույս բնծայման ժամանակը։

Գրքույկի սկզբում համառոտակի խոսվում է հայ ժողովրդի ին մշակույթի մասին. թեև ոչ լիովին ճիշտ դիրքերից՝ օրինակ, հայ ին ու միջնադարյան գրականությունը համարում է ժողովրդից լիովին կտրված)։

Ապա քննում է կովկասահայերի առաջին, 1847-ից հրատարակված «Կովկաս» լրագիրը (Մ. Պատկանյանի և Հ. Կարենյանի), որը համարում է նույն Թիֆլիսի ռուսերեն նույնանուն պաշտոնական, իր խոսքով ասած, «ցամաք» լրագրի սոսկ հայկական տարրերակր, իրավացիորեն քննադատում է լրագրի անհրապույր բովանդակությունն ու ժողովրդին անհասկանալի (գրաբար) լեզուն։ Իսկ Գ. Պատկանյանի «Արալատի» միակ արժանիքը համարում է աշխարհաբար լեզուն։ Բարձր է գնահատում «Հյուսիսափայլի» ղերը՝ Մ. Նալբանդյանին համարելով «հայոց Դորրոլլուրով»։ Նույն ժամանակի մյուս հայկական պարբերականների («Ահեղու Հայաստանի», «Կոռնկ», «Մասյաց աղավնի», «Ճոռաքաղ») մասին գրում է «Թուրք միասին, բացի «Հյուսիսափայլից», ոչինչ ազդեցություն չունեցան մեր հայ հասարակության վրա իրենց տեղը

1 Ն. Հարո Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ, Լեռնային փորձ համառոտ տեսության սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1878, 133 էջ։

գործունեությամբ (էջ 33—34), որ, անշուշտ, ծայրահեղութիւնն է:

Կանգ է առնում նաև «Վաճառական» (Թիֆլիս) և «Արարատ» (Էջմիածին) պարբերականների վրա, ըստ որում վերջինիս մասին էլ նպաստավոր կարծիք չի հայտնում և կարծես ամսաստում է, որ ամսագրի բաժանորդների քանակն ավելանում է:

Ամենից երկար խոսում է «Մշակի» մասին՝ նշելով իր տեսանկյունից դրական և բացասական երևույթներ այդ լրագրի կյանքում: Դ. Արծրունուն քննադատում է շատ կողմերից, սրինակ, գրում է. «Այսպես մեր պատվելի ղեկավարը իր «Մշակ» լրագիրը շինեց ու թե «նասարակական օրդան», ինչպես որ իներ ասում էր նորերումս, այլ սևփական, անծնական թերի» (էջ 84):

Հեղինակը «Մշակի» լուրջ թերութիւններից է համարում «արեւելյան բաղադրականութեան վերաբերյալ «Մշակի» սխալ ու անտակա հոգիածները» (էջ 111): «Ապստամբութիւն բարոյիւով տաճկական Հայաստանի հայերին (թեպետ երբևէն ասում էլ էր, որ Հայաստանում հայ չկա)՝ բոլորովին մոռանում էր, չդիտեր, թե արդյոք հաճելի՞ կլինի այդ բանը այն կառավարութեանը, որին ինքը ծառայում է, համաձայն կլինի արդյոք այդպիսի երևույթը այն տերութեան հայացքների հետ: Թշուրքիայի հայերը արդյո՞ք իրավ մի տերութիւնից միայն պիտի սպասեն իրանց փրկութեանը, թե այդ մի ցեղորդ է...» (էջ 112):

Անդրադատնում է նաև մշակականների և մեղուականների պայքարին, ժամանակի կովկասահայ մշուս պարբերականների բնույթին և ուղղութեանը:

Հեղինակն ունի բազմաթիւ դատողութիւններ հայ հասարակական կյանքի, դրականութեան, լեզվի և այլ հարցերի մասին, որոնք երբևէն ինքնօրինակ են: Օրինակ, նա գրում է. «Հայոց նոր դրականութեան, լրագրութեան, մտավոր շարժման, բաղադրական դարգացման թինիցիատիվը» անկասկած Տաճկաստանի հայերին է պատկանում» (էջ 17):

Ն. Հարոն շատ է գործածում անհարկի օտար քառեր լինչպէս ֆիլալոգիակաւ. ֆակուլտետի կանդիդատ. կոնտրաստ. պրոգրամ. կոմպանիա և այլն¹: Նման օտարաբանութիւններ առատօրէն հանդիպում են նաև այդ շրջանի արևելահայ մի շարք այլ հեղինակների գրվածքներում, և կարծես այդ նկատի ունենալով է Ն. Հարոն գրել. «Այժմ այսքանը միայն կարելի է ասել, որ դրանցից արեւմտահայ և արևելահայ լեզուներից.—Ռ. Ի. առաջինը կամ արեւմտա-նը ավելի հարուստ է «ստերմիններով»՝ համեմատելով երկ-րորդի կամ արևելյանի հետ...» էջ 17:

Հարոյի աշխատութիւնը այսօր էլ կարող է մի շարք ուշագրավ տեղեկութիւններ տալ Ռուսաստանի հայ լրագրու-թյան առաջին ծրէք տասնամյակների մասին. թեև որոշ դեպ-քերում զգացվում է ավելորդ միտումնավորութիւն: Աշխա-տութիւն թերևս ավելի նկատելի բացն է այն. որ ընդգրկում է հայ լրագրութեան մի հատվածը միայն:

ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼՍԵՓՅԱՐՅԱՆ

Ն. Հարոյի այս աշխատութիւնից մոտ մի տասնամյակ անց «Հանդէս ամսօրյայում» սկսեց հրատարակվել Գրիգո-րիս Գալսեփյարյանի «Պատմութիւն հայ լրագրութեան» աշ-խատութիւնը²: Սա առաջին փորձն էր ընդգրկելու ամբողջ հայ լրագրութիւնը արեւմտյան ու արևելյան հատվածներով:

1893 թ. այս աշխատութիւնը լույս տեսավ առանձին գրքով: Հաջորդ տարին լրանում էր հայոց պարբերական մա-մուլի հարյուրամյակը, այդ առիթով իր աշխատութիւնը հե-ղինակը նվիրեց հայ թերթերի ու հանդեսների խմբագիր-ներին:

¹ «Հանդէս ամսօրյա», 1887, էջք 39—40, 57—60, 73—74, 88—90, 118—120, 149—152, 190—193, 1883, էջք 57—62, 106—109, 186—189, 216—220, 1889, էջք 4—6, 87—89, 153—158, 185—187, 1890, էջք 216—218, 259—262.

Ի. Գալստիսյանի մատենագիտական այս աշխատությունը շատ նկատելի է դարձնում այն նպաստը, որ հեղինակը մոռնել է հայ մատենագիտությունը ընդհանուր քանի որ մենք գործ ունենք հայ մատենագիտության ականավոր երախտավորներից մեկի հետ, ուստի համառոտակի անդրադառնանք նրա կյանքին ու գործին:

Գրիգորիս (ծննդյամբ՝ Գեորգ) Գալստիսյանը ծնվել է 1862 թվականի մարտի 27-ին Կ. Պոլսում: Սուլտանի և Վիեննայի Մխիթարյանների Կ. Պոլսի վարժարանում (Բանկայթի): 1875-ին իբրև առաջադեմ աշակերտի Գալստիսյանին բերում են Վիեննա, ուր շարունակում և ավարտում է ուսումը: 1880 թվականից միաբանության անդամ է:

1885—1898 թվականներին ճշանակվում է մատենագրանի վարիչ (պրադարանապետ), նույն տարիներին նաև ուսուցչություն է անում Մխիթարյանների դպրոցում:

1891-ից Գալստիսյանը միաժամանակ ղեկավարում է Վիեննայի Մխիթարյանների տպարանի գործերը:

1889—1896 թվականներին ուղևորություններ է կատարում ղեկավարի մի շարք վայրեր՝ Գալիցիա (1892), Վենետիկ (1893), Կ. Պոլիս (1893—1894), Գերմանիա (1891), Հյուսիսային Իտալիա (1894), Տրիեստ (1896)՝ ամենուրեք պաշտոնական գործերի հետ պրագմալիով բանասիրական հետախուզություններով:

1898-ին Մխիթարյանների Կ. Պոլսի վանատան մեծավոր է հաստատվում և տեղավորվում այդ բաղարը՝ մնալով աջգահ մինչև 1909 թ.: 1911-ին մեկնում է Հռոմ իբրև հայ Սուրբհոգոսի թարգման: Մինչև 1912 թվականը մնալով այստեղ՝ ուսումնասիրում է տեղի դիվաններում և գրադարաններում եղած ձեռագրեր ու այլ նյութեր, առնչված հայոց պատմության և մշակույթի հետ:

1912-ին արթաճայր Գ. Գուրիկյանի հետ լինում է Կ. Պոլսում և Զմյուռնիայում:

Մահացել է 1917 թ. մայիսի 20-ին:

Գալստիսյանի մաստակը ճշանակալից է Վիեննայի

Մխիթարյանների մշակութային գործունեության մեջ ներառված Ակինյանն այդ առթիվ գրում է. «...1886—1886, երբ կրկնապես Պալեմբարյանի 30-ամյա գրական և գործնական գործունեություն, Մխիթ. միաբանության պատմության մեջ կազմակերպվեց շրջան մը, որ առանց Պալեմբարյանի չի կրնար մտածվել»։ Պալեմբարյան շուրջ և հոգին է այս շրջանին, երբ ոգի ի բոլին կաշխատի պայծառացնել միաբանությունն, որչափ հնարավոր էր իրեն իբր անհատի և գործունեների»։

1887 թվականին Պալեմբարյանի նախաձեռնությամբ և նշանավոր Ա. Այսրնյանի (այն ժամանակ արքայազն) հավանությամբ հիմնադրվում է «Հանդես ամսօրյան», որը հետո այնքան մեծ դեր կատարեց հայոց մտավոր-մշակութային ոյանքում։

Պալեմբարյանի նախաձեռնությամբ են հիմնադրվում նաև հրատարակչական երեք մատենաշարները՝ «Արվեստագիտության մատենադարան», «Բարոյական մատենադարան» և «Ազգային մատենադարան», որոնցից հատկապես վերջինը շատ արդյունավետ եղավ, այդ մատենաշարով մինչև 1916 թվականը հրատարակվեցին 78 հայագիտական աշխատություններ։

Իրրև տպարանի ղեկավար Պալեմբարյանը բնօրյանց հայերեն հրատարակությունները, նոր տառամայրեր տպարաստել տվեց և տպարանը այնպիսի բարձր մակարդակի կարողացավ հասցնել, որ այն դարձավ նվիրույալում յաւապույններից մեկը։ Պալեմբարյանի «Ջանիւլ և խնամքով տպագրվեց 50 լեզուներով «Աղօթք պատարագի»-ն, որ Վիեննայի Մխիթարյան տպարանի տեխնիկական մեծ նվաճութունն էր։

Պալեմբարյանը Հ. Տաշյանի հետ միասին որոշում է նաև նախաձեռնել աշխարհում եղած բոլոր հայ Անուպրերի մուր գրուցակի կազմումը, մատենագիտական այն մեծ գործը,

1 «Հանդես ամսօրյա», 1917/18, սյունակ 215։

որի կարեւորութիւն մասին շատերն էին խոսում, այդ թվում Գ. Զարբհանալյանը, Խնթր Գալեմբյարյանը կազմում է Մյունխենի արքունի դրաղարանի հայերէն ձեռագրերի ցուցակը, իսկ Տաշյանը՝ նախ Վիեննայի կայսերական գրադարանի, ապա Միխիթարյան Մատենադարանի ձեռագրացուցակները։ Այնուհետեւ, սրանց որինակին հետեւելով, ձեռագրացուցակներ սկսեցին կազմել նաեւ ուրիշ բանասերներ՝ Ն. Մառը, Մ. Տեր-Մովսիսյանը, Հ. Միսրէլյանը, Գ. Գովրիկյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ։

Գալեմբյարյանն է հիմնադրում նաեւ ժողովրդական հրատարակութիւն մատենադրութիւն և թարգմանութիւն նախնյաց Հայոց մատենաշարը, որի առաջին հատորը եղավ Հ. Տաշյանի կազմած Ռբրիդան պատարագամատոյցը հայոցս-ը (1897 թ.)։

Առաջին կարեւոր է թվում Գալեմբյարյանի աշխատանքը իրիկ գրադարանապետի 10 տարի աշխատելով Վիեննայի Միխիթարյան գրադարանում (մատենադարանում)՝ Գալեմբյարյանն այնտեղ կարողանում է բարձրացնել գրականութիւնը՝ զատաւորման ու պահպանման կարգ ու կանոնը և նկատելիորեն հարստացնել գրական ունեցւածքը։ Եղած շուրջ 200 ձեռագրերը հասցնում է 600-ի, իսկ 600 տպագիր գրքերը՝ 4000-ի, մեծապէս հարստացնում է գրադարանում եղած հայ տարբերականների հաւաքածուն։ Գրադարանում Գալեմբյարյանի տասնամյա աշխատանքը նպաստում է նաեւ նրա մատենագիտական գործերի երեւան զաւրուն։

Պատկանելի է Գալեմբյարյանի բանասիրական վաստակը։ Նրան հետաբերել է բանասիրական աշխատանքի ամեն մի բնօրինակ՝ դասական լեզուներ, հին գրականութիւն, պատմութիւն, գրամագիտութիւն, թարգմանական աշխատանք և այլն։

Հրատարակում է ոսկեդարյան գրաբարով այնքան, որ սկսում է դրարար գրել ինքնուրույն երկեր և թարգմանութիւններ անել, Գրաբարի բնագավառում Գալեմբյարյանի հմտութիւնը գրեւորվում է 1903-ին ծագած ոսկեդարյան և

ոչ ոսկեղարյան հայերենի վերաբերյալ բանավեճի մասնակցորդին եւ հոանդուն մասնակցություն է ունենում:

Զբաղվում է Ծղնիկի, Ազաթանգեղոսի և այլ հին լեզվա-նակների բնագրերով, Աբժեքավոր և նրա ուսուցիչությունները նվիրված Ծղնիկի «Ծղծ ազանգոց»-ին և գրազբյուրներին:

Առանձին գրքերով Քալեմբյարյանի աշխատությունները լույս են տեսել մոտ մի տասնյակ. դրանցից են. 1891-ին՝ Գործնական մեկնություն «Առաքելական արքայ: սահմանադրության...» (336 էջ), 1892-ին՝ Ցուցակ հայերեն ձևագրադարձուցի մատենադարանի. ի Մյունխեն (111, 37 էջ), 1893-ին՝ Պատմություն հայ լրագրության, Հտ. Ա (226 էջ), 1903-ին՝ Ոսկեղարյան և ոչ ոսկեղարյան հայերենի խնդիր (58 էջ), 1908-ին՝ Կենսագրություն Սարգիս արևելագիտաբան Սարաֆյան և ժամանակին հայ կարողիկեյան (433 էջ), 1915-ին՝ Կենսագրություններ Էրկու հայ պատրիարքներու և տասն էպիսկոպոսներու և ժամանակին հայ կարողիկեյան (369 էջ), 1919-ին՝ Նորագույն աղբյուր Եզեկա Կաղրազվո բնդղեմ աղանդո մատենին, Ն. Ակինյանի առաջարկով (98, 42 էջ):

Քալեմբյարյանի թարգմանությամբ լույս են տեսել Փ. Հայիգոսի «Գավեսիյա» նորավեպը (1888, 148 էջ), «Արվեստ մոմագործության» (1889, 66 էջ), Գ. Գանի «Արևելյան հայք ի Պուրովինա» (1891, 79 էջ), Հ. Գելցերի «Համառոտ պատմություն հայոց» (1897, 130 էջ) և այլն:

«Հանգես ամսօրյայի» չգերում Քալեմբյարյանը հրապարակել է 70-ից ավելի ուսումնասիրություններ, չորվածներ, գրախոսություններ, որոնցում քննության նյութ են դարձել հայ բանասիրության ամենատարբեր հարցեր:

1 Գրախոսականներ՝ «Մուրհ», 1893, N 11, «Հանգես ամսօրյա», 1893, N 8, «Արձագանք», 1893, N 136:

2 Գ. Քալեմբյարյանի աշխատությունների ցանկը (ոչ լրիվ) ազգագրված է նրա «Կենսագրություններ Էրկու հայ պատրիարքներու...» ուսում:



Գրիգորիս Գալեմբարյան

Գալեմբարյանի աշխատությունների մեջ քանակով և արժեքով շատ նշանակալից են մատենագիտական բնույթ ունեցող երկերը: Այսպես, «Հանդես ամսօրայի» մեջ հայ տպագրության պատմության փրարհրյալ արտարակվել են 1890-ին՝ Հայ տպագրության Երախայրի մ'ալ (էջ 161—163), 1894-ին՝ անփերնադիր հոգված հայ հնագույն տպագրությունների մասին (էջ 361—363), 1912-ին՝ Արգար Գպիր Լ իր տպագրած - Մաշտոցը (էջ 385—392), 1913-ին՝ 1513-ի

նասիրության վերջում, միայն հոգվածների ցանկը՝ «Հանդես ամսօրայի» - Շնդհանուր ցանկ»-երում՝ 1912, 1962 թթ.:

հայ տպագրին զյուտին պատմականն ու նոր լուսավորություններ (էջ 709—715), 1914-ին՝ Հայ Թալեմբյարյան տպագրության ջանքեր Ոսկանեն առաջ (էջ 7—15), Հայ տպագրության Վարցիքի վերաբերյալ խոսվում է նաև Գալեմբյարյանի մի քանի այլ աշխատություններում, օրինակ, օկենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տառնեպիսեպոսներու... աշխատությունում Սարգիս Վ. Սևեարնի Կասպարյան գլխում, ուր Գալեմբյարյանը առաջին անգամ ուղադրավ փաստերով փորձում է ապացուցել, որ Լիվոնի և Ամստերդամ քաղաքների անունը կրող մի շարք հայերեն հրատարակություններ իրականում տպագրվել են Կ. Պոլսում։ Հետագայում Երիշ Խոսեֆյանները էլ (այդ թվում՝ Ա. Ալպոյաճյանը) կանգ առան այս խնդրի վրա։

Ըստ «Մշակ» թերթի մի տեղեկության (1912, N 50) Կալեմբյարյանը կազմել է հայ Նատիս գրքի մատենագիտություն, սակայն նման աշխատություն չի հրատարակվել։ Ակինյանի տեղեկատվության համաձայն՝ Գ. Գալեմբյարյանը 30 տարի աշխատել է մի ստվարածավալ աշխատության վրա, որ կոչվում է «Հայ տպագրության դարական պատմություն», ուր մանրամասն խոսվում է հայոց հին տպագրության, նատիս գրքերի, հին տպագրիչների գործունեության մասին։ «Աշխատությունս, որ, անշուշտ, երկար ժամանակ անտիպ չի մնար, ըլլա թող մահարձան իր անվան»,— ավելացնում է Ակինյանը։ Սակայն, այդ աշխատությունը նույնպես հրատարակ չեկավ։

Գալեմբյարյանի կազմածն էին «Ազգային հրատարակություն... ստույգ» մատենագիտական ցանկերը, որոնք սկսեցին «Հանդես ամսօրյայի» մեջ երևալ նրա հրատարակման երկրորդ տարուց և հայերեն արձանագրական մատենագիտության անդրանիկ նմուշներից եղան, ինչպես այդ մասին արդեն խոսել ենք ներկա պրակի 3-րդ գլխում։

Գալեմբյարյանը անդրադարձել է նաև հայ հին մատենա-

1 «Հանդես ամսօրյա» 1917/18, սյունակ 123—124։

պիտոության հարցերին, օրինակ, նրա «Մխիթար Այրիվանեցի և յուր նորագլուտ գրութիւնը» («Հանդես ամսօրյա», 1891, էջ 161—167) նպաստ է հայ հին մատենագիտության ուսումնասիրության գործում:

Գալևթարյանի մատենագիտական գործերի շարքում է նաև նրա շնուցակ «այիբեն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Մյունխեն» ձեռագրացուցակը, որը նախապես յույս տեսաւ «Հանդես ամսօրյայում»՝ «Հայերեն ձեռագիրք Մյունխենի արքունի գրատան» վերնագրով¹ և որին ղեռ կտնդրադառնանք իր տեղում:

Մակայն Գալևթարյանի մատենագիտական աշխատութիւնների մեջ ամենից կարևորը «Պատմութիւն հայ լրագրության» հատորն է, որը և համարվում է ընդհանրապես հեղինակի լավագոյն գործը: Արդ, տեսնենք, թե ինչպիսին է այդ աշխատութիւնը²:

Ներածության մեջ հեղինակը խոսում է հայ լրագրության պատմության կարևորության և այն գրելու մեծ դժվարութիւնների մասին, որոնք մեծանում ու շատանում են մատենագիտական աշխատանքն առաջ տանելուն դուրընթաց «...տեսանք և դժացինք մենք այլ այդ դժվարութիւններն,— ուվելացնում է Գալևթարյանը,— որոնք առավելագոյն աճեցան որչափ հաղթել ճգնեցանք, և կվհատեինք միշտ և բանիցս, թե աչաց առջև կտեսնեինք գրեթե միադարյան, լայց բոս րավականի ընդարձակ շրջան մը, հորում աշխարհի շուրջ արձակած ամենայնի մտադիր ըլլալով՝ ընթանալ կը դիտեինք: Գիտենք մենք այլ, թե որչափ և ճգնինք դժվարաւ պիտի կարենանք ամենայն հաջողությամբ հասնիլ այն դադարականին, դոր մեր տկար մտաց անձուկ շրջանին մեջ

¹ «Հանդես ամսօրյա», 1891, էջ 235—243, 307—314, 340—345, 364—368:

² Գ. Գալևթարյան Պատմութիւն հայ լրագրության ի սկզբանե մինչև մեր ժամանակը, Հատոր Ա. Ա շրջան ի սկզբանե հայ լրագրության (1794) մինչև 1840, Բ. շրջան 1840-էն մինչև 1860, Վիեննա, 1893, 232 էջ:

զծած ենք. սակայն միտքարժիներ, եթէ կտրենանք հասարակության մտաց մեջ լրագրության և ի մասնավորի ազգային լրագրության ըստ կարի գաղափարը նկատել, զարթուցանել սեր և հարգություն առ այն, և կամ մեր գիտնոց մտադրությունը գրգռել սա հայրենի ազարակին վրա և այս ըլլա մեր տարածանելի վաստակոց հատուցումը¹։ Մատենագիտական աշխատանքի ծանրությունը իր ուսերին զգացած մարդու անկեղծ խոսքեր են սրանք։

Հայ լրագրության մոտ հարյուրամյա պատմությունը Գալեմբարյանը Հարոյի նման հրեք մասի է բաժանում. սակայն հասկանալի է, որ բոլորովին այլ մոտեցմամբ, քանի որ խոսքը ոչ թե Ռուսաստանի, այլ ընդհանրապես հայոց պարբերական մամուլի մասին է։ Ահա Գալեմբարյանի այդ բաժանումը. «Ի սկզբանե մինչև 1840, ո՞չ ինչպես² ամբողջաց կընթանա.— ղեկավարւոյս մանկութիւնը։ 1840-են հտրը գրեթե ամեն տարի և հաճախ յուրաքանչյուր տարին քանի մը հատ նոր կը ծնանի, թեև շատերը սակավակից կարծարյա—փոփոխամիտ երիտասարդութիւն։ Կրնանք բնել, թե 1860-են հտրը հեղեղ մը հայ լրագրաց կը սկսի հոսել, որոնցմէ ոչ սակավք կմնան հարատեւ,— նստատուուն այրութիւնը։ Մերությունը չենք ուզեր տեսնել»³։

Ահա ըստ այս երեք շրջանների էլ Գալեմբարյանը շարադրել է հայ լրագրության պատմությունը, ընդ որում, ներկա առաջին հատորում խոսվում է առաջին և երկրորդ շրջանների մասին (1794—1860 թթ.)։

Այս աշխատությունը ավելի շատ նեղ իմաստով մատենագիտություն է և մասամբ հայ մամուլի սովորական պատմություն։ Մատենագիտություն է այնքանով, որ մեկ-մեկ ժամանակագրական կարգով անվանված են հայոց պարբերականները, եւս և համարակալված (երկու դիստում 45 համար, հավելվածում 5, ընդամենը 50 անուն պարբերական)։ Նշված

1 Գ. Գալեմբարյան Նշվ. աշխատութ., էջ 5—6.

2 Նույն տեղում, էջ 19։

են պարբերականների հրատարակման վայրերը, հիմնադրման և փակման տարեթիվերը, հրատարակիչները, խմբագիրները:

Ըստ տարեթիվերի տրված է նաև մի շարք պարբերականների մեջ տպագրված լողվածների ցանկը, այդ պարբերականներն են (փակագծերում նշել ենք այն տարեթիվերը, որոնց ընթացքում հրատարակված նյութերը վերլուծադրված են). «Արշալույս» արարատյան» (1840—1869), «Բազմավեպ» (1843—1847), «Շալոկնասեր» (1843—1846), «Շալաստան» (1846—1852), «Կլորոսա» (1847—1857), «Բանասեր» (1851), «Մասիս» (1852—1886), «Նոյյան աղավնի» (1852), «Ասորիկ արարատյան» (1855), «Մասյաց աղավնի» (1855—1861), «Արծաթի վասպուրական» (1855—1863), «Իրեակ» (1858—1866), «Հյուսիսափայլ» (1858—1864), «Ճռաբաղ» (1858—1882), Պետր է սուկայն նկատի ունենալ, որ Գալեմբյարյանը իր վերլուծադրական ցանկերում ներկայացրել է պարբերականներում տպագրված միայն հայագիտական բնույթի հոդվածներն ու նյութերը:

Մյուս կողմից Գալեմբյարյանի այս աշխատությունը պարբերական մամուլի պատմություն է այնքանով, որ տրվում է յուրաքանչյուր թիվի կամ հանդեսի համառոտ պատմությունը, խոսվում է պարբերականների բաղադրական ուղղությունից վերաբերյալ, բերվում են կարծիքներ պարբերականների մասին և այլն: Բեկ այս կարգի տեղեկությունները բնորոշ են նաև սովորական մասենագիտությունների համար:

Աշխատության երկու գլուխները նվիրված են առաջին երկու վերոհիշյալ շրջանների ընթացքում հրատարակված հայ պարբերականներին, այնուհետև կա ուղղելիք և հավելիք, ուր լրացումներ և մի շարք ճշտումներ են արվում: Ի դեպ, Գալեմբյարյանը գնահատելով Վալ հին մատենագիտությունը՝ սյուսեղ զետեղել է «Աղղարարում» 2. Այուրյանի կողմից հրատարակված «Պատմագիտիք հայոց» միջնադարյան մատենագիտությունը, որի մասին նախորդ պրակտում արդեն խոս-

վել է: Գրքի վերլուծ կա Բանի մը շեռառաքակված լրագիր-
նեւ. ապա հայոց պարբերականների ժամանակագրական
ցուցակ. Զանկ ըստ Բազաւաց և Այրուրենական. ցուցակ

Պետք է նկատի ունենալ, որ Փաշեմբայրյանի այս աշխա-
տութիւնը հրապարակվել է սկսել 1887 թվականից. զրաւով
էլ այն դառնում է հայոց ամբողջ պարբերական մամուլի ան-
ցած մոտ մեկդարյա ուղին ի մի բերելու և զհաստեղու. ինչ-
պէս և այդ մամուլը ժամանակագրական ներթափանցիկութեամբ
զաստիճանելու անդրանիկ փորձը: Առաջին անգամ լին տրո-
վում նաև հայոց պարբերականներում հրապարակված հոդ-
վածների ցանկեր: Ընչտ է. բոլոր պարբերականների հոդ-
վածները չէ, որ թվարկված են աշխատութեան մեջ. այլ մի
շանի ընտրված հանգստների, և այս վերջինների էլ բոլոր
հոդվածները չէ. որ վերլուծագրված են. այլ միայն հայա-
գիտական բնութիւն ունեցողները. սակայն կարեւոր է. որ Փա-
շեմբայրյանը հայոց պարբերական մամուլի հոդվածների
մատենագիտութիւն ներկայացնելու անդրանիկ և ըստ ամե-
նայնի հաշուք փորձն էր արել:

Պետք է նշել, որ հետագայում էլ միայն փորձեր եղան
այդ ուղղութեամբ, և հայոց պարբերական մամուլում տպա-
գրված նյութերի մի ամբողջական մատենագիտութիւն այն-
պէս էլ չկազմվեց ու այսօր էլ, որքան մեզ հայտնի է, ոչ ոք
մի ճիշտ ծրագրով չի աշխատում այդ ուղղութեամբ: Ընչ-
դեռ ապացուցելու հարկ չկա. թե որքան բովանդակալից,
հարուստ նյութեր կան հայ հանդեսներում ու թերթերում:
«Որչա փ առնէ է, որ ազգային լրագրաց անպին թերթերը
թերևս գրատանց մութ անկյունները փոշով տակ թաղալ կը
սպասեն, որ արդի գրականութեան սիրովը վառյալ դրի: մը
հանէ գիրենք մոռացութեան անհասակ անդունդէն».— գրում
էր իր ներածութեան մեջ Փաշեմբայրյանը: Իկդ անպին թեր-
թերը մոռացութիւնից հանելը, անշուշտ, պարբերականների
մէջ տպագրված նյութերի վերլուծագրումն է, նորանց մտած-
ված, օգտակար մատենագիտութիւնը կազմելը, որ դեռևս
արդի գրականութեան սիրովը վառյալ» որով: մեկը չի

ստանձնել, իսկ նյութերը Գալեմբյարյանի օրերից ի վեր
ափելի են շատացել ու ճոխացել:

Գալեմբյարյանի աշխատության Ք հատորը, որ պետք է
բնդգրկեր հայ պարբերական մամուլը 1860-ից մինչև 1874
թվականը առանձին գրքով ալբես լույս չտեսավ. միայն
«Հանդես ամսօրյալում» հրապարակվել սկսեց «Պատմություն
հայ լրագրության 1860-են մինչև մեր օրերը» վերնագրով:
Սա նախորդ մասերի կառուցվածքն ունի և սկսվում է Զմյուռ-
նիայի «Իրշախույս արարատյանում» (հիմնադրված 1860-ին),
Գալեմբյարյանի աշխատության հրապարակումը հանդեսում
անավարտ մնաց, Ըստ ն. Ակիսյանի տված տեղեկության-
աշխատության երկրորդ հատորի եղած ձևադրերը, որոն-
ցում հայոց լրագրության պատմությունը հասցված է մինչև
1870 թ., պետք է հրատարակվեն «մոտերս», սակայն ուշ
ձևագիրն էլ մնաց հրապարակված:

Ուր աշդուհ, հայոց մեջ եղած բազմաթիվ լավ ձևադ-
րումների նման Գալեմբյարյանի այս գործն էլ մնում է անա-
վարտ: Սակայն պետք է նշել, որ հեղինակի ծրագրի մեծ
մասը, զոնե բոլոր ժամանակի, կատարվեց:

Գալեմբյարյանի այս աշխատությունը աչրի է ընկնու-
թեղեկությունների ճշգրտությամբ, վստահելիությամբ, հե-
ղինակի քանրերը աշդ տեսակետից տվել ևն իրենց արդուն-
րը, սխալներն ու պակասները նվազադույնի ևն հասցված,
բոլորում, զրանց մի մասը հեղինակի ձեռքի տակ համա-
պատասխան պարբերականներ չլինելու հետևանք են:

Աշխատության ուղաջին հրապարակված հատուրի ն! սու-
մամբ հասարակայնությունը աշխույժ վերարերմունք ցույց
տվեց, մի շարք պարբերականներում տպագրվեցին զրախո-
սականներ³, որոնք բնդհանուր առմամբ դրվատական էին,

1 «Հանդես ամսօրյա», 1897, էջ 35—40, 110—115, 270—274.

2 «Հանդես ամսօրյա», 1917—18, սյունակ 125.

3 Տե՛ս «Արեւիք», 1893, № 2826, «Հայրենիք», 1893, № 507, «Մա-
սիս», 1893, № 4000, «Հանդես ամսօրյա», 1895, էջ 154—159, «Արարատ»,
1895, № 2, էջ 59—62, «Մուրճ», 1895, № 5, էջ 667—673, «Նոր Գար»,

թեև քիչ չէին նշվում նաև թերիներ: 1895-ին Ավետիք Աբախանյանցը «Մուրճի» մեջ գրում էր. «Արդ, Ինգիւսակը չորս է գրել բանիմաց և բարեխիղճ աշխատասիրոյդի բաները յուր աշխատութիւնը «գնահատելի գարձնելու հայաց դրականութեան համար իբրև առաջին փորձ մի լիակատար աշխատութիւն ինչպէս պարբերական հրատարակութիւններէ իբրև այդպիսին ներկա աշխատութիւնը արժանի է շնորհակալութեան և խրախուսանքնէրի»... Գրչոյնը այնչափ ինչպէս նա կա, մեր վերջին տարիների համարագրական գրականութեան յուրջ աշխատութիւններից է»:

Արասխանյանցի արած դիտողութիւններից արժի մի բանի խոսքով անդրադառնալ երկուսին, ա) Գրախոսողը անհաշոյ է գտնում Քալենճրյարյանի գրքի վերնագրում լրագրութեան բառը (և առհասարակ այդ բառի քմբոխումը գրում), բանի որ գիրքը հայաց պարբերական մամուլի պատմութիւն է, իսկ լրագրութեան պատմութիւնը մի պատմութիւն պիտի լինի, թե ինչպէս լրագրական գործը ծնեց, զարգացավ, թե ինչպէս մեկը շաղկապվեց մյուսի հետ բովանդակութիւնով, ուղղութիւնով... և այլն: Արասխանյանցի այս դիտողութիւնը մասամբ է ճիշտ, այն էլ եթե ելնենք անվանումների արեւելահայ նշանակութիւնից միայն: Արասխանյանցը լրագրութիւնը բառի տակ ամենի հասկանում է այն, ինչ այժմ արեւելահայերենում անվանում են ժուռնալիստիկա (մի ամբողջ օտարարանութիւն, որ մտել է հայերենի մեջ) և այդ իմաստով, իհարկե, Քալենճրյարյանի գրածը լիարժեք լրագրութեան պատմութիւն չէ, սակայն նույն լրագրութիւնը բառը այն ժամանակներում, երբ դեռ անվանումների խիստ տարբերակում չկար, սխալ չէր կիրառել նաև նեղ իմաստով, իբրև պարբերական մամուլ և այդպէսով լրագրութիւն ան-

1895, № 117, «Լուսմաս», 1900, Գիրք Ա. էջ 360, «Հանդես ամսորյա», 1891, էջ 320 և այլն:

1 «Մուրճ», 1895, № 5, էջ 671:

2 նույն տեղում:

3 նույն տեղում, էջ 669:

վանման Գալմաքյարյանի օգտագործումը ընդունելի է:
Բ) Իրասխանյանցը չի համաձայնում Գալմաքյարյանի հետ՝
հալ պարբերականներում օտար բառերը լայնրեն թարգմա-
նելու հարցում, չի ընդունում նրա ցուցաբերած խստապա-
նանդությունը¹:

Իրականում, թեև Գալմաքյարյանը գուցե և փոքր-ինչ
ափելորդ հակում ուներ դեպի զրաբար բառերը, սակայն ժա-
մանակակից հայերենի պատմությունը ցույց է տալիս, որ
հայոց լեզուն ամենից շատ վնասվում է, լցվում անհարկի
անհամար օտարաբանություններով ամենից առաջ պարբե-
րական մամուլի լեզվական անփութության ու անկարգապա-
նության պատճառով: Ուստի և այս հարցում խստությունը
երբեք վնասակար լինել չի կարող: Գալմաքյարյանի այս աշ-
խատության մասին եղած դրվատական կարծիքներից բերեն
մեկը ես. «Փոքրիկ հատոր մըն էր այն, բայց անմահացուց
է. Գալմաքյարյանի անունը. երկար ժամանակ նկատվեցավ
հեղինակին գլուխ-գարծոցը»²:

300

Գալմաքյարյանի աշխատության մասին հրապարակվեց
նաև մի հույժ բացասական գրախոսություն, որի հեղինակն
էր Գարեգին Լեոնյանը: Բայց քանի որ այդ գրախոսությունը
ստեղծվում է իր՝ Լեոնյանի «Հայոց պարբերական մամուլը»
աշխատության հետ, ուստի նախ մի քանի խոսք այդ աշ-
խատության մասին³:

Լեոնյանը 5 տարի աշխատել է իր այդ գործի վրա՝ Հա-
վանաբար սկսել է աշխատանքը 1880-ական թվականներին

1 «Մուրճ», նույն տեղում, էջ 670—671:

2 «Հանդես ամսօրյա», 1917/18, սյունակ 125:

3 Գ. Լևոնյան Հայոց պարբերական մամուլը, Պատմական տեսություն
«կզրից մինչև մեր օրերը» (1794—1894), ընդարձակ ծանոթություններով:
Իլևրանդրապոլ, 1895, 570 սյունակ:

4 Տե՛ս իր՝ Լեոնյանի ակնարկն այդ մասին, «Արարատ», 1895, էջ 59:

վերջում, այսինքն՝ Գալեմքյարյանից թիշ ավելի ուշ և ան տարակույս է. որ ինչ-որ ժամանակ հրկու հեղինակները գուղահեռարար միևնույն գործն են կատարել:

Տվյալ դեպքում նշելի է այն շանդամանբը, որ Գ. Հեռյանը՝ այդ ժամանակ արդեն աշուղական արվեստի գիտակիր հարազատ Գյումրիում. Հայաստանի մեջ է Էնդեռամուխ հղել մատենագիտական մի զԺվարին աշխատության ստեղծմանը և նույն Թաղաքում էլ հրատարակել այն:

Աշխատությունն սկսվում է հայ պարբերականների այլ-բնական ցանկով, ապա գալիս է հառաջարանը, ուր արվում է համաշխարհային և հայ պարբերական մամուլի պատմական մի հակիրճ ակնարկ և թվարկվում են օգտագործված աղբյուրները:

Դիրքը ընդկացած է 11 գլխից. յուրաքանչյուր գլուխ նվիրված է մի տասնամյակի հայերեն պարբերականների, բացի առաջին (ուր ընդգրկված է հայոց պարբերական մամուլի առաջին վեցամյակը) և վերջին (ուր ընդգրկված է մի քառամյակի՝ 1890—1894 թվականների մամուլը) գլուխներից:

Այդպես տասնամյակ առ տասնամյակ թվարկվում են հայերեն պարբերականները, որոնք համարակալված են. ընդամենը 172 անուն, լրացումով՝ 173. դրան ավելացրած 17 հայաստաթուրքերեն պարբերականներ:

Յուրաքանչյուր պարբերական նկարագրված է հետևյալ կերպ. ա) Պարբերականի անունը, հրատարակման վայրը, հիմնադրման և ավարտման թվականները, պարբերականությունը, խմբագրի և տնօրենի անուններն ու ակղանունները, տպարանը, դիրքը, թուղթը, տիպը, լեզուն, շոշափած հարցերը (առարկաները): բ) Պարբերականի ուղղությունը, ընդհանուր բովանդակությունը, հակիրճ պատմությունը: Գ) Կարձիքներ պարբերականի մասին, այլևայլ ձանոթագրություններ:

Յուրաքանչյուր տասնամյակին նվիրված գլխի սկզբում

տրված է այդ տասնամյակում հայ պարբերական մամուլի
պարզացման հանդիմ գնութագիրը:

Աշխատությունը արտաբուստ որոշ կողմերով նման է
Գալեմբյարյանի գործին: Օրինակ, երկու գեպքում էլ գործ
ունենք այդ պարբերական մամուլի մատենագիտական
ցանկի և պատմության միջին տեղը բռնող աշխատության
հետ. նման է նաև նյութի շարադրման ձևը՝ պարբերական
առ պարբերական, ժամանակագրական կարգով և այլն:

Կան նաև տարբերություններ. Լևոնյանը հայոց պարբե-
րական մամուլի պատմությունը ժամանակաշրջանների չի
բաժանել, այլ նյութը ներկայացրել է ըստ տասնամյակների,
որ, ի դեպ, կարող էր և շանել: Փաստորեն 100 տարվա մա-
մուլը բոլոր անունների դասավորված է ժամանակագրական
կարգով, տասնամյակներին որևէ ընդորոշ նախկություն չե-
լադրելը արհեստական է, և եթե ըստ տասնամյակների բա-
ժանումը չլիներ պործը, թերևս, ավելի շահեր (գուցե այդ
բաժանումը հեղինակն արել է Գալեմբյարյանից սոսկ տար-
բերվելու և որևէ բաժանում տված լինելու համար):

Այնուհետև, ի տարբերություն Գալեմբյարյանի, Լևոնյանը
պարբերականներում տպագրված հոդվածների ցանկեր չի
տալիս:

Նյութի ընդգրկման տեսակետից տարբերությունը հոգուտ
Լևոնյանի է, բանի որ այստեղ հայ պարբերականների թվաբ-
կումը 1860-ից (այսինքն՝ Գալեմբյարյանի մատենագիտու-
թյան առաջին հատորի վերջին թվականից) հասցված մինչև
1894-ը, ըստ որում, եթե աշխատության 1794—1860 թվա-
կանները ընդգրկող մասը 206 սյունակ է, ապա մնացածը
361, այսինքն՝ ավելի քան մեկ ու կես անգամ ավել: Ար-
դյո՞ք այս մատենագիտության հրապարակումը չէր պատ-
ճառներից մեկը, որ Գ. Գալեմբյարյանը շարունակեց իր
պործը¹:

¹ Ինչ կարծիք կա, որ աշխատությունը անավարտ է մնացել միայն
Գալեմբյարյանի գրադպանության պատճառով («Հանդես ամսօրյա», 1917—
1918, սյունակ 125):

Հետևյալի աշխատությունների մեջ մինչև 1960 թվականը չբա-
տարակված պարբերականների թանակը 49-ն է, այսինքն՝
գտնվում է հավասար Գալեմբյարյանի նկարագրամաներին 51
և նույնը:

Ասկայն այս երկու գրքերի ամենաշահական տարրերը,
թվում են այն է, որ Գալեմբյարյանի աշխատությունները հմուտ
բանասերի մեծ խնամքով կատարված գործ է, զուտպես
լուրջ իր շարադրանքով, գատնություններով, մի վստահելի
տեղեկատու աղբյուր հայոց պարբերական մամուլի վերա-
բերյալ, մինչդեռ Հետևյալի աշխատությունները բանասիրական
առաջնությունը դեռևս նոր մուտք գործող, ինքնավստահ և ան-
սխալ պատանու աշխատանք է, ինչպես նաև ուսույ դատու-
ղություններով, լեզվի աշակերտական անձնություններով,
ահաստույզ տեղեկություններով:

Բայց նախ տեսնենք ինչն է դրականը Հետևյալի աշխա-
տության մեջ: Անշուշտ, գիրքը լարված աշխատանքի ար-
դյունք է, առատ հավաքված փաստական նյութով: Բն-
յոց պարբերական մամուլի պատմության և թե նրա վիճա-
կագրության վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ կա-
րելի է գտնել Գ. Հետևյալի գրքում: Ուշագրավ են, սրինակ,
ինդիկսների մատենագիտական մանրակրկիտ աշխատանքի
արդյունքը հանգիսացող վիճակագրական այն աղյուսակնե-
րը, որոնք Հետևյալը բերել է առաջարանում: 100-ամյակի
ընթացքում ո՛ր բաղադրում որդան հայերեն պարբերականներ
են հրատարակվել, — ահա այն հետաքրքրական հարցերից մե-
կը, որոնց պատասխանում է Հետևյալի աշխատությունը:
Օրինակ, պարզվում է, որ 100 տարվա մեջ հրատարակ-
ված 172 պարբերականները ըստ վայրերի բաշխվում են
Հետևյալ կերպ. 4. Պոլիս՝ 77 պարբերական, Թիֆլիս՝ 17,
Ղաթուռնի՝ 16, Մոսկվա՝ 6, Վենետիկ՝ 5, Նյու-Յորք՝ 4, Կալ-
կաթա՝ 3, Երևան՝ 3, Պետերբուրգ՝ 3, Փարիզ՝ 3, Էջմիածին՝
2, Մադրաս՝ 2, Վան՝ 2, Լոդիպոտոս՝ 2 (մյուս պարբերական-
ները հրատարակվել են մեկական անուն այլ բաղադրանքում):

Ինչ վերաբերում է Գ. Հետևյալի աշխատության թերու-

թյուններին, որոնք բավական շատ են, ապա դրանց մասին խոսք կլինի ստորև, քանի որ այդ նարցը ժամանակին նրապարակային բնության նյութ դարձավ:

1894 թվականին նշվում էր նալ պարբերական մամուլի 100-ամյակը: Մոտ 10 տարի առաջ Կ. Պոլսի Նալոց պատրիարքարանում Հովսեփ Իզմիրյանի կտակի հիման վրա ստեղծվել էր Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխությունը, որը պետք է խրախուսեր լավագույն բանասիրական աշխատությունները: 100-ամյակի կապակցությամբ մրցանակաբաշխության էին ներկայացվել Գ. Գալսեփյարյանի և Գ. Լևոնյանի վերոհիշյալ գործերը: Վերջինս ներկայացվում է ձևադիր վիճակում և արժանանում մրցանակի: Առաջին անգամ էր, որ Նալոց մեջ մասնակցություն և մի աշխատություն ալոպոսի բարձր ղնահասականի էր արժանանում:

Սակայն միշտ էլ, որ նման խրախուսանքը դրական ազդեցություն է ունենում խրախուսվողի բարոյականի վրա, մանավանդ, եթե վերջինս չունի աննրաժեշտ կենսափորձ, ինքնասիրահարված երիտասարդ է: Տվյալ դեպքում 23-ամյա Լևոնյանը աչնքան է ողևորվում հաջողությունից, որ նրան սկսում է թվալ, թե իր աշխատությունը անթերի է, և ինքը իրավասու է «ջախախնդու» ուրիշի կողմից դրված նման ամեն մի աշխատություն: Լևոնյանի ողևորությունն աչնտեղ է հասնում, որ իր աշխատության ճակատին ղնում է «Արժանացած է Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության 1894 տուգին մրցանակին»: Իրականում որեւէ առաջին մրցանակ չի տրվել, այլ ուղղակի թրստ վկայության պատ. բնչաց տրժանի դատվեցավ թսան (20) օսմանյան օսկի պարղեի» (Հովհ. Մկրյանի և Գ. Նորատունկյանի ստորագրած վկայականից):

Ահա այստեղ է, որ պետք է նրկու խոսք էլ ասենք Գալսեփյարյանի «Պատմություն հայ լրագրության» աշխատության վերաբերյալ Գ. Լևոնյանի գրած բացասական գրախոսականի մասին¹, որը ժամանակին շատ աղմուկ բարձրացրեց:

1 «Արարատ», 1895, № 2, էջ 59—62.

Գրախոսության սկզբում Գ. Լևոնյանը խոսում է այն մասին, որ իրեն ու Գալեմբյարյանը միաժամանակ նույն գործով են զբաղվել և որ իրենք լավն է ստացվել: Դա՛նք որ արժանացել է մրցանակի. իսկ Գալեմբյարյանին՝ վատ: Եվ ես ու մոզանակի չի առժանայել:

Այս Լևոնյանը գտնում է, որ Գալեմբյարյանի գործն մասին իրենից առաջ գրված գրախոսականների նեղինակներին ու որ լրջորեն խորամուխ չի եղել այդ աշխատության մեջ և որ այդ բանը կարող է ինքը անել, բանի որ զբաղվել է նույն գործով: Լևոնյանը Գալեմբյարյանի աշխատության մեջ տեսնում է «աններելի սխալներ» և փորձում է դրանք մեկ-մեկ ցույց տալ: Գրախոսականի սկզբից մինչև վերջ իշխում է ինքնագոհ ոգին և գրախոսվող գրքի նեղինակի նկատմամբ վարկաբեկիչ, ծաղրական ոճը: Շեղինակին անվանելիս անգամ Լևոնյանը ծաղրի է դիմում, նրան կոչելով՝ մե՛րթ Գալեմբյար կամ շ. Գալեմբյար. մե՛րթ վաղապետ հեղինակ. կամ կարոյիկ վարդապետ, վերապատվելի հայր, մե՛րթ էլ սոսկ շ. Գ.: Շողվածի ոճի համար բնորոշ են այսպիսի արտահայտությունները. «...Ավելորդ չի համարել իր աշխատության մեջ «խոթել», «Մխիթարյան միաբանը սկզբում բոլորովին անտեղյակ է եղել», «Շ. Գալեմբյարը գոնե ուշադրություն դարձնելու, «Ուրեմն Շ. Գ. մի բույս մի ակնարկ ձգելով շարաթաթերթիս ճակատին...», «բայց ինչ կասե... ինչքա՛ն կզարմանա», «Մեղվի՛ ուղղությունը դուր չի եկել կաթոլիկ վարդապետին» և այսպես շարունակ:

Գրախոսողը Գալեմբյարյանի աշխատության մեծակ արժանիքը համարում է այն, որ այնտեղ տրված են մի շարք պարբերականների հոդվածների ցանկեր, բայց այդ էլ այսպես է բնորոշում. «Որքան որ հեշտ էր այդ ամենը, այնքան ևս պիտանի»:

Վերջում Լևոնյանը ծաղրանքով խորհուրդ է տալիս Գալեմբյարյանին աշխատության Ռ հատորը գրելիս իրեն աղյուր օգտվել իր «Շայտց պարբերական մամուլը» աշխատությունից:

Լեոնյանի այս գրախոսությունը մեկն է դավառական մեծամտությամբ և ուրիշի նկատմամբ անհանդուրժողականությամբ, արհամարհանքով հազեցած այն շողվածներից, որոնց պակասը, ցավոք, չկա հայոց պարբերական մամուլի էջերում: Եվ արդյո՞ք «Արարատը» մի բարձրարժեք աշխատության դեմ տպագրելով այդ շողվածը տուրք չի տվել լուսավորչական-կաթոլիկ որբան հին, նույնքան և անպտուղ ու ազդափնաս հակամարտությանը:

Նույն թվականի «Հանդես ամսօրյայի» N 4-ում լույս է տեսնում Գ. Գալեմբյարյանի պատասխան շողվածը՝ ուր հեղինակը գրում է. «Մենք ուր բննադատութենէն օգտվիլ ուղեցինք, բայց դատարկաձեռն ելանք»: Լույս Գալեմբյարյանը կես առ կես պատասխանում է Լեոնյանին, հանդարտ ու դուստր ունով: Ինչ ով էր երկու կողմերից իրավացի, այդ մասին այսօր բնթերցողը կարող է դատել երկու հոգվածները կարգալով, որից ակնհայտ է դառնում Գ. Լեոնյանի գրախոսության խիստ աչտոտ բնույթը. թեև ինքը Լեոնյանը այլ առիթով ուրիշներին կշտամբում էր աչտու վերաբերմունքի համար (օրինակ, Հարություն Քչալոց մամուլը Ռուսաստանում... դրբի մասին նա ակնարկում է. «Հեղինակը որբան ուղել է հեռու. պահել իրան աչտուությունից, բայց զժրախտաբար չի հայդդել»: «Հայոց պարբերական մամուլը», էջ ԺԵ):

Ինչն է մի մատենագիտական աշխատության համար անխուսափելի ևն անճշտությունները, որպիսիք կան նաև Գալեմբյարյանի գործում, խոշորացնել և դրանք աններելի համարել, — ահա Լեոնյանի «մոտեցումը»: Իսկ ավելի հաճախ նրա նշած ստանդարտի սխալները բնավ սխալներ էլ չեն, այլ հեղինակի դրածն աղավաղելու դնով ստեղծված «սխալներ»: Բերում ենք միայն երկու նմուշ (ամենահամառոտները) բրնձադատության և դրա բնդդիմախոսության:

Գ. Լեոնյան. — «Արարատ» շաբաթաթերթի մասին խոսե-

1 Գ. Գալեմբյարյան «Հայ լրագրության պատմության» մեկ բննադատության առթիվ: «Հանդես ամսօրյա», 1895, էջ 154—159.

յով, որը նրատարակվում էր Քիֆլիսում Գաբրիել Բ. Գառ-
կանյանի խմբագրությամբ տառւմ է. «առկայն քաղաքական
մաս մը ամենեկին շունեք», այնինչ՝ «Արարտաւ Բաղաւաղան,
առնարական և բանասիրական լրագիր էր»:

Գ. Գալեմփյաւոյան.— «Զորքորդ տեղամ մեր խոսքը կը
խեղաթյուրվի: Մենք գրած ենք (էջ 120, տող 5)՝ «Արարտ-
ար... քաղաքական մաս մ' ամենեկին շունեք ի սէզբան.
...1851 մարտ 3-ին... Նեռնելով բաժանորդաց խնդրանաց՝
սկսավ նաև քաղաքական ուսու լրագիրներն տեղական և Բա-
ղաւաղան լուրեր քաղել»:

Գ. Առնյան.— «Արիի արարատյան» գաղաբնդ ոչ թէ 1856
թվականի Նունվարին 7-դ Նամարով, ինչպէս գրել է Շ. Գ.,
այլ 1855-ի դեկտեմբերին 6-դ Նամարով:

Գ. Գալեմփյաւոյան:—«Բայց մեր ձեռքը կա 1856 թվականի
Նունվարին 7-դ Նամարը, որ աշագար և մեկ գիշերներ՝ նրա-
տարակոթյան շարունակութիւնն է. և բազ ասկէ կապա-
հովցնենք, որ նույն տարին 8-դ և վերջին Նամարը յույս տե-
սած է (տե՛ս մեր գործն, էջ 220)»:

Մի տեղ Առնյանը դարձյալ աղավաղված բերելով Գա-
լեմփյաւոյանի խոսքը ծաղրանքով խրատ է տալիս նրան.
«Հայտնում ենք Շ. Գ.-ին թոր Սինգափուր քաղաքը ոչ թէ
Հնդկաստանում է, այլ Մալակա թերակղզում», մինչդեռ իրա-
կանում Գալեմփյաւոյանը գրել է. «Ասիկա, որ դարուս առաջին
կիսուն վերջերն 7000 հոգի կը Նամարվեր, ցրված Արևելյան
Հնդկաստանն մինչև ի Ճապա, ուներ յուր եկեղեցյաց, ուսում-
նարանաց հետ նաև յուր տպարաններն ու լրագիրները: Կալ-
կաթայի «Աղգասերն» ու Մադրասա «Բանասերը» միևնույն
ժամանակ հրատարակվելով ալ քաղական չէին հրեար. Սին-
կափուր ալ, ուր միայն 50 հայ կար... Գրիգոր Գ. Գալստյան
կը ձեռնարկէ 1849-ին հուլիսի 1-ին «Սուսումնասեր...» և
այլն: Պարզ է, որ աշխարհագրութիւնն դասն էլ քստ նպատա-
կի չի տվել Երիտասարդ բնագատը, Սինգափուրը ոչ որ չի
մտածել Հնդկաստան տեղափոխել:

Սակայն հայոց մամուլի միտումնավոր շահերը իր անձ-

նականի չամար ոգտագործողը չաճախ ստանում էր Ռոտորնակին խոտորնակ։ Կ. Լեոնյանն էլ իր ոչ պարկեշտ ռոգվածի դիմաց կրկնակին է ստանում։ Շուտով Նայոց մամուր ամենախիստ բնադատության Լնթարկեց Գ. Լեոնյանի և աշխատությունը, և գրախոսությունը, գրված Գալեմբյարյանի դեմ։ Հրապարակորեն պարզվեց, որ Լեոնյանի ինքնավստահությունը որևէ հիմք չունի, որ նրա «Նայոց պարերական մամուլը» լի է ամենաբազմապատիվ և թույլատրելիի, ահմաններն անցնող սխալներով ու արատներով։

Նույն «Արարատում», միևնույն թվականին Գ. Լեոնյանի գրախոսականից երեք ամիս անց տպագրվեց հանդեսի աշխատակից Ն. Քարամյանի (Ն. Ք. ստորագրությամբ) գրախոսականը Գ. Լեոնյանի «Նայոց պարերական մամուլը» աշխատության մասին¹, գրախոսությունն սկսվում էր այսպես. «Այս գործը, որ աշխատասիրողը «պատմական տեսություն» կամ «պատմություն» է անվանում, մի ապացույց է, ինքնըստինքյան, որ հեղինակը գաղափար անդամ չէ ունեցել պատմության մասին, և՛ ահա մի բավականին մեծ աշխատանք, որ պործ է գրված ոչինչ բանի վրա»։

Ահա նաև մի երկու ուրիշ կտոր նույն գրախոսականից. «Նորագույն հրատարակությանց մասին պ. Լեոնյանը յուր կարծիքներն է հայտնում այնպիսի ռճով, որ երբեք չէ կարող վայել լինել որևէ «պատմության»։ Չենք հասկանում, թե ո՞ր առավելության համար է այս գործը Սահակ-Մեսրոպյան մրցանակին արժանացել»։

Այս պործն ստուր է բնադատությունից, հեղինակը հիրավի պոփիկի հռանդով մեծ նյութ է ժողովել հայ մամուլի պատմության համար, սակայն չէ կարողացել այդ նյութից ոգտվել։ Պարոն Լեոնյանը գրական աշխատանք կատարելու համար հասուն չէ, դեռ և յուր երկու ամիս տհասության փառավոր փկայություն է տվել²։

¹ «Արարատ», 1935, № 6 (շապիկ)։

² Ի դեպ, ասենք նաև, որ ավելի քան խիստ խոսելով Լեոնյանի

Լեոնյանի աշխատության. ինչպես և նրան մրցանակ տալու հարցի մասին գրեցին նաև ուրիշ պարբերականներ: Մասնավորապես «Մշակը» մի շարք հոդվածներ տպագրեց այդ առթիվ: Դեռևս 1894 թ., երբ աշխատությունը դեռ չէր հրատարակվել «Մշակը» երկու հոդվածով վերգովմունք հայտնեց անարդար մրցանակահարաշխության առթիվ:

Հուլիսի 23-ի համարում (N 84) տպագրվեց «Մրցանակահարաշխություն է. թե ծաղրաբանություն: անստորագիր հոդվածը, ուր խստագույնս մեղադրվում էր Իզմիրյան կտակի մրցանակահարաշխության հանձնախումբը, մանավանդ հանձնախմբի անդամ. գրախոսող Կ. Յուսյունյանը անարդար որոշումների համար. «Իզմիրյան մրցանակին արժանանում են ամենահիմար հրվածքներ». նկատում է հոդվածագիրը և այդ հրվածքների շարքին դասում նաև Լեոնյանի գործը:

Լրագրի նույն թվականի սեպտեմբերի 6-ի համարում (N 102) տպված է Աբել Ապրեսյանի «Նամակ խմբագրությանը: Ապրեսյանը ծանոթ լինելով Լեոնյանի աշխատանքի ձեռագրին գտնում է, որ այն «եռնխայական թոթովանք» է, «խոշոր սխալներով լի աշխատություն, անարժան մրցանակի: Մեղադրում է մրցանակը տվողներին, որ Գալիմբյարյանի աշխատությունը թողած այդ գործն ևն արժանացրել խրախուսանքի:

Լրագրի հոկտեմբերի 27-ի համարում (N 124) տպագրվեց Գ. Լեոնյանի «Նամակ խմբագրությանը», ուր նամակագիրը, բողոքելով իր տակավին չհրատարակված աշխատության դեմ տպագրված հոդվածների կապակցությամբ, խորհուրդ է տալիս համբերել մինչև իր գրքի լույս տեսնելը և գրանից հետո դատել, թե իր այդ գործն է լավը, թե՛ Գալիմբյարյանինը:

Գրքի լույս ընծայումից հետո էլ 1895-ին «Մշակը» անդրադարձավ Լեոնյանի երկին, սակայն ավելի խիստ, ծաղրական հոդվածներով: Ապրիլի 22-ի համարում (N 45) Գրող

աշխատության մասին գրախոսողը այնուամենայնիվ պայտապանության տակ է առնում նրա վերահիշյալ գրախոսական Գալիմբյարյանի դեմ գրած:

ստորագրութեամբ տպւած Ռոզվածի մեջ Լեոնյանի աշխատութիւնը ծիծաղաշարժ անեկղոտներէ ժողովածու Ռաւկվեց. «Անա այժմ այդ դիրքն է, որ կարգում էմ, ծիծաղում էմ մոռանում աշխարհիս դարգերը» — կարգում ենք Ռոզվածում: Մի բանի օր Հետո (ապրիլի 25-ին), «Մշակը» տպարկեց Ռիզմիրյան մրցանակաբաշխութեան անձնածոգովը, անստորագիր Ռոզվածը, ուր խիստ մեղադրվում էր այդ անձնածոգովը Լեոնյանի «խակ, տգետ և ծիծաղելի գրվածքը» մրցանակի արժանացնելու համար:

Նույն թվականին Յիֆլիսահայ մի ուրիշ պարբերականում՝ Ռուբրուճում տպագրվեց նրա խմբագիր Ավետիք Արասխանյանցի երկուր կրախոսականը միաժամանակ երկու դրքերի՝ Գ. Գալեմբյարյանի և Գ. Լեոնյանի աշխատութիւններին մասին¹:

Վերն արդեն տեսանք, որ Գ. Գալեմբյարյանի դիրքը կրախոսողը բարձր է գնահատում: Այժմ տեսնենք, թե ինչ գնահատական է նա տալիս Գ. Լեոնյանի աշխատութեանը. «Թերթիկով ներկա մեծ հաստը՝ մարդ չլիտե ինչին ավելի պարհանա, այն բանին, որ մի երիտասարդ Ալեքսանդրապոլում նստած, ուր երեւակայում ենք, թե ինչ դրադարաններ կարող էն լինել, հայոց բոլոր թերթերի նկարագիրը տալու վճողականութիւնն է ունեցել, թե՛ արդյոք հեղինակի անձնապատանութեան վրա, հեղինակի, որ կարգին ո՛չ մտածել, ո՛չ գրել և ո՛չ շարադրել զիտե, ամեն քայլափոխում մի թերուս զաւստական կրագետի դիտողութիւնների նմուշներ է տալիս, բայց և վստահանում է ամեն ինչ դատել՝ զովելով կամ պախարակելով: Այդ դիրքը լուրջ բնադատութեունն է իբրցնում ո՛չ շարագրութեան, ո՛չ դատողութեունների կողմից. երեւալամտութիւնը մտնում է նույնիսկ լեզվի մեջ, այնպիսի անկրողեա նախադասութեուններով է լիքը այս ամբողջ գիրքը, որ ընթերցողի մեջ անդիմադրելի կերպով հարց է ծագում հեղինակի ով լինելու, որտեղ ուսած և նույնիսկ բանի տարեկան լինելու մասին»²:

1 «Ռուբր», 1895, № 5, էջ 667—680:

2 Նույն տեղում, էջ 674:

Արասխանյանցը բերում է չնգվածան. մաքի. մատենագիտական բնույթի մի շարք շատ լուրջ հիշատակներ: Յույց է տալիս, որ Լևոնյանը իր կարգացածը երբեմն չի հասկացել. «Մարգու խեղճն է գալիս. տեսնելով, որ մեր հավաքագրողը երբեմն նույնիսկ չի էլ հասկացել յուր կարգացած գրքերի իմաստը: Հետևյալ նմուշը իսկ որ դասական է: Պարոնյանը յուր «Ազգային ջոջերի» մեջ, ուզենալով ծագրել Արծրունու աղետը գեպի ոտար բառերը. «նարել է մի հեռագրի թարգմանությունը, լիթը ոտար և նույնիսկ ազավազ բառերով: Եվ որովհետև մեր հավաքագրողը չգիտե, թե ինչ բան է Պարոնյանի ծագրը, այդ հեղինակի ննարածը նա վերցրել ու տեղափոխել է յուր գրքի տեքստի մեջ՝ հավատացնելով, թե նա տպված է «Մշակի» մեջ:»

Գրախոսությունում կան նաև այսպիսի հատվածներ. «Հավաքագրողը, որը մի համրակ է բառիս բուն նշանակություններ, փոխանակ լիակատար և կարևոր տեղեկություններ հաղորդելու՝ շարունակ բանակոծվներ է մզում այս ու այն թերթի գեմ, երբեմն հասնելով նույնիսկ յորոթյանս «Լի խոսքով, մի կողմը թողած խակ դատողությունները. ներկա գիրքը կազմված է այնպես, որ չի կարող իրր լեզինակափոր աղբյուր ծառայել հայոց լրագիրներին մասին»¹ «Հեղինակի երևիսյամտությունները ավելի ևս աւրի կրնկենին, եթե քննադատության տակ զցնինք նորա դատողությունները թերթերի մասին»:

Արասխանյանցը ակնառու փաստերով ցույց է տալիս, որ Գ. Լևոնյանը ազատ օգտվել է Գայեմրյարյանի աշխատությունից և հետո վարկաբեկել այն իր գրախոսականում²:

Ի վերջո, Արասխանյանցը եզրակացնում է, որ Լևոնյանի գիրքը ժողովար կարող է լինել ոչ այնքան բնթերցող հասարակության, որքան մի այլ, բայց ավելի լուրջ հավարա-

1 Նույն տեղում, էջ 676:

2 Նույն տեղում, էջ 679:

3 Նույն տեղում, էջ 677:

յլուդին, որը կիմանա Դարկավոր զգուշությունները բանեցնել այդ դորժից օգտվելու ժամանակ¹։

Ինչպե՞ս, Արասխանյանցը այն ժամանակ չէր կարող Լեւոնդրէլ, որ այդ «լուրջ Դավաքագրողը» պետք է լինի նույն ինքր Դարեգին Լեոնյանը, որը 40 տարի հետո, հասունացած, գիտելիքներ և կենսափորձ ձեռք բերած, նորից պետք է հրատարակեր «Հայոց պարբերական մամուլը» անունով մի աշխատություն, որին սակայն փնակված էր դառնալու հայոց պարբերական մամուլին նվիրված մատենագիտական լուրջ աշխատություններից յավագույնը։

Լեոնյանը 1934 թվականին օգտագործեց 1895-ին հրատարակված իր աշխատությունը և, հասկանալի է, որ նոր «Հայոց պարբերական մամուլը» ղերծ եղավ նախորդի լուրջ արատներից²։

Սկսելով մանրամասն կանգ շտանք այդ արատների վրա նաև այն նկատառումով, որ դրանք չկան Լեոնյանի նույն տնունը կրող, իսկ ըստ ամենայնի նոր դրքի մեջ, որի առանձնահատկությունների և արժանիքների վրա կանգ լենք առել ներկա աշխատության Գ պրակտիմ³։

Այստեղ ավելորդ չենք համարում հիշել մի հետաքրքրական միջադեպի մասին. Վրո Արասխանյանցը Լեոնյանի դրքի վրա դրած իր գրախոսականը ավարտած է լինում, «Մուրճի» խմբագրություն վ մտնում 21-ամյա Լեոնյանը. խմբագիրը

¹ Նույն տեղում, էջ 679։

² Ին որքան էր լրացված 1934-ին լույս տեսած «Հայոց պարբերական մամուլը» նախորդի համեմատ, բավական է նշենք, որ և՛ ին այդ նախորդում տրված էին մինչև 1894 թ. հրատարակված 172 պարբերական, ապա նորի մեջ նշված է մինչև նույն թվականը լույս տեսած 237 պարբերական։

³ Գ. Լեոնյանի 1895 թ. «Հայոց պարբերական մամուլի» բազմաթիվ թերություններ նշված են վերո հիշատակած գրախոսականներում, հետաքրքրվողը կարող է գիմել դրանց։

զարմանքով իմանում է, որ այդ գյումրեցի երիտասարդը իր լիքի վրա սկսել է աշխատել 15—16 տարեկան հասակում. ամենում է մեզ միայն զարմանալ այդ անձի հավաքագրական բոլորովին արտասովոր հակման և ույժի վրա. — Եղևակացնում է արդեն մեղմացած Արասխանյանցը.

Ի միջի այլոց ասենք նաև, որ Հեոնյանի աշխատությունը չափազանց հոգվածները կարգալիս էլ այսօր եկամվում է որոշ աշատու վերաբերմունք, նրա գեմ գրողներն էլ շեն կարողացել լիովին արդարադատ մնալ: Հեոնյանի բննադատների միտումնավորությունը մասամբ զգացվում է Արասխանյանցի գրախոսականում, ուր Հեոնյանը մեղադրվում է պահպանողական «Նոր-Դար» լրագրի հասցեին զովասանքնել շոտլանդու համար: Պահպանողական լրագիրը գովողը հազիվ թե կարողանար «Մշակի» կամ «Մուրճի» լիակատար քարյացկամությունն արժանանալ. թեև դա բնավ չի նշանակում, որ Հեոնյանի աշխատությունը չունի այն արատները, որոնց մասին գրում էին: Այդ արատները, անշուշտ փաստ են, և Հեոնյանի որոշ բննադատներ այդ փաստերը կարողացել են իրենց նպատակի համար՝ «Նոր-Դարին» պաշտպանող և «Մշակին» այպանող հեղինակի դեմ հմտորեն օգտագործել: Ուստի այս դեպքում Հեոնյանի բննադատները պարզապես օգտագործել են եղած լուրջ թերությունները, իսկ ինքը՝ Հեոնյանը իր միտումնավոր գրախոսականում «ոչնչացրել է» մի աշխատություն, որը իրականում զերծ է նման լուրջ թերություններից:

Ինչ որ է, այսօր պարտական ենք ասելու նաև, որ շնայած եղած արատներին Հեոնյանի տեղրանիկ մատենագիտական աշխատությունը այնուամենայնիվ ներդրում էր և նկատելի ներդրում հայ մատենագիտության, մամուլի պատմության և ազգավառում: Այդ աշխատությամբ Գ. Հեոնյանը հաստատապես մտավ մատենագիտական-բանասիրական ասպարեկ:

Դրա ապացույցն է նաև այն, որ 1898 թվականին հրա-

1 «Մուրճ», 1895, № 5, էջ 580.

«Брянская помощь»-ում գետեղվեց Լեոնյանի «Հայոց պարբերական մամուլը» պատմական տեղեկանքը (Դիլ. ստորագրությամբ), իսկ 1905 թվականին «Լույս» օրա-
ցույց-ճանդեմում տպագրվեց Գ. Լեոնյանի (անստորագիր) «Իսկատար ցանկ Հայ լրագրության ժամանակագրական
կարգով. (1794—1904)» աշխատանքը¹։

Այստեղ ժամանակագրական կարգով թվարկված են Հայ
պարբերականները սկսած «Աղղարարից» մինչև 1904 թ.
հիմնադրված պարբերականները՝ 209 անուն Հայերեն և
15 անուն Հայատառ թուրքերեն։ Այնուհետև տրված են մի
քանի տեղեկատու մատենագիտական աղյուսակներ։ «Կով-
կասա՝Հայ պարբերական մամուլը Հայերեն», «Կովկասում
1901—1902 թ. լույս տեսած թե՛ Հայերեն և թե՛ օտար լե-
զուներով գրքերի քանակությունը» և «Թուսաստանի պարբե-
րական մամուլը 1904 թ.»։

Հայ պարբերականների ցանկը լրացված է հեղինակի Նա-
խորդ աշխատության համեմատ, սակայն թերթերի ու ամ-
սադրերի նկարագրությունները համառոտ են, տրված են
միայն ամենախիստ տեղեկությունները։ Ինչ վերաբերում է
տեղեկատու աղյուսակներին, ապա նրանք պարունակում են
հետաքրքրական տվյալներ, օրինակ, զրանցից իմանում ենք,
որ 1904 թ. Թուսաստանում տարրեր լեզուներով հրատարակ-
վող պարբերականների մեջ ըստ քանակի Հայերենը ութեր-
որորդն է հեղեյ ռուսերենից, գերմաներենից, ֆրանսերենից,
անգլերենից, լեհերենից, լատիներենից ու էստոներենից հե-
տո, իսկ Կովկասում 1901—1902 թթ. լույս տեսած գրքերի
մեջ Հայերենը անունների ու օրինակների քանակով երկրորդն
է հեղեյ (ռուսերենից հետո)։

1900-ական թվականներին Լեոնյանը դառնում է Հայոց

¹ Брянская помощь пострадавшим в Турции армянам, кн. 1—2. Москва, 1889, стр. 599—606. Аумянская периодическая печать. (Ис-
тоорическая справка).

² «Լույս. պատկերագրող օրացույց հանդես», 1905 թ. (Թիֆլիս),
«յուլիակ 595—614»։

պարբերական մամուլի հանաչված գիտակիր։ Նա պատրաստ-վում էր շարունակելու իր աշխատությունը և տալու 1894-ից հետո ասպարեզ հկած հայերեն պարբերականների մատենա-գիտական ակնարկը, սակայն այդ գործը արեց մի ուրիշ անձ-նավորություն, որ նույնպես նոր էր մուտք գործել հայոց լատինատիրության բնագավառը։ Պա Մկրտիչ Պոստոլյանեն էր (1881—1959), վենետիկի Միտթարյաններից, նա նույնպես ուսումնասիրության նյութ էր բնարել հայոց պարբերական մամուլը։ 1907 թվականին «Բազմավեպում» տպագրվեց Պոստոլյանի «նգիպտահայ լրագրության քառասունամյա պատ-մությունը» (1865—1905) 1, ևյա, ինչպես հեղինակն է անվա-նել, համառոտ տեսության մեջ նկարագրված և բնութագրված է 14 նգիպտահայ պարբերականներ, ընդ որում, նյութը բաժանված է երեք շրջանի՝ ըստ ժամանակագրության՝ ա) նախքան 1897 թվականը, բ) 1897—1905 թվականներ և գ) դրանից հետո։

1909 թվականին վենետիկում լույս է տեսնում Պոստոլյանի «Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ՝ աշխատույնու-նը», որը նախապես սկսել էր տպագրվել «Բազմավեպի» նույն թվականի համարներում։ Հեղինակը իր այդ աշխա-տությունը հայոց մամուլի մատենագիտությունն ու պատմու-թյունը շարունակել է այն կետից, որով ավարտվել էր Կ. Լե-վոնյանի աշխատությունը, այսինքն՝ 1894-ից և հասցրել մինչև աշխատությունը հրապարակելու ժամանակը, այլ խոս-րոզ, տվել է հաջորդ 15 տարվա հայոց մամուլի մատենագի-տական-պատմական տեսությունը։

Պոստոլյանը այդ տասնհինգ տարիների ընթացքում հայոց պարբերական մամուլի վիճակը նկարագրում է հետևյալ կերպ․ «...երբ սահմանադրության ձայնը լսեցին, առաջին անգամ մամուլ ազատությունը վայելեցին, և ահա ընթերցող-

1 «Բազմավեպ», 1907, էջ 73—77.

2 Մ. Պոստոլյան Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ, 1894—1909, վենետիկ, 1909, 302 էջ.

3 «Բազմավեպ», 1909, էջ 385—388, 442—448, 488—496, 538—544.

ներև ազնիւի խմբագիրները երևան եկան, և քառ շմնաց որ
թերթի մը անունը : Ըլլար, բայց վասն զի շատերը ոչ նյութ-
թական և ոչ գիտական ուժ ունեին, ատոր համար շատ շուտ
տեսան իրենց թերթերուն մահները :

Ահա ուրեմն շրջան մը հայ պարբերական մամուլին, որ
արժանի է ուսումնասիրութեան մը, քանի որ ան իր մեջ կը
բովանդակէ հայ ազգին արցունքը և ժպիտը (1895—1909),
քանի որ իր մեջ ունի անիծող և օրհնող երգիչներ, քանի որ
այդ շրջանին՝ ուսահայք մանավանդ ընծայեցին ամենա-
պատմական և յուրջ հանգեսներ, քանի որ այդ շրջանին լրա-
դրութեան միջոցով քննադատութիւնը եկավ լույս տիեզե-
սագոյին մատենագրութեան և պատմութեան վրա¹ :

Պատուրյանը իր աշխատութիւնը համարում է մի բանալի,
որով բացվում է հայ կյանքի սրահի դուռը և որի շնորհիւ
հնարավոր կ'լինի ծանոթանալ տասնհինգ տարւա մեջ աս-
պարեկ եկած հայ դրագետներին :

Աշխատութիւնը բաժանւած է 3 գլխի և մի հավելւածի՝
ա) Արտասահմանյան մամուլ (5 անուն), բ) Տաճկահայ մա-
մուլ (10 անուն), գ) Ռուսահայ մամուլ (10 անուն). հաւել-
ւածում արված են տարբեր տեղերում լույս տեսնող պար-
բերականներ, ընդամենը նկարագրված են 33 պարբերական-
ներ, որոնք հրատարակվել են ընդդրկված 15 տարում :

Գլուխների ներսում նյութը շարադրվում է պարբերական
սու պարբերական: Յուրաքանչյուր պարբերականի համառոտ
կենսագրութիւնն է արվում՝ ով է հիմնադրել, ինչ պայման-
ներում, ով կամ ովքեր են խմբագրել, ինչ ուղղութիւնն է
ունեցել, ինչ փոփոխութիւններ են եղել պարբերականութեան
կամ ծախարի մեջ և այլն :

Այնուհետև, ժամանակագրական կարգով խոսվում է
ամեն մի պարբերականի բովանդակութեան մասին՝ ովքեր
են թղթակցել, ինչ բնութիւնը նյութեր ևն հրատարակել և
այլն, մեծ մասամբ նշվում են համարների այն էջերը, որ

1 Մ. Պատուրյան Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ, էջ 7—8 :

տեղ է դառնում այն կամ այն նյութը, Երբեմն բերվում են իրապարակված նյութերի բազմազանությունները, երբեմն էլ ամբողջ նյութը (ազնալ գեղարվեստական խոսքը բանաստեղծությունների մասին է. գրքում բերված են 37 բանաստեղծություններ, իրապարակված տարբեր պարբերականների մեջ)։

Խնարհեմ, պարբերականներում հղած բոլոր նյութերը չէ, որ նշվում են, այլ ընտրովի (գլխավորապես հայագիտական), բացի այդ, նյութերը միշտ չէ, որ մասնատվողական նկարագրությամբ (ստույգ վերնագրերով) են նշվում, այլ հաճախ՝ անստույգ անվանումներով։ Հայոց պարբերական մամուլի, ինչպես և այնտեղ տպագրված նյութերի վերաբերյալ Պոտուրյանի աշխատությունը ընթերցողին տվել է և շարունակում է տալ մի շարք կարեոր տեղեկանքներ։

Պոտուրյանի աշխատությունը կազմված է խնամքով, նրա տված տեղեկանքները վստահելի են։

Հաճելի է նաև աշխատության տեսքը։ Դեռևս աշխատությունը «Բազմազան պոեմ» տպագրելու ժամանակ՝ Պոտուրյանը մի հայտարարությամբ դիմեց հայ լրագրողներին խնդրելով նրանց լուսանկարները, Եվ ահա աշխատության մեջ տեսնում ենք մի շարք անվանի խմբագիրների և պարբերականներին թղթակցած հասարակական գործիչների, բանաստեղծների, արձակագիրների, բանասերների լուսանկարներ։ Դրված են նաև մի շարք պարբերականների ճակատի լուսանկարները։

Պոտուրյանի այս գրքից հետո մինչև 1920-ական թվականները հայ պարբերական մամուլի մատենագիտությունը նվիրված աչքի ընկնող որևէ աշխատություն չի հրատարակվում¹։

Անշուշտ, հոգվածներ, նվիրված հայոց պարբերական մամուլին, ինչպես և տարբեր հոգվածներում անդրադարձներ

1 1921—1923 թվականներին «Հանգստի մամուլայում» տպագրվեց Բ. Քոսյանի (Կոբապետյանի) աշխատությունը՝ «Լիպկատար ցուցակ» (այդպես լրագրողներու, որոնք կցտեղին Մխիթարյան մատենադարանին մեջ էր վերցնում, որը 1924-ին լույս տեսավ տոսեմին գրքով)։

ղեպի պարբերական մամուլի պատմությունը շարունակում են Դրապարակվել թերթերի ու ամսագրերի էջերում. նրանց բոլորին այստեղ անդրադառնալ անհնար է: Բացի այդ, 20-րդ դարի սկզբին շարունակվում և ավելանում է նոր հրատարակվող պարբերականների վերաբերյալ բաժնեգրական հայտարարությունների և մանավանդ ընթացիկ մամուլի, այնտեղ տպագրված կարևոր հոգվածների տեսությունների հրապարակումը:

Մենք այս դիտում անդրադարձանք միայն հայոց պարելուական մամուլի մատենագիտության ուղղությամբ 19-րդ դարում և 20-ի սկզբում կատարված առավել կարևոր աշխատանքներին, իսկ դրանք այդ ժամանակաշրջանում ավարտվում են Պոտուրյանի վերոհիշյալ աշխատության հրապարակմամբ:

Իլյուսն ավարտելուց առաջ կարևոր ենք համարում համառոտակի խոսել մատենագիտական երկու աշխատության մասին, որոնք վերաբերում են երկու կարևոր պարբերականների նյութերի բացահայտմանը:

Դրանցից մեկը «Բազմավնույ» հանդեսում 50 տարվա մեջ հրապարակված նյութերի տեղեկատու ցանկն է, կազմված Ս. Հովսեփյանի կողմից և հրատարակված 1896-ին¹, մյուսը «Հանդես ամսօրյայում» 25 տարվա ընթացքում լույս տեսած նյութերի ցանկն է, կազմված Վ. Բունկուցյանի կողմից և տպագրված հանդեսի 1912 թ. համարներում²:

«Բազմավնույ» «Ընդհանուր ցանկ նյութոց»-ը առաջին փորձն էր հայոց մեջ տալու մի պարբերականի մեջ լույս տեսած նյութերի մատենագիտությունը:

Սկզբում առանձին հայադիտական նյութերի ցանկն է

¹ Ս. Հովսեփյան Ընդհանուր ցանկ նյութոց հիսնամյա Բազմավնույաց, Ա—Ե, 1843—1893, Վենետիկ, 1896, 14, 96 էջ:

² Վ. Բունկուցյան Ընդհանուր ցանկ «Հանդես ամսօրյա» ուսումնաթերթի 25 տարեկրուն (1887—1911):—«Հանդես ամսօրյա», 1912, սյունակ 338—348, 370—384, 500—512, 566—576: Նաև՝ ցանկ տեղական և նյութոց.—«Հանդես ամսօրյա», 1915, սյունակ 179—190:

յՅանկ ազգային նյութոց հիսնամյա Քաղմավիպաց), այնուհետև գալիս է ընդհանուր ցանկը, որն սեփ մի շարք բաժիններ՝ Բարոյական, Մատենագրական, Հնարական և այլն: Սրանք էլ ունեն իրենց ենթաբաժինները: Վերում կատմագրի մեջ տպագրված պատկերների ցանկը և նյութերում հիշված անձանց ու վայրերի անվանացանկ:

Աշխատության այս ընդհանուր մասը մի կարգային առարկայական մատենագիտություն է, որը ընթերցողին ցույց է տալիս, թե ի՞նչ հարցի վերաբերյալ ի՞նչ նյութեր կարելի է կարդալ «Քաղմավիպում»:

Ընդհանրապես ցանկը խնամքով է կազմված, թեև ընդհանրությունները, որոնցից ամենաշուրջը հեղինակային անվանացանկերի քաղկայությունն է և այն, որ նյութերը միայն վերնագրերի տակ են նկարագրված, հեղինակային նկարագրություններ չկան:

Առհասարակ նկատելի է, որ վեներտիկյան մատենագիտությունները մինչև Ա. Ղազիկյանի գործը կա՛մ հեղինակային նկարագրությունները թերի ու անճիշտ են տալիս, կա՛մ առհասարակ խուսափում են հեղինակային նկարագրություններից՝ նյութերը ներկայացնելու համար հիմնականը համարելով վերնագրային նկարագրությունները: Հեղինակային նկարագրությունների վերաբերյալ այս անփութությունը, որ գուցե և բարի նկատառումներից է բխում, լուրջ մատենագիտական թերություն է:

Այսօր «Քաղմավիպի» «Յանկ նյութոց»-ից օգտվել, իհարկե, հնարավոր է, սակայն մի շարք դեպքերում այն անգոր է օգնելու ընթերցողին: Օրինակ, նյութերի բաժանումը ըստ առարկաների այսօր հնացած է, առարկաների անունները չիլ բան են ասում այսօրվա ընթերցողին՝ որոշելու համար, թե իրեն հետաքրքրող այս կամ այն հարցին նվիրված նյութերը որտեղ պետք է փնտրել: Օրինակ, հայ տպագրության պատմությանը նվիրված հոդվածները դրված են Սատենագրական-ի տակ, այսինքն՝ զրականության տակ, անտեղյակ ընթերցողը հազիվ թե ենթադրի այդ հանգամանքը:

Ավելի մեծ անհարմարություն է, անշուշտ. այն, որ չեն ներ-
շնչում նյութերի հեղինակները. եթե մեկն ուզում է իմանալ,
թե որ հեղինակը ինչ նյութեր ունի «Բազմավեպի» 50 տար-
վա համարներում, ապա այս ցանկը նրան անհրաժեշտ տե-
ղեկանքը տալ չի կարող:

«Հանդես ամսօրյայի» ռեդակցիան ցանկը՝ Վրթանես
Ռունկուցյանը հանձն է առել կազմելու մի շարք քանասեր-
ների խնդրանքով՝ հանդեսի 25-ամյա հոբելյանի առթիվ
(«Խորհրդարան հանձն առինք այսպիսի տաժանելի դործ մը»):

Ցանկը առաջարանի համաձայն երկու մասից պետք է
բաղկացած լինել. 1. «Հանդեսի» բոլոր աշխատակիցներուն
անուններն այբուբենական կարգով. 2. անոնց յուրաքան-
չյուրին գրած հոդվածը՝ նյութի կարգով:

Առաջին մասը՝ Հոդվածագիրներն ու իրենց հոդվածները
լրիվ տպագրվեց հանդեսի 1912 թվականի համարներում
(վերը նշված): Սա հեղինակների անվանացանկ է, որ յու-
րաքանչյուր հեղինակի ազգանվան տակ տրվում է «Հանդես
ամսօրյայում» նրանից հրապարակված նյութերի ցուցակը:
Այսինքն՝ սա այն է, ինչ շունի «Բազմավեպի» «Ցանկ նյու-
թոյ»-ը 1915 թվականին սկսեց տպագրվել «Հանդես ամս-
օրյայի» 25 տարիների «Ցանկ անվանց և լյուրոց»-ը, որը
նյութերի վերնագրերի և առարկաների անունների մի այբ-
բենական ցանկ է:

Երկրորդ մի նվազ տպագրվելուց հետո (և տառն ամբող-
ջությամբ) ցանկի այս մասի հրապարակումը ընդհատվեց:

Արդիական արժեքի տեսակետից պետք է ասել, որ աշ-
խատության լրիվ տպագրված առաջին մասն այժմ ավելի
օգտագործելի է, քան «Բազմավեպի» ռեդակցիան ցանկ նյու-
թոյ»-ը. դիտարկելով առաջինի հեղինակային նկարագրու-
թյունների պատճառով:

Սակայն «Հանդես ամսօրյայի» ցանկը ունի օգտագործ-
ման մի դժվարություն. հեղինակի տակ հավաքված նյու-
թերից յուրաքանչյուրի դիմաց տրվում է աղբյուրը, թե հան-
դեսի ո՞ր համարում, ո՞ր էջից է տպագրված տվյալ նյութը:

Բայց նշվում են, ոչ թե հանդեսի տարեթիվը և էջը, այլ ռեանդես ամսօրյախա հրատարակման տարին և էջը (ինչ-պես, օրինակ՝ «Ավետիսյան Հ. Ա. Անիի պեղումը. ԻԲ 222», որ նշանակում է հանդեսի 22-րդ տարվա համարներում էջ 222-ից)։ Ուրեմն օգտվողը նաև պետք է իմանա, թե որ թվին է հիմնադրվել հանդեսը, ապա գումարի համապատասխան տարիների քանակը և որոշի հանդեսի անհրաժեշտ համարի քվակաճը (քանի որ գրադարաններում հանդեսները կարելի է ըստ թվականների պահանջել և ոչ ըստ հրատարակման այսինչերորդ տարվա)։ Աղքյուրի նշման նման եղանակը, թեև կարճ է, հակիրճ (ընդունված է նաև հվրոպական միշարք մատենագիտություններում), սակայն, ըստ ժրեռլթի, լավագոյնը է նյութը հեշտ գտնելու տեսանկյունից։ Քրազմավեպից ցանկն այս տեսակետից այն առավելությունն ունի, որ նյութի անվան դիմաց հանդեսի հրատարակման տարվա (այսինչերորդ) հետ միասին նշված է նաև որոշակի թվականը։

Ամեն դեպքում, իհարկե, քանադներին, ընթերցողներին նկատելի օգնություն են ցույց տվել հայության այս ամենաներկարակյաց հանդեսների նյութերի ցանկերը, և լավ կլինեք, եթե մյուս հանդեսների թեկուզ նմանօրինակ ցանկեր հրապարակվեին։

Փորձ արվեց հրապարակելու «Արարատի» (էջմիածին) 50-ամյա նյութերի ցանկը, և 1918 թվականին այդ հանդեսի առաջին համարում լույս տեսավ ցանկի սկիզբը, սակայն նրա հրապարակումը ընդհատվեց, քանի որ նույն թվականին ընդհատվեց «Արարատի» հրատարակումն ընդհանրապես։ Այդ կարևոր տեղեկատուի հեղինակի՝ Գյուտ վարդապետ Ղազարյանի աշխատանքը ավարտված է եղել, բայց ցանկին վիճակված չէր լույս աշխարհ գալու¹ (այժմ ձեռագիրը պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում)։

¹ Ավելի ուշ, 1950-ական թվականներին Մաշտոցի անվան Մատենադարանի այն ժամանակվա աշխատակից Շուշանիկ Շահնազարյանը կազմել է «Արարատի» 50-ամյա նյութերի նոր ցանկ (մեում է անտիպ)։

ԾՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ճյուղային (քննադավառային) մատենագիտությունը զարգանում է գիտություն և արդյունաբերության առանձին քննադավառների զարգացման զուգընթաց, երբ տվյալ ազգային լեզվով այդ քննադավառների վերաբերյալ քավական գրականություն և հավաքված լինում:

Հասկանալի է, որ հայոց մեջ ճյուղային մատենագիտությունը, ստեղծելի ճիշտ գիտության ու արդյունաբերության տարբեր ճյուղերին վերաբերող մատենագիտություններ զարգանալ չէին կարող, քանի որ գիտության, մանավանդ քննական գիտությունների տարբեր ճյուղեր Հայաստանում, ինչպես և տարբեր երկրներում ապրող հայության մեջ չէին զարգանում հարկ ձևած շնչով, չէին գրվում ու հրատարակվում զգալի քանակով գրքեր գիտության ու արդյունաբերության տարբեր քննադավառների վերաբերյալ: Հայերեն հրատարակվում էին քննական որոշ գիտությունների, ինչպես և թվաբանության, բժշկության ու գյուղատնտեսության վերաբերյալ գրքեր, գրքուկներ, դասագրքեր: Սակայն դրանց քանակն այնքան փոքր էր, որ առանձին ճյուղային մատենագիտությունների կարիք չկար, այդ գրականությունը կարող էր ներկայացվել ընդհանուր ազգային մատենագիտության մեջ, Գեղարվեստական գրականությունը քավականին լավ էր զարգանում, սակայն, ըստ երևույթին, հայ գեղար-

վեստական գրականության առանձին մատենագիտությունն ունենալու պահանջն էլ չէր հասունացել:

Հասարակական գիտություններից զարգացած էր քանասիրությունը, լայն իմաստով, ներառյալ նաև պատմագիտությունը: Ըստ որում, քանասիրությունը գերազանցապես հայագիտական բնույթի էր և այդ տեսակետից էլ հետաքրքրություն ուներ իսկ հայագիտական մատենագիտության կարիքը իրոք կար, և դա, ըստ վերջյան, հայոց մտավոր կյանքում միակ բնագավառն էր, որի ճյուղային մատենագիտությունը ստեղծվեց:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական մատենագիտությունը կարելի է երկու տեսակի քաժանել ա) հայ հին և միջնադարյան, հեղինակների տարբեր երկերի մատենագիտություն և բ) օտարազգի ու հայազգի քանասիրների հեղինակած կամ հրատարակած հայագիտական բնույթի ուսումնասիրությունների, տեղագրությունների, քանահյուսական, վիժազրական և աբլ նյութերի հրատարակման մատենագիտություն:

Առաջինն, ինչպես արդեն անվանել ենք, հայ ավանդական մատենագիտությունն է, հնից եկող, երկրորդը հիմնականում 19-րդ դարի երկրորդ կեսի ծնունդ է:

Ավանդական մատենագիտության ուղղությամբ 19-րդ դարի առաջին կեսին, տեսանք, որ բավական աշխատանք էր կատարել Ս. Սումալյանը, որի խտալերեն գրված աշխատությունների հիման վրա հրատարակ եկավ նաև Կ. Նոյմանի գերմաներեն երկը: Այնուհետև հրատարակվեցին հայոց դպրության պատմությունը և նրա մատենագիտությանը նվիրված մի քանի այլ երկեր, այդ թվում Ստ. Նազարյան-ցիւր:

Սումալյանի, Նոյմանի երկերը մատենագիտական լինելով՝ մասամբ էլ գրականության պատմությունն էին: Դարի

երկրորդ կեսից գրականության պատմության և մատենագիտության ավելի զգալի սահմանազատում է նկատվում: Օրինակ, այլևս մատենագիտություն չէին կարող համարվել այնպիսի երկեր, ինչպես, ասենք, Հ. Գաթրճյանի «Պատմություն մատենագրության հայոց»-ը (Վիեննա, 1851) կամ Ս. Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության»-ը (Թիֆլիս, 1865), որոնք, անշուշտ, ունեն մատենագիտական արժեք (ինչպես ամեն մի պատմական աշխատություն յարող է ունենալ), սակայն ամբողջությամբ գրականության պատմությանը վերաբերող աշխատություններ են:

Հայոց դպրության մատենագիտություն էր ամերիկացի Հ. Գ. Դուլայթի 1853 թ. անգլերեն հրատարակված աշխատությունը (Քրիստափոր Սերոբյանի խմբագրական հսկողությամբ): Մատենագիտությունը մոշվում է «Գրացուցակ հայերեն առկա երկերի», այն բաղկացած է երկու մասից՝ ա) հայերեն ինքնուրույն երկերի և բ) թարգմանությունների: Առաջին մասում՝ սկսած շորորոգ դարից մինչև 17-ը յուրաքանչյուր դարի մի գլուխ է հատկացված, ամեն մեկում թվարկվում են համապատասխան հեղինակները, տրվում են նրանց երկերի (կամ երկի) անունները, ապա անգլերեն հայեր՝ ծանոթություն է տրվում հեղինակի և նրա երկերի մասին, Հեղինակների ու երկերի անունները նախ գրված են հայերեն, ապա լատինատառ, կա նաև ամեն մի երկի վերնագրի անգլերեն թարգմանությունը: Եթե երկը տպագրվել է, տեղեկանք է տրվում հրատարակության կամ հրատարակությունների մասին:

Երկրորդ մասում տրվում է հույն եկեղեցական հեղինակների երկերի հայերեն թարգմանությունների մատենագիտությունը՝ դարձյալ առ դար՝ 1-ին դարից մինչև 6-րդը:

Այս մատենագիտությունը նույնպես վազմված է հայոց

¹ H. G. O. Dwight Catalogue of All Works Known to Exist in the Armenian language of a Date Earlier than the Seventeenth Century.—Journal of American Oriental Society, New-York, 1853, vol. 3, № 2, p. 241—288. *Կա առանձնատիպը:*

պատմական ավանդույթի հիման վրա, ընդունվում է նախա-
մեարդյալն հայ գրականության գոյությունը՝ Ագաթանգեղո-
սը և մյուսները համարվում են 4-րդ դարի, Խորենացին 5-րդ
դարի հեղինակներ, ավանդաբար հին հեղինակներին վերա-
գրվող երկերը տրվում են հեղինակների անունների տակ և
այլն:

Այս մատենագիտությունը կարևոր դեր կատարեց այլազ-
գի բաժնասերներին հայոց դպրությանը ծանոթացնելու գոր-
ծում: Անշուշտ, աշխատությունը բավական թերություններ և
պակասներ ուներ, օրինակ, առհնձ, լկա Փավստոս Բուզանդը
կամ աղայաղված են մի շարք անուններ (Սահակ Պարթևա-
ցի, Ծովհաննես Մանդակունցի) և այլն:

Հայ ավանդական մատենագիտության մի լավ գործ էր
«Բազմավեպը» 1861—1862 թթ. հրապարակված «Պատկեր
հայկական դպրության»-ը¹ (հեղինակն անհայտ է): Սրա
նպատակն էր, ինչպես նախաքանում է գրված, «մեր ազգա-
յին մատենագրության պարծանքները համառոտիվ հիշատա-
կել, ջրստ կարգի հնության և դարուց՝ յուրաքանչյուր հեղի-
նակի անունն ու երկասիրությունքը դնելու»: Մատենագի-
տությունն սկսվում է 4-րդ դարից, թեև հեղինակի խոր հա-
մոզմամբ եղիլ է նաև հնագույն հայ գրականություն, որ չի
պահպանվել²: Զորբորդ դարից առաջ գրված են միայն մի
քանի հեղինակների անուններ, որոնք հիմնականում Խորե-
նացու հիշածներն են (Մար Աբաս, Ուղյուպ և այլն):

Յուրաքանչյուր դարին նվիրված հատվածում հեղինակ-
վերնագիր սկզբունքով թվարկվում են հայ հին հեղինակ-
ները, նրանց երկերը, ինչպես և հայոց հին թարգմանություն-
ները (Սեպեգիոս, Փիլոն և այլն), ամենը՝ ըստ հայ պատմա-
կան ավանդույթի: Այն երկերը, որոնք տարագրված են,
ոճենն աստղանիշ:

¹ «Բազմավեպ», 1861, էջ 31—32, 64, 96, 159—160, 191—192, 224,
293—294, 325—326, 357—358, 1862, էջ 32, 64, 96, 128, 160, 192, 224,
256, 288 320:

² «Բազմավեպ», 1861, էջ 31:

Ավանդական հայագիտական լավագույն մատենագիտութ-
յուններին էր Մ. Մխանսարյանցի «Կովկասի և Անդրկովկա-
սի մատենագիտության» մի զգալի մասը (Հայաստանին վե-
րաբերող), որի մասին արդեն խոսել ենք:

19-րդ դարի երկրորդ կեսում հայագիտության մարզում
կարևոր դեր կատարեց Քերովը և Պատկանյանի «Համառոտ
տեսության հայ պատմական գրականության» աշխատու-
թյանը կից ընդարձակ մատենագիտությունը՝ «Հայ պատմա-
գիրներ» երկատիրությանց ցուցակը: Սա պատմական ճյու-
ղային մատենագիտություն էր, կազմված նոր սկզբունք-
ներով:

Աշխատությունը գրեթե միաժամանակ լույս տեսավ հա-
յերեն¹ և ռուսերեն², իսկ մատենագիտական մասը նախապես
հրապարակվել էր ֆրանսերեն³ (հեղինակների ու լեզուների
անունները տրվում են հայերեն և ֆրանսերեն, առաջաքանը
ֆրանսերեն է), որը հայերեն ու ռուսերեն հրատարակություն-
ների համեմատ ավելի անկատար է, մի շարք հեղինակներ
բացակայում են, մատենագիտությունը հասնում է մինչև
17-րդ դարը (մինչդեռ հայերեն և ռուսերեն տարբերակներում
հասնում է մինչև 18-րդ դարը), չկան ժանոթություններ և
այլն:

Մի քանի խոսք Պատկանյանի աշխատության հայերեն
տարբերակի մասին:

Ամբողջ աշխատությունը բաղկացած է երկու մասից.
առաջինում տրվում է հայ հին գրականության մի ակնարկ,
թվարկվում են նախքան այդ հրատարակված այն աշխա-
տությունները, որոնք նվիրված են եղել հայ հին գրականու-
թյան պատմությանն ու մատենագիտությանը (ընդամենը 12

¹ «Фрэнз», 1880, № 1, էջ 1—26 և հավելված, էջ 1—40.

² К. Патканов Библиографический очерк армянской литерату-
ры. СПб, 1879 (շապիկ վրա 1880), 57 էջ.

³ К. Patcanian Catalogue de la Littérature arménienne...—«Tiré
du Bulletin de l'Académie Imperiale des Sciences de S. Pétersburg
1860, т. 2, p. 75—134.

անուն), խոսվում է հայ հին ձեռագրերի պահպանման կենտրոնների մասին: Երկրորդ մասը հայ հին պատմագրության մատենագիտությունն է, ժանրադրություններով:

Ընդգրկում է 57 հեղինակ, դասավորությունը ժամանակագրական է: Ներկայացված են ոչ միայն հայ, այլ նաև այլազգի պատմիչները, որոնց երկերը հնում ֆարգմանվել են հայերեն: Այդպես մատենագիտությունն սկսում է Եվսեբիոս Կեսարացուց, ավարտվում Մ. Չամչյանով, այսինքն՝ 19-րդ դարով:

Յուրաքանչյուր հեղինակի վերաբերյալ հավերժ տեղեկանք է տրվում, խոսվում է նրա երկերի մասին, ֆավորվում են այդ երկերի հրատարակությունները:

Ժամանակին այս մատենագիտության արժեքը նշանակալից էր պատմաքանների համար: Զիշտ է, կային Սոմալյանի, Զարբհանայանի, Միանսարյանցի մատենագիտական աշխատությունները, սակայն Պատկանյանի մատենագիտությունը նախ գրավիչ էր մի պատմաբանի համար իր պարզությամբ, ապա նրանով, որ այստեղ ներկայացված էին միայն պատմիչները (առանց մյուս հայ հեղինակների):

Հայ սովետական մատենագիտության նոր աշխատությունների ատեղծման նաև այլ փորձեր արվեցին, կարելի է հիշել, օրինակ, Ղ. Արշանի «Պատմիչը հայոց»-ը «Հայապատմա հոյակապ երկասիրության մեջ (Վենետիկ, 1901, էջ 9—139), ուր ֆավորվում են հայ և հայերեն ֆարգմանված օտարազգի պատմիչները հնագույն ժամանակներից սկսած, որովում են յուրաքանչյուրի վերաբերյալ կենսագրական, բանասիրական տեղեկություններ:

Հայ ավանդական մատենագիտությունը (ֆեհ ընդհանուր հայ դպրության, ֆե միայն պատմիչների), որ հայագիտության հիմքն է եղել և մնում է, շարունակեց զբաղեցնել մատենագետներին ու քանասերներին նաև հետագայում, ներառյալ և հայ մատենագիտության դարգացման խորհրդային շրջանում, երբ այդ գործով զբաղեցին Հ. Պետրոսյանը և մանավանդ Հ. Անասյանը:

Հայ ավանդական մատենագիտությունը վերջ ի վերջո, առավել կամ պակաս շեղումներով, միևնույն հեղինակներն ու միևնույն երկերն է ընդգրկում: Տարբեր է բնում կառուցվածքը և հին հեղինակների ու նրանց երկերի վերաբերյալ հայ պատմական ավանդույթի պահպանման չափը: 19-րդ դարում կազմված այս շարքի մատենագիտական աշխատությունները ժամանակագրական կառուցվածք ունեն և հիմնականում հավատարիմ են հայ պատմական ավանդույթին: Ասկայն եվրոպական հայագիտության զարգացման հետ ավելի ու ավելի քննադատվում է այդ ավանդույթը և, օրինակ, Հ. Պետրոսյանի «Հայ հին և միջնադարյան գրականություն» քերթողգրաֆիայում (Երևան, 1941), թեև մատենագիտության կառուցվածքը դարձյալ ժամանակագրական է, քայքայող է հաշվի ան առնված նոր շրջանի հայագիտության դրույթները (օրինակ, չկա 4-րդ դարի ու ավելի վաղ շրջանի հայ հեղինակների քառիներ, մի շարք հեղինակների վերաբերյալ տրվում են ծանոթագրություններ, որոնցում մերժվում է հայ պատմական ավանդույթը և այլն): Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» արդեն կառուցվածքով էլ տարբեր է (այբբենական է) և այնտեղ ավելի մեծ չափով ու քանասիրական քաջատեղյակությամբ է հաշվի առնված հայագիտության մեջ եղած կարծիքներն ու տեսակետները:

19-րդ դարում, սակայն, հայագիտության մեջ հայտնված նոր տեսակետները փոքր չափով էին մուտք գործում հայ ավանդական մատենագիտության մեջ կամ բոլորովին չէին մուտք գործում:



Հայագիտական մատենագիտության մյուս տեսակը ներկայացնելու էր այն աշխատանքը, որ կատարել ու կատարում էին տարբեր քանասիրներ հայոց մշակույթը ուսումնասիրելու ուղղությամբ, այսինքն՝ ընդգրկելու էր եվրոպացի և հայ հայագետների աշխատությունները:

Ամենից առաջ հետաքրքրություն առաջացավ իմանալու, թե ինչ աշխատանք են կատարել եվրոպացիները հայագիտության յնագավառում: Գրվեցին տեսություններ, հոգևածներ, գրքեր այդ հարցի մասին, կազմվեցին նաև մի շարք մատենագիտական ցանկեր:

Այս շարքի մատենագիտական աշխատանքների առաջնեկներինց էր դարձյալ Մ. Միսնսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի» մատենագիտությունը, որի մեջ տեղ էր հատկացված նաև հայագիտական մի շարք ուսումնասիրությունների:

Մոսկվայում լույս տեսնող «Հանդես գրականական և պատմական»-ում (որ, ի դեպ, պարբերաբար տպագրվում էին նոր հրատարակված գրքերի ցանկեր) 1890 թվականին (Յուդ գրքի հավելվածում, էջ 1—14) հրապարակվեց Կ. Եզյանի մի մատենագիտությունը. «Հայագիտություն. եվրոպական լեզուներով գրված գրքեր և հոգվածներ տասը տարվա ընթացքում (1876—1886) հայոց աշխարհի, եկեղեցվո՛ր, լեզվի՛: պատմության և՛ գրականության մասին»:

Մատենագիտությունը եվրոպական լեզուներով գրված բավական նյութ է պարունակում (թեև հեռու է լրիվ լինելուց); սակայն հաջող չէ մատենագիտական մշակումը, հաճախ նշված չեն անգամ հրատարակության վայրերը, երբեմն դժվարըմբռնելի են գրանցված ա՛յն պարբերականները: ուր հրատարակվել են հայագիտական հոգվածները և ա՛յն:

Հայագիտական գրականության մի քանի արժեքավոր մատենագիտական ցանկեր հրապարակեց «Հանդես ամսօրյան», Տարեկան հրատարակությունների մատենագիտության աթիթով մենք արդեն խոսել ենք այդ գործերի մասին: Առաջինը Գ. Գալեմբյարյանն էր, որ 1888 թվականից մինչև 1897-ը «Հանդես ամսօրյայում» հրապարակում էր իր «Ազգային հրատարակությունը... տարվո՜ւ արձանագրական մատենագիտությունը, որի հայկական մասերը հայերեն տարեկան հրատարակությունների ամփոփագրերն էին (հայ տպագրության մատենագիտություն), իսկ եվրոպական մասը

զուտ հայագիտական բնույթ ունի¹։ «Եվրոպական հրատարակությունք» վերնագրով նոր Վասարակալմամբ տրվում էին, հեղինակի խոսքով ասած, «եվրոպական լեզվով մեր ազգին վրայոք եղած մեզի ծանոթ հրատարակություններն»²։ Եվրոպական լեզուներով հայագիտական գրականության (1887-ի հրատարակությունները) առաջին ցանկը տպագրվեց «Հանդես ամսօրյայի» 1888 թ. հուլիսի համարում (էջ 127)։

Գալեմբյարյանը իր մատենագիտության այս հայագիտական մասի մեջ ընդգրկում էր գրքեր և հոդվածներ, նկարագրությունները կատարում էր բնագրի ընդվով, հայերեն տալիս էր հակիրճ ծանոթագրություններ։ Հարկավ, Գալեմբյարյանը լքել կարող ամեն տարի լրիվ ընդգրկել տվյալ տարում լույս տեսնող հայագիտական գործերը, բացթողումներն անխուսափելի էին, ինչպես և խոստովանում ու պատճառաբանում է ինքը՝ հեղինակը³։

Գալեմբյարյանի 1897-ին ընդհատված այս մատենագիտությունը շարունակեց Պետրոս Ֆերհաթյանը՝ հատցնելով մինչև 1910 թվականը։ Սակայն 1911 թվականից «Հանդես ամսօրյայում» տխնց լույս տեսնել Ֆերհաթյանի մատենագիտության միայն հայագիտական (եվրոպական լեզուներով) մասը, հայ տպագիր արտադրանքի մասը չէր հրապարակվում։ Մատենագիտությունը հրապարակվում էր «Ցուցակ եվրոպական-հայկական հրատարակության»։ 1896—1910 թվերնագրով։

Ֆերհաթյանի մատենագիտությունը, որ ընդգրկում է գրքեր ու հոդվածներ և այլբնական կառուցվածք ունի, նույն-

1 Այնպիսի կարծիք կա, որ Գ. Գալեմբյարյանի այս մատենագիտությունը զուտ հայագիտական է։ Իրականում նրա հիմնական մասը, ինչպես ասվեց, սուսկ հայ տպագիր արտադրանքի մատենագիտություն է, այդ արտադրանքի մեջ՝ եղած հայագիտական երկերը ամբողջ մատենագիտությունը հայագիտական չեն դարձնում։ Մինչդեռ մատենագիտության ավելի փոքր՝ եվրոպական մասն իրոք հայագիտական է։

2 «Հանդես ամսօրյա», 1888, էջ 22։

3 «Հանդես ամսօրյա», 1888, էջ 128։

պես կազմված է քարեխղճութեամբ, նկարագրութիւններում տրված են նյութերի վերաբերյալ մատենագիտական անհրաժեշտ տեղեկութիւնները, նկարագրութիւնների տակ նշված են աշխատութիւնների մասին տպագրված քննադատական հոդվածները, Պակասներ, անշուշտ, կան, նկատելի է մանաւանդ աճն, որ շին ընդգրկվում ռուսերեն հրատարակված աշխատութիւնները:

Այն նյութերը, որոնք կազմողը անձամբ չի տեսել, տարբերված են աստղանիշով:

Յերհայթյանի այս մատենագիտութիւնը հանդեսում շարունակաբար հրատարակվեց մինչև 1914 թվականի դեկտեմբերը և մնաց անավարտ: 1919 թվականին մատենագիտութիւնը, շարունակութեամբ հանդերձ հրատարակվեց առանձին դրօշով¹:

Գրքի առաջաբանից իմանում ենք, որ Յերհայթյանը պատրաստել է նաև 1917—1914 թթ. եվրոպական լեզուներով հայագիտական հրատարակութիւնների մատենագիտութիւնը (մնացել է անտիպ):

Սակայն, հավանաբար այդ նկատի շառնեցով էր, որ 1912 թվականին «Հանդես Ղամսորյայի» խմբագրութիւնը սկիզբ է դնում հայագիտական մի նոր մատենագիտութեան հրապարակման, որը ըստ ծրագրի, այդ թվականից սկսած ամեն տարի պետք է տար նախորդ տարվա հայագիտական հրատարակութիւնների ամփոփագիրը: Այս անգամ պետք է նշվեն թե՛ եվրոպական լեզուներով, թե՛ հայերեն հրատարակված հայագիտական գրքերն ու հոդվածները: Հանդեսի խմբագրութիւնը այս մատենագիտութեան նպատակն էր համարում ստալ հորինվածական ձևի մեջ մատենագիտական ամբողջական տեսութիւն հայագիտական ամեն կարգի գրութեանց վրա, որոնք լույս տեսած են հայ թե օտար թերթերում մեջ՝ հայ աշխարհի, ազգի, լեզվի, պատմութեան և այլնի

1 Պ. Յերհայթյան Յուշտկ հայագիտական հրատարակութեան ի նվորդա (1896—1910), Վիեննա, 1919, 128 էջ:

մասին, իհարկե, որչափ որ անոնք մատչելի կրնան ըլլալ խմբագրությանս¹։

Մատենագիտության նպատակն էր համարվում. Վլյսու աշխարհի որևիցե հեռավոր անկյուն հաստատված հայագետ կրնա գաղափար կազմել հայ քանասիրության օր ավուր առած զարգացման մասին, կրնա ծանոթություն ձեռք ձգել հայ կամ օտար թերթերու մեջ գրված հոդվածոց և անոնց բովանդակության մասին, և ըստ այնմ հայթայթել իրեն կարևոր թված հոգվածք կամ լրագրին թիվը. դարձյալ դուրսություն կընծայվի որևիցե նյութի վրա կրկին կամ երեք-պատիկ չգրելու կամ առանց նախորդներու կարծիքին ծանոթանալու նոր հոգվածի շփոթարկելու²։

1912 թվականին հանդեսի առաջին երեք համարներում (սյուճակ 85—96, 182—192), լույս տեսավ 1911 թ. հայագիտական հրատարակությունների մատենագիտությունը, որ կազմել էր Մեսրոպ Հոպազյանը։ Մատենագիտությունը բաղկացած է 8 թափիններից՝ Մատենագրական, Լեզվաբանական, Պատմական, Եկեղեցական-սրատական, Վարդապետական, Գեղարվեստ, Աշխարհագրություն, Նոր մատենագրություն։ Նյութերի մի մասը ծանոթագրված է, երբեմն քաղական հանդամանալից։ Մատենագիտության մեջ ընդգրկված են թե՛ հայ հին հեղինակների ու առհասարակ հայ հին բնագրերի հրատարակությունները, և թե՛ ժամանակի հայագիտական ուսումնասիրությունները։

Այս մատենագիտության շարունակությունը տկսեց կազմել Ներսես Ակինյանը։ ԵՀանդես ամսօրյա-ի 1913 թ. մարտի համարում (սյուճակ 185—192) հրապարակվեց 1912 թ. (մասամբ նաև նախորդ 1910, 1911 թթ.) լույս տեսած հայագիտական գրականությունն ամփոփող մատենագիտության մոտ կեսը միայն։

ԵՀանդես ամսօրյան ալիլի ուշ շարունակեց տպագրել հայագիտական գրականության մատենագիտական ցանկեր

¹ ԵՀանդես ամսօրյա, 1912, էջ 83։

(օրինակ, 1920 թվականի 4—6-րդ համարներում տպագրվեց 1915—1919 թթ. լույս տեսած հայագիտական գրականության մատենագիտությունը)։

Դարկոս սկզբներին հայոց պարբերական մամուլում տպագրված հայագիտական մատենագիտություններին կարելի է հիշել նաև Ս. Պարոնյանի «Հայկական մատենախոսություն» մեծ աշխատության՝ 1900 թ. տպագրված հատվածները Փարիզի «Բանասերում» (էջ 83—96, 174—180), Իսկ աշխատությունն ամբողջությամբ, որ ընդգրկում էր օտար լեզուներով հայագիտական գրականությունը հին ժամանակներից սկսած, մինաց անտիպ։

Եվրոպական հայագիտությանն էր նվիրված ֆրանսիացի հայագետ Գուստավ Շրումպֆի «Ուսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս աշխատությունը, որ 1895-ին վենետիկում լույս տեսավ Գ. Ջարրհանալյանի թարգմանությամբ։ Ավելի ճիշտ, Ջարրհանալյանը այստեղ մասամբ նաև հեղինակակից էր. Շրումպֆը հրապարակել էր մի շարք հոդվածներ «Հայկական ուսմունքը եվրոպայում» վերնագրով։ Այս հոդվածներն էին, որ Ջարրհանալյանի թարգմանությամբ, դասավորությամբ և լրացումներով հրապարակվեցին իրեն գիրք։

Աշխատությունը մասամբ է միայն մատենագիտական։ Այստեղ խոսվում է եվրոպական հայագիտության մասին սկսած 14-րդ դարից մինչև 19-ը։ Առավել նշանավոր հայագետներին նվիրված են առանձին գլուխներ, որոնցում տրված են հայագետների կենսագրությունները, խոսվում է նրանց աշխատությունների մասին։ Ընթերցողը կարող է այս աշխատությունից իմանալ եվրոպացի հայագետներին շատերի կարևոր երկերի և նրանց հրատարակությունների մասին։

1 Ս. Պարոնյան Bibliographia Armenica. Մատենախոսություն հայկական ըստ օտար լեզուաց, այն է ծանկ ամենայն մատենից և լեզուածաց, որք ճառեն յօտար լեզուս զհայոց և զհայկականաց ի սկզբանէ անտի մինչև յելս 1800 ամին։

1910 թվականին Թիֆլիսում լույս տեսավ Կ. Կոստանյանի «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում: Համառոտ տեսություն և գրադուցական աշխատությունը»:

«Համառոտ տեսություն» մեջ խոսվում է եվրոպական հայագիտության ժագման ու զարգացման մասին, ապա տրվում է եվրոպացի հայագետների ժամանակագրական ցանկ՝ 1211 թվականից մինչև 1800 թ.: Այնուհետև գալիս է եվրոպական լեզուներով հայագիտական աշխատությունների մատենագիտությունը, որը այբբենական կառուցվածք ունի (ըստ հեղինակների ազգանունների):

Մատենագիտությունն ունի հավելված, որ նույնպես այբբենական կառուցվածք ունի (այստեղ մտել են հեղինակի կողմից ավելի ուշ հայտնաբերված նյութերը):

Մատենագիտության մեջ ընդգրկված են գրքեր և հոդվածներ: Նկարագրությունները կատարված են երկերի հրատարակման լեզվով:

Մատենագիտության վերջում կան օժանդակ ցանկեր, որոնցից առաջինը Հեղինակների այբբենական ցանկն է, որը տակալն ավելորդ է թվում, քանի որ ինքը՝ մատենագիտությունը այբբենական է:

Մյուս ցանկը կոչվում է «ԺԹ դարու հեղինակների ցանկը նոցա երկերի նյութի համեմատ»։ Այստեղ կան տասը՝ բաժանմունքներ՝ լեզվաբանություն, մատենագրություն, պատմություն, հնախոսություն, իրավագիտություն, դրամագիտություն և այլն: Ամեն մի բաժանմունքի մեջ՝ աղբյուրական նկարգով հավաքված են այն հեղինակների ազգանունները, որոնք գրել են համապատասխան հարցի վերաբերյալ:

Կոստանյանի այս մատենագիտությունը հիմնականում ընդգրկում է մինչև նրա հրատարակման ժամանակները եվրոպացի արևելագետների կողմից ստեղծված հայագիտական առավել կարևոր աշխատությունները:

Եվրոպական հայագիտության մասին գրվեցին նաև այլ գործեր, այդ հարցերի շուրջ առավել կամ պակաս լսելով խոսվում էր այլ բնույթի աշխատություններում:

Ընդհանրապես, եվրոպական հայագիտությունը ժամանակին շատ էին հրապուրվում հայ մտավորականները, եվրոպացի հայագետի հայտնած ամեն մի կարծիքի մեծ նշանակություն էր տրվում, այդ է պատճառը, որ եվրոպական հայագիտությանը նվիրված մատենագիտական աշխատությունները շարունակեցին կազմվել նաև հետագայում, մինչև իներ օրերը:

Իրոք, եվրոպական հայագիտությունը քաղական ժամալումն է, ունի մեծարժեք շատ ու շատ էջեր: Հնուց ի վեր եվրոպացի շատ բանասերներ են հետաքրքրվել հայ ժողովրդով, նրա մշակույթով, լեզվով, Հայաստանով: Գեռես հին ժամանակներից՝ Հերոդոտի ու Քսենոֆոնի դարերից է գալիս այդ հետաքրքրությունը, սակայն 17-րդ դարի վերջերից այն ավելի մեծ ժամալ և ավելի գիտական տեսք ստացավ: Այդ ժամանակից սկսած, մասնավորապես 19-րդ դարում հայագիտությունը դարձավ եվրոպացիների թիվը շատ մեծացավ՝ Մատյուրեն դը Լաբրոզ, Գուլիելմ Վիլֆրուա, Էդուարդ Դրուլոն, Ավգուստ Կարիեր, Վիկտոր Լանգլուա, Հոսիոս Պետերման, Ֆրեդերիկ Մյուլլեր, Հենրիկ Հյուբշման, Հերման Գուտշմիդ, Պ. Ֆետտեր, Ֆրեդերիկ Կոնդոր և ջատ ու ջատ ուրիշներ հայագիտական հարյուրավոր ուսումնասիրություններ (հոգվածներ ու գրքեր) գրեցին: Դա դրական երևույթ էր այնքանով, որ օտարները դարձվում էին հայոց կյանքով ու մշակույթով, ճանաչում էին հայ ժողովրդին: Բացի այդ, պարզվում էին հայոց պատմության ու հին մշակույթի մի շարք մուկ անկյուններ, կատարվում էին ճշտումներ և լրացումներ այդ հարցերի մասին գրվող հայերեն աշխատություններում ու դասագրքերում: Եվրոպայի հայագետները հիացմունքի շատ խոսքեր ասացին հայոց հին գրականության ու արվեստի, հայ ժողովրդի հասցեին: Այս հանգամանքը անցյալում ոգևորում էր նաև հայերին, ամրացնում նրանց ազգային ինքնավստահությունը:

Սակայն եվրոպական հայագիտությունը նաև իր սովորապես կողմերն ունեցավ, որոնց մասին, ցավոք, ուղղակի գրելն ընդունված չէ: Նախ հագիվ թե դրական հետևանք ունեցած

լինեն հայերի հասցեին իբրև գովեստ ասված աշնայիսի մըտ-
քերը, ըստ որոնց հայերը հայրոպական քաղաքակրթության
ջահակիրներն են արևելյան խաւարամիտ ազգերի մեջ, որ
հայերը Արևելքի անգլոսաքսերն են (Դուայթ) կամ հուան-
դացիները (Դյուլոբյե) և նման բաներ: Այլ խոսքով, հայերը
իբրև «Արևելքի հայրոպացիներ» հակադրվում էին փրենց դա-
րավոր հարևաններին: Եվ քանի որ արդ կարգի հայտարա-
րություններ գրողները գիտական հեղինակություններ էին,
ուստի և հայ երիտասարդ մտավորականները ադ ամենը
իբրև քացարձակ ճշմարտություն էին ընդունում: «Այա ամենն,
անշուշտ, այն է ցույց տալիս, որ հայրոպացի հանճարներ և
մտածող գիտնական հայի և հայրականի մեջ որոնել և գտել
են միշտ մի հաճելի գիծ, մի նմանություն, որը կրկնվում է
հայրոպացի այլևայլ ազնիվ ցեղերի մեջ»¹ — գրում էր Կ. Կոս-
տանյանը: Ոչ քիչ հայ մտավորականներ շոբված հայրոպացի-
ների ասածներով՝ իրենք նույն և սովիւի հեռու գնացող մտքեր
էին զարգացնում:

Այժմ երբ ետադարձ հայացք ենք ձգում ժամանակին իշ-
խող արդ կարգի ոգևորության վրա, շենք կարող շատածել,
թե ի վերջո ո՞րն էր հայերին իրենց հարևաններին հակա-
դրելու փաստից եղած օգուտը հենց հայության համար, ի՞նչ
շահեցին հայերը, երբ զանազան, իբրև գովասանք արված
հայտարարություններով նրանց մեջ արհամարհանք առա-
ջացրին հարևանների նկատմամբ, մանավանդ, եթե հի-
շենք, որ հայրոպացի գիտնականներից ուրիշներն էլ նման-
օրինակ ոչ պակաս գովեստներ էին շուրջում հայերի հարե-
վան ժողովուրդների հասցեին և նվաստացուցիչ գծերով ներ-
կայացնում հայերին:

Այդպիսի հակադրումներից որեւէ գործնական օգուտ հա-
յությունը չի ստացել, իսկ վնաս՝ անհաշիվ:

Եվրոպական հայագիտության ավելի նկատելի ստիերոս

¹ Կ. Կոստանյանց Հայագիտութեան Արեւոյան հայրոպայում: Թիֆ-
լիս, 1910, էջ հա:

կողմերն էին այն մի շարք, վերջիվերջո, անփաստ, մտա-
ցածին եզրակացությունները, որոնք բխում էին հայ պատ-
մական ավանդույթը անպայման ֆենադատելու, վերանայե-
լու, մխտելու և, այսպես ասած, նոր խոսք ասելու ձգտումից:
Շատ դեպքերում իրենց փվրոպացի ուսուցիչների ուղիով գնա-
ցին նաև նրանց հայ աշակերտները, որոնք Եվրոպայում
կրթություն ստացած՝ անդրադարձան հայոց պատմության ու
մշակութի հարցերին: Ըստ որում, Եվրոպացի հայագետների
որոշ հայ աշակերտներ հայոց պատմության ու գրականու-
թյան ավանդները մերժելու գործում իրենց ուսուցիչներից էլ
հեռուն գնացին: Այն, ինչ որ դարերով ճշմարտություն էր
համարվում հայության մեջ, կասկածի ենթարկվեց կամ
մերժվեց: Խորենացին հայտարարվեց ստախոս (Վ. Գուտշմի-
դի արտահայտությունն է), նրա հիշատակած հեղինակներից
շատերը, աչք թվում Մար Աբասը հայտարարվեցին կեղծ,
ինքը Խորենացին համարվեց ոչ թե 5-րդ, այլ 9-րդ դարի հե-
ղինակ, տեղաշարժվեցին կամ կեղծ հայտարարվեցին ուրիշ
հայ հեղինակներ, 4-րդ դարի հայ հեղինակները համարվե-
ցին կամ 5-րդ դարի կամ կեղծ, սուտ հուսկվեցին հայ հին
հեղինակների հաղորդած բազմաթիվ պատմական տեղեկու-
թյուններ: Վերջապես ինքը հայ ժողովուրդը հայտարարվեց
ոչ տեղացի, Եվրոպայից եկած:

Ի՞նչ օգուտ կարող էր այս ամենից ունենալ հայ ժողո-
վուրդը կամ հայ բանասիրությունը, մանավանդ, որ, ինչպես
պարզվեց վերջին երեք, շորս տասնամյակների մի շարք
հայտնագործություններից, հախուռն կերպով արված այդ
նորարարությունների մեծ մասը հիմնովին սխալ է եղել, և
ախօր հայ հեղինակները կամաց-կամաց նորից իրենց ավան-
դականորեն ընդունված, ճիշտ ժամանակի մեջ են դրվում,
նրանց հաղորդած շատ տեղեկություններ հնագիտական
հայտնագործություններով հաստատվում են, ինչպես և
փաստվում է հայ հին հեղինակների ճշմարտախոսությունը,
խսկ ասիական հին ու հնագույն արձանագրությունների մեջ
հնդեվրոպական լեզուների շատ տարրերի. հայտնաբերումն

ասում է, որ հնգեվրոպական մի շարք ուրիշ ցեղերի նման հայկական ցեղերն էլ Փոքր Ասիայի հնագույն բնակիչներից են հղել:

Այժմ արդեն եվրոպական հայագիտության անգնադատ ոգեւորվելու ժամանակն անցել է, իսկ այդ հանգամանքը պետք է արտացոլվի նաև մատենագիտության մեջ:

Ահր համոզմամբ, այսօր հայագիտական երկերի (հայերեն, թե այլ լեզուներով) մատենագիտությունը պետք է կազմվի քննադատական մոտեցմամբ, ժանտիպագրություններով, որոնցում պետք է նշվեն առանձին երկերի մեջ տեղ գտած ամենալուրջ թերություններն ու միասլենբու:



Ուշադրության առարկա ժամանակաշրջանում հայագիտական բնույթի մի շարք մատենագիտական ցանկեր էլ տեղ են գտել տարբեր բնույթի աշխատությունների մեջ: Դրանք այս կամ այն հիմն ժնագիրը հրապարակելու կամ աշխատությունը գրելու կապակցությամբ օգտագործված գրականության ցանկեր են (նեբգրքային մատենագիտություն): Դրանց մեջ կան և՛ հայ հիմն հեղինակների երկերը նեբկապագնող, և՛ նոր շրջանի հայագիտական ուսումնասիրությունների մատենագիտություններ: Օրինակ, հայ հիմն պատմիչների երկերի հրատարակությունների մեջ հաճախ էին լինում մեծ կամ փոքր մատենագիտական ցանկեր: Այսպես, Վարդան Արևելացու՝ Մ. էմինի կողմից տոմսերեն հրատարակված «Պատմութիւն տիեզերական»-ի¹ մեջ (էջ XVI) գրված է Վարդանի օգտագործած աղբյուրների ցանկը, Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ի Ս. Մալխասյանցի հրատարակության մեջ² (էջ ԿԶ—ԿԷ) կա հայ մատենագիրների անկերի

¹ Всеобщая история Вардана Великого. Москва, 1861.

² Ստեփանոս Տարեացույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885:

և եվրոպական ուսումնասիրությունների մի ցանկ։ Նույն բնույթի մատենագիտական ցանկեր կան նաև Ղևոնդի Պատմության¹, Խնչպես և Հովհաննես Դարդելի ժամանակագրություն Հայոց»-ի² և Եղյանի հրատարակությունների մեջ (համապատասխանաբար՝ էջ 36—37 և էջ 37—38), Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց»-ի³ (էջ 36), Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Մալխասյանցի հրատարակության և հաշատուր Արեղա Ջուղայեցու «Պատմություն Պարսից»-ի⁴ (էջ 37—38)՝ Բ. Աղա-վելյանցի հրատարակության մեջ և այլն։

Հնդարձակ է մատենագիտական տեղեկատվությունը Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ի համեմատական բնագրի հրատարակության (Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի աշխատասիրությամբ) մեջ⁵, ուր Խորենացու հրկի ձեռագրերի գնահատումից ու փմբավորումից հետո տրված է (էջ 37—38) մատենագիտություն ըստ բաժինների, որոնցից առաջինում Խորենացու հրկի հրատարակություններն են՝ նախ հայերեն, ապա միացյալ՝ հայերեն ու թարգմանական կամ միայն թարգմանական, Երկրորդ բաժնում Խորենացու մասին եղած ուսումնասիրությունների ցանկն է (հայերեն և այլ լեզուներով) և վերջում տրված է հայոց պարզերակաճանփրում Խորենացու մասին տպագրված հոդվածների մի ընդարձակ ցանկ (ըստ Ա. Ղազիկյանի մատենագիտության)։

Հայագիտական ներգրքային մատենագիտական ցանկերն ընդհանրապես թեմատիկ առումով ավելի նեղ են լինում։ Օրինակ, Ն. Տաղավարյանի «Մագուսն հայ տառից» գրքում (Վիեննա, 1895) տրված է տվյալ հարցին (հայ տառերի ծագ-

¹ Պատմություն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց, Պետերբուրգ, 1887։

² Յովհաննու Դարդելի ժամանակագրություն Հայոց, Պետերբուրգ, 1891։

³ Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904։

⁴ Խալատուր Արեղա Ջուղայեցու Պատմություն Պարսից, Վազպատ, 1905։

⁵ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1913։

մանը) վերաբերող գրականություն (էջ 38—39), Վ. Հացունիի «Ճաշեր և խնճուղքներ հին Հայաստանի մեջ» (Վնենետիկ, 1912) աշխատությանը կից է համապատասխան հարցերի լուսարանման համար իբրև աղբյուր կամ ուսումնասիրության մեջ օգտագործված գրականության ցանկը (էջ 487—494), Կ. Կոստանյանի «Վիմական տարեգիրք» ժողովածոսի սկզբում գտնում ենք այն գրականության ցանկը (էջ XXVIII—XXI), որը Կոստանյանն օգտագործել է իր ժողովածուի համար հայերեն վիմական արձանագրություններ քաղելու նպատակով, Ծ. Լախյանի «Գողթն» գրքում գտնում ենք Հայաստանի աչգ զավառի վերաբերյալ տեղեկությունների հաղորդող աղբյուրների ցանկը (էջ 4—6) և այլն:

Ներգրքային հայագիտական բնույթի մատենագիտական ցանկեր կարելի է գտնել նաև ուրիշ մի շարք աշխատություններում, բնագրերի հրապարակումներում և այլն:

Հայագիտական մատենագիտության մասին խոսելիս չի կարելի չհիշել այլազգի հեղինակների կազմածները և առհասարակ այն մեծ ու փոքր մատենագիտությունները, որոնք հրապարակվել են ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և հվրոպական մյուս լեզուներով հրատարակվող պարբերականներում: Ռուսերեն պարբերականներից կարելի է հիշել «Кавказ», «Записки Кавказского общества отдела императорского географического общества», «Кавказский книжный вестник» և այլն), հվրոպական մյուս լեզուներով հրատարակվող պարբերականներից՝ «Orientalische bibliographie», «Byzantinische zeitschrift», «Revue l'Histoire ecclesiastique» և այլ գիտական հանդեսներ:

Պարբերականներից բացի հայագիտական բնույթի մատենագիտական ցանկեր հրապարակվել են նաև տարբեր լեզուներով տպագրված ժողովածոների ու գրքերի մեջ¹:

Հստագիտական մատենագիտության այս համառոտ ակ-

¹ Ռուսերեն հրատարակված կովկասագիտական, ներառյալ նաև հայագիտական մատենագիտությունների վերաբերյալ քավականին տեղեկություններ են հավաքված Ի. Պոպների շատ խնամքով կազմած երկրորդ

նարկն ավարտեցով՝ ավելորդ շենք համարում նշել, որ հայազիտությունը գիտության մի ճյուղ, քննազավառ լինելով ինքն էլ առանձին ենթաճյուղեր ունի (հայոց լեզվի, հայ պատմագրության, հայ արվեստի, Հայաստանի աշխարհագրության և այլ հարցերի ուսումնասիրման)։ Ուստի հայազիտական մատենագիտությունն էլ կարող է իր համապատասխան ենթաճյուղերն ունենալ։ Սակայն 19-րդ դարում և 20-ի սկզբում հաճախ հայազիտության այդ ենթաճյուղերը դեռ հստակորեն սահմանազատված չէին, հայազիտությամբ զբաղվողներն էլ չէին մասնավորվում մի առանձին ենթաճյուղի մեջ, ուստի և առանձին ենթաճյուղային հայազիտական մատենագիտություններ փաստորեն չկային (չհաշված առանձին ոչ մեծ ներգրքային ցանկերը)։ Ենթաճյուղային հայազիտական մի քանի մատենագիտություններ հանդես եկան վերջին 20—30 տարիներում։

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ասվեց, որ հայազիտական մատենագիտությունը ճյուղային ալն մատենագիտությունն էր, որ նկատելի զարգացում ունեցավ հայոց մեջ՝ կապված հայազիտության զարգացման հետ։ Ժյուղային մյուս մատենագիտություններից գուցե գեղարվեստական գրականության մատենագիտությունն էր, որ գոյություն ուրա, թույլ նշաններ էր ցույց տալիս։ Խոսքը չի վերաբերում շատ լայն առումով մատենագիտությանը, որի մեջ դնում են նաև գրախոսությունն ու գրաքննադատությունը (արանք քավականին զարգացում ապրեցին հայոց պարբերական մամուլի էջերում), խոսքը բուն մատենագիտության մասին է, տվյալ դեպքում գեղարվեստական երկերի (հայե-

աստեմանի մի մատենագիտության մեջ. И. Пульнер Материалы для библиографии библиографии Кавказа.— «Советская этнография» (Москва—Ленинград), 1936, № 4—5, стр. 230—270.

րեն ինքնուրույն կամ թարգմանական) մատենագիտական տարբեր բնույթի ցանկերի կամ տեսությունների մասին, որոնց հասուկենտ նմուշներ եղել են:

Օրինակ, գեղարվեստական գրականության մատենագիտութուն պետք է համարել (վերապահությամբ) նաև հայերեն թատերգությունների (պիեսների) այն ցուցակները, որոնք հրատարակվում էին դրասկզբին ցարական գրաքննության կողմից: Խոսքը վերաբերում է բեմադրության համար թույլատրված թատերական երկերին, որոնց ցուցակները հրապարակվում էին առանձին գրքույկներով, ինչպես, օրինակ, Վիակատար ցանկ սրինսների, որոնք հայերեն լեզվով ներկայացնելու թույլատրված են Կովկասյան շրջանի բեմերի վրա (Թիֆլիս, 1903, 20 էջ) կամ Վիակատար ցանկ 1902 թվի հունվարի 1-ից մինչև 1907 թվի սեպտեմբերի 1-ը, որոնք հայերեն լեզվով ներկայացնելու թույլատրված են Կովկասյան շրջանի բեմերի վրա (Ալեքսանդրապոլ, 1907, 14 էջ) և այլն: Երբեմն ուսանողներն լեզվով էին հրատարակվում բեմադրության թույլատրված հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն թատերագրությունների ցուցակները: Այս ցուցակները որոշակի տարիների ընթացքում պահում էին իրենց ուժը և Կովկասի թատրոնները փրենց բեմադրությունների համար կարող էին թատերախաղերի ընտրություն կատարել համապատասխան տարիների ցուցակից:

Գեղարվեստական գրականութունը, անշուշտ, ներկայացված էր հայ ընդհանուր մատենագիտության մեջ, ինչպես, օրինակ, Գ. Զարբհանալյանի և Ա. Ղազիկյանի մատենագիտություններում, սակայն սրանց ալթրեհական կառուցվածքի հետևանքով գեղարվեստական երկերը ցրված են ամբողջ մատենագիտությամբ մեկ:

Գեղարվեստական գրականության մի քանի մատենագիտական ցանկեր էլ վերաբերում են անհատական մատենագիտությանը, որի մասին կխոսվի ստորև:

Այստեղ ավելորդ չենք համարում հիշել մի մատենագիտական ոչ մեծ հրատարակության մասին, որը թեև ճյուղա-

յին շէ, բայց բաժանված է ճյուղերի և այսպես, թե այնպես հետաքրքրական երևույթ էր դարավերջի հայ մատենագիտութեան բնագալառում: Խոսքը անգլիական բնագետ Զոն Լեքտոկի մատենագիտական մի տեսութեան մասին է, որ Ա. Նդիգարյանի թարգմանութեամբ 1895 թ. լույս տեսավ Թիֆլիսում «Ժողովրդական գրագարան» մատենաշարով և հետեւյալ վերնագրով. «Հարյուր ամենալավ գրքեր. Հին և նոր ժամանակի, գլխավորապես բանաստեղծական ստեղծագործութեան կուտուրական նյութ»:

Անգլիական մամուլում ժամանակին հարց էր բարձրացվել 100 ամենալավ գրքերի մասին, թե որոնք են այդ գրքերը, և տարբեր բնագալառների անվանի մարդիկ հրապարակել էին իրենց կարծիքները: Զ. Լեքտոկը այդ առթիւ գրել էր մատենագիտական մի տեսութիւն — հոգված և տվել գիտութեան, մշակութի տարբեր բնագալառների վերաբերող իր կարծիքով 100 ամենալավ գրքերի ցուցակը (ըստ թեմատիկ հատվածների): Լեքտոկի այդ հոգվածը հետաքրքրութիւն առաջացրեց Նվրոպայում և թարգմանվեց մի քանի լեզուներով:

Հայ իրականութեան համար անգլիացի Լեքտոկի նշած 100 ամենալավ գրքերի իրոք ամենալավը լինելու հարցը շատ վիճելի կողմեր ունի: Բայց ընդհանրապես գրքուկը ուշագրաւ էր նրանով, որ հասարակայնութեան մեջ ընդհանուր հետաքրքրութիւն էր առաջացնում գրքի, ընթերցանութեան նկատմամբ: Անհաշու էր տուտեմից կատարված թարգմանութիւնը (շատ տեղերում կան լեզվական անճշտութիւններ, հեղինակների և երկրորդ անունների հայերէն ոչ ճիշտ տառադարձումներ):

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անհատական մատենագիտութիւնը սովորաբար լինում է ճյուղային, քանի որ որեւէ անհատ սովորաբար այս կամ այն բնագալառի (ճյուղի) մասնագետ է լինում: Այսպես, օրինակ, Րաֆֆու երկերի մատենագիտութիւնը հասկանալի է,

որ անհատական լինելով միաժամանակ նաև ճշուղային է (գեղարվեստական գրակ. մատ.)։ Բայց միշտ չէ, որ այդպես է, օրինակ, Ղ. Ալիշանի երկերի մատենագիտությունը փարոզ է վերաքերիչ հայագիտությանը և գեղարվեստական գրականությանը։

Քննվող ժամանակաշրջանում անհատական մատենագիտություններ առանձին գրքերով գրեթե չեն հրատարակվել, եթե չհաշվենք թերթիկների վրա տպագրված մի երկու ցանկ։ Դրանցից է, օրինակ, «Ալիշանյան մատենադարանը» տպագրված Վենետիկում (8 էջ), ուր տրված է Ղ. Ալիշանի երկերի մատենագիտությունը (ի դեպ, Ալիշանի երկերի մի մատենագիտություն էլ Վ. Ջարդարյանը զետեղել է իր «Հիշատակարան»-ի 1910 թ. առաջին հատորում, էջ 59—63)։ Սակայն առանձին հեղինակների երկերի մատենագիտական ցանկեր շատ են պարքերականներում, օրացույցներում և ալբյումներում, որոնցից մեծ մասը նշանավոր գրողի կամ քանդակչի հոգևորականի կամ մահվան արձիվ գրված հոգվածներում սովորաբար տրվում էր նաև նրա երկերի տեսությունը, իսկ հաճախ՝ կենսագրականին կցվում է երկերի ցանկը։ Այլ առիթներով դրանցից մի երկուսը մենք արդեն հիշատակել ենք։

Կան դեպքեր էլ, երբ այս կամ այն անհատի երկերի մատենագիտությունը տրվում է նրա որևէ գրքի մեջ։ Օրինակ, Գ. Գալսեմյանի աշխատությունների մատենագիտությունը, ինչպես տեսանք, տրված է հեղինակի «Վենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու...» գրքում (Վիեննա, 1915, էջ 379—384)՝ Հրառաբանություն և հեղինակին վերնագրի տակ։ Այստեղ ժամանակագրական կարգով (1887—1914 թթ.) ընթացիկ են հեղինակի ինքնուրույն և թարգմանական երկերը (հոգվածներ և գրքեր), չկան միայն մի քանի գրախոսություններ։ Կամ՝ Բաֆֆու «Տաճկահայք» գրքի (Վիեննա, 1913) վերջում տրված է «Բաֆֆի» առանձին գրքերով լույս տեսած երկերի լիակատար ցուցակը և այլն։

Կազմվել են մի քանի գրողների (գեղարվեստական) երկերի մատենագիտություններ: Դրանցից են, օրինակ, «Պոռչյանի առանձին գրքերով հրատարակված ինքնուրույն գրվածքները և մնացած մի քանի կարևորները» (Ավ. Տեր-Հաբուսթյանյանի «Պոռչյան և նրա գրական գործունեության արժեքը» գրքում, Նոր Նախիջևան, 1908, էջ 2) կամ Սիամանթոյի մատենագիտությունը «Մատենագիտություն Սիամանթոյի մասին» վերնագրով տրված է «Գրական ասուլիսներ» 2 գրքում (էջ 39—40) և այլն:

Այս կամ այն անձին նվիրված գրքի մեջ նույնպես հաճախ տրվում էր կենսագրվողի երկերի մատենագիտությունը: օրինակ, Լեոյի «Ս. Մեսրոպ» գրքի վերջում (Թիֆլիս, 1904, էջ 335—336) տրված է Մեսրոպ Մաշտոցին վերաբերող գրականության մի ցանկ, նույն հեղինակի «Ստեփանոս Նազարյանց» աշխատության երկրորդ հատորի վերջում (Թիֆլիս, 1902, էջ 389—406) կա Նազարյանցի մատենագիտությունը հետևյալ բաժիններով՝ Նազարյանցի տպված աշխատությունները.— Նազարյանցի նամակները.— Գրություններ Նազարյանցի և նրա գործերի մասին: Ինչպես վերջին վերնագիրն է ցույց տալիս մատենագիտությունը նշում է նաև գրականություն Նազարյանցի մասին, որ քիչ էր հանդիպում այն ժամանակ կազմված անհատական մատենագիտությունների մեջ:

Անդուշտ, անհատական մատենագիտություններ են նաև հայ հին հեղինակների (Խորենացի, Ասողիկ, Վարդան և այլն) երկերի հրատարակությունների մեջ եղած մատենագիտական այն ցանկերը, որոնց մասին հիշատակեցինք հայագիտական մատենագիտության կապակցությամբ: Դրանց մի առանձնահատկություն էլ այն է, որ սովորաբար նշվում է նաև գրականություն տվյալ հեղինակի մասին: Դրա լավագույն օրինակը Խորենացու վերոհիշյալ մատենագիտությունն է, Մ. Արեղյանի և Ս. Հաբուսթյանյանի հրատարակած համեմատական բնագրի սկզբում:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Գրադարանային գրացուցակներն էլ հայ մատենադիտու-
թյան համար ինչ-որ շափով ավանդական են, քանի որ հնում
էլ այդպիսիք կազմվել են հայոց մեջ և, ինչպես տեսանք,
միջնադարից պահպանվել են այդպիսի գրացուցակներ, որոն-
ցից Ամրդու վանքի գրատան ցուցակը շատ արժեքավոր է:
Ավելի նոր շրջանից արդեն դիտենք Ա. Խուդաբաշյանի գրա-
դարանի գրացուցակի մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին մինչև 1915 թվականը հայ-
ֆական գրադարանների տպագիր գրացուցակների թիվը բա-
վական զգալի է դառնում: Պատճառը մի կողմից այն է, որ
շատանում են գրադարանները, մեծանում նրանց գրական
ունեցվածքը, մյուս կողմից էլ գրադարանային գիրքը ըն-
թերցողին հասցնելու, գրքի վերաբերյալ տեղեկատվությունը
ուժեղացնելու կարևորությունը ավելի ու ավելի է անհրա-
ժեշտ դառնում հայոց մեջ, անշուշտ, եվրոպական և ամերիկե-
յան գրադարանային գործի զարգացման ազդեցությամբ:

Հին հայկական գրադարաններից փաստորեն միայն մեկը
կարողացավ գոյատևել, պահպանվել մինչև մեր ժամանակ-
ները: Դա, ինչպես գիտենք, այժմ Մաշտոցի անունը կրող
Մատենադարանն է: Հայաստանի հողում միջին դարերի ըն-
թացքում ծաղկման հասած մյուս գրադարաններից ոչ մեկը
չկարողացավ հարմարվել նոր ժամանակներին, վերակազմա-

վորովել իբրև նոր ժամանակների գրադարան և պահպանվել մինչև 20-րդ դարը: Ճիշտ է, Հայաստանի մի շարք վանքերում, եկեղեցիներում մինչև 1915 թվականը դեռ կային ձեռագրերի և հնատիպերի հավաքածուներ, բայց հագելով թե՛ ճիշտ լինելը դրանք ամեն դեպքում համարել գրադարաններ ժամանակի լրմոնումով: Եղեռնի ժամանակ Արևմտահայաստանի ձեռագիր ու տպագիր գրքերի ամեն տեսակ հավաքածուները ցրվեցին տարբեր վայրեր, մի մասն էլ ոչնչացավ: Այժմ էլ այս կամ այն եկեղեցում, խհարկե, կարելի է գտնել հնատիպ գրքերի փոքրիկ հավաքածուներ, բայց ո՞վ դրանց գրադարան անումը կտա:

Եվ այդպես, միջնադարյան հայ հարուստ գրադարանները վերացան՝ կենսունակ լզտնվելով նոր ժամանակների պայմաններում, մինչդեռ եվրոպական երկրներում միջնադարյան շատ գրադարաններ 19-րդ դարի մեջ հարստացան ժամանակակից գրականությամբ, սկսեցին ընթերցողների ավելի լայն շրջանակների սպասարկել գրքով և այդպես պահպանվեցին խորև հարուստ գրադարաններ՝ համեմատվ մինչև մեր օրերը: Եվրոպական երկրների և Հայաստանի այս կարգի տարբերությունը կարելի է տեսնել նաև այլ բնագավառներում: Թեկուզ, օրինակ, այն, որ ասենք Զեխիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում կամ Լեհաստանում այսօր կարելի է գտնել ուսումնական հաստատություններ, որոնք հիմնադրվել են միջնադարում, այդ երկրներում այսօր կան նույնիսկ բնակելի շենքեր, խոր միջնադարից եկող և այլն: Հայաստանի, հայ ժողովրդի պայմանները նման գոյատևումների հնարավորություն չեն տվել: Քիչ դեր չի կատարել այն հանգամանքը, որ Հայաստանի հողում ամենազաժան պայմաններում զարգացող մշակութային կյանքը նոր ժամանակներում չվեց Հայաստանից դեպի օտար ափեր և սկսեց մայր երկրից դուրս զարգանալ:

19-րդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսում Հայաստանում և ավելի շատ երկրից դուրս հայկական բնակավայրերում հիմնվում են մի շարք նոր հայկական գրադարան-

ներ, նոր գրականությամբ և աշխարհիկ ընթերցողների լայն խավերին սպասարկելու նոր սկզբունքով աշխատող:

1800—1920 թվականների հայկական գրադարանների պատմությունը ունի հետաքրքրական շատ կողմեր, որոնց վերաբերյալ թավական նյութ կա պարբերական մամուլում և դիվաններում: Հետաքրքրական են նաև հայ գրադարանավարների կյանքի ու աշխատանքի դրվագները: Գրադարանային գործով զբաղվել են ոչ միայն նշանավոր հայ գրագետներ, ինչպես, ասենք, Հովհ. Շահխաթունյանցը, Ս. Ամատունին, Գ. Հովսեփյանը և կամ Ա. Շիրվանզադեն ու Ա. Բակունցը, այլև տառնյակ ուրիշներ, որոնք մոռացություն մեջ են և որոնց գրադարանային անձնվեր աշխատանքը դեռևս բոլորովին չի լուսաբանվել: Օրինակ, Թիֆլիսի և Բաքվի բանվորական մի քանի գրադարաններում տարիներ շարունակ աշխատել է Միրուհի Ջալալյանը, որի մասին բարձր կարծիք են հայտնել Իսահակյանը, Տերյանը, Ջալիֆյանը: Ամբողջ կյանքում Ջալալյանը եղել է գրադարանավարուհի, նաև գրադարանատպետ (կյանքի վերջում աշխատել է Լենինականի քաղաքային գրադարանում): Անշուշտ, վատ չէր լինի լուսաբանել ու գնահատել նրա ու նրա պես ուրիշ գրադարանային ազնիվ մշակների տարիների աշխատանքը:

Կարճ ասած, հայ գրադարանային գործի՝ հայոց մշակույթի այդ ուշագրավ հատվածի պատմությունը սպասում է իր ուսումնասիրողին: Մատենագիտության պատմությունը մի շարք դեպքերում առնչվում է գրադարանային գործի պատմությանը, սակայն ունի իր ուրույն և թավական առատ նյութը: Այդ հանգամանքը, և մանավանդ տեղի սղությունը հնարավորություն չեն տալիս ընդարձակվելու հայ գրադարանային գործի պատմության ուղղությամբ, որքան էլ գայթակղեցնող լինի նյութը: Միայն մի քանի՝ խոսքով կանդորդառնանք ուշադրության առարկա ժամանակաշրջանում հայկական գրադարանների զարգացման հարցերի վրա՝ հատկապես այդ գրադարանների հրատարակած գրացուցակների առնչությամբ:

19-րդ դարում հայկական գրադարանների ժազուժը շատ հաճախ կապվում է նոր ուսումնական հաստատությունների հիմնադրման հետ: Այսպես, Ներսիսյան դպրոցի հիմնադրման ժամանակից (1824 թ.) սկիզբ է առնում նրա գրադարանի պատմությունը, նույնը կարելի է ասել նաև Լազարյան ճեմարանի գրադարանի մասին (ճեմարանը հիմնադրվել է 1814—1815 թթ.): Երևանում 1832 թվականին բացվում է գավառական ուսումնարան: Նույն թվականից էլ ուսումնարանում ստեղծվում է ոչ մեծ ուսումնական գրադարան:

1843 թվականից այս գրադարանի համալրման գործով սկսում է զբաղվել հաշատուր Արուստյանը, որ այդ թվականից մինչև 1848-ը աշխատել է իրրև գավառական ուսումնարանի տեսուչ:

Պահպանվել են ևս Արուստյանի հաշվետվություններն ու խնդրագրերը, որոնցից երևում է, որ Արուստյանը ջանքեր է գործադրել գրադարանի գրքային ունեցվածքը հարստացնելու համար: Արուստյանի ժամանակ է սկսել կազմվել գրադարանի առաջին գրացուցակը: 1868-ին, երբ ուսումնարանը դառնում է նախագիմնադիա, գրադարանն ունի 1244 գիրք: 1881-ին նախագիմնադիան վեր է ածվում գիմնադիայի, որի գրադարանը 1889-ին ունի 8307 միավոր գրականություն: Սա, իհարկե, գրքերի փոքր հավաքածու չէր այն ժամանակվա Երևանի համար, բայց այդ գրքերը հիմնականում ոուսերեն էին:

Երևանի գիմնադիայի գրադարանը, որ նյութական օգնություն էր ստանում հայոց քարեգործական ընկերությունից, որոշ ժամանակ հայտարարվել է հանգային, և նրանից վարձով օգտվելու իրավունք են ստացել նաև գիմնադիայի հետ առնչություն չունեցող մարդիկ: 1920 թվականին այս գրադարանն ունի 18.000 միավոր գրականություն:

Երևանի գիմնադիայի գրադարանի վրա փոքր-ինչ ավելի կանգ առանք այն պատճառով, որ նրա գրքային ունեցվածքը հանձնվեց 1921 թվականին հիմնադրված Հայաստանի հանրային (այժմ՝ Ալ. Մյասնիկյանի անվ. հանրապետական)

գրադարանին և դարձավ այդ գրադարանի հիմքը հանդիսացող գրքալին հավաքածուներից մեկը:

Գրադարանային գործի պատմության մեջ շատ դեպքեր կան, երբ ժամանակակից այս կամ այն գրադարանի հիմնադրման ժամանակը համարվում է այն տարին, երբ ստեղծվել է հետադաշում այդ գրադարանի բաղկացուցիչ մասերից մեկը դարձած ավելի վաղ շրջանի որևէ գրադարան: Այդպես ԽՍՀՄ Վ. Ի. Լենինի անվան գրադարանի պատմությունը սկսում են Ռուսլանցևյան թանգարանի գրադարանի սկզբնավորման տարուց (1862 թ.), գրադարան, որի գրքալին ունեցվածքը հետադաշում դարձավ Վ. Ի. Լենինի անվան գրադարանի ունեցվածքի մի մասը, նույն կերպ 1846 թվականից են սկսում Վրաստանի հանրապետական գրադարանի պատմությունը. հիշյալ թվականին փոխարքայի գրասենյակի գրադարանի գրքերի հիման վրա Թիֆլիսում սկսում է աշխատել քաղաքի հանրային գրադարանը, որը հետո միացվեց Կովկասյան թանգարանին, իսկ 1923 թ., երբ Վրաստանի Ժողովրդավարական հանրապետության Վրաստանի հանրային գրադարանը, սրա գրքային ունեցվածքին միացվեց նաև Կովկասյան թանգարանի գրադարանի գրականությունը:

Համանմանությամբ հիմք կա Հայաստանի ներկայիս ամենախոշոր գրադարանի պատմությունն էլ սկսել 1832 թվականից, երբ հիմնադրվեց զավառական ուսումնարանի գրադարանը:

Ավելի փոքր էր Երևանի իգական գիմնադիակի գրադարանը, որ նույնպես միացվեց հանրապետական գրադարանին:

Երևանում կային նաև այլ, այդ թվում հիմնականում հայկական գրադարաններ, ինչպես, թեմական դպրոցի (սեմինարիայի), ? տարրական դպրոցների գրադարանները, քաղաքի կենտրոնական գրադարան-թնթերցարանը և այլն: Ըղել են նաև ազատ օգտագործման մասնավոր գրադարաններ: Այս գրադարաններից մի քանիսը ունեցել են ձեռագիր, քարտադրվող գրացուցակներ, իսկ արական գիմնադիակի գրադարանն ունեցել է տպագիր գրացուցակ:

Արևելյան և Արևմտյան Հայաստանի շատ վայրերում եղել են հայոց բարեգործական ընկերություններ, տարբեր քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, ինչպես և լուսավորչական, կաթոլիկ ու բողոքական եկեղեցիների խորհուրդ պահվող ուսումնական և հանրային (ազատ) բավական թվով գրադարաններ։ Գյուղական գրադարանները առավորաբար ունենում էին 300—600 միավոր գրականություն։ Այս մեծությամբ գրադարաններ կային նաև գյուղաքաղաքներում և քաղաքներում։ Վերջիններսում եղել են նաև ավելի խոշոր գրադարաններ՝ 1000 և ավելի միավոր գրականությամբ։

Արևելյան Հայաստանի գավառային գրադարանների մասին որոշ պատկերացում կազմելու համար վերցնենք Ղափանի շրջանի գրադարանների վիճակը¹։ Այստեղ 19-րդ դարի երկրորդ կեսին Կավարտում և Ղանթարում պղնձահանքատեղերի միջոցներով հիմնվում են գրադարաններ, հիմնականում տեխնիկական (լեռնարդյունաբերությունը վերաբերող) գրականությամբ։ Այդպիսի մի գրադարան էլ 1860-ական թվականներին ունեցել է Ղափանի պղնձաձուլարանը (Ռոզովի գրադարանը)։ 1900-ական թվականներին մի շարք փոքր գրադարաններ են ստեղծվում Ղափանի գյուղերի ծխական դպրոցներում։ Շրջակայքում հայտնի էր Շրվենանց գյուղի դպրոցի գրադարանը, որից օգտվում էին ոչ միայն ուսուցիչներն ու աշակերտները, այլև շրջակայքի մտավորականությունը։ 1900-ական թվականների սկզբում այս գրադարանն ունեցել է ավելի քան 1000 միավոր գրականություն։ 1911 թվականին Ղափան ավանում Բաքվի մարդասիրական ընկերությունը հիմնում է նոր հանրային գրադարան։

Դիլիջանի գրադարանը հիմնվել է 1908 թվականին և ունեցել է տարբեր բնագավառների վերաբերող գրականություն, իր ամառադիր ընթերցարանը։

1 Մանրամասն տե՛ս Ա. Նուրիջյան Ղափանի գրադարանային գործի պատմությունից։—«Գրադարանավոր», 1961, № 1, էջ 25—27։

Պարբերական մամուլում շատ հոգվածներ ու հաղորդումներ կան նաև Հայաստանի այլ վայրերի՝ Գորիսի, Նոր Բայազետի, Շուշիի, Կարսի, Էրզրումի, Վանի, Ալեքսանդրապոլի գրադարանների աշխատանքի մասին, նյութեր կան նաև Նոր Նախիջևանի, Բաքվի, Թիֆլիսի և այլ վայրերի հայկական գրադարանների աշխատանքի վերաբերյալ։

Ամեն դեպքում պետք է ընդունել, որ Հայաստանում ու հայկական այլ վայրերում թեև քիչ գրադարաններ չեն եղել, բայց գրադարանային գործը որպես այդպիսին չի փայլել իր աշխատանքի մասնագիտական մակարդակով։ Մասնավորապես թույլ է կազմակերպված եղել գրադարանային գրականության վերաբերյալ տեղեկատվությունը՝ չեն ստեղծվել անհրաժեշտ որակի ու քանակի գրացուցակներ և մատենագիտական քարտարաններ։ Իսկ տպագիր գրացուցակներ շատ փոքրագույն են եղել։

Այժմ վաղուց ի վեր մեղանում սովորություն չկա գրադարանների տպագիր գրացուցակներ հրատարակելու։ Թերևս գրա կարիքն էլ չկա։ Խոշոր գրադարանների գրքային ունեցվածքի տպագիր գրացուցակ ստեղծելը ծանր և աշխատատար դործ է (օրինակ, Հայաստանի հանրապետական գրադարանի ավելի քան 5 միլիոն գրականություն տպագիր գրացուցակը կարող է լինել քաղմահատոր մի հսկա աշխատություն և հրատարակվել տասնյակ տարիների ընթացքում), իսկ հանրապետության փոքր և միջին մեծությունների գրականությունը համալրվում է միեմուլն աղբյուրներից՝ գրադարանային քաշխիշից (կոլեկտորից) և հայգրքի գրախանութներից, ուստի և հիմնականում միեմուլն կազմն ունի։ Հազվագյուտ են այնպիսի դրքերը, որոնք միայն այս կամ այն շրջանային կամ գյուղական գրադարանի սեփականությունն են։ Հասկանալի է, որ այդպիսի գրադարաններից յուրաքանչյուրի համար տպագիր գրացուցակ հրատարակելը անիմաստ է։

Մինչդեռ 19-րդ դարում, 20-ի սկզբներում, գրադարանային տպագրի գրացուցակները ընդունված էին։ Հաշվառված

գրադարանների տպագիր գրացուցակները առավելագույնը կարող էին ընդգրկել 10—15 հազար գրականություն, իսկ ավելի հաճախ՝ 1—1,5 հազար և ավելի քիչ: Նման գրացուցակներ հրատարակելը համեմատաբար հեշտ էր և, մասնավորապես, նպատակասլաց, քանի որ այն ժամանակ գրադարանները համալրվում էին շատ տարբեր աղբյուրներից, և նրանց գրական ունեցվածքները կազմով շատ էին տարբերվում իրարից: Գրադարանային գրացուցակները գրքերի կարևոր մատենագիտական տեղեկատուներ էին, որոնցից օգտվում էին շատ գիտնականներ, ուսուցիչներ, բժիշկներ, ինժեներներ, սովորողներ, այլ ընթերցողներ:

Այդ գրացուցակների մեջ բոլոր գրքերը ներկայացվում էին կամ այբբենական կարգով, կամ էլ ըստ առարկայական-թեմատիկ բաժինների (և սրանց ներսում այբբենական կարգով): Նկարագրությունների մեջ սովորաբար տրվում էին գրքերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները (հեղինակի ազգանուն և անվան սկզբնատառ, վերնագիր, հրատարակությունը, թվական, գույքահամար, որը հաճախ միաժամանակ գրքի դարականիշն էր՝ հասցեն դարակում): Երբեմն նկարագրությունները հերթական համարներ էին ստանում, նշվում էր գրքի գինը և այլն:

Գրացուցակների մեջ ամեն բաժնի վերջում սովորաբար ազատ էջեր էին լինում նոր ստացվող գրքերի անուններն ավելացնելու համար:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ 19-րդ դարում Եվրոպայում գրադարանների տպագիր գրացուցակները շատ տարածված էին, Ռուսաստանի ոչ քիչ գրադարաններ ունեին հանդամանալից կազմված գրացուցակներ:

Հայաստանի գրադարաններից մեզ հայտնի են հինգը, որոնք ունեցել են տպագիր գրացուցակներ՝ Երևանի արական գիմնազիայի գրադարանը, Երևանի Պետական պալատի գրադարանը, Կոնկասի հայոց քարեգործական ընկերության Շուշիի ու Գյումրիի (Ալեքսանդրապոլի) քաղաքային գրադարանները և Շուշիի հասարակական ժողովի գրադարանը:

ԳՐԱՑՈՒՑԱԿ

THE NEW ENGLAND FREE PRESS, CLAM
FORD, MASS.

ԳՐԱԳՐԱՐԱՆԻ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

ԳՐԱՑՈՒՑԱԿ

ՅԱՐԺԱՐԱՆԻ ԼԵՍԲԵՐԵՐԱՆԻ ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ
ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

ԳՐԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

ԿՈՂՈՐԴԻ ՀՅԱՑՈՒ ՔՐԵՏՈՐԻՆԻՆԻ
ԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

ԳՐԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

ԼԵՍԲԵՐԵՐԱՆԻ ՀԱՅԿԱՆ

ԼԵՍԲԵՐԵՐԱՆԻ ԼԵՍԲԵՐԵՐԱՆԻ

ԳՐԱԳՐԱՐԱՆԻ

Каталогъ армянскихъ книгъ
БИБЛИОТЕКИ
Самарк. Арм. Коллегіальнаго Школьнаго

ՀԱՅԿԱՆ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ
1910

БАКУ
Дистрибуция газетъ „Баку“
1912

Կարելի էր ավելացնել նաև էջմփածնի գրադարանի գրացուցակները, սակայն նրանցից մեկը (Մ. Բրոսսեի կողմից 1840 թ. հրատարակվածը), ինչպես արդեն գիտենք, խառը ներկայացնում է ձեռագրեր և տպագիր գրքեր ու լիառժեք դրագարանային գրացուցակ չի կարող համարվել (գրքերի կիսատ-պոատ ու քմահաճ նկարագրություների պատճառով), իսկ մյուսը էջմփածնի մատենադարանի ձեռագրացուցակը, է, որի մասին կխոսվի իր տեղում¹:

Երևանի արական գիմնազիայի գրադարանը ունեցել է քարտային բավական թարեկարգ գրացուցակ, որի մնացորդները պահպանվել են (Ա. Մյասնիկյանի անվ. գրադարանի գրապահեստում, ըստ որում, քարտերի անգրել դարձնեցները 1930-ական թվականներին երբեմն օգտագործվել են նոր գրացուցակների համար գրքեր նկարագրելու նպատակով):

1886 թվականին Թիֆլիսում լույս է տեսել Երևանի գիմնազիայի գրադարանի տպագիր գրացուցակը²:

Գրացուցակում նյութը դասավորված է ըստ առարկաների (կա 12 բաժին), Բացի այդ, առանձնացված են բարձր և ցածր տարիքի սովորողների երկու բաժիններ: Վերջում կա գրացուցակում ներկայացված գրքերի այբբենական անվանացանկ (հիմնականում հեղինակային), ներկայացված գրքերի հիմնական մասը՝ ռուսերեն է, կան նաև հայերեն, վրացերեն և արևմտաեվրոպական լեզուներով գրքեր: Հայերեն հատուկ ենտ գրքերը նկարագրված են նախ ռուսերեն թարգմանությամբ, ապա հայերեն:

Երեք տարի անց հրատարակվեց այս գրացուցակի առաջին լրացումը³:

1 Հնարավոր է, որ Հայաստանում այդ ժամանակ եղած այլ գրադարաններ էլ տպագիր գրացուցակներ ունեցած լինեն. մենք առաջիմ այդպիսիք հայտնաբերել չենք կարողացել:

2 Каталог библиотеки Эриванской гимназии. Сост. инспектор П. Твердый (192 стр.).

3 1-е дополнение к каталогу библиотеки Эриванской гимназии. Сост. П. Твердый. Тифлис, 1889, 105 стр.

Երևանի պետական պալատի գրադարանի տպագիր գրացուցակը լույս տեսավ 1911 թ. Երևանում¹, Այստեղ հայերեն գրքեր բոլորովին չեն նկարագրված (գրադարանը ըստ երկվույթին չի ունեցել այդպիսիք)։ Ակզբում տրված է գրադարանից օգտվելու կանոնադրությունը, որից երևում է, որ գրադարանը միայն մասամբ է պետական միջոցներով պահվել։

Երևանի երկու գրադարանների այս գրացուցակները (ավելի շատ՝ երկրորդը) լեզվով ու բովանդակությամբ հայկական մատենագիտության նմուշներ չեն, թեև նրանք Հայաստանի (աշխարհագրական իմաստով) գրադարանային-մատենագիտական գործն են ներկայացնում։

Ուրիշ են մյուս երկու գրացուցակները։ Շուշիի վերոհիշյալ գրադարանի տպագիր գրացուցակը կոչվում է. Գրացուցակ Կովկասի հայոց քաղաքումակա ընկերության Շուշու գրադարանի (Շուշի, 1891, 80 էջ), շապկի վրա՝ «Գրացուցակ Կովկասի հայոց քաղաքումակա ընկերության գրադարանի Շուշի քաղաքում»։

Գրացուցակի առաջին մասը (էջ 6—38) նվիրված է ռուսերեն, երկրորդը (էջ 40—80) հայերեն գրքերին։ Գրացուցակը կարգային (ալֆաբետատիկ) կառուցվածք ունի։ Գրքերի նկարագրությունները ներկայացված են տասներկու բաժիններում։ Այդ բաժինները առանձնացված են ժամանակին ընդունված մատենագիտական-գրադարանային դասակարգումներից մեկի հիման վրա։ Անշուշտ, այդ դասակարգումը որոշ հետաքրքրություն ունի անցյալի հայ մատենագիտության և գրադարանային գործի մեջ ընդունված դասակարգումների և անվանումների պատմության տեսակետից։ Ահա այդ դասակարգման բաժինները. 1. Կրոնական, փիլիսոփայական, հոգեբանական, 2. Դպրություն (քաղաքական, վիպասանական, քանաստեղծական), 3. Մատենագրությունը նախնայաց, 4. Պատմություն, կենսագրություն, ազգագրություն, 5. Աշ-

¹ Каталог библиотеки Эриванской казенной палаты. Составлен на янв. 1911 г., Ереван, 1911, 82 стр.

խարհագրութիւն, ճանապարհորդութիւն, տեղագրութիւն, 6. Մանկավարժութիւն, դասագրքեր, 7. Ժողովրդական և մանկական գրքեր, 8. Լեզվագիտական, հնախոսական, 9. Բնական գիտութիւնք, մասնագիտական, 10. Բժշկական, առողջապահական, 11. Օրենսգիտական, քաղաքական, սոցիալոլոգիական, 12. Այլ և այլք:

Գրքերի նկարագրութիւնները համառոտված են, բայց տալիս են հիմնական տեղեկութիւններ, օրինակ.

1 Արովեան Խ. Վերք Հայաստանի, Թիֆ. 54:

2 Աղամբան Պ. Շեքսպիր և իւր Համլէտ ողբերգութիւնը: Թիֆ. 87:

44 Արեղեան Մ. Նմուշներ, Շուշի, 88:

46 — Դաւիթ և Մհեր, Շուշի 89 և այլն:

Երևք տարի անց (1894-ին) Շուշիում լույս տեսավ նույն գրադարանի գրքաքին ունեցվածքը (հայերեն և ռուսերեն) ներկայացնող № 2 գրացուցակը¹:

Գրացուցակը նախորդի կառուցվածքն ունի (հայերեն գրքերը տրված են 48—70 էջերում):

Նկարագրութիւնների սկզբում դրված են գրքերի դարականիշերը (շիֆրերը), որոնք հավանաբար միաժամանակ գույքահամարներն են:

1910 թ. նույն քաղաքում լույս տեսավ՝ Գրացուցակ Շուշի հասարակաց ժողովի գրադարանի (77 էջ):

Ալեքսանդրապոլի քաղաքային գրադարանի գրացուցակի № 2 հավելվածն է մեր ձեռքին, որից և պետք է ենթադրել, որ տպագրվել է նաև բուն գրացուցակը, ինչպես և № 1 հավելվածը: Մեր ձեռքում եղածը հետևյալ վերնագիրն ունի. 2 Հավելված 1903 թ. Գրացուցակի Ալեքսանդրապոլի քաղաքային գրադարան-ընթերցարանի: Ալեքսանդրապոլ, 1908²:

¹ Գրացուցակ № 2 Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի (70 էջ):

² Այս փոքրիկ (28 էջ) հավելված-գրացուցակը վերջերս ձեռք էր բերել Մաշտոցի իսկան Մատենադարանի տպագիր գրականութեան բաժնին: Բուն գրացուցակն ու № 1 հավելվածը որևէ տեղ հայտնաբերել չկարողացանք:

Եւ այսպէս, այս վերնագիրն ասում է, որ բուն գրացուցակը տպագրւել է 1903-ին:

Ժամանակի սովորութեան համաձայն այս № 2 հաշիւոված գրացուցակի վերջին 7 էջերը ազատ են նոր ստացված գրքերը գրանցելու համար:

Հայկական ավելի հարուստ գրականութիւն ունեցող գրադարանները 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդի սկզբները Հայաստանից դուրս էին գտնվում: Արևելահայերո համամատարար հարուստ գրադարաններ էին հիմնել Թիֆլիսում ու Բաքվում: Թիֆլիսի գրադարաններից կարելի է հիշատակել Ներսիսյան և Հովնանյան դպրոցների գրադարանները, հայոց էթնագիրն գրադարանը, այնուհետև, Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան, «Մշակ» լրագրի խմբագրութեան, Ղոսկասյան մատենադարանի, Կովկասի հայոց հրատարակչական ընկերութեան և ուրիշ գրադարաններ: Բացի այդ, հայերի ջանքերով կամ մասնակցութեամբ էին ստեղծվել Թիֆլիսի Ա. Պուշկինի անվան քաղաքային (հանրային) գրադարանը, իր հայերեն գրականութեան բաժնով, քաղաքային ժողովարանի, արհմիութենական, դերասանական ընկերութեան գրադարանները և ուրիշներ:

Բաքվում մի շարք հայկական ուսումնական գրադարաններից բացի, հայտնի էր Գրիգոր Լուսավորչի անվան մարդասիրական ընկերութեան գրադարանը, որտեղ գրադարանավար է աշխատել Ա. Շիրվանզադեն և որը հիմք դարձավ Ադրբեջանի ներկայիս Հանրապետական գրադարանի համար: Բաքվում գործում էին նաև հայերեն գրականութիւն ունեցող մի քանի բանվորական, արհմիութենական գրադարաններ:

Գրադարանային մի շարք գրացուցակներ են հրատարակել Թիֆլիսի գրադարանները: Այսպէս, 1861 թվականին լույս է տեսնում Հանրային գրադարանի համառոտ գրացուցակը, որ կազմել էր գրադարանի տնօրեն, լեզվաբան

Ա. Բերթեն¹, 1886 թ. հրատարակվում է այս գրացուցակի շարունակությունը, նույնպես կազմված Ա. Բերթենի կողմից²:

Երկու գրացուցակներն էլ ունեն հայերեն գրքերի բաժիններ:

Ի դեպ, հիշենք, որ Ա. Բերթեն կազմել է նաև Գալոստ Շիրմազանյանի հարուստ գրադարանի գրացուցակը, որ հրապարակվել է Վիպկազ պարբերականում³:

Ա. Բերթենի գրացուցակները կարգային (սխտեմատիկ) կառուցվածք ունեն: Հիմք է ընդունված Պետերբուրգի հանրային գրադարանի ավագ գրադարանավար Վ. Վ. Սորոլեի մշակած համակարգը⁴:

1891 թ. լույս տեսավ Թիֆլիսի հանրային գրադարանի գրացուցակի երկրորդ շարունակությունը (Второе продолжение...), կազմված Գ. Սիմիրսի կողմից, իսկ 1895-ին՝ երրորդ շարունակությունը, կազմված Պ. Մելլերի կողմից:

Թիֆլիսի հանրային գրադարանը հրատարակել է նաև առ գրացուցակներ: Կարևոր է 1910—1912 թթ. հրատարակված գրացուցակը, որ ամենախոշորն է բոլոր եղածների մեջ⁵:

Այստեղ գրքերը ներկայացված են ըստ լեզվական սկզբունքի՝ նախ ուսուրեն գրքերը (էջ 1—550), ապա հայերեն (165 անուն, էջ 551—562), վրացերեն (էջ 563—572), էսպերանտո (էջ 573—576):

Ռուսերեն գրքերը ներկայացված են 11 առարկայական բաժիններում, որոնք ունեն իրենց ենթաբաժինները: Հայերեն գրքերը 3 բաժին ունեն 1. Գեղարվեստական, 2. Ման-

¹ Краткий каталог Тифлисской публичной библиотеки (1846—1861). Тифлис, 1861, XXIII, 116 стр.

² Продолжение краткого каталога Тифлисской публичной библиотеки. Тифлис, 1886, XXXII, 265, IV стр.

³ «Кавказ», 1856, № 29, էջ 115—116, № 30, էջ 119—120, № 31, էջ 24:

⁴ Об устройстве общественных библиотек и составлении каталогов.— «Журнал Министерства народного просвещения», 1858, № 2.

⁵ Каталог Тифлисской городской публичной библиотеки им. А. С. Пушкина. Тифлис, 1910—1912, 576 стр.

կական, 3. Պատմական, կենսագրական, կրոնական, տնտեսագիտական, բնագիտական և այլն:

Նկարագրությունների մեջ սովորական մատենագիտական տեղեկություններից բացի (հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր ու թվական) նշված են նաև լուրսբանչուր անուն գրքի օրինակների քանակն ու գինը:

Հիշված գրադարաններից ամենահինը՝ Ներսիսյան դպրոցի գրադարանը իր գրացուցակը տպագրեց 1893-ին (Թիֆլիսում), այն է Մայր ցուցակ մատենից գրադարանի Ներսիսյան հոգևոր դպրոցի հայոց (191 էջ): Գրացուցակը երեք հիմնական մասից է բաղկացած 1. հայերեն գրքեր (1078 անուն, էջ 3—96), 2. ռուսերեն գրքեր (1152 անուն, էջ 97—177), 3. այլ լեզուներով գրքեր և տարբեր լեզուներ սովորելու ձեռնարկներ (էջ 179—191): Յուրաքանչյուր լեզվական բաժնի մեջ գրքերի նկարագրությունները դասավորված են ալբերենական կարգով (հիմնականում հեղինակների ազգանունների ալբերենով):

Ինչպես ցույց է տալիս Ներսիսյան դպրոցի գրադարանի մայր ցուցակի մեջ ընդգրկված գրքերի լեզվական կազմը, այդ գրադարանը իր հայերեն գրքերի զգալի քանակով այն ժամանակների համար ազգային ուժեղ կշիռ է ունեցել:

Գրացուցակ է հրատարակել նաև Թիֆլիսի հայկական էժանագին գրադարանը՝ Գրացուցակ Թիֆլիսի էժանագին գրադարանի: (Թիֆլիս, 1894, 56 էջ):

Թիֆլիսի ժողովարանի գրադարանը մի քանի անգամ հրատարակել է իր գրացուցակները: 1895-ին լույս տեսավ (Թիֆլիսում) այդ գրադարանի անդրանիկ տպագիր գրացուցակը¹:

Այս գրադարանից օգտվել են հիմնականում ժողովարանի անդամները: Գրադարանի գրքաֆին ունեցվածքը հիմնականում եղել է ռուսերեն, բայց գրադարանն ունեցել է նաև հա-

¹ Каталог библиотеки «Тифлисского собрания» к 1-му янв. 1895 г., 281 стр.

յերեն ու այլ լեզուներով գրականութուն, Հայերեն գրականութունը տրված է այբբենական կարգով (էջ 211—233)։

1896 թվականին լույս տեսավ այս գրացուցակի № 1 լրացումը (Добавочный каталог) դարձյալ հայերեն գրքերի ու մի թափնով (էջ 66—67)։

Բարեգործական ընկերության Թիֆլիսի գրադարանը նույնպես մի քանի գրացուցակներ է հրատարակել։ 1910 թվականից առանձին պրակներով լույս էր տեսնում Գրացուցակ հայերեն զբեմի կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի (Թիֆլիս, 398, 67 էջ), որը անցյալի հայ ամենահարուստ գրացուցակներից մեկն է։

Առաջին պրակն ընդգրկում էր գրադարանի գրքային ունեցվածքի մանկական բաժինը, երկրորդը՝ գեղարվեստականը, հետո հավելվածներն էին և այլն։ Պրակները հրատարակվում էին շարունակվող էջակալությամբ¹, հետո միացվում, ուստի կան տարբեր քանակով պրակներ ընդգրկող հավաքածուներ, կամ ամբողջական հավաքածու մի կազմի մեջ։

Ամբողջական գրացուցակը բաղկացած է հետևյալ մասերից. I. Մանկական, II. Գեղարվեստական, ապա առաջին հավելվածն է, նույն բաժիններով, որին հաջորդում է Ավետիս Վարդապետյանի անվան բաժանմունքի հայագիտական գրականութունը (III բաժին), հետո IV. Դպրոցական, V. Կրթական-քարոյագիտական, VI. Թշկալան-առողջապահական, բնագիտական և արհեստագիտական, VII. Պատմություն (4 ենթաբաժիններով), VIII Մատենագրություն նախնյաց, IX. Ձանազան, և ապա հեղինակների այբբենական ցուցակ։ Այնուհետև գալիս է երկրորդ հավելվածը իր բաժիններով և հեղինակների այբբենական ցանկով։

Նույն գրադարանի ուսաներեն գրքերի մի գրացուցակ էլ տպագրվեց պրակներով 1910—1912 թվականներին²։

¹ էջակալութունը խախտվել է միայն I հավելվածում։

² Каталог русских книг библиотеки армянского благотворительного общества на Кавказе. Тифлис, 1910—1912, 818 стр.

Թիֆլիսի հիշյալ գրադարանների մեծ մասի գրքային ունեցվածքը 1919 թվականին պատրաստվել էր Երևան տեղափոխելու համար: 1920—1921 թվականներին այդ գրականության հիմնական մասը իրոք տեղափոխվեց Երևան և դարձավ Հանրային գրադարանի սեփականությունը:

Կայսերի է հիշել նաև Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցի գրադարանի գրացուցակը¹:

Այստեղ ներկայացված են 803 ռուսերեն և 1050 հայերեն գրքեր: Ըստ էության, գործ ունենք երկու առանձին գրացուցակների հետ, որոնցում ներկայացված գրքերի համարակալումը շարունակվում է: Հայերեն բաժնի վերնագիրն է. Գրացուցակ Թիֆլիզի օրիորդաց Մարիամյան—Հովնանյան դպրոցի: Գրացուցակում գրքերը դասավորված են ալբանական կարգով: Բացի գրացուցակի հերթական համարներից նշված են նաև համարներ ըստ բաժնի», որոնք հավանաբար դարականիշներն են:

Թիֆլիսի մի շարք այլ գրադարաններ էլ են հրատարակել իրենց գրացուցակները, ինչպես դերասանական ընկերության (1916 թ.), քաղաքապետարանի (1908 թ.) գրադարանները և այլն, որոնցում սակայն հայերեն գրքեր չկան:

Այս շրջանում հայազգի հայտնի անձանց անհատական գրադարանների մի քանի գրացուցակներ հրատարակվեցին: Արդեն հիշատակել ձեռք Գ. Շիրմազանյանի հավաքածուի գրացուցակը, կարելի է ավելացնել նաև Ն. Արզուման-Երկադանյանի անձնական գրադարանի գրացուցակը (Թիֆլիս, 1913, 377 էջ), ինչպես և Գ. Սարգսյանի տնային գրադարանի գրացուցակը (Բաքու, 1912, 80 էջ), որոնցում, սակայն, հայերեն գրքեր չեն նշված:

Բաքվի հայկական գրադարաններից ամենահայտնին և ամենահարուստը՝ Հայոց մարդատիրական ընկերության գրադարանը տարբեր թվականների հրատարակել է իր հայերեն

¹ Каталог книг Мариинско-Анановского училища. К 1-му марта 1912 г. Тифлис, 1912, 48 стр. (հայերեն գրքերը՝ էջ 1—41):

գրքային ռենցավածքի գրացուցակները: Առաջինը¹ ընդգրկում է 579 տպագրական-գրադարանային միավոր, այդ թվում՝ 469 գիրք, 85 պարբերական, 25 բառարան, տեղեկատուներ և այլ ներկեր: Նկարագրութուններում տրված են գրքերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները և գույքահամարները ըստ մայր մատյանի: Նկարագրութունները համարակալված են: 1894-ին լույս տեսավ այս գրացուցակի № 1 հավելվածը (47 էջ), 1899-ին № 2-ը (52 էջ), 1900 թվականին № 3-ը, 1901-ին № 4-ը²:

1912-ին Բաքվում լույս տեսավ նոր գրացուցակ, որ ներկայացնում էր նույն գրադարանի հայերեն գրքերն ալբյի մեքողական վիճակում, բոլոր համալրումներով հանդերձ³:

Այդ ժամանակ Բաքվի մարդասիրական ընկերության գրադարանը բաղկացած էր երկու մասից՝ մեկը բուն գրադարանը, ալբյի ճիշտ, գրապահոցը, մյուսը, այն ժամանակվա անունով, հասարակական և հանրամատչելի գրադարան-ընթերցարանը:

Գրացուցակում գրքերը ներկայացված են ըստ բաժինների: Կան 12 կարգային բաժիններ (1. Գեղարվեստական. քրե-նագատություն, հրապարակախոսություն, մատենագրություն, 2. Պատմություն. գրականություն և գեղարվեստ, լեզվագիտություն, բառարաններ: 3. Պատմություն. կենսագրություն, հնախոսություն և այլն, վերջին՝ 12-րդ բաժինը պարբերական մամուլին է):

Ամեն մի բաժնի ներսում նյութերը դասավորված են ալբերենական կարգով: Նկարագրություններում տրված են գրքերի մասին հիմնական տեղեկություններն ու գույքահամարները:

1 Գրացուցակ բարձրագույն հաստատյալ Բազմա հայոց մարդասիրական ընկերության գրադարանի: Բաքու, 1891, 103 էջ:

2 Այս հավելվածները գույք և շարունակել են հրատարակվել նաև հաջորդ տարիներին, բայց քանի որ մեզ չեն հանդիպել ոչ գրադարաններում, ոչ էլ գրավոր աղբյուրներում, ուստի և չենք կարող որոշակի բանասել հետագա համարների գույքյան մասին:

3 Գրացուցակ հայերեն գրքերի Բազմա հայոց մարդասիրական ընկերության գրադարանի (218 էջ):

նույն գրադարանի ուսերեն գրքերի գրացուցակները նույնպես լույս են տեսել մի քանի անգամ, ինչպես, օրինակ, 1896-ին¹, 1907-ին, 1914-ին, և այլն:

1909 թվականին իր գրացուցակը հրատարակեց Բաքվի Վասարակական ժողովի գրադարանը, իսկ շորա տարի անց հրատարակվեց այդ գրացուցակի ծավալուն լրացումը²:

Գրացուցակի հիմնական մասում ներկայացված են ուսերեն գրքերը, ինչպես նաև գրքեր եվրոպական մի քանի լեզուներով: Առանձին է հայերեն գրքերի բաժինը (14-րդ)³ Գրքեր հաշոց լեզվով վերնագրով (էջ 184—198): Այստեղ հայերեն գրքերը ներկայացված են ալբանական կարգով: Այնուհետև, գրացուցակի պարբերական հրատարակությունների բաժնում 3 էջի վրա (էջ 208—210) տրված են գրադարանի ունեցած հայերեն պարբերականները:

Մոսկվայի արևելյան լեզուների լազարյան ճեմարանը նույնպես հրատարակել է իր գրքային ունեցվածքի ցուցակները: 1861-ին ֆրանսերեն վերադասագրով հրատարակված դրացուցակի մեջ կար ճեմարանի գրադարանի հայերեն տպագիր գրքերին հատկացված բաժին (էջ 13—14):

1888 թ. Մոսկվայում լույս տեսավ լազարյան ճեմարանի գրադարանի գրացուցակը³, Այստեղ ընդգրկված է լազարյան ճեմարանի հատուկ լսարանների գրադարանի և կենտրոնական (ֆունդամենտալ) գրադարանի արևելագիտական բաժնի գրականությունը (տպագիր գրքեր, պարբերականներ, ձեռագրեր և այլն):

Գրացուցակն ունի 21 բաժին և 5 ալբանական օժանդակ ցանկեր:

¹ Каталог библиотеки Высочайше утвержденного человеколюбивого общества во имя св. Григория Просветителя Армении. Баку, 1896, 152 стр.

² Первое дополнение к каталогу библиотеки Бакинского общественного собрания за 1910—1913 гг. Баку, 1913, 210 стр.

³ Каталог книг и рукописей библиотеки Лазаревского института восточных языков. Москва, 1888, 236 стр.

3-րդ բաժինը Հայոց լեզու—ն է, որն իր հերթին 9 առարկայական—թեմատիկ ենթաբաժիններ ունի: Նկարագրված են 762 հայերեն գրքեր ու պարբերականներ և 150 ձեռագրեր:

Գրացուցակը կազմված է խնամքով. գրքերի նկարագրություններն մեջ բացի սովորական մատենագիտական տեղեկանքներից նշված է նաև, թե ճեմարանի երկու գրադարաններից որինն է այս կամ այն գիրքը (արևելագիտական բաժնի գրքերը աստղանիշ ունեն):

Բոլոր նկարագրություններն ունեն հերթական համարակալություն: Հայ հեղինակների այբբենական անվանացանկից հղումներ են տրված դեպի ալգ. համարները:

Առհասարակ այս գրացուցակը անցյալի հայկական լավագույն գրացուցակներից է (թեև այն հայկական է իր մի մասով միայն):

1896-ին լույս տեսավ այս գրացուցակի 1-ին հավելվածը, որ Մ. էմինի գրադարանի գրացուցակն էր: Այս գրադարանը Հազարյան ճեմարանի նախկին սան և դասախոս էմինը կտակել էր ճեմարանի գրադարանին: Գրացուցակում Հայոց լեզուն դարձյալ III բաժինն է գրադեցնում և ունի 8 ենթաբաժին (էջ 203—219), նկարագրված են 269 հայերեն գրքեր և 43 հայերենից կատարված թարգմանություններ ու հայագիտական գրքեր տարբեր լեզուներով:

1901-ին հրատարակվեց գրացուցակի 2-րդ հավելվածը, որը ներկայացնում էր Գ. Քանանյանի զրբային հավաքածուն, կտակված ճեմարանի գրադարանին:

Գրացուցակը նախորդների կառուցվածքն ունի, կան 144 հայերեն գրքերի նկարագրություններ (էջ 289—301):

1904-ին լույս տեսավ 3-րդ հավելվածը, որ ընդգրկում էր 1888-ից մինչև 1903 թվականը գրադարանի վերոհիշյալ երկու հատվածների ստացած գրականությունը: Այս գրացուցակն էլ նախորդների կառուցվածքն ունի, Հայոց լեզու բաժնի 9 ենթաբաժիններում նկարագրված են 444 գրքեր ու ձեռագրեր: Վերջում տրված են նախորդ երկու հավելվածներում և ախտեղ ներկայացված գրքերի օժանդակ այբբենական ցանկերը:

Արևմտաեվրոպական որոշ խոշոր գրադարաններում կան հայերեն տպագիր գրքերի տարբեր քանակի հավաքածուներ, ուստի նրանց հրատարակած գրացուցակներում եւ երբեմն արտահայտվում են հայերեն գրքերը: Որոշ դեպքերում էլ առանձին կազմվել են այդպիսի գրադարանների հայերեն դրբերի ցուցակները: Դրանցից է, օրինակ, Ամստերդամի գրադարանի հայերեն գրքերի հայտնի ցուցակը, որ կազմել է Յ. Մակկերը¹:



Կարևոր կլինե՞ր Կ. Պոլսի, ինչպես և Եվրոպայի ու Ասիայի առանձին վայրերում գործած հայկական գրադարանների գրացուցակների հայտնաբերումը: Մեզ մատչելի գրադարաններում չգտնվեցին ուշագրոթյան արժանի ժամանակաշրջանում արևմտահայերի կողմից հրատարակված նշման գրացուցակներ (թեև հրատարակչական ու գրավաճառային գրացուցակները շատ ավելի էին, քան արևելահայերի հրատարակածները): Թվում է, որ պետք է լինեն արևմտահայության մեջ հրատարակված գրադարանային գրացուցակներ: Հավանաբար արևելահայոց մեջ հրատարակված այդ կարգի որոշ գրացուցակներ էլ դեռևս անծանոթ են մնացել մեզ:

Ընդհանրապես Երևանի գրադարաններում թերի են ներկայացված նախկինում գործած հայկական գրադարանների տպագիր գրացուցակները, մինչդեռ նրանք այսօր մատենադիտական կարևոր աղբյուրներ են: Ոչ քիչ հայերեն գրքեր, որոնք դուրս են մնացել Զարհանալյանի և Ղազիկյանի մատենադիտութուններից և այսօր հազվագյուտ են կամ չկան գրադարաններում, զրանցված են գրադարանային մերթ այս, մերթ այն տպագիր գրացուցակի մեջ: Գրադարանային գրացուցակներից կարևոր տեղեկանքներ կարելի է քաղել ժամհետացած որոշ գրքերի մասին, մանավանդ ներկայումս կազմվող հայ գրքի ընդհանուր մատենադիտության համար:

¹ .Révue des études arméniennes. Paris, 1926, t. VI, f 2, p. 71—148.

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՎԱՃԱՌԱՅԻՆ ԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Հրատարակիչը կամ հրատարակչությունը գրացուցակ է տպագրում տեղեկատվության նպատակով, թե այսինչ գրքերն են լույս ընծայված իր կողմից: Գլխավոր նպատակն է (թեև ոչ միակ) հրատարակված գրքերի վաճառքը: Այլ փոսքով, ամեն մի հրատարակչական գրացուցակ զգալի ջանքով նաև գրավաճառային է:

Տեսանք, որ Անտոնիո Բորտոլիի տպարանից լույս տեսած հայերեն գրքերի ցուցակից հետո, արդեն 1810 թվականին հաջորդ գրացուցակը հրատարակեցին Վենետիկի Մխիթարյանները:

Մեր հաշվումներով քննության առարկա ժամանակաշրջանում Վենետիկի Մխիթարյանները 18-րդ դարի հայերեն լույս են ընծայել իրենց հրատարակչությունների գրացուցակները՝ հետևյալ թվականներին 1810, 1823, 1865, 1869, 1874, 1879, 1887, 1888, 1889, 1893, 1896, 1899, 1903, 1906, 1908, 1910, 1913, 1919: Խոսքը վերաբերում է միայն Կայերեն գրքույկ-գրացուցակներին (հաշվի չեն առնված տարբեր մեծության այն գրացուցակները, որոնք Վենետիկի Մխիթարյանները տպագրել են նաև առանձին թերթերի վրա, կամ «Թաղմավեպի» մեջ):

Այդ գրքույկ-գրացուցակները, որոնք կոչվել են տարբեր

կերպ («Յուցակ գրոց տպագրելոց ի Մխիթարեան միաբանութենէն մինչև 1908 թ., ապա նաև «Լիակատար ցուցակ», «Յուցակ», «Գրացուցակ» և այլն), շարունակեցին հրատարակվել նաև հետագա տարիներին, մինչև մեր ժամանակները:

Այդ գրացուցակները, ընդին բացառութեամբ, նպատակ ունեն ընդգրկելու 1716 թվականից (վենետիկում Մխիթարյանների հաստատվելու թվականը) մինչև տվյալ գրացուցակի հրատարակման տարին վենետիկյան Մխիթարյանների տպագրած գրքերն ու պարբերականները (ինչպես իտալական տպարաններում, այսպես էլ սկսած 1889-ից՝ փրենց տպարանի մեջ): Գրացուցակներից մի քանիսը միայն (օրինակ, 1896, 1913 թթ.) ներկայացնում են ընթացիկ հրատարակություններ (հիմնականում տվյալ տարվա):

Ամբողջական գրացուցակները տարբեր ծավալի են (20 էջից մինչև 143, 158):

Տարբեր է նաև գրացուցակների որոշ հրատարակությունների վառուցվածքը: Մինչև 1893 թվականը հրատարակված գրացուցակները սոսկ այբբենական ցանկեր են, որոնց ծավալը չի անցնում 50 էջից: Այբբենական շարքը փազմվում է թե՛ հեղինակների ազգանուններով, թե՛ նրանց անունանշանով և թե՛ գրքերի վերնագրերով. այլ խոսքով, հետևողական սկզբունքը քաղակալում է: Օրինակ, 1888 թ. գրացուցակում Արիշանի և Բրկերը նշված են ազգանվան՝ Ալիշան-ի տակ, իսկ Զարբհանալյանինը՝ Գարեգին-ի տակ:

1893 թվականին լույս է տեսնում երկու մասից և համեմատվող բաղկացած ավելի ծավալուն գրացուցակ (143 էջ): Այստեղ առաջին մասը կարգային կամ, ավելի ճիշտ, առարկայական գրացուցակն է, ուր նյութերը դասավորված են ըստ առարկայական բաժինների (Ս. Գիրք, Մեկնությունք, Եկեղեցական մատյանք, Բարոյափեսք, Վիպասանությունք, Առակք, Մատենագրությունք և Քարգմանությունք նախնյաց և այլն), առանձին են ներկայացված դասագրքերը: Երկրորդ բաժնում գրքերի ու պարբերականների նկարագրությունները

դասավորված են վերնագրերի այբբենական կարգով, թեև վերնագրերի բառերը հաճախ տեղաշարժված են. օրինակ, ասենք, Զարբհանալյանի աշակերտական մատենագիտությունը նկարագրված է իրեն Մատենագիտություն հայկական (էջ 92)։ Ավելի ճիշտ, այբբենական կարգով դրված են գրքերի վերնագրերի առավել ընդունված անունները։ Այստեղ դարձյալ նույն տառի միևնույն շարքում կարենք է հանդիպել Ալբերտ անունը և Ալբարտ վերնագիրը (Ալիշանի), Կոբին անունը և Կրքուն անունը (Մխիթար Սեբաստացու) և այլն։ Հավելվածում տրված են օտար լեզուներով հրատարակված գրքերը։

Այս գրադուցակում յուրաքանչյուր գրքի նկարագրությունից հետո տրվում է նաև ծանոթագրություն գրքի լուսավանդականության մասին։

Այնուհետև, նորից սկսեցին հրատարակվել սոսկ այբբենական գրադուցակներ (օրինակ, 1903, 1906, 1908 թվականներին)։ Այս քննարկ գրքը-ները (այդպես էին կոչվում) մխիթարյան հրատարակությունները ներկայացնում էին միայն գրքերի հանրահայտ անունների այբբենական ցանկի ձևով, առանց 1893 թվականի գրադուցակի երկրորդ մասի կառուցվածքն ունեին (միայն ավելացվում էին նոր հրատարակություններ)։

1910 թվականին դարձյալ լույս է տեսնում ծավալուն գրադուցակ (սկիզբն առնում էր 159 էջ), բաղկացած չորս մասից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր մխիթարյան հրատարակությունները ա) ըստ վերնագրերի և հանրահայտ անունների այբբենական կարգի, բ) ըստ հեղինակների ազգանունների (հին հեղինակների անունների), այստեղ հեղինակներից հղումներ են տրվում դեպի հաջորդ մասի համապատասխան բաժինները, գ) ըստ առարկայական բաժինների (Մատենագրություն, հայկական, Աղյուսագրական, Տեղագրական, Ուղևորություն, Պատմական, Հնարեսական), դ) օտար

լեղուներով հրատարակված գրքերը (կա նաև «Գեղունիս հանդեսի 6-րդ համարի հոդվածների ցանկը»)։

Ցուցակի գործածությունը Լեհշտացնելու համար, ժամանակի եվրոպական մի շարք գրացուցակների օրինակով, յուրաքանչյուր մասը տպագրված է տարբեր գույնի թղթի վրա։

Նույն կառուցվածքն ունի 1919 թվականին հրատարակված «Լիակատար ցուցակ գրքերու Միխիթարյան տպարանի»-ն (միայն չկա օտար լեզուներով հրատարակված գրքերի ցանկը)։

Այս գրացուցակները ընդհանրապես կազմված են նպատակասլաց, նման եվրոպական լավագույն գրացուցակներին, սակայն նրանցում էլ նկատվում են անփութության հետքեր։ Հանդիպում են նաև անստույգ տեղեկություններ։ Ահա նույն Գ. Զարրհանայանի «Պատմություն հայկական տպագրության»-ը (1895 թ.) ներկայացված է իբրև՝ Պատմություն հայկական տպագրության և տպագրության, հրատարակված 1898 թվականին (էջ 58, 94)։ Միխիթարյան մի շարք հեղինակների՝ գրացուցակում տրված աշխատությունների ցանկերը երբ համեմատում ենք Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենադիտության» համապատասխան ցանկերի հետ, նկատում ենք, որ գրացուցակում բավական թվով վերնագրեր, հրատարակության թվեր անճիշտ են։ Կան նաև բացթողումներ։ Օրինակ, «Լիակատար ցուցակում» չգտանք Ալիշանի «Հոգեմանդ որդեաց սիրելեաց» (1850 թ.), «Առ ազնուափայլ սեպուհն Արրահամ Աղանուրեան» (1850 թ.) փոքր երկերը, որոնք նշված ան Ղազիկյանի մատենագիտության մեջ։

Այս կառուցվածքն ունեցող ընդարձակ (սլիակատար) գրացուցակներ Ս. Ղազարում տպագրվեցին նաև հետագա տարիներին (վերջինը՝ 1960 թ.)։ Նախորդ գրացուցակների որոշ անճշտություններ անցան ցուցակից ցուցակ և պահպանվեցին նաև վերջին գրացուցակում։

Այս գրացուցակներում տրվում է նաև գրքերի գինը։ Սովորաբար նշվում են սակավաթիվ մնացած (աստղանիշով) և սպառված (գինը չի դրվում) գրքերը։ Նախարաններում

տրվում է հրատարակչական գրացուցակներին հատուկ հայտարարություն. «Ներկա ցուցակս կոչնչացնե մինչև ցարդ հրատարակված քոչոր ցուցակները»:

Վենետիկի Մխիթարյանները իրենց հրատարակությունները ներկայացրել են նաև Ֆրանսերեն տպագրված գրացուցակներով՝ հավանաբար նկատի ունենալով հայերեն շիմացող հաճախորդի գրավաճառներին, ինչպես նաև բանասերներին ու այլ անձանց, որոնք կարող էին հետաքրքրվել իրենց հրատարակություններով: Մեզ հայտնի է Ֆրանսերեն տպագրված երկու գրացուցակ¹:

Վենետիկյան Մխիթարյանների գրացուցակները հիմնականում գրավաճառային նշանակությունն ունեցել (և ունեն), դա երևում է նաև նրանց նախաբաններից, որոնցում սովորաբար խոսք է լինում մխիթարյան հրատարակությունները գնելու պայմանների մասին: Գրացուցակները սովորաբար ձրի են ուղարկվել ցանկացողներին: Հետաքրքրվողները կարող էին գրացուցակ ստանալ նաև Կ. Պոլսում Մխիթարյանների լուսնացած գրախանութում (Սեդրոս-խանում): Սակայն ճիշտ չի լինի, եթե այսօր այդ գրացուցակների արժեքը միայն գրավաճառությամբ սահմանափակենք, նրանք հարուստ տեղեկություններ են պարունակում Վենետիկի Մխիթարյանների հրատարակչական-տպագրական գործունեության մասին, իսկ իրենց տրակով հայկական գրացուցակային մատենագիտության լավագույն նմուշներից են:

Այսօր աչքի անցկացնելով այդ գրացուցակները կարելի է նկատել, թե ինչպիսի ծաղկման է հասել Ս. Ղազարում հայ գրքի հրատարակումը 19-րդ դարի երկրորդ կեսին ու 20-րդի սկզբներին և ինչպես հայկական եղեռնից հետո՝ սկզբում աննկատ, ապա ավելի նկատելի (մահապաղ 2-րդ համաշխարհային պատերազմից հետո) սկսել են մոլագել վենետիկյան Մխիթարյանների հրատարակությունները: Հատկապես նկատելի է ինքնուրույն, մեծարժեք հայագիտական աշխա-

¹ 1867 (33 էջ) և 1869 (34 էջ) թվականների:

ՅՈՒՅԱԿ ԳՐՈՑ

ՄԻՈՑԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆԻ

1716-1906



ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԳԱՐԱՆԻ

Ի ՍՊԻՐԱՆԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ

1716-1906

ՀԱՅԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԳԱՐԱՆԻ

1906

ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՆԵՐՍԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԻՐԱՆԻՆԻ

ՑՈՒՑԱՆԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ

1906


1914-1916

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

1914-1916

1914-1916

1914-1916



ՀԱՅԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ

1914-1916

1914-1916

1914-1916

1914-1916

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Գ. ՊԱՐԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ



ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Գրականության և հրատարակչական գրադպրակներ

տուժյունների հրատարակման նվազումը, իսկ հրատարակչական գործի թուլացումը ընդհանրապես Ս. Ղազարի մշակութային գործի թուլացման նշան է: Այդպես, արևմտահայոց մեծ աղետը, Արևմտյան Հայաստանի հայադրկումը ողբերգորեն անդրադարձավ նաև հայ ոգու, հայ մշակույթի ամենապայծառ շահերից մեկի վրա, որ երկար ժամանակ ողբվորության ու վերածննդի փարոս եղավ հայության համար: Կգա՞ արդյոք մի նոր վերելք Ս. Ղազարի համար, կնորոգվի՞ արդյոք ջահի մարող կրակը...

Վիեննայի Մխիթարյանները, ինչպես հայտնի է իրենց տպարանն ունեցան ավելի վաղ, քան վենետիկցիները, դեռևս 1775-ին (Տրիեստում), սակայն իրենց տպագրած գրքերի անդրանիկ ցուցակը (մի մեծագիր թղթի երկու էջին զրոշմված) հրատարակեցին վենետիկցիներից ավելի ուշ՝ 1859-ին, այն կոչվում է՝ Ցուցակ գրոց դրոշմելոց Մխիթարեան տպարանի թրիեստ և ի Վիեննա: 1776—1859:

1864-ին նույն վերնագրով հրատարակվում է երկրորդ գրացուցակը, որ արդեն ընդգրկում էր մինչև նույն 1864-ը տպագրված գրքերը և գրքույկի ձև ուներ (16 էջ): Այնուհետև (1868 թվականից), գրացուցակի վերնագիրը դառնում է Ցուցակ գրոց Մխիթարեան տպարանի թրիեստ և ի Վիեննա: Այս վերնագրով և համապատասխան տարիների լրացումներով գրացուցակը վերահրատարակվում է մի շարք անգամ, Ըստ ոչ լիովին ասույզ հաշվի մինչև 1912 թվականը գրացուցակը հրատարակվել է 12 անգամ (ներառյալ «Հանդես ամսօրյայում» 1893 թ. տպագրվածը) հետևյալ թվականներին՝ 1859, 1864, 1868, 1886, 1891, 1893, 1895, 1897, 1899, 1903, 1908, 1912, ապա վերահրատարակումը շարունակվել է 1924 թվականից:

Այս գրացուցակները ծավալով փոքր են վենետիկցիների գրացուցակներից (24-ից մինչև 43 էջից բաղկացած), կառուցվածքով էլ ավելի պարզ են (այբբենական ցանկ և ցուցակներ ըստ մատենաշարների): Պատճառն այն է, որ սրանցում ավելի քիչ գրքեր են ընդգրկված, քան վենետիկյան

գրացուցակներում։ Առանձին թերությունները շահաված այսփոքրիկ գրացուցակները նույնպես եվրոպական համամասն մատենագիտական ցանկերի օրինակով են վազմված և որակյալ են։ Նրանց դերն էլ հիմնականում գրավաճառային է, բայց և սրանք նույնպես այսօր ներկայացնում են Մխիթարյանների մյուս հատվածի Տրիեստի և Վիեննայի հայ գործիչների հրատարակչական-մշակութային աշխատանքը, որը նույնպես իր հոյակապ քարձուներին հասնելուց հետո վայրէջք ապրեց վերոհիշյալ նույն պատճառներով։ Զգացվում է, որ այսօր ճիգեր են արվում նոր ուժ հաղորդելու ազգային գիտության այդ կենտրոնին ևս։

Հայոց հնագրայան կենտրոններից մեկում՝ Երուսաղեմում մեսրոպատառ տպագրությունը մուտք է գործել 1833 թվականին (եբր Ս. Հակոբյանց վանքի նորաստեղծ տպարանից առաջին հատրեն հրատարակությունը գուրս ևկալ)։ Թեև այստեղ արագ թափով չընթացավ տպագրական գործը, քայք 1870-ական թվականներին արդեն փրոնական, լեզվաբանական և պատմական գրքերի մի նկատելի քանակություն տպագրվել էր, ուստի և սրանց վաճառքը յուրացնելու համար հրատարակվում են փոքրիկ (5-ից 17 էջանոց) գրացուցակներ։ Մեզ ծանոթ ամենահին գրացուցակը 1870 թվականի է. «Յուցակ տպագրեալ գրոց ի տպարանի Առաքելական աթոռոյս Սրբոյ Յակովքեանց և արժողութիւնք մոցիւն»։

Այնուհետև, Ս. Հակոբյանց վանքը մի քանի անգամ հրատարակել է իր տպագրած գրքերի ցուցակները¹։ Այս ցուցակները այդքանական յառուցվածք ունեն, գրքերի մասին հիմնական տեղեկություններից քացի տրվում են հակիրճ ծանոթություններ, գիներ։

Բացի այս գրացուցակները, Ս. Հակոբյանց վանքը տպագրել է նաև իր գրատառնը եղած վաճառքի ենթակա գրքերի

1 Մեզ ծանոթ են Ս. Հակոբյանց վանքի հրատարակությունների 1870, 1875, 1882, 1911, ինչպես և հետագա տարիների գրացուցակներ մինչև 1953 թ., երբ հրատարակվեց «Լիակատար գրացուցակը», որի մյուս հրատարակությունը եղավ 1958-ին (վերջինը)։

ցուցակներ, 1911-ին լույս է տեսել այդ զբաղմունքների 3-րդ հրատարակությունը։

Նույն կարգի զբաղմունքներ հրատարակել է նաև էջմիածինը՝ Մայր աթոռի տպարանի հրատարակությունների համար։ Ընդ դրանք, ըստ երևույթին, Հայաստանում նախքան խորհրդայնացումը տպագրված միակ հրատարակչական-գրավաճառչին զբաղմունքներն են։ Մեզ հայտնի են զբաղմունքների 1895, 1903, 1911, 1913 թթ. հրատարակությունները։ Գրաքննարկը նախ կոչվել է «Ցուցակ վաճառելի մատենից տպարանի մայր աթոռոյ Ս. էջմիածնի», ապա՝ «Ցուցակ Մայր աթոռի տպարանի գրատան վաճառելիք գրքերի»։ Գրաքննարկների ծավալը զնալով մեծացել է (13-ից մինչև 28 էջ)։ Նոր հրատարակություններով լրացվելու պատճառով, էստ որում, այս զբաղմունքների մեջ (մասնավորապես 1911 թվականից) քաջի էջմիածնի հրատարակություններից, տեղ են գտել նաև էջմիածնի ունեցած վաճառելի այլ գրքերի անուններ (յսև էջմիածնում հրատարակված մի շարք գրքեր, գլխավորապես հնատիպ, տեղ չեն գտել նրանցում)։ Ցուցակներում նշվում են գրքերի մասին հիմնական մատենագիտական տեղեկությունները, գինը։

ՀԱՅՈՑ ԳՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ

էջմիածինն ու Երուսաղեմը, ինչպես նաև Մխիթարյան դուլգ միաբանությունները գրավաճառությամբ զբաղվել են այնքանով, որքանով մշակութային-հրատարակչական կենտրոններ են եղել։

Գրավաճառությամբ զբաղվել են նաև մի շարք մասնավոր անձանց և կուսակցությունների հրատարակչություններ։ Ընդ առհասարակ հայոց մեջ գրավաճառությունը միշտ սերտորեն առնչվել է հրատարակչական պործի հետ՝ հրատարակիչները հաճախ միաժամանակ գրավաճառությամբ են լրգրադվել։

նդել են նաև զուտ գրվածառներ, այսինքն՝ այնպիսիք, որոնց առաջնային զբաղմունքը եղել է գրավաճառութունը: Իսկ այս դեպքերում էլ հաճախ գրավաճառը սկսել է զբաղվել: Նաև հրատարակչական գործունեությունը:

Հայ գրավաճառութունը շատ հնից է գալիս: Դա առանձին ուսումնասիրության մի քննադավառ է, որի վերաբերյալ անսլացման հետաքրքրական փաստեր Վնարավոր է հավաքել: Հին ու միջնադարյան ժամանակաշրջանում հայ գրչագրերի առ ու վաճառքը եղել է յուրովի և, անշուշտ, սահմանափակ շրջանակներում: Հայ տպագրության զարգացմամբ և մանավանդ Ամատերդամում Ոսկանյան տպարանի աշխատանքով է, որ գրավաճառութունը հայոց մեջ սկսում է նկատելիորեն ծավալվել: Նախապես գրավաճառությամբ զբաղվում էին նվերոպա մեկնող հայ (գլխավորապես՝ ջուղայեցի) վաճառականները, որոնք հայ տպագրիչների գրքերը նավով տեղափոխում էին Զմյուռնիա (երբեմն էլ Կ. Պոլիս) և այնտեղից փոխադրական տարբեր միջոցներով հասցնում Հայաստան կամ հայաբնակ վայրեր՝ Անատոլիայում, Պարսկաստանում: Ամատերդամի դիվանում պահպանվել են փաստաթղթեր, որոնք վկայություններ են տալիս հայկական տպարանի (Ոսկանյան և Վանանդեցիների) գրքերը հայ վաճառականների միջոցով ծովով Զմյուռնիա տեղափոխելու վերաբերյալ:

17 և մանավանդ 18-րդ դարերում հայերի մեջ զարգանում է շրջիկ գրավաճառութունը: Գրավաճառը շրջում էր ժողովրդի մեջ և առաջարկում կրոնական ու աշխարհիկ զանազան գրքեր: Ամենից ավելի վաճառվում էին նարեկ, Սաղմոսարան, Տօնացոյց, Պարզատումար «Պղնձե քաղաք», «Գիրք պատմութեան կայսերն ՓոնցիաՆոսի» («Ծօթն փմաստաւէրք») և այլ գրքեր:

Շրջիկ հայ գրավաճառները ավելի հաճախ գրքեր էին վաճառում եկեղեցիների բակերում, հատկապես տոն օրերին: Որոշ գրավաճառների տները գրախանութի դեր էին կատարում. գնորդները այցելում էին տուն և գնում ցանկացած դրքերը:

Հայ գրավաճառները որոշակի դեր են կատարել նաև տուանձին գրքերի հրատարակման գործում: Նրանք երևելով գնորդների պահանջից առաջարկել են, նաև համոզել հայ տպագրիչներին կամ հարուստ մեկենասներին հրատարակելու այս կամ այն շատ պահանջով գիրքը:

Երբ 18-րդ դարի սկզբներին Արևմտյան Եվրոպայի հայ տպագրության կենտրոնները փրենց դերը սկսեցին աստիճանաբար զիջել Կ. Պոլսի՝ տպարաններին, այս քաղաքում հայոց մեջ նկատելիորեն աշխուժացավ գրավաճառությունը: Պահպանվել են ստույգ վկայություններ 18-րդ դարի հայ գրավաճառների մասին: Հետաքրքրական են որոշ հնատիպ գրքերի հիշատակարաններում այդ մասին հղած տեղեկությունները: Օրինակ, 1737 թվականին Կ. Պոլսի տպարանատեր Աբրահամ Թրակացու հրատարակած «Պատմություն երջանիկ վարուց և մահուան երանելի առն Աստուծոյ սրբոյն մեծի ներսէսի» (Մեսրոպ Երեցի) գրքի հիշատակարանում խոսք կա գրածախ Հարությունի մասին. «Ընդ որս յիշեսչիք և ՎՊուտաղոզլու տիրացու Յակոբի որդի ղտիրացու Գրիգորն, և զգրածախ տիրացու Յարութիւնն, որ զօրինակսն ետու»:

Վերջին արտահայտությունից իրևում է, որ գրավաճառը մասնակցել է գրքի հրատարակմանը:

Կ. Պոլսի հայտնի տպագրիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում 1740—1741 թվականներին տպագրված «Գիրք արամեոգրեան կայսերն Փոնցիանոսի» գրքի հիշատակարանից իմանում ենք ժամանակի մի այլ գրավաճառի մասին՝ Մանուկ անունով, որի խորհրդով էլ Աստվածատուրը ձեռնամուխ է եղել հիշյալ գրքի հրատարակմանը. «Արդ՝ որ հանդիպիք սմա ընթեռնելով կամ զբոզնելով՝ յիշեսչիք ղպատ-

1 Ամստերդամում հայկական տպագրությունը դադարել է 1717 (կամ 1718) թ., Վենետիկում 18—19-րդ դարերում հայկական տպագրությունը շարունակել է վերելք ապրել, սակայն հրատարակված հայերեն գրքերի ու պարբերականների քանակով հայ տպագրության օրրանն էլ իր առաջնությունը զիջել է Կ. Պոլսին:

Հառն տպեցման սորին զրաժանառ արգրումեցի եղբայր Մանուկն զի և դուք չիշեցեալ լինջիք ի բարին»։ Այս գրաժանառ Մանուկը հիշվում է նաև նույն Աստվածատուրի կողմից 1741-ին հրատարակված մի այլ գրքի՝ Եփրեմ Խուրի Ասորու «Գիրք աղօթից»-ի հիշատակարանում. «...յիշեցէք ի Քրիստոս դցանկացող աղօթիս և զտպելն տուող զկարնեցի քարագործ Ղազարի որդի զգրաժանառ եղբայր Մանուկն»։

19-րդ դարում Կ. Պոլսի մեջ գրաժանառությամբ զբաղվել են շատերը, հայտնի են խղել Քիթապչի Մարգարը, Հարություն Մարգարյանը (Մեծան շուկայում), վազմարար Պաղտասար Սրապյանը (որ նշանավոր հայ տպագրիչ Հ. Մյուհենտիսյանի գրաժանառն էր), կազմարար Պասյա-Պանիեյր (մեծ շուկայում), հնաժանառ Մարտիրոսը և ուրիշներ¹։

Ամենից նշանավոր գրաժանառը խղել է Քիթապչի Մարգարը, որի անունը շատ հայտնի դարձավ հայ գրագետ աշխարհում։ Ծնվել է Կ. Պոլսում 1789 թ.² առևտրականի ընտանիքում, 1805 թվականին հիմնում է իր գրախանութը կամ գրատունը Աբրահամ ամիրայի տպարանի մոտ։ Սա առաջին իսկական գրախանութն էր, որ զբաղվում էր հայերեն գրքերի վաճառքով, նախքան այդ հայ գրքեր վաճառող հասուկ գրախանութներ իբրև այդպիսիք չեն եղել կամ, առկա չի ճիշտ, չեն հիշատակվում։ Մարգարը իր այդ գրատունը մի քանի տեղ փոխադրելուց հետո հաստատվում է Մեհմեդ կոչվող բազմամարդ շուկայում և այնուհետև իր գրությունները ստորագրում է Մարգար գրաժանառ ի Մեհմեդն»։

Մարգարի համբավը տարածվում է ոչ միայն Կ. Պոլսի

¹ Հետաքրքրական է, որ նշանավոր գրագետ Մեսրոպ Թադևոզյանը Կ. Պոլսում եղած ժամանակ (1830-ական թվականների վերջերին) նույնպես զբաղվել է գրաժանառությամբ (տե՛ս Ա. Այվազյան Շար հայ կենսագրությանց, Հտ. 2, Կ. Պոլիս, 1893, էջ 9—10)։

² Մարգարի կենսագրությունը մանրամասն և շատ գրավիչ ձևով տրված է Ա. Այվազյանի «Շար հայ կենսագրությանց»-ի վերահիշյալ 3-րդ հատորում (որոշ անճշտություններ կան, օրինակ, Մարգարի ծննդյան թվականը գրված է 1799, պետք է լինի՝ 1789)։

զավառներում, այլ առհասարակ ամեն տեղ, ուր հայ մշակութային կյանք կար: Նրա դերը մեծ է լինում հայ գրքի ու մամուլի տարածման գործում:

Մարգարի գրախանութը ասիական լրերոռչ տեսք ու բնույթ է ունեցել: Ահա թե ինչպես է նկարագրում Մարգարի կենսագիրը նրա հայտնի դարձած գրախանութը. «...խանութին գրոց շարքին և դատքին վրա որոշ զաղափար ունենալու համար՝ պետք է տեսած լլլալ այժմու սահմանփ կոչեցյալ գրավաճառանոց կրպակներուն ընդարձակագույնը, որուն մեջ գրատերը ծալապատիկ նստած, դիրք կը վաճառե:

Այսպես ալ Մարգար՝ սույն ոճով յուր խանութին կեդրոնը կը նստի ձեռք, գրքերն յուր շուրջը՝ դետնի երես խառն ի խառն՝ դիզած: Եվ հաճախորդ մը եկած ատեն Մարգար առանց մտածելու, այնչափ փառալույս գրոց մեջեն ուզած գիրքն անմիջապես կը հաներ և կը հանձնէր խնդրողին»¹:

«Իսկ եթե որեէ գրքի մը խնդրարկուն որոշյալ գնեն պակաս վճարել ուզեր և կամ ճեռիմեն (տուգանք) ինչ է» ըսելով նեղեր, գիրքն անմիջապես ձեռքն կ'առնէր և խանութին մեկ կողմը կը նետէր, «գինը, վարձը այս է. ճեռիմե չէ, հասկցա՞ր մի, հասկցա՞ր մի» իր գործածական փոսքը մրթմրթալով: Եվ բազում թախանձանքն վերջ խնդրարկուն հաղթիվ կը կարողանար հաճեցնել զՄարգար և գիրքն առնուլ:

Կըսվի, թե երբ տան մը մեջ կամ մեկու մը վրա խառնակություն մը տեանվեր, իսկույն «Քիթապճի Մարգարին խանութը դարձեր է» կըսեն²:

Ուրիշ ատեններ խանութը կըդալելով՝ Կերթար Պեքճի-Պաշի փառն և մինչև 4—5 հաճախորդ շիններ և խոսակից քարեկամները գինքը շատիպին, չէր երթար բանալ գրատունը, ուզած գրքերը տալու համար:

Եվ զարմանալին այն է, որ Մարգար այն պահուն անտարբեր կ'երպիվ հաճախորդին դառնալով «աղվո՛ր, վաղը

1 Ա. Այվազյան Նշվ. աշխատութ. էջ 17:

2 Նույն տեղում, էջ 18:

հկուր, այսօր ծախու գիրքը շունիմ» բանաձևը կը քաշեր. և կամ հաճախորդը պետք էր սպասեր, որ Մարգար յուր կրկ-լակը լմնցնէ, քեֆն ընէ, ըսելով, թէ «ես այս պատվելի քա-րեկամները շեմ կրնար քո պրամին հետ փոխել. գնա ու հետդ էկուր, աղվուր»¹,

Եվ այնուամենայնիվ, Մարգարի այսպիսի գրախանութը հռչակ է ձեռք բերում, իսկ ինքը Մարգարը այնքան է առա-ջադիմում գրավաճառութեան ասպարեզում, որ կառավարու-թյան կողմից հայ «քիթապիսներին» ղեկավար է նշանակվում:

Մարգարը գրքեր էր գնում հեղինակներից, հրատարակիչ-ներից, այլ գրավաճառներից և վաճառում գրանք թե՛ ստեկա, թե՛ հեռակա կարգով: Նա կապ է ունեցել բազմաթիվ հայ առաջնորդարանների, դպրոցների, վանքերի, գրադարանների ու գրատների և անհատների հետ: 19-րդ դարի առաջին կեսի շատ գործիչներ են ձգտվել Մարգարի ծառայութուններից, դրանցից են էջմիածինի Դանիել և Եփրեմ կաթողիկոսները, Շուշիի միտրոպոլիտ Հասան Զալալյանը, բանասերներ Հովհ. Շահխաթունյանցը, Մանվել Գյումուշխանեցին, Շահան Զըր-պետը, բանաստեղծ Հարություն Ալամդարյանը, Պետերբուր-գի տպարանապետ Հովսեփ Հովհաննիսյանը, Նշանավոր գոր-ծիչներ Մ. Արղոսթյանը, Ռ. Մադաթյանը, Բ. Բեքրությանը, Հ. կազարյանը (համառոտ ճեմարանի հիմնադիր), Խ. կա-դարյանը, Գեորգ Արծրունին (Ներսիսյան դպրոցի տպարանի համար տառեր հայթաթողը) և շատ ուրիշներ: Նրանք բո-լորը գրավաճառ Մարգարի հետ սերտ կապեր են ունեցել, նրանից գնել և նրան են ուղարկել գրքեր: Վենետիկ, Վիեն-նա, Զմյուռնիա, Երուսաղեմ, Պետերբուրգ, Աստրախան, Ն. Նախիջևան, Թիֆլիս, էջմիածին, Երևան, Շուշի, Ն. Զուղա, Կալկաթա, Մադրաս և շատ ուրիշ վայրեր են գնացել Մար-գարի գրատան հայերեն գրքերը, և այդ վայրերից այլ գրքեր եկել դեպի Մարգարյան գրատուն: Այնքան ընդարձակ են եղել Մարգարի կապերը, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքա-

¹ Նույն տեղում, էջ 19:

րանը այս կամ այն երկրի որեւէ հայազգի անձնաւորութեան մասին Մարգարից էր տեղեկութիւններ հարցնում:

Ամսական 100—150 ռսկու գրքի առևտուր է արել Մարգարը: Նրա առաջարկով Կ. Պոլսի տրոշ հայ հարուստներ վճարել են մի շարք հայերեն գրքերի հրատարակման դրամը:

Մարգարը գրադվել է նաև թուրքերեն և հայատառ թուրքերեն գրքերի վաճառքով:

Իր որդուն և հաջորդին՝ Հարությունին Մարգարը տվել է այսպիսի պատգամ. «Տղաս, գրավաճառութեան պայմանն է կարգալ գրոց հառաջաքանն, հիշատակարանն և ցանկը, աչքե անցանել հետաքրքրական մասերը, ծանոթանալու գրքին և ծանոթացնելու զայս հաճախորդաց»: Այլ խոսքով, գրավաճառը իր վաճառելի բոլոր գրքերը կարգալու ժամանակ չի կարող ունենալ, քայց նա պարտաւոր է գրքի մասին ծանոթութիւններ տալ գնորդին, և Մարգարը ցույց է տալիս ճիշտ ուղին:

Մարգարը մահացել է 1845 թվականին (հունիսի 3-ին)՝ թողնելով բազմանգամ ընտանիք: Հաղիվ լին հնարավոր լինի գերազնահատել գրավաճառ Մարգարի դերը հայ գրքի տարածման գործում: Գրավաճառութիւնը, որ Եվրոպայում վաղուց ի վեր մշակութային կարեւոր դեր էր կատարում, հայոց մեջ նման որոշ դեր սկսում է կատարել Մարգարյան գրատան հիմնադրման ժամանակներից:

Անշուշտ, այստեղ գլխավոր մղիչ ուժը շահն է եղել, սակայն հաղիվ լին ճիշտ լինի ամեն մի գրավաճառի մեջ սոսկ շահամոլին տեսնելը: Բացի այդ, անկախ գրավաճառի շահադիտական միտումներից նրա գործի հետևանքը առարկայորեն ինքում վեր հայ գրքի տարածումը, ընթերցող հայութեանը, այդ թվում սովորողներին, գիտնականներին գրողներին ու լրագրողներին անհրաժեշտ գրքեր մատակարարելը:

Մարգարի գրատանը կարելի էր գտնել հայ բոլոր տպագրական կենտրոններում հրատարակված գրքեր, սկսած Հակոբ Մեղապարտի հրատարակութիւններից մինչև տպարանից նոր դուրս եկած գրքերը:

Գրատունն ունեցել է նաև ոչ քիչ թվով հազվագյուտ ձեռագրեր: Ի դեպ, այդ ձեռագրերի հիմնական մասն է, որ լճարգարի որդին՝ Հարություն Մարգարյանը հոր մահից հետո վաճառել է Փարիզի կայսերական թանգարանին, որի շնորհիվ եվրոպական բանասիրության մի շարք գյուտեր արեց, ու հայ մշակույթի համբավը է՛լ ավելի տարածվեց նվրդալուծ:

19-րդ դարի երկրորդ կեսին Մարգարյան գրատունը, որ ղեկավարվում էր Հարություն Մարգարյանի կողմից, աստիճանաբար ավելի արդիական է դառնում:

Գրատունը ուներ տպարան և զբաղվում էր նաև հրատարակական գործունեությամբ՝ գլխավորապես լույս ընծայելով հայկական դպրոցների մի շարք դասագրքեր: Հրատարակում էր նաև առավել հայտնի հեղինակների և առհասարակ ընթերցողներին հետաքրքրող գրքեր: Գրատունը շարունակում էր պահպանել իր կապերը աշխարհի հայկական ամենատարբեր կենտրոններում՝ հղած դպրոցների, գրատների, անհատների հետ, գնում էր նրանցից և վաճառում նրանց գրքեր ու պարբերականներ, կատարում էր հազվագյուտ գրքերի ձեռք բերելու պատվերներ:

Հատկապես նշանակալից է եղել գրատան դերը Կ. Պոլսի և գավառների հայկական դպրոցներին դասագրքեր մատակարարելու գործում: Դպրոցների համար գրավաճառատունը ստեղծել էր մի շարք արտոնյալ պայմաններ դասագրքեր ձեռք բերելու համար:

Գրատունը կատարել է նաև մատենագիտական աշխատանք՝ գեորդների և տարբեր ընթերցողների պատվերով տեղեկանքներ է տվել հնատիպ և հազվագյուտ գրքերի վերաբերյալ:

Մատենագիտական աշխատանքի մի տեսակն էլ գրացուցակներ հրատարակելն է, անշուշտ: Մեզ հաջողվեց ծանոթանալ Մարգարյան գրատան երեք գրացուցակների, որոնցից երկուսը անթվակիր են, մյուսը 1900 թ. հրատարակություն: Անթվակիրներից մեկը շատ փոքր է (8 էջ), մյուսը

քիչ ավելի մեծ (38 էջ) և կոչվում է Համառոտ գրացուցակ Մարգարյան գրատան հաստատվալ 1805. Կ. Պոլիս, Մերճան փողոց, թիվ 57: Տպագրութ. Մարգարյան:

Այս գրացուցակի տպատառերը և ընդհանրապես տպագրությունը շատ տարբեր են 1900 թ. հրատարակված Մարգարյան գրացուցակից: Նրևում է, որ ավելի վաղ ժամանակի հրատարակությունն է: Սակայն նշված գրքերը (կան 1880-ական թվականների հրատարակություններ), ինչպես և Գ. Զարբհանալյանի մատենագիտության հիշատակումը գրացուցակի վերջում եղած ծանուցման մեջ ցույց են տալիս, որ գրացուցակը տպագրվել է կամ 1880-ական թվականներին և կամ 90-ականի սկզբներին:

Մարգարյան գրատան այս անթվակիր գրացուցակը երեք բաժին ունի՝ ա) Դասական գրյանք (ուր դասագրքեր են, հին մատենագիրների երկերը և այլն), բ) Բառարանք, գ) Զանադան գրյանք, դ) Հայատառ տաճկերեն:

Գրացուցակի վերջում եղած ծանուցման մեջ ասված է, որ տվյալ համառոտ գրացուցակը քաղված է գրատան ունեցած ընդարձակ ցուցակից: Գրատան վաճառելի գրքերի մասին ավելի մանրամասն տեղեկանքներ ստանալու համար զնորդին խորհուրդ է տրվում դիմելու Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտությանը»:

1900 թ. տպագրված գրացուցակը կոչվում է Գրացուցակ Մարգարյան գրատան, հիմնված 1805-ին (56 էջ):

Մենք փոքր-ինչ մանրամասն խոսեցինք Մարգարյան գրատան մասին, որպեսզի մի որոշ պատկերացում ստեղծվի 19-րդ դարի հայ գրավաճառության վիճակի ու զարգացման մասին, մանավանդ, նկատի ունենալով այդ գրատան կարևոր դերը հայ գրքի տարածման գործում:

Կ. Պոլսի մյուս հրատարակիչներից ու գրավաճառներից դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին գրացուցակներ հրատարակել են Հովսեփ Գավաթյանի՝ 1860-ին հիմնադրած և նրա հաջորդ Պողոս Պալենցի գրատները: Վերջինս գրավաճառական մեծ գործունեություն է ծավալել և տպագրել է զգալի

թվով գրացուցակներ՝ Բրացուցակ Պողոսի Պալենց գրատան», Բլնդարձակ գրացուցակ Պ. Պալենց գրատան», ԵՀամառոտ գրացուցակ Պ. Պալենց գրատան», ԲՊ. Պալենց գրատան դասագրքեր...» վերնագրերով, Շուրջ 20 անգամ գրատունը հրատարակել է տարբեր ծավալի (16-ից մինչև 250 էջ) իր գրացուցակները՝ և ապա 1920 թվականից գրատունը, շարունակելով գործել, դարձյալ տպագրել է գրացուցակներ², որից հետո անցել է Սարգիս Հակոբյանին:

Կ. Պոլսում մի շարք գրացուցակներ է հրատարակել Սմբատ Դավթյանի (1892-ին հիմնված) գրատունը: Ս. Դավթյանը, որ մի շարք արևմտահայ դասագրքերի, այդ թվում քերականության հեղինակ է, նաև մանկական րանաստեղծ, մինչև համաշխարհային առաջին պատերազմը հրատարակել է (մեր հաշվումներով) ութ գրացուցակ³ (ԵՀայտագիր-գրացուցակ Դավթյան գործակալության», ԵԿրթական հրատարակչական գործակալություն Ս. Դավթյանի», ԵԼիակատար գրացուցակս վերնագրերով):

Բրացուցակներ է հրատարակել Պ. Պաղտատլյանի նշանավոր գրատունը: 19-րդ դարի վերջերից մինչև 1923 թ. հինգ գրացուցակ է լույս ընծայել Կ. Պոլսի Աշխյան գրատունը՝ Բլնդարձակ գրացուցակ» և Պողոսի Բրացուցակ» վերնագրերով⁴: Կ. Պոլսում իր հայերեն հրատարակությունների գրացուցակներն է տպագրել նաև Ամերիկյան աստվածաշնչալիքն ընկերությունը⁵:

Դարակապտիկ Կ. Պոլսում գրացուցակների հրատարակումը քավական աշխուժանում է, դրա պատճառներից էր նաև

¹ Այդ հրատարակածներից մեզ ծանոթ են 1892, 1894, 1895, 1897, 1898, 1901, 1902, 1908, 1909, 1910 (այս թվին տպվել է երկու գրացուցակ՝ Համառոտ և Բլնդարձակ), 1911, 1912, 1913 թվականներին:

² 1921, 1922, 1927 թվականներին և այլև:

³ Մեզ ծանոթ են 1901 և 1905 թթ. հրատարակությունները:

⁴ Մեզ ծանոթ են չորսը՝ 1897, 1902, 1910, 1923 թթ. հրատա:

⁵ Մեզ ծանոթ են այս ընկերության չորս գրացուցակներ՝ մեկն անթվակիր, մյուսները 1877, 1881, 1903 թթ.:

Սահմանադրության ընդունումը և հայ տպագրության աշխու-
ժացումը: Երևան են գալիս մի շարք այնպիսի գրավաճառ-
ների գրացուցակներ, որոնց գործունեության զարգացումը
կապված է տարածվող հետ: Կ. Պոլսի հայ գրավաճառների
մեջ նկատելի դիրք ստացավ գրավաճառ-հրատարակիչ Հով-
հաննես Գրլըճյանը, որը 1902 թ. հիմնեց իր գրատունը և
մինչև պատերազմի սկիզբը լույս ընծայեց 13 հիմնական և
մի քանի ուղեկից գրացուցակներ¹, «Շրջաբերական գրացու-
ցակ», «Գրացուցակ Հովհաննես Գրլըճյան գրատան» և այլ
վերնագրերով, 1914 թ. հրատարակվածը կոչվում է «Պատկե-
րազարդ ընդարձակ գրացուցակ» (182 էջ) և կապված է
խնամքով, գրավիչ է գեոդոնների համար:

Նույն շրջանում Կ. Պոլսում գրավաճառությամբ զբաղվել
են և իրենց գրացուցակները հրատարակել մի շարք
ուրիշ գրավաճառանոցներ, այդ թվում՝ «Արշալույս», «Եփ-
րատ», «Գարուն», «Արամազդ», «Բյուզանդյան», «Վրդպակա-
ր» (Ա. Պիպեռճյանի), «Արծիվ» գրատները, «Ազատութուն»
մատենադարանը և այլն: Վերջին երկուսը հիմնվել են
1908 թ. սահմանադրության ընդունած իրավունքով և վա-
ճառել են ազգային-հեղափոխական բնույթի գրականությու-
նը:

Կարելի է հիշատակել նաև Պ. Զարդարյանի և Ա. Յաղըճ-
յանի գրատները, որոնք իրենց գոյությունը շարունակեցին
նաև 1920-ական թվականներին: Դրանցից երկրորդը մինչև
1915 թ. տպագրել է 4 գրացուցակ (և սույն 4 գրացուցակ էլ
մինչև 1928 թ.):

Մենք արդեն խոսել ենք Վ. Զարդարյանի «Գրացուցակ
և որ հրատարակության» մատենագիտական պարբերականի
մասին, որն ըստ Գ. Լևոնյանի տեղեկության հրատարակվել
է 1893—1894 թթ. Կ. Պոլսում և տեղեկատվություն է հա-
յարակել հայ տպագիր արտադրանքի մասին:

1 Մեր ձեռքին եղել են 1909, 1910, 1911, 1913, 1914 թթ. հրատա-
րակությունները (առաջինը 8-րդ հրատարակությունն է, վերջինը 18-րդ):

2 «Արծիվ» գրատունը մի ընդարձակ գրացուցակ (112 էջ) է տպա-
գրել 1913-ին, որը սակայն «Համառոտ գրացուցակ» վերնագիրն ունի:

19-րդ դարի երկրորդ կեսում հայ տպագրութեան երկրորդ կենտրոնը (Կ. Պոլսից հետո) եղել է Թիֆլիսը, հասկանալի է, որ այս քաղաքը պետք է ընենր նաև հայ գրավաճառութեան երկրորդ կենտրոնը:

Թիֆլիսի հին գրավաճառներից էին, ինչպես արդեն գիտենք, Ավետիք և Համբարձում էնֆիաճյանները: Սրանց գրատունը մեծ դեր կատարեց ինչպես հայ տպագիր գրքերի, այնպես էլ հին ձեռագրերի հավաքման և, պետք է ասել, նպատակաւաքց վաճառքի գործում: Էնֆիաճյանները տարբեր աղբյուրներից ձեռք բերած առավել արժեքավոր հայ ձեռագրերը և տպագիր գրքերը (հատկապես հնատիպերը) վաճառում էին այնպիսի գրադարանների, ինչպիսիք են Լազարյան ճեմարանինը կամ ներախլան գլորոցինը: Դրանով արժեքավոր հայերեն գրքերն ու ձեռագրերը հավաքվում էին ուսումնական կենտրոններում և օգտագործվում ուսումնական-գիտական նպատակներով: Հետագայում էնֆիաճյանների վաճառած այդ գրականութեան զգալի մասը վերահիշյալ գրադարաններից տեղափոխվեց Հայաստան և միացվեց Հանրալին գրադարանի կամ Մաշտոցյան Մատենադարանի գրական ունեցվածքներին:

19-րդ դարի երկրորդ կեսում Թիֆլիսում գործել են նաև մի շարք ուրիշ գրավաճառանոցներ, այդ թվում Զաքարիա Գրիգորյանցի և Ընկ. Կովկասյան կոշվող գրավաճառանոցը, Ալադաթյանի գրատունը, Կենտրոնական գրավաճառանոցը և արև:

Վերջինս 1880-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկիզբը եղել է Թիֆլիսի ամենից ավելի աշխույժ գործող գրավաճառանոցը: Այն հրատարակել է մի տասնյակից ավելի գրացուցակներ¹, որոնք կոշվում էին Կենտրոնական գրավաճառանոցի հայերեն գրքերի ցուցակ: Նրանք լուրջը առք բնական կառուցվածք ունեն և տարբեր մեծութեան են (մինչև 100 և ավելի էջեր):

¹ Մեզ ծանոթ են այս գրավաճառանոցի 1882, 1885, 1891, 1894, 1895 (շրտս անուն), 1898, 1904 թվականների և մի անթվակիր գրացուցակներ:

Գրացուցակներ տպագրում էին ոչ միայն Թիֆլիսի գրավաճառները, այլև գրավաճառությամբ զբաղվող հրատարակիչները:

Հրատարակչական-գրավաճառային մի շարք գրացուցակներ տպագրված են Թիֆլիսահայ մամուլի էջերում: Օրինակ, «Ի. Տեր-Միքայելյանի գրավաճառանոցի գրքանց ցուցակը (գրավաճառանոցի սեփական տպագրությունը)» տպված է «Մեղու Հայաստանի» 1866 թ. 6 և 7 համարներում (էջք 48, 56) կամ վերոհիշյալ Զաքարիա Գրիգորյանցի և ընկ. գրավաճառանոցի «Ցուցակ հայերեն գրքերի»-ն տպագրված է «Փոքրի» 1876 թ. № 1-ում (էջ 485—488) և այլն:

Կար գրացուցակներ հրատարակելու նաև մի այլ եղանակ՝ գրքերի շապիկների կամ վերջին էջերի վրա: Սակայն կա և ուղղակի գրքի մեջ հրատարակված գրացուցակ. փոսքը վերաքերում է նշանավոր գրող Նար-Դոսի հեղինակած «Քսան և հինգ ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի (1883—1908)» գրքում (Թիֆլիս, 1908) տեղ գտած հրատարակչական գրացուցակին (էջ 33—40), որի հեղինակը հավանաբար նույնպես Նար-Դոսն է: Գրացուցակը առանձին բաժիններով ներկայացնում է «Աղբյուրի» հրատարակիչ Տիգրան Նազարյանի հրատարակած գրքերը, պարբերականները, օրացույցները, ամսանախները, ամբողջները, պատկերները, բացիկները և այլ նյութեր: Ի դեպ, գրքի երկրորդ մասում («Աղբյուրը 25 տարում») մի շարք հետաքրքրական տեղեկություններ կան հայ պարբերական մամուլի մասին:

1900 թվականին Թիֆլիսում հիմնվում է «Գուտենբերգ» գրախանութը, որը աշխույժ գործունեություն է ծավալում մինչև համաշխարհային պատերազմը: Հայերեն վաճառելի գրքերի վերաքերյալ տեղեկատվության նպատակով խառնութի հրատարակած շուրջ մի տասնյակ գրացուցակներ պետք է լինեն¹: Այս գրացուցակները նույնպես այբբենական վառուցվածք ունեն, թեև գրքերի նկարագրությունները միշտ չէ որ կարող են բավարար համարվել (չեն նշվում, օրինակ, գրքերի հրատարակության թվականները):

¹ Այլ. Մյասնիկյանի անվ. գրողարանում ծանոթացանք այդ գրախա-

Դատարակգրին Թիֆլիսում գործող հրատարակչություններին և գրավաճառանոցներին հայերեն գրացուցակներ հրատարակել են նաև «Գիրք» գրավաճառանոցը¹ և Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը, Վերջինիս 1914 թ. հրատարակած ոչ մեծ գրացուցակը աչքի է ընկնում իր լավ ձևավորմամբ, հրապուրիչ տեսքով։ Գրացուցակը մեծ չէ (22 էջ), բայց կազմված է այնպես, որ ընթերցողի մեջ հետաքրքրություն է արթնացնում վաճառվող գրքերի նկատմամբ։ Դրված են հայ հեղինակների նկարները, գրքերի մի մասը ունի լավ կազմված ծանոթագրություններ և այլն։

Ուշագրություն արժանանկաշրջանում հայերեն գրացուցակներ տպագրվել են նաև աշխարհի այլ վայրերում գործող հրատարակչությունների և գրավաճառանքի կողմից։ Դեռևս 1865 թվականին Թեոդոսիայի խալիպյան վարժարանը լույս ընծայեց «Ծուցակ մատենից, որ վաճառին ի գրասենեկի հաշիպան ուսումնարանի աղգիս հայոց»։ Իր գրացուցակներն է հրատարակել (1871, 1873 թթ.) Հովհաննես Տեր-Արքահամյանի գրատունը Նոր Նախիջևանում։

Կան նաև այլ երկրներում հրատարակված հայերեն գրացուցակներ, լիդպես, օրինակ, Մարսելի «Արմենիա» շաբաթաթերթի խմբագիր Մ. Փորթուզայանի 1891-ին հրատարակած գրացուցակը («Գրացուցակ Արմենիա»-ի խմբագրատան», 88 էջ), ուր շաբաթաթերթի ընթերցողներին առաջարկվում են խմբագրության ունեցած գրքերը, Բոստոնի «Հայրենիքի» գրավաճառական քաժնի գրացուցակը² և այլն։

Մինչև 1920 թ. հայ գրավաճառանոցներ եղել են նաև Հնդկաստանում (օրինակ, էլիադ Ավդալյան Եիրազցու գրատունը), Զմյուռնիայում, Եգիպտոսում և այլուր։ Հավանական է, որ որոշումները հրապարակ բերեն նաև այդ վայրերում հրատարակված գրացուցակներ։

նույն երկու անթվակիր և 1908, 1910, 1911, 1914 թվականներին հրատարակված գրացուցակներին։

¹ Մեզ ծանոթ են այս գրավաճառանոցի գրացուցակներին երկուսը (1912, 1913 թթ.)։

² Մեզ ծանոթ է 1913 թ. հրատ.

ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Ձեռագրացուցակները հայ մատենագիտության մեջ ուրույն տեղ են զբաղում: Նրանց գլխավոր նպատակը նույնն է, ինչ որ ամեն մի մատենագիտությանը՝ տեղեկատվությունը: Մյուս կողմից, քանի որ այս դեպքում տեղեկատվությունը վերաբերում է հին ձեռագիր գրքերին՝ գրագրերին և նրանց նյութերին, ապա ձեռագրացուցակների կազմումը պահանջում է ոչ միայն մատենագիտական, այլև ձեռագրագիտական ու բանասիրական լուրջ գիտելիքներ ու հմտություններ:

Ձեռագրացուցակները տեղեկատվություն են պարունակում հին գրագրերի, նրանց արտաքինի (չափ, գրանյութ, կազմ և այլն), դրի, նկարազարդման, ընդօրինակման վայրի, ժամանակի, ընդօրինակողների և մանավանդ թվանդակության՝ ձեռագիր մատյանների պարունակած նյութերի մասին: Հայերեն հին ձեռագրերը շատ կողմերով նման են այլ լեզուներով ստեղծված ձեռագրերին, բայց և ունեն իրենց առանձին հատկանիշները՝ (լեզուն, տառերի, զարդերի ազգային քնույթը, մի շարք դուրս հայկական վրամ հայություն մեջ տարածված քնագրեր, ձեռագիր տառքեր ժողովածուների բովանդակության առանձնահատուկ բնույթը, նյութերի կազմը, հիշատակարանների քնույթը և այլն): Հայկական ձեռագրացուցակները նույնպես շատ կողմերով նման լինելով այլ ազգերի ձեռագրացուցակներին (ամենամեծ նմանությունն այն

է, որ բոլոր ձեռագրացուցականները մատենագիտական ցանկեր էն)՝ նաև յուրահատկություններ են ունենում (ժնագրերի թվարկման և առանձնացման, ձեռագիրը ստեղծող և պահպանող անձանց նշման որոշ հարցերում և այլն)։ Այդ յուրահատկությունները երբեմն բխում են հայերեն ձեռագրերի առանձնահատկություններից, երբեմն էլ հայոց բանասիրության առանձին հետաքրքրությունների արտահայտումն են լինում։

Թեև հայկական ձեռագրացուցականները ընդհանուր են շատ կողմերով, քայքայ հաճախ նաև ոչ քիչ տարբերություններ են ունենում ձեռագրերի նկարագրության, նրանցում հղած նյութերի ներկայացման, բնագրերի բացահայտման ծավալի ու որակի խնդիրներում։ Կան ձեռագրացուցականներ, որոնք գրչագիր մատյանների սոսկական թվարկում են, կան և այնպիսիները, որոնցում մեկ-մեկ բնութագրվում են գրչագրերի մեջ հղած նյութերը, նշվում են նրանց հեղինակները, բերվում են ոչ միայն բնագրերի վերնագրերը, այլև՝ սկզբնատողերը, քաղվում են հիշատակարաններն ու հիշատակագրությունները և այլն։ Հաճախ մատենագետը բանասիրական մեծ ճիգեր է գործադրում այս կամ այն քննադրի ճիշտ հեղինակը որոշելու կամ առանձին բնագրեր իրարից տարբերելու ու ճանաչելու համար, հարկ է լինում ծանոթագրությունների, որոնք երբեմն փառական ընդարձակ են լինում։

Հայ գրացուցականները մեծ մասամբ գրացուցակային (կատալոգային) բնույթի մատենագիտական աշխատություններ են, այսինքն՝ ներկայացնում են որևէ հատկանիշով տահմանափակված ձեռագրական հավաքածուներ, այն է՝ որևէ գրադարանի, անհատի կամ որևէ քաղաքի, երկրամասի հայերեն ձեռագրական հավաքածուները։ Բայց լինում են նաև որևէ որոշակի ձեռագրական հավաքածու (կամ որևէ փայրի հավաքածուներ) նկատի շնչեցող, այլ անհատական ձեռագրացուցականներ (օրինակ, Խորենացու ժշպոց պատմության ձեռագրերը, Փավստոսի ձեռագրերը), ինչպես նաև ըստ բո-

վանդակության ձեռագրացուցակներ (օրինակ, բժշկական, փիլիսոփայական ձեռագրերի և այլն)։

Ձեռագիր մատյանները հին ժամանակների գրքերն են հղել։ Ամենատարբեր բովանդակություներ ունեցող ձեռագրեր էին գրվում և ընդօրինակվում։ Այն ժամանակներում, ինչպես գիտենք, նույնպես կազմվել են ձեռագրացուցակներ (օրինակ, Սաղմոսավանքի, Բաղնիի Ամրդուլու վանքի գրադարանի և այլ գրացուցակներ)։ Սակայն այդ ձեռագրացուցակները այսօրվա գրադարանային գրացուցակների կամ գույքամատյանների արժեքն ունենին։ Երբ ասպարեզ եկավ տպագիր գիրքը գրացուցակներում ձեռագրերի կողքին սկսեցին երևալ նաև տպագիր գրքեր։ Տեսանք, որ արդեն 17-րդ դարում Վարդան Բաղիշեցու կազմած գրացուցակում (Ամրդուլու վանքի) ձեռագիր մատյանների կողքին նշված էին նաև տպագիր գրքեր։ Այդպես շարունակվեց մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը։ Տեսանք նաև, որ Ա. Խուդաբաշյանի գրադարանի 1839 թ. հրատարակված գրացուցակում ներկայացված էին գրադարանի տպագիր ու ձեռագիր գրքերը, նույնն էր նաև Էջմիածնի մատենադարանի՝ Մ. Բրոսյանի կողմից հրատարակված գրացուցակում։ Ավելի ուշ լրջանում էլ հրատարակվում էին գրացուցակներ, որոնցում ներկայացված էին լինում և տպագիր, և ձեռագիր գրքեր (օրինակ, Լազարյան ճեմարանի գրացուցակները)։

Իսկ որոշ բաղնասենյակներ, հատկապես եվրոպացի արևելագետներ առանձին նշանակություն տալով հայ ձեռագրերին սկսում են նկարագրել միայն ձեռագրեր։ Դա արդեն զուտ հայագիտական մոտեցում է, այսինքն՝ ձեռագրացուցակը սովորական գրադարանային տեղեկատու չլինելուց թացի դառնում է ավելի շատ հայագիտական տեղեկատու։ Հայագետ քանասերի համար, Հայագիտական նկատառումով եվրոպացիների կազմած հայերեն հին ձեռագրացուցակներից են (գուցե հնագույնը) Փարիզի կայսերական գրադարանի 1739 թ. հրատարակված գրացուցակներում տեղ գտած հա-

յերեն ձեռագրերի ցուցակները (կազմված ֆրանսիացի արեւմեացեալ Գրեգորի Գ. Վիլֆրուայի կողմից 1735 թ.)¹։

Ձեռագրացուցակներից մեկում ընդգրկված է հայերեն 128, մյուսում, որ կայսերական գրադարանի ամբողջական գրացուցակի մի հատորն է՝ 138 հայերեն ձեռագիր (հավելվածում ևս 7, ընդամենը 145)։

Երբեմն էլ եվրոպացիները հայերեն ձեռագրերի մասին խոսում են ճանապարհորդական նոթերում։ Ֆրանսիացի գիտնական Վիկտոր Կանգլուան 1855-ին հրատարակած իր «Ուղեւորութուն դեպի Սիս՝ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքը» գրքուկի մեջ² դրել է հայերեն ձեռագրերի մի պարզ ցուցակ (ձեռագրերի վերնագրերը թարգմանված են ֆրանսերեն)։

Հայերեն հին ձեռագրերի ցուցակները աստիճանաբար ավելի ու ավելի էին հայագիտական նշանակութուն ձեռք բերում, եթե միջնադարում և նույնիսկ 19-րդ դարի առաջին կեսում հայկական գրադարանների ձեռագրացուցակների մեջ ձեռագրերը հիշատակվում էին սոսկ իբրև գրադարանի ունեցած գրքերի մի մասը, ապա եվրոպացիների համար (Գ. Վիլֆրուա, Մ. Բրոսսե, Վ. Լանգլուա և ուրիշներ) հայ հին ձեռագրերը արդեն արեւելագիտական, հայագիտական հետաքրքրութուն ունեին։ Նույն արժեքն ունեին նաև այդ ձեռագրերը ներկայացնող մատենագիտական ցուցակները։ Ահա, աստիճանաբար գերակշռեց հայ ձեռագրերի, ուստի և նրանց ցուցակների նկատմամբ այդ մոտեցումը, և այժմ նրանք ամենից ավելի հայագետներին հետաքրքրող նյութեր են համարվում։

Եթե միջնադարում մի ձեռագիր Շարակնոց ընթերցողին

¹ Bibliotheca bibliothecarum manuscriptorum nova... Parisiis, 1739. Հայկական բաժինը՝ էջ 1018—1024.

Catalogus codicum manuscriptorum Bibliothecae Regiae. T. I. Parisiis, 1739.

² V. Langlois Voyage a Sis, capitale de l'Arménie au moyen age. Paris, 1855, p. 38—44.

կամ քահանային հետաքրքրում էր իրրև ժամանակակից գիրք, շարականների ժողովածու՝ ընթերցանության կամ եկեղեցում հրգելու նպատակով (ընդ որում, շատ էլ վարեժուր չէր թե Շարակնոցը ձեռագիր է, թե տպագիր), ապա այժմ ձեռագիր Շարակնոցը գիտնականին հետաքրքրում է իրրև հայ ձեռագրական միավոր, հայագիտության համար հետաքրքրական մի նյութ՝ հնությամբ, բնագրի առանձնահատկություններով, գրչության, նկարազարդման, խազագրման արվեստով և այլն։ Եվ այդպես միջնադարի համեմատ նոր արժեք են ստացել նաև այլ կարգի հայ ձեռագրերը, մանավանդ պատմական սկզբնաղբյուրի արժեք ունեցող կամ գեղարվեստական, փոխոսկայական, գիտական այլ բնույթի նյութեր պարունակող ձեռագրերը, որոնց բնագրերի հայագիտական արժեքը որոշակի է։

Այնուհետև, հնում ու միջնադարում հայերեն գրվում ու թարգմանվում էին կրոնական, քաղաքական, բնագիտական կամ գեղարվեստական երկեր, որոնք հաճախ ոչ մի առնչություն չունեին հայ ժողովրդի կյանքի կամ Հայաստանի հետ։ Այն ժամանակ դրանք ուղղակի գիրք էին, իրենց որոշակի բովանդակությամբ, ընդօրինակվում էին գրիչների կողմից և տարածվում։ Այժմ, սակայն, դրանք սոսկ գրքեր չեն, այլև հայերեն հին ձեռագրեր, ու թեև նրանց մեջ հայություն մասին ոչինչ չկա, բայց նրանց հայագիտական արժեքն ակնառու է։ Նրանք գրվել են հին Հայաստանում, հայկական տառերով, ծաղկվել են հայ վարպետի կողմից, հայկական տճով և այլն։

Ուրեմն ձեռագրերի մի հավաքածու, եթե հնում սոսկ տարբեր բովանդակության գրքերի հավաքածու էր, ապա այժմ նախ հայագիտական արժեք է ստանում։

Համապատասխանաբար փոխվել է և ձեռագրացուցակների արժեքը. եթե միջնադարում մի վանքի գրադարի ձեռագրացուցակը սոսկ տարբեր բովանդակության գրքերի մատենագիտություն էր, գրացուցակ, ապա նոր ժամանակների

ձեռագրացուցականները ներկայացնում են հայագիտական հավաքածուներ, ուստի իրենք էլ հայագիտական բնույթի են:

Առաջինը, որ հայագիտական տեսանկյունից առաջին ձեռագրացուցականները հրատարակել են եվրոպացիները: Սակայն աստիճանաբար այդ բնույթի ձեռագրացուցականների կազմմամբ ավելի շատ հայ հեղինակներն են սկսում զբաղվել:

Ձեռագրացուցակագրությունը դարձավ հայ մատենագիտության և քանադասության մի կարևոր քննադատաբար 19-րդ դարում հայ ձեռագրացուցակագրությունը ձեռք բերեց իր ուրույն դիմագիծը: Այն ունեցավ առանձնահատուկ զարգացում, ապրեց իր դասական շրջանը, որի լավագույն արտահայտությունը Հակոբյան Տաշյանի ձեռագրացուցակը եղավ:

Արդ, ե՞րբ է սկսվում հայ գիտական ձեռագրացուցակագրությունը, ինչը պետք է համարել հայ մատենագիտության այս առանձին քննադատի սկիզբը: Մեր պատկերացմամբ դրա իսկական սկիզբը Դանիել Շահնազարյանցի ձեռագրացուցակի հրապարակումն է 1863 թվականին: Հայ ձեռագրերի նկարագրության, նրանց բովանդակության քաջահայտման այն ընդհանուր սկզբունքները, որոնք հատուկ դարձան հայ ձեռագրացուցականներին, մեծ մասամբ սկզբնավորվեցին այս ձեռագրացուցակով:

Կարևոր է նաև այն, որ սա հայերեն առանձին գրքով հրատարակված միայն հին ձեռագրեր ընդգրկող (առանց տպագիր գրքերի) առաջին մատենագիտությունն է:

Նկատի ունենալով այդ ձեռագրացուցակի նշանակությունը՝ ավելորդ չենք համարում փոքր-ինչ կանգ առնել նրա ստեղծման հանգամանքների և սխառագիտական հատկությունների վրա:

Ձեռագրացուցակը կազմել է Դանիել Շահնազարյանց Տարոնցին, որ 1860—1862 թվականներին եղել է էջմիածնի մատենադարանի կառավարիչ, նրան ձեռագրացուցակը կազմելու գործում օգնել է Անդրեաս Վեճապետյան Կոստանդնուպոլսեցին: Ծոցակի հրատարակիչն է մանկավարժ և բանասեր Հակոբ Կարենյանցը: Տիտղոսաթերթն այսպիսին է: Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Արթուր Աթո-

ռոյն էջմիածնի: Տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց. Մախուֆ ի Կառնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց յօգուտ դպրոցի ժառանգատուաց Սրբոյ էջմիածնի: Ի 1863 ամի ի Թիֆլիզ: Ի տպարանի Ներսիսյան ազգային հոգեւոր դպրոցի Հայոց: Քանի որ տիտղոսաթերթում չի հիշատակված կազմողի անունը (հիշատակված է առաջարանում), ուստի ձեռագրացուցակը հայտնի է դառնում Կարենյանցի անունով:

Այսպիսով, հայերեն դասական ձեռագրացուցակների առաջնակը կազմվում է Հայաստանի կենտրոն էջմիածնում և ներկայացնում է հայերեն հին ձեռագրերի, եթե կարելի է ասել, կենտրոնական, իսկ հետագայում նաև ամենահարուստ հավաքածուն:

Կարևոր է նկատի ունենալ, որ Դանիել Շահնազարյանցի կազմած այս ձեռագրացուցակը էջմիածնի գրչագիր հարուստությունները ներկայացնող առաջին մատենադիտությունը չէ: Մաշտոցի անվան մատենադարանում եղած անտիպ ձեռագրացուցակների մեջ գտնվում է էջմիածնի 413 ձեռագիր պարունակող մի ցուցակ (սի մայր ամթոռն եղեալ ձեռագիր գրեանց տումարն)¹, որն ըստ ենթադրության կազմված է 18-րդ դարի վերջում կամ 19-ի սկզբում: Այնուհետև, հայտնի է, որ Մանվել Գյումուշխանեցին 1828 թվականին նշանակվելով էջմիածնի մատենադարանի կառավարիչ՝ հիմնովին վարզավորում է Մատենադարանը. հարստացնում նորահայտ ձեռագրերով և կազմում ձեռագրացուցակ՝ «Ցուցակ մատենից գրգատանն Սրբոյ ամթոռն էջմիածնայ» (սկզբի և մագրագիր օրինակները գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռ. 3801)², Ի դեպ, Մանվել Գյումուշխանե-

¹ Տե՛ս Օ. Նզաբեյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուները:— «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի»: Հտ. Ա, սյու- նակ 204:

² Նույն տեղում:

ցին կազմել է նաև էջմիածնի մատենադարանի տպագիր գրքերի գրացուցակը 2856 միավորի նշմամբ:

Այնուհետև, էջմիածնի ձեռագրերի ցուցակագրման գործով զբաղվել է Հովհաննես Շահխաթունյացը (մատենապետ է եղել 1832—1833 և 1837—1849 թվականներին), որը կազմել է երկու գրացուցակ. դրանցից մեկի՝ Մ. Բրոսսեի հրատարակածի (1840 թ.) մասին արձեռն խոսվել է (2-րդ գլխում): Այս գրացուցակը, ինչպես ասվել է, պարունակում է և՛ ձեռագրեր, և՛ տպագիր գրքեր: Իբրև ձեռագրացուցակ ահա թե ինչպես է այն բնորոշել Ք. Պատկանյանը. «Հրատարակիչը Ցուցակի մեջ ոչինչ հավելվածներ չէ դրել ձեռագրերի հաճախ ջատ մութ վերնագրերի մոտ, այլ 42 մանր բացատրություններ ավելացրեց, որոնք երբեմն քաղվական անհաջող են: Օրինակի համար, հայերեն Պիտոյից բառը, Մովսես Խորենացու հայտնի «Պիտոյից դիրքը» հրատարակիչը այսպես է պարզաբանում. «Книга необходимых предметов. Իհարկն այսպիսի Ցուցակի հրատարակությունը ոչ ոքի չէր կարող գահացնել»¹:

Շահխաթունյանցի կազմած մյուս ցուցակը թեմատիկ բնույթի է, սկզբնավորվել է 1837-ին, բայց մնացել է անավարտ: Նրա հիմնական մասը ֆրանսերեն թարգմանություն տեղ է գտել Մ. Բրոսսեի «Ձեկույցներում»², Հ. Շահխաթունյանցի այս ձեռագրացուցակը ուշագրավ է նրանով, որ ձեռագրերի նկարագրության, բացահայտման այստեղ կիրառված սկզբունքները լիովին օգտագործեց Դ. Շահնազարյանցը իր հայտնի ձեռագրացուցակը կազմելիս:

Շահնազարյանցի ձեռագրացուցակի ստեղծմանը նպաստել է ռուսաց Ալեքսանդր Զ-րդ կայսեր այցը էջմիածին, երբ նա կարգադրություն է արել վարդի բերելու դարձյալ անկարգ

¹ «Փորձ», 1880, № 1, էջ 21.

² M. Brosset Rapports sur un voyage archéologique dans la Georgie et dans l'Arménie exécuté en 1847—1848. Պետերբուրգ, 1840, էջ 24—104.

միմակում թողնված մատենադարանը և կազմել գրացուցակ¹։ 1860 թվականից Դ. Շահնազարյանը նշանակվում է էջմիա-
ծնի մատենապետ, նրա օգնականն էր Հակոբ Սյունեցին, իսկ
աշխատանքի ընկերակիցները՝ Անդրեաս Վահապետյանը և
Սուքիաս Պարզյանը։ Գրատունը շուրջ մեկ տարում կարգի
է բերվում. ձեռագրերը դասավորվում են ալբոսնական կար-
գով և համարակալվում։ Միաժամանակ կազմվում է ձեռա-
գրացուցակը (1861-ին պատրաստ է լինում)։

Ձեռագրացուցակի ակտըում Հ. Կարենյանցի առաջադանն
է, ուր խոսվում է հայերի ձեռագրական կորուստների, էջ-
միածնում պահպանվող ձեռագրերի, նրանց արժեքի մասին։
Կարենյանցը մեջ է բերում իր ժնապրիկներ հայրենիքից
հողմածի մի մասը, տպագրված «Կոռնկ Հայոց աշխարհի»
հանդեսում (1862, էջ 363—372), ուր խոսվում է էջմիածնի
մատենադարան կատարած իր այցի մասին։ Այստեղ նկա-
րագրված է Մատենադարանի ձեռագրերի վիճակը, խոսվում
է Շահնազարյանցի ձեռագրացուցակի կազմման, ինչպես
և՛ այն իր ծախսով հրատարակելու իր խոստման մասին։
Քերված է նաև Շահնազարյանցի դիմումը (1862 թ.) Մատ-
թեոս Ա կաթողիկոսին ձեռագրացուցակի տպագրությունը
թույլատրելու խնդրանքով և կաթողիկոսի կոնդակը (1863 թ.)
ձեռագրացուցակը տպագրելու օրհնությամբ։ Այնուհետև, Կա-
րենյանցը խոսում է իր հրատարակած ցուցակի օգուտների
մասին. ա) որ էջմիածնի կնիք ունեցող այն ձեռագրերը,
որոնք ինչ-ինչ պատճառներով ընկել են անհատների մոտ,
կվերադարձվեն (քանի որ մատենադարանի վիճակը քարե-
լավված է, ձեռագրերի պահպանումը՝ հուսալի), թ) էջմիածնի
մատենադարանին կնվիրեն նոր ձեռագրեր, որով այդ մա-
տենադարանը կճոխանա, գ) հնարավորություն կստեղծվի
էջմիածնի ձեռագրական նյութերից արժեքավորները տպա-

1 էջմիածնի մատենադարանի այս շրջանի պատմության մասին ավելի
մանրամասն տե՛ս Ա. Սնդրակյանի «Էջմիածնի Շահնաթույանցի կեն-
տագրությունը գրքում (Պետերբուրգ, 1898, էջ 123—125 և այլուր)։

գրեւել, դ) բանասերները ցուցակի շնորհիվ կիմանան ինչ նյութեր կան էջմփածնի ձեռագրերում և կարող են օգտվել նրանցից (նաև խնդրելով համապատասխան նյութերի ընդօրինակություններ)։

Շահնազարյանցի ձեռագրացուցակը այբբենական կառուցվածք ունի (ըստ դարակներում ձեռագրերի դասավորության) ձեռագրերի նկարագրությունները դրված են վերնագրերի աթքենական կարգով և ստացել են դարակներում գրչագրերի ունեցած հերթական համարները՝ վերջին համարն է 2340 (թեև իրականում նկարագրված է 2338 ձեռագիր. այս տարբերությունը համարակալման մեջ տեղ գտած թյուրիմացության արդյունք է)։ Բնագրերի հեղինակները նշվում են, բայց ոչ աթքենական վարդի մեջ։

Ձեռագրացուցակում ձեռագրերի նկարագրությունների մեջ տեղեկանքներ են տրվում նյութի (թուղթ, մտաղաթ), գրչի, գրչության վայրի, թվականի, հիշատակարանի և այլնի վերաբերյալ։ Բացահայտվում է գրչագրերի բովանդակությունը։ Յուրաքանչյուր ձեռագրի նվիրված է մի տողից մինչև մի քանի էջ։ Օրինակ, ասենք ամեն մի Ճառնտիրի նվիրված են մինչև 10 և ավելի էջեր. այսպես՝ 920 համարի տակ նկարագրված Ճառնտիրը (1456 թվականի) բացահայտված է 23 էջի վրա (էջ 102—125)։

Շահնազարյանցի ձեռագրացուցակը ընդհանուր առմամբ լավ ընդունվեց բանասերների կողմից, թեև նշվեցին նաև նրա թերությունները։ Բերենք մի քաղված Բ. Պատկանյանի գնահատականից. «Այս ցուցակի գլխավոր թերությունը համարում եմ այն, որ առաջնորդող ցանկ չունի։ Ահա ինչ է բանի էությունը։ Տպագրված ցուցակի մեջ, ինչպես ասացինք, 2340 ձեռագիր է նշանակված։ Բայց այս թվով պետք է հասկանալ միայն առանձին կազմերի քանակությունը և կազմերի մեծ մասը ոչ թե միայն մեկ, այլ հինգ, տասը և ավելի գրվածներ, պատմություններ են բովանդակում, որոնք վաղմի ընդհանուր համարն ունին։ Յուցակի այս դասավորության պատճառով շատ դժվար է գտնել այն գրվածները, որոնք ձեռագրի

միջումը կամ վերջումն են հանդիպում և ոչ առաջին տեղում, որոնց վերնագրերը միայն գրված են ցուցակում աչքուքենական կարգով¹։

Ձեռագրերում եղած առանձին բնագրերի ոչ բավարար բացահայտմանը վերաբերող այս դիտողությունը, անշուշտ տեղին է, և կարելի է ասել, որ դա ձեռագրացուցակի հիմնական թերությունն է։

Նշվել են ձեռագրացուցակի նաև ուրիշ ոչ քիչ թերություններ, ախալներ, սակայն ամեն դեպքում անուրանալի փաստ է, որ Շահնազարյանցի այս աշխատանքը հայագիտության համար կարևոր դեր կատարեց, քանի որ, ամփոփելով էջմիածնի մատենադարանի այն ժամանակվա ձեռագրական ամբողջ հարստությունը, այն ներկայացնում էր շատ ավելի մտածված, մատենագիտական տեսակետից ավելի ճիշտ ձևով, քան նախորդ անկատար ցուցակները։

Երկու տարի Շահնազարյանցի ցուցակի հրատարակումից առաջ լույս էր տեսել Լազարյան ճեմարանի ձեռագրացուցակը, ճեմարանի գրադարանի ամբողջական գրացուցակի² կազմում։ Այդ գրացուցակն ունի չորս հիմնական մաս ա) եվրոպական լեզուներով գրքեր (տպագիր), բ) ռուսերեն գրքեր (տպագիր), գ) հայերեն ձեռագրեր ու տպագիր գրքեր և դ) արևելյան լեզուներով գրականություն։ Ցուցակ զրչագիր հայ մատենից գրադարանի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց վերնագրի տակ 12-րդ էջում ներկայացված են գրադարանի 142 ձեռագրերը։ Սա ձեռագրերի անունների սուսական մի թվարկում է, տրվում է նաև բազմանյութ ձեռագրերի բովանդակությունը (մատեան, յոբում գտանին), փակագծերում հակիրճ տեղեկանքներ են տրվում յուրաքանչյուր գրչագրի մեջ օգտագործված գրի տեսակի, լրագրի նակման թվականի, ձեռագրի վիճակի մասին։ Նյութերը համարակալված չեն, չկան գրադարանում ձեռագրերի ունեցած համար-

¹ Ռուսերեն, 1880, № 1, էջ 22։

² Տե՛ս ներկա պրակի գլ. 10։

ները Այս ձեռագրացուցակը, շնայած իր խիստ հակիրճությանը, ժամանակի քանասերներին ընդհանուր պատկերացում տալիս էր ճեմարանի գրադարանում եղած հայ ձեռագրերի հավաքածուի մասին։ Այս, ինչպես և Շահնազարյանցի ձեռագրացուցակը ավելի ակնառու դարձրին հայերեն ձեռագրերի նաև մյուս հավաքածուների ձեռագրացուցակները ատեղծելու հարևորությունը։

1888 թվականին լույս տեսավ Լազարյան ճեմարանի նոր գրացուցակը, իսկ 1896, 1901 և 1904 թվականներին նրա հավելվածները, որոնց կազմում նույնպես կան ձեռագրացուցակներ։

Հիշենք, որ Լազարյան ճեմարանի ձեռագրական հավաքածուն հետագայում հանձնվեց Հայաստանի պետական ձեռագրատանը և այժմ էլ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում։



Քավական ժամանակ, ըստ վերջյան, մինչև 1890-ական թվականները Շահնազարյանցի «Մայր ցուցակ»-ը փաստորեն մնում էր հայերեն ձեռագրերի առանձին գրքով հրատարակված միակ մատենագիտությունը։

1870-ական թվականներից հայերեն ձեռագրերի տարբեր հավաքածուների սկիզբնադրյալ մատենագիտական տեղեկատրվությունը աշխուժանում է մամուլում և տարբեր թովանդակությունների կազմում։ Հայաստանի ժամանակաշրջաններում շրջող մտավորականները, պատմելով այս կամ այն դավառի սովորությունների և հոսթությունների մասին, թվարկում էին նաև այնտեղ գտնվող ձեռագրերը, այլ դեպքերում տրվում էին այս կամ այն հայտնի գրադարանում պահվող հայերեն ձեռագրերի ցուցակներ։

Էջմիածնի «Արարատում» տպվեցին մի քանի այդպիսի նշումներ։ Կարելի է հիշել և՛ Սեդրակյանի «Հանգիստ» հայ-

րենհաց ի գաւառին Երնջակուս հոգւածը, որ 1872 թվականի մարտից հրապարակվում էր Վերաբարտում։ ապրիլի համարում տպագրված հատվածում խոսվում է գավառի Ս. Կարապետ վանքի հնությունների, այդ թվում և ձեռագրերի մասին (Ձեռագիր մատենանք վանիցս, էջ 149—151)։ Նկարագրված է ութ ձեռագիր (Ավետարան, Աստվածաշունչ, Նախկ)։

Վերաբարտի 1878 թվականի փետրվարի համարում տպագրվեց Վ. Բաստամյանցի մի նամակը Փարիզից՝ «Փարիզի ազգային մատենադարան և հայոց ձեռագիրներ» (էջ 54—58), որտեղ հեղինակը խոսում է այս գրադարանում պահվող հայերեն ձեռագրերի մասին և նշում, թե ինչ բովանդակության քանի ձեռագիր կա Փարիզի ազգային գրադարանում, թվարկում է հնագույն գրչագրերը և այլն։

Թիֆլիսում «Փորձի» 1880 թվականի առաջին համարում Բ. Պատկանյանի հրապարակած «Համառոտ տեսություն հայ պատմական գրականության» հոդվածի մեջ, ինչպես արդեն ասել ենք, խոսվում է նաև հայ ձեռագրական՝ ժամանակի ամենակարևոր կենտրոնների մասին, որոնք են՝ էջմիածին, Ս. Ղազար, Վիեննա, Երուսաղեմ, Փարիզի ազգային մատենադարան, Մոսկվայի Լազարյան ճեմարան, Բեռլինի թագավորական գրադարան, Սեանա վանքի գրատուն և այլն, ընդամենը՝ 15։ Այստեղ նկարագրվում է նաև յուրաքանչյուր կենտրոնը, տրվում է ձեռագրերի քանակը նրանցում և այլն։ Ամենից մանրամասն հեղինակը կանգ է առել էջմիածնի ձեռագրատան վրա՝ համարելով այն հայերեն ձեռագրական հավաքածուներից ամենահարուստը։

«Մեղու Հայաստանի» լրագրի 1881 թ. ապրիլի 26-ի համարում (№ 70) տպագրվեց հայ ձեռագրական հավաքածուների Բ. Պատկանյանի նշած կենտրոններից մեկում՝ Մյունխենի արքունի գրադարանում եղած հայերեն ձեռագրերի ցուցակը, «Մյունխենի արքունի գրատունում գտնվում են հետևյալ հայերեն ձեռագրերը՝ վերնագրով։ Դա մի հակիրճ տեղեկանք է, և աքնարանձանիվ գրչագրերի արտաքինի,

քովանդակության, ինչպես և ընդօրինակման վայրի, թվականի ու գրչի մասին տեղեկություններ տրված են: Վերջում ասված է. «Մյուսիսների արքունի գրատանը հղած հայերեն ձեռագրերի ցուցակը կազմել է հայագետ Պետերմանը Բեռլինում»:

Շատ ավելի արժեքավոր էին Գյուտ Աղանյանցի հոգվածները, հրապարակված Թիֆլիսի «Արձագանք» 1888 թվականի մի շարք համարներում: Երարձյալ հայ գրչագրերի մասին» վերնագրով հոգվածում¹ խոսվում է հայ հին ձեռագրերի մասին, առաջարկություն է արվում ունենալ մի հատուկ պարբերական, ուր հոգվածներ տպագրվեն ձեռագրերի մեջ հղած հարուստ նյութերի մասին, ապա նկարագրված ին մասնավոր առձանց մոտ հղած և հեղինակին ծանոթ մի քանի ձեռագրեր. բերվում են հիշատակարանները, բանասիրական մտորումներ և ճշտումներ են արվում հայ հին գրականության վերաբերյալ: Մյուս հոգվածաշարը, որ կրում է «Հայ գրչագրեր»² վերնագիրը, Ավետիք Էնֆիաճյանի ձեռագրական հավաքածուի նկարագրությունն է. մանրամասն նկարագրված են 23 գրչագրեր, բարեխղճորեն բերված են յուրաքանչյուր մատյանի բովանդակությունը, հիշատակարանները: Այս ձեռագրացուցակում գլխավոր նպատակը ոչ թե տվյալ հավաքածուն լիովին ներկայացնելն է, այլ հայոց պատմության ու հայ հին գրականության փերաքերյալ նորանոր տեղեկություններ հաղորդելը: Այդ նպատակով ներկայացված ին ընտրովի ձեռագրեր և, վարելի է ասել, ընտրովի տեղեկություններ են հաղորդված: Այդ տեսակետից Աղանյանցի կազմածը որևէ ձեռագրական հավաքածու ներկայացնող ձեռագրացուցակների շարքում չի կարելի դնել: Շատ Վարկեր է աշխատության մեջ հեղինակի ցուցաբերած մատենագիտական-բանասիրական մոտեցումը հայ հին ձե-

1 «Արձագանք», 1888, էջ 48—51, 60—64, 73—75.

2 «Արձագանք», 1888, էջ 112—116, 128—131, 141—143, 156—158, 204—206, 352—353, 367, 411—412.

ռագրերը բացահայտելու գործում: Սա հայերեն կազմված ձեռագրացուցակներից առաջինն է, ուր շատ զգալի է հեղինակի բանասիրական հետախույզ միտքը, նյութերի համաժանաչից բացահայտումը: Ահա հայ հին ձեռագրերի այսպիսի հանդամանակից նկարագրությունը աստիճանաբար սկսեց արմատավորվել: Աղանջանցի այս ոչ մեծ ձեռագրացուցակը լուրջ քաջ էր Դ. Շահնազարյանցի պարզ, արձանագրական ձեռագրացուցակից դեպի Հ. Տաշյանի փանասիրական հոյակապ աշխատություն-ձեռագրացուցակը:

Աղանջանցի այդ ձեռագրացուցակի բնույթի էր նաև «Արարատում 1888 թվականի հունվարից մինչև օգոստոսի 1-ը տպագրվող լատինագիր հոգվածաշարը «Ս. էջմիածնի գրադարան» վերնագրով: Սկզբում խոսվում է հայոց ճակատագրի, դպրության և հայ հին ձեռագրերի, մանավանդ նրանց հիշատակարանների մասին: Պարզվում է, որ հանդեսի խրմբագրությունը նպատակ է դրել հայոց պատմության շուրջ ստանդարտ հատվածների վերաբերյալ ձեռագրային նյութեր հրապարակել, օգտագործելով էջմիածնի մատենադարանի ձեռագրերը, և այդ բանն սկսում է 1700—1800 թվականներին ընդօրինակված ձեռագրերից: Տրվում են ձեռագրերի համարները, բացահայտվում է նրանց բովանդակությունը, բերվում են հիշատակարանները կամ հատվածներ նրանցից, քստ առիթների խոսվում է հայոց պատմության առանձին դրվագների մասին:

1880-ական թվականներին ձեռագրացուցակներ հրապարակվեցին նաև Մխիթարյանների մամուլում: Դրանցից է «Յուցակ Պեռլինի արքայական մատենադարանի հայ ձեռագրաց»-ը², տրբ. Ղ. Արիշանի փառաբանող վազմեղ էր նիկողայոս Քարամյանցը Բեռլինում ուսանող եղած ժամանակ: Յուցակն ընդգրկում է 94 ձեռագիր, համառոտակի տրվում է յուրաքանչյուր մատյանի բովանդակությունը:

1 «Արարատ», 1888, էջ 23—25, 79—90, 155—160, 220—223, 290—293, 345—356, 406—422, 481—489, 526—531.

2 «Բազմավեպ», 1886, էջ 183—192.

Քարամյանցի ձեռագրացուցակը ընդարձակված 1888 թ. հրատարակվում է Բեռլինում¹։ Ձեռագրացուցակը բաժանված է 15 առարկայական գլուխների (Աստվածաշունչ, Պատմություն, Բժշկություն և այլն), որոնցում ներկայացված են համապատասխան ձեռագրեր։ Ամեն մի ձեռագրի մասին տրվում են անհրաժեշտ տեղեկություններ (թերթերի քանակ, մի էջում տողերի քանակ, կազմ, գիր, մանրանկարներ, ընդօրինակման վայր, թվական, դրիչ), բացվում է քովանդակությունը։ «...այս գործն, որ զիտական հորինվածությամբ է շինված, կը պարտավորե զմեզ հրատարակչին առանձին կերպով շնորհակալ ըլլալ գրականության մատուցած այս օգտակար ծառայության համար և բաղձալ կու տա մեզ տեսնել քաղմաթիւ հետևողներն»², — գրում էր նույն թվականին Գ. Գալեմբյարյանը «Հանդես ամսօրյայում»։ Իրոք, այդ գործը հետևողներ շատ ունեցավ, և առաջիններից էր ինքը՝ գրախոսողը։

Կարելի է հիշատակել նաև Հ. Թումանյանի՝ «Հանդես ամսօրյայում» 1887-ին³ տպագրած «Հայերէն ձեռագիրք ի Քրքաւ» հոգովածը, ուր նկարագրված են Կրակովի Զարտորիսկու թանգարանի հաշիւին 7 ձեռագրերը (տեղափոխված վիճանա)։ Նշվում է ամեն մի ձեռագրի նյութը, դիրքը, ծավալը, ընդօրինակման ժամանակը, տառերի տեսակը և այլն, տրվում են հիշատակարաններ։

Նույն ժամանակաշրջանում ձեռագրացուցակներ երևացին նաև տարբեր գրքերի կից՝ կամ գրքերի մեջ։ Հիշատակելի է նշանավոր բանասեր Գարեգին Սրվանձտյանի 1874-ին հրատարակված «Հնոց և նորոց գրքի մեջ Մշո Ս. Կառապետ վանքի ձեռագրերի ցուցակի հրապարակումը»։ Ավելի կարեւոր

¹ N. Karamianz Verzeichnis der armenischen Handschriften der Königl. Bibliothek zu Berlin. Berlin, 1888, VIII, 88 էջ. **Ներդիր պատկերներով**։

² «Հանդես ամսօրյա», 1888, էջ 131.

³ «Հանդես ամսօրյա», 1887, էջ 55—57.

⁴ Գ. Սրվանձտյան Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 140—149 («Ծանկ ձեռագիր մատենից ի վնս Սուրբ Կարապետին Մշոյ»)։

են նույն հեղինակի «Թորոս աղբար» ճանապարհորդական նոթերի մեջ բերված ձեռագրացուցակները: Դրանք մեծ մասամբ Հայաստանի տարբեր վանքերում եղած ձեռագրերի նկարագրություններն են տալիս: Սրվանձտյանի ձեռագրացուցակները որոշ դեպքերում արտագրություն են ուրիշների կազմած ցանկերից, իսկ հիմնականում հեղինակի նկարագրություններն են ձեռագրերից: Նկարագրությունները երբեմն հակիրճ են, փակ որոշ դեպքերում մանրամասն բերվում են բազմաթիվ հիշատակարաններ: Գրքի առաջին մասում ձեռագրացուցակներ դրված են այս կամ այն վանքի նկարագրության մեջ¹, իսկ երկրորդ մասի վերջին հատվածը լրելված ամբողջությամբ ձեռագրացուցակ է, ավելի ճիշտ, հիշատակարանների հավաքածու՝ «Ձեռագիրք և յիշատակարանք» վերնագրով²:

Սրվանձտյանի տված տեղեկությունները Արևմտահայաստանի ձեռագրական հարստությունների սոսկ մի մասին են վերաբերում (նույնիսկ հեղինակի աչքեցած վանքերի բոլոր ձեռագրերը չէ, որ ներկայացված են), սակայն նրանք ժամանակին մեծ դեր կատարեցին հայ ձեռագրական հարստությունները գիտական աշխարհին ներկայացնելու տեսակետից, այդ ձեռագրացուցակները, նրանց հիշատակարանները շատ արժեքավոր են նաև այսօր, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանցում նկարագրված ձեռագրերի մի մասն անհետ կորել է:

Մշո Ս. Կարապետ վանքի՝ Սրվանձտյանի կողմից կազմրված ձեռագրացուցակը, հիշատակարաններով հրապարակվեց նաև 1905 թվականին «Արարատում»՝ (էջ 716—797 «Մշո Ս. Կարապետ վանքից ձեռագիր գրեանք» իրև շարունակություն՝ «Կիւմիշհանէի Ս. Փրկչի վանուց ձեռագիր մատանք և յիշատակարանք», էջ 727—737):

¹ Գ. Սրվանձտյան Թորոս աղբար, մաս 1, Կ. Պոլիս, 1879, էջ 38—39, 57—67, 77—79, 114—121, 183—200, 215—235, 290—295, 324—331:

² Նույնը, մաս 2, Կ. Պոլիս, 1884, էջ 253—488:

Հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարաններ կան վարազա վանքի միաբան Ղևոնդ Փիրղալեմյանի՝ 1888 թ. Կ. Պոլսում հրատարակած ռուսարբ Հայոց-ի առաջին հատորում (232 էջ)։ Հեղինակը իր գրքում տարբեր վկայություններ է բերում հայոց պատմության վերաբերյալ սկսած 1339-ից մինչև 1467 թվականը՝ նյութը դասավորելով տարի առ տարի։ Տարեթվերի տակ բերվում են հայ մատենագրությունից համապատասխան քաղվածքներ և ձեռագրերի հիշատակարաններ, հիշագրություններ, հատվածներ, վիմագիր արձանագրություններ կամ հատվածներ, նրանցից և այլն։ Զեռագրական նյութերը հեղինակը հավաքել է տարբեր աղբյուրներից (մամուլ, գրքեր և այլն), ինչպես և Հայաստանում ճանապարհորդելիս։ Պատմագիտական նկատելի արժեք, անշուշտ, ունի Փիրղալեմյանի այս գիրքը, սակայն մի ձեռագրական տեղեկատուի ներկայացվող մատենագիտական նվազագույն պահանջներին անգամ այն չի բավարարում։ Ղկան ձեռագրերի տարրական բնույթի նկարագրությունները (անունը, գիրը, գիրքը, քովանդակությունը և այլն)։ Օրինակ, գրում է. «Ի ճաբընտիրէ անթուական», «Աստուածաշնչէ հատուած», «յԱւետարանէ» և այլն ու բերում համապատասխան քաղվածք՝ տակը նշելով ձեռագրի գտնվելու վայրը և հատվածն արտագրելու ժամանակը կամ այն հրապարակված աղբյուրը, որից առնված է քաղվածքը։

Առաջադրանքում հեղինակը հայտնում է, որ եթե քննադատվի իր աշխատությունը կամ չվաճառվեն տպված օրինակները, ինքը կհրաժարվի գրքի հաջորդ հատորները լույս ընծայելուց։ Արդյոք ա՞յդ է եղել երկրորդ հատորի չհրապարակման պատճառը։ Համենայն դեպս Գ. Գալեմջյարյանը 1889 թվականին «Հանդես ամսօրյա»¹ որոշ դիտողություններ անելով՝ խրախուսել խոսք ասաց հեղինակին. «...հարատևվություն կը մաղթենք Արժ. վարդապետին սույն գեղեցիկ և օգտակար գործույն մեջ»։

¹ «Հանդես ամսօրյա», 1889, էջ 29—30.

Արդեն խոսել ենք Վենետիկի Մխիթարյան մատենադարանի անդրանիկ ձեռագրացուցակը (կազմելու Գ. Զարբհանալյանի փորձի մասին. «Թագմավագում» 1891 թ. հրապարակվել սկսած այդ ձեռագրացուցակը հայ հին ձեռագրերի կարևորությամբ երկրորդ կենտրոնի արժեքավոր տեղեկատուն պիտի դառնար, եթե անվարտ շմնար։ Շատ կարևոր էր, որ այս ձեռագրացուցակի սկզբում դրված խմբագրականում հարց էր քարձրացվում հայ ըողոր պահպանված ձեռագրերի ընդհանուր մի ցուցակ կազմելու։

«Հանդես ամսօրյայում» կերևա հայաքաղաքի (Տրանսիլվանիա) ձեռագրերի մասին հոդված հրապարակեց Գ. Գովրիկյանը¹, նկարագրելով մի քանի ձեռագրեր, բերելով հիշատակարանները։

Այնուհետև, նույն քաղաքի Վայերեն ձեռագրերի նկարագրությամբ Գ. Գովրիկյանը հանդես եկավ նաև հայ ձեռագրացուցակագրության ամենաաշխույժ տարիներին՝ 1895², 1896³ և 1913—1914⁴ թվականներին։ Այս վերջին երկու տարիներին «Հանդես ամսօրյայում» հրապարակվեց Գովրիկյանի «կերևա հայաքաղաքին մայր եկեղեցւոյն հայերեն ձեռագրաց ցուցակը», որ շատ հանգամանալից է և հենվում է մինչ այդ արդեն հրապարակված արժեքավոր ձեռագրացուցակների փորձի վրա։

80-ական թվականներին լուրջ հող ստեղծվեց հայերեն հին ձեռագրերի մատենափառության արագ առաջընթացի համար։ Արդ ժամանակ արդեն հայ ձեռագրերի, նրանց հիշատակարանների նշանակութունը անցյալի մոլթ էջերին լույս սփռելու, հայ ժողովրդի հոգևոր հարուստ կյանքը երեվան հանելու գործում փիտակցվում էր ջատ-շատերի կողմից։ Մամուլում ավելի ու ավելի էր գրվում տարբեր ձեռագրերի,

¹ «Հանդես ամսօրյա», 1890, էջ 19—21.

² «Հանդես ամսօրյա», 1895, էջ 300—305.

³ «Հանդես ամսօրյա», 1896, էջ 318—348.

⁴ «Հանդես ամսօրյա», 1913, սյունակ 690—697, 1914, սյունակ 219—228, 667—674.

ձեռագրական հավաքածուների մասին, երբեմն տրվում էին ոչ մեծ ձեռագրացուցակներ։ Բանասերները սկսեցին խոսել այն մասին, որ անհրաժեշտ է հայ հին ձեռագրերի աշխարհում եղած բոլոր հավաքածուների հանգամանալից ցուցակները կազմել, շատ էր խոսվում քոլոր պահպանված հայերեն ձեռագրերի մասյր ցուցակը ստեղծելու մասին, 1890-ական թվականները դարձան հայ դասական ձեռագրացուցակագրության, թերևս, ամենից ավելի թեղմնավոր տարիները, երբ երևան եկան հայերեն լավագույն, որոշ կողմերով մինչև օրս չգերազանցված ձեռագրացուցակներից մի քանիսը։

1891 թվականը հատկապես հիշարժան դարձավ հայ մատենագիտական կյանքում մի այլ պատճառով։ Այդ տարին էր, որ Վիեննայի Մխիթարյաններից Գ. Գաբրիելյանի ու Հ. Տաշյանի նախաձեռնությամբ միաբանությունը որոշում էր քունեց աստիճանաբար, հաստոր առ հաստոր հրատարակել աշխարհի տարբեր մասերում ցրված հայկական ձեռագրական կենտրոնների ձեռագրացուցակները։ Ամբողջ հրատարակությունը կամ մատենաշարը սրեւ է կոչվել «Մասյր ցուցակ հայերէն ձեռագրաց հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութենէ»։ Այս կապակցությամբ հրատարակված հայտարարության մեջ գրված էր՝ «Եւտ տեղերու ձեռագրաց ցուցակը կազմել հանձն առած ին նշանավոր ազգային գիտնականք։ Ասոնց մեջ կը հիշենք մեծ Պր. Մառ, ուսուցչապետ հայերեն լեզվի ի համալսարանին Փետրոսպուլի, որ կը կազմե նույն քաղաքի այլևայլ հաստատությունց մեջ գտնված ձեռագրաց ցանկը... Բրիտանիո քոլոր հայ ձեռագրաց ցանկը հորինել հանձն առած է Գեր. Ս. Պարոնյան, որ ծանոթ է հայ ձեռագրաց նկատմամբ այլևայլ նման աշխատությունք։ Իսկ Հռովմա մեջ գտնված ձեռագրաց ցանկը կը հորինե գեր. Հովհ. Վ. Միսքէյան, ուսուցչապետ հայերեն լեզվի ի Ուրբանյան դպրոցի նա»։

Այս կարևոր ու մեծ ծրագիրը սկսեց իրականացվել նույն 1891-ին, երբ «Հանդես ամսօրյան» սկսեց տպագրել նախ Հ. Տաշյանի «Հայերէն ձեռագիրք Վիեննայի կայսերական

գրատանձ¹ և ապա Գ. Գալեմբյարյանի «Հայերէն ձեռագիրք Միւնխէնի արքունի գրատանձ»² ձեռագրացուցակաները:

Այդպիսով սկսում էր իրագործվել շատ գիտնականների բարձաւնքը՝ ունենալ հայերեն ձեռագրերի մի ամբողջական մատենագիտութիւն:

Այս ծրագրի ծրախայրիքը՝ վերոհիշյալ երկու ձեռագրացուցակաները տպագրվեցին նաև առանձին գրքույկներով (փոքր-ինչ փոխված վերնագրերով)՝ առաջինը նույն թվականին³, երկրորդը հաջորդ⁴: Զուրաքանչյուրի ձախ տիտղոսաթերթին հայերեն ու գերմաներեն զրկած է մատենաշարի անունը՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց», իսկ աջ տիտղոսաթերթին՝ տվյալ հատորի անունը: Ընդհանուր մատենաշարի կազմում Ավստրիային առաջին հատորն էր նրավիրված, Գերմանիային՝ երկրորդը, ուստի Տաշյանի ձեռագրացուցակը Ա հատորի Ա տետրն էր, Գալեմբյարյանինը՝ Բ հատորի Ա տետրը:

Երկու ձեռագրացուցականերում էլ նկատվում են անվտայան համաման մատենագիտական աշխատութիւնների հատկանիշները, ինչպես և, անշուշտ, հայկական փորձի օգտագործումը: Երկու դեպքում էլ սկզբում տրված է ձեռագրացուցակի համառոտումը գերմաներեն, հետո կազմողի առաջաբանը, ձեռագրերի հավաքածոսի հակիրճ գնահատականով, ապա՝ ձեռագրացուցակը: Տաշյանը նկարագրել է 30 ձեռագիր, որոնցից 28-ն են Կայսերական մատենադաւաւից: Նախ մի էջի վրա տրվում է նկարագրված ձեռագրերի ընդհանուր տախտակ, ապա նոր՝ մանրամասն նկարագրութիւնները: Վերջիններս համարակալված են, յուրաքանչյուրի սկզբում

1 «Հանգես ամսօրյա», 1891, էջ 11—17, 44—51, 72—78, 110—116, 149—152

2 «Հանգես ամսօրյա», 1891, էջ 235—243, 307—314, 340—345.

3 Լ. Տաշյան Զուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա: Վիեննա, 1891, 49 էջ:

4 Գ. Գալեմբյարյան Զուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն: Վիեննա, 1892, 37 էջ:

տրվում են ձեռագրի քանակական (չափս, թերթեր, էջեր, տողերի քանակը մի էջում) և նյութական (թուղթ, մագաղաթ, կազմ, վիճակ և այլն) նկարագրերը, տեղեկանքներ գրի տեսակի, ընդգրկնական թվականի, գրչի, ծաղկողի, ստացողի, վայրի մատն և այլն։ Ապա տրվում է մատյանի բովանդակությունը, էջերի նշմամբ, վերջում բերված են հիշատակագրությունները և հիշատակարանները (վյամ հատվածներ)։ Անհրաժեշտ դեպքերում տրված են նաև քանասիրական ծանոթագրություններ։ Վերջում կա «Ծանկ նիւթոց», ուր այբբենական փարզով բերված են հատուկ անունները, բնագրերի վերնագրերը և նշված է համապատասխան էջը։

Նման կառուցվածք ունի նաև Գաբնաճարայանի ձեռագրացուցակը (ուր նկարագրված է 22 ձեռագիր), կան նաև մասնավոր տարբերություններ՝ տեղեկանքների մանրամասնություն մեջ։

Երկու ձեռագրացուցակն էլ բավ ընդունվեցին հասարակայնության կողմից¹։

Իսկ ամենակարևորն այն էր, որ սկսված գործը կանգ չառավ կես ճանապարհին։ Շահնդես ամսօրյայում շարունակեցին տպագրվել տարբեր վայրերի ձեռագրացուցակներ, կազմված Գ. Գաբրիելյանի, Ն. Մառի, Հ. Մխիթարյանի, Հ. Աճառյանի, Վ. Թորգոմյանի և այլոց կողմից։

«Մայր ցուցակ» մատենաշարի առանձին հատորների և որանց տետրերի հրատարակումը շարունակվեց՝ հասնելով մինչև մեր ժամանակները, այսպես, Դ հատորը նվիրվեց Ռուսաստանին, Զ-ն Թուրքիային ու Պարսկաստանին և այլն, իսկ ավելի ուշ այլևս հատորակալում չկար (ուղղակի գրվում էր մատենաշարի անունը)։

Վիեննայի Մխիթարյան միաբանության որոշումը «Մայր ցուցակի» ստեղծման վերաբերյալ և սրա առաջին տետրերի հրապարակ դալը ազդակ հանդիսացան նաև որպեսզի մշակութային այլ կենտրոններում էլ հրատարակվեն հայ ձեռա-

¹ Տե՛ս, որինակ, «Մուրճ», 1893, № 11, էջ 1738—1741։

գրացուցակներու Եվ այդպէս ձեռագրացուցակներ ստեղծելու աշխույժ շարժումը ծավալվեց հալոց մեջ:

«Մայր ցուցակի» Ա հատորի (Ավստրիա) Բ գիրքը, որ լույս տեսավ 1895-ին Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրացուցակն էր, կազմված Հ. Տաշյանի կողմից: Քանի որ այս ձեռագրացուցակի տեղը բացառիկ է հայ մատենագիտութեան մեջ, ուստի մի քանի խոսք այդ աշխատութեան ու նրա հեղինակի մասին:

Հակովքոս (սկզբնապէս՝ Փրանկիակոս) Տաշյանը ծնվել է 1866 թ. հոկտեմբերի 25-ին Կարնո դաշտի Արծաթի գյուղում: Մնողները՝ Մելքոնն ու Հովհաննիսն խոտորչուրցի գյուղացիներ էին:

Մանկությունը անց է կացրել գյուղում, նաև Կարնոում, ուր հաճախել է տեղի ծխական դպրոցը: Շուտով դառնում է գյուղի նամակագիրը: Փոքր տարիքում կուրանում է, և բարեպաշտ ծնողները ուխտ ան անում փրկեց որդու ապաքինութեան դեպքում՝ նրան ուղարկել Մխիթարյան վանք: Եվ ահա ապաքինված պատանին 1880 թ. նոյեմբերից Վիեննայում է: Այստեղ ուսման ընթացքում հինց սկզբից հիացնում է ուսուցիչներին իր արտակարգ ընդունակությամբ: 1883-ից ստանում է Հակովքոս անունը: Ուսումն ավարտում է 1889-ին, նախ Մխիթարյան կրթարանում դասավանդում է փիլիսոփայություն և հայոց լեզու, ապա թողնելով մանկավարժական գործը ամբողջությամբ նվիրվում բանասիրական աշխատանքի:

1893-ին լինում է Վենեստիկում և Տրինետում, 1898-ին Կ. Պոլսում և Զմյուռնիայում: 1909 թվականից հաստատվում է Կ. Պոլսում իբրև Մխիթարյան վանատան մեծավոր: 1911-ին այցելում է ծննդավայրը, ճանապարհորդում Տաշքում, լինում ծնողների հայրենիք Խոտորչրում: 1912-ին վերադառնում է Վիեննա:

45 տարի Տաշյանը մեղմաբան աշխատել է հայագիտութեան բնագավառում՝ ստեղծելով գիտական անզուգական կոթողներ: Կենդանութեան օրոք առանձին գրքերով հրատարակ-

վել են նրա երկու տասնյակ աշխատութիւնները, մի տասնյակ թարգմանութիւնները «Հանդես ամսօրյայում» իր աշխատանքն սկսել է սեփական բանաստեղծութիւնները տպագրելով, ապա եղել է խմբագիր, տպագրել է երեք տասնյակից ավելի ուսումնասիրութիւններ (չհաշված գրախոսականները)։ Թողել է մի շարք անտիպ աշխատութիւններ։

Տաշյանի գիտական զարգացման համար նշանակալից դեր է կատարել Արսեն Այտընյանը (այն ժամանակ արքահայր)։ Տաշյանը, չունենալով բարձրագույն կրթութիւն, հասել է մինչև ժամանակի եվրոպական գիտութեան գագաթը, այն աստիճան, որ հրապարակել է Բեռլինի համալսարան իբրև արևելյան լեզուների ու գրականութեան դասախոս (հրավերը մերժվում է միաբանութեան կողմից)։ Իմացել է շատ լեզուներ, այդ թվում՝ գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն, ասորերեն, արաբերեն, եթովպերեն, պարսկերեն, քրդերեն։

Խորապես իմացել է հայերեն՝ գրաբար և աշխարհաբար։ Հայերեն է սովորեցրել նշանավոր լեզվաբան Անտուան Մեյերին, որը հպարտութեամբ է Տաշյանին համարել հայերենի իր ուսուցիչը։ Անձնական ծանոթութիւն կամ նամակագրական աշխույժ կապ է ունեցել նաև ժամանակի մյուս հայտնի եվրոպացի արևելագետների՝ Հյուբշմանի, Պետերսմանի, Շուխարդի, Ֆետտերի, Մյուլլերի, Կարստի, Կոնիգերի, Կարիերի և այլոց հետ։

Իբրև գիտնական ունեցել է հետախույզ միտք, ուժեղ հիշողութիւն, հարցը ակզբնադրյուններով մինչև վերջ պարզելու, եզրակացութիւնները եղած բոլոր փաստերի վրա հիմնելու կարողութիւն, համառ աշխատասիրութիւն։ Լեզվաբանական աշխատութիւններից հայտնի են «Ուսումն դասական հայերէն լեզուի» (1920, 724 էջ), «Ակնարկ մը հայ հնագիւրութեան վրա» (1898, ԺԱ, 203 էջ), «Բանախոսական դիտողութիւններ հայերեն գիտական լեզվի մասին» (1926, 221 էջ)։ Պատմական և պատմա-աշխարհագրական բնույթի ուսումնասիրութիւններից են «Հայ բնակչութիւնը Սև ծովին



Հակոբբոս Տաշլաճի

մինչև Կարինա (1921, 84 էջ), ՇՀաթեր և Ուրարտյանքա (1934, 343 էջ), Արշակունի դրամներն (Մասն Ա, 1917, 320 էջ, մասն Բ, 1960, 321 էջ), ՇՀայաստանի արևմտյան սահմանը...» (1948, 492 էջ), ՇՀայ ազգի տարադրությունը...» (1921, 241, 10 էջ) և այլն: Բանասիրական հսկայական աշխատանքի արդյունք էր Հ. Գաթրճյանի «Արքազան պատարագամատոյցը հայոց»-ի հրատարակությունը (1897, 747 էջ), Ժանոթագրություններով, ինչպես և սուտ Կալիսթենեսին և Ագաթանգեղոսին նվիրված աշխատությունները (վերջինում քննում է Ագաթանգեղոսի, Բուզանդի և Կորյունի գրքերի միջև եղած աղերսները) և այլն¹:

Զբաղվել է նաև քիմիայի և բնական այլ գիտությունների հարցերով ու հիացրել իր գիտելիքներով մասնագետներին Քիմիայի ուսուցչապետս կը զգալի փնթղինքս աշակերտ մեծ ուսուցչի ոտքը», — գրել է քիմիկոս պրոֆեսոր Պողոսյանը Տաշյանի մասին²:

Նդել է առաջնակարգ թարգմանիչ: Թարգմանել է Հ. Հյուբլմանի, Հ. Պետերմանի, Ա. Կարլերի, Կ. Կոնիթերի և այլ հայագետների աշխատություններին: Ն. Մառը կարդալով «Ժողովածոյք առական» կարգաւայա հրատարակությունը, որն իր հայտնի աշխատության՝ Տաշյանի կատարած հայերեն ամփոփումն է (հրատ. 1900 թ., 193 էջ) ասել է, որ թարգմանիչը իր (Ն. Մառի) մաքերը կարողացել է ավելի պարզ արտահայտել, քան ինքը իբրև հեղինակ իր ուսերեն աշխատության մեջ³:

Տաշյանը կյանքում եղել է հեգահամբույր, համեատ, սակավապետ, վատառողջ (1925 թ. կուրացել է աջ աչքը), կարճահասակ: Զբաղվել է լուսանկարչությամբ (նույնիսկ աշխատություն է գրել գունավոր լուսանկարչության մասին) և սրնգահարություն:

1 Տաշյանի աշխատությունների ցանկը, տե՛ս ՇՀանդես ամսօրյա, 1933, էջ 17—24:

2 Տե՛ս ՇՀանդես ամսօրյա, 1933, էջ 17—18:

3 Նույն տեղում, էջ 7—8:

«Տաշյան երեցավ դռական ասպարեզի վրա անաղմուկ, անշոփնդ, գործեց հոն լուիկ և հեռացավ առանց փողեխու իր մեկնածամբ աշխարհին: Բայց տարփողեցին իր գործերը մեծ բանասերին անունը, որ պիտի ապրի անմոռաց հայագիտության եկող սերունդներու մեջ», — գրել է Ն. Ակինյանը¹ Տաշյանի մահվան առթիվ, որ տեղի ունեցավ 1933 թ. փետրվարի 3-ին: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Տաշյանին իբրև գիտնականի: «Միփթարյան տան հոյակապ դեմքերեն մեկն է, հայ բանասիրության հակահերին մեկն է...» (Արշ Զոպանյան), «...այն մշտադրադ և կենդանի հոգին, որ յուր ամբողջ կյանքը նվիրել էր հայ գիտության և անդամար դեգերել մեր անցյալի մտավոր անդամատաներում. նորա անգնահատելի գանձերը, լեզուն, մեր հայրերի ստեղծագործությունները՝ լուսավորելով յուր խորաթափանց ու բեղմնավոր մտքի ճառագայթներով և մեզ մատուցել ի ժառանգություն» (Գարեգին Հովսեփյան), «Նա փառք ու պարծանքը հղավ հայ բանասիրության» (Բաբկեն Կյուլեսերյան), «Տաշյան մեր ժամանակի մեծագույն հայ բանասերն էր» (Արուստյան)... Այսպիսի գնահատականներ Հ. Տաշյանի մասին շատ են:

Եվ իրոք, Տաշյանի աշխատություններին ծանոթացողը չի կարող չզարմանալ այն անսպառ գիտելիքների, մտքի հրակայական զորության և համառ աշխատասիրության վրա, որն ունեցել է նրանց հեղինակը: Եվ ահա Տաշյանի թողած գիտական հարուստ ժառանգության մեջ, թերևս, ամենից ավելի պատկառանք ազդող գործը, որն այսօր ամենից ավելի շատ է օգտագործվում և հավանաբար մեծ գիտնականի գլուխ-գործոցն է, նրա մատենագիտական աշխատությունն է՝ ձեռագրապատկեր: «Հոյակապ կոթողական կերտվածք», այսպես է անվանել այդ աշխատությունը նշանավոր հայագետ Պ. Ֆետիսկովը, որի կարծիքով ձեռագրապատկեր կազ-

¹ «Հանդես ամսօրյա», 1933, էջ 5—6:

մեղիս Տաշյանը ի հաջո է բերել *ամեծագույն գիտնականի համոռություն»,* գործերու հազվագյուտ ույժ»:

Իրոք, ձեռագրացուցակի վրա Տաշյանն սկսել է աշխատել 1891 թվականին և ավարտել է այդ հսկա աշխատությունը (ամբողջը 1524 երկսյուն նաև եռասյուն էջ) չորս տարվա ընթացքում՝ 1895-ին¹։ Այնքան լարված է աշխատել Տաշյանը ձեռագրացուցակի վրա, որ գրիչ բռնելուց մատները ուռել են և ստիպված լաթեր է փաթաթել մատներին ու շաբունակել աշխատանքը:

Ա. Այսդնյանի գիտական գործունեության 50-ամյակի առթիվ (1895 թ.) ձեռագրացուցակը հրատարակվում է «Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա» միջոցադրով:

Աշխատությունը բաղկացած է երեք հիմնական մասերից. ա) գերմաներեն մաս՝ նախաբան և ձեռագրացուցակի համահոտությունը (XVIII, 277 էջ), բ) հայերեն նախաբան (ԿԴ, 64 էջ), գ) բուն ձեռագրացուցակը (1163 էջ, նաև 7 ներդիր նկարներ):

Թե՛ գերմաներեն, թե՛ հայերեն մասերը ունեն օժանդակ ցանկեր, հայերենը՝ Այբուբենական ցանկ անվանց և նյութոց ձեռագրաց, որ գրադնցնում է 1051—1163 եռասյուն էջերը և հնարառություն է տալիս մանրամասն տեղեկանքները ըստանալու ձեռագրերում եղած բնագրերի, նրանց հեղինակների, ինչպես և այն բոլոր անձանց մասին, որոնց անունները հանդիպում են ձեռագրերում։ Հաճախ բնութագրվում է այս կամ այն պատմական անձը, նշվում է գրականություն:

Ձեռագրացուցակում ընդգրկված են վիեննայի Մխիթարյան մատենադարանի 571 ձեռագիր մատյաններ և մի քանի պատառոկներ (456 և 573 համարների տակ, և ձեռագրացուցակի վերջին թվահամարն է 573):

¹ Աշխատության ծավալի մասին Մ. Մաքսուդյանը գրել է, որ այն «ավելի է, քան թե 2. Ալեշանի Վերարտոն, Վիստառն և Վիստանը» ի միասին առած» (Վեգգադր. հանդես Բ գիրք, 1897, էջ 364):

Նկարագրություններն մեջ հեղինակը հիմնականում առաջ-
նորդվել է իր կազմած նախորդ ձեռագրացուցակի սկզբունք-
ներով, սակայն շատ ավելի մանրամասն տեղեկություններ է
տվել ինչպես ձեռագրերի ստեղծողների, մատյանների արտա-
քինի, նյութի, գրի և այլ կողմերի, այնպես էլ տարբեր կար-
գի բնագրերի (քարոզ, մեկնություն, առակ, տաղ և այլն)
մասին՝ մինչև վերջ բացահայտելով ամեն մի ձեռագիր
մատյանի բովանդակությունը: Շատ դեպքերում նշվում են
նաև մի ամբողջական բնագրի առանձին մասերը, բերվում
են հիշատակարանները: Ձեռագրերի նկարագրություններն
այնքան հանգամանալից են, քերված կարևոր քաղվածքները,
հիշատակարանները այնքան ընդարձակ, որ բանասերը հա-
ճախ կարիք չի ունենում բուն ձեռագրին դիմելու, բավարար-
վում է ձեռագրացուցակով, մանավանդ, որ Տաշյանի տեղե-
կանքները ստույգ են, անսխալ: Եթե այսպիսին լինեին առ-
հասարակ բոլոր հայ ձեռագրացուցակները, շատ ձեռագրեր
կազատվին ավելորդ մաշումից:

Նախաբանում խոսվում է Վիեննայի Միխլթարյանների
ձեռագրական հարուստ հավաքածուի գոյացման մասին, ինչ-
պես և քերվում են մի քանի կարևոր տախտակ-աղյուսակ-
ներ՝ հին և նոր համադրերի համեմատությամբ աղյուսակ,
տախտակ հնության ձեռագրաց և ընդհանուր տախտակ ձե-
ռագրաց (բոլոր ձեռագրերի հակիրճ նկարագրությամբ): Բա-
ցի այդ, նախաբանում ձեռագրերը ներկայացված են նաև
բովանդակային բաժանմամբ (սուցակ նյութից, դասավոր-
ված ըստ բովանդակության), այստեղ կան Մ. գրոց վերա-
բերյալք, ռեկլեկցականք, Վարք, վկայաբանությունք և
զրույցք, ռիսովաբանականք, Փիլիսոփայականք և այլ
բաժանումներ, որոնցում տրվում են համապատասխան
բնագրերի անունները և նշվում է համարը: Մանրամասն են
բացահայտված ձեռագրերում եղած կերպարվածատի նրվները,
որոնք արվեստաբաններին հնարավորություն էին տալիս
միջնադարյան հայ մանրանկարչության հարցերի մեջ խո-
րանալու:

Ո՞րն է Տաշյանի ձեռագրացուցակի գլխավոր արժանիքը. որով այն աշքի է ընկնում բոլոր հայերեն ձեռագրացուցակների մեջ: Մի խոսքով ասած, դա մատենագիտական տեղեկատվության մեծ ծավալն ու աստղագիտական է: Նկարագրվող ձեռագրերի, նրանց պարունակած նյութերի վերաբերյալ նախորդ ձեռագրացուցակներից ոչ մեկը տեղեկատվության այնպիսի առատություն չունի, ինչպես Տաշյանի աշխատությունը: Նկարագրությունների մանրամասնության հետ, մի ամբողջ հանրագիտարանի արժեք ունեն Տաշյանի մեծ ու փոքր ծանոթությունները, ցանկերը:

Ձեռագրացուցակը ջերմորեն ընդունվեց հայ ու եվրոպացի բանասերների կողմից, ուշագրավ է, որ գրախոսականներում թերությունների մասին գրեթե չէր խոսվում: Օրինակ, հմուտ ձեռագրագետ Մեսրոպ Մաքսուդյանի մի հանգամանակից գրախոսության մեջ¹ ձեռագրացուցակի մի շարք արժանիքներ վեր հանվելուց հետո իբրև միակ մատենագիտական թերություն նշվում է այն, որ շատ կրկնվող բառերը կրճատված չեն (օրինակ. «Յայսմաուր վկայաբանութեան սրբոյն» Յայսմաուր-նեթի մեջ կրկնվող բառերը կարելի էր կրճատել՝ «Յ. աւ. վկր. ա.»):

Տաշյանի ձեռագրացուցակը շարունակեց Համազասպ Ոսկյանը (574—1304 համարների 730 ձեռագրեր), որը 1963 թվականին հրատարակեց «Յուզակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա»-ի Բ հատորը: Այն կազմված է առաջինի սկզբունքներով և, անշուշտ, հայերեն չավագույն ձեռագրացուցակներից մեկն է: Ի դեպ, փերզերս նորից հիշվեց Տաշյանի ձեռագրացուցակը (Ժրեի երկրորդ հատորի հրատարակման առիթով) և նորից բարձր գնահատանքի խոսք ասվեց նրա մասին հայ ձեռագրերի ժամանակակից հմուտ գիտականներից մեկի կողմից²:

1 Մ. Մաքսուդյան «Յուզակ հայերէն ձեռագրաց», «Ազգագրական հանդես», Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 362—367:

2 Ա. Մնացեղանյան «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց».—«Հայրենիքի» Այն, 1967, № 30:

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐԻ Ի ՀԱՅԵՐԷՆԻ

HAUPT-CATALOG

ARMENISCHEN HANDSCHRIFTEN

WILHELM MACHITHAKISTEN-DRUCKERIE

HAUPT

ARMENISCHEN HANDSCHRIFTEN IN GELBUNG

HAUPT

ARMENISCHEN HANDSCHRIFTEN

IN DER MACHITHAKISTEN-BIBLIOTHEK IN WILHELM

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐԻ ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐԻ Ի ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻՃԱՐԵՐԵՐ

CATALOG

ARMENISCHEN HANDSCHRIFTEN

IN DER MACHITHAKISTEN-BIBLIOTHEK IN WILHELM

P. JACOBUS D. DASHIAN

ARMENISCHEN HANDSCHRIFTEN

ARMENISCHEN HANDSCHRIFTEN IN GELBUNG

HAUPT

ARMENISCHEN HANDSCHRIFTEN

2. Տաշյանի ձեռագրերի հայերեն ձեռագրերի տիպոգրաֆիկ

Ավարտելով Տաշյանի մասին այս հատվածը հարկ է ավելացնել, որ նա հեղինակ է նաև երկու ուրիշ ձեռագրացուցակների, որոնցից մեկը անտիպ է (Քեդլինի Արքունի մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը), մյուսն է թուրքական հայերէն ձեռագրաց Ս. Կարապետի վանուց Ֆոնուզի» (Յ ձեռագիր)¹։ Այս ձեռագրացուցակը Տաշյանը կազմել է առանց ձեռագրերը տեսնելու, գրավոր ստացած տեղեկանքների համաձայն (Ստեփ. Միհրդատյանից)։

Հայերեն ձեռագրերի ցուցակագրումը այնպիսի շարժում առաջացրեց, որ մի քանի ձեռագրական հավաքածուներ կրկնակի անգամ ցուցակագրվեցին, անշուշտ, նոր ցուցակագրութունը կատարվեց ավելի թարձրորակ ու հանգամանալից։ Այսպես, կատարելով իր խոստովմը Պետերբուրգի հայերեն ձեռագրերը ցուցակագրելու մասին՝ Նիկողայոս Մառը կազմեց Պետերբուրգի արևելյան լեզուների ինստիտուտի հայերեն ձեռագրերի ցուցակը, թեև այդ հաստատության հայերեն ձեռագրերը արդեն ցուցակագրվել էին Մ. Բրոսսեի ու Բ. Պատկանյանի վոդմից և հրատարակվել մեկը 1838, մյուսը 1891 թվականներին։ Մառը իր այդ ձեռագրացուցակը կազմել էր՝ մի տարի առաջ նույն հանդեսում տպագրված երկու ձեռագրացուցակների (Գ. Գալեմբյարյանի և Վ. Տաշյանի) օրինակով, ռեպրական ձեռագիրք Ընմարանի արեւելեան լեզուաց ի Պետերբուրգս կոչվող 7 գրագիր մատյանի նկարագրությամբ այս ձեռագրացուցակը² կազմված է խնամքով, ձեռագրերի արտաքինն ու բովանդակութունը ներկայացված են առավելագույն մանրամասնությամբ և, ինչ խոսք, համեմատվել անգամ չի կարող Բրոսսեի ցուցակի հետ։

Ն. Մառը, որ, ինչպես հայտնի է, հայերեն հին ձեռագրերի խոշոր քիտակնորից էր, կազմել է նաև այլ ձեռագրացուցակներ, որոնցից ամենահայտնին է նույն 1892 թ. առանձին գրքով հրատարակված (հայերեն և ռուսերեն, աշխատանքային լեզուն և անվանացանկը՝ ռուսերեն) «Ցուցակ հա-

¹ «Հանդես ամսօրյա», 1894, էջ 49—52։

² «Հանդես ամսօրյա», 1892, էջ 45—54, 80—85, 11—117։

մառու ձեռագրաց վանուց Սեւանայ (110 ձեռագիր): Յամառնային ՌՅԼԹ Թ. Ի Հայաստան հանապարհորդութենէն (IV, 59 էջ), նույն թվականին Վիեննայում ուստերենից թարգմանված տպագրվում է Մառի Եկմառնային ուղեորությունից դիպի Ի Հայաս գրքուկը (90 էջ), ուր ընդարձակ խոսակցություն կա հայ ձեռագրերի մասին, շատ քաղվածքներով հանդերձ: Վարդան Այգեկցու առաջինների նվիրված ուսումնասիրության հավելվածում նույնպես գտնում ենք էջմիածնի մատենադարանի ձեռագրերի (թվով 10) նկարագրութուններ¹:

2. Միսքճյանը նույնպես կատարում է իր ստանձնած պարտականությունը՝ կազմելով Վատիկանի գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը: Նախքան այդ Վատիկանի հայկական ձեռագրերը նկարագրվել էին Անշելո Մայի կազմած՝ Վատիկանի արեւելյան ձեռագրերի ցուցակի մեջ²:

Միսքճյանի աշխատությունը կոչվում է Յուդեակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանում³, ընդգրկում է 13 ձեռագիր, կազմված է Տաշյանի և Գալեմբյարյանի ձեռագրացուցակների սկզբունքով, մանրամասն է և խնամաված: Միսքճյանը չկարողացավ իր ժրագիրը լիովին խրականացնել՝ ավարտել և հրատարակել Հռոմի քոյր հայերեն ձեռագրերի ցուցակը: Կիսատը բավականին ուշ լրացրեց Ն. Արիսյանը՝ տալով Հռոմի հայոց հյուրանոցի և ինոյան հայ վարժարանի⁴ ունեցած ձեռագրերի ցուցակները:

Սուրիաս Պարոնյանը, որ հանձն էր առել կազմելու Անգլիայի հայերեն գրչագրերի մատենագիտությունը, Ֆ. Կոնկրեթի հետ կազմեց Օքսֆորդի հայերեն ձեռագրերի ցուցակը,

¹ H. Mar Сборник притч Вардана. Приложение 1-е. СПб, 1894, стр. 1—64.

² S6's «Հանդես ամսօրյա», 1892, էջ 211:

³ «Հանդես ամսօրյա», 1892, էջ 211—214, 244—247, 273—275, 339—343:

⁴ Առաջինը տպագրվեց 1957-ին «Հանդես ամսօրյաում» և 1961-ին առանձին գրքով, երկրորդը՝ 1958-ին «Հանդես ամսօրյաում»:

որը անդերինն (աշխատանքային չեղուն անդիներենն էր) հրատարակվեց 1918 թ.¹ (124 ձեռագիր):

Այսպիսով, 1891 թ. ծրագրով ձեռագրացուցականներ կազմելու պարտականություններ վերցնողներից բոլորն էլ կատարեցին իրենց կամավոր պաշտամբությունները, թեև ծրագիրն ամբողջությամբ չկատարվեց, օրինակ, հակառակ հանձնառությունների, այդ շրջանում չկազմվեցին Անգլիայում, Գերմանիայում, Պետերբուրգում գտնվող հայ ձեռագրական բոլոր հավաքածուների ձեռագրացուցականները:

Հայ ձեռագրերի մատենագիտական ցուցակագրման շարժումը ոգևորեց հայ և օտարազգի նաև ուրիշ շատ բանասերների, առաջիններից էին Տ. Պալյանն ու Հր. Աճառյանը:

Առաջինը 1892—1893 թվականներին Կ. Պոլսում լույս ընծայեց Կեսարիայի փր ղեկավարած թեմի վանքերում պահվող հայերեն ձեռագրերի ցուցակը՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա» ընդհանուր վերնագրով: Ա հաստորն էր, որ Կեսարիայի վիճակն էր ընդգրկում. առաջին տետրն էր՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Սարգսի փանուց ի Կեսարիա» (1892, 35 էջ, 12 ձեռագիր), երկրորդ տետրը (ուր էջակալությունը շարունակվում է)՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Կեսարիոյ և Սուրբ Գէորգ եկեղեցւոյն Գրըշէհիւրի» (1893, 37—75 էջ, 27 ձեռագիր):

Պալյանը կազմեց նաև Կեսարիայի թեմի այլ վայրերի հայերեն ձեռագրերի ցուցակներ, որոնք տպագրվեցին պարբերականներում: Արտսես, Ջմյուռնիայի «Արևելյան մամուլում», 1897-ին՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թալուս (թեմ Կեսարիոյ)»², Կ. Պոլսի «Լույսում», 1905—1906 թվականներին՝ «Ձեռագիրք Կեսարիոյ վիճակին վանօրէից աուրք եկեղեցեաց և անհատից սեփական», ուր մտնում էին Կեսարիայի վիճակի հետևյալ եկեղեցիների ձեռագրացուցակները՝ Էվերեկի Ս. Թորոս, Թալուստնի Ս. Թորոս, Պալականարի Ս. Խաչ,

¹ S. Boronian, F. S. Congbeare Catalogue of the Armenien Manuscripts in the Bodleian Library. Oxford., 1918, VIII, 284, 13 էջ.

² «Արևելյան մամուլ», 1897, էջ 615—619, 745—747.

Նիրզեի Ս. Թորոս, Տարսիախի Ս. Անդրեաս, Մունճուսունի Ս. Աստվածածին, 1908 թ. «Բյուզանդիոնում» (Ձճ 3551) հրապարակվեց Պալլանի «Հայերէն հին ձեռագիր ավետարանը» ձեռագրացուցակը:

Տ. Պալլանի ձեռագրացուցակների նկարագրությունները արված էին անմիջապես ձեռագրերից, և դա նրանց կարևոր արժանիքն էր: Բացի այդ, ձեռագրացուցակները խնամքով կազմված և հանգամանալից են, ունեն օժանդակ ցանկեր: Նկատվում է, որ Պալլանը օգտագործել է Վիեննայում մինչ այդ հրատարակված ձեռագրացուցակների լավագույն հատկանիշները: Ձեռագրացուցակները լավ ընդունվեցին հասարակայնության և մամուլի կողմից¹:

Հ. Աճառյանը Գ. Գալեմբյարյանի և Հ. Տաշյանի ձեռագրացուցակների սկզբունքներով (գերմաներեն և հայերեն մասերի առկայություն, ձեռագրերի նկարագրման բնույթը, օժանդակ ցանկեր և այլն) կազմեց երկու ձեռագրացուցակ՝ մեկը «Ծուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի կարին», 1896—1897 թվականներին տպագրվեց «Հանդես ամսօրյայում» և 1900-ին Վիեննայում լույս տեսավ առանձին գրքով (ԺԵ, 37 էջ), մյուսը՝ «Ծուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի», որը 1905—1909 թվականներին «Հանդես ամսօրյայում» տպագրվելուց հետո, 1910-ին տպագրվեց առանձին գրքով (Ի, 155 էջ): Այս ձեռագրացուցակներից առաջինը Վիեննայի Միլիթարյանների ծրագրած «Մայր ցուցակ»-ի Զ հատորի Ա տետրն էր, երկրորդը՝ Բ տետրը:

1909—1913 թվականներին «Հանդես ամսօրյայում» տպագրվեց Աճառյանի նաև «Ծուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազետի» աշխատանքը, որը առանձին գրքով հրատարակվեց 1924-ին, Հիշենք, որ 1936-ին Վիեննայում հրատարակվել է Աճառյանի կազմած նաև մի ուրիշ ձեռագրացուցակը՝ «Ծուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի» (VI, 17 էջ), որ

¹ Տե՛ս, օրինակ, «Հանդես ամսօրյա», 1899, էջ 28:

նույնպես նախապես սկսել էր տպագրվել ՔՀանդես ամսօր-
յայում» (1935-ին)։

Վիեննայի Միլիթարյանների նախաձեռնությու-
նով առաջացրեց նաև արևելահայոց մեջ, Դրա առաջին ար-
տահայտությունն էր Նրիտասարգ Ստեփան Կանայանցի
կազմած «Յուդեական հայերեն ձեռագրերի Քիֆիսի ներսիսյան
հոգևոր դպրանոցի» աշխատությունը, որը լույս տեսավ Քիֆ-
իսում 1893 թվականին (75 էջ)։

Այս ձեռագրացուցակը նույնպես հիմնականում կազմված
է Հ. Տաշյանի և Գ. Գալեմբյարյանի վերահիշյալ ձեռագրա-
ցուցակների օրինակով (առաջաքան, ձեռագրերի ընդհանուր
տախտակ, ձեռագրացուցակ, օժանդակ ցանկ)։ Կանայանցի
ցուցակում ձեռագրերի նկարագրություններն էլ հիշեցնում են
վերահիշյալ ձեռագրացուցակների կազմման ակադեմիկները։

ձեռագրացուցակը հանգամանալից է և տալիս է ներսիս-
յան դպրոցի գրադարանում այն ժամանակ եղած 30 ձեռա-
գրերի (և մեկ ձեռագրի մնացորդի) մանրամասն նկարա-
գրությունները։ Հատկապես մանրամասն է Բացահայտվում
ձեռագրերի բովանդակությունը, ընդարձակ են հիշատակա-
րաններից բերված քաղվածքները։

Գեոևս Գեյմանիայում սովորելու ժամանակ Ս. Կանայան-
ցը Վիեննայի Միլիթարյաններից պատմիչ էր ստացել կազ-
մելու ադդեթը երկրում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակը,
բայց ի վիճակի չէր ձեռք բերել իրականացնելու այն, Կազմելով
այս ձեռագրացուցակը՝ Կանայանցը որոշում է ընդունում
ցուցակագրել Քիֆիսում գտնվող բոլոր հայերեն ձեռագրերը
(իր հաշվով՝ 600), որը սակայն չիրականացավ։

Այս աշխատությունը, շնայած իր առանձին թերություն-
ներին, արժանի էր քարձր գնահատականի, մասնավորապես, որ
արևելահայոց մեջ նոր տեղեկություններով կազմված առաջին
հանգամանալից ձեռագրացուցակն էր, որ լույս էր տեսնում
առանձին գրքով։ Սակայն այս դեպքում էլ միտումնավորու-
թյունը հազի՞նք։ Կազմողը իր առաջաքանում խոսում է հայ
հին ձեռագրերի կարևորության, նրանց կորստից փրկելու,

ինչպե՞ս և ներսիսյան դպրոցի ձեռագրական հավաքածուի մասին, և ահա այստեղ չի կարողանում չգայթակղվել և հակառակ կուսակցության («Մուրճի» և համախոհների) հասցեին կշտամբանքներ է թույլ տալիս:

Ի պատասխան դրա «Մուրճը» գրեց¹. «Մինչդեռ Մխիթարյանները շանացել են իրենց կարճ հառաքարաններում հաղորդել միայն ու միայն այն, ինչ ցուցակագրած ձեռագիրներին է վերաբերում, այ. Կանաչանցը ուղենալով անպատճառ գերազանցել նոցա՝ հարկավոր տեղեկություններից դուրս տվել է նաև մի փոքրիկ տրակտատ, լիքը ավելորդ խորհրդածութուններով, որոնց մեջ նա փրան ցույց է տալիս ոչ միայն շափից դուրս մեծ տիրահար ձեռագիրների, այլև նույնքան, թերևս, ավելի հավատարիմ աշխատակից «Արծաղանք» լրագրի Տեսեք, թե ինչ տեղ է գտել նա մի կաթիլ ևս ավելացնելու թունավորման այն դործի վրա, որ այնքան տիտեմատիկաբար սկսել և շարունակում են հայտնի բանակաները...» և այլն: Եվ գրախոսողը (Ա. Տ.) Կանաչանցի ձեռագրացուցակում փնտրում ու գտնում է ոչ գրագետ չեզու («այ. Կանաչանցը գրել չգիտե», «սխալները, որ մենք ակնարկում ենք ոչ միայն քաղմաթիվ են, այլև բազմակողմանի» և այլն): Բերված նմուշները մեծ մասամբ իրոք սխալներ են (թեև ոչ այդքան սարսափելի), սակայն դրանք միայն աշխատության լեզվական թերութունների վերայագրերն են, իսկ ձեռագրացուցակի մատենագիտական հատկանիշների մասին գրախոսականում ոչինչ չի ասվում, այսինքն՝ այս անգամ ևս փոխադարձ միտումնավորության պատճառով գործը չի զննատվում ըստ արժանավունի:

Արեևիահայտց մեջ Կանաչանցի ձեռագրացուցակը հղակի շմանց, նրան հաջորդեց մի քանի այլ ձեռագրացուցակների հրատարակումը, ինչպե՞ս, օրինակ, Մեսրոպ Սմբատյանցի «Նկարագիր Աուրբ Ստեփաննոսի վանուց Սաղիանի եւ միւս վանօրէից և ուխտատեղեաց, Վս քաղաքացն եւ արհաւիրէից,

1 «Մուրճ», 1893, № 11, էջ 1741—1746.

որք ի Շամախույ թեմիս (Թիֆլիս, 1896) և ռեկտորադիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորաս (Թիֆլիս, 1904) աշխատութիւններում տրված են ձեռագրացուցակներ՝ առաջինում Շամախու թեմի գրուղերում եղած ձեռագրերի, մյուսում՝ Նախիջևանի մոտ գտնվող Ս. Կարապետ վանքի գրչագրերի (հատկապէս մեծ է ու հանգամանալից Երկրորդը)։ Իսկ նույն հեղինակի ավելի վաղ լույս տեսած «Տեղագիր Գեղարքունի ժողովարդ գավառի, որ այժմ՝ Նոր Բայազիտ գավառ» (Վաղպատ, 1895) տեղագրության մեջ ներգրված է Սեանա վանքի՝ Ս. Ամատունու կազմած ձեռագրացուցակը (սօցիալական ձեռագիր մատենից մատենադարանի Ս. անապատին Սեանայ)։

Առանձին գրքուկներով (Երկու մասով) լույս տեսավ Հակոբ Թոփչյանի կազմած ձեռագրացուցակը, որ ներկայացնում է ձեռագրական մի անհատական (Խաչիկ Դադյանի) հավաքածու։ Վերնագիրն է Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան (Վաղպատ, 1898, 112 էջ և 1900, 74 էջ)։ Ձեռագրացուցակը մասամբ կազմված է Վիեննայի Մխիթարյանների սկզբունքներով, կան և տարբերութիւններ, որոնցից ամենակարևորը առաջին պրակում նկարագրված ձեռագրերի ըստ քովանդակության խմբավորումն է (Կրօնական բաժին, Պատմագրական բաժին, Գիտական և բանաստեղծական բաժին և այլն)։ Երկրորդ պրակում նյութը դասավորված է ըստ առանձին հավաքածուների (ՔՀայերեն վավերագրեր, Վեհապատմական վավերագիրք..., Վաղվածոց, պայմանագրաց..., ՔՄագաղաթյա պահպանակներ... և այլն)։ Հիշենք, որ Խաչիկ Դադյանի ձեռագրական հարուստ հավաքածուն հետագայում միացվեց էջմիածնի մատենադարանին։ Ի դեպ, ձեռագրացուցակի առաջաբանից իմանում ենք, որ Թոփչյանը վաղմեջ է նաև Սեանա վանքի մի ձեռագրացուցակ (արդեն երրորդը), որ չի հրապարակվել։

Հիշատակելի են Երվանդ Լալայանի հրապարակած ձեռագրացուցակները, մասնավորապէս նրա սօցիալական հայերէն ձեռագրաց Վստպուրականիս-ն, որի մի պրակը միայն լույս

տեսավ (երկրորդը, որ պատրաստ էր, մնաց անտիպ)։ Ձեռագրացուցակը հրատարակվել է Թիֆլիսում, 1915-ին, պարունակում է 480 ձեռագիր (334 էջ, 1048 սյունակ. ամբողջը պետք է լիներ 3000 սյունակ և ընդգրկեր շուրջ 2000 ձեռագիր)։

Լալայանցը մեծ աշխատանք է կատարել Վասպուրականի տարբեր վայրերում հայերեն ձեռագրեր հայտնաբերելու, հաճախ քայքայվածները նորոգելու և բազմաթիվ ձեռագրեր ցուցակագրելու գործում։ Կարծիք կա նաև, որ ձեռագրական առանձին հավաքածուները նկարագրել են սուրիշ մարդիկ, հետո Լալայանցը դրանք միացրել է ու խմբագրել¹։ Նույնիսկ եթե սա էլ ճիշտ լինի, միևնույն է, այդ դեպքում էլ կատարված աշխատանքը հսկայական է։

Ձեռագրացուցակը ըստ բովանդակության է կառուցված. առաջին տրակում նկարագրված են ձեռագրեր ՁՄ. գրոց վերաբերիչը», պատմական, բժշկական, փիլիսոփայական և մյուս կարգի ձեռագրերը պետք է ընդգրկվեին հաջորդ պրակներին մեջ։ Վերջին տրակում պետք է լինեին նաև օժանդակ ցանկերն ու ծանոթագրությունները։ Բայց քանի որ առաջին տրակը մնաց միակը, ապա այն զուրկ է նաև ցանկերից և ծանոթագրություններից։ Դարձյալ մի ապացույց այն բանի, որ լրագրահատոր մատենագիտական աշխատության յուրաքանչյուր հատորը (պրակը) պետք է ունենա իր օժանդակ ցանկերը, որոնք կարող են ամփոփվել նաև վերջին հատորի մեջ։

Ձեռագրացուցակը, իհարկե, չի կարող համեմատվել Հ. Տաշյանի աշխատության հետ։ Լալայանցի ցուցակում շատ ձեռագրեր անբավարար են նկարագրված, երբեմն չկան ամենաանհրաժեշտ տեղեկությունները, հիշատակարանները արտագրված են անհարկի խմբագրումներով, մի խոսքով, նկարագրությունները շատ էլ վատահերի չեն։ Չնայած նման ոչ քիչ թերությունների ձեռագրացուցակի մեծ արժեքն այսօր

¹ Տե՛ս «Արարատ», 1915, էջ 918։

այն է, որ այնտեղ նկարագրված շատ ձեռագրեր անվերադարձ զոհ գնացին մեծ եղեռնին, և այժմ նրանց մասին իմանում ենք Լալայանցի ձեռագրացուցակի ընդհիվ:

Մամուլում մեծ մասամբ դրվատական հոդվածներ գրվեցին ձեռագրացուցակի մասին, միայն մեկի՝ Մ. Մաքսուդյանի հոդվածն էր խիստ¹ («Յուզասկի ամեն մի փշում տասնյակնեբում սխալներ ու անճշտություններն են ցուցադրված»), որը գրվել է այն ժամանակ, երբ Վասպուրականի ձեռագրերի մի մասը քերված էր էջմիածին, և ձեռագրերը նրանց նկարագրությունների հետ համեմատելու հնարավորություն կար: Սակայն Ե. Լալայանցի պնդմամբ այդ հոդվածը միտումնաքննող է, քննադրված «որոշ նկատումներից»², Սանոթ լինելով մամուլի ու նրանում հանդես եկող գլխավորողների քարքերին՝ չի կարելի հավատ չընծայել Լալայանցի ասածին, թեև նրա աշխատանքի թերություններն էլ անհայտ են:

Ե. Լալայանցի մյուս ձեռագրացուցակները, որոնք լույս են տեսել ավելի վաղ, գտնվում են նրա ազգագրական հայտնի աշխատություններում՝ «Ջավախք»-ում³ և «Գողթն»-ում (Թիֆլիս, անթվ. էջ 143—161):

Ազգագրական-պատմական բնույթի ուրիշ աշխատություններից, որոնցում ձեռագրացուցակներ կան, կարելի է հիշել Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» (Թիֆլիս, 1895) և Ե. Շահադլիզի «Պատմական պատկերներ» աշխատությունները:

Երևացին նաև մի հեղինակի երկերն ընդգրկող (անհատական) և թեմատիկ բնույթի ձեռագրացուցակներ: Առաջիններից էին, օրինակ, Ղազար Փարսեցու և Փավստոս Բուզանդի ձեռագրերի ցուցակները, կազմված Գալուստ Տեր-Մկրտ-

¹ «Արարատ», 1915, էջ 916—919.

² «Արարատ», 1916, էջ 437.

³ Տպագրվել է «Ազգագրական հանդեսի» Ա և Բ դրժերում, ձեռագրացուցակը Բ դրժում է (1897, էջ 278—294):

շյանի կողմից¹, կամ Մովսես Խորենացու ձեռագրերի ընդարձակ տեսությունը, կազմված Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի կողմից Խորենացու «Պատմություն հայոց»-ի քննական բնագրի արդեն հիշատակված հրատարակության մեջ (Թիֆլիս, 1913) և այլն:

Թեմատիկ ձեռագրացուցակներից կարելի է հիշել հայ բժշկական ձեռագրերի ցուցակները կազմված Վ. Թորոսյանի կողմից, որոնք լույս տեսան «Արևելքում» 1889-ին (№ 1730), ապա շատ հանգամանալից «Հանդես ամսօրյայում» (1892, 1893, 1895, 1920, 1924 թթ. համարներում), ինչպես և ավելի ուշ «Բազմավեպում» (1923—1925 թթ.): Բժշկական ձեռագրերի մի այլ ցուցակ էլ տպագրվեց «Բյուզանդիոնում» (1906, № 2962—2963), կազմված Կ. Գաբրիկյանի կողմից:

Հայերեն ձեռագրերի ցուցակագրումը թափով առաջ էր բերվում: Մեր հաշվումներով՝ քուրդ Վարդի մեծ ու փոքր հայ տպագիր ձեռագրացուցակները ներառյալ ներգրքայիններն ու մամուլի մեջ հրատարակվածները, նաև օտարազգիների վազմածները, մինչև 1920 թ. համարում էր 120-ի², Բուրի մասին խոսելն այստեղ աննպատակ կլինի, քանի որ նրանց կազմման սկզբունքների ընդհանրությունները շատ ականափս են, և քնորոշումները կրկնելն անիմաստ է, իսկ ձեռագրացուցակների վերաբերյալ մատենագիտական տեղեկանքներ կարող են տալ այդ նպատակով կազմված մատենագիտական ցանկերը³:

1 Առաջինը՝ «Արարատ», 1901, էջ 542—549, երկրորդը՝ «Հանդես հայագիտության» (գերմաներեն), Մարտի, 1904, հտ. 2, տետր 4, էջ 267—277:

2 Այժմ դրանց քանակը մոտենում է 300-ի:

3 Տե՛ս Հ. Անտոյան ձեռագրացուցակներ—նույնը Հայկական մատենագիտություն, Հտ. Ա, Երևան, 1959, էջ LXXVII—XCV. նկարագրված է 178 ձեռագրացուցակ, այդ թվում և անթիպները: Տե՛ս նաև Ձեռագրագույակներ:—«Մատենագիտություն հայկական մատենագիտության», Երևան, 1963, էջ 215—243. նկարագրված է 176 տպագիր ձեռագրացուցակ: Տե՛ս

Նշենք միայն, որ մինչև 1920 թ. հայերեն ձեռագրացուցակներ կազմել են նաև Քր. Քուլակ-Հովհաննիսյանը, Մ. Մաքսուդյանը, Հ. Քոսյանը (Կարապետյան), Կորյուն վարդապետը, Կ. Բասմաջյանը, Ա. Թումանովը և մանավանդ Բ. Սարգիսյանը, եվրոպացի արևելագետներից՝ Ֆ. Ֆինկը, Ֆ. Մակլերը, Ֆ. Կոնիքերը և ուրիշները։ Մեծ մասամբ եվրոպացի քանասերների կազմած ձեռագրացուցակները բարձրորակ տեղեկատվություն են, ստույգ ու մատահելի։

1903 թվականին լայպցիգում լույս տեսավ գերմանացի հայագետ Ֆրանց Ֆինկի կազմած «Ծուցակ տիփիսեցի Աբգար Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի» (XIII, 260 էջ) աշխատանքը։ Այդտեղ նկարագրված է ընդամենը 15 գրչադիր, սակայն ավելի քան մանրամասն։ Բաղկացած է երկու մասից՝ հայերեն և գերմաներեն, ունի անվանացանկ։

Ավելի արժեքավոր է նույն հեղինակի և լեոն Գյանջեցյանի կազմած մի ձեռագրացուցակը, որը մասն է Տյուրքինգենի (Գերմանիա) արքայական համալսարանի գրադարանի կարգային-ալբանական գրխավոր գրացուցակի¹ և պարունակում է այդ գրադարանում պահվող հայերեն 109 ձեռագրերի նկարագրություններ, սովորաբար օժանդակ անվանացանկեր։

Ֆրանսիացի արևելագետ Ֆրեդերիկ Մակլերը հայերեն ձեռագրերի մի քանի ցուցակներ է կազմել, որոնցից ամենակարևորն է Փարիզի ազգային գրադարանի հայերեն և վրացերեն ձեռագրերի ցուցակը², որ լույս տեսավ 1908 թ., ընդգրկում է 323 հայերեն ձեռագրեր (որոնց մի մասը նկարա-

նաև Օ. Եգանյան ձեռագրացուցակներ։—«Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Երևան, 1965, սյունակ 198—212։ Նկարագրված են 166 ձեռագրացուցակներ (տպագիր, անտիպ, քարտային), որոնք վերաբերում են Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրական հավաքածուին։

¹ Systematisch—Alphabetischer Hauptkatalog der Königlischen Universitätsbibliothek zu Tübingen... Verzeichnis der armenischen Handschriften... Tübingen, 1907, VII, 276 S.

² F. Macler Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale. Paris, 1908, XXX, 205 p.

գրված է վերը հիշված նախկին ձեռագրացուցակներում): նկարագրութունները շատ մանրամասն չեն, սակայն պարունակում են կարևոր տեղեկութուններ և խնամքով են արված (կա անվանացանկ):

Սակայն այդ ժամանակներում արևելագետ եվրոպացիների կազմած նման ձեռագրացուցակներից ամենամեծարժեքը, ըստ երևութի, անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիքերի կազմածն է, որ ընդգրկում է Լոնդոնի Բրիտանական թանգարանի 149 հայերեն ձեռագրեր¹։ Սա անպայման մի աշխատություն է, որ կարելի է դնել Տաշյանի ձեռագրացուցակի կողքին։ Բանասիրական հմտությունը, հայագիտական մեծ սլաշարը, եվրոպացու բարեխղճությունը, մատենագիտական նյութի առատությունը այսօր էլ հիացնում են այդ ձեռագրացուցակից օգտվողին։ Ունի անվանացանկ։

Հայ հին ձեռագրերի մատենագիտության ասեղծման մինչև 1920 թ. ընկած ժամանակաշրջանը փակվում է մի ուրիշ հոյակապ աշխատությամբ, որն ընդգրկում է հայ ձեռագրերի կարևորությամբ Երկրորդ կենտրոնի գրչագրերը (ցամաք, մի մասը միայն)։ Խոսքը վերաբերում է Բարսեղ Սարգիսյանի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» աշխատության առաջին հատորին, որ լույս տեսավ Ս. Ղազարում 1914 թ. (ԺԹ, 838 էջ)։

Երաժամք ըսված է, թե լավ կերպով հորինված ցուցակ մը ամբողջ գրադարան մը կարժեք,— գրում է Սարգիսյանը իր առաջաբանում, և ձեռագրացուցակից պարզ նկատվում է, որ ինքն էլ ձգտել է հենց այսպիսի մի աշխատություն. ըստեղծելու։

Գիտենք, որ Զարհանալյանն է այս հարուստ ձեռագրատան ցուցակը կազմելու առաջին փորձն արել՝ նկարագրելով սոսկ 5 ձեռագիր։ Սարգիսյանը իր նախորդից շատ ավելի հա-

¹ F. C. Conybeare A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London, 1913, XII, 395 p.

չոգակ է անել, նա նկարագրել է առաջին հատորում 199, երկրորդում (չույս է տեսել 1924-ին, 1311 էջ)՝ 120, ընդամենը 319 ձեռագիր: Թեև Սարգիսյանն էլ, այնուամենայնիվ, շի կարողացել աշխատանքը մինչև վերջ հասցնել:

Առաջարանից իմանում ենք, որ շորս տարի լարված, հոգնատանջ աշխատել է Սարգիսյանը իր ձեռագրացուցակի վրա: Նկարագրությունները չափազանց մանրամասն են, հիշատակարաններով ու շատ ժանթագրություններով: Վրոջ, երբեմն, կարծես ձեռագիրն է ձեռքիդ:

Ձեռագրացուցակում նույնը խմբավորված է ըստ քովանդակության, առաջին հատորում Կտակադրաններն են, երկրորդում՝ Ճառընտիրներն ու Ոսկեխորիկները:

Այս ցուցակն էլ Հալայանի կազմածի նման օժանդակ ցանկեր չունի, քանի որ հեղինակը մտադրվել էր այդպիսիք տալ վերջին հատորում, որը չույս չտեսավ:

Աշխատությունը, ճիշտ է, ձեռագրերը համաամանալից, շատ մանրամասն է ներկայացնում, տակալն ահա՝ տվյալ դեպքում էլ, թերևս չափը չի պահպանված այս տեսակետից: Ինչ-որ ժանր ոճ, դժվարամարտություն ունի այս աշխատությունը: Ըթե համեմատելու ըինենք այս գործը Տաշյանի մեծ ձեռագրացուցակի հետ, կարող ենք ասել, որ մատենագիտական-քանասիրական մանրամասնություն տեսակետից էլ Տաշյանի աշխատությունը ամենից ավելի հարող գտնվածն է, ավելին կարող է և թերություն դառնալ: Բացի այդ, կարևոր են նաև ձեռագրացուցակի, ինչ կարելի է ասել, մատենագիտական ոճը, նաև աշխատանքային ընդուն, որոնք պետք է հետաքննարկեն չափ դյուրամարս ըինեն՝ անհրաժեշտ տեղեկանքները առավել հեշտությամբ քաղելու համար:

Ամեն դեպքում, իհարկե, Ք. Սարգիսյանի ձեռագրացուցակը եղավ հայ դասական ձեռագրացուցակագրության լավագույն արդյունքներից մեկը, մատենագիտական-քանասիրական առաջնակարգ մի գործ: Հայ տ. եվրոպացի քանասիրան-

րը շատ բարձր գնահատեցին Սարգիսյանի այդ աշխատութիւնը¹։

Հայերեն ձեռագրացուցակների կազմումը շարունակվեց նաև առաջին համաշխարհային պատերազմից ու հղեհներից հետո՝ հիմնականում սփյուռքում։ Սակայն լավագույն ձեռագրացուցակները ստեղծվել էին մինչև այդ։ Ավելացնենք նաև, որ մի շարք արժեքավոր ձեռագրացուցակներ, որոնք վաղմուրվում էին ուշագրութիւն առարկա ժամանակաշրջանում, շփոթարակվեցին կամ մնացին անավարտ։ Դրանցից ամենից առաջ հիշատակելի է Մեսրոպ Տեր-Մովսիսյանի՝ հայ ձեռագրերի լիակատար կամ ընդհանուր ցուցակը, որ ընդգրկում է աշխարհի տարբեր համաքառունների շուրջ 22 հազար ձեռագրերի նկարագրութիւններ։ Տեր-Մովսիսյանը իր աշխատանքն սկսեց հայերեն ձեռագրերի առանձին համաքառունների՝ հատկապէս Փարիզի ազգային գրադարանի և էջմիածնի մատենադարանի հայերեն ձեռագրերի նոր հանգամանալից ցուցակների կազմմամբ։ Ի վերջո, գործը լայնացավ՝ հասնելով ընդհանուր ձեռագրացուցակի, որը մնաց անտիպ (պահվում է Հայաստանի ԳԱ պատմութիւն ինստիտուտի դիվանում)։

Այդ աշխատութիւնը այլևս չի հրապարակվի, դրա հարկը, թերևս, չգացվի էլ (շատ բան հնացած է, շատ են պակասները, չկա հեղինակը, որ թարմացնի ու լրացնի և այլն), սակայն այդպիսի ընդգրկմամբ (աշխարհի բոլոր հայերեն ձեռագրերը ներկայացնող), թեև շատ հակիրճ, բայց և խելացի կազմված մի մատենագիտական տեղեկատուի անհրաժեշտութիւնը մնում է։

Մ. Տեր-Մովսիսյանից պահպանվել են նաև Թիֆլիսի և Նոր Զուղայի (Ամենափրկիչ վանքի) հայերեն ձեռագրերի ցուցակները (պահվում են նույն դիվանում)։ Ի դեպ, Նոր-

¹ Եվրոպացի արևելագետներ Ս. Վերերի, Ա. Զանդերի, Ա. Ժանսենի, Ֆ. Մակլերի տարբեր լեզուներով հրապարակված շատ դրվատական գրախոսութիւնների թարգմանութիւնները համապատասխանաբար տե՛ս Քրազմակից, 1916, էջ 154—157, 157—160, 1921, էջ 37—39, 29—32։

Ջուղայի հայերեն ձեռագրերի ցուցակներ կազմել են նաև Մ. Ժամկոչյանը (1873 թ.) և Ս. Տեր-Ավետիսյանը (երկուսն էլ անտիպ, առաջինը պահպնում է Մաշտոցյան Մատենադարանում, երկրորդը ԳԱ պատմության ինստիտուտի նույն գիվանում)։

Միևնույն ժամանակաշրջանում կազմված և անտիպ մնացած ձեռագրացուցակներից կարելի է հիշատակել նաև Հյուսիսային Իտալիայի գրադարանների հայերեն ձեռագրերի ցուցակը, կազմված Գ. Գալեմբյարյանի կողմից, Ծ. Լալայանցի զննարկ հայերեն ձեռագրաց Վասպուրականի երկրորդ հատորը, Երուսաղեմի հայոց մատենադարանի երկու ձեռագրացուցակները կազմված՝ մեկը Տ. Սավալանյանի, մյուսը Ս. Խաչաթյանի կողմից (գտնվում են Երուսաղեմի նույն մատենադարանում), Տ. Պալյանի անտիպ ձեռագրացուցակները, Լազարյան ճեմարանի հայերեն ձեռագրերի մի ցուցակ, կազմված Ն. Քարամյանցի կողմից (պահպնում է Մաշտոցյան Մատենադարանում) և այլն։

Վերը մի քանի աղիթներով խոսք հղավ հայերեն տպագիր երկերին նվիրված այն մատենագիտական աշխատությունների մասին, որոնք անտիպ կամ անավարտ մնացին։ Քիչ չեն նույն քախտին արժանացած ձեռագրացուցակները։ Անշուշտ, թե՛ հայերեն տպագիր երկերին և թե՛ հին ձեռագրերին նվիրված անտիպ մատենագիտությունները չեն ժամանակին տպագրվել, ավելի հարուստ ու քաղմակողմանի կլինեին հայերեն մատենագիտական տեղեկատու գրականությունը։

Կարևոր է, փհարկե, նկատի ունենալ նաև, որ ժամանակին չհրապարակված մատենագիտական աշխատությունները հաճախ կորցնում են իրենց կարևորության մի մասը և միշտ չէ, որ նրանց հրապարակումը հետագա տարիներին անհրաժեշտ է լինում։ Արդեն ասացինք Մ. Տեր-Մովսիսյանի լիակատար գրացուցակի մասին։ Նույնը պետք է ասել ձեռագրական այն հավաքածուների անտիպ ցուցակների մասին, որոնց ամենի կատարյալ ձեռագրացուցակները հետագայում հրատարակվեցին (օրինակ, Երուսաղեմի մատենադարանի) կամ որոնք (հավաքածուները) միացվեցին այլ հավաքածուներին

Р Е З Ю М Е

История армянской древней и средневековой библиографии по установившейся армянской исторической традиции кончается 18 веком. На пороге 19 века берет свое начало новая армянская литература и культура, а вместе с ними и новая армянская библиография.

Исторические судьбы армянского народа сложились так, что в 19 веке и в начале 20 века главные центры культурной жизни армян находились за пределами Армении, следовательно, и армянская библиография, в основном, развивалась за пределами родной страны.

Наиболее выдающиеся труды по новой армянской библиографии и истории армянской книги вышли в свет в Петербурге, Венеции и Вене. Это были библиографические работы М. Миансарянца (Миансарова) — в первую очередь, его «Библиография Кавказа и Закавказья» (СПб., 1874—76), работы Г. Зарбаналяна «Армянская библиография» (Венеция, 1883), «Библиотека древних переводов на армянский язык» (Венеция, 1889), ряд библиографических и библиологических трудов Г. Галемкяряна и, главным образом, его неоконченная работа «История армянской периодики» (Вена, 1893), «Каталог армянских рукописей матенадарана Мхитаристов в Вене» (Вена, 1895) А. Ташяна, «Новая армянская библиография и энциклопедия армянской жизни» А. Газикяна (Венеция, 1909—1913) и многие другие.

Из числа изданных в Армении библиографий следует упомянуть труд Д. Шахназаряна «Главный каталог рукописных книг библиотеки св. Эчмиадзина» (Эчмиадзин, 1863), библиотечные каталоги ряда библиотек Еревана, Шуши и Александрополя, «Армянская периодическая печать» Г. Левоняна (Александрополь, 1895) и др.

Развиваясь, в основном, за пределами родины, новая армянская библиография сохраняла традиции армянской древней и средневековой культуры, литературы и библиографии. Однако, в процессе становления новой армянской библиографии определенную роль сыграли также опыт и традиции западноевропейской и русской библиографии. Поэтому и потребовалось в настоящей работе дать хотя бы очень сжатый очерк истории этих библиографий, в частности, имея в виду, что на армянском языке нет ни книг, ни статей по этой теме.

Армянская библиография с начала 19 века и до его половины развивалась чрезвычайно замедленными темпами. Со второй половины века, в связи с более интенсивным ростом армянского книгопечатания, а также вследствие резкого увеличения количества армянских периодических изданий, роль библиографии, как неотъемлемой и необходимой части общественной и культурной жизни армян, становится все более ясной и очевидной; один за другим издаются капитальные труды по армянской библиографии, создается регистрационная библиография армянской текущей литературы (Вена), а также литературы по арменистике, выходят в свет библиографии старопечатных армянских книг, публикуется ряд трудов по истории армянской книги и периодической печати. Армянские журналы и газеты печатают множество статей и рецензий, посвященных вопросам библиографии.

Термин **матенагитутюн**, которым переводится на армянский язык **библиография**, в широком смысле, охватывает не только современное понимание этого последнего, но также значение термина **библиология** (в смысле книговедения), включая историю книги. Поэтому, в настоящей работе уделено внимание вопросам исследования истории армянского книгопечатания.

Развитие армянской библиографии показано в книге по отдельным видам библиографии. Специальные главы и разделы посвящены таким видам армянской библиографии, как, например, обще-национальной, регистрационной, библиографии старопечатных книг, периодической печати, отраслевой, книготорговой и др. Даны анализ и характеристика наиболее выдающихся библиографических трудов, во многих случаях говорится об истории создания этих библиографий, определено их место в истории армянской библиографии и практическая ценность в настоящее время.

Кроме того, отдельные главы посвящены армянским издательским и библиотечным печатным каталогам, а также каталогам старых армянских рукописей.

В связи с историей армянской книготорговой библиографии, дана характеристика армянской книжной торговли 19 века, в частности, отражена деятельность известного армянского книготорговца начала 19 века — Маргара.

Отдельные главы посвящены жизни и творчеству крупнейших армянских библиографов — М. Миансарянца, Г. Зарбанаяна и А. Газикиана. Детально проанализировано их библиографическое и библиологическое наследие, даны характеристики работ этих авторов по армянской филологии.

В исследовании произведено множество библиографических, филологических исправлений и дополнений к трудам армянских библиографов.

Показана также роль библиографии в процессе развития общественной и культурной жизни армян, а также обращено внимание на неразрывную связь армянской библиографии с филологическими разысканиями в области истории армянской литературы и армянского народа. Многие армянские библиографы были одновременно и известными филологами, и в их библиографической работе играли большую, положительную роль результаты их же текстологических и других филологических разысканий. Немаловажным фактом является то обстоятельство, что почти всегда самыми крупными капитальными трудами упомянутых авторов являлись работы библиографического характера, которые как бы обобщали их многолетнюю научно-исследовательскую работу.

История армянской библиографии от 5 до 18 века включительно освещена в первом выпуске, вопросы развития советской армянской библиографии в третьем выпуске настоящего труда (первый издан в 1964, третий — в 1967 гг.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանգամանքներ	3
Գլուխ 1. Հայ եւր մտածեալութեան ժամանակաշրջանը և զարգացման պայմանները	17
Համառոտ ակնարկ արևմտանկախական, հռչակական և ամերիկյան մատենագիտութեան	22
Գլուխ 2. Հայ մտածեալութեանը 19-րդ դարի առաջին կեսին	46
Գլուխ 3. 1850—1920	65
Ընթացիկ տպագրի տարածման և մատենագիտութեան քանակի հայ տպագրութեան ազդային մատենագիտութիւն ստեղծելու ուղղութեամբ	89
Գլուխ 4. Միեայնի Միտեմարյանց	92
Հասարակական գործունեութիւն, Տնտեսական, Ժողովրդային Միանարկական արևմտական հայ տպագրութեան մատենագիտութեան վրա	118
Կովկասի և Անդրկովկասի մատենագիտութեան	129
Գլուխ 5. Գաւթի Զարեանեայան	159
Գլուխ 6. Արտին Դադիկյան	203
Հայկական եւր մատենագիտութիւն	208
Գլուխ 7. Հեռախոս գրականութեան մտածեալութեան և նայ գրի պատմութեան	233
Տրդատ Պալյան	235
Գլուխ 8. Հայոց պարբերական մամուլի մատենագիտութեան	256
Գրիգորիս Գալմիսյան	260
Գլուխ 9. Ճիւղային և տեղական մատենագիտութեան	295
Հայագիտական մատենագիտութիւն	296
Գեղարվեստական գրականութեան մատենագիտութիւն	314
Անհատական մատենագիտութիւն	316
Գլուխ 10. Գրադարանային գրադարաններ	319
Գլուխ 11. Հրատարակչական և գրականութեան գրադարաններ	340
Հայոց գրականագիտութեան	348
Գլուխ 12. Անտագրադարաններ	363
Հակոբյան Տաշյան	385
Резюме на русском языке	410

ՌԱՅԱՑԵԼ ԱՎԵՏԻՍԻ ԻՇԽԱՆՑԱՆ

Հայ մատենագիտության պատմություն: Պրակ Բ:

Տեխնիկական խմբագիր՝ Հ. Մառտիրոսյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Գևորգյան



ՎՋ 03158

Գատվեր 1163

Տիրաժ 1800


Հանձնված է արտադրության 13/V 1968 թ.:

Ստորագրված է տպագրության 5/V 1968 թ.:

Թուղթ 84×108¹/₃₂: Տպագրական 26 մամ., հեղ. 20 մամ.

Գինը՝ 1 հոսիլ:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունարանության գլխավոր վարչության № 6 տպարան,
Երևան, Թումանյան պ. № 51:



ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԼՁ	Տող	Տպված է	Պետք է լինի
89	վ. 11	Դավրեժացւոյն	Դավրեժացւոյն,
98	վ. 16	72,	73,
78	ն. 13	է	էր
80	վ. 12	Խժրագրությունն	Խժրագրությունն
86	ն. 8	¹ Кавказский	² Кавказский
101	ն. 6	չէ	չէր
119	վ. 6	կարող են	կարող էին
138	ն. 4	Մատենագիտության	³ Մատենագիտության
169	ն. 7	կապանդաւադի	կապանկաւադի,
173	վ. 14	ԹԺՁԳ	ԹԺՁԳ
190	ն. 3	Այդպիսի	¹ Այդպիսի
210	ն. 1	Նույն տեղում	Ա. Ղեզրիկյան Հայկական նոր մատենագիտություն



